


no- 77

1  
2  
3  
4  
5  
6  
7  
8  
9  
10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31  
32  
33  
34  
35  
36  
37  
38  
39  
40  
41  
42  
43  
44  
45  
46  
47  
48  
49  
50  
51  
52  
53  
54  
55  
56  
57  
58  
59  
60  
61  
62  
63  
64  
65  
66  
67  
68  
69  
70  
71  
72  
73  
74  
75  
76  
77  
78  
79  
80  
81  
82  
83  
84  
85  
86  
87  
88  
89  
90  
91  
92  
93  
94  
95  
96  
97  
98  
99  
100




ՈՒ

33651

# Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

## Ժ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Արարեալ էրանելոյն Կոստովու Անձևացեաց  
Եպիսկոպոսի, և Կարգադրեալն Մովսէսի գիտնա-  
կան վարդապետի:



Իրամանաւ ամենապատիւ և վեհափառ Պատրիարքի Թա-  
գաւորեալ մայրաքաղաքիս կոստանդնուպոլսոյ՝ Տէն Յակով-  
բոսի բարեջան և անձաբան Արքեպիսկոպոսի:


A  
535

Դի տիպ արձանագեալ


Յ Ա Մ Ի Տ Ե Ա Ռ Ն

1840 = իՄ ՃԹ

Յ Օ Ր Թ Ա Գ Ի Ի Ղ



Դի Տպարանի երկց որդւոց Պօղոսի արտոճեան արուսեացոյ:



79  
12022

U. S. DEPARTMENT OF THE INTERIOR

GEORGETOWN DISTRICT

WHEREAS the following lands are situated in the  
County of ... State of ... and are owned by the  
United States of America:



... of ... and ...  
... of ... and ...  
... of ... and ...


Be it remembered that on this day of ... 1840

1840

1840

1840

Witness my hand and seal at the City of Washington this ... day of ... 1840



# Յ Ա Ռ Ա Յ Ա Ռ Ա Ն

Թաղձանք մարդոցս են անհուն , և կարողութիւնքն՝ հունաւոր . յայն սակս չէ հնար 'ի ձեռս բերել զայն ամենայն , յոր միանգամ բաղձան բաղձանօք մարդիկ ըստ իւրաքանչիւր բաղձանաց , եթէ ոչ՝ նախախնամութիւնն աստուծոյ գտցի օժանդակ նախն :

Ուստի 'ի բազում գրոց սրբոց և հոգեշահ մատենագրութեանց նախնեացն ցանկալն էր արդարև մեզ Մատեանս այս , այսինքն՝ Մեկնութի ժամակարգութե՝ արարեան երանելոցն Խոսրովու Անձևացեաց Եղիսկոպոսի , և կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի . որ ըստ բաղձանաց մերոց գտաւ արդէն ուղղեալ և սրբադրեալ 'ի հնագոյն ձեռագիր գաղափարե՝ 'ի ձեռն հոգեւոյս պատուելի Գեորգ դպրի . Պալատականի , որ իւրով իսկ գրչաւն 'ի սկզբան անդ մատենիս նշանակէր այսպէս :

'Ի յոյժ հնադոցն ձեռագիր օրինակէ ինչ՝ բաղդատմամբ սրբագրեցաւ , և բազում տեղիքն 'ի մթութենէ երկեանութեան 'ի լոյս տծեալ պայծառացան , որպէս իսկ յընթեռնուղէ եթէ իցես խելամուտ և մտալարժ կարես իմանալ , որք որոշեցան կարմրով . և այս վճառութեանք մանաւանդ 'ի բանս Խոսրովու եղէն . քանզի գոն և այլ վարդապետաց բանք 'ի սմա , և առաւել Մովսէսի ուսուցան որպէս ցուցանէ յառաջբանութիւն գրոցս . և այս 'ի վայելս սիրողաց , հնաբանութեան ոճոյ՝ նախնի վարդապետացն մերոց , 'ի Աոստանդուպոլիս , 'ի Պալատն . 'ի ձեռն Գեորգ չնչին դպրի . յամի իրկութեան մերոյ 1775 :

Ապաքէն զայս ընտիր օրինակ տեսեալ մեր և նախանձ բարւոյ յանձին բերեալ կամեցար եռանդն սիրով 'ի լոյս ընծայել ըստ երկուց շարժառ իմ պատճառաց :

Այսն՝ զև կարի հարկաւոր և առաւել պիտանի են ծանօթութիւն և տեղեկութիւն ստուգութեան մեկնութեանց եկեղեցական բանից , որք հանապազ ընթեռնանին 'ի լուր ժողովոցոյ՝ առ 'ի զարժուցանել զնորհեալս 'ի գիշերային քնոյ թմրութենէ :

Երկրորդ՝ անկորուստ և անմուաց պահեալ երախտագէտ մտօք զաշխատանս թէ հեղինակին և թէ սրբագրիչ պատուելոցն , յանձն արարաք գիտնական թաղմաց վարդապետի մարաշլոյ՝ ղգուշուոր և հաւատարիմ խորհրդածութեամբ 'ի բաց յապաւեւ 'ի նոննէ զի՝ վերջոյ յաւելեալ զանյարիր բանս , և զճետ երթեալ սրբագիր օրինակին՝ զերաքանչիւր պարբերութիւնս բարեօք տնատել և ըստ պահանջման բանին կետադրել 'ի դիւրութիւն վերձանողաց :

Վասն որոյ այժմ՝ գեղեցիկ և վայելուչ նորոգ տպագրութեամբ նուիրեմ ձրխաբար զայս հոգեշահ Մատեան՝ բարեմիտ ընթերցասիրաց հայրենի ազգիս , 'ի յիշատակ հոգւոց համայն ննջեցեաց իմոց :

Ճանիկ  
մահտեսի Սեմնեան

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Մովսէսի եղջանիկ վարդապետի՝ սուրբ գրքոյս հաւարդն :

Օ չափ անձին ճանաչել՝ ուսուցանեն մեզ անօրին օրէնք և սրտուիրանք , և մի ամբառնալ առաւել քան զբժանն . զի քան զյանցանացն պատիժս ևս յոլովակի ցուցանի դատավճիռ խիզախութեան : Մանաւանդ թէ եպերի ևս յամենեցունց , անխորհրդաբար համարձակին և ձեռնամուխ լինիլ յիր ինչ , որքան զկար զօրութեան ումեք բարձրագոյն իցի : Վաւ ոչ այս միայն , ոյլ և անվաւեր և տղայական լիցի ամ առաջարկութիւնքն , և նախատելի ամենեցուն վասն անյարմար և կազակրիին բանիցն : Վյլ և ինքն առ ինքն հարեալ գաանի՝ ՚ի խզէ մտացն , երկբայաբար միշտ գոլով ՚ի դործառնութիւն գործոյն , անսողիւտ դատախազ տեսանելով զմտացն իւրոց յանդիմանութիւն . զի ահ մեծ է անկանիլ ՚ի ձեռս ւոյ կենդանւոյ , ըստ դրեցելումն :

Օ ի նախ սուրբ լինիլ պարտ է , և սուա հանդիսանալ և ճառել զսրբութիւն մեծին ւոյ . զի մի փոխանակ վարձուց հատուցման՝ պատիժ կրիցի անտպոյ յամառութէն : Վաւ կրթութեան յոյժ պէտք են դրոց սրբոց և ներկուռ վերծանութեան . այլ և արտաքնոց ևս տեղեկութեան զուցարութեանցն , և բոյիցն և բառիցն . և ճանաչող միտս ունել , զի կարող լիցի ընտրութիւն առնել խորթատեսակ բանիցն , և մարմնոյ ևս պնդութեան և զբոյրարանացն առողջութեան յոյժ պէտք են : Վաւ անդորրութեան ժամանակի և յապահով տեղուջ դեգերման , առ ընթեր միշտ ունելով զյոլովութիւն տաւից , յորս պարտապալ հանապաղ հմտացի ճշմարիտ մակացու լինելով :

Լա յոյսմ ամենայնէ Թափուր իմ գորով , և հակառակօքն յաւէտ լցեալ , զոր Թուի Թէ ոչ այլ ոք այսպս ամ իրօք . բայց քանզի խնդրեցեր սիրելի՛ զվերլուծութիւն աղօթից զորս Թողեալ է մեզ երանելոյն Արարովու , ոչ բաւական համարելով զգրարեալն , կապեցեր զմեզ ընդ հարկաւ՝ դրաւելով ՚ի ծառայութիւնս : Օ ի ամենեցուն խնդրողաց հրամայէ տէրն տալ ըստ կարողութեան , և ոչչ հնազանդեալսն կորստեան մատնէ իմաստունն : Օ ի ոչ կարելն՝ տկարութի տսի . իսկ ոչ կամիլն՝ անհաւատութիւն . զի հասարակաց է շահն , և իւրաքանչիւր ոք վարձս աւցէ : Ասան որոյ ապաւինելով յայն որ առանց նախատելոյ շնորհէ հաւատով խնդրողաց , և աղօթիւք ձերովք և մեծաւ յուսով ձեռնարկեսցուք ՚ի գործս :

Բայց սկսցուք ՚ի սկիզբն դրոցս զոր սկզբնաւորեալ է մեծին Արարովու , հաւաքելով յանձնիւր տեղիս ըստ պատշաճ պիտոյից , և զիւրաքանչիւր որբոցն խօսեցեալ բանս : Լա Թէ տացէ տէր ըստ հայձոյից իւրոց յարմարել զառաջարկութիւնս , տեառն շնորհ . և Թէ ոչ՝ և այնպէս շնորհ , զի գիտէ ըստ արժանւոյն բաշխել : Լա մերում տարտամութես եպերանք , զի ոչ գատք ըստ արժանւոյն ուռգել զբնական երկիր մտաց մերոց անօյին դրոց վարդապետութեամբ , որով ՚ի դէպ ժամու պողաբերէսք զարժանն :

Եւ ահա՛ հնազանդեալ հրամանաց քոց բարեսէր և պատուելի եղբայր թանգորի , Թէպէտ և յոյժ լրբութիւն գող մեզ և առաւել դատապարտութիւն , սկիզբն արացուք աստուծով ՚ի գործս : Լա դու աղօթեա՛ ՚ի վերայ մեր , զի արժանի լիցուք առանց սոյթաքելոյ յաւարտ հասանիլ . որով փառաւորի անկարօտն փառաց անձ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Երանելոյն Խորովու Անձևացեաց Եսիսկարոն՝ ասոր զըրոյս յորկնոցն :

Ի նդ այ և վասն այ խօսելով , ամ արթնութեամբ և զդուշութեամբ պարտիմբ միտ դնել բանիցն ասացելոց . զի մի ընդունայն կամ Թէ ՚ի դատապարտութիւն մեզ ասացեալքն ընկիցին : Օ ի Թէ ընդ մեր նման մարդոց ոչ դանդաջեալ մտօք խօսիցիմբ , այլ իմնցուածովք զբանն բերիցեմբ և յօդաւոր ասիւք պատշաճեմբ . և մանաւանդ յորժամ ընդ աւագաց ունիցիմբ խօսիլ , երկիւղալից մտօք հոդ տանիմբ :

Ապա որչափ անզօս խորհրդովք ընդ այ և ընդ այսն պարտիմբ խօսիլ , և ամ երկիւղիւ ընդ նմա և վասն նորա բնաւ իմնցուածովք աւարտել զբանն . զի յաղագս այսորիկ բանաւորք եմբ և ոչ յաղագս այլ իրիք . ապա Թէ ոչ , մարթեպք զմարմնաւոր պէտան անբանութեամբ հարկանել , որպէն անասնոցն ամենեցուն ջոկք :

Այլ եղաք բանաւորք և մտաւորք , և սպասառուք յանբանիցն . զի զնոցայն և զմերն բովանդակ՝ մեք տացուք այ բան՝ մտաց լուսաւորութեամբ . և զուզահրեշտակք յերկրի , նման երկնայնոցն լիցուք . և նոյնպիսի սիրով և ահիւ առ նորայն լիցուք պատիւ և երկրպագութիւն և փառաւորութիւն :

Սակ առաւել ևս՝ ողբան զպատուականն անարդն , և քան զհաճոյսն յանցաւորքն , և զջափաւոր ինամեալսն յօքնաբար երախտառուքն . զի ոչ տակ զհրեշտակաց բունն հարկանէ՝ այլ զպաւակէն աբրահամու , որով և զամենայն մարդկանէ :

Աւ զի պարարակ եզինն զենումն , և ամ խրախճանութիւնն ոչ յաղագս հրեշտակաց անդրանիկ և հաճոյ և պատուական որդւոց . այլ վասն մեր փոքունցս և անհնազանդիցս և տարագնացելոցս և զամ հայրենիսն վատնողացս : Աւ եթէ շատ օդտօղն և շատ Թողութի դտօղն , շատ խնդրի և շատ սէր պարտի որպէն ասաց արն երբեմն առ աշակերտան , երբեմն առ կիկնն պոռնիկ , ապա յոյտէ Թէ կարի առաւել պարտին ազգք մարդկան քան զհրեշտակս երախտահատոյց ընկլ այ յոդն սիրոյն և յաճախ ներողութիւն և անպատում առատ պարզւեացն :



Լա սյս՝ սյսպէս է , անշուշտ ջանասց՛ւք ըստ կարի մե-  
րում զպաշտօնս մեր մատուցանել նոյ՝ ՚ի սբ սրտէ և ՚ի մտաց  
բարեաց և յանկեղծաւոր հաւատոց : Վանդի և զսոյն ՚ի պօ-  
զոսէ աղաչիմք դթուութեն նոյ պաղատեալ , զի պատարագ կեն-  
դանի սբ և հաճոյ նոյ զխօսուն պաշտօնս պատրաստեսց՛ւք :  
՚ի սոյն և սաղմոսանուագն յորդորէ , երբեմն որն յինքենէ ,  
և երբեմն որն ՚ի դիմաց նոյ : Յինքենէ՝ յասելն , մատո՛ նոյ  
պատարագ օրհնութե , և կատարեա՛ս բարձրելոյն զուխտս քո :  
Լա դարձեալ՝ հատեր զկապանս իմ , քե՛զ մատուցից պատա-  
րագ օրհնութե : Լա դարձեալ յերեսաց նոյ , յորժամ ասէ՝  
պատարագ օրհնութե փառաւոր արասցէ զիս :

Լա զի մի՛ դարձեալ բանբասիցիմք յոյ որպէս հրէայքն ,  
լեւ զայն թէ՛ ժողովուրդս սյս շրթամբք պատուեն զիս . և  
սիրով իւրեանց հեռացեալ ՚ի բացեայ են յինէն , զուր պաշ-  
տեն զիս : Լա կամ անպտուղ մտօք լինիցիմք՝ ոն պէ առա-  
քեալ . և կամ ըստ տէրունեան բանին , շատախօսք լեալ ա-  
ռանց մտացն առ անձ ամբառնալոյ , և առանց զբանս աղօթից  
ստուգապէս և յստակութի՛ն նմա մատուցանելոյ , համարիցիմք  
ըստ հեթանոսացն ՚ի բազում խօսից լեւ լինիլ : Այլ զի  
սաղմոս ասասց՛ւք և ՚ի միտ առց՛ւք . և զսակաւ բանսն մտօք  
կամեսց՛ւք ոն ասացն պօղոս , քան զբանս բազումն լեղուով :  
Լա զի մի՛ լինիցիմք որն ընդօրս խօսեցեալք . և կամ ո՛չ դի-  
տելով զգորութիւն ձայնին , լինիցիմք ասօղքս՝ խուժ , և  
լսողքն՝ դուժ :

Յաղագս սյսորիկ կամեցայ ես բացայայտել որ ՚ի պաշտա-  
ման եկեղեցւոյ քարոզութիւնք և աղօթք քահանայականք :  
Օ որ դիտակբն՝ մի՛ արհամարհեսցեն , զի թէ և ինքեանք ան-  
կարօտ են մերոց իմաստիցս , այլ ՚ի պարզամտացն հայեցեալ  
օգուտս՝ ընկալցին զմեր ջանս վաստակոց , և զպակասումն՝  
եղբայրաբար խնամով ուղղել խոկասցին : Լա հասարակաց  
հոգացօղն քս՛ մեզ և նոյ՛ օգնական , և տացէ բան աւետարա-  
նել զօրութի՛ն բազմաւ : Լա նմա փառք ընդ հօր և ընդ սբ  
հոգւոյն , այժմ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

[The text on this page is extremely faint and appears to be bleed-through from the reverse side of the document. It is largely illegible but seems to consist of several paragraphs of text.]

# Ք Ա Ր Ո Ջ

## Հ Ս Կ Մ Ա Ն Գ Ի Ը Ե Ր Ո Յ

**Օ** արթուցեալքս ամենեքեան 'ի հանգստենէ քնոյ , զոր շնորհեաց մեզ մարդասէրն անձ 'ի մխիթարութիւն և 'ի սփոփանս տկարութեան մերում :

Մեկնութիւն երանելոցն Խոսրովու :

**Յ** սկզբան բանիս ցուցանէ զայն խնաման , որ նախքան զհանդերձեալսն՝ ետ աստէն զհանգիստ յաշխատութեցս և 'ի հոգոց և 'ի մեղաց և յազգի ազգի տրամութեց գիշերայնոյ քնով : **Օ** ի թեպէտ և պատուիրեցաք այսոցիկ ըստ յանդմանն , սակայն գութ մարդասիրին այն ոչ անսաց միշտ յայսպիսիս մնալ մեզ վտանգս . այլ բաժանեաց զկեանս մեր և ետ զմասն մի կենացն 'ի հանգիստ . ոչ ըստ արժանեաց , այլ շնորհօք , այսինքն՝ ձրի մարդասիրուէ հարկ արարեալ . վասն այնր ասէ , Չոր շնորհեաց մեզ մարդասէրն անձ :

Ի վանզի և ոչ 'ի կամս ապաստան զայն արար , այլ հարկ 'ի վերայ եղ ծանրութեաց և մարմնոյ՝ և ոգւոյն մ'թուութի : Եւ յայն սակս 'ի ծանրութենէ քնոյ կոչէ զըարթումն , զի մխիթարի և սփոփի քնով անձն մեր և նորոգի յաշխատութենէ . ասէ , Շնորհեաց մեզ մարդասէրն անձ մխիթարութիւն , և սփոփանս տկարութեանս մերոյ :

**Ե**ւ եկեալքս միաբան : Ոչ վայրապար յաւել զմիաբանն աստ , կամ յառաջ 'ի զարթուցեալսն զամենեսեանն . այլ զի ցուցցէ թէ՛ ամենեցուն միաբանիլն յոյ պաշտօնն՝ դիւրահաշտ առնէ զանձ , և զօրաւորս զմեզ , և զդիւսցն մարտ անզօր :

Հողևոր երգով ՚ի փառաբանութիւն և ՚ի պատիւ ամենասուրբ անուան տեառն մերոյ և փրկչին յի . քի : Հողևոր երգով , ասելով երգք , յայտ առնէ թէ հոգին սուրբ ՚ի թիկունս և ՚ի գործակցութիւն և յօգնականութիւն տկարութեանս մերում դայ ըստ պօղոսի . և երգակից լինի ուղղեցելոցն մտօք սրբութեամբ , և յորդորեցոցն ՚ի փառաբանութիւն աստուծոյ :

Փառաբանութիւն կոչի , զի բանիւ փառաւորեմք զանկարօս բնութիւնն նոյ : Աւ տէրն ասելով և փրկիչն . զտէրն , վասն ստեղծանելոցն , և զի տիրէ մեզ : Ասկ փրկիչն , զի զանձն փրկանս տուեալ փրկեաց զմեզ արեամբն իւրով ՚ի մեղաց և ՚ի մահուանէ . և եբարձ զանէծան որ ՚ի վերայ մեր : Ասկս այսր զնա յաճախ անուանեմք յերկոցունց . զի յարարչութենէն և ՚ի խնամակալութենէն , և որով ընտանութիւն ընդ մեզ եցոյց՝ գոհասցուք զնմանէ :

Մհիւ և դողութիւն կացցուք յաղօթս առաջի նր : Օ հրեշտակացն հրամայէ ունել զահ և զերկիւղ և զդողումն . վասն այնր յաւել թէ՛ առաջի նորա : Օ ի որպէս հրեշտակք ՚ի տեսնէն փառաց նր միշտ յահեալք են . նոյնպէս և մեր միշտ յիմ զվխտս ամբարձեալք և առաջի կացեալք ահագին փառացն՝ դողութիւն զնա պաշտեսցուք :

Աւ գոհացարուք զնմանէ ՚ի գիշերոյին ժամուս յայսմիկ վասն իրաւանց և արդարութե նորա : Վասնզի ասէ դաւիթ , \* ՚ի մեջ գիշերի յառնէի գոհանալ զքէն վասն իրաւանց և արդարութե քոյ : Օ նոյն և մեզ հրամայէ առնել , և ցուցանէ զիրաւունս և զարդարութիւն նորա զօր արար ընդ մեզ , և ոչ ըստ արժանեաց , այլ ողորմելով , վասն այնորիկ ասէ ,

Որ ընտրեաց զմեզ ողորմութեամբն իւրով : Օ ի ողորմեցաւ ասէ՛ յայն սակս ընտրեաց : Իբր զի խոտանք էար և ընկեցեալք յերեսաց նոյ , ողորմութիւն նր ընտիրս արար ըստ առաքելական բանին : \* Ընտրեաց զմեզ ասէ նովաւ , այսինքն քիւ , յառաջ բան զլինիլն աշխարհի . լինիլ մեզ սբս և անարատս առաջի նր :

Աւ շնորհեաց մեզ բերել զնմանութիւն երկնային հրեշտակացն : Օ ի նորա յերկինս փառաբանիչք են , ոմ յաւել թէ՛ երկնային հրեշտակացն , ետ լինիլ մեզ յերկրի հրեշտակս փառաբանիչս նոյ . վասն այնր յարէ ՚ի նոյն , փառաբանիչս ան նոյ ամենեցուն՝ և մեզ լինիլ : Աւ ան և նոր ամենեցուն ասելով , զարթուցանէ զվխտս մեր գիտել թէ զերկնից և զերկրի և զամ արարածոց ստեղծիչն կարգեալ եմք փառաւորել : Աւ զնէ առ նմին ,

Իսկ մեր այսուհետեւ սրբելով զանձինս մեր : Բ. յսինքն՝ թէ որովհետեւ հրեշտակս արար զմեզ յերկրի , և Կոյցուք յանձինս ըզ հրեշտակացն սրբու-թիւն : Իսկ զոր ինչ ըստ մարգ-կային բնութեան սխալեալ իցեմք , խոստովանութեամբ և ապաշխարու-թիւն սրբելով զայն , մարտիրոս լիցուք . քանզի ասէ սրբել ՚ի խղճէ և ՚ի չար գործոց : Իսկ քանզի մարգարէն հրամայէ , \* ՚ի գիշերն համբառնալ զձեռսս մեր ՚ի սրբու-թիւն : Բ. ստ այնմ հրամայէ և քարոզս , նախ սրբել զխիղճ և զչար գործս , և ապա համբառնալ զձեռսս ՚ի սրբու-թիւն :

Համբարձցուք զձեռսս մեր ՚ի սրբու-թիւն առանց բարկու-թիւն և երկմտութիւն : Գաւելլով ՚ի մարգարէականն և զառարելականն և ս խրատ , թէ առանց բարկու-թիւն և երկմտութիւն : Օ ի պէտք են ազօթականին աներկնիս հաւատով և անբարկանայի մտօք զաղօթսն՝ նոյն նուիրել : Ա ասն որոյ և նորն ասէ , \* Թող զպատարագն քո՝ զաղօթսն , և երթ նախ հաշտ արա զեղբայրն քո , և ապա զես : Գայն սակս և քարոզս զբարկու-թիւն թողուլ տայ , և ապա զքաւու-թիւն հայցել . ասելով : Խնդրեսցուք հաւատով թողու-թիւն մեղաց : Օ ի թողլովն եղբարց , խնդրեսցուք և մեզ թողու-թիւն յնոյ , և հաւատասցուք եթէ առնու-մք :

Խոստովանելով զգաղանիս սրաից մերոց ծածկագիտին նոյն : Օ ի սասց յառաջ՝ սրբել ՚ի խղճէ զանձինս , աստ զօրինակն ցուցանէ թէ խոստովան լինելով և քաւու-թիւն խնդրելով սրբելմք : Օ ի թէ և խոստովանիմք ՚ի ծածկագիտէն չկարեմք թաքուցանել . ոյլ խոստովանին և նիսասապարան զանձն առնել , ՚ի խոնարհութիւն անէ զմեզ և յամօթ և ՚ի զղճու-մն և ՚ի պաղատանս . որով և զողորմին և զներեւն յնոյ գտանեմք և զարդարանալն : Բանզի ասէ իսկ մարգարէիւն . \* Ասա դու նախ զանօրէնութիւն քո՝ զի արդարասցիս յասելն :

Օ ի ընդունելով զպաղատանս մեր ազօթիւք և բարեխօսու-թիւն անձնիւն իւրոց : Բ. յսինքն է թէ՛ խոնարհին խոստովանութիւն և անարժան համարել զանձինս՝ առ ՚ի նոյն ապաւինել բարեխօսու-թիւն , ընդունելն առնէ նոյն զպաղատանսն : Անաւանդ թէ զարթնուցու-մք ոչ ՚ի քնոյ մնայն , այլ և յամ՝ զբազանաց աշխարհիս , և յազգի ազգի ցնորից , և արթուն զողիսն ունիցիմք : Ասել նախ զոր ասիցեմքն մեղէն , և ապա յամենաւոր ակնման նոյն արկանել : Արոյ փոխարէն ,

Շնորհեսցէ մեզ մարդասերն ան-կալ առարկնութիւն և անարատ վարուք ըստ կամաց նր յայսմ աշխարհիս . և արժանաւոր լինելով յաւիտեանական ուրախութեանցն զոր խոստացաւ տալ սիրելեաց

իւրոց : Շ նորհէն՝ յայտ առնէ թէ ձրի էն պարգևք նորա . թէ և մէք բազումն առաքինանամք : Օ ի սիրէ զմարդիկ , և շնորհ է զոր շնորհէ մարդասէրն անձ , և կալն առաքինութիւնք և ոչ մի ինչ բիծուներով , այլ անարատ վարուք կալ : Եւ առաւել քան զարքայութեանն պատիւ է . որում ընտիրքն բաղձային յոյժ ցանկութիւնքն երկնից բարեացն : Օ ի ոչ վարձա առնուլ ՚ի քրիստոսէ , այլ ձգնել յազազս քի՛ ցանկային :

Ար յազազս սաստիկ սիրոյն որ առ քն , բազմապատիկ անորժական էր նոցա քան ընդ քի՛ ՚ի փառս լինիլ՝ չարչարել վասն քի : Արայէս և երանելին յովհան ասէ թէ , \* քան ընդ քերովբէսն մերձ կալ ան , ՚ի կապանս կալ վասն քի ընտրեմ : Եւ երանելի անձաբանն գրէ , \* Ձի մի սասցից թէ նոյն ինքն աշխատիրն է վարձ որ ոչ է ամենեկն մտօք : Եւ նիւսացի ընտրեալն գրիգոր՝ վն այնր ասէ , \* Երգերգոց լինիլ օրհնութեանցն սողոմոնի , զի վասն սիրելոյ զառաքինիւն և ոչ վասն վարձու , ունի զհարսն :

Եւ յերիս որոշմունս անձաբանի և սորա եղեալէ զարդարուի : Ան վարձու . վն երկիւղի . վն սիրոյ : Սա զսիրոյ վասն զգեբակայութիւնն յամուանական մերձաւորութենէն օրինակէ սողոմոնականան , և նա յորդիութենէ . երիս կարգս ապրեցելոցն ասելով : Նառայ կոչէ զերկիւղիւ ուղղեալն , և վարձկան՝ զօժարեալն յառնուին . ապա թէ առաւել է քան զայստիկ՝ ասէ որդի՝ է հօրն հաւանել և ոչ վարձուն :

Վրդ՝ է առաջին և մեծ պարգև այս՝ զառաքինութիւն ստանալ . և երկրորդն՝ յաւիտեանական ուրախութեանցն արժանաւորիլ . զոր սիրօղքն քրիստոսի ըստանալու խոստման նորա առնուն ՚ի նմանէ : Ասն այնորիկ ՚ի ճշմարտութենէն կոչէ զայն որ խոստացաւն , զի մի երկբայեսցուք խոստմանցն : Վ յայէս ասելով ,

Ղ շմարիտն անձ յիսուս քրիստոս անձ մեր կեցո՛ և ողորմեա՛ մեզ : ՚ի ինդրուածս փակէ զբանն , և զանօրինական անուանն յիշէ , որ վն մեր եղև և կոչեցաւ յն որ է փրկիչ , վասն զի փրկեաց զմեզ ՚ի մոլորութենէ , և ՚ի սատանայական գործոց , և ՚ի մեղաց , և յանիծից , և ՚ի մահուանէ , և յապականութիւնք , և ՚ի դժոխոց : Եւ քն անուանեցաւ , վն զի օժաւ հոգւով կոչի քն , այսինքն օժեալ : Եւ նովին հոգւովն էօժ և զմեզ , և օժեալս արար և քրիստոնեայս արար և անուանեաց :

Տէր մեր , Եւ անձապարգև է հասարակաց անձ մեր սեպհական լինիլ , վասն այնորիկ յաւել անդ զմերն . զի այնու առաւել զնա ՚ի գութ անձիցեմք կեցուցանել և ողորմել : Վսելով ,

Յս քս տեր մեր կեցո՞ւ և ողորմեա՞ւ : Օ նոյն և ժողովուրդքն  
 ասեն , կեցո՞ւ ար : Վասնզի մեռեալ էաք ՚ի մեզս մեր , և կեցուցանել  
 քս կամելով եկն յերկիր և ասաց , \* Ի կեցուցանել եկի և ոչ ՚ի կո-  
 րուսանել : Եւ զի կորստեան և ոչ կենաց արժանի էաք . այլ նա  
 կեցոյց ողորմելոյն : Եւ սյնորիկ քարոզն ասե՛ կեցո՞ւ և ողորմեա՞ւ .  
 այսինքն՝ Թէ և անարժան եմք կենաց , կեցո՞ւ ողորմուծք : Օ ի ողոր  
 մին չԹողու զարժանին խնդրել . այլ հարկ առնէ և զանարժանսն  
 կեցուցանել :

Օ մնացուած գիշերիս խաղաղութիւն անցուցանել հաւատով  
 ՚ի տեառնէ խնդրեսցուք : Հանապազ վասն խաղաղութե հրամայովք  
 աղօթել . ոչ միայն մարմնոյ , այլ և հոգւոյ և մտայ խաղաղութիւն  
 հայցել . ուստի բազում օգտուծի լինի և լուսաւորութի և յրատա-  
 կուծութիւն յաղօթան նոյ : Եւ ասեն ժողովուրդքն միաբան՝ ոչ Թէ  
 տուր , այլ եթէ՛ շնորհեա՞ւ ար : Վեհայն ուրեք զշնորհէն խնդ-  
 րելով և զողորմելն , և յոչ արժանիսն զգթով ապն մաղթէ :

Օ հրեշտակ խաղաղութե պահպան անձանց մերոց ՚ի տնէ  
 խնդրեսցուք : Եւ ասն զի են հրեշտակք որ ՚ի պատժել առաքին ասէ  
 երանելին յովհան . և են որ պարգևաց և խաղաղութե արբանեակք  
 են , ՚ի պահպանութի և ՚ի վերկուծիւն առաքեալ մեզ՝ զոր հանա-  
 պազ ընդ մեզ լինիլ հայցեմք :

Օ քաւուծութի և զթողութի մեղաց մերոց ՚ի տնէ խնդրես-  
 ցուք : Օ ի կարի պիտանացո՞ւ է յամ՝ ժամ զմտաւ ածել զոր յան-  
 ցեաք առ արարիչն , և ապերախտք առ նորա երախտիսն եղաք :  
 Եւ առաւել կարևոր է ՚ի միաբանութե զայս առնել , և միմեամբք  
 վասն միմեանց պաղատել , և զիրերաց Թեթևացուցանել զբեռն մե-  
 ղացն : Օ ի ՚ի միաբանութե մերում և հրեշտակք և սուրբք կցոր-  
 դակից լինին մերոց պաշտամանցն և պաղատանաց : Եւ անձ առա-  
 ւել խոնարհի ՚ի միաբանութեան խնդիրն և զհաշտութիւն առնէ .  
 որպէս և նինուէացուցն միաբանելոց՝ արար քաւուծութի և անցոյց  
 զպատճառեացն պատուհաս :

Օ սրբոյ խաչին զօրութինն ՚ի պահպանութի անձանց մերոց ՚ի  
 տեառնէ խնդրեսցուք : Օ որ գթութինն նոյ մեծ պահպան մեզ  
 պարգևեաց . սուր սրեալ իւրով ահագին արեամբն ետ առ ձեռն  
 պատրաստ զեն մեզ , հակառակ անմարմին Թշնամեացն : Եւ և ՚ի  
 մարմնականաց ընդ գիմամարտաց պարիսպ և վահան անմարտնչելի :  
 Եւ իայն Թէ աներկբայ և անսղտոր ոգւով գրոշմեսցուք զմեզ , խա-

փանին ամ երևելի և աներևոյթ մարտը ՚ի մէնջ : Միայն թէ՛ և ՚ի կնքելն մերում յիշեսցուք զտեսան մերոյ զմարդասիրութիւն : որ նոյ գոլով որդի , սուրբ անմեղ անարատ զատեալ ՚ի մեղծ և վասն մեր մեղաւորացս իւրով մարմնովն կրեաց զչարչարանս խաչին :

Պատեալ զնա բւեւոք և սաստիկ մարմնովմայր ցաւոց՝ զմեր յանցանաց ՚ի նմա պահանջեցաւ զպարտս : Աւելոյճ ՚ի նմա զունի-  
ծիցն և զմեղացն դատակնիք , ազատս և անսպիս և անմահս և անապականս զմեղ արար : Ինքն քահանայապետ և ինքն պատարագ ՚ի նմա գոլով . և իւրով արեամբն յերկինս երկնից յանմատոյցն մըտեալ սրբութիւնս : Հաշտ առնելով զհայր ընդ մեզ , յանդիման առնելով երեսաց նոյ զմեզ՝ իւրն կացոյց մարմնովն , յորդիս նոյ կարգեալ զգառասպարտութեան կեալքս յերեսացն նոյ . և ինքն բարձրացեալ ՚ի խաչին ամբառնարով ՚ի նմա , և ՚ի նմա է ամբութեամբն :

Ասան պնդորիկ և մեք դնելով զնշան խաչին ՚ի մեզ՝ հաւատասցուք զնոյն ինքն զնոյ որդին ամական արեամբն ՚ի մեզ կրել . և զերեսս դրոշմեալ , և զգլուխս պսակեալ , և զանձինս պարսպեալ , և ընդ գիրկս ոգւոց մերոց խառնեալ զփրկութիւն ոգւոց մերոց : Աւ ապաւինելով ՚ի սուրբ նշանն , աներկիւղ վնիւ ՚ի չարէն . ըստ մարգարէին , \* Ոչ երկեսոյց ես ՚ի չարէն , զի դու աէր ընդիս ես : և \* Յուպքս և գաւազան՝ նորա մխիթարեսցեն զնս :

Արդ զնա խնդրեսցուք մեզ ՚ի պահպանութիւն , և ՚ի նոյն պարծեսցուք միշտ : Աւ ՚ի քարոզէն լուեալ զայս՝ հաւատով նկարեսցուք և ՚ի սիրտս և ՚ի հոգիս մեր և ՚ի դէմն . և ասասցուք սրտի մտօք , Հնորհէս աէր : Օր և ըստ իւրաքանչիւր տանց քարոզին սովորեմք տսել և յայսմ աւարտել : Ապա քարոզէ ,

Աւ ևս՝ վասն միաբանութեան ճշմարիտ և ուր հաւատոյս զտէր աղաչեսցուք : Ար է խնդիր մեծ և կարեւոր ամենեցուն , քահեւոց յուղիղ հաւատոց և մոլորելոց ՚ի հերձուածս՝ դարձ խնդրել և միաբանութիւն յուղիղ հաւատս , և ՚ի ճշմարտութիւն հաստատիւ միաբանութեան : Հարազս որոյ և զտէր ողորմեացն առ հասարակ վերաձայնեն , զի ողորմեացի և ՚ի գութ զարձեալ խնամարկեսցէ յիւր արարածս . և զթալով յիւր արարածս և ՚ի գինս արեան իւրոյ , ոչ թողուցու իսպառ կորնչել :

Անձինս մեր և զվիմեանս ամ նոյ ամենակալին յանձն արասցուք : Օմեր ոգիս և զնամ հաւատացելոց , մանաւանդ զայնոցիկ որք աղօթս ՚ի մէնջ հայցեցին՝ պարտիմք յանձնել նոյ : Վանդի և զայս իսկ սովոր եմք պատասխանի առնել նոյ թէ՛ նոյ յանձն . յայն սակս և առաջինքն այլ քարոզ չառնէին վն նոյ զի սյսու շատէին :



Ո՛չ վայրագար և զամենակալին յաւելլու . այլ զի զմտաւ ամ-  
ցուք թէ նոյն տր է ամենեցունց , և բաւական առ ամենեսին . և  
զամ ունի ընդ իւրով իշխանութիւն . զի այս է ամենակալն : Այս ՚ի  
նոյն ինքն յամ՝ ժողովուրդք զբանն դարձուցեալ ասէն միաբան ,  
Քեզ տնդ յանձն եղիցուք : ՚ի նոյն բերէ և քարոզն զաւարան ,

Որոմեա՛ մեզ տեր ամ մեր ըստ մեծի ողորմութեան բու՛մ :  
Լուսն որչափ մեր խնդրեմք և իմանամք , այլ որչափ մեծ է ողոր-  
մութիւնդ ՚ի բու՛մ բնութեդ : Օ՛ ի որնք ինքն ամ անասման է ,  
նոյնպէս և ողորմութիւնն : Ողորմութիւն ասի ըստ մեզ ՚ի սրտի , ՚ի  
նեղութիւնս ՚ի վիշտս և ՚ի վարանս ուրուք աղէտանալ , և ըստ կարո-  
ղութե՛ դիւրեւ վտանգելոյն : Թէ և պարտապան ինչ չեցէ , սակայն  
գետուսն սրտին՝ խոնարհեցունէ ունի պարտապան ՚ի կարեկցութիւն :

Օ՛ սոս և մեք յայ աղութիւք մաղթեմք . թէ և այլովք դիմօք  
չեմք ասեմք արժանի քոց պարգևացդ , այլ զի անկար ՚ի փառացն որ  
տուան ՚ի քէն և ելաք ՚ի դրախտէն . և ընդ մահուամբ և ընդ աղա-  
կանութեամբ դատապարտեցաք , ՚ի հոգս և ՚ի արտմութիւն և յաշխա-  
տութիւն և յաղգի ազգի ցաւս և ՚ի տառապանս և ՚ի տարակուսանս  
խարշիմք , զըկեալք ՚ի տեսութե՛ նք երեսացդ քոց . և զբանսարկուն  
անհաշտ պատերազմօղ ունիմք մեզ և որոգայթադիր և մեղսածու  
զանազան ակտիւք . և եղիելք ըստ հոգւոյ և ըստ մարմնոց և ըստ  
մտաց եմք . քանզի և նոյն իսկ բնութիւն հալառակ մեզ կարգեցաւ :

Յայսպիսի աղէտս հայեցեալ ամենողորմն տնդ , և բով մեծաւ  
ողորմութեդ՝ զմեզ յամն ողորմելիս իմացեալ , ողորմեսցիս մեզ ան-  
չափ ողորմութեդ բով : Յայս ձայն ողորմագին պաղատանաց և ժողո-  
վուրդն զհայցուածսն միաբանեն ասելով առ հասարակ , Տր ողորմեա՛ :

Եւ թէ քանի՞ կարևոր է այս եօթն տուն քարոզիս ուսցիս .  
զի ըստ ամ ժամուց և ըստ իւրաքանչիւր կարգաց այլ և այլ քարոզք  
են . իսկ սոքա յամ ժամու պաշտին . և ՚ի գիշերին երկիցս , մի յիս-  
կըզբանն և մի ՚ի կատարմանն : Եւ զերիս տունսն՝ յամ ձայնիւ  
քարոզնն զնեմք , զառաւել պիտանութի սոցա յայանելով :

#### Աշօնք գիշերապաշտման :

Քէն գոհանամք տր ամ մեր . որ շնորհեցեր մեզ հան-  
դիստ քնոց խաղաղութե : Ո՛ ան զի հրամայեաց քարոզն  
գոհանալ զայ , յառաջ կալով առաջնորդին՝ բերան ամ ժողովր-

գեանն լեալ, և զսիրտս անցուն յինքն միացուցեալ, որպէս մի ոգի զանսեան ժողովեալ, զհասարակաց գոհութի և զաղօթս մի լեզունիւն նոյ մատուցանէ. նախ զգոհութիւն՝ և ապա զաղօթսն: Վանդի այսպէս ուսուցանէ առաքեալն. \* Գոհութիւն սակ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ անձ: Օրը և երանելի վարդապետն յոհան առեալ զբանն սակ, թէ \* Ըստ առաքելական խրատուն յորժամ կամիցիս խնդրել ինչ յոյ, նախ գոհացիր զորոց առերն, և ապա խնդրեսցես. զի այսպէս լեւել լինիցին: Ստ այնովիկ և սկիզբն աղօթիցս գոհութիւն է: Զքէն գոհանամք տէր անձ մեր:

Վարձեալ զառաւել ընտանութիւն ընդ մեզ հաւատացեալսս յուշ առնէ, տէր անձ մեր սակելով: Որպէս աբրահամու և իւրոցն սակ վասն մտերիմ նոցա ծառայութե. թէ և ամենեցուն անձ է, սակայն հաւատացելոց առաւել կոչի անձ:

Մայր և նա լուսաւորիչն սակ. \* Որ սակքդ թէ անձ քո՞ բարեպետ առնէք. զի և որք ճանաչենն զնա, նաև նոցա է անձ. իսկ որք ոչն ճանաչեն զնա, թէպէտ և են նորա արարածք, հեռի են ՚ի խնամոց և ՚ի բարեբարութենէ նորա:

Օայս և մարգարէքն յաճախ առնեն. զի անձ ժողովողեանն կոչեն զնա անձ, է՛ երբեմն զի և իւրեանց իսկ առանձին: Սողովողը դեանն, յորժամ սակն \* Տէր անձ՝ խրայիլի. կամ \* Տէր անձ մեր: Իսկ իւրեանց առանձինն՝ \* Աճ անձ իմ, ես առ քեզ առաւում առնեմ: և թէ՛ \* Գու անձ իմ մի յամենար: և թէ՛ \* Աճ իմ ես գու՝ խոստովան եղէց քեզ: Օսոյն և ՚ի սօղոսէ գոտանեմք ասացեալէ \* Գոհանամ զոյ իմոյ. և գուցէ նկուն ինչ առնիցէ զնա անձ իմ առ ձեզ. և անձ իմ լի՛ արասցէ զանձ պէտս ձեր: Եւ այլ ևս բազումն գոտանեմք յառաքելոց և յայլոց նոց ասացեալ: Որք առ Չերմեռանդն սրտին սիրոյ խանդաղատիւն՝ և զհասարակաց տէրն կոչել որոյ առանձնակ: Մայր և աղօթքն՝ տէր անձ մեր սակելով, բորբոքէ զմեզ ՚ի սէր նորա, և զգու՛թ նորա ՚ի մեզ յանգուցանէ:

Գոհանալն շնորհակալութի է: Եւ զորմէ՞ն գոհութիւն. զի հանգոյց քնով զաշխատութիւն մեր. և զի խաղաղութիւն պահեաց: Վանդի բազում և ազգի ազգի փորձութիւնք յերևելիս և յաներևոյթս կան մարգարային կենացս. մանաւանդ ՚ի քնոյ ժամանակ:

Օի բազում անգամ յարձակին դէք հեղձուցանել և տանջել և դարհուրեցուցանել, և խափանեալ լինին ՚ի հրեշտակաց. Չանան և որոգայթս պատրաստել. և անձ զանցուցանէ զմեզք: ՄԱ և ՚ի գազանաց և ՚ի զեռնոց և ՚ի սողնոց ևս՝ և ՚ի փոքր ճրձեաց և դաւք և վտանգք մերձին և մահք, և փրկութի գոտանեմք յոյ: Տաղապս որոյ և երանելին յոհան, \* Առաւել քան զոր երևիս մեզ և գիտես, զան-

դիտելիսն ասէ մեզ խնամք և պահպանութիւն լինիլ յաստուծոյ :

Եւ մեք զայս անձ զմտաւ ածելով պարտիմք գոհանալ յամբն . որոյ ասէ սուաբեալ , \* Գոհացարնէք յամժամ ՚ի վերայ ամենայնի : Որոյ և աստ աղօթիցն գոհութիւն վն զե զհանգիստ քնոց շնորհէլով . և զի խաղաղութիւն շնորհէաց , և զի զարթնուլ էա և կանխել ՚ի փառաբանութիւն անուան իւրոյ : Վրանդի ասէ ,

Եւ ժամանեցուցեր զմեզ կանխել ՚ի փառաբանութիւն և ՚ի պատիւ ամենաուրբ անուանդ քո : Օ որ մեծ երանութի յմարդարէն համարի . \* Երանելիք են ասէ որ բնակեալ են ՚ի տան տեառն . յաւիտեանս յաւիտեանց օրհնեսցեն զքեզ անք : Ըստ երանութե հասեալ կանխեալքն ՚ի տան անք և ՚ի պաշտօն նր և ՚ի փառաբանութի նր անուան նր , ՚ի պատուել զմեծութի նր , գոհանան զշնորհացն նր՝ բերանով առաջնորդին և ոգւոցն միաբանութիւն : Ըստ ասէ ,

Տուր մեզ անք աղաչեմք զքեզ : Օ և աղաչանաց սովոր էս ողորմել , վն այնր տուր , և ոչ զե արժանի եմք : Եւ զինչ է խնդիրն :

Օ առաջակայ ժամ գիշերիս առանց մեղաց և առանց գայթակորէ անցուցանել : Վրանդի հանապազ իսկ՝ բաց առաւել ՚ի ժամ աղօթիցն նեառաձիգ լինիլ սովոր է բանասրիւուն , աղաչէ ապրիլ ՚ի պատրանաց նր , և ազատ մնալ յամժամ մեղաց ծառայութենէ , և ոչ զօրել մեզ գայթակորութեց նորա . այլ երկիւղիւն անք պարսպիւն : Ըստ միայն ՚ի մնացուած գիշերին , այլ և յամժամանակի կենաց . այսպէս ասելով ,

Եւ զամժամանակ պանդխտութե մերոյ՝ երկիւղելուք քո ամբացն : Պանդխտութի կոչէ զաստի կեանս ըստ մարդարեին , որ զինքն և զամ հարան պանդուխտ կոչեաց որ անքն էին : Եւ ըստ ան որ ասաց թէ՝ \* Դուք չէք յաշխարհէ . այլ էս ընտրեցի զձեզ յաշխարհէ :

Յաղաքս որոյ և առաքեալն յովհաննէս յաղաքս այլոցն ասէ , \* Յաշխարհէ են , և աշխարհ լսէ նց . մեք յայ էմք , որ զամ ճանաչէ , լսէ մեզ : Եւ զին՝ որ յայ է , պանդուխտ է յաշխարհի . յայն սակս և առաքեալն պետրոս պատուիրէ յասելն , \* Եւ եթէ հայր կոչեցէք զառանց անառութե դատօլն , ապա երկիւղելու զձերոյ պանդխտութե ժամանակն գնասլիք : Եւ ըստ առաքելականիս խրատու մտղթէ բան աղօթիցն եթէ , Չամժամանակս պանդխտութեանս մերոյ՝ երկիւղելուք քով ամբացն :

Վրանդի չիք ինչ զգուշաւոր ամբութի բան զերկիւղն անք . և ոչ գիւրբութենէ սատանայի քան զաներկիւղան յայ . զի հեռի են յայ՝ հեռացեալքն յերկիւղէ նր : Եւ երկիւղածք նորա մերձեանս առ

նա . և այցելու թի՛ն նր շուրջ է վնորօք և պահէ զնա՝ քանզի և բա-  
 նակօք հրեշտակաց պարփակէ զնա : Եւ ըստ ասացելոյն սողմննի ,  
 \* Երկիւղ ան ատէ զանիրաւունիս և զթշնամանս և զամբարտաւանուի :  
 Եւ ոմն յերանել լի վարդապետացն ասաց , \* Ուրանօր երկիւղ է ,  
 պատուիրանաց պահպանու թի՛ն և մարմնոց մարբու թի՛ն և որ ՚ի կարգին :  
 Օ որ և ազօթիցն բան՝ յեա զերկիւղն նոյ հայցել՝ անարատ մնալ  
 և զգուշաւոր ասէ զկեան յաշխարհի . այսպէս ասելով ,

( ) Ի զգուշու թի՛ք և անարատ վարուք կրօնաւորեալք յայսմ  
 աշխարհին : Օ ի որ երկնչին , զգոյշ և պատրաստ հանապաղ կան .  
 և զգուշանալովն ոչ ըմբռնի յարատոց մեղաց . այլ ըստ նոյ կրօնա-  
 ւորի յայսմ աշխարհին , և հասանին յապահով և ՚ի խաղաղ նաւա-  
 հանգիստն . զոր անբոց թ բանն կոչէ ասելով ,

Եւ աննեսցուք յանբոց թ և ՚ի խաղաղ նաւահանգիստ յաւի-  
 տենական կենացն : Ուր հողմք և արեք մեղացն ոչ բերին . այլ անեղ-  
 կիւղ յամ խոռովու թի՛ց կեանս յաւիտենականս ստանան , որ է ան-  
 հատ և անսպառ լի ամ բարու թի՛ք : Եւ լինի այս ,

Շ նորհօք և մարդասիրու թի՛ք տեսն մերոց և փրկչին յի՛ն քի՛ :  
 Բանզի քո ասէ սիրելովն զմարդիկ և գալովն առ մեզ և ՚ի վր մեր  
 մեռանելովն , հանգիլովքն այսմ ամենայնի . զոր և շնորհք քի սովոր  
 են գիրք կոչել : Եւ տէր և փրկիչ մեր ՚ի խոստովանիլն զնա , ՚ի փա-  
 ւաբանու թիւն փակէ զբանն յասելն ,

Որում վայելէ փառք իշխանու թի՛ն և պատիւ : Այլ ելել նմա՝  
 ցուցանէ թէ նմա միայն անգաւորէ փառաւոր լինել և իշխել ՚ի վր  
 ամի , և պատուիլ յամենեցունց :

Եւ յամ , զառ ձեռն ժամանակն ասէ : Եւ Սիշտ , զհանապաղոր-  
 դեանն : Եւ Յաւիտեանս յաւիտենից , որ ՚ի հանդերձեալսն է անըս-  
 պառու թեամբ : Եւ ժողովուրդն միաբան ասեն զամէնն . և սակաւ  
 բանիւս հաւասարին՝ բովանդակ ասացելոցս , գոհու թի՛ն և մաղթա-  
 նաց : Եւ է ամէնն՝ եբբայեցի բարբառով՝ այո , և արդարեւ :

Եւ ազաղու թիւն ամենեցուն : Ու այսր խաղաղու թի՛ն երկոյն  
 բանիւք բողում գիրս խօսելով երանելի վարդապետն յովհան և այլք  
 ՚ի վարդապետաց նոց , ասեն զսա զողջոյն զոր հրամայեաց քս առա-  
 քելոցն՝ տալ տանցն յորս մտանիցեն : Եւ զի հասարակաց տուն է  
 եկեղեցին , և ՚ի նմա հանապաղ տայ գլխաւոր եկեղեցւոյն զողջոյնս  
 զայս : Եւ սա է խաղաղու թի՛ն զոր տէրն հաստատեաց առաքելոցն ,

որ լինէ ամբ բարեաց պարզութիւնը : Այլ զի միջնորդ կայ առաջնորդն՝  
 այլ և մարդկան, հանէ զազօթս ժողովրդեանն առ անձ և իջուցանէ  
 զնորա խաղաղութիւնն յերկիր առ մարդիկ :

Որ անսայնորիկ յետ օրհնութեանցն, և յետ աղօթիցն, կամ  
 ՚ի կամիլն կարգաւ աւետարան, տայ զխաղաղութիւն. զի յաւետարանեալն  
 առարքելբար տայ զողջոյնն, և ապա աւետարանէ : Ասկ  
 յօրհնելն կամ յաղօթելն՝ յերկիրն զմերն տանելով զօրհնութիւն և  
 զազօթս, առ մեզ զամենապարզ և խաղաղութիւն նորա բերէ :

Օր ո՞նչ հասարակաց ժողովրդեանն բերան է, նոյնպէս և այլ  
 որպէս ասաց մարգարէն, \* Թէ հանցես զպատուականն յանարգէն,  
 բերան իմ եղիցիս : Այլ զի առաջնորդաց գործ է զպատուա-  
 կան մարդն որ է պատկեր այլ յանարգութիւ մեղաց հանել մկրտութիւն  
 և ապաշխարութիւն, վարդապետելով ՚ի հաճոյսն այլ. վասն այնորիկ  
 բերան է այլ : Այլ զօր օրինակ որք հրեշտակէն զպատգամաւորութիւ  
 երկոցունց կողմանցն, տանին և բերեն զերկոցունց բանսն :

Այսպէս առնեն և առաջնորդք եկեղեցւոյ, ՚ի մէջ կտրով այլ  
 և ժողովրդեանն, բանս տանին և բերեն. և կոչին հրեշտակք տն  
 ամենակալն ՚ի մարգարէն : Այլ մատուցեալ այլ զաղօթիցն հայ-  
 ցումն, փոխադարձէ ժողովրդեանն՝ զխաղաղութեան ընդունելութիւն  
 աւետարանելով. որպէս թէ ասիցէ, \* Վն որոյ առարքելբն լուսաւ,  
 և զխաղաղութիւ իւր առարքեաց բերել ձեզ զամ պարզեա. ոչ միում  
 ումբ կամ երկուց, այլ բովանդակ ամ ժողովրդեանդ : Որ այնր ՚ի  
 խաղաղութիւն յաւելու՝ զամցունն՝ ասելով, խաղաղութիւն անցուն :

Այլ զի աւետեաց է բանս, ըստ աւետեաց բանի առնելիք ըզ  
 դարձուած բանին : Օր երբ ասէ աւետարան թէ աւետիս ձեզ  
 ասեն նմա, և քեզ բարեացն աւետիս. այսինքն թէ՛ բարեացն աւե-  
 տիք և քեզ պարզեացին : Այսպէս առնեն և ժողովուրդն. լսելով  
 զխաղաղութեան բան, ձայնեն ասելով, Եւ ընդ հոգւոյդ քումն : Այսպիսի  
 ինչ թէ, և հոգւոյդ քումն եղիցի զօր և մեզ աւետարանեցեր :

Այլ առ այս որ ոչ սրտի մտօք աւանուցուն և տոյցեն զխաղա-  
 ղութիւն, գրեթէ թափուր միայն յամ պարզեաց խաղաղութեանն  
 մնացեն : Այլ որպէս ասացի՝ յոյժ են առ այստիկ սբցն բանք, և  
 մանաւանդ երանելոյն յովհաննու. անդ զուսուսմասերսն առա-  
 քեսցուք, և մեք յառաջ ըստ կարգին զբանն վարեսցուք :

Հրամայէ ապա սարկաւագն, Աստուծոյ երկիր պաշտեսցուք :  
 Քանզի և այսպէս է օրէն. պարզեալին ՚ի թաղաւորաց՝ ուսու-  
 ցանեն հրահանգօղքն երկրպագութիւն շնորհ ունել : Օր այն և սար-  
 կաւագն առնէ, այլ ասէ՝ որ լուսաւ զպատգամաւորին աղօթից

դբան . և ետ ձեզ զխաղաղութիւն իւր , որ ունի զամ ձեզ զհայց-  
ուածոց լուսնն , երկիր նմա պագէք : Աւ երկիրպագելով յամցուն ,  
անդէն առ պարզեատուն ասեն միաբան , Առաջի . քո ար :

Որն ինձ թուի՝ ասեն եթէ՝ դու տէր մեր առամենեսեան  
մերձենաս որ կարդան առ քեզ , և ուր երկրպագեն քեզ՝ առաջի  
քո է . և մեք այժմ զոր երկրպագեցարս առաջի քո է և տեսանի ՚ի  
քէն : Աւ քանզի առ մարդիկ յուրով անգամ զայս առնեմք . և թէ  
տեսանի ՚ի նմանէ երկրպագելն , սակայն մեք յաւելումք յասելն ,  
երկրպագի տեսուող ինձմ :

Վաս անդրէն դառնայ առաջնորդն առ ամ , կրկին տանել  
զժողովրդեանն զպաղատանս : Աւ զորօրինակ՝ պարզեաբերքն դառ-  
նալով ՚ի պարզեատունն , ասեն նախ եթէ՝ երկիրպագին և զոհա-  
ցան . և ապա զայլ ևս խնդիրսն ասեն : Սոյնպէս և առաջնորդն՝  
նոյնպիսի օրինակաւ առնէ սկիզբն բանիցս ասելով ,

Սայեա՛ տէր բարերար ողորմութե՛զ քո յերկրպագուս և ՚ի  
փառաբանիչս անուանդ քում սրբոյ : Աւ վն զի ողոր-  
մութեամբ սովոր էս խոնարհել առ մարդիկ , և ՚ի գորովոյ և ՚ի գթոյ  
հարկիս նայել յամենեսեան թէ և ոչ ունիցին արժանիս : Վ յայէս  
և ՚ի քո ժողովուրդս նայեա՛ ողորմելով , տեսանել զսոցա զերկրպա-  
գութիւնս , և ունին դնել սոցա փառաբանութեանս : Աւ ապա  
ասացեալ վն երկրպագելոյ ժողովրդեանն , եթէ միշտ երկրպագուք  
և փառաբանիչք ո՛ր անուանդ քո են , յարէ ՚ի նոյն և զպաղատանս :

Խաղաղացն զանձինս մեր յամ սատանայական խռովութեանց  
և յաշխարհական զբօսանաց : Օհրեշտակ խաղաղութեան քո տէր  
առաբեա՛ առ մեզ որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՚ի տուէ և ՚ի  
գիշերի , յարթնութե և ՚ի հանգստեան մերում :

Օանազան խորհուրդք ասագին և խռովարար զոգիս մեր  
վտանգեն , և աշխարհիս հոգք և զբաղմունք զմիտս մեր խաւարեցու-  
ցանեն . աղաչեմ զի խաղաղացին ոգիք մեր յայնպիսեաց դառն վը-  
տանգից : Աւ այս լինի թէ հրեշտակք այ՛ ՚ի բաց հայածէն զգիւաց  
մարտս . և դիւրութի արասցեն մեզ ՚ի զարհուրականաց գիւակա-  
նաց և ՚ի ցնորից աշխարհականաց : Որ ՚ի բուն և ՚ի յարթնութեան  
պղտորումն և երկիւղս զարհուրեցուցանողս անձանց մերոց առնեն ,  
անձառելի ցնորիւք ՚ի տուէ և ՚ի գիշերի :

Սո՛րոյ արտասուելի պաղատանօք հայցելէ մեզ զհրեշտա-  
կոցն պահպանութիս : Օհրեշտակ որոյ ՚ի թագաւորոց պահպանս  
տային՝ աներկիւղս պահին ՚ի հակառակամարտիցն , նոյնպէս և վասն

որոց նոյ պատու-իրեալ է հրեշտակաց իւրոց պահէլ զնոսա , անհոգս  
մեան յամ չարին արկածից , և զերծեալք ՚ի բռնահարութի՛ն որսո-  
ղին , անխափան և զօրաւոր զնան զաւարինութեան ճանապարհ :  
|| անս որոյ և յարէ ՚ի նոյն :

|| րպէս զն՝ պարկեշտութի՛ն և արժանաւորապէս քեզ տեսուն  
ճառայելով ՚ի կեանս յայտոսիկ : Վրանզի արգելէն վատթար խոր-  
հուրդք զպարկեշտ վարս այսպիսի օրինակաւ : Արամիմք ՚ի կերակրոց  
և յրմայելեաց պարկեշտանալ , և խորհուրդք զորկրտանութի՛ն ՚ի վերայ  
յարուցանեն : Արամիմք ՚ի քնոյ զգաստանալ , և խորհուրդքն՝ քնոյ  
զմեզ տալ դրդեն : Արամիմք և ազատանալ յընչից ճառայութեան , և  
խորհուրդք զագահութիւն մեզ օրինաբերեն : Արամիմք համբերել  
անարգանաց և թշնամանաց և զրկութեց և ցաւոց և աղքատութեց  
՚ի վերայ հասելոց , և խորհուրդքն զամբարտաւանութի՛ն և զանհա-  
զանդութի՛ն և զանհամբեր բարս մեզ ուսուցանեն : Այնպէս և այ-  
լովք առարինութի՛նք կարմիմք զգաստանալ , և խորհուրդքն զմեզ մեզ-  
կեն և լքուցանեն և անկարելիս մեզ զայտոսիկ առնեն :

Տողոգս ոյսորիկ հոգւոյն աղաչէ խաղաղանալ , և ՚ի հրեշտակե  
նոյ ընկրկիլ խորհրդոցն ընդ դիմակաց , որոյ զն նոյ խափանեալ զօ-  
րացուք անմիւս պարկեշտանալ , և արժանաւորապէս ճառայել նոյ :  
Վրս է արժանաւորապէս ճառայելն նոյ , որչափ կարն մեր զօրէ ,  
բառ նր մեծութեն զճառայութի՛ն մեր բազում երկիւղիւ հատու-  
ցանել , որպէս նոյ պարս է ճառայել մարդոյս հոգոյս և ստեղծուա-  
ծոյս անարգիս և փոքուս՝ մեծին և փառաւորելոյն և անբաւի ա-  
բարջին և խնամողին և փրկողին : || չէթէ որչափ նա արժանաւոր է  
կարեմք ճառայել նմա , այլ որչափ մերս բաւականանայ տկարութի՛ն ,  
և մեր սչ հեղգայցեմք , արժանաւոր ճառայութի՛ն մեզ համարի զայն :

Վրս է զոր ասեն , պարկեշտութի՛ն և արժանաւորապէս քեզ  
տեսունդ ճառայելով ՚ի կեանս յայտոսիկ : || քէր յաւել ՚ի կեանս  
յայտոսիկ , քանզի այրու կենօքս մտերմութի՛ն առարարին ցուցեալ ,  
անսպառին և անսպականին կենաց առ հասարակ տեսուն ուրա-  
խութեամբն միշտ վայելելով : || րպէս յարէ ՚ի նոյն :

Սամանեցուք յաւիտենական երկնից արքայութե՛ն քոյ , զոր  
պատրաստեցեր ՚ի սկզբանէ աշխարհի նքց քոց : || անս որոյ և մեր  
զայս իմացուք , էթէ յերկրի և յանցաւոր ՚ի կեանս սակաւ աշխա-  
տելով , յերկինս յաւիտենանս յաւիտենից թագաւորեցուք ընդ քի՛ն  
և ընդ սուրբս նորս . զի այսպէս է արքայութիւն թագաւորութի՛ն  
որում՝ արժանանան սուրբքն :

Եւ ընդ նոսին տսէ գոհանալով փառաւորեսցուք զամենայնք  
 զերրորդութիւնդ : Արով յայտ է եթէ կըրորին մեզ սուրբքն ՚ի  
 գոհութիւն և ՚ի փառաբանութիւնն յայ և յայ ևս կեանս . քանզի ՚ի մե  
 շնորհս կոչեաց զմեզ և զնոսս յանանց Թագաւորութիւն . որոց պատ  
 րաստութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի յայ կարգեցաւ : Աորս գնացին  
 զճանապարհ որ յանգերանութիւն տանի . որ թէ և մեք նոյն ճանա  
 պարհաւն ուղեորդք լինիմք , աստէն իսկ զառհասապէս յուսոյն  
 ընկալցուք . աստէն և սրբոցն հաղորդ լինուք յուրախալից փառա  
 բանութիւնն յայ , ՚ի կեանս մերձակայս , և միշտ յամ ավուրս մեր ,  
 և յաւիտեանս յաւիտեանից յայն յանկէտ և յանթիւ աւուրն յեա  
 նում որ ոչ ունի վախճան : Եւ ժողովուրդն ասէն միաբան՝ ամէն .  
 և այսու սակաւ բանիւս ամենայն գոհութեանցն և աղօթիցն հա  
 ւասարորդ լինին :

Ասան որոց և վկայութի սովորեմք կոչել , զի զամէնն ասելով ,  
 վկայ լինիմք ձմ ասացելոցն յառաջնորդէն : Եւ յաւելու ՚ի նոյն  
 թէ , օրհնեա՛ւ ձր : Օ՛ր որպէս ասէ աւարեալն . \* Հաւատամք եթէ  
 առնումք զհայցուածն զոր հայցեմք առ ՚ի նմանէ : Ասան այնորիկ  
 և ըստ այնմ օրինակի զոր ասացին , իբրև պատգամաւորաւ զմեր խըն  
 դիրն յայ առաջնորդաւն հայցեալ և հաւատացեալ թէ տայ , ասեմք  
 եթէ , օրհնեա՛ւ զձեզ ընդ մեր : Եւ նա անդէն օրհնէ ասելով , օրհ  
 նեալ է տէր մեր յմ քմ : Եւ միաբան ասեմք՝ ամէն . զի յայտ լիցի  
 թէ մեք շնորհակալութի տուաք առնել առաջնորդի եկեղեցւոցն :

Եւ յլ թէ էր աղագաւ աստանօր որպէս ՚ի վախճան ժամուն  
 օրհնել հայցեմք : Թուի թէ առաջինքն յայսմ վայրի գիրս ընթեո  
 նուին . և որպէս զկանոն ՚ի կանոն չարեիին , այլ զատուցանէին  
 կարգացմամբ . սոյնպէս և զսաղմոսս առաջաբանիցն ՚ի կանոնն չար  
 րէին , այլ գրովք մեկնէին : Քանզի և կանոնական բանն այս  
 պէս օրինադրէ չարել զսաղմոսն ՚ի միմեանս . և սաղմոս ասելով և  
 ոչ կանոն , յայտ առնէ թէ և յառաջաբանից սաղմոսացն որոշել  
 արժան է զսաղմոս՝ գրովք : Եւ օրհնեա՛ւ տէր , ասելն՝ զնոյն գու  
 շակէ դարձեալ :

Եւ զի կարևոր ևս է յայսմ տեղով գրոց կարգացումն վասն  
 եկեղցն՝ մտաց նորոգութե՛ն , և վասն չև ևս եկեղցն՝ գալոյ . որպէս  
 զի ամենեքեան միաբան զսաղմոսին հոգևոր երգք ասցեն յայ ,  
 օժանդակ լեալ գրոցն խրատք և լուսաւորութիւն ոգւոյն :

Բայց թէ ընդէ՞ր այժմ խափանեալ է . ոչ վասն այլ իրի ,  
 այլ միայն վասն պղերգութե՛ն . քանզի և զկանոնին գիրս ՚ի յով  
 տեղիս այժմ խափանեալ տեսանեմք . և ուր կարդանն , բնոյ պատ  
 ճառ և ոչ խրատու օգտի զգիրսն առնեն բազումք : Եւ ըստ յա



ուջանալոյ ժամանակին՝ Թուի Թէ և սուղ կարդացումն այս խա-  
փանի . քանզի աւելորդ իրս և ոչ կարևոր յորովից Թուի :

Եւ երանի Թէ աւելորդ միայն՝ և ոչ վնաս ևս իսկ համարէին  
բաղումք , և վայրապար դատարկութիւն ՚ի հոգևոր և ՚ի մարմնաւոր  
գործոյ : Եւ ասէն այսպիսի բանս . Թէ զմեղս և զարգարութիւն  
ամ որ գիտէ . և եթէ խտորիլ կառնի ՚ի չարէն և զբարին առնել ,  
տեղեակ է ամ մարդ . իսկ դրովք պատաղին չէ՛ ինչ շահ , այլ  
խափանումն ՚ի կարևորացն :

Եւ այս է որ զամուսական ըսպառնացումն յարդիւնս ամէ .  
զսոյն ոչ հացի , և զծարաւն ոչ ջրոյ . այլ սով լսելոյ զբանն ան .  
զի որպէս ՚ի սովոյ՝ խտրին և ապականին ոգիքն որք ոչ լսեն զպատ-  
գամն նոյ , յայտ առնէ մարդարէն : Վրանզի որպէս առանց մարմ-  
նական կերակրոց չսպրի մարմին , նոյնպէս և ոչ առանց խրատու-  
գրոց կեալ կարէ ոգին . զայս և մոխէս ասէ :

Օսոյն և տերն ՚ի վկայութիւն առնու ընդ դէմ փորձողին .  
\* Ո՛չ ասէ հացիւ միայն կեցցէ մարդ . այլ ամ բանիւ որ ելանէ ՚ի  
բերանոյ նոյ : Եւ դաւիթ՝ քան զմեղս քաղցր ասէ քմաց զբանն  
նոյ . զոր և գրիգոր անաբան ըստուգէ յասելն , \* Կերակուր իմն  
է վարդապետութիւն և կերակրողին : Եւ երանելին յովհան ասէ ,  
\* Զինչ չար քան զայն կայցէ՝ յորժամ զոր անձ ՚ի տանջանաց կարգի  
սպառնայ , դու անձամբ յանձն կուտես զապականիչ սոյն :

Վաջ իմն զբանն եթէ չգոյ ինչ այլ չար քան զայն . զի եթէ  
զկորնթացիսն ողբայ պօղոս . զի չկարէին զհաստատուն կերակուր  
վարդապետութե առնուլ , այլ կաթն ջամբել պիտոյսցաւ . ապա և  
որ ոչ կաթինն ջամբելոյ հասցեն , ո՞րքան ողբալք են : Աս , նոյնպէս  
և զէբրայեցիսն բանբասէ ասելով , \* Եղէք կարօտք կաթին և ոչ  
հաստատուն կերակրոյ : Օ՛ր վասն նոյ բանին ասէ զայս , որ ոգւոցն  
է կերակուր , յայտ ՚ի յաջորդէն է : \* Ամենայն որ կաթընկեր է  
ասէ՝ ագէտ է բանին արդարութեան :

Եւ ո՞ր է բան արդարութե , եթէ ոչ՝ խրատք նք գրոց . և որ  
նոցա ագէտն է . տակաւին աղայ է Թէպետ և լսէ զնոսա . իսկ որ  
և լսէ ոչ , զհարգ սպրի : \* Աստարելոցն է հաստատուն կերակուր .  
եթէ կերակուր է , ապա և կեանս է : Որպէս ասաց արն Թէ \* Պատ-  
ուէրն այն կեանք են յաւիտենական : Եւ եթէ պատուիրանքն նոյ՝  
կեանք են յաւիտենականք , յայտ է զի զօկեալքն ՚ի պատուիրանացն  
նոյ՝ մեռեալ են յաւիտենական կենացն , որպէս զօկեալքն ՚ի հարկա-  
ւոր կերակրոցն՝ մեռեալ են յայսց կենաց :

Եւ ոչ միայն մեռեալ են այնմ կենաց , որք ոչն կերակրին պատ-  
ուիրանօքն նոյ , այլ և ՚ի խաւարի ստատէն են . քանզի ոչ ունին զընդ

պատուիրանացն նոյ : \* Պատուիրանք նոն լոյս են ասէ , և լոյս ասն աչաց : Եւ ոչ լուսաւորէ միայն . այլ և իմաստուն առնէ : \* Վկայութի նոն ասէ հաւատարիմ է , և իմաստուն առնէ զտղայս : \* Ճրագ է բան քո ոտից իմոց , և լոյս տայ շաւղաց իմոց :

Որով յայտ է թէ որոց շաւղքն այսու ոչ լուսաւորին , միշտ ՚ի գայթակղութեան են ոտք նոյ : Որոյ ասաց տէրն , \* Որ գնայ ՚ի գիշերն՝ գայթակղէ . զի լոյս ոչ գոյ ընդ նմա : Գարձեալ և ՚ի նոյն սաղմոսին ասէ զայն թէ , \* Եւ իմաստուն առնէ զտղայս : Բան ըզձերս ասէ իմաստուն եղէ . զի զպատուիրանս քո քննեցի : Գարձել , \* ՚ի պատուիրանաց քոց իմոցեալ՝ ատեցի զճանապարհս չարաց . զի դու օրէնսգէտ արարեր զիս :

Տէս և զինչ սողոմոն ասէ , \* Ճրագ է պատուիրանն օրինաց . միտնգամայն և լոյս և յանդիմանութի և խրատ : Ասոյն և գլուխ առաքելոցն պետրոս ասէ , \* Ունիմք հաստատագոյն զբանս մարգարէից , որում թէ անսայցէք՝ բարեոք առնէք : \* Իբրև զճրագն որ տայցէ լոյս ՚ի խաւարչտին տեղւոյ . մինչև տիւն լուսաւորեսցէ և արուսեակն ծագեսցէ ՚ի սիրտս ձեր :

Աս ասաց որոյ մարգարէն ասաց թէ լուսաւոր առնէ . և պողոս ըստ նոցին վկայէ թէ իմաստուն առնէ , առ տիմոթէոս գրէ , \* Միտ դիր ընթերցուածոց մտիթարութե և վարդապետութեան : և թէ , \* ՚ի մանկութե զգիրս նքս գիտես որ կարօղ են իմաստուն առնել զքեզ ՚ի փրկութի , ՚ի ձեռն հաւատոցն որ ՚ի քս յս :

Եւ յարէ ՚ի նոյն թէ , \* Ամենայն գիրք անձաշունչք և օգտակարք՝ ՚ի յանդիմանութի են և յուղղութի և խրատ արդարութե , զի կատարեալ իցէ մարդն նոյ յամ գործս բարութե հաստատեալ : Եւ նորս ասեն՝ չեն պէտք գրոց , և պողոս ասէ՝ օգտակար են . խրատեն ուղղեն և կատարեալ մարդ նոյ առնեն և յամ գործս բարութեան հաստատեն :

Ըրդ՝ դու քեզէն տուր զերան՝ թէ ում հաւանել արժան է , պողոսի թէ մոլեգնոտացն որ արհամարհէն զգիրս նքս . որոց մարգարէն էսայիաս վայ տայ : \* Վայ արհամարհողաց , որ արհամարհէն արհամարհանօք զօրէնս : \* Վայ այնոցիկ որք առ իմաստունս ունիցին զանձինս , և յաչս անձանց իւրեանց խորհրդականք :

Գարձեալ ուշ կալ . թէ տիմոթեայ որ լին էր հոգւով արբով և ՚ի հոգւոյն նքջ ուսանէր՝ պէտք էին գրոց , ոչ չափ և սառաւել մեզ : Եւ զինչ ասեմ տիմոթեայ , պողոսի իսկ գլխովին պէտք էին գրոց գրէ առ սոյն իսկ տիմոթէոս , \* Յորժամ գայցես , բերջեր զգիրսն . մանաւանդ զմատեանսն : Եւ սոյն զի մօտ ՚ի վախճան էր : \* Ես այսուհետեւ նուիրեալ եմ ասէ , և ժամանակ գարձել իմոց հասեալ կայ ՚ի վր :

Ուստի յայտ է թէ, որպէս Հիւանդաց որոց յոյս Հասեալ իցէ  
կենաց, հարկ առնեմք որչափ ունիցին շունչ՝ կերակրել զոչոյն ինչ  
անդապէտաւ զի զօրասցին ոգիքն որչափ ՚ի մարմնի իցեն: Այնպէս և  
հոգևոր կերակրոյն մինչև յեւանել ոգւոցն ՚ի մարմնոցն՝ պէտքն պա-  
հանջին: մանաւանդ էթէ յայնժամ առաւել, զի զլքմամբ և յու-  
սով և կատարեալ հաւատով գնացէ աստի:

Իսոյց հարցից ցնոսա, վայրագամք հրամայեաց ան մովսէսի և  
մարգարէիցն գրել զգիրս. և կամ ունայն գրեցին առարեալքն զա-  
ւետարանս և զթուղթս իւրեանց և որ զգործս առարեւոյցն գրեաց,  
և կամ վարդապետքն զօր ինչ գրեցին: Վրակէս մի ՚ի պատուիրա-  
նացն այ՝ պատուականագոյն է քան զերկինս և զերկիր:

Ս ասն որոյ բառերէ մովսէսիւ անձ թէ, \* Եղևցին քեզ պատ-  
գամքս այսոքիկ զոր էս պատուիրեմ քեզ այսօր՝ ՚ի սրտի քում և  
յանձին քում, և իմացուցես զաս որդւոց քոց. և խօսեսցիս սրօր  
՚ի նստել ՚ի տան ՚ի գնալ ՚ի ճանապարհի, ՚ի ննջել և ՚ի յանել:  
Եւ արկցես զաս նշան ՚ի ձեռին քում, և եղևցին անշարժ առաջի ա-  
շաց քոց: Եւ գրեսցես զսոսա ՚ի վի՛ սեմոց ամաց քոց և ՚ի գրուես քո:


Եւ գաւիթ յայս հայեցեալ, երանէ որբ յօրէնսն ան խորհիցին  
՚ի տուէ և ՚ի գիշերի: Երանի այս ոչ ք քննէն զվկայութիւնս ան.  
բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա: Այնպէս և երեմիաս  
երանի այս խորցելն վասն այսր. զի պատուիրանք ան լոյս են նորա:

Եւ էսայի ՚ի գիշերոյն խաւարէ գիմէ առ անձ, լոյս զպատուիրանս  
նորա ունելով՝ այսպէս ասէ, \* ՚ի գիշերաց կանխէ հոգի իմ առա-  
ւօտ առնել առ քեզ անձ. վն զի լոյս են հրամանք քո ՚ի վի՛ երկրի:

Եւ քարոզէ ամենեցուն, \* Ուսարուք զարդարուի բնակիչք երկրի:  
Եւ ուստի՞ ուսանին զարդարուիւն. էթէ ոչ ՚ի հրամանաց նորա  
որ լոյս է երկրի:

Եւ էթէ այս այսպէս է, մթացեալ խաւարու ծածկեալ են  
ուգիք ասեցողացն զպատուիրանս ան. և ոչ զլոյսն որ ՚ի նոցանէն գի-  
տեն, և ոչ իմաստութի՛ որ ՚ի նոցանէ են բաղձան: Խտեւագարեալք  
են և նման շամշելոյն խօսին. զի էթէ գիտէին լսել ՚ի պօղոսէ, թե-  
րևս իմոնային, \* Հաւատք ՚ի լսելոյ են, և լուր՝ ՚ի բանէն քրիստոսի:

Եւ կամ տէրունեանն շայնին իսկ լսէին. \* Բննեցէք ասէ զգիրս,  
զի նրօր զկեանս ունել համարիք: Աս և մոլորեալս իսկ կոչեաց  
զայնպիսին որբ անգէտ են պատուիրանացն այ՝ զի և զօրուիթի այ  
անգիտանան: Իսկ որբ զի պիտոյ են պատուիրանք այ՝ իմանան, այս-  
պէս խօսին, թէ վասն ոյսր զի զայն խօսիմք՝ և ոչ իման այլ իմք  
եղար բանաւորք. և էթէ այսու լաւ էմք քան զանազանսն զիսկ  
յայլն յոյժ տկարագոյնք էմք քան զնոսա:



Օ ի եթէ 'ի մարմնաւոր իրս խնամանոցն իրք զօրանան , քանի՞  
 օն 'ի հոգեւորան խօսեցեալքն յնց . և եթէ պղծոցն բռնք և 'ի սա-  
 տանայէ հնչեցեալ երգքն իբրև զքաղցիկը ճարակ գտանեն , և գե-  
 բեն զվնաս զգաստից 'ի կորուստ . ապա ո՞րչափ հոգւոյն սրբոյ տգ-  
 դելով բանքն 'ի հնազանդութիւն քի գերեն զունկնդրացն ոգիս :

Օ ի եթէ սոսկ բան որպէս ասէ անձաբան 'ի յարութեան ճառին՝  
 \* Յաւելուած՝ ոչ սակաւ , այլ յոյժ՝ օգտակարէ . անձառնչ բանքն  
 քանի՞ բազմապատիկ յաւելուն զարդարութեան առաւելումն . զի  
 որքան միջոց նց ընդ մարդիկ է , նոյնքան և ընդ մարդկային խնաս-  
 առութեամբ խօսեցեալն և ընդ նոց շնորհիւն :

Եւ եթէ մարդկայինքն ոչ միայն առ մարդիկ , այլ և առ անա-  
 սունս կարողանան որո՞ւ ասեն գիրք . և զհէղգութի զեզին և զձիոց  
 զիւրոյ և զշան 'ի փոյթ յորդորէ . ապա զմարդ որ անամազոցն հան-  
 դիպի որո՞ւ զեզն , և անմտազոցն որո՞ւ զէշ , և զվնջէն ունի 'ի կանայս  
 նման ձիոց , և շանց դունակ ազգի ազգի պղծի . չկարէ՞ քրիստոսա-  
 սուր խրատան դարձուցանել 'ի չարէն 'ի բարին :

Իմա , ո՞րքան 'ի միում աւուր որսաց ձկնորան բանին ուսկա-  
 նաւ 'ի կեանս . ո՞րչափ բիւրս 'ի հրէիցն 'ի սակաւ ժամանակս աւե-  
 տարանին հնազանդեաց : Դա և խորանակարն ոչ ապաքէն յերու-  
 սաղէմէ մինչև 'ի կողմանս լիւրիկեցւոց՝ բանիւ ընծայեցոց քի զան-  
 բաւութի մարդկան : Այլ և այլ առարկելոցն բանք կարողացան ան-  
 երկրի լիւր , և յամ աղագաց ժողովել յարքայութեան անն :

Եւ ուն էրանելին յովհան ասէ վարդապետն տիեզէրոց , թէ  
 \* Ստատնայական մտաց է այն՝ որ չապ հայել մեզ 'ի գանձն ,  
 զի մի զմեծութիւնն որ անտի է շահիցիմք : Եւ թէ՛ զոր օրինակ 'ի  
 ծխի աչք բժաբէբք և արտօսարկոցք լինին . իսկ որք 'ի մարգս և  
 յաղբիւրակունս և 'ի սք օդս զբօսնուցուն , սրատեսք և քաջահայ-  
 եացք լինին : Բստ այնմ օրինակի և ակն ոգւոցն եթէ ընդ ծուխ  
 աշխարհիս իրաց գայցեն , բազում վտանգիւք խաւարեալ և մթով  
 վարձկեալ , ազգի ազգի լալեան լայցէ և աստ և անդ . ապա թէ  
 յաղբիւրս հոգեւոր բանից ճարակիցի , քաջատես և սրտին լինի :

Իարձեալ և որոց լեն և չպահեն 'ի մտի , սաստիկս մեղադրէ :  
 \* Սակաւ ասէ ոսկի գտեալ ուրուք 'ի քսակ արկանէ և զգուշանոց  
 կարով և կնքով և պահպանութիւն : Եւ մեք զբանն նոց զցանկակն  
 քան զօսիկ և քան զկանս պատուականս՝ ոչ յոգիս ամբարեմք .  
 այլ թողումք սահիլ 'ի մտաց : Եւ ո՞ այնուհետև ողորմեսցի մեզ  
 անձանց նենգաւորաց , և յայտքան աղքատութիւն իջելոց :

Եւ զսերմնակաթն դպիրոցն յօրինացն՝ երջանիկ վարդապետս  
 յայլում գրէ՝ նոց օրինակէ , \* Որք ոչ պահեն 'ի միտս զսերմն բոնին


այլ, այլ ճորեցուցանեն ՚ի մտաց, վասն որոյ յոյժ պիղծ են, և եթէ որ ոչ պահէն ՚ի միտս՝ յոյժ պիղծք են, և ուր մերձինն պղծ են: Այլ ա յայ է թէ բիւր պղծութիւն լինեն և կարի անմերձեանալը, որք և ոչ լսել անգամ և ընդունել զբանն այ անասն:

Այլ թէ անդաստան և այգի անտեղ և անգործ չպողաբերի, սպաս և ոչ ոգի որ ոչ գործի և սերմանի ՚ի խրատուց այ՝ կարէ արդիւնս առնել: Այլ որոյ օրինակէ ետցի վն հոգևորին զերկրաւոր մշակութի ստելով, եթէ \* Նախ կակղեն, և սպա զողջ աղջ սերմանցն սերմանեն: Այլ ՚ի վերայ բերէ թէ, \* խրատուցն դու իրաւամբ այ քոյ: Յայտ արարեալ թէ այսպէս պիտոյ է օրինադրել ամ ոգւց անոցն երկիւղեն, և զսերմն բանին հենաց ընդունիլ, և սպա պողաբերել աստուծոյ:

Այնպէս և ոք լուսաւորիչն օրինակէ երկրի սերմանց զսերմ անպաշտութե. և յիշէ զակօսելն և զպլան. և ասէ, \* Նոյնպէս պտուղի կակղել զանդս մտացն, զն սերմանիքն սուրբ և օգտակարք ցանիցն ՚ի ձեզ:

Այլ թէ այսպիսի ջանից պէտք են՝ անջանքն և անխաստիքն և ուր ոչ սերմն անպաշտութեն ցանիցի, զանրդ արդիւնարարք լինիցին. զն թէ սերմանահասնին ՚ի չորից մի մասն արդիւնացաւ, սպա անսերմացանելցն զանրդ արմախք լինիցին: Այս զն ՚ի ստասանայէ խօսին որք խափան լինին գրոց լսելութե, ասացար փոքր ՚ի շատ. ՚ի կարգն դարձցուք ուր սկիզբն արարարք:

Օ ՚ի թէ և կարևոր է ընդ դէմ նոցա երկայնել զբանս, և յուր լին աս սցս առասացութիք սրբոցն ձայնից, այլ ոչ թողու զմեզ պատաղել զայսու՝ շատութի իրիս սր առաջն կոյ: Այն որոյ սակաւք պատճառս սուեալ ուսումնասիրաց, ՚ի մեր խնդրոցն լուծումն յառաջեցուք:



Յաղագս սաղմոսին որ յեա աղօթիցն:

**Յ**եա կատարման աղօթիցն՝ սկսանին զսաղմոսն կանոնին սաղմոսին եօթն գործողայիւք՝ վառատրութի կատարելով. և սարկաւազն քարոզէ ըստ ամ գործողայի :

Այլ ևս խաղաղութեան զտէր աղաչեցուք: Այսինքն թէ՛ և վն խաղաղութե գարձեալ այլ աղաչանս այլ մատուցուք, զն՝ ևսն ալլէ, և՛ և ևսն այլ զն ուսցուք եթէ հանասարդ զնորս խաղաղութի

պարտինք խնդրել: Եւ ապա ասէն ժողովուրդն, Տէր ողորմեաւ: Եւ յուս զխոնարհութիւն վարդապետինք. զի ողորմիլ մաղթեմք, և զպարզեա խաղաղութե շնորհել. զի ողորմելն է աղքատն և անանկն և աղջաղին: Եւ զի աղքատացաւ մարդկային բնութիւն ՚ի փառաց և ՚ի կենաց և յանապահանութե և յարդարութենէ. և ամենայնիւ ողորմելն եղև: Օր թեպէտ և ողորմութիւն այ դարձեալ ՚ի փառ: էած և նորոգեաց և անապահան կեանս խոստացաւ, և արդարս և սուրբս և որդիս աստուծոյ զմեզ արար:

Համայն դիւրագայթ մեր բնութիւն յամէ վերիպեցուցեալ զմեզ ողորմելն և եղիելն առնէ. վասն այնր և նմանութեամբ անառակ որդւոյն զոչ արժանի լինել որդիութե այ բնդ միտ ամեալ, ողորմութեւն այ խնդրեալ զմեր օգուտն աղաչեմք: Այս այնր զխաղաղութիւն հրամայեալ խնդրել. բարոզին, ասեմք միաբան, ար ողորմեա:

Ասէ ապա և բորոզողն, Կեցո՛ և ողորմեաց մեզ ար: Օր զամենապարզ և խաղաղութիւնդ. բո ասէ տուեալ վասն ողորմութե, նոյն ողորմութե կեանս շնորհեա մեզ: Եւ միաբանեալ նմա ասեմք միաձայն, Կեցո՛ տէր: Եպա ասէ առաջնորդն,

( ) ԲՆՏՆՈՒԹԻՒ և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Եւստանօր զհամագոյուութիւ երբորդութեւն և զմիասնականութիւ և զհաւասարութիւ պատուոյն յայտ բերեմք. միով օրհնութե և փառօք զհայր և զորդի և զսուրբ հոգին բարեբանեմք. որ ՚ի մի անձութիւ երեք անձինք միանան: ( ) ԲՆՏՆԵԱԼ և փառաւորեալ են այժմ և հանապազ և յանբաւ յաւիտենին, ամէն:

Այսն յաւիտենին ասացեալ եմք նախ, կայ ասել և վն յաւիտենից յաւիտենին, զի կոչի մի յաւիտեան յառաջ քան զարարածս: Եւ կոչի այլ յաւիտեան յիսկզբանց արարածոց մինչև ՚ի գալուսանքի երկրորդ: Կարձեալ ասի յաւիտեան, որ ՚ի գալստենէնք քի անհատն և անսարուն, որ ոչ ունի կատարումն: Եւ զի ՚ի սկզբանն յաւիտեան կոչի՝ ուսցիս ՚ի մարգարէէն յասելն ցած, \* Յաւիտենից մինչև յաւիտեանս գու էս: Եւ ՚ի կուրին ասելոյ, \* Յաւիտենից ոչ ոք լուաւ բանալ զաչս կուրի: Եւ ՚ի պօղոսէ, որով զյաւիտեանս արար. վասն որդւոյն ասէ զհօրէ:

Եւ զի գալուսանքի՝ այսմ յաւիտենիս սարուումն է՝ ան ուստէք գիտելի է. նախ՝ յօրինացն, յորում զբազում իրաց ասէ. \* Օրէն յաւիտենականքեզ և որդւոց բոց: Յայտ է, զի այսմ կենաց պիտոյ է օրինադրութիւն՝ և ոչ հանդերձելումն: Եւ դաւիթ ասէ, \* ՚ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց բոց. զի յաւիտեան հաստատեցեր զնոսս:

Ըստ եպիփանոս՝ զլուսաւորան կոչէ վկայս . որք հաստատեալ են մինչև ՚ի կատարումն այսց կենաց , և ՚ի նշանս և ՚ի ժամանակս յաւուրս և ՚ի տարիս : Եւ ըստ միւսում բանին սոյն այս յոյտնի ցուցանի : \* Զաւակ նորա ասէ որ է դաւթի , յաւիտեան կացցէ . և աթոռ նորա զարեգակն առաջն իմ . և որպէ լուսին զն հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս :

Եւ պողոս վասն քրիստոսի չարչարանացն խօսելով , \* Միանգամ ՚ի կատարած յաւիտեան ասէ իւրով պատարագաւս յայտնեալ է : Եւ յսինքն՝ թէ մօտ ՚ի սպառումն կենաց աշխարհիս . որպէ և յառաջ յիսկզբան թղթին յայտնագոյն զսոյն ասէ . \* ՚Ի վիտնան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւոյն : Եւ այլ գտանի ՚ի գիրս բազումս ասել վասն վախճանի յաւիտեան այսորիկ :

Եւ որք յաւիտեանից , այս չ յաւիտեան . ՚ի սկզբանն և ՚ի կատարածին : Իսկ միւս յաւիտեան երրորդն՝ որ ՚ի հանդերձեալ գալուստենէն սկսանի , յաւիտեանից յաւիտեան կոչի . զն յետ նոցունց սկսանի և այլ ոչ սպառի :

Եւ յետ օրհնութեանցն միաձայնէն ամենեքեան զամենն , զն հասարակաց լիցի օրհնութիւնն . կրկնէ անդէն առաջնորդն զխաղաղութիւն յաստուծոյ առ ժողովուրդն :

Իսոց կամիմ հարեանցի չանցանել ընդ տեղիս , այլ ցուցանել զգերակայութի քահանայութեանն զանազանապէս : Օ ի ամենեցուն իշխանութի է միաբանել ՚ի սաղմոսսն և ՚ի փառս գոբողայիցն , և ՚ի քարոզութեցն վկայութի . և զաւարտումն՝ քահանայութեանցն հաւատալ : Օ ի բովանդակ եկեղեցին չկարէ համեմտիլ քահանային և գլխաւորել զօրհնութիւնն . այլ պէտք էն քահանային զնոցա ասացեալ սաղմոսերգութիւն՝ իւրանձնապէս օրհնութիւնն՝ նոյ մատուցանել : Հայն սակա լռէ անժողովուրդն . և սարկաւազն ձայնէ առաջնորդին թէ՛ օրհնեա . որպէս թէ ասիցէ՛ մատն նոյ զոր ժողովուրդդ օրհնեաց քով օրհնութեամբդ :

Եւ դարձեալ երևի միւս ևս այլ առաւելութի քահանային . զն ՚ի նոցա սաղմոսէն , և ՚ի փառս տալն , չկարէ եպիսկոպոսն ժողովրդեանն տալ զխաղաղութի , այլ աղաչել միայն հրամային ՚ի սարկաւազէն վասն խաղաղութեան : Իսկ յորժամ ՚ի քահանայից մատուցանի օրհնութի , այս ապա և եպիսկոպոսն զխաղաղութի . զն նա է դուրս քահանայութեան : Եւ զօրհնութի թէ ինքեամբ և թէ քահանայիւրն՝ սու անձ հանեալ , առնու զխաղաղութիւն յոյ և տայ ժողովրդեանն : Օ ի որպէ հնոյն պատարագաց զմանս զլատացիքն ՚ի նուիրացն մատուցանէին , բայց պարզեացն որ յոյ՝ մովսէս և ահաբօն լինէին առ ի թ :

**Բ**. յարէս և բանաւոր պատարագաց թէ և այլ որ ՚ի քահանայ-  
 ւոց իցէ մատուցանող, զխաղաղութիւն եպիսկոպոսն յորում եկեղեցւոյ  
 հանդիպի, առնու յայ և այլ նց. որ քան զամ պարգև գերագոյն է և  
 մնաւանդ թէ բովանդակ պարգևօք լցեալ: \* Եւ զև ամ տուրք  
 բարիք և ամ պարգևք հատարեալք ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի հօ-  
 րէն լուսոյ: **Ե**ւ գլխաւոր եկեղեցւոյն զամենեսեան զնմ միով բա-  
 նիւս այսու օւետաւորէ: խաղաղութիւն ամենեցուն ասէ: **Օ**րմէ  
 սուտքեալ ասէ, \* խաղաղութիւն այ որ ՚ի վեր է քան զամ միտս, պա-  
 Տեցէ զսիրտս ձեր և զմիտս ՚ի քն յն:

**Բ**նհասանելի ուրեմն հրեշտակաց և մարդկան մտաց, վկայ-  
 եաց զայս ասելով. յաղագս այսորիկ և ՚ի վեր սասց քան զամ միտս:  
**Ս**որին աղագաւ թէ օրհնէ քահանայն, թէ աղթէ, առ ՚ի յայ զխա-  
 զաղութիւն զայս բերէ պատասխանի. որ լի է անխնայալն պարգևօք:

**Ե**րրորդ ցուցումն առաւելութե քահանային այս է, զև կրկին  
 առնու միով անձամբն զարտիւ քան զժողովուրդն ամենեքումք:  
**Օ**րն ոչ միայն զւրեանց փառաբանութիւն քահանային աւար-  
 տեն. այլ զև և նորս ասեն, փառք հօր և որդւոց և հոգւոյն սրբոյ:  
**Ի**սկ առաջնորդքն և զօրհնութիւն ևս յաւելուն ՚ի փառսն. և չեչեկ  
 որ ՚ի ժողովրդեանցն զայս առնել, և ոչ բովանդակ իսկ ժողովուրդն:

**Բ**. Եւ որպէս յայլ իրս կրկին պահանջէ աւարեալ զերիցանցն  
 պատիւ ասելով, թէ \* Բարեւոք վերականգնքն երիցունք կրկին պատ-  
 ւոց արժանի լնցին: **Վ**ոյնպէս և յօրհնութիւնն այ կրկին կարգեալ  
 է զպատիւ երիցանցն:

**Վ**արձեալ զև չեք ինչ շնորհ, զոր ստանց առաջնորդաց տայ  
 ամ. այլ վերստին ծննդեանն որ ՚ի հոգւոյն, և կենարար մարմնոց և  
 արեան տեսուն բաշխումն, թողութիւն մեղաց դարձեւոցն ՚ի խոստո-  
 վանութիւն ապաշխարութե, ամուսնութիւն զուգութեան, ընծայից և  
 նուիրաց և պարգևաց մատուցումն, հոգւոցն հանգուցեւոց առ քն  
 յուղարկումն, և մարմնոց նոցա ընդ ամենապահ աղմկն այ ամբնալ:  
 և որ այլ ևս կտորք են քրիստոնէականք. և օրհնութիւն եկեղեցեաց  
 այ և սպասուց նց, կամ նշանի խաչին, կամ միւռոնին գերագունի,  
 կամ երկրի, կամ ջուրոց, սերմնոց, պտղոց, սնկոց, անասնոց,  
 անտից բուժեւոց ամային շնորհիւն, կամ այլ ինչ ամատուր պար-  
 գևի, միջնորդք՝ առաջնորդք եկեղեցւոց լնին:

**Վ**որքա առնուն ՚ի ժողովրդոցն զխոստովանութիւն՝ զաղթս՝  
 զօրհնութիւն՝ զնուէրս մատուցանեն այ: **Ե**ւ դարձեալ առնուն յայ  
 զօրհնութիւն զզանազան զշնորհսն զխաղաղութիւն երկնային, և տան  
 մարդկան մեռելոց և կենդանեաց: **Ո**չ վայրագար զայս յեղանակեմ  
 քաղձօրինակապէս. այլ զև կարացից իմացուցանել առ հասարակ



քահանայից, և ժողովրդոց:

Վաճառուից, զի ՚ի հեղզալն կամ ՚ի ազխտանալն որ ինչ վասն ժողովրդեանն, գիտասցեն թէ սրչափ առ անձ մեղանչէն, կամ սրբան զժողովրդուն յնասեն: Կամ սրչափ դատի քն որ զարխնն իւր էհէզ վասն մարդկան՝ զայն որում՝ զհրեշտակութի միջնորդութեան հաւատաց. և պատուիրեաց զգոյշ լինել միւս՝ ՚ի փոքրկանցն, և թէ ոչ անձ սրտիւ և անձ մտք յամ զօրութի մատակարարիցեն զժողովրդեանն՝ նոյ, և գոյն՝ ժողովրդեանն. և անձ ուղղութեամբ միջնորդեսցեն: Արն և խրատէ գլուխ առաքելոցն պետրոս. \* Եթէ որ խօսեսցի իբրև զայ պատգամն, և թէ որ մատակարարիցէ իբրև ՚ի զօրութի զօր շնորհէ անձ. զի յամի փառաւորեսցի անձ ՚ի ձեռն յի. քի:

Օ Եթէ որք վասն անցաւոր կենացս պատգամաւորեն ՚ի հողեղինէ և ՚ի մահկանացուէ առ նմանս, հողան և զգուշանն զի մի ամսթ և երկիւղ նոյ հասցէ ՚ի պատգամաւորեն. և կամ յնասեսցին նորք որք ունիցին զնոսս խօսելս ՚ի միջի. այլ անձ խմատութեամբ ջանան յիմաստս և ՚ի բանս: Եւս որ ընդ անձ և ընդ մարդիկ ոչ միայն վասն անցաւորիս, այլ և վասն անանց կենացն տարուբերին, բանիւք և արդեամբք զգուշութիւն պիտի: Արք այսմ կենաց կամ մահու և այնմ առիթ լինին ՚ի զգուշանալն կամ ՚ի հեղզալն. արիւնատարար լինին ըստ մարդորէին ՚ի ծուլանալն, և փառացն քի հաղորդ ըստ պետրոսի ՚ի փոյթ գոտանիլ:

Եւս ժողովրդոցն, զի գիտասցեն թէ սրբախի պատիւ առ ՚ի յոյ ունին առաջնորդք. կամ սրբան օգտից և շնորհաց առ ՚ի յոյ, նոցա բերօղք են. և սրչափ բարեաց առաջնորդօղք: Կամ քանի՞ն ՚ի վերայ նոյ իշխանութի առեալ յոյ՝ կայել և արձակել յերկինս և յերկրի: Թողուլ զմեղս, և ունիլ, բանալ նոյ զերկինս և փակել. իջուցանել առ նոսս զողորմութի նոյ և արգելուլ. բերել նոյ և իրաց նոյ օրհնութի յոյ՝ կամ անէծս. և զայն ևս զոր յառաջն ասացաք:

Եւ զայս անձ իմացեալ նոյ, ընկալցին զնս որն զհրամայեցաւ ՚ի տեսանէ այնպէս որն թէ ինքն քն իցէ: Օ Եթէ ժողովրդեանն իբր ոյ ՚ի քնն նոցա շնորհի, և այս և ընդ ունել զնոսս որպէս զքն ՚ի ժողովրդեանն պահանջի. նոյնպէս ունիւղբութի և հպատակութիւն, որպէս հրեշտակի նոյ՝ զաստուծոյն խօսողի:

Վարձեալ մարմնական պիտոյից լուսն որն հօր հոգասցի. որն վարդապետի, որն զհոգևորսն սերմանողի հնձեսցի. որն աշխատասէր մշակի և այգեգործի քի՝ պտղատուեսցի: Իբրև ՚ի առաջարի նոյ գործողի, իբրև սեղանոյ նոյ պաշտօնէի, անդուստ հարկաւոր պիտոյիւքն լցցի. իբրև զաւետարանն աւետարանողի, յաւետարանէն կեալ պատրաստեսցի:

Ոչ ապաքէն և առաքեալ սյուս օրինօք իրաւաբանէ զառաջ-  
նորդացն հարկաւոր պարտիս դարմանատրութէ: Այս ղէ՛ և երկո-  
ցունց կողմանցս սէր ՚ի միմեանս առաւելեացի քան զճնողաց և ըզ-  
ճննդոց: Այնչափ՝ որչափ առաւել է քան զմարմնաւորն՝ հոգւոր  
ճնունդ և սնունդ, նոյնչափ և գուծք յաճախեցին առ իրեարս  
քան զբարեկամաց առ իրեարս, այնքան՝ որքան օգտուծի երկնային  
լաւ է քան զօգտուծի երկրային: Այլ և վշտակցին և կարեկցին  
ևս առաւելագոյն քան որ մարմնոյ են կարեկիցք, այնքան՝ առաւել  
է որչափ հոգի քան զմարմին: և այլք սոցին նմանք բովանդակ իրե-  
րաց փոխադարձեալ հարկեացին:

Աւ զի ևս ինձ երկայնաբանելն է, օրինակ առաջն կացելոյ  
քի՛ և աշակերտացն առ միմեանս որպիսուծիքն, և առաքելոցն առ  
ւրեանց աշակերտան, և աշակերտացն առ նոսա իրագործուծիքն:  
Որոց թէ՛ ոչ նմանին երկաքանչիւրքն, մեծ դատաստան ընդունե-  
լոց են կողմն սխալելոցն, և բազում վարձս դասնելոց այնպէս արա-  
րօղքն: Այլ ես ՚ի յիմն դառնալով՝ զյաճախելն ՚ի նոյն բանս՝ առ-  
այլ թողլով ժամ և ժամանակ, եթէ՛ սէր հրամայեացէ:

Ետ կանոնին և օրհնութեանն օրհնելոյ, կան քարոզք և  
աղօթք չորք կրկնով: Աւ պաշտին սորա երկոցունց կանոնաց. մի մի  
քարոզ և աղօթք առ կանոն մի: Աւ իբրև գլխաւորի, դարձեալ  
սկիզբն աւնու ՚ի չորից կանոնացն մնացելոց:

Քարոզ Երանեալ և իբրև կանոնացն, զհինի ասելոյ զՄ աղթանքն՝ ըստ պատ-  
շաճի աւուրն:

Ասան ՚ի վերուստ խաղաղութի և փրկութի անձանց մերոց  
զատեր աղաչեսցուք: Աւ զայել հրամայէ, զի իջցէ խա-  
ղաղութիւն նոյ և փրկեսցէ զոգիս մեր. այն խաղաղութի՛ զոր խոս-  
տացաւ տէրն թողուլ առաքելոցն: Աւ ընկալեալ զայն՝ փրկեցան  
ոգիք նոցա ՚ի ձեռնարկութի սատանայի. և վերագոյնք դասն քան  
զնենգութի դիւացն և մարդկան, և առանց խոտովութեան և զան-  
գիտելոյ, այսինքն չկասելոյ:

Այց գու հաւաստի միտ դիր բանին, թէ՛ որպէս յայն խոր-  
հուրդ խաղաղութեան զոր խոստացեալ է ՚ի տեսունէ՝ բերէ զմիտս:

զի անդ ասէ , \* Ո՛չ որո՞յ աշխարհս տոյ տամ ես ձեզ : Լու աստ ՚ի վերուստ ասէն՝ զճնաշխարհիկն յայտնէ : Տէրն ասէ , \* Մի՛ խոռվեացին սիրտ ձեր : Որ զողուցն արութիւնն յայտնէ . և քարոզն զողուցն փրկութի խնդրել հրամայէ . և է նոյն խնդիրն . զի անխոռվ և առանց զանգաման ոգին մնացէ : Յոր ոչինչ գիւտկան ակտք կամ երկրաւոր ասէ քարոզել կարացեն , փրկութեն անձառելոյ հասին : Յարտգա սյտորիկ և ժողովուրդքն միաբան՝ զտէր ողորմեացն ասեն . զի թէպէտ և անարժան իցելո՞ք , ողորմեացի և պարգևեացե զխաղաղութիւն զխոստացեալն :

Ս Իսրայելաց տեառն նոյ՝ ձայնի աղաչանաց մերոց զոր աղաչեսցուք : Իսէն՝ զքնդուներն զաղաչանս և տալ զխնդրելն ցուցանէ :

Ս ասն քաւիչ և ներող լինելոյ նոյ ՚ի վերայ մեղաց մերոց զոր աղաչեսցուք : Բաւեւն՝ սրբել է , և ներելն՝ չո՞ծել զպատիժան ըստ մեղացն ՚ի վերայ . այլ տալ անդիկ ապաշխարութեան :

Ս ասն թողոյ մեզ զամ յանցանս մեր զկամայն և զակամայն զտէր աղաչեսցուք : Ս ասն զի և վասն ակամայ մեղացն դատիլ ունիմք , խնդրեմք թողուլ զոր մեքն յօժարեցաք գործել , և զոր յանյօժար կամաց սխալեցաք ՚ի հարկէ :

Ս ասն զի մի՛ ընդ խոտանս գտանիլ մեզ յաւուրն պատասխանատուութե զտէր աղաչեսցուք : Ս ր պատասխանատուութե՝ է օր դատաստանին . յորում որք անաշի կան դատուորին՝ զիւրաքանչիւր գործոց պատասխանիս պահանջին . և խոտան գտանին որք ոչ ընդ քի յերկինս վերանին . և հեղեղաւ հրոյ ՚ի գեհենն անկանին :

Բ ստ տերուտական առակին՝ \* Յուսկանեն յետ ժողովելոյ զբարի բարին յամանս , և զխոտանն ՚ի բաց ընկեցին : Օ ի արատքոյ է գեհենն ոչ միայն երկնից , այլ և սյամ՝ երկրիս որ մարգաբնակ : Բ րգ՝ հրամայեմք աղաչել զի մի՛ յայնցանէ լեցուք , այլ որ ՚ի յարկան յաւիտենից ժողովն :

Ս մենայն տանց քարոզս աւարտէ զոր աղաչեսցուք : Լու զողորմութիւն յոյ ըստ իւրօրքանչիւրոցն ժողովուրդն հայցելով ասեն տէր ողորմեա՛ս : Օ ի ողորմիլն հաւանեցուցանէ տալ խնդրուին թէպէտ և չիցէ արժանի :

**Տ**էր տունջեան և գոյացուցիչ գիշերոյ , որ արարեր զտիւն  
ի զբօսանս բարեգործութե ՚ի փրկութի անձանց մերոց ,  
և զգիշեր ՚ի հանգիստ քնոյ տկարացեալ բնութեանս մերոյ :

**Տ**էրն անուն՝ զտիրանան և զտիրելն յայտնէ ծառայիցն , զի նր  
հաստատեալ է զտիւն և զգիշերն , վասն այնորիկ ծառայի հաստչին ,  
և հրամանի նր անայ . որպէս ասէ դաւիթ , \* Հրամանի քում մնայ  
տիւն , զի ամենայն ծառայ քո է :

**Ա**լ գոյացուցիչ գիշերոյ : **Մ**. յսիրն՝ ասեղծիչ , որ ՚ի զգոյէ ՚ի  
գոյ ամ . և զտիւն կազմեաց և հաստատեաց գործել և վայելել յա-  
րարածս այ բարեական . զի ՚ի նմա տեսանեմք զերկնի գեղեցկութիւն  
և զերկրի վայելելութի : **Օ** կենդանեաց յորինուածս . և զազգազգս  
բուսոց և անկոց և ծաղկանց . զաղբիւրաց՝ գետովք և ծովովք զառ-  
ի մեղ պիտանութի : **Ա**լ զբօսումք նորօք՝ վայելելով ՚ի նոսա , և  
փառաւորելով զարարչն , որ վասն մեր հաստատեաց զնոսա , և ետ  
մեղ գործել սորօք զպիտոյս մեր և զընկերաց , և օգնական միմեանց  
լեալ , և միմեամբք զմիմեանս հոգացեալ :

**Ս**նն իշխէ և ոմն իշխի . ոմն արուեստս բերէ յառաջ շինողու-  
թեամբ՝ և զհանգերձից և զանօթոց պէտս : **Ա**լ ոմն սերմանէ զեր-  
կիր բուսովք սերմանեօք և տնկօք , և զհասարակաց պէտս լիցոցուցա-  
նէ . ոչ զմարդկան միայն , այլ և զանասնոց :

**Ա**լ հրձուի իւրաքանչիւրօք ՚ի վաստակս ձեռաց իւրոց , և  
հրձուանս այլոց կազմէ : **Ա**լ անկարիցն ընծայ բերէ յարդար վաս-  
տակոցն . զի ոչ միայն յայսմ՝ առուր կենացս միայն լիցի աշխատիլ  
տունջեամբն , այլ և ՚ի հանդերձելումն : **Ա**լ վն այնորիկ է գոհու-  
թիւնս . զի այնպիսի շնորհս գտայք յաստուծոյ :

**Մ**. բարեր ասէ զտիւն ՚ի զբօսանս բարեգործութե ՚ի փրկութի  
անձանց մերոց : **Օ** ի ամ վաստակովքն այ՝ երախտաւոր լեալք ,  
փրկիցիմք ՚ի չորէ և ՚ի մեղաց և ՚ի գեհնէն , և երկնից հասցօք :

**Օ** ի եթէ ՚ի շինուածս զօտարն հանդուցանես , և զգեստուց  
զմերկն ծածկեացես , և կերակրովք և ըմպելեօք զկարօան լցուսցես ,  
երկրաւս զերկինս գործեցեր . և շահեցար զաստիս և զանտիսն :  
**Մ**աև ՚ի բանտարգելն և ՚ի հիւանդան և որ զըկինն՝ տունջեամբն  
բազումն թէ կամիս բարեգործես ՚ի նոսա : **Փ**րկես և փրկիս . յու-  
սովն ասա , և պարգևօքն անդ զուարձանաս :

**Ի**սկ գիշերոյն հանգիստ որպէս բանն ասէ՝ նորոգումն առնէ  
տկարութես , և զօրինակ մահու և զլոյս յարութե ՚ի մեղ ապաւորէ :

Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր ՚ի փառաբանութիւն փառաւորեալ անուանդ . քում սրբոյ : Յայսպիսի օգտութիւն զարթուցեր , զի հրեշտակաց լեցուք երգակիցք . քանզի տկար է բնութիւնս , ոչ զանմարմինս ոչ զօրէ անդադար ՚ի քում փառաբանութիւն : Յաղագս այնորիկ հանգուցանելով զօրացուցեր զմարմինս մեր , և հոգւոյս օժանդակես ընդ հրեղէն փառաբանիչսն զքո փառաւորեալ անուանդ փառաւորել , որ յիսկզբանցն և յաւիտեանցն փառաւոր էր . և անկարօտ էր եղելովքս փառաւորիլ :

Եւ առ գութ արարչութեանն հաճեցաւ յարարածոցս պաշտօն անուել . ոչ զի ինքն յաւելուած կամ փառս առցէ , որ ամենակատարն է և անփոփոխ . այլ զի փառաւորիչքն պատուեսցին՝ զփառաւորեալն օրհնելով . քան զոր պատիւ մեծ այլ ոչ գոյ :

Ինկն և այժմ զաղաչանս մեր , և յարողեալ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք միշտ ՚ի պաշտօն քո կանխել երկնային կանոնի :

Տեսանէ՞ս թէ որպիսի մեծապատիւ գիտացեալ զայ փառաբանիչն լինիլ , աղաչէ մեծ բաղձանօք միշտ ՚ի նոյն կանխել , ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք , երկնայնոցն նմանիլ կարգաց : Օրր և կանոն անուանէ . զի առանց ուղիղ հաւատոյ և առաքինութեան անընդունակ է պաշտօնն . սակս այնորիկ երկոցունց լինել մարթէ . զի \* չաւատք առանց գործոց մեռեալ էն , և գործք առանց հաւատոց :

Իսկ որ ուղիղ հաւատով զբարիս գործէ , նա է որ արդեամբք և ոչ բանիւք և եթ զիմ փառաւորէ . քանզի ասէ , \* Լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդկան . որով զի տեսցեն զգործս ձեր բարիս , և փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է :

Եւ մեք զայս ամ իմացեալ , նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք . և զսոյն զայս ՚ի տեսունէ ինդրեսցուք երկնային կանոնի անդադար փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգի . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Իսաղաղութիւն տալն :

Եւ յետ այսորիկ տայ և անու զԻսաղաղութիւն աղօթմանտոյցն՝ և ոչ ևս եպիսկոպոսն , զի դէռ ևս ունի դառնալոյ և ասելոյ զմնացուածոց ժողովրդեանն , և վասն գոհութեան նոցա և

երկրպագութեան . որով որն ասացաքն՝ շնորհակալութիւն առ ան-  
ցուցանէ խոսաման հայցուածոցն : Աւապ սարկաւազն երկրպա-  
գել հրամայէ : Օպս արարեալ , սկսանի քահանայն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Օքեղ որ յամի դթած և մարդասէր տէրդ ես՝ աղաչեմք  
՝ հանապազ . զի զօրացուցես զմեզ օրրատօրէ՝ կալ ՚ի  
կարգի կրօնաւորութե մերում : Թեթեւացն տէր զքաղցր լուծ քո  
զոր եդիր ՚ի վերայ մեր . զի կարասցուք կալ ՚ի պատուիրանի քում՝ ,  
և զհաճոյսն առնել առաջի քո յամժամ ՚ի տուէ և ՚ի գիշերի , հրեշ-  
տակային երգակցութեամբ զքեզ օրհնել :

Աղէ՛ նայեաց դարձեալ թէ որպէս մեծաբաղձ պաշտանօր  
զնոյն հայցէ , զգութն և զմարդասիրութի յիշեցուցանելով , աղաչէ՛  
օրրատօրէ զօրաւոր լինիլ ՚ի հրեշտակական կարգաւորութիւն . զայն  
ունել կրօնաւորութիւն՝ զոր հրեշտակքն : Կրօնք ասի հաւատք և  
վարք ուղիղ . յորմէ՛՝ աղաչէ անթերի մնալ և անմեղիւն ոն պերհնքն :

Օի թեպէտ և աստանելն հողեղէն բնութեանս է հրեշտա-  
կացն լուծ , այլ քեզ կարողութի է թեթև և քաղցր առնել զնա  
մեզ՝ քո սիրովք և յուսովք : Աւ զհոգին սք ՚ի թիկունս հասու-  
ցանելով , որոյ անհնարինքն հնարաւորք՝ և անկարելիքն կարելի լե-  
նին . քանզի զայս ակնարկէ յասելն , Ջի կարասցուք կեալ ՚ի  
պատուիրանի քում :

Աւ զրօրինակ յառաջին նուագ նուագեաց ուղիղ հաւատով  
և աւարինասէր վարուք միշտ ՚ի պաշտօնն կանխել քա երկնայնոցն .  
Վոյնպէս և աստ զնոյն յայտ առնէ յասելն , զհաճոյս քո առնել  
յամժամ . զի հաճոյ է նմա հաւատք ուղիղ և վարք սք : Ընդ ասէ՛  
երկնային կանոնիւ . այսինքն՝ երկնային կարգաւորութի : Աւ որ  
առաջիս կայ՝ զնոյն մարթի :

Պատուէ և ՚ի գիշերի հրեշտակային երգակցութեամբ զքեզ  
օրհնել , զքեզ գովել , և քեզ փառս մատուցանել : Տեսանէն զբո-  
վանդակ ալօթիցս բան . զի ոչ յերկնէ ինչ խնդրէ և ոչ յերկրէ .  
այլ զի միայն նորա փառաբանութեանն հրեշտակական վարուք  
արժանաւորեսցուք :

Քանզի որն ասացի՝ այս պատիւս քան զամ պատիւ գերա-  
զանց է , և քան զերկնից և սարքայութիւն : Որում պատուի մեծն  
դաւիթ տենչացեալ , կաթողին բաղձանօր ասէր ցամ՝ , \* Ջինչ կայ  
իմ բնաւ յերկինս , կամ ՚ի քէն զինչ ևս խնդրեցից յերկրի :

Եւ արդ ասա՛ սո՛վ երանելն մարգարէ • զի թէ չունիս ինչ պէտք իրաց յերկրէ , ապա զինչ է որ քեզ փափագելին է : \* Նուաղեաց ասէ սիրտ իմ և մարմին իմ : Աստանօր սիրտ զողին ասէ • և զողոց և զմարմնոց ջերմն փափագն առ անձ յայտ առնէ • որո՞յ թէ նուաղել ՚ի սաստիկ ցանկուածենէն :

Վանզի կարօտուծի հացի և ջրոց նուաղէ զմարմինն , այսպէս և իմ կարօտուծիւնս առ քեզ՝ նուաղէ զիմ հոգի և զմարմին : Օ որ և յայլում սաղմոսի ծարաւ իսկ կոչէ : \* Ճարաւէ՛ ասէ առ քեզ հոգի իմ • քանի՞ պատիկ ևս և մարմին իմ : Ալ գարձեալ , \* Որպէս փափագէ եղջիւրու յաղբիւրս ջուրց , այնպէս փափագէ անձն իմ առ քեզ անձ : Ալ ո՞յ անդ տասց՝ նուաղեաց սիրտ իմ , զնոյն օրինակ ասէ և յայլում սաղմոսի , \* Անձն իմ որո՞յ երկիր ծարաւի է առ քեզ • վաղվաղակի լուր ինձ , զի նուաղեաց յինէն հոգի իմ :

Օ ի որո՞յ ծարաւին արագեցուցանէ զմերձակոյսն թէ արագեցէ՛ք ջուր տալ , ապա թէ ո՞չ , նուաղեալ ոգիս չճանդարտէ , այլ վաղվաղակի ըստառի : Այնպէս և մարգարէս պարբեալ յանձային ծարաւոյն՝ զանձ աղաչէ , և զողին նուաղեալ ասէ • և պաղատի , \* Մի դարձուցանեք զերեսս քո յինէն , նմանիցիմ՝ այնոցիկ որ ի ջանենն ՚ի գուբ : Վ յինքն , թէ ծարաւոցս զովացումն չառնես՝ և զերեսս դարձուցանես , մեռելոց նմանիմ որ ի ջանենն ՚ի գուբ :

Ո՛ սան այնորիկ որո՞յ ասա՛ վաղվաղակի լսել հացէ նուաղեցելումն • նոյնպէս և անդ յասելն , \* Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ անձ սրտի իմոյ : Վ ու էս ասէ կեանք հոգեոցս իմոյ և առանց քո ոչ ունիմ կեանս • յաղագս որոյ խանդաղատելով փարի զաստուծով • \* Բաժին իմ ասէ՝ անձ յաւիտեան : Ո՛չ սակաւ ժամանակս , այլ մշտնջենաւոր բաժին իմ էս :

Եւ ասացեալ զՏեառացելոցն յայ զաստակումն և զկորուստ , ասէ և զոր ինչ իւր բարին է : Եւ զայն ոչ զարբայուծին , և ոչ զոր անդ բարիքն ընտրէ , այլ զառ անձ մերձելն և զլուսաւն ՚ի նա և զօրհնելն զնա • այսպէս ասելով , \* Ինձ մերձենալ առ անձ բարի է , և դնել առ աէր զոյցս իմ • և պատմել զանձ օրհնուծիւնս նորա :

Վաս՛ ասաց թէ չկայ ինձ խնդիր և ցանկուածի արոց , ոչ յերկինս և ոչ յերկրի • բայց առ քեզ ցանկուածիւնս իմ նուաղէ զիմ սիրտս • և դու էս իմ սրտիս բազմանս : Եւ ասա՛ ասէ , ինձ առ քեզ լինիլն բարի է • ապա աւարտ զայն գնէ՝ զօրհնելն զնա անիւ : Եւ յայլում սաղմոսի ասէ , \* Շուրջ եղէց և մատուցէց ՚ի խորանի նո՞ պատարագ օրհնուծի • օրհնեցից և սաղմոս ասացից ան : \* Լուր անձայնի իմում զեկարդացի առ քեզ • ողորմեա՛ ինձ և լուր ինձ զի զքեզ սուսց սիրտ իմ , և խնդրեցին երեսք իմ զերեսս քո աէր խնդրեցին :

Եւ զինչ է զոր կարդացերն . կեանս յաւիտենից , կամ որ անդ  
բարեքն խնդրեցեր : Ա՛յ՛ ասէ . այլ զինչ : \* Զմի ասէ խնդրեցի և  
զոյն աղաչեմ : Եւ ո՞ր է այն . բնակիլ ինձ ՚ի տուն տեառն , և  
շուրջ զտեղանով նորա երգել զերգս օրհնութե : Եւ որպէս սովոր  
եմք զախորժակս մտացն յայտնել այսպիսի բանիւք , եթէ չասէ ինձ  
ինչ մտացս՝ բայց յայտմ իրէ . սոյնպէս և մարգարէս յամէ հրատար-  
եալ զմին և եթ խնդրէ , զամ առուրս կենացն ՚ի տան այ բնակիլ . և  
զնա տեսանել և օրհնել հանգոյն հրեշտակաց :

Այս արդ և զտենչանս յայտ բերէ թէ , \* Զքեզ ասաց սիրա-  
խմ . և խնդրեցին երեսք իմ զերեսս քո ւոր խնդրեցին : Եւ ոչ շատ-  
եաւ ասել մի անգամ թէ \* խնդրեցին երեսք իմ զերեսս քո տէր :  
Եւ յերկնէ թէ խնդրեցին . որպէս թէ ասել իմ մտացս դու ասիս  
միայն . և զքեզ խնդրեմ , և ոչ դադարիմ ՚ի խնդրելոյ :

Եւ յայսիս ոգի և միտս և մէք ստացուք . և մի ինչ նախամե-  
ծար քան զնա և զնորա օրհնութին համարեսցուք : Եւ սրտի մտօք  
խնդրեսցուք յաղօթից հայցուածն ասել ցած մեծաւ պաղատանօք  
զայս , Հրեշտակային երգակցութիւն զքեզ օրհնել , զքեզ գովել , և  
քեզ փառս մատուցանել հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ . այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

### Զմի մաղթանք :

Աղմոսիւք և օրհնութիւն և երգօք հոգևորօք անդադար փա-  
ռաւորեմք զՏայր և զորդի և զսուրբ հոգի . այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից , ամէն :

### Քարոզ՝ Երկինքստամեն և Տերապաւեն կանոնացն :

Այս արդ ՚ի գիշերի և ՚ի տունջեան յամ ժամու խօսիլ մեզ  
զբան տեառն զտէր աղաչեսցուք : Վանդի բաղձացեալ  
սաղմոսերդողին՝ Երանութեանցն բաժանորդ լինիլ խրատէ քարոզն  
խնդրել զն ապցին յայ այս շնորհք . յօրէնս տեառն խորհել զտի-  
և զգիշեր , և զնոյն խօսել : Օհ որմ սասց երանելն յովհան , թէ  
\* Ի հոգևորսն միշտ զբերանն բանալով՝ սրբի բերանն յամ բանից  
որ ՚ի սատանայէ ազդին :



Ալ զի ստոանայի իսկ բերան լինի՝ բերանն որ խօսի զստանայինս : Ալ քի բանիցն խօսող լինելով և ՚ի նոյն ցանկ կրթելով, ըստանայ բերան նմանող բերանոյն քի • մանաւանդ՝ թէ յարդիւնս զբանն ամիցէ :

Ասան չանկանելոյ մեզ ՚ի փորձութիւն , որում ոչ կարեմք չանդուրթեւ զոր աղաչեացուք : ՚Յոյժ աղօթելն է այս՝ չգալ փորձութեանց որ մեզ չէ տանելի • զի բազումք կորեան ՚ի փորձութեց ՚ի վիճեկելոց առաւելքան զիւրեանց կարն : Ալ մասնեցան սրունկութեանց և ազգի ազգի պղծութեց • և անկան յուրացութիւն և ՚ի չայհոյութիւն , չհամբերելով ցաւոց կամ նեղութեց կամ սգոյ կամ աղբատուէ , կամ այլ ազգ վտանգից , կամ չոր խորհրոց արկածից :

Ալ լինի այս վասն ամբարտաւան և յանձնապատան լինելոց ուրուք • վասն որոյ ցանկ պարտիմք յարագս խոնարհութե՛ աղաչել • զի աղբեացուք յանտանելի վշտաց • և զի որ գիտէն զմեր կարն , այնքան ամեցէ մեզ փորձութի՛ որբան օգտիմք և ոչ վնասիմք : Օ սոյն զայս գրէ կորնթացւոցն Երանելին պօղոս : \* Հաւատարիմ է անձ որ ոչ ամեցէ զձեզ ՚ի փորձութի՛ առաւելքան զկարն ձեր • այլ արասցէ ընդ փորձութեան և զելն զի համբերել կարասցիք : Ալ տէրն յաղօթան զոր մեզ ուսոյց՝ զայս եղ աւարտ , թէ \* Սի տանիր զմեզ ՚ի փորձութիւն • այլ փրկեա՛ ՚ի չորեհն : Արով յայտ է ՚ի կարի կարեւորացն զսա գու :

Ասան անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին քի զտէր աղաչեացուք : Աիծ կոչի արատ մեղաց , և անբիծ է , այսինքն անարատ • զի որոյ ՚ի մարմնում տեղի որ արատի , անպիտանանայ և չկարէ զիւրն առ բոլոր մարմնն զպարտս վճարել • այլ և նախատանաց անուն անձինն բերէ խեղութեամբն :

՚Յաչացն վնասեալ կոյր կոչի , և յակամջացն խուլ • յոտիցն կաղ , ՚ի ձեռացն փեցի : Ալ թէ այլ տեղի վերաւորեալ կամ բորոտեալ , անդուստ առնու զգարովանացն զկոչումն : Ալ միտնդամայն միոյ տեղոց ապականումն՝ ծածկէ զայլոցն ողջութեան անուն , և յինքն զկոչօղան հայեցուցանէ , զթշնամանացն միշտ ձայնել անուն , և անտի յիւրեանց ուշի պոհել և այլոց ծանօթս տալ :

Վմանապէս և յարատեալ ոգիսն հանդիպի ըստ մեղացն զանուն առնուլ • սպանող , շուն , գող • և կամ թէ այլ ինչ յանցաւոր գտցի , այնու արատեալ , զանբժութի՛ ՚ի բաց դնէ • և բոլոր ոգւոյն զյանցանացն դնէ զբիծ • և այնու գարովի ՚ի մարդկաննէ , և անկեալ յեբեսացն աստուծոյ գտանի :

Այսպէս և ՚ի մի յանցանս գտեալ և յայլն ուղեղ իցէ , ըստ

առաքելոյ՝ \* Ամենայն օրինացն պարտական է : Այս որոյ հրամայե  
քարոզն՝ խնդրել յոյ զն անբիժ պահեսցէ զմեզ . և զարատաւորն  
ի դարձ և յապաշխարուծիւն ածեալ՝ քաւել լինի : Այն լինի մեզ  
արատեալս երեւիլ յորժամ գայցէ քս և ահագին ատեանն դնիցի  
զոր ահեղ կոչեաց քարոզն :

Վանզն ամ ուստեք ահից յաճախուծիւն լինի , ՚ի քի անձառ  
փառացն և անտանելի լուսոյն : Վանզն հայրական գայ փառօք .  
որում և հրեշտակք ՚ի սպասու կալով յիսկզեանց մինչև ցայն օր , և  
նչ մի ժամ աւանց երկիւղի և գողման ՚ի փառսն յայն հայել կարաս  
ցեն . զորս ըստ հանգուրժելոյ նոցա նոցին ցուցանէր :

Վարձեալ և ՚ի հրեշտակաց անհուն զորացն՝ է սարուելի օրն .  
քանզն ամ հրեշտակք ասէ գայցեն ընդ նմա : Այլ թէ , մի հրեշտա  
կի երևումն այնքան տագնապ հրեշտակացելոյն եբեր դանիելի , մին  
չև հաղիւ զգուց ելումն արգելուլ ՚ի մարմնոյն նոյն հրեշտակի :  
Կա քանի՞ պակուցումն մեղաւորացն իցէ յերևմանէ ամ հրեշտա  
կացն . որք ահագինս հայեացին ՚ի նոսա վասն ապաստմբելոյն յիւր  
եանց տեառնէն :

Վաև կոծն այն սաստիկ աիեզերա՛նոճ , քանի՞օն անըմբէրելի  
լինիցի . և կամ հուրն որ առաջն տեառն գայցէ՝ մեծաւ նախանձու  
այրել շուրջ զթշնամիս նորա՝ սրպիսի ինչ տագնապաբեր լինիցի :  
Վաև չար գործոցն երևումն սրբան երկիւղ և ամօթս և վտանգ  
ածիցէ . քանզն իւրաքանչիւրօք յանգամոցն , զիւրոյ սխալմանն ըզ  
կերպ աշխարհատես ցուցանէ :

Վին՝ զայրատուծէ և զարարկնուծէ , զանողորմուծեան , զա  
նակնարկմանն ՚ի կարիս եղբօրն : Օխայտա՛ն՝ ՚ի զգեստս և յինչս և  
յարարս և ՚ի ստացուածոց յաճախումն , և զոչն տեսուծէ արարա  
ծոցս՝ զարարիչն օրհնել . և զոչն առաջնորդել նորօք յընկերացն  
օգուտ , գործով կամ օգնականուծէ , կամ միսիթարական տեսուծէ  
և վշտակցուծէ : Օնչն արտատուելոյն վս իւրոցն և այլոց մեղաց ,  
կամ վս մարմնոյ վտանգին . զայս և զոցին նմանս կերպանան աչքն :

Վոյնպէս և ունին՝ զանլուրն լինիլ հրամանոցն նոյ , և զհլուն՝  
անտուակ խօսից և երգոց և անիրաւ խրատուց , և զըպարտուծեց և  
նենգուեց և բանբասանաց և այլոց պիղծ սաիցն : Այլ զչնդունելոյն  
դձայն կարեաց և վշտաց եղբօրն և զրկանաց զըկելոց , և զգատաստա  
նոց և զտառապանաց , և որ այլ այսոցիկ նմանս ականջացն արատք :

Վերանն՝ զգատարկաբանուծէ , զստուծէ , զերդման , զպղծա  
բանուծէ . զբամբասանացն , զանիժից , զարտնջմանն , զթշնամանաց ,

զբարկութեան զկառութե՛ն, զչարտարատութեան, զարդելոյն զբարի  
խրատն, զո՛չ ուսուցանելոյն զօգուան զՏոգուոյ և զմարմնոյ, և ըզ  
չխօսելոյն յար ընդ՝նոյ, և կամ զնոյն ընդ մարդկան: Աւ զուրաց  
մանն, և զխաբէութեան, և զկեղծաւորութեանն, և զանախառու  
թեանն, և զարհամարհանացն, և այլ ևս անիրաւութիւնք բերանոյն՝  
կերպածեի յայնժամ:

**Ճ**եռք՝ զգտտարկութեան, և զո՛չ վաստակելոյն, և զո՛չ կերակ  
րելոյն զաղքատս և զտկարս և զվերաւորս, և զո՛չ սպասաւորելն Տիւ  
րոց և Տիւանդաց և բանտականաց: Աւ զո՛չ աղաչելն զնձ՝ Հանա  
պազ, և զո՛չ համբառնալն առ նա սրբութեամբ, և զո՛չ փրկելն զզբ  
կեալս, և զո՛չ թափելն և խաղաղել զկուռեալս: Օ գողանալն, ըզ  
զբկելն, զարբանեկելն պոռնկութեանց և ազգի ազգի պղծութեց, զ  
զձգելն ՚ի կաշառս և յանիրաւ հարուածս: Կամ շինել կամ ժողո  
վել ո՛չ ուղղապէս զիւրան կամ զօտարս, կամ վատնել և ցրուել  
անսրտացաւաբար կամ ագասութեամբ: Աւ որ այլ գուռակ ձե  
ռաց փնսք՝ ազգի ազգի որոշմամբք երևեալնան նոյ և նձ աչխար  
Տախութե հրապարակին:

**Ո**տք՝ առնուն զհանգամանս ո՛չ աշխատելոյ ՚ի ճանապարհս  
բարեաց՝ յաղութից՝ յողորմութեանց՝ ՚ի տան նոյ, ՚ի սպասաւորութի  
Տիւրոց, ՚ի տես Տիւանդաց և արգելականաց: Աւ և պղերդանալն  
առ ՚ի գործ և յուսումն բարութեան, և յօգնել և ՚ի կարեկցելելու  
բարց ըստ նձ պիտոյից և վշտաց: Աւ զընթանալն ՚ի ճարիս՝ ՚ի գո  
ղութիւն յազգի ազգի փնսսս, և ՚ի պէս պէս պոռնկութիւնս և ՚ի  
պղծութիւնս, և ՚ի խորդախութիւնս և ՚ի կուրս, ՚ի խաղս և ՚ի թա  
տերս և ՚ի ժողովս այլանդակս և ՚ի տես անառակ և պիղծ երևմանց,  
և հանգանակաց և արբեցութեց. և որ այլ ազգ ևս անառակ շաւ  
ղօք գնացեալ իցէ:

**Յ**այտնէ և որովայն զորովայնախոլութեան տեստիս, զգուռակ  
գուռակ շուայտութիւնսն և զբազմօրինակ փափկութիւնսն. և ըզ  
յանդգնեալ պարծանօք արբեցութիւնն և զղեղնութիւնսն. և մա  
նաւանդ որ յայլոց աշխատութեանց և ՚ի բազմաց կարօտ և անտես  
լինելն, և կամ սովամահ ևս: Աւ որ վասն որդէծնութե է մարմին,  
զպէս պէս պղծալից անտիցն և զգիղութեցն բացայայտէ զօրինակն:

Աւ ո՛չ այոջափ միայն, այլ և սիրտն զբազմութիւնս պղծալից  
խորհրդոցն և զյորդութի զանազան չարեացն զոր ծովայոց յինքն  
՚ի ներքս և վերաբերեաց արտաքս զնձ, ո՛նզ զանազանութի աղէտից  
ազգի ազգեաց, ՚ի յայտ երևութի նոյ և հրեշտակաց և մարդկան բերէ:

Եւ ՚ի կշտամբուծիւն խորհելեացն և գործելեացն որոյ ասացն առարեալ, \* Յանդիմանել զվիմեանս ՚ի խորհրդոց իւրեանց • կամ թէ պատասխանի իսկ տալ յաւուր յորում դատէ անձ զչազանիս մարդկան ըստ ուետարանիս ինում:

Վանզի խորհուրդ խորհրդոց յանդիմանիչ լինի • և երևամբ զաղտնեացն որոյ թէ պատասխանատու լինի • թէ այսպիսի վատթարութիւն էր՝ յոր թարհեցարն, և ինձ ոչ լուար և խափանեցեր: Օհ համառօտ ասացից, անձ ըստ մեղացն նկարագրին իւրաքանչիւր անդամբ • որոյ ասաց առարեալն թաղէոս, թէ \* Այ ՚ի մագաղաթի կերպարանիւ անձնիւր գործոց:

Կամ որոյ սուրբ լուսաւորիչն զգարունն ՚ի գալուստն քի օրինակելու, ցուցանէ զբարի ցուցումն բարեաց՝ բուսովք անկովք ծաղկովք հոտովք, համով մրգոցն և երևամբ բիւրազի ծաղկաց և որ ՚ի նոցանէն հեշտութիւնք աչաց և բմաց և շաշակելեաց:

Իսկ զմեղացն յայտբերումն՝ զանազան փշովք և փնասակար բուսովք • յորս ասէ, \* Ընդ քեզ բուսանին զորս ընդ քեզ թաղէցեր, արդարութիւնքն կամ մեղքն: \* Եւ և առարեալն պօղոս զոյն իսկ վիսպեաց յասելն վասն մեղաց թէ՛ \* Եւ որ այլազգ ինչ իցեն, թաքչել ոչ կարեն: Եւ դարձեալ վասն բոլոր չարեաց կերպարանալով ՚ի մեղաւորս՝ ասէ, \* Մի կերպարանիք կերպարանօք յոր ինչ աշխարհս այս • այլ որ նորոգմանն է:

Եւ զմեղօք կերպարանին՝ հին մարդ կոչէ • զոր մերկանալ հրամայէ և զնորն զգենուլ որ ըստ այն հաստատեալ է արդարութիւն և սրբութիւն և ճշմարտութիւն: Եւ ապա զիւրաքանչիւր անդամն զհին մարդոցն զոր մերկանալ հրամայէ՝ համառօտ բանիւք յայտ բերէ:

Օսոյն և յայլում թղթի գրէ, \* Թլփատեցարնէք զանձեռագործ թլփատութիւն ՚ի մերկանալ զանգամն մարմնոց ձերոց թլփատութեամբն քի: Եւ ասացեալ նց զհին մարդն մերկանալ գործովք իւրովք, յաւելու ՚ի նոյն • \* Եւ զգեցարնէք զնորն նորոգեալ ՚ի գիտութիւն ըստ պատկերի արարչին իւրոց: Օհ ոչ միայն զհնացեալ մեղօք անդամն չմերկանալն գատապարտէ այլ գատապարտին և այնոք իկ որք զնորն ոչ զգենուցուն • և ոչ ՚ի կերպարանս արարչին նկարագրին:

Վանզի և յիմար կուսանքն ոչ զի պոռնկութեան ունէին ըզկերպ՝ արտաքսեցան յառագաստէն և զըկեցան ՚ի փեսայէն, այլ զի զողորմածութեանն զարդ ոչ ունէին յանձինս որով ընդ առաջ ելանէին փեսային: Եւ ձախակողմանքն ոչ զյայծից թխութեան ունէին սեռութիւն վասն այնր, զի զգողութեան և զայլոց փնասուց կրէին զարատ յանձինս, այլ զի ողորմութեան պատկերուն՝ իւրեանց արարչին ոչ էին նմանեալ:

Արդ որ մեզոցն կերպարանաւ անգր փոխին , և որք զարդա-  
բու-թեան ոչ զգե՞նուն զմարդկան առաջին դատապարան լինել կրեն .  
որո՞ք և ստէն առարբեալ , \* Զի ամբ բերան խցցի և դատապարտ լեցի  
ամենայն աշխարհ ստուծոյ :

Ա՛շխարհ՛ զմեզաւորսն և զոչ արդարացեալն սովոր են կոչել  
գիրք . զորոց խնուլ ասէ զբերանս և դատապարտ նոյ լինել : Արո՞ք ՚ի  
ձախուսն կայն , որ վն անսորբմութի խցան բերանքն . կամ ծառային  
որ զտաղանդն թարոյց : Ա՛ւ ո՞նչ այնորիկ որ աղտեղն հանդերձ զգե-  
ցեալ էր ՚ի հարսանիսն , այսինքն՝ ՚ի մեզս կերպացեալ մարմնովն :

Ա՛յլ զի մի՛ ինչ մեզ այնպիսի դիպեցցի՝ հրամայէ քարոզն ա-  
պաշէլ զամձ զի շնորհեսցէ զամբ բիծ բնաւ անդամոց մերկանալ , և  
բարբոթին ՚ի սրտակերն քի կերպանալ : Եւ անբիծ և անդատապարտ  
կալ մեզ առաջի ահեղ ատենի նորա :

Արո՞ք զի՛ ոչ մեզոցն բիծ արտաւորս զմեզ ցուցցէ կամ ար-  
դարութեան պակասուսն դատապարտեսցէ : Ա՛յլ զի անբիծ ՚ի մե-  
զոց լեալ և աննուաղ յարդարութի վաստակոց առանց կտամբա-  
նաց և անդատապարտելիք լեալ , յերկիրդէն մեծէ և յաճութոյն ան-  
բաւէ և յանվճարելի սանջանացն զերծեալ , զանեզրոկան կեանսն  
անպատուամ պարզեօրն շահեսցուք յահեղ ատենին որ այսպէս է  
որպէս ասացարս :

Ա՛յն առաջնորդելոյ մեզ ՚ի նաւահանգիստ կենացն նն ,  
զտէր աղաչեսցուք : Բազում անդամ խնդրելի ՚ի միտս իմ է՞ր աղա-  
գաւ ոչ զայս տուն եղեալ նախ որ յաշխարհիս էր կամարար լինել  
նոյ , և աղա զանբիծ և անդատապարտս կալ ՚ի հանդերձեալ ատենին :

Իսկ այժմ՛ թերեւ հասի պատճառին շնորհօք նոյ . զի որպէս  
՚ի սարմուսէն օգնականութի և պահպանութիւն խնդրելով՝ յարե ՚ի  
նոյն , \* Մի տար ՚ի սասնուի զոտն քո . և մի ննջեսցէ պահպանն քո :

Ա՛յլ որո՞ք և աստ զանբիծն և զանդատապարտս լինել հայցե-  
լով՝ ցուցանէ թէ որով օրինակաւ այն լինիցի , եթէ աղօթիւք խնդ-  
րելէ ՚ի տեառնէ առաջնորդել մեզ յայն ճանապարհն որ ՚ի կամս  
նր հանդուցանէ զմեզ : Ա՛ւ մեր քս ճանապարհորդեսցուք ՚ի նոյն .  
զի առաջնորդել՝ ոչ որոց արձանացեալ կան , այլ որ գնան ՚ի փո-  
փաղելիսն երթալ , նոցա են պէտք :

Ա՛ւ զի որք գնան ՚ի շուխոս արդարութի և ՚ի նաւահանգիստ  
կամացն տեառն հասանին՝ նոյ է ոնբիծս և անդատապարտս երևել  
յայնմ ատենին : Ա՛յն այնորիկ զփոփաղելիս անբժուութի ՚ի դէմն  
ածեալ , զճանապարհն և զառաջնորդօղն որ այսմ՛ հասանել առնէ ,  
հայցել հրամայէ :

Եւ եթէ զինչ օրինակաւ զկամարարութիւնն նոյն նաւահանգիստ կոչէ: Օր որչափ արտաբոյ կամացն նոյ լինին մեւ որդերս, ոմ ՚ի ծովու ալեկոծիմք աղգի աղգի մեղօք և պէս պէս ցանկուածք, անթիւ հոգով և զանազան արտմուծեանց արկածիւք:

Իսկ շնորհիւն նոյ առաջնորդեալ և ՚ի կամս նորա, դադարումն լինի ամ հոգոցն հողմց որ զօգիսն վնասեն: Վասնզի չկարէ ցանկուծիւն մարմնոց շարժել զհաստատեալն ՚ի կամս նոյ: Չազգէ և ոչ կարիք մեղացն յայնպիսին. այլ խափանեալ լինին շարժմուքն նր. և իբրև ընդ վեմի հարեալ խորատկեալ ընդ կրունկն դառնայ:

Եւ ոչ հոգք որ վասն աշխարհիս, և կամ վասն մեծանալոյ, և կամ վասն բնաւ իսկ հարկաւորացն աղագաւ զնա հեղձուցանէ: զե նոյ հաւատացեալ լինի զպէտս հոգւոյ և մարմնոց. և օգուտ զայն գիտէ զոր նայն առնէ. և անարտուժ և խնդամիտ լինի միշտ:

Եւ ոչ երկիւղ զնա սասանէ ուտեք. այլ նման լերին անխախտել է սերովն նոյ՝ ըստ գրեցելումն, \* ՚ի բաց լեր յանիրաւէ անտի. և դողումն ՚ի քեզ ոչ մերձեցի: և \* Ոչ երկեայց ՚ի չարէ, զէ դու տէր ընդիս ես: և եթէ \* Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յուժմէ՞ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց ես յուժմէ՞ դողացայց:

Օր թէ որք մարդկան ըստ կամոց հաճոյանան ծառայք, անհոգ և անլուկ իւրեանց ստանան կեանս. ապա քանի՞ աներկիւղ և անհոգ և ազատ կեանս նոցա իմննայցես. որ մարդասիրին նոյ ըստ ամենայն կամոց հաճոյ լինին. վասն որոյ ասաց մարգարէիւն ամ. \* Ահաւասիկ որք ծառայենն ինձ, ցնծացեն ուրախութիւն սրտից:

Երգարև մեծ և անպատուժ ուրախութիւն է յայն, յորժամ սրտիւ կամարար նոյ գիտէ զանձն. և վստահացեալ ՚ի նա լինի իւր ամ օգտի և պիտոցից: Երգիս՝ և հանդերձելոցն, վասն այնր նաւահանգիստ կոչէ քարոզն, և յորդորէ խնդրել ՚ի տեսունէ զե առաջնորդ առ այն լինիցի:

Վասն արժանի լինելոյ մեղ վերին կոչմանն և երկնից արքայութեանն զմոր աղաչեսցուք: Վասն է վերին կոչումն, \* Եկայք օրհնեալք հօր իմոց, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն խկզբանէ աշխարհի: Վասն զե ՚ի վեր յերկինս կոչէ և տանի. և անդ ժառանգս առնէ իւր ամենապատրաստ թագաւորութեանն, զոր արքայութիւն կոչէ, զոր և յիսկըջանցն պատրաստեաց:

Իայց աղէ տեսցուք զպարգիս մեծութիւն, ոչ որբան էն. զե այն հրեշտակաց անխմաց է, թող թէ մարդկան. բայց որբան փորրկութիւն մտաց մերոց կարէ ձգիլ յիմացումն:

Յորժամ կոչող նոյ միածին որդին իցէ, և առ իւր հայրն կոչիցէ, և օրհնեալս ՚ի նմանէն անուանեսցէ, և զիւր թագաւորութիւն

նոցա խոստանայ, ոչ տալ միայն, այլ և ժառանգեցուցանել. այսինքն սեպհակիան նոցա առնել որպէս և իւրն է սեպհակիան:

Եւ էթէ որդին այ զայն ունելով թագաւորու թիւն ան է, յայտ է թէ և սորա որ զնոյն ժառանգէն թագաւորուի՝ անանան. յաղագս այսորիկ շնորհացս է զոր աղաչել քարոզն միաբանէ:

Եւ զի երկոքեան այս պարզէք, անբիծ և անդատապարտ ՚ի մեծի ատենին երևէն, և արժանի լինել վերին կոչմանն, յայնմանէ լինի՝ էթէ ՚ի նաւահանգիստ կամայն այ առաջնորդիցիմք: Յայն սակա զսա ՚ի մէջ երկոցունցն դնէ: որոյ արժանի արասցէ զմեզ ողորմու թեանն քի շնորհքն, ամէն:

Առթք՝ Երկնքստմեն և Տերադուէն կանոնացն:

**Ի** գիշերի և ՚ի տունջեան և յամ ժամու առ քեզ կարդամք մարդասէր տէր: Ըստանօր զկարդան առ անձ, ցուցանէ պատճառ լսելոյն և զայ մարդասիրու թիւն. ոչ զուղիղ վարս և ոչ ըզբարեաց գործոց յուրումն, այլ զի զաիւ և զգիշեր յամ ժամու առ քեզ կարդամք, և զամ պէտս քեզ ծանուցանեմք. և խնդրեմք պարգևել մեզ, յուսացեալք յայն՝ զի մարդասէր էս:

Եւ զի՝ որչափ դեղերիմք առ քեզ ՚ի կարդալ՝ ախորժես. չեք ժամ գիշերի կամ տունջեան որ անպատշաճ լինի աղաչելոյն զքեզ: Օ ի ոչ էս մարմնաւոր տերանց նման, որք ժամանակ պատշաճ խնդրեն, կամ յամելոյն մեղադիր լինին: Եւ յամ ժամու կարդալն առ քեզ՝ հաճելի է քեզ, և յաճախել զօգտակար խնդիրն գովելն, և յամելն յաղթս առաւել բաղձանս. քանզի մարդասէր ար էս:

Եւ սաստկու թիւն գթոց քոց, առաւել պատրաստ առ ՚ի լսել առնէ զքեզ յորժամ և կարդայցեմք: Եւ զօգտակարն մեր առաւել ցանկաս տալ՝ քան մէք առնուլ. և յամելոյն առ քեզ յոյժ կարօտիս անկարօտ քո բնութիւնք: Եւ զայս մեր գիտացեալ, երբ կամիմք՝ կարդամք առ քեզ ՚ի գիշերի և ՚ի տունջեան:

Ուր մեզ անձ փրկիչ մեր: Պարձեալ այլ պատճառս դնէ լսելու թեան. անձ մեր էս ասէ, և դու ստեղծէր զմեզ, և արարչի առ արարածս բողբոմ է խնամակարու թիւն:

Եւ և փրկիչ մեր էս՝ որ մարմնանալովք քո և մեռանելովք՝ փրկեցեր զմեզ ՚ի չարէն որ վաճառեաց զմեզ մեղաց, և դատապարտ արար զմեզ ախտից և մահու և ազականու թիւն: Եւ զի որինչ վտան մեր եղեր ՚ի վերայ մեր կրեցեր՝ ողորմիլ մեզ ՚ի քէն առնէ:

Պրօնարհէցո՞ զունին քո՞ ՚ի խնդրուածս մեր : Սի թէ ուրոյն ուրոյն զգայուածիք իցեն նոյ, և մին լե՞ և միւսն տեսանե՞ և այլ ոմն խօսի՞, քան լիցի : Եւ կամ թէ ոչ ՚ի վայր խորհի ՚ի լեւուծիւն, չողդի՞ նմա զոր ասեմքն : Օ՛ն անդր, իբաց թողցես որ ինչ մարմն նոյ է . զե՞ անձ՝ անու լուր է . անու տէս է . ամենայնիւ բան է :

Որո՞ սասց մեր սբ լուսաւորիչն, և յամ՝ տեղիս մօտ է . և անձ գիտե՞լի է նմա . խորհուրդք, և բանք, և գործք : Եւ մեր ՚ի մերոց աստի խօսիմք ընդ նմա . ասեմք՝ զարթիք ընդէ՞ր ննջես՞ անբունահանն : Եւ ՚ի ասեմք այնմ, որ ոչ ունի բնաւ պէտս նստելոց . անզգէն և զասպար քո ասեմք նմա, որ ոչ է կարօտ զինու : Եւ սա այնմ օրինակի ասեմք և խոնարհեցուցանել զունին, և բանալ զայս, և առաքել զձեռն ՚ի փրկուծի, և զնեամն ձգել ՚ի յրուսն թիշամեաց . և այսու ամենայնիւ զլամելն մաղթեմք :

Եւ և ՚ի մարդկան սովորուծի պատիխի իրս գտանեմք . խնդրեմք ինչ, և չկամիլն տալ, չլուաւ ասեմք . թէպէտ և լուեալ իցէ . և ՚ի տալն զխնդիրն, ասեմք լուաւ : Ո՛չ զայն ցուցանեմք թէ յահանջան ազդեցաւ ձայնն, այլ թէ կամեցն ընդունակ եղև : Սոյնդէս և աստ զկամիլն ընդունիլ՝ կոչեմք ունին նոյ . ՚ի խոնարհուսն ՚ի մեր խնդրուածս, և զայն մաղթեմք :

Բաղուամ անգամ առաջի աչաց ուրուք աղաչանս արարեալ ասեմք՝ տէս զաղաչանս : Եւ ՚ի լուր ախանջաց խօսիմք, ասեմք՝ մի անուր լինիր, այլ մատն տախ զախանջադ . զայս խնդրելով, զե կամք նորա զարձցին ՚ի մեզ : Եւ թէ լինիցի այն, և խոստանայ զխնդիրն, գառնալ ասեմք կամեցն :

Եւ տի խմացիս և զոր ինչ մարմնատէս բանն առնու յանձնայինան . ոչ զե զքոյսդ ՚ի նմա նկարեացես, այլ զե քոյովզ զնորայոցն գիտուծիւն առնուցուս :

Օ՛ ի մի ընդունայն լիցին վաստակք ծառայից քոց : Օ՛ ի տաժանելի է բնուծին և վաստակի յողաչելն . և զի ծառայք քո էմք՝ մի ընդունայն առներ, այսինքն անօգուս :

Եւ Տամարեան զաշխատուծիս մեր գործս արդարուծեան : Օ՛ այս ասէ, զոր աշխատիմք ՚ի կալն առաջի քո յորհնել և յողաչել, համարիցիս արդարուծիւն գործել, և պտուղ անպատուծե բերել . և թէ և այլ ինչ արդարուծիւնս չունիմք :

Եւ տեղե թէ և բարի ինչ ՚ի վարս մեր գիտիցեմք, պարտիմք հանել ՚ի մտաց, և մեզ ողորմուծեան վն՝ զպարգևան նոյ համարեացուք : Օ՛ ի որ յաջողէն մեզ զիսմիլն և զառնելն զբարին՝ անձ է . և մեք նորա զամ համարել, խոնարհ հոգւով առ նա կարդասցուք . որո՞ և



ազօթիցս վարին միտք ամ խոնարհու-թէ . զոր և ցուցաք մի ըստ միո-  
ջէ , և ցուցցուք յառաջիկայիցս :

Քննիւ աէր զազօթս և զերկրպագու-թիւս մէր , և հասո՞ մեզ  
զողորմո՞ւթի՛ քո առատապէս : Աղորմելն՝ ո՞չ է պարտուց որո՞յ ասա-  
ցարն . այլ ՚ի կարեկցու-թէ և ՚ի վշտակցու-թէ : Այլ արդ զի լի՞ է մի  
ասէ կարեօքն վշտաց՝ ընկալեալ զոր աղաչեմքս երկրպագու-թեամբ ,  
Հասո՞ առատապէս զողորմու-թիւն քո : Քանզի գիտես զպէտս մեր  
զհոգւոյ և զմարմնոյ , ողորմելով առատացո՞ զամենայն :

Օր Թէ և առատապիս առ մեզ ողորմու-թէ պարգևօքդ , չէ ինչ մեզ օգուտ ,  
էթէ ո՞չ քո խնամակալու-թէ ամրացուցես զմեզ , զոր աջ կոչեն գիրք :

Քանզի և ադամ պատուտից , այլ անխնոց եղեալ՝ հաւասար  
անանոց և նման նոցա գտաւ : Այլ և սողունն ամ խնասու-թէ և  
շնորհօք լցեալ , այլ կանամբն կողողտեալ էզև ՚ի շնորհացն :

Առջեցաւ յառաքելու-թի և յուզաս , և յառաջին գունդ աշա-  
կերտացն թուեցաւ . և զսքանչեւադործելն ունէր , և մի յերկոտասան  
աթոռոցն նորա էր . այլ անկեալ յերանու-թեանցն եղկելի ամե-  
նեցուն էղև , չարին տուեալ աեղի :

Ասն այնորիկ և ազօթիցն բան՝ ո՞չ միայն զի ողորմելու-թէ առատապարգև լինի ՚ի մեզ մտղ-թէ յոյ , այլ և զի նովին պարգևօքն  
ամուրս և անըմբռնելիս զմեզ արասցէ . վասն որոյ և յարէ ՚ի նոյն ,

Ըրա՞ առ մեզ նշան բարու-թեան : Օր և դաւիթ հայցել  
զօրաւոր առնել նշանաւն բարու-թէ . զի տեսցեն առելիքն և ամօ-  
թով յետս դարձցին . և նք երրորդու-թիւնն փառաւոր լինի մերով  
փրկու-թէն : Քանզի զայս յայտ առնէ յարելն ՚ի նոյն ,

Պիտաւբանու-թիւն և ՚ի պատիւ սուրբ երրորդու-թեանդ ,  
այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :



Խաղաղութիւն ամենեցուն :

Ովիւ բաջ , հովիւ բարի և յաւիտենական , նայեաց և այց  
արա բանաւոր խաչին արօտի քոյ զոր ժողովեցեր առ  
քեզ գթու-թեամբ քով :

Քաջ հովիւ է որո՞յ ինքն ասաց , զի զանձն իւր եզ ՚ի վր հօտի  
իւրոյ , ո՞չ խնայել զանձն և ո՞չ զանդիտել ՚ի մահուանէ : Այլ յաւի-

տենական է , ոչ սղառու մն ունեւրվ , զի առանց անցանելոյ ունի ըզ  
հովու թիւն և զքահանայու թիւնն : Որում մնող թէ աղօթիցն բան ,  
չդարձուցանել զերեսս վասն մեղաց . այլ նայիլ և ինամ ասնիլ բե-  
կելոյն , վերաւորելոյն , մտրելոյն , տկարացելոյն :

Օ ի այցելու թի , ինամակալու թի կոչի . և զի նոյն գու թ որ ՚ի  
ցրմանէն և յատարանալոյն ՚ի քէն , ժողովել զմեզ ստիպեաց , նոյն և  
այժմ ՚ի ինամակալու թի զմեզք զքեզ ամցէ : Վանզի յամ տիեզե-  
րաց ՚ի մի միաբանու թի հաւատոյ ժողովեաց ըստ գրեցելումն , \* Յամ  
գաւառաց ժողովեաց զնոսս , յարեւելից և յարեւմտից , ՚ի հիւսիսոյ  
և ՚ի ծովէ : Վրա սսէ ,

Քո առաջի կամք տէր , և առ ՚ի քէն ողորմութեանցդ ակն  
ունիմք : Չունիմք սսէ ՚ի վարուց համարձակութիւն . այլ առաջի  
կամք , ցուցանել զմեր աղքատութիւնս , և ողորմիլ ակն ունիմք :

Որոչ սասաց մտրգարէն , \* Նայեա՛ սախ և ողորմեա՛ ինձ , զի մի-  
ամօր և աղքատ եմես : Ալ ինդրեմք օրհնել զմեզ , իմաստուն առ-  
նել հոգևոր իմաստութեան , լուսաւորել լուսով գիտութե քոյ , և  
ասլ մեզ զերկնից արքայութիւն քո . այսպէս սսելով ,

Օ ամենեսեան օրհնեա՛ , զամենեսեան իմասանացո՛ , զամենեսե-  
ան լուսաւորեա՛ . և ամենեցուն պարգևեա՛ զերկնից արքայութիւր .  
զի դու ես տէր կենաց և ձձ ողորմութեանց . և քեզ վայելէ փառք  
իշխանութի և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Ուսանիմք զայս այսու թէ , խոնարհութե պարտիմք ինդրել  
յայ , և յողորմութի միայն յուսալ : Օ ի դու ես կեցուցիչ , վասն  
այնր ինդրեմք , զի այսպէս ունի բանն . Չի դու ես տէր կենաց և  
ձձ ողորմութեանց , և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ .  
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Մաղթանք :

Ի գիշերի և ՚ի տունջեան և յամ ժամու անդադար փառա-  
ւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգի . այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից , ամէն :

Քարոզ Մինախանձիր և Խոտորուան կանոնացն :

**Ս** ան ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս Խաղաղութե-  
ր զտէր արչչեացուք : **Օ**րնչ է ուղղել զգնացս . անձուկ  
զճանապարհն ասաց տէրն . և պատուիրեն օրէնքն , մի՛ յաջ Խոտոր-  
ելի և մի՛ յահեակ : **Ե**ւ սողոմնն ասէ , \* Է՛ ճանապարհս որ Թուրի մարդ-  
կան ուղիղ . բայց կատարածն հայի յատակս դժոխոց : **Ի**սկ սաղմո-  
սանուադն և ՚ի ճանապարհին իսկ որոգայթ եղեալ ասէ , \* ՚Ի ճա-  
նապարհս յոր և գնայի՝ եղաւ ինձ որոգայթ :

**(**Ն առեալ էթէ ասցէ Խոր՝ ըստ իւրարանչիւրոցն պատմե-  
ցուք : **Բ**նձուկ է ճանապարհն այն աշխարհասիրաց . նախ՝ զն ոչ  
ախորժեն զառաքինութիւն , այլ զլոյծ և զմեղի կեանս սիրեն :  
**Բ**նձուկ ասի դարձեալ , վասն զն նուրբ է . և աստի և անտի ոչ ուղիղ  
գնացելումն ունի զոանառուի՛ ՚ի կորստեան վիճն . այս իսկ է զոր ասեմն :

**Խ**ոտորումն է պոռնկութի՛ յուղիղ ճանապարհէն , Խոտորումն  
է և պարծիլ ՚ի կուսութի՛ և Խոտել զամուսնութի՛ : **Ա**յս է զոր Խորն  
պատուիրեսց՝ չխոտորիլ յաջ կամ յահեակ :

**Գ**արձեալ Խոտորումն է որովայնամուլութի՛ յահեակ . Խոտոր-  
ումն է և պարկէշտին յաջակողմն , էթէ պիղծ . զկերակուրան համա-  
րիցի . Խոտորումն է բարկանալն : **Խ**ոտորումն է և չինդրել զվրժ-  
զրկելոցն , հէզ առ զզիկչան լինելով . Խոտորումն է աննուէրն լի-  
նիլ . և յոյժ Խոտորումն է ՚ի զրկանաց և ՚ի յախշտակութի՛ ընծայել  
աստուծոյ , կամ զխոտանն , կամ ապաշաւանօք :

**Ե**ւ զինչ այլն . չաղութեւն չար է : **Ի**սկ վասն չարի ուրուք , և  
վասն անձին փառաց և մեծութե՛ , և բնաւ իսկ վն երկրային իրաց ,  
կամ ոխս ումէք պահելով , և կամ Թէ ՚ի ցոյցս մարդկան աղօթեացէ  
ոք , կարի վնասակարք են այսորիկ :

**Զ**հաղորդիլ ՚ի ոք Խորհրդոցն , զյաւիտեանականն բերէ զմահ՝  
և խղճիւ հաղորդիլն , քի՛ արեանն առնէ պարտական : **Ե**ն և այլ  
այնպիսիք որք վնասեն երկոցունց կողմանցն , ոնչ և նուրբ է ճանա-  
պարհն և դիւրագայթ :

**Ի**սկ ըստ սողոմնին որ ասէ , \* Են ճանապարհս Թուրն մարդ-  
կան ուղիղ , և կատարածն հայի յատակս դժոխոց : **Ո**ն սաւուղին ,  
որ պատարագօքն կարծէր հաճոյ լինիլ նոյ , և այնու անարգիչ բա-  
նին նոյ եղև . ողորմիլ կարծելով չսպան զագագ , և զրկեցաւ ՚ի Թա-  
գաւորութի՛ : **Մ**ա և յեփթայէ բարեգործել կամելով , պարտաւոր  
շատերն արեան գտանէր . և որ զմարդարէն ոչ կառապիտաց , վրիժա-  
դարա գտաւ : **Հ**ամարեցաւ հերովդէս ուղղութի՛ զանսուտ մնալ :

յերդմանն , և մարգարէաստան եղև . այսպիսիք բազում ինչ եղեն և լինին մինչև ցայսօր :

Բանիք են որ երդունն վասն չարիս գործելոյ . և պահելով զերդումն , անհնարին չարեաց պարսաւորք գտանին : Արջան մարգիկ զատանին յամուսնացն առանց նոցա կամաց . և ինքեանց և նոցա պատճառս չարեաց լինին :

Բազումք են , քահանայ կամ կրօնաւոր լինիլ լաւ համարին . և յոտակս դժոխոց զինքեանս և զայլս առաքեն : Յորովք և զյանցաւորս բանբասել լաւ համարին , և որով դատեն՝ դատիլոց են ըստ բանի տեսնն :

Եւ զի կարի բազմանայ բանս՝ զայստիկ զամ սակելով զպատճառան յայտնել , ՚ի միւսն եկեացուք զոր դաւիթն ասաց որոգայթս եղեալ ՚ի ճանապարհին : Եւ յս է՝ յաղօթս ՚ի պահս և յորժամութի և յայլ բարեգործութիւն ամբարտաւանիլ կամ սնուպարծիլ , կամ ոյլոց գեր ՚ի վերոց ելանել , որով և փարիսեցիքն սնավատակ եղև :

Եւ ըր՝ քանզի այսբան և առաւել քան զայստիկ սխալանք են ճանապարհաց մերոց , հրամայէ քարոզն միաբան աղաչել զամ , ուղղել ՚ի ճանապարհս արդարութեան զգնացս մեր , այսինքն՝ ստուգութիւն որ անթիւրն է անխտորն և անգայթակղն , որ երանելի առնէ զանբիծն ՚ի ճանապարհի :

Եւ այս ուղղի աղօթիւք և երկնչելով յոյ . քանզի գրեալ է , \* Ով է մարդ որ երկնչի ՚ի տեսննէ , օրէնսգէտ առնէ զնա ՚ի ճանապարհի յոր և հաճեցաւ : Զի զօրութիւն է տէր երկիւղածաց իւրոց , և զկտակարանս իւր ուսուցանէ նոց : Յուցանէ ընդ որ պարտ է գնալ , և զօրացուցանելով ՚ի գնալն : \* Եւ երանին որ երկնչին ՚ի տեսննէ և գնան ՚ի ճանապարհս նոց : Զի հրեշտակաց իւրոց պատուիրեալ է պահել զերկիւղածս ամ յամ ճանապարհս նոց : Որք ՚ի բազուկս իւրեանց բարձցեն և չտայցեն զքարի հարկանիլ ոտիցն : Եւ յլաստի և անտի բանակք հրեշտակաց շուրջ լեալ պահեն մինչև յանբոյթ նաւահանգիսան հասուցանեն . ըստ գրելումն թէ՛ երկիւղածն անցցէ ընդ ամ , այսինքն՝ ընդ ամ որոգայթս սատանայի անցցէ , և ոչ միով իւիք մնասիցի :

Ս ասն ցրելոյ զամ չար խորհուրդս ՚ի սրտից մերոց զտէր աղաչեսցուք : Բիւր սոգք են խորհրդոցն անմաքրից , որ խոռովեցուցանեն զրգիս մեր , զոր գոտակն չարեաց հակառակ մեզ խնցաւ : Օ որ եթէ կամի որ՝ հաւաստեալ ուսցի ՚ի գրոցն եւագրեայ , որ աղօթիւք յաղգս սոգս զբաժինսն ցուցանէ , որովք զօրանայ խարգախուլութիւն չարին ՚ի պղերգան :

Իսկ փոյթքն յառաքինութիւն՝ արմատախիլ առնեն զամ՝ յան-  
ձանց իւրեանց . և զնայ ամօթալից այն , որ ծուլանալ ՚ի բարիս առ-  
նէ , և զմեղացն անորժակսն ընտրել տայ ազգի ազգի պատճառաւ :  
Որով և զհայհոյութի՛ն խօսելով ՚ի խորհուրդն , և զունգիտել և լքու-  
նել ՚ի հոգևոր պատերազմէն տայ : Արանութիւն խաւարեցուցանէ  
և ձանձրութիւն մեղիէ . որ յորովայնին բռնութիւն գերէ , և ՚ի փո-  
ռացն ցանկութի՛ն գրգռէ . և ամբարտաւանութիւն և ամբարհուաճութիւն  
յերկիր կործանէ :

Օսյսոսիկ և զսոցին նմանն՝ առաքինացեալքն ՚ի բաց մերժե-  
ցին յոգւոջն . զբոլորն զքն յինքեանս բնակեցուցին : Մանաւանդ  
որ խոնարհքն հաւասար իցեն . զի նպա դիւրաւ յաղթեն այնմ , որ  
ամբարտաւանութիւն կործանեցաւ , և կործանեաց սովիմք զմարդն :  
Օ ի ամ՝ որ հակառակն կայ ամբարտաւանից , նա տայ շնորհս խո-  
նարհաց , առ ՚ի յաղթութիւն չարին խորհրդոց : Յայս և քարոզն  
յորդորէ յասէն ,

Ասան ցրելոյ զամ չար խորհուրդ ՚ի սրտից մերոց զամ աղա-  
ճեցութիւն : Սի ստէ յանձինս ասպատան լինութիւն . այլ խոնարհութիւն  
զամ աղաճեցութիւն օգնել տկարութեա մերում , ընդ դէմ՝ հնարիցն  
սատանայի . ցրեացէ ՚ի սրտից մերոց զարկածս առ ՚ի նմանէ : Աւ ոչ  
տացէ թոյլ՝ արդիւնս առնուլ սերմանցն զոր նա ՚ի մեղ սերմանէ .  
այլ անդէն հեղձուցանիցէ : Աւ եթէ արմատ ինչ առեալ իցէ , ար-  
մատաքի խլեցէ , և զբարին ՚ի ներքս սերմանեացէ և անկեացէ . զոր  
և յաջորդաւն ցուցանէ :

Ասան պորդակելոյ մեղ առողջ խորհուրդս և առաքինի վարս  
զտեր աղաճեցութիւն : Աւ ոչ են առողջ խորհուրդքն . որ ընդ դէմ  
մեղացն վառին : Օ ի չար խորհուրդքն հիւանդարար ոգւոցն են .  
և բարեքն՝ առողջացուցիչք : Աւ զոր օրինակ մարմնոցն ըստիւրա-  
քանչիւր անտից հակառակօրն լինի դիւրելն , ջերմն ՚ի ցրտէն՝ և  
հոյն ՚ի տապացուցէն : Սաղձքն որ պնդեն զբնութիւն , ՚ի լուծա-  
կանացն և ՚ի վեր և ՚ի վայր հանողացն զնոսա բռնահարին ՚ի դեղոցն :  
Այնպէս և մաղասքն կծաւոցն՝ զընդ դիմակն առնով , այնպէս  
վայրագայիլ ասիպէ :

Սին նմանութիւն յորիսն է տեսնել . անա բարկութե՛ն՝ հեղու-  
թեամբն առողջանայ . և ամբարտաւանութիւն՝ խոնարհութեամբ ,  
որկրամալութիւն՝ պտրկեշտութիւն . պռոնկութիւն և յայրատութի՛ն  
անխոյրութիւն մարմնոց : Բնչատիրութիւն և ազատութի՛ն՝ սակաւապի-  
տութիւն մարմնոց , և զարհամարհելու ընչից և զաղքատութի՛ն սիրելով :

Ըստեղծութիւն՝ սիրով . անողորմութիւն՝ ողորմելով . անագորոշութի՛ն՝ դժով . ծուլութիւն՝ աշխատութեամբ :

Եւ բոլոր ակարն՝ բոլոր արդարութեքն . որք ընդ իւրաբանչիւր ակտիցն հակառակ մտեալ ասն զառողջութի՛ն , խորհրդով ըզխորհուրդ . և գործով զգործ . բժշկելով : Օր և բարոզն հրամայէ խնդրել զառողջ խորհուրդն՝ ընդ դիմակաց հիւանդ խորհրդոց , և զառարկինի վարս՝ խնչ ծոյլ և մեղև խորհրդոց :

Ս ասն պահէլոյ զմեղ ընդ հզօր ամենակալին նոյ՝ զտէր աղաչեսցուք : Սիտ դիր գեղեցիկ կարգի ստացելոցս . նախ՝ ճանապարհի նմանեցոյց զարդարուին , և հրամայէ խնդրել զին անխտոր ընդ նոյն գնասցուք : Վարձեալ՝ զսիրան որպէս անդաստանի իրիք օրինակեալ , ի չար խորհրդոց մարբել հրամայէ , և առողջիւքն ծաղկազարդել . կամ իբր ՚ի կենդանեայ իրէ զսխտն մարբել , և զառողջութիւն ՚ի տեղեոջն հաստատել :

Եւ զի՞ անօգուտ է ճանապարհորդին ուղղորդ գնացքն , և անդաստանին բաջաբերութիւնքն , և կենդանեայն առողջութիւն՝ եթէ ոչ յիւրաբանչիւրսն պահապանն մերձ լինիցի : Օր զճանապարհորդըն աւազակք , և թէրևս գազանք կամ սողունք վնասէն յարթունս կամ ՚ի հանգչին յաշխատութէ : Եւ զանդաստանս՝ արօտականք և անցաւորք ապականէն . իսկ զկենդանին՝ կերակուրք և ըմպելիք վնասէն , կամ օդոյ փոփոխումունք , կամ աշխատութիւք անպատրաստք , և առաւել քան զկարն :

Ս նայնորիկ ամենեքեան սորա հմուտ և զօրաւոր պահապանի կարօտանան . յաղագս այնորիկ զհզօր ամն նոյ պահապան խնդրէ յամենեւեան . զի ճանապարհորդն աներկիւղ գնացէ , և անհոգ հանգչիցի : Եւ անդաստանն ամենապահ ձեռամբն պարսպեալ , ծաղկալից և արգաւանդապտուղ լինիցի . և կենդանին ՚ի վնասակարաց արգելեալ և օգտակարօքն տածեալ , առաւել յաջողութիւն գայցէ : Եւ զին պահապանին է ոչ միայն պահել զիւրսն , այլ և զնենդիչսն ընկձէլ . յաղագս այնորիկ յաւելու և զայն ևս խնդրել ասելով ,

Ս ասն խորտակելոյ զհակաակորդն վարվաղակի ընդ ոտիւք մերովք զտէր աղաչեսցուք : Եւ ո՞վ է հակաակորդ բարւոյն , եթէ ոչ սասանայ . վասն որոյ ասէ առաքեալ , \* Աժ խաղաղութի խորտակեսցէ զսասանայ ընդ ոտիւք ձերովք մերձ լի մերձ : Վասինքն՝ վարվաղակի արագ արագ կոխան ոտից լեալ , և գլուխ նորա ընդ ոտիւք մերովք խորտակեալ , անդօր լիցի աւազակել և կապտել զճանապարհորդսն , և կամ զառարկինութեան անդաստանսն վնասել , կամ կենդանութեան մերում՝ դաւել :

Աղօթք՝ Մինասանձիր և Խոստովան կանոնացն :

**Տ**էր երկնի և երկրի , արարիչ ամ արարածոց երեւելեաց և աներևուածից , առ քեզ կարդամք յամ ժամ , զի ընդ ամ տեղիս է տէրուածիւն քո , և արքայուածիւն քո ամենեցուն տիրէ : Այցեա՛ ՚ի սկիզբն աղօթիցս թէ զկարդ բարբարուածէ պատաճառս յուղէ : Չիք այլ տէր յերկինս և յերկրի տէր , ոչ այլ արարիչ արարածոց որ երևին և որ ոչն երևին : Ալ զի այս այսպէս է , և մեր չգոյ այլ արարիչ և տէր թէ առ նա կարգացուք և ՚ի նմանե զպէտս ոգւոց կամ մարմնոց հայցեսցուք , յարագս սյսորիկ յամենայն ժամ առ քեզ կարդամք :

**Օ**ր թէպէտ և կամակոր եմք , սակայն ՚ի քո ծառայից եմք որ երկնի և երկրի տէրդ ես , զի յերկրէ և մէք եմք : Ալ թէ և բարկացուցար զքեզ , սակայն քո արարածք եմք որ զամ ստեղծէր , և մէք յամենեցունց եմք : Ծառայի աչք ՚ի ձեռս տեսուն է , և արարածս արարչին սպասէ և ՚ի նմանէ կերակրի և խնամի , և տէրն և արարչն ողորմել և գթալ հարկի :

**Ա**լ զի ընդ ամ տեղիս է տէրուածիւն քո , և արքայուածիւն քո ամենեցուն տիրէ : Թէպէտ և իցեն թաղաւորք բազումք և տալքք բազումք , այլ այնորիկ առ ժամանակ մի ըստ քոյ կարգածոյ տիրեն նմանեաց իւրեանց , և վաղափոխուելք և եղծանելիք են : Ալ անուն լոկ է նոցա տէրուածէ և թագաւորուածէ , և իւրեանց անձանց կենաց և մահու ոչ ունին իշխանուածի , թող թէ որոց իշխել համարին , և իւրեանց նմանիս բազումն ունին , և է՛ զըս և տիրացեալս՝ ինքեանց և հակառակորդս գիտեն :

**Ի**սկ դու յուխտենական ես ինքնիշխան , և ոչ յումեքէ կարգեալ , և ամենեցուն կենաց և մահու ար . ոնք սասաց սողոմոն , \* Ո՛չ որ զակն ՚ի վր կարէ համբառնալ զօրաւոր կամ բռնաւոր տիրել հակառակ քեզ : Ինչպի առաւելուածեալք գերակայեալ ես քան զամ գոյս , զի ստեղծիչ ես ամի . և չբաժանի քո տէրուածիդ ըստ տեղեաց որոյ մարդկան , այլ ընդ ամ տեղիս տէրուածի քո : Այսինքն թէ՛ տիրել քո և արքայուածիդ քո որ է թագաւորուածիւն՝ ամենեցուն տիրէ վերնոց և ներքոց , Տրեշտակաց և մարդկան և ամ արարածոց ըստ առակողին բանի . \* Տիրելդ քո ասէ ամենեցուն խնայել սայ քեզ յամենեսեան : Ալ ըստ աղմոսին , բունալ հարկիս զամենաբաւական ձեռսդ , և լցուցանես զամենեսեան ՚ի կամացդ քաղցրութէ :

**Ի**մանզի արարչական կամքդ քաղցր է ՚ի վերայ չարաց և ապաշնորհաց որ անշնորհահալուքն լինին , և յայն սակա բարեգործես առ

չարս և առ բարիս • և մեք զայս գիտելով՝ կարգալ առ քեզ յամենայն ժամ վստահիմք :

**Լ** և զայս ևս պաշտովք, զի տացես մեզ խնանալ զաճեղ և զանբաւ տէրութիւնդ քո • և որչափ ՚ի կարի մերում է՝ երկիւղեւեկալ ՚ի ծառայութե քում և Նանաչեւ զանոխակալ գթութիւն քո և զանչափ մարդասիրութիւն և զանբաւ խնամակալութիւն, և փոխադարձեւ զմերն առ քեզ զսէրն որքան է կարողութիւն մեր : **Ա** յայտորիկ յետ զամենակալութիւն նորա և զառամենեւեան զխնամակալութիւն ասելոյ, սնդէն դնէ զայս :

**Շ** նորճեա մեզ երկիւղեւ ՚ի պաշտօնս քո կանխել զօրճանապաղ • սիրել զքեզ յամենայն սրտից և ՚ի բովանդակ մտաց և ՚ի զօրութենէ մերմէ :

**Ե** զի ասաց տէր և թագաւոր և արարիչ անի, և զի թագաւորաց և տերանց պաշտիւն ՚ի ծառայից օրէն է, և արարչէ սիրել ՚ի ստեղծուածոց : Աստի զկեալ և զխնամս և զգարմանս գտանէն ՚ի նորայն սիրոյ անբակ մնալ • վասն այնորիկ զոտսս հայցեն, առաջին և մեծ պարգև գիտացեալ զերկիւղեւ ծառայելն այ : Չասէ թէ տուր, այլ թէ՛ շնորճեա մեզ, այսինքն՝ թէ պարգևեա :

Իսկ կանխելն, թէ անխտիան և անյարար յերկրաւոր պատաղմանց ՚ի պաշտօն քո ժամանել : **Ե** պաշտօն՝ ոչ միայն փաստբանութիւնն այլ է, այլ և բովանդակ նորա ծառայութիւն, զի և մարդկան ծառայութիւն պաշտօն կոչի : Արդ զուրբ լուսաւորչէն ասէ պատմութիւն յերթալն առ տրդատ, թէ զանձն ՚ի ծառայութիւն տուեալ պաշտէր առաջին նորա :

**Ե** ՚ի տեսնէ լսեմք զայսպիսի ծառայէն որ յարարակէ գայցէ : ասել տեսն իւրոյ, \* Գօտի ամեալ պաշտեա զիս մինչև կերայց և արբիցես : **Ե** զինքենէ ասէ ի՞նչն, \* Արդ ի մարդոց ոչ էին պաշտօն ասնուլ, այլ պաշտել : Արդես թէ ասիցէ ոչ էին ծառայութիւն ասնուլ, այլ ծառայել :

**Օ** որ մարդարէն ՚ի վաղուց գուշակէր, արդարացուցանել զարդարն որ մտադիւրն ծառայեաց բազմաց : Այն ՚ի հասարակաց սովորութենէ ասի, երբեմն այս անուն ՚ի ծառայութե է և երբեմն ՚ի պաշտելութեան : **Բ** որ՝ աղօթիցն բան զայս հայցէ, երկիւղեւ ՚ի ծառայութեան կանխել • ըստ դաւթայ՝ \* ծառայել ին երկիւղեւ :

Իսկ զօրճանապաղ, թէ յամօր • զի և ծառայն փութայ զամառուր ծառայութիւն ՚ի կանգուն ունել : **Ա** պա է թէ պղերդի երբեք, բարկացուցանէ զտէրն և հաղիւ ասրի ՚ի պատուհասէ յորում առուր ծուլայ, թէ և յանցեալ առուրն ասանց հեղգութեան ծառայել :



ապեալ իցէ : \* Եւ ՚ի տեառնէ մերմէ ստեպ և Հանապաղ արթ-  
նութեան պատուէր աւար և գօտեպինա ծառայութի : Վասն այ-  
սորիկ ցանկ զնոյն աղօթեմք : Եւ երկիր զիւ յարմարեալ ՚ի ծառայ-  
ութեան , ՚ի բարձրութիւն սիրոյն ամբառնալ զոր յեա այսր խնդ-  
րէ յաղօթան :

Սիրել զքեզ յիմ սրտէ : Եւ ո՞ր է յիմ սրտից . այն է , յոր-  
ժամ զսէր աշխարհի և զանձին և որ ինչ յաշխարհին է՝ ՚ի բաց Հանցե-  
լի սրտէն . և զբովանդակ սիրան՝ նոյնացէ զնա միայն սիրել : Օ ի ոչ մե-  
ինչ կարացե Հանել զնա ՚ի սրտէն , յայնցանէ զորս պօղոս թուեաց :

Ի բովանդակ մտաց : Եւ ո՞ր է այն . որչափ խմանայն՝ զայն  
գործեացէ , որ զսիրելոյն սէրն Հաստատէ և անխղճի պահէ :

Իսկ՝ ՚ի զօրութեանէ : Որքան ունի զօրութի և կարէ պատուել  
զսիրեցեալն . եթէ բանիւք եթէ ընչիւք եթէ վաստակով եթէ այլ  
ինչ Հաճոյական ծառայութեամբ : Եւ յարէ ՚ի նոյն .

Պահէլ զպատուիրանս քո : Որով յայտ լինի սէրն որոյ ասաց  
յովհաննէս աւարեալ . \* Եւ յս է սէրն զի զնասացուք ըստ պատուի-  
րանաց նոյն : Եւ ինքն իսկ տէրն , \* Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս  
իմ պահեալիք : Եւ դարձեալ՝ \* Եթէ պահեցէք զպատուիրանս իմ ,  
կացիք ՚ի սէր իմ , որոյ էս զպատուիրանս չօր իմոյ պահեցի , և կամ  
՚ի սէր նոյն : Եւ է պատուիրանն պատուիրեալքն յայ մարգարէիւքն  
և աւարելովքն և սրբովք աւետարանովքն :

Մտքառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի սրբութի տառնոց բար-  
կութի և երկմտութի : Ո սան զի պատարագ ընդունելի է նոյն այն-  
պիսի ձեռացն տարածումն , որ սրբեալն է ՚ի մեղաց և ոչ ունի ՚ի  
մտին բարկութի առ մարդիկ կամ երկմտութիւն առ ամ : Օ ի թէ  
ոչսպէս Համբառնայցեմք զձեռս , գամանմք մեծ բարեաց փոխա-  
գարձութիւն . զոր և յաջորդն իսկ յայտ առնէ :

Եւ գամանէ ՚ի քէն զողորմութիւն՝ և զաւարինասէր գործոց  
յաջողութի : Օ ի որդիմին նոյն բաւական է առ ամ բարիս . որպէս  
ասէ գաւիթ , \* Ողորմութի տեառն լի է զիւ երկիր : Եւ առ աջին  
բարի է՝ նորա ողորմութի յաջողելն յաւարինութիւնն որ ըստ նոյն .  
որ ամ շնորհօք լի է , և ամ շահիւք երկնաւորօք և երկրաւորօք , և  
օգտաբեր յարդիս և յապառնիսն : Որոյ և ասէ աւարեալն պօղոս ,  
\* Եստուած պաշտութի առ ամ ինչ օգտակար է և զաւետիս կէնաց  
ունի զարդիս և զհանդերձելոցն : Եւ պա ստէ :

Օ ի դու ես բարերար և բազում ուղորմ ամ : Եթէ զոր ինչ  
 խնդրեմք ոչ եթէ արդարս և արժանիս զմեզ գիտեմք , սլլ զի գբեզ  
 բարերար և որդրնած անուշեմք առ մեղաւորս անգամ : Եւ յազուգս  
 անզոջական բարերարութեանդ քո՝ փառաւորեալ ես յախտեան :  
 Եւս է զոր աւելադրեն , Եւ քեզ վայելէ փառք ի խոսնութիւն և  
 պատիւ , սցժմ և միշտ և յախտեանս յախտենից , ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Քում ամենազոր և յաղթող տէրութեդ կրկնի ամենայն  
 ծունր յերկրպագութիւն , և փառաւորի յամենեցունց  
 Թագաւորութիւն քո :

Օ մեր ասէ ըստ կարի զպարսն հատուցանեմք երկրպագե-  
 լովս և փառաւորելովս . ոչ եթէ կարօտ մերումն գբեղ գիտեմք  
 որում կրկնի ամ ծունր , և յամենեցունց փառաւորեալ ես ամենե-  
 ցունց տէրդ և ամենեցունց Թագաւորդ . որ և յամք անկարօտդ :  
 Եւս առաջի քո արկանեմք երկրպագութե՞ զողաչանս . շնորհ ու-  
 նիմք վասն առեւելցն ՚ի քէն բարեաց յանցեալ կեանսն , և վն առա-  
 ջիկաց կենայն աղաչեմք : Յայն սակա ասէ ,

Վայեա յաղաչանս մեր ամենեցուն . և շնորհեա խաղաղութե՞  
 զամ ժամանակ պանդխտութե : Քանզի որ ետուր զխաղաղութիւն  
 ասէ , հայեցեալ յաղաչանս մեր ամենեցուն հանապազորեա մեզ .  
 զի քո խաղաղութիւնդ պահպանեսցէ ՚ի ժամանակի պանդխտու-  
 թեանս մինչև գայցես սանիլ զմեզ յերկինս զոր ժառանգեցուցա-  
 նել մեզ խոստացար :

Քանզի և վասն այսորիկ յերկիր եկիր , զի հաշտութի և խա-  
 ղաղութի սրասցես , և զհեռաւորս զհեթանոսս , և զմերձաւորս ըզ  
 հրեոյս ՚ի մի պարգև բարեաց աւետաւորեսցես , հանել ՚ի պանդխ-  
 տութե կենաց յորս անկաքս՝ զմերն կորուսեալ զբնակուի զգրախանս :

Եւ կոչէ ամ խաղաղութեան , վասն զի սովոր են սբք յիրաց  
 ինչ որ առաջի կայցեն՝ կոչել զամ . որն յորժամ զողորմութիւնն  
 հայցեն , ամ և տէր ողորմութե կոչեն : Եւ յորժամ զգթութեցն  
 պատմեն և զողորմութեց ՚ի կարեաց , ամ ողորմութե ասեն և հայր  
 դթութե . և յորժամ վասն փրկելոյ ՚ի վշտաց , տէր ամ փրկութե :  
 Եւս յայէս և յորժամ վասն խաղաղութե մտղթեն , ամ խաղաղութե  
 շնեն նմա անուն , որպէս և սատ աղթիցս բան ասէ ,

Օ ի դու ես աստուած խաղաղութեան որ բարձեր զթշնամութիւնն ՚ի միջոյ և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի : Թշնամութիւն էր երկնաւորացն ընդ երկրայինս՝ վն սպասամբէլոյն յիւրեանց աւանդէն որք յերկրիս . Թշնամութիւն էր հրէից և հէթանոսաց ընդ միմեանս վասն սյլագուհակ կրօնիցն : Աւնչ սյսւ- շափ միայն , սյլ և աղգսյին պատերազմօք լի էր երկիր . և բնութիւն մարդկան ամիւ թշնամանէալ էր : Աւ զուստերս և զգաստերս ևս հաւանեցուցանէին զէք ինքեանց զոհէլ . և աղգի աղգի խայտառակունս և ըսպանութիւնս միմեանց առնէին :

Իսկ ամ խաղաղութեւն եբարձ զթշնամութիւնն ՚ի միջոյ , և արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ ընդ հրէշտակս և ընդ մարդիկ . և հրէից և հէթանոսաց զհաւատացեալսն միաբանեաց , զերկոսեան մի առնելով . և զպատերազմսէր գեան ջլատեաց որք զերկիր շաղխել արեամբ ուսուցին : Աւ ՚ի սէր և ՚ի միաբանութիւն կոչեաց զամենե- սեան , և հրաւիրեաց յիւր արքայութիւն և ՚ի փառսն : Օ սյս և որ սոցին նման՝ գոհաբանէ աղօթիցս բան յասելն ,

Բարձեր զթշնամութիւնն ՚ի միջոյ և արարեր զխաղաղութիւն յեր- կինս և յերկրի : Հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս բարեացդ :

Օ ի և սյսպիսի պարգևի՝ միշտ երկրպագութիւն երգս օրհ- նութեան մատուցանեն փառաբանիչք նոյ , բարձացեալ սյսմ շնորհի մեծի զշնորհակալն լինել , և զերկրպագելն աստուծոյ կոչելով . սյս- պէս ասելով ,

Որում մեծի շնորհի արասցես և զմեզ արժանի : Որում շնոր- հի , օրհնելոյ ընդ ճշմարիտ երկրպագուս քո , որք յամ ժամ փառաւորեն զհայր և զորդի և զուրբ հոգիդ :

Մրդարև՝ մեծ շնորհ է , և անբաւ պարգևք , հողոյս և դիւրաւ- լոյժ բնութիւնս՝ անհաս և անբովանդակ բնութեանն փառաբանիչ լինել . և մեծապարգևին նոյ , խոնարհէլ և փոխադարձութիւն ընդ ու- նել իւրով անկարօտ բնութիւնն ՚ի մեր ամենանուազ զանգուածոյս :

Ասն որոյ կարի իմն պատեհագոյն նմա ասէ զփառսն տալ . սյս- պէս ասելով ,

Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . սյսմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից , ամէն : Աւ միաձայնեալ ժողովուրդն զա- մէնն և զհաւանակամն ապիցն , ապ եպիսկոպոսն զխաղաղութիւնն և առնու , աւետարանելով զհայցումոցն լըումն , և վայելելով յու- րախութիւնան , առելով զխաղաղութիւն և առնելով ,

Երբ օրհնութեան և ՚ի ձայն սաղմոսաց անդադար փառա-  
ւորեմք զՏայր և զորդի և զսուրբ հոգի . այժմ՝ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից , ամէն :

Քարոզ՝ Ողորմե՛ս և ՚ի նեղութեան կանոնացն :

Ս ան գտանելոյ մեզ շնորհս և ողորմութիւն ՚ի բարերար  
Պատեառնէ մերմէ զտէր աղաչեցուք : Ի՛նչպէս անգամ  
յայտ արարի թէ առբք ձրիք՝ շնորհք կոչին . վասն այնորիկ շնոր-  
հակալ լինիլ սովոր եմք որոց առանց պատճառի տան ինչ մեզ :

Իսկ որոց յորս պատճառս իմիք՝ կամ ՚ի սիրոյ կամ ՚ի սրոց  
կամ յօգնականութէ իմեքէ՝ չհամարիմք երախտիս . այլ թէ և նոքա  
կամիցին առ երախտաւորս ունել զինքեանս , ասեմք՝ չեմք շնորհա-  
կալ , զի իմն յուր է քան զնորոց արարածն : Եւ յորժամ ասեմք՝  
շնորհակալ եմք , յայտնեմք թէ՛ ուստի չունէաք աղէքս՝ պար-  
գև տուալ :

Իսկ վասն ողորմութե՛ և սասցեալ եմք , բայց ոչ ինչ գանդա-  
ղելն է զայն գարձեալ հաստատել . զի շնորհ՝ ձրի տուրքն է . իսկ  
ողորմութի՛ն՝ ոչ ձրին միայն , այլ և կարեկցութեանն : Երբժամ կար-  
եաց ուրուք և նեղութեց ցաւեցուցեալ զմեր սիրտս՝ և խարշեալ  
զաղիսն տագնապեցուցէ օգնել նմա , եթէ սիրելի և եթէ ատելի  
մեր իցէ . զի ողորմելն լինիլն՝ չտայ զթշուապելումն յիշել զսա-  
լանան ողորմածին :

Երբ՝ զայս ուսուցանէ քարոզն , զի կոնարհութիւն առ ան-  
տիցուք , և որն ՚ի մարդասիրէ պարգևս տալ խնդրեցուք և ոչ ծա-  
ռայութե հատուցումն , և որն վասնգաւորք ողորմութի հայցե-  
ցուք , և վշտակցութե գտուրսն և ոչ պարտս համարեցուք . զի և  
է՛ իսկ գիւտ և կոչն՝ որ ոչ իւր ինչ իցէ , կամ ոչ ընդ վաստակոց  
գայցէ , այլ գիտուած ինչ բարեոյ լինիցի առանց աշխատութեց և  
ակնկալեաց : Օչայս գիւտ գտանել զշնորհ և զողորմութի բարոզն  
յորդորէ հայցել . վաստահոլութիւն տայ առնոյ յասելն , ՚ի բարերար  
պատեառնէ մերմէ :

Օի թէ բարերար է , ապա և առ անարժանս բարի առնէ . զի  
որ արժանեացն լինին բարիքն՝ պարտք է . իսկ բարերարութիւն է

ստուգիւ որ առ անարժանն է : Վանդիւ և տերն մեր կամելով ըլ մեզ՝ զի աղախաւորացն և թշնամեացն բարխ գործիցեմք , սակ , \* Եղբրուք դուք բարեբարք , ոնք և հայրն ձեր երկնաւոր գթած է : Եւ անդէն ցուցանէ զբարեբարուէն զհանգամանս . զի ոնք արդարոյն սակ՝ նոյնպէս և մեղաւորացն ծագէ արև , և անձրև տեղոյ :

Գարձեալ՝ և միւս ևս վստահու թի՛ր . զի տեր մեր է և զծառայիցս զաղաչանս չեռւժաց անտես առնել . զի թէ անպիտան ծառայից մարդկան տերու թի՛ր՝ զհարկաւոր պէտան շնորհէ , ապա յայտ է թէ ևս առաւել արարիչն և որ ամենեցուն տերն է՝ ապ շնորհ և ողորմութիւն որոց խնդրեն ՚ի նմանէ : Օյոյս և առարեալ ապ յոյս . \* Մատիցուք ոյսուհետև համարձակութի՛ք առաջի աթոռոյ շնորհաց նորա . զի ընկալցուք զողորմութի՛ր . և գացուք շնորհս ՚ի դէպ ժամանակի՛ օգնականութեան , օգնեալք շնորհօք և ողորմութեամբ :

Եւ դէպ ժամանակ՝ այժմու կեանքս , և անդէպ՝ հանդերձեալքն . զի աստ խնդրել համարձակութիւն է ըստ սասցելումն , և գտանել զխնդրելն ոչ վրիպանք : Իսկ անդ՝ թէ և լոյցեմք և պաղատիցիմք , օղտել ոչ ունիմք . որոնք և ոչ մեծատունն զկաթ Չըցն յանդէպ ժամուն հայցելով էգիտ , և ոչ կուսանքն իւղ , և ոչ որք արտաբոյ կացեալ բախէին յետ փակելոյն . և թէ նշանս գործեցին յանուն փրկչին : Ի՛րդ՝ և մեր մինչ գեռ ՚ի շնորհացն է աթոռ և ոչ ՚ի գասաստանին , խնդրեսցուք զողորմութիւն նորա . միաբան ասասցուք տեր ողորմեա :

Ս ան փրկելոյ զմեզ ՚ի զբարտու թէ՛ մարդկան և յորդայ թից սատանայի՛՝ զտեր աղաչեսցուք : Վանդիւ ծանր վիշտ ունի զբարտարու թիւն . ոչ ամ մարմնոյ միայն , այլ է թէ ոչ առարինաբար տանիցիմք , զամ վստախս հոգևորս կորուսանելիք : Վանդի թէ ատեամք զբարտաօղն , բակեցար ՚ի սիրոյն որ գաշակեբարտութի՛ր տեառն երևելի առնէ որոնք ինքն ասաց : Եւ զի գլուխ պատու իրանին տեր է , անգլուխ առնելով զպատու իրանն՝ մեռեալ առնելիք զնս ՚ի մեզ թէ և պահիցեմք ինչ ՚ի նոցանէ : Եւ ՚ի մեռանիլն նր՝ ՚ի մեզ՝ յայտ է թէ կորեալ ամ հոգևոր վստակքն որպէս ասացար :

Իսկ է թէ չար ընդ չարի կամ բանբասանս ընդ բանբասանոց ևս հատուցուք սուս կամ արդար , յախտենից գատաստանացն զմեզ մատնեցար : Կողում ասել որ ինչ ՚ի միտան խռովութիւնք և աղմուկք և յաղթիցն լուսոյ խաւարումն , և զպերդութիւն առ բարեացն վստախս :

Ս ան պնորիկ աղաչեսցուք զամ սրտիւ՝ փրկել ՚ի զբարտութի՛ր . զի յայսպիսի վառնկից զերծեալ լիցուք , այլ մի և մեք զբարտութի՛ր :

դատճառս տալուք զըստարտչացն , և ընդ նոցա և ընդ մեր զդատ տա-  
ցուք նոյ : Այս թէ մեր զգուշացեալ և աղօթեալ իցէ վասն այնր ,  
և թոյլ տայ անձ վասն զմեզ պատկելոյ՝ անկանիլ ՚ի փորձութիւնս .  
այինա կացցուք քաջութեամբ և համբերութիւն , օրինակ առնելով՝  
զսուրբան , և զտէրն իսկ գլխովին . զոր գիւատար և սամարացի կո-  
չէին , և անձ հակառակ աստուծոյ :

Աւնա բամբասեալ՝ ոչ փոխարէն բանբասէր . այլ այնչափ սէր  
առ զըստարտոյ ցուցանէր , մինչ զն և մեռանիլ , և զըստարտոյացն  
մեղան՝ իւրով մարմնովն ՚ի խաչափայտին վերացուցանել , և զերծու-  
ցանէլ զայն ՚ի մեղաց՝ որ կամիցին զայնոսիկ : Այնպէս և պօղոս  
զանձնէ և զայլոց ասէր , \* Բանբասէին զմեզ՝ օրհնէաք , հալածէին՝  
յանձն առնուաք , հոյհոցէին՝ աղաչէաք :

Այսպիսեացն երանէ տէրն , \* Երանի է ձեզ յորժամ նախա-  
տիցէն զձեզ և բամբասիցէն սուտ՝ այլովքն հանդերձ : Այլ համ-  
բերելովն՝ ծանուցուք մարդկան թէ սուտ է ասացեալն զմէնջ . և  
ցնծալովն և ուրախանալովն՝ յամօթ արասցուք զբանսարկուն . և  
զնոյ շնորհն ՚ի մեզ կորզեսցուք :

Օ ի թէ յիրաւի բանբասանացն արդարանամք որո՞ զմարտա-  
ւորն զայն , ապա քանի՞օն կատարեալ արդարք լինիմք զըստարտութե  
համբերեալք : Օ որոյ զվարձան ոչ որչափ ինչ է՝ նորն սահմանեաց .  
այլ բազման զանբանս յայտ արար . քանզի բազումք ՚ի սրբոցն ան-  
սուտ զասօղն համարեալ , քաջութիւն տարան պոռնկութեց և այլոց  
ախտից զըստարտութե , և փառաւորեցան յերկրի և յերկինս :

Ասան անձին բրիստոնէից՝ և տան հաւատացելոյ՝ զտէր  
աղաչեսցուք : Քանզի պարտապան եմք միմեանց աղօթս առնել ,  
օգնել և փրկել զմիմեանս ՚ի մարմնոյ վտանգից և յոգւոյ : Օ ի եթէ  
պատերազմակիցք մարտին ոչ միայն անձին , այլ և ընկերին զգուշա-  
նան և մեռանին ևս յայլոցն վերայ . որչափ ևս առաւել մեք ՚ի հո-  
գեւոր պատերազմիս պարտեմք աղօթիւք և բազում բարեխօսութիւն  
օգնական լինիլ . որո՞ ուսաք ՚ի պօղոսէ և ՚ի յովհաննէ գլխաւորաց  
առաքելոցն , և ՚ի յակոբայ որ եղբայր տեառն էր :

Քանզի ասէ , \* Աղօթս առնել ՚ի վերայ միմեանց բժշկութեց :  
Աւ յոյժ զօրաւոր զաղօթից օգնականութիւն ցուցանէ , մանաւանդ  
յորդարոց մատուցեալ . իսկ պօղոս ասէ , \* Չգուշացուք միմեանց  
յորդորմամբ սիրոյ և գործովք բարեաց : Աւ դարձեալ թէ \* Աղօթս  
առնել յամ ժամանակի հոգւով և ՚ի նոյն արնեսցիք անձ ժողովա-  
լութիւն և ինդրուածովք վն ան սրբոց : Այսինքն թէ և վասն ան  
բրիստոնէից . և ՚ի վերայ էսծ թէ , և վասն իմ :

Եւ եթէ պօղոս աշակերտացն աղօթից կարօտանայր , սրջափ  
 ևս առաւել մեք աղօթից միմեանց կարօտանամք . և մեր այլոց աղօ-  
 թեւոյ , զայլոց աղօթս մեզ շահէսցուք : Իսկ յովհաննէսն ոչ աղօթից  
 միայն զմեզ պարատպանս որար , այլ և մահոյ : \* Քն ասէ զանձն  
 եզ 'ի վերայ մեր . և մեք պարտիմք 'ի վերայ միմեանց զնեւ զանձինս :  
 Եւ եթէ մեռանիլ մեզ պարտ է վասն ամ ուրուք , ապա ասէ ևս  
 առաւել աղօթել վասն ամենեցուն :

Քանզի և որ աղօթիցն է վարդապետ և ընդունիչ , ոչ անձին  
 յատուկ , այլ հասարակաց առ հասարակաց հայրն աղօթել հրա-  
 մայէ . հայր մեր ասելով ամենեցունս . որ սուրբ աւազանաւն նմա  
 որդիացար : Եւ այսպէս կարգ ըստ կարգէ վասն բնաւ եղբարց ըզ  
 հայցումն առնէ՝ մեր և մեզ , և ոչ երբէք իմ և ինձ ասելով . և մեք  
 'ի ճշմարիտ վարդապետէն խրատելով , խնդրեսցուք խաղաղութի ամ  
 անձին . քրիստոնէի և ասն հաւատացելոյ :

Եւս առաւել այնոցիկ՝ որք 'ի լերինս և յայրս և 'ի փապարս  
 լերանց բնակեալ սուրբ հարբն :

Ս ասն որք սաղմոսիւք և օրհնութիւ կատարեն զամ օ՛ւսմա-  
 նակս կենաց իւրեանց՝ զտէր աղաչեսցուք : Եւ քանզի նորա սիւն  
 և հաստատութի եկեղեցւոյ են , և հաշտեցուցիչք այ ընդ մարդկան .  
 վն այնորիկ ոչ շատացաւ ընդ համօրէն . քրիստոնէայս յիշել միայն ,  
 այլ և առանձինն երկուս տունս . զի աղաչեսցուք զտէր անփորձ  
 մնալ նոցա , և փորձանաւորացս մեզ օգնական լինիլ : Եւ ամենայն  
 քարոզ յայս յօդի :

Ս ասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւա-  
 տով 'ի քն ննջեցին զտէր աղաչեսցուք : Եւ այսու ուսանիմք թէ  
 յամ աղօթս մեր խնդրել պարտիմք վասն եղբարցն , որք ճշմարիտ  
 հաւատս ունէին և յուսով 'ի քն ննջեցին : Օհ և որ սուրբքն 'ի  
 նոսա իցեն՝ զմեզ հոգացեն , վասն մեր հասարակաց նոցա և մեր  
 եղբարցն հոգալոյ :

Աղօթք՝ Ողորմեա և 'ի նեղութեան կանոնացն :

Որ հանամք զքէն տէր ամ մեր որ զարթուցեր զմեզ 'ի  
 հանգստէն . քնց շնորհիւ ողորմութեան քոյ : Սկնայն  
 ուրեք մեզ գոհութե պէտք են . քանզի մեծագոյն ընծայ 'ի բնու-

Թեևէ զոր մատուցանէ մարդ նոյ , տիրապէս սյլ ինչ ոչ գտանի , բայց միայն օրհնութի գոհութի և փառաբանութիւն : Արն ստէ առաքեալն , Գոհացողք լերուք յամի զայ և զհօրէ նովաւ : Աւարգարեւ յիրաւի , զի որ զէսս էացոյց յոչէից , օրհնի ՚ի յէիցս , և որ զգոյսս գոյացոյց , գոհաբանի ՚ի գոյիցս : Աւ զի փառօք զարդարեաց , առաւել փառաբանի ՚ի փառաւորելոցս :

Աւ ոչ եթէ ՚ի մատուցանելն զայս՝ յաւելուած ինչ լիցի անկարօտ բնութեան նոյ , զի նա ՚ի փառս իւր փառաւորեալէ լիով և անթերի և յառաջ քան զլինիւն աշխարհի : Այլ զմեր մտերմութի և զսէրն ցուցանելով առնեմք զայս , զի մի սպերախա գտանիցիմք և անշնորհակալու ըստացուած որն ճինն խորոյէլ . սյլ բնդ գոհութե և առաւել ևս յորդորեցուք զնա ՚ի տուրս պարգեաց , զի ամ ուրեք յորժամ խնդիր կամիցի որ փնդրել , նախ գոհանայ և ապա խնդրէ :

Աւ գարձեալ զի յառաջին աղօթից սկիզբն գոհացաւ , և ապա զնային խնդրեաց , և զխաղաղացուցանելն ՚ի ստանայական խոսվութեանց և յաշխարհի զբօսանաց , և հրեշտակ պահագան շնորհէն . և յստեւն զամ մի ըստ միոջէ զպաղատանս մատոյց : Աւ աստ որն թէ առեալ զխնդրելին՝ գոհանայ . և վասն ոյնորիկ՝ և վասն խաղաղութե զհանգիստ քնոյ շնորհէլ և զարթուցանել՝ ստէ զնոյն գոհութի : Օհ առաւել ՚ի քուն գիշերին ջանայ դաւ ինչ գործել ստանայ . և խնամքն նոյ պահպանէ . վասն որոյ միշտ գոհանալ պարտ է : Գոհանամք զքէն տէր ամ մեր :

Աւ տէր ամ մեր ստելով , զառաւել մտերմութի յայտ առնէ . նա և փառս ևս վարկանի զժառայելն նոյ . և արդարեւ յիրաւի մեծ և բարձրագոյն վառք : Օհ ոչ իբրև զՏեթանոս եմք մոլորեալք որք զաարերս աստուածացուցին . և առ կուռս անմուռնչս երթային և գոյին , ուրուականացն ծառայելով , և բանականաց՝ զանբանս պատուելով որ ոչինչ էին յաշխարհի ըստ առաքելոյ :

Այլ մեր՝ Ճմարտին նոյ ծառայելով որ արարիչն է երկնի և երկրի և ամ որ ՚ի նոսա , զնա միայն պաշտեմք և փառաւորեմք . և գոհանամք վասն մեծի երախտեացն նորա , վասն որոյ ստէ ,

Գոհանամք զքէն տէր ամ մեր որ զարթուցեր զմեզ ՚ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութե քով : Օհ շնորհքն նոյ է որ յամի հռչակ հարկանէ ըստ առաքելոյ ՚ի բարբերաբելն , և ողորմութեամբն պահպանէ զամենեսեան , վասն որոյ ստէ , Ար ՚ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո զարթուցեր ,

Օարթն զմիաս մեր արդարութե սուքեզ տէր ամ մեր : Ասաց զարթնուլ զայն խնդրէ , զի մի ջնորք զբաղմանց կենցաղոյս



և արկածք սատանայական խորհրդոց ամբօխեն զվրաս, և զաղօթս սուրբ և յստակ մտօք առ անձ ոչ կարիցեմք մատուցանել:

Օ ի ՚ի զբարեալ մտաց աղօթք ոչ հաճի անձ. վասն որոյ զվրաս զարթուցանել հայցէ արդարութիւն առ անձ. զի կարող լինուք հաշտական մատուցանել զաղօթսն և ընդունիլ զողորմութիւն յամէնառատատուն: Օ ի միտք որ արթուն է և հաւատով աղօթէ՝ առնու զանդերն յոյ, որպէս և հետագայս ցուցանէ բան:

Տեսցեն աչք մեր զփրկութիւն բո. եկեսցէ և բնակեսցէ առ մեզ աստուածութիւն բո: Աթէ յստակ և պայծառ ունիցիմք ըզմտաց հայեցողութիւն, կարեմք արդարև տեսանել յարժամ զփրկութիւնն, և զամենառատ շնորհաց նորին ՚ի մեզ զբնականալն տիրապէս: Առ զփրկութիւն միշտ օր ըստ օրէն կոչէ զհոգեկան և ըզմարմնական, որում միշտ բաղձամք:

Առ ողորմութիւն բո հովանի լինցի ՚ի վերայ պաշտօնեից բոց: Օ որ օրինակ յարկ բնակութե՝ հովանի և պահպան լինի բնակողաց ՚ի տօթոյ արեգակնն, և ՚ի տեղումն անձրևի, և ՚ի ցրտութենէ օդոյ, ՚ի գոռոց և յաւազակաց և յոյլոց ոմանց դաւաղաց, զի մի վնասիցիմք: Այսպէս և ողորմութիւնն նոյ զպաշտօնեոյս իւր պահպանէ յերևելի և յաներևոյթ թշնամոյն, զի մի գայթակղիցիմք հոգւով կամ մարմնով. այլ միշտ պահպանեալ պաշտեսցուք զնա երկիւղիւ հանապաղ:

Առ զմեզ զծառայքս բո՝ արժանի արա ՚ի տունէ և ՚ի գիշերի և յամօթամու միշտ խորհիլ ՚ի սէր պատուիրանաց բոց: Ա՛նձագոյն վարձ և բարձրագոյն պարգևք է յոյժ ծառայի՝ թէ և այլ ինչ փոխարէնս ոչ ընկալցի, յորժամ արժանի լինցի ՚ի պատուիրանս ան խորհիլ միշտ և հանապաղ. որոյ և սաղմոսանուաքն սաէ, \* Տէս զի զպատուիրանս բո սիրեցի. տէր ողորմութեամբ բով կեցօ զես: \* Երանի որ խորհի զաղբասն և զանանկն: Այսինքն՝ որ վասն մեր աղբաստացաւ ճանախտ մեծատունն արարիչն և որդին նոյ:

Ի տունէ և ՚ի գիշերի, ոչ միայն զգալիս, այլ և ՚ի փութարկ գործոց, և ՚ի գիշեր մեղացն խոկալ ՚ի սէր պատուիրանին աստուծոյ: Այսան այսորիկ արժանաւորեալ, առաւել պարախիմք գոհութիւն ամենատեառն մատուցանել. զոր և յաջորդ բանս ցուցանէ:

Առ գոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

**Ա**ւելդանարար զօրութիւնք և աղբիւր անմահութեան զու ես քս  
 անձ մեր . որ շնորհեցեր մեզ 'ի մէջ գիշերի յառնել և խոս-  
 տովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քոյ :

**Ա**մենայն զօրութիւնք քէսս՝ կենդանական զօրութիւնք միայն է , թէ  
 զգայն թէ իմանալն . իսկ կենդանարար զօրութիւնք՝ միայն արարչա-  
 կանն է զօրութիւնք . որ ամենեցուն զլինիլն ետ , և զբարեոք լինիլն  
 պարգևեաց . վասն որոյ ասէ , Աւելդանարար զօրութիւնք և աղբիւր ան-  
 մահութեան : **Ա**րդ զօրութեան արարչէ է , այսպէս և անմահութեան  
 աղբիւր է . զի անսպառ միշտ աղբիւրացուցանէ զանմահութիւն և  
 զառեղութիւն յարարածս 'ի ներկայումս , և 'ի հանդերձելումս զյա-  
 ւէժական անմահութեան վայել պարգևէ սիրելեաց իւրոց թագա-  
 ւորն մեր . որպէս ասէ յաջորդս ,

**Ա**ռու ես քս անձ մեր , որ շնորհեցեր մեզ 'ի մէջ գիշերի յառ-  
 նել և խոստովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քոյ :  
**Ա**ռու ես քս անձ մեր որ շնորհեցեր ասէ , զի քո սակի եմք՝ գրաւ-  
 եալ և ոչ այլում ումք : **Օ**չ որք 'ի քս մկրտեցաք , զքս զգեցաք  
 քրիստոնէայ անուն ժառանգելով , յոյս զքս ունսող , որով պարծեմք  
 միշտ և յոյս ունիմք փրկութեան :

**Ա**ր շնորհեցեր մեզ 'ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինիլ  
 առ քեզ : **Օ**չ թէ սէրն նոյ բնակեացէ 'ի մեզ , ոչ տայ մեզ թոյլ  
 մինչ 'ի մէջ գիշերին յամբլ յանկողինս . այլ ըստ մեծին եսայեայ  
 կանխել առ նա հանապաղ ասելով , \* 'ի գիշերաց կանխէ հոգի իմ  
 առաւօտ առնել առ քեզ անձ : **Ա**յլ զոյս խորոց արկանէ զի մի  
 առաւել ծուլութեամբ անազանեցուք :

**Ա**ռ խոստովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդարութեան  
 քոյ : **Ա**րաւուրն են նոյ խոստովանել միշտ զբարերարութիւնք . զի որ  
 յոչ էցի 'ի լինելութեան էտծ և նախախնամութեան միշտ մատակարար-  
 է , ախարպէս արժանի է խոստովանարար հանապաղ փառաբանու-  
 թեան և երկրպագութեան : **Ա**ռ և զինչ պարտ է ասել և վս երկ-  
 րորդ նորոգմանս որ 'ի ձեռն քի շնորհեցաւ մեզ : **Ա**մանաւանդ  
 յորդէգրութիւն հօրն երկնաւորի կոչել , որ քիւ եղև ախարպէս .  
 վասն որոյ խոստովանութեան միշտ օրհնեմք և շնորհակալու լինիմք :

**Ա**յլ այժմ աղայեմք զքեզ տէր անձ մեր : **Օ**չ միշտ աղայելն՝  
 միշտ պարգևաց արժանացուցանէ . յորժամ հաւատով և ըստ հա-  
 ճայիցն նոյ լինիցի : **Ա**ռ տէր և անձ ասէ , զդատողական և զարարչա-  
 կան անունն 'ի կիր առեալ :

**Լ**րա՛ զմեզ ասէ արթունս և պատրաստս ՚ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո : **Լ**րթնուածի՛ն ինձ առաւել զմտացն խնայիր • որով և մարմինն կանխէ առ անձ սիրով • որնդ դաւիթ ասէ : \* Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ : **Լ**ս պօղոս և շիրայ ՚ի մէջ գիշերի կային յաղթս , ՚ի բաց ընկեցեալ զամենայն՝ ու մեղէտս հոգս և զցնորս , և յանձայինոն միշտ պարտպեալ : **Ս** ասն որոյ և բան սղօթիցս ընդ այսպիսին հայցէ արթունս և պատրաստս գտանիլ ՚ի փառաբանութիւն նոյ : **Օ** ի որք աշխատանցն կցորդ լինին սրբոցն , և փառացն հաղորդ լինելոց են • որպէս և հետագայս ցուցանէ բան :

**Լ**ր ընդ նոսին փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգի • սոյժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Պարձեալ աղօթք :

**Մ**անխեալքս ՚ի ժամ գիշերին՝ աղաչեմք զմորդաօիրութիւնդ քո որ բացքր զբերանս մեր ՚ի փառաբանութիւն ամենաօտուրբ անուանդ քոյ :

Կանխել՝ զվաղայարոց լինին ասէ • որպէս և մարգարէն յայտ առնէ թէ , \* Կանխեցի տարածամու ազադակեցի , և ՚ի բանս քո յուսացայ : **Չ** և էր ասէ ժամ պաշտաման , և ես հասի կանուխ ազադակել առ քեզ : **Լ**ս դարձեալ , \* Կանխեցին աչք իմ առաւօտու ՚ի խօսիլ ինձ զբանս քո : **Օ** սոյս կամի ասել թէ զպաշտօն օռաւօտուն ոչ թողի ՚ի սովորութի՛ն պաշտօնէից քոց ժամ որ ըստ հաւուն խօսից • սլ կանուխ քան զայն յարեայ ընդ քեզ խօսիլ :

**Լ**ս եթէ ո՛րչափ է կանխութի՛ն , ՚ի սմին սաղմոսի յայտ առնէ • \* Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ տեառնս : **Լ**ս վն էր զայս առաջի արկանէ մարգարէս • զ՚ի գութ սոյսու կամի շարժեսցն անձ • որնդ թէ ասել , թէ և այլ ինչ լսելութե պատճառս չունիմ , սակայն զի ՚ի տարածամու և ՚ի հասարակ գիշերի՛ն՝ զգիշերի և զճանրութե՛ք քնոցն անցեալ առ քեզ դիմեցի , պարտին ունկն դնել :

**Լ**ս յարէ և առ մարդիկ սովոր եմք առնել յորոց զկարիս մեր պահանջեմք , զճանապարհացն երկայնութի՛ն և զգիշերի գնանն նպաստ մատուցանեմք • Էլի և եկի առ քեզ , զկարդ մարթես ունայն յղարկել , եթէ այլ ոչ , զտարածամութի՛ն գալոյս զմտաւ ան և տնւր զոր պահանջեմս : **Օ** սոյն զայս և տէրն յօրինակ աղօթականացն էառ • ՚ի մէջ գիշերին գալ ասէ բարեկամին առ բարի նկանակացն ինդիր •

որ թէպէտ և պատճառեաց զփակիլ դրացն և զմանկանցն ընդ ինն լինին յանկողնին, սակայն ժտելն ՚ի գիշերին առաւել քան զբարեկամութեան հասանեցոց ՚ի խնդիրն :

Եւ եթէ մարդ արհամարհէ որ ինչ իւր տաղտկութի՛ն առաջիկայ, իսկ անբուն ակն և անվաստակ և գորովազու՛թ տէրն անտես առնէ՞ որք տաժանելի մարմնովն զթերու՛թիւն թողեալ Հանգիստ քնոյն առնա՛կ կարգայցեն : Այսպիսի մտօք և աղօթիցս բան զհանխելն սկիզբն դնէ • և յարէ ՚ի նոյն զվիւս պատճառն լսելու՛թեան զաղօթելն՝ թէ որ առ բարեկամին ժտեցաւ, նոյնպէս և մեք առ քեզ ժտելք :

Եւ չասէ՛ աղաչեմք զքեզ, այլ երրորդ ևս պատճառս յաւել լսելու՛թէ : Եւ ո՞ր է այն • նոյ բարերարութիւնն, որ յիմի սովոր է բարեգործել առ չարս և առ բարիս : Այսն այսորիկ ոչսպէս ասէ, Աղաչեմք զբարերարութիւ՛դ քո որ բացեր զքերանս մեր ՚ի փառաբանութիւն ամենասուրբ անուանդ քո :

Վոչն ասէ այդ մեծ բարերարութե՛դ քո ցոյցք էն՝ ամենանբ անուանդ փառս առնուլ ՚ի հողեղէն զանգուածոյս, և ճգարչիլ ՚ի մեղանչական մեր բերանոցս • այլ որով բազում անգամ զքեզ բարհացուցանեմք, բանաս զսա քոյին օգնականութե՛դ ՚ի փառաբանութիւնսն զթու՛թեանց որորմու՛թեան քոյ :

Ո՛ր է թէ մարդարէն էասյի ՚ի կան առաջի քո ատո՛ւոյդ, և ՚ի լսելն զսերովբեիցն փառաբանութի՛ն, վայ ասէր ինքեան և պիղծ զիւր շրթունս կոչէր • և խոստովանէր, զի առ պղծաշուրթն ժողովրդեանն բնակակիցն լինին՝ իւր էր եղկութի՛ն : Եւ վասն այնորիկ մինչև մաքրեցաւ ՚ի սերովբէէն՝ չիշխեաց կցորդակից լինել փառաբանութեան այնմիկ : Այս քանի՛օն պարտ էր մեզ խորշիլ, եթէ ոչ ՚ի մարդասիրութիւնդ քո ապաստանեաք • որով և ուսուցանէ մեզ սաղմոսս և օրհնութիւն և բանս աղօթից • և այսորիւք բանաս զքերանս մեր ՚ի փառաբանութիւն ամենասուրբ անուանդ քոյ :

Աս զայստիկ մեզ շնորհեաց, բայց մի՛ մեք անխորշք և առանց երկիւղի առ այս մատիցուք • որք ՚ի մարդարէին այսպիսի երկիւղածութի՛ն տեսանեմք : Այլ նախ սրբեսցուք զքերանս մեր խոստովանութե՛ք և ապաշխարութե՛ք, հառաչանօք և արասուօք • և ապա բացցուք զքերանս մեր ՚ի փառաբանութիւնն : Ո՛ւայս և առաջաբանի քարողն խրատէ յասելն ,

Եւ մեք այսուհետև սրբեսցուք զանձինս մեր ՚ի խղճէ և ՚ի չար գործոց • համբարձցուք ՚ի գիշերի զձեռս մեր առանց բարկուէ և երկմտութե՛ք • հաւատով խնդրեսցուք զթողու՛թի մեղաց մերոց ,

խոստովանելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին տատուծոյց  
**Օ** գուշուծի տայ անդէն խկզբանն, զի մարբէլ նախ ՚ի խղճէ,  
 և սրբել զբերանս մեր յաղոց մեղաց, և ապա առ նա զբերանս մեր  
 բացցուք: **Եւ** արդ՝ գոհացեալ զայ վասն նր՝ փառաբանութե ար-  
 Ժանանալոյ մերոյ բերանոյս, ապա և զհայցուածսն առաջի արկանէ,  
 և գոհուծի զխնդիրն յայտնէ ըստ առաքելոյն խրատու: **Եւ** որ է  
 զոր խնդրեն:

**Ս** ացեն աղաչանք մեր առաջի մեծի տէրու թեանդ քոյ:  
**Եւ** մտանեն այս է. լսելն լինիլ և ընդունակ, և զտէրութե դմե-  
 ծուծութունն ոչ վարկաբարզն յիշէ, այլ զի զարթնուցուս ոգւովդ, և  
 իմանայցես, թէ մահկանացու և անցաւոր ունողացս զտէրութիւն և  
 փոքր մասին, այնչափ ՚ի սրտէ բաղձանօք և երկիւղիւ զպաղատանս  
 առնեմք: **Եւ** ՚ի լսելն և ՚ի տալն զեղծանելն պարգևսն՝ անչափ խն-  
 դամք, և յոչնդունելն և արգելուլ զհայցուածսն, անհնարին  
 սուղ առնումք:

**Մ** պա հրեշտակաց տեառն որ զերկնից և զերկրի պարզ և ՚ի բը-  
 ուին ունի, և իւր ամ ստացուածք են, և անմահութե զյաւիտե-  
 նական ամենակալութիւն ունի անչափ մեծութե: **Ս** ըբան երկիւղիւ  
 պարտ է կալ առաջի, և սաստիկ ցանկութե առ ՚ի նմանէ խնդրել  
 զօգտակար շնորհն, և յառնուլն՝ ամենազուարճ խնդութե գոհա-  
 նալ: **Եւ** թէ յապաղէ տալ, անձանձրոյթ աղաչել մինչև շնորհեսցի:  
 քանզի տայ խնդրողացն ըստ անսուտ խոստմանն: \* խնդրեցէք ասէ  
 և տացի ձեզ:

**Բ** այց է ուրեք զի և յամէ զտալն առ սէր բարբերութեանն  
 իւրոյ. որն զի կարօտութե խնդրելեացն՝ ցանկ առ իւր մնալ մեղ  
 արասցէ, զի ոչ ծնօղք զորդիս սիրելիս, և ոչ բարեկամք զբարե-  
 կամս, և ոչ այլ ինչ իրի որ ՚ի փափագն են՝ փոքրութեն բացակայիլ  
 զիւրեանց փափագելիսն, ուն ամ զմեզ ցանկորդել առ իւր բաղձայ:

**Եւ** վասն այսորիկ կարօտութիւն և նեղութի տայ մեզ, զի առ  
 նա դիմեցուք: **Եւ** ոչ վտղվաղէ զտագնապին զերծումն, զի մի  
 փոյթ ընդ փոյթ ՚ի նմանէ ՚ի բաց դարձցուք. այլ զի կարևորօքն ևս  
 առաւել զմեղութելն յաճախեսցուք: **Եւ** առնելով զշնորհն, գիտաս-  
 ցուք զմեծութիւնն և ՚ի շնորհատուին սէր հաստատուն միացուք:

**Բ** այց տեսցուք և որ զինին գայ:

**Բ** այցին դրունք մարդասիրութե քո ՚ի վր ժողովրդեան քոյ:  
**Օ** ի որպէս թագաւորացն տուրք՝ պէտս ունին խանութից բացման  
 դրանցն, և այնպէս պարգևառուացն շնորհին: **Մ** այնպէս քո անծախ  
 բարեպարգևութեդ դրունք են քո սիրոյդ առ մեզ յարձակումն:


զոր ըստ մարգարէին՝ \* Մեղքն մեր որոշել սովոր են , և փակել ըզ  
դուռն մարգասիրութեան :

Ս ան որոյ աղաչեմք չլինիլ յաղթական մերոյ մեղացն քան  
զքո մարգասիրութիւնդ , այլ 'ի մասնելն մեր աղաչանաց առաջի քո  
մարգասիրութեզ , քո դուռն անարգելապէս բացցի ժողովրդեան  
քո • զն այսու առաւել զսէրն բորբոքել արասցէ • զն և մարգարէքն  
այսու առաւել զմծ թախանձել սովոր էին • որն և մոխէսն ասէր ,  
\* Ընդէն չարչարեցեր զժողովուրդ քո , և փրկելով ոչ փրկեցեր զն :  
Եւ դաւիթ ասէ , \* Յիշեա՛ զժողովուրդ քո զոր ստացար 'ի սկզբանէ :  
Եւ սողոմոն երկայն բանիւք խնդիրս առաջն նոյ մատուցեալ , և պէս  
պէս շնորհս խորայելն 'ի տաճարէն տալ հայցելով , յայն զտալոյն  
պատճառս աւարտէ • \* Քանզն ժողովուրդ քո են զոր հաներ յերկ-  
րէն եգիպտոսի : Եւ միւս մարգարէ ասէ , \* Խնայեա՛ 'ի ժողովուրդ  
քո • և մի՛ տար զժառանգութի՛ն քո 'ի թշնամանս : Եւ և 'ի նորումս  
երանելին գրիգոր անճաբուն , յաղթան որ վասն հարուածոց կար-  
կտին՝ ըստ նմանութեց մարգարէին յայն յանկէ զհայցումն : \* Մեք  
ժողովուրդ քո և գաւազան ժառանգութե՛ն քոյ : Եւ 'ի վրէ բերէ ,  
\* Վասն այսորիկ խրատեա՛ զմեզ որորմնութե՛ք քով • և մի՛ սրտմտութե՛ք  
քով վատներ զմեզ զն ժողովուրդ քո եմք :

Ի սո այսմ օրինակի և աղօթիցս բան՝ բացման դրանցն մարգա-  
սիրութեան՝ պատճառ մեծ զժողովուրդ նոյ լինիլն դնէ : Եւ յեա  
այսորիկ այլ ինչ խնդիր ոչ յաւելու • յայտ արարեալ թէ սէր սի-  
րողն ստիպէ տալ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք : Ի այց  
միայն զառաւել պատճառ մարգասիրութեան առաջն արկանէ զայն՝  
զն որորմած է և բարերար • զոր և զմարգասիրութեան դրացն փակ՝  
յոյժ 'ի բաց մղէ , և զյորդութիւն սիրոյն անհուն առաւելութե՛ք 'ի  
մեզ ծաւալէ : Ս անն այսորիկ ոչ փակեացես , այլ բացցես զդուռն  
մարգասիրութեան քոյ ասէ :

Օ ի դու ես բարերար և բազումնորում՝ աստուած • Եւ սպա  
փառս տայ այնպիսի բարերարին և մարգասիրին՝ այսպէս ասելով ,

Եւ բեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ , այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :



## Խաղաղութիւն ամենեցուն :

**Օ**րհնեալ էս ամենակալ ձեռք և հայր տեառն մերոյ յի . քի . որ զարթուցեր զմեզ ՚ի ծանրութիւնքս . և ետուր երգել զերգս հոգևորս :

Քանզև այսպէս իսկ վայելէ ծառայից նոյ միշտ օրհնել զնա , և զարժանանալն օրհնել մեծ պարգև համարիլ և վասն այսորիկ յոյժ գոհութի մատուցանել : Որո՞ւ և աստ՝ յառաջին դրուագին գոհացաւ վասն սորին՝ թէ բացեր զբերանս մեր ՚ի փառաբանութի ամենաուրբ անուան քոյ : Աւ գլխաւորելով զառաջինն , դարձեալ յերկրորդումն զնոյն սկիզբն սունէ գոհանալ զև զարթոյց ՚ի ծանրութիւնքս . և զև զհոգևոր երգս արժանացոյց երգել ասելով , Օրհնեալ էս ամենակալ ձեռք և հայր տն մերոյ յի . քի :

**Օ**երկոսին զայստիկ զնէ զամենակալն՝ և զհայր տեառն մերոյ յի . քի : **Օ** ի ամենակալութեն մեք ծանիցուք թէ որ զվերինս և զներքինս ընդ իշխանութիւնն և յամենեցունց փառաւորեալ է , ոչ կարօտ գոլով փառաց փառաւորի ՚ի մէնջ , այլ վասն առաւել զմեզ սիրելոյ :

Որո՞ւ հարբ որդէսէրբ զմատաղ մանկունս յիւրեանս բարձեալ , սսեն նոյ զիւրեամբք ամէլ զգիրիս , և համբուրել զերեսս , և բանս գովութե ստիպեն ասել իւրեանց : Աւ է՛ զև երկիր և սպագանել առաջև իւրեանց սան , և ՚ի ծառայութի ձևանալ : Իբրև ոչ էթէ ՚ի մանկանցն համբուրելոյ կամ մածնոյ ՚ի գիրիս կամ դեռտխօս լեզուոյն գովութի կամ երկիր մանկանն սպագանելով հայրն յաւելուած կամ փառս սոցէ . այլ զև առաւել ՚ի սէր մանկանն բորբոքեսցի : Սոյնպէս և ձեռ զև անյագ սիրելով զմեզ և կարի այնմ բազնայ , կամի զև մեր սիրելովն և զնովաւ դալովն և օրհնելովն և ծառայելովն նմա , ևս բան զևս յորդորեսցուք զսէր նորա ՚ի մեզ :

**Մ**եր՝ յասելն ամենակալ , զասացեալս զմտաւ ամցուք . իսկ՝ հայր մերում և տեառն փրկչին յի . քի՛ հաւաստեմք ՚ի մեզ զհայրութիւնն . զև էթէ մեք և նա մի էզաք , մարմնանալովն նորա և մեր ՚ի նա մկրտելովն և ՚ի մարմին և յարիւն նր հաղորդելովն , և նա անդրանիկ ՚ի բազում էղբարս : **Մ**յա որ նորայն հայր է , նոյն և մեր . և զև՝ ասեմ էղբարս միայն , այլ և գլուխս նա մեր , և մեք մարմին . սպարեն որ գլխոյն հայր է , նոյն և մարմնոյն : **Մ**եր՝ յասելն մեր ցած թէ , հայր տեառն մերոյ յի . քի , զհարազատութի որդւութե նորա առաջև արկանեմք : Աւ զայս ասելով յարէ ՚ի նոյն :

Որ զարթուցեր զմեզ ՚ի ծանրութէ՛ք քնոյ : Քո է ասէ փա-  
րատել ՚ի մէնջ զքնոյ ծանրութի՛ն, և զարթնութի՛ն շնորհս և զօգառու-  
թիւնն ՚ի դէպ ժամանակի, քնով և արթնութեամբ մեզ շնորհէլով :  
Միոյն՝ զն զաշխատութի՛ն մարմնոյն ՚ի բաց դիցուք . և զն առան-  
գամ հանգիցուք ՚ի հոգոց և ՚ի արամնութեանց որով զերկիր ու-  
տել վնճակեցաք : Իսկ միւսոյն՝ զն պաշտեսցուք զքեզ, և երգել  
զերգս հոգևորս :

Հոգևոր կոչն երգն, նախ զն հոգին սուրբ ուսոյց մեզ մար-  
դարեիւքն և այլովք սրբովք : Եւ դարձեալ, և այժմ՝ ևս նովաւ  
երգեմք . և նա լինի բարեխօս յանմուռնչ հէծութի՛ն ըստ առաքելոյ,  
՚ի զարթուցանել զմեր ոգիս ՚ի սերնն նոյ, ՚ի յորդորել զմեզ սէր՝ առ  
նորա երգն, ՚ի քաղցրացուցանել մեզ զօրհնութի՛ն նորա : Ըստ ասէ  
զչափան որ ՚ի մեզ հոգևոր երգոցն :

Քեզ ՚ի գովութի՛ն և ՚ի փառաբանութի՛ն, մեզ ՚ի քաւութիւն  
և ՚ի թողութի՛ն մեզաց : Երկրբումբ օգտեալք . զն ՚ի գոհութեց նր  
գոհանալով և փառաւորելով զնա, համարձակութի՛ն առնումբ խնդ-  
րել զպիտոյսն մեր ՚ի նմանէ : Օհ առ մարդիկ շնորհակալութիւն  
առ առեալսն՝ ոչ տուեցելոցն մատակարարէ, որչափ ևս առաւել  
յամէնառատ բարերարութեանցն ասուածոյ :

Իսկ քաւութի՛ն և թողութիւն մեզաց՝ յայտնի որքան է մեզ  
օգուտ : Օհ թէ անդէն քաւութե՛ն հասեալ էր ազամ՝ ոչ այսբան  
պատիժ ինքեան և մեզ բաղմնցեալ էր : Բըր՝ զն բանս փառաբա-  
նութե՛ն նոյ տալ՝ ոչ միայն շնորհակալութիւն է առ նա, այլ և մեզ  
քաւութի՛ն . այսինքն սրբութի՛ն ՚ի մեզաց : Եւ գոհացեալ վասն այս-  
պիսի օգտից, վասն առաջկայիցն մտղթէ :

Երբ աղաչեմք զբարերարութիւ՛ր քո որ զայսբան բարիս շնոր-  
հես, զմնացուած գիշերիս շնորհեա՛ խաղաղութեամբ անցուցանել :

Տէս թէ քանի պէտա ունիմք խաղաղութե՛ խնդրոյ . զոր յա-  
ռաջին աղօթիցն մինչև ցկանոնին յանգումն, զխաղաղութի՛ն հայցէ  
և հայցել հրամայէ և յառաջնորդէն ընկալեալ՝ ոչ շատի . այլ և ա-  
ղաչէ վասն նր, առանց որոյ ոչ որ տեսանէ զտէր : Օրոյ և մեք  
խմացեալ, անդադար աղաչեսցուք զտէր և զնոյն խնդրեսցուք յոյ . և  
զնորուն զհետ երթիցուք . զն մի աստ և անդ զրկեալ լինիցիմք ՚ի  
զտէրն տեսանելոյ : Եւ այսու միա դիր թէ՛ որն խոստովանի շնորհ  
զայսր գիւտն՝ ասելով ,

Օ մնացուած գիշերիս շնորհեա՛ խաղաղութե՛ անցուցանել :  
Ես ինքն թէ՛ շնորհս պարգևեա՛, զի և որ ինչ մնացեալ իցէ ՚ի  
գիշերոյս, խաղաղութեամբ անցուցուք :



Եւ հասանիլ ՚ի պաշտօն առաւօտուն , յերկրպագութիւն և ՚ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն : Եւ և իմ շնորհաց գերունակ է սուրբ Երրորդութեանն Երկրպագուս և փառաբանիչս լինիլ : Յարգաս որոյ յորովոց մաղթանաց զնոյն զնեն աւարտ . Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ՝ և միշտ՝ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Մաղթանք :

Պատճառութիւն և շնորհիտ խոստովանութիւն անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգի . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Բանք պիտանիք իրատականք , յոյժ օգտակարք և հոգեշահք՝ նորին սուրբ հոգեկեր վարդապետին խոսրովուս , զկամին և զերկիւղն աստուծոյ՝ շնորհութեամբ ծանուցողն :

Բազում աղօթից մեղ պէտք են , բազում արտասուաց , յորով պաղատանաց , և մեծագոյն ճգնութեամբ հայցել յայ , զի արժանի լիցուք լուսաւոր միտս ստանալ . որով բորբոքեսցի ՚ի մեղ բաղձանք աղօթից և աստուածային գրոց վերծանութիւն : Եւ համեղասցի ՚ի ճաշակելիս մտաց մերոց խահարարութիւնք իմանալի խորտկացն այնոցիկ . և ծանխցուք զշահ օգտութեանց հոգևոր երկանց , և զարդիւնարարութիւն անսպառ բարութեցն : Եւ դիեեսցուք սիրով զկամին բանի հոգևոր ստեանցն . և զմայլեսցուք յօժարութիւն՝ հոգւոյն սրբոյ պարգևօք . զի մի մնացուք իբրև զանդաստան անգործ և անարդիւն , որ միշտ սերմանի և սերմանակորոյս լինի . զուր աշխատանք և ընդունայն վաստակք :

Եւ յազիսիք են միտք ցնորեալք և բարք զբաղէալք , որոց սպառեալ է սէր լսողութե ձեռնային կտակարանացն . որք իբրև զկոյր և զսչացու շրջին յաշխարհիս : Օ ի կամ բնաւ ոչ ընթեւնուն , և կամ զոր ընթեւնուն՝ ոչ սիրով և փափագանօք . այլ իբրև զհարկ ինչ և վճար պարտուց : Օ ի չեք ինչ ողորմելի քան որոց սպառեալ իցէ սէր գրոց սրբոց և բաղձանք վերծանութե ձեռնային պատուիրանաց :

Ստուգած սիրուծի՛ն ՚ի գրոց ծնունի՛ն ՚ի մարդ։ Սէր աղօթից և արտասուաց՝ պաճոց և ողորմածուծի՛ն, խոնարհուծեան և սիրոց, ՚ի գրոց բուսանի՛ն ՚ի միտս մարդկան։ Ա՛րիուծիւն և համբերուծի՛ն, յուսոց և երկիւղի և ամ՛ բարեգործուծի՛ն պատճառք մեղ գիրք լինին ՚ի վերծանելն մարդու մտք։ Ա՛յա և օրինաց և սահմանաց և ամ՛ բարեկարգուծեց պատճառք և հաստատուծի՛ն գիրք են յաշխարհի։

Ա՛յլ և օրհնուծի՛ն մեռոնի՛ն խաչի և եկեղեցւոց, բահանայական ձեռնադրուծի՛ն և օծուծն թագաւորական, և քնական պատարագին բաշխուծն, գրուծք սրբուծք մեղ կատարեալ լինի։ Ա՛յա և հաւատ և մկրտուծիւն քրիստոնէուծի՛ն, և օրինաւոր տմուսնուծի՛ն, և մահ և կեանք, և անտի կենացն ծանօթուծի՛ն, արքայուծի՛ն երկնից տեղեկուծի՛ն և ամօգիտուծի՛ն, և սկիզբն և կատարած, ՚ի գրոց մեղ իմանի։

Ա՛յլ չիք ինչ հոգեւոր գործաւորուծի՛ն կամ՛ բարեկարգուծի՛ն թէ առանց գրոց լինիցի։ Ա՛յն որոց և որոց յովհան ասէ, թէ \* Որովհետեւ ՚ի հոգւոյն զրկեցաք, զգրուծք պարտեմք միշտ գալ։ Ա՛յլ տէրն՝ \* քննեցէք ասէ զգիրս զի նորօք համարիք ունել զկեանս յաւիտեանականս յանձինս։

Ա՛յլ արդ՝ պատուեսցուք զգիրս սուրբ վերծանուծի՛ն, որ են պատճառք մեղ ամ՛ բարեխաւուծի՛ն. փափագեսցուք սիրով ՚ի վերծանուծի՛ն գրոց նբց, և յընթեռնուլն կրկին հոգ յանձին բերցուք։ Ա՛յն զի իմացուք զընթերցեալսն. և միւս ևս, զի անմոռաց ՚ի մտի կայցուք. մանաւանդ թէ գործով կատարեսցուք, և լեցուք աւնելիք օրինացն, զի մի՛ զրկեսցուք ՚ի մեծագոյն բարեացն թէթեամաւուծի՛ն։

Ա՛յլ աջինքն կարգեալ են կանոնօք՝ զկանոնսն ՚ի միմեանս ոչ յարել. այլ յամ՛ կանոնի վճար գիրք ընթեռնուլ ՚ի լուսաւորուծիւն մտաց և ՚ի յորդորուծն գործոց բարեաց։ Ա՛յլ զամ՛ սաղմոսս ՚ի մի յարեմք, և ՚ի կատարածին փոքր ինչ թէ ընթեռնումք, և զայն ձանձրուծեամք. և կամ թէ բնաւ իսկ չընթեռնումք։

Ա՛յլ այս վասն էր։ Օ՛հ սպաւեցաւ սէր. զի բարձաւ երկիւղ. զի զարտուղն ընթացաք. զի զաշխարհ սիրեցաք և որ ինչ յաշխարհի է. զի զինի ոչնչն ընթացաք. զի ՚ի յուսոց կատեցաք և միայն առօրեիս ցանկացաք, զի մարմին դարձաք։ Ա՛յլ զմարմնոց իրս սիրեցաք, և զինի մարմնական իրաց ընթացաք. ՚ի հէշտուծիս, ՚ի զբարանս, ՚ի ծուլուծի՛ն, ՚ի նախանձ և յատելուծի՛ն և յայլ ամ՛ չարիս. ՚ի փառս, ՚ի պատիւս, յիշխանսիրուծիւն և յագահուծիւն։

Ա՛յն որոց աղաչեմ՛ զարթիցուք զարթիցուք և առաւել ևս թափեսցուք յարբեցուծի՛ն սառանայական մողորուծեանց։ ՚ի բաց ըն-

կէսցուք զառադաստ հրէական ծածկաւթի և լուսափայլ մտօք առ  
սաստուած նայեսցուք :

**Չ**ար է մեղացն տեսիլ . և ևս չարագոյն սոսցողին լինիցի . և  
այնչափ առաւել , մինչ զի բառնայ դերկիւնն այ ՚ի սրտէ սոսցողին ,  
և ոչ թողացուցանէ նայիլ ՚ի շնորհս արարչին . այլ զբաղեցուցանէ  
երկրաւորօքս միայն . և թմբեցուցանէ ՚ի խորս խաւարինս : **Օ** ոմն ՚ի  
ցնորս աշխարհականս , զայլ ոմն յորձաթախրութի . զմիւսն ՚ի փառա-  
մուրութի , զայլ ոմն ՚ի նախանձ և յատելութի : **Ա**յլ իբր իրաւամբք  
տայ զչարն ունել սիրով և յօժարութի թշնամին կէնաց մերոց :  
**Օ** ի մի ծանուցեալ որ զմոտի սիրոյն հեռուումն , զզջացի և կեց-  
ցէ ապաշխարութիք , այլ զբաղանօք իբր ՚ի խոր գիշերի թմբեալ ՚ի  
պատրանս չարին տգիտաբար զխաւարն իբր զլոյս սիրիցէ :

**Ա** սն որոյ և մեր ծանուցեալ զխորամանկութի նենգաւորին ,  
կանխեսցուք միշտ սիրով առ անձ ահիւ և գորութիք , դաստիարակես-  
ցուք զմիտս և զգայարանս մեր յորդորելով միշտ ՚ի գոհութի և յեր-  
կիւնն այ : **Բ** նդ նուազիլ զգտլն գիշերոյս՝ փարատեսցուք ՚ի մէնջ  
զգիշեր տիրատեսիլ մեղաց . և ընդ ծագիլ լուսոյ առաւօտու , զառ-  
ուաւօս խաղաղութիք քն սիրով ՚ի մեղ ընկալցուք : **Ա** շաչեսցուք միշտ  
զմարդասէրն անձ , զև դարձուցե՛ք մերտին զբերութի մեր ուն զաղխս  
՚ի հարաւոյ . և զհուր սիրոյ խրոյ բորբոքեսցէ ՚ի հօգիս մեր :

**Հ**այցեսցուք միշտ զողորմութիւն յամենափայլ և յոմէնառատ  
տեսառնէն , ոչ բանիւք և եթ խնդրել յարժամ , այլ արդեամբք և  
գործովք յաւէժ արժանի արասցուք միշտ զմեղ ողորմութի այ :  
\* Զմեղս քո ողորմութիք քաւեսցես . և զանօրէնութիւնս քո արօք  
տնանկաց : և թէ , \* Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ : և թէ՛  
\* Տնէք ողորմութի , և անձ ինչ ձեր սուրբ է . և որոց առնէք էղբարց  
փորրկանց , ինձ համարիմ :

**Ա** սն որոյ ոչ միացն առնել զողորմութի պարտ և արժան է .  
այլ և մեծաւ փառագանօք խնդրել յայ՝ զև բացցէ զմիտս մեր ա-  
ռատասպէս յորդորիլ սիրով յողորմածութի . զև ՚ի դէպ ժամանակի  
արժանի լիցուք առնուլ զփոխարէնն յաբբոյութեան երկնից :  
**Մ**անաւանդ և գոհասցուք միշտ զբարերար տեսառնէ մերմէ և զա-  
մէնառատ բարձրագոյն շնորհաց նորս : **Ա** յանխեսցուք յաղթս առ  
նա յարժամ սիրով և փափագանօք . օրհնեսցուք անլուելի ձայնիւ  
զմեծադոյն շնորհք մարդասիրին այ առ արարածս իւր :

**Ա** րասցուք խաղաղութի և մէք յանձինս մեր և առ անձ և առ  
մարդիկ . զև մեղքն մեր՝ թշնամի առնեն զմեղ այ : ապա յայտ է թէ  
բարի գործովք խաղաղութի հաստատեմք ընդ նմս : **Օ** ի նախ նա

արտը զնազաղուածիւն արեամբ խաչին իւրոյ , և այժմ՝ ՚ի մէնջ զնոյն գործովք իւրովք պահանջէ : Ալ այս ոպ լինի . եթէ զմիմեանս սիրեացուք . եթէ զմիմեանց բեռն բարձցուք . եթէ զկարիս ընկերին անձին համարեացուք . եթէ ընդ լացեալս լացցուք և ընդ խնդացեալս զամարձացուք :

Աթէ բարձցուք զթշնամուծի՛ն ՚ի միջոյ և որդիք նոյ լիցուք և նման քի՛ն խազաղարար լինելով : Աթէ սասացուք համարձակ , ես էղբայրն՝ և էղբայրն ես , թէ ՚ի վիշտ՝ և թէ յուրախուծի՛ն : Աթէ զձեռս յողորմութի՛ն կարկառեացուք . եթէ աղօթից ստէպ կացցուք սուրբ սրտիւ և խոնարհ հոգւով : Ոչ երբէք ձանձրանալով , կամ հեղձութի՛ք և ՚ի հարկէ զպաշտօն աղօթիցն կատարելով . այլ սիրով և յօժարական մտօք . զի մի՛ բարկացի տէր , և փոխանակ վարձուց դատապարտութիւն կրիցեմք :

Ալ զի բարկանոյ անձ հեղձացելոց ՚ի պաշտօն փառաբանութեան՝ ՚ի բանասրկուէն է յայտ : Օ՛ի յորժամ յամենեցունց նա միայն գտան վերջացեալ յօրհնաբանութիւն արարչին , բարկացանման անձ և ընկէց զնա ՚ի դատու կայանէն : Ալ որ սակս պոյծառութի՛ն արուսեակ անուանէր , վասն ամբարտաւանութի՛ն խաւարեալ նսեմացաւ . և փոխանակ հրեշտակի՛ն՝ սասանոյ անուն ժառանգեաց : Բ՛յլ և որդիքն ահարօնի յորժամ յամրացան ՚ի պաշտօն խորանին , և ՚ի տարածամ՝ ժամու հուր օտար մոծին ՚ի սեղանն , կենդանեոյն սյրեալք եղեն :

Ո՛ր ան որոյ զգուշանալ պարտ է . զի եթէ ՚ի բուն ոսան ոչ խնայեաց անձ . այլ դատեցաւ առժամայն , ՚ի պատուաստեալքս զխնդրխնայեացէ յորժամ զնոյն ախտ ախտանայցեմք : Ալ դու մի՛ այժմ զնեղելովն նոյ արհամարհէր կարծիս առնելով յոչ այնպէս պատժելն առ ժամայն՝ թէ միշտ ներէ անձ . զի այն անձ ՚ի խրատ մեղ գրեցաւ զի զգաստացուք : Բ՛յոյ թէ ոչ , կարգեաց օր՝ յորում դատէ ըզգազանիս որդւոց մարդկան :

Ո՛ր այց զաղօթան մի՛ վայրապար բանիւք և եթ ձառեացուք զօրէն արձագանգաց ըկ հնչումն , կամ հանդոյն կապկաց զսովորականն միշտ ՚ի բերան առեալ պաղաճելով . այլ հոգւով և մտօք ըստ հաճոյիցն նոյ պատրաստեացուք զմեզ ՚ի ժամ աղօթիցն : Օ՛ի որ մարմնով ՚ի տեղն աղօթից լիցի՛ն և մտօքն արտաքս յածի զօրէն անկապ անանոյ , ոչ թէ միայն վարձս ոչ առցէ յաղօթիցն , այլ և դատապարտի ևս վասն անզոյշ աղօթիցն :

Օ՛ի թէ առաջի մարմնաւոր թագաւորի որ զաչանս մատուցանելով , մեծ հոգաբարձութի՛ն յանձին բերիցէ և առաւել հանդի-

սասցի ըստ հաճոյից նորին խօսիլ և ոչ սխալիլ : Այս զորն ներել թողու-թէ որ ունիցի յորժամ առաջի ամենեցուն արարչին և տեսուն զաղօթս մատուցե լեզուաւ և եթ բարբառելով և զմիտան զինի խօսիցն ոչ ունելով . այլ անբանաբար աղօթելով իբր զանշունչս և զանբանս , որ ձայնի միայն իցէ շշնջիւն անզայաբար և ոչ այլ ինչ իմանի :

Աւ համ զարձեալ՝ որք տարտամու-թիւ և խեցբեկ բարբառով զբանսն արձակեն ՚ի դատապարտու-թիւ անձին և յոչ օգուտ լսողաց , պատերազմի և արանջման պատճառ լինելով : Աւ զինչ սասցից որք զդատարկաբանու-թիւ և զշատխօսու-թիւ անդ յաճախեն . և փոխանակ տրտատու-աթոր պաղատանաց և հաճոյական աղօթից , իբր ՚ի թատերս զօրէն կարաւայց կարկաչեն և ոչ զարհու-րին :

Օհ թէ առ այժմ հուր ոչ անկեալ յերկնից տոչորէ երազապէս , մի թէ ՚ի կատարածի ոչ հատուցի , ուր ոչ միայն գործոց է բնու-թիւն , այլ և բանից ևս և խորհրոց : Աւ վասն դատարկաբանու-թիւ և ծաղրածու-թեան պատիժ պատուհասի է ըստուգապէս յորժամ ՚ի դուեսս ինչ լինիցի :

Այս որք ՚ի տեղե աղօթից անխտիր յաճախեն յայտոսիլ՝ զինչ պատասխանի տայցեն նոյ : Օհ ուր քուել զմեղս պարտ էր և զանհաշատեցուցանել հաճոյական աղօթիւք , անդ շատխօսու-թիւ և ծաղրածու-թիւ բարկացուցանեն զանձ . և դատապարտեալ ելանեն յաղթարանէն փոխանակ վարձս առնող և հոգևոր շահս շահելոյ :

Ի՞նչ որում ասել և զհակառակու-թիւ և զնախանձով առ իրեարս վարին ՚ի ժամ աղօթիցն , և կեղծաւորու-թիւ և փառասիրու-թեամբ : Այս խեղու-թիւ լուել , կամ նախանձով զերգս եղանակել . յորս ոչ հաճի անձ յայնպիսի պողաբերու-թիւ աղօթից . այլ զայրասցի առաւել և դատապարտեսցէ :

Ա և զայն ևս զմտաւ ածել պարտ է յաւետ . զի ոմն ՚ի հարանցն ՚ի ժամ վախճանին ասի թէ ուրախ գնայր առ նոր : Աւ յորժամ հարցեալ եղև յեղբարցն վասն խնդու-թե թէ զինչ իցէ պատճառն . սասց , չիք իմ այլ ինչ բարի ստացեալ . բայց միայն զի ՚ի ժամ աղօթից զմիտս արտաբոյ աղօթարանին ոչ եմ թողացուցեալ ելանել . որով յոյժ օգտեցան եղբարքն և գովեցին զնա : Աւ ցայլ ոմն ծեր հարցին թէ արժանի է ՚ի ժամ աղօթիցն խօսիլ բան ինչ . և նա ասէ , թէ իցէ այնպիսի ինչ բան որ զտուն սաղոսին արժէ , խօսիցին . սպա թէ ոչ , լու-թեամբ աղօթեսցեն :

Աւ զմեծէն յովհաննու ոսկեբերանէ գրեալ է թէ , ՚ի ժամ աղօթիցն անհնար էր ումբը ընդ նմա խօսիլ : Աւ այս ամ մեղ ՚ի

խրատ և ՚ի վարդապետութի՛ն գրեցան յառաջնոցն, զի զգուշացուք զինի եկեալքս և յառաջադէմ լինուք յառաքինութի՛ն: Ս ան որոյ պապէմ՝ զամենեւեան, ՚ի ժամ՝ աղօթիցն առաւել ստանալ լուութի՛ն, և զվիտս և զգայտրանս երկիր-ղևն նոյ պարսպել, և բարբանչիւր ումեք՝ ընդ ինքեան և ընդ նոյ թօսելով, և սիրով և խոնարհութեամբ վարելով առ միմեանս: Եւ եթէ հնար ինչ իցէ, ընդ ամ ումեք խաղաղութեամբ գնալ ըստ առաքելոյ:

Վրիստոսի գովով անդամք ամենեքեան, ՚ի գլուխն մեր յօդեսցուք սիրով: Եւ զի հովիւն քաջ էին ՚ի խնդիր մոլորեալ բնութես մերոյ և հրաւիրեաց զմեզ յիւր յարբոյցութի՛ն և ՚ի փառսն, լուիցուք քաջ հովուին ձայնի. և պատրաստեցուք միշտ զմեզ լինիլ ՚ի հօտէ նորա՝ գործովք առաքինութե: Օ ի մի լուիցուք ՚ի կատարածի, թէ \* Ո՛չ գիտեմ զձեզ ՚ի բաց կացէք յինէն ամ մշակքդ անիրաւութե: Եւ մանաւանդ զի յաւէտ առ հովիւնս բարբառի նրն՝ ասելով առ պետրոս. \* Եթէ սիրես զնա՝ արածեա՛ զոչխարս իմ:

Եւ զի՞ թէ հովիւք զընտանիան արածէն և խնամարկէն և ոչ զվայրենիսն, ասպ յայտ է թէ որ անձամբ զանձն օտարացուցանէ ՚ի պատուիրանացն նոյ, և չար գործովք հեռանայ ՚ի սիրոյ նորա, արտաբոյ է խնամոց քաջ հովուին. և զո՞ր վիշտ վասնզի ոչ կրիցէ որ ՚ի խնամոց նր՝ հեռացի: Եւ զի նա հանապազ կոչէ և միշտ աղաչէ և յարժամ՝ ձայնէ, Եկոյք առ իս ամ վաստակեալք. և ոյք ունիք զձանր բեռինս մեղաց, և ես հանգուցից զձեզ ողորմութե՛ ՚ի ձեռն խոտովանութեան և տպաշխարութեան:

Վա և մարգարէիւն պատուիրէ, Վաս դու զմեղս քո զի արդարացիս և սիրելի իմ լինիցիս: Ո՛վ մարդ զինչ խնդրէ ՚ի քէն նր ամ քո ասաց այլ ոմն. բայց միայն ՚ի նմանէն երկնչիլ և յերեսաց մեծութե՛ նորա զարհուրիլ: Յորմէ քերովբէքն թեալբողն, և սերովբէքն յինքեանս սարսեալ սուղանին. և տէրութիւնքն և պետութիւնքն ահիւ և դողութե՛ պաշտեն: Ս որոյ թէ և ոչ ինչ բարի էր գտեալ մեր ՚ի նմանէ, պարտ էր սարսիլ և դողալ և ահիւ և երկիր-ղևն պաշտել միշտ զնա:

Վպա զո՞ր պատասխանատուութի՛ն ունիցիմք, յորժամ բազում էրախտեաց և մեծագոյն սիրոյ արժանացեալ ՚ի նմանէ և յանթիւ բարիս վայելեալ, խոտորնակ և զարտուղի գնամք ՚ի պատուիրանաց նորա: Օ ամ բարիս պարգևեաց մեզ ամ. և ամ մեծագոյն շնորհի արժանացոյց. և այնչափ առաւել, զոր ոչ այլ ումեք յարարածոյ երկնաւորաց կամ Երկրաւորաց այնպիսի արար: Ս անաւանդ զի և յեա պատուիրանադանցութե՛ ոչ արար անտես. այլ՝ ետ օրէնս և մարգարէս, կոչելով ՚ի գիտութիւն ճմարտութեան:

Եւարտ և գլուխ ամենայնի բարեբարութիւն Տայրն երկնաւոր  
 գլխաւ լարի՝ ՚ի փրկուածի մեղ կորուսեցոցս զորքին միածին առա-  
 քեաց : Եւ եկեալ թագաւորն անմահ խաչիւ և արեամբ վասն մե-  
 րոյ փրկուածեան զմահ ճաշակեաց մարմնով . և զմեռեալքս մեղօք՝ ՚ի  
 կենդանութիւն փոխարկեաց : Եւստեան սրովքէից մերայն կերպիւն ՚ի  
 վերայ խաչին տեսաւ . և անշօշափելի բնութիւն՝ ձեռօք մարդկան  
 շօշափեցաւ . գիտարտեցաւ՝ և զմեր վերս բժշկեաց իւրով անձային  
 փրկագործութեամբն : Եւ գերեզմանի եղաւ անապական մարմնովն  
 վասն անկերոցս ՚ի վէճս կորստեան . յարեաւ անձաբար , և զմեզ յա-  
 րոց յանկմանէ մեղաց , և ՚ի մշտնջենաւոր անմահութիւն Տրաւիրեաց :

Եւ զի հանապազմեռ մեղօք լինելով , մշտնջենաւոր դեղ կեն-  
 դանութիւն օրըստ օրէ զճաշակումն մարմնոյ և արեան իւրոյ պարգե-  
 եաց : Եւ դու հեղգաս և յապաղես հաղորդ լինելքի՝ հաղորդու-  
 թեամբ մարմնոյ իւրոյ , պատճառելով զպատճառս մեղոց . և դոյզն  
 ինչ հեշտութիւն մարմնոյ՝ հեղգաս հեռանալով ՚ի քնէ : Եւ գիտես  
 թէ որչափ յամեմբ ՚ի հեշտութիւն մարմնոյ՝ օտարանամբ յոյ , ոչ իմա-  
 նալով զկորուստ անձանց :

Եւրեգակնս այս զգալի ճառագայթիւքն իւրովք զաղտեղու-  
 մարբէ , և զեմհաստութիւն ցամաքեցուցանէ , և զօդս նսեմացեալս  
 լուսաւորէ : Եւ դու մարմնոյ և արեան տեսուն որ է ճառագայթիւք  
 իմանալն արեգակնան արդարութեան , ոչ հաւատաս թէ կարող է  
 զքեզ մարբել : Տուր զաղտն լուսնոյ և սրբէ . հուր զժանգ յերկա  
 թոյ արոհէ և վերստին նորոգէ : Եւ դու մարմնոյ և արեան որդւոյն  
 ոյ ոչ վստահանաս թէ կարող է զքեզ նորոգել ՚ի հնութիւն մեղաց :

Եւ մեղաւոր եմ ասէ , և երբ արդարացիս . առանց խոստո-  
 վանութիւն մեղք ոչ քաւի , և առանց սպաշխարութիւն՝ հաղորդութիւն  
 արժանի որ ոչ լինի : Եւ ասն այնորիկ ասեմ՝ մանաւանդ հաղորդել ,  
 զի զղջացիս . զի խոստովանեցիս , զի զմեղան ատեսցես . զի սպաշ-  
 խարեցես և քաւեսցես զցանցանս . զի մի զմարմնիդ առաւել սի-  
 րեսցես քան զքն . և զի մի յուսահատութիւն կորիցես : \* Ասա դու  
 զմեղս քո զի արդարացիս :

Եւ ոչ եթէ յամէ ՚ի հաշտութիւդ զի փրկիս , ծուլութեամբ և  
 հեղգութիւն մեղք ոչ քաւի . և յուսահատութեամբ թողութիւն ոչ  
 լինի . և որ անարժանութիւն հաղորդի՝ դատապարտութիւն է անձին և  
 ոչ փրկութիւն : Եւ յորժամ կարծէ որ զինքն արժանի գու հաղորդու-  
 թեան , յայնժամ առաւել ոչ է արժանի : Եւ որչափ կարողութիւն  
 է , ջանալ պարտ է և մարբել զանձն ՚ի մեղաց , և զղջմամբ և յուսով  
 հաղորդի . զի մի գիւրդապի սասանայի որ լիցի :

**Օ** ի որչափ յամէ որ ՚ի հաղորդութիւն, ուրախանան դէք • զի դիւրորտալի է նոցա հեռադեպն ՚ի փրկական խորհրդոյն : Եւ յորժամ հաղորդեսցի որ, զարհուրին և խոյս տան • և հեռադոյն ևս փախիցեն • զի իւրեանց տեղի անդր ոչ գտանեն : **Օ** ի որ քի լինի տաճար, մեհեան դիւաց անդր ոչ յաճողի :

**Ա** ան որոյ արտէսմ զամենեսեան, և փոխան հայցեմ, յորդորիլ փափագանօք յերկիւղն և ՚ի սէրն այ • զի մի բնաւ ումէք լինցի կամ անարժանութիւն հաղորդիլ և բարկացուցանել զած, կամ յուսահատութիւն որոշիլ և ՚ի կորուստ մատնիլ, այլ յերկուց ևս անշափուութեանց խոյս տալ : **Կ** լըբութիւն խիզախելոյն, և ՚ի հեղձութիւն և յուսահատութեամբ յամելոյն և ՚ի բայ որոշելոյն :

**Լ** յլ այս ամ յանուսուսմութիւն լինի և յանառաջնորդութիւն • ուր հովիւք զՏօախց ոչ հողան • վասն որոյ անտերունչք հօան քի և մոլորական շրջին, և թափուր և ունայն ՚ի հոգևոր խահարարութեց : **Ե**ւ ազիտութիւն և անայութի յաշխարհի տարածի • և ըստ ախորժակաց և հակառակ վարուց ամենայն որ ընթացի :

**Բ** սաց տէրն պետրոսի՛ և նովաւ ամ առաջնորդաց որոյ ասացար • արածեա՛ զոչխարս իմ, վասն որոյ զարիւն իմ հեղի և փրկեցի • և ձեզ յանձին արարի հովուել բարւոր զի մի որ կորիցէ : **Ե**ւ մարգարեիւն ասէ, \* Ո՛րդի մարդոյ դէ՛տ կացուցի զքեզ ՚ի վերայ ժողովրդեան իմոյ • եթէ տեսանիցես զսուրն մերձեալ և ոչ ազդ առնիցես անօրինին, անօրէնն յանօրէնութիւն իւրում մեռցի, և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից :

**Ո**ւարճէք հովիւք լուարճէք և երկերճէք և առաւել զարհուրեցարուք • և ողբացէք ահիւ և դողութիւն : **Օ** ի ոչ թէ վասն այն կոչեցայք հովիւք զի զանձինս արածիցէք, և իշակիսօք և երկէլէ երկվարօք շրջելիք յաշխարհի • և ՚ի փառս մարմնականս յօրանայք • և զգեստուք խենէշանայք իբրև զանիմաստս : **Լ** յլ զի զժողովուրդ տեսան հովուիցէք • զի զբանաւոր խաշինս արածիցէք • զի զմասաւոր դառինս ասածիցէք • զի զայծիսն յօգիս փոխարկիցէք • զի միշտ բանիւ վարդապետիցէք և գործով զնոյն յաւէտ առնիցէք :

**Յ** ամ բարեաց յանձնէ տալ օրինակ հօսին մարբութեան, և ՚ի նախանձ բարի յորդորել զամենեսեան : **Օ** ի որում շատ առաւ դիտութիւն իմաստ, շատ խնդրեցի ՚ի նմանէ առաքինութիւն տեսակ : **Ե**ւ որում բազում յաւանդեցաւ վերակացութիւն բանաւոր հօսից, և առաւել ևս պահանջեցի ՚ի նմանէ ուղղութիւն վարուց և հոգաբարձութիւն ժողովրդոց :

**Ե**ւ դուք թողէալ զայս բարձրագոյն շնորհ, ունկէտ գործոց



հետեւիք և մարմնական հոգոց պարապիք • և անբան կենդանեաց տա-  
ծօղք լինիք , և զդաւի երկիր կահղէք : Եւ զո՞ր ներու մն թողու թէ  
ուշիցիք • կամ որով մատաստանեաց արժանի զանձինս համարիք ,  
միշտ զփառաց և զհէշտութեանց հոգալով : Երկուս դահեկանս ա-  
ւանդեաց ձեզ տերն մեր քն՝ զհին և զնոր կատարանս , զի նորք  
զբանաւոր ոչխարսն դարմանէք զանկեալն ՚ի ձեռս աւազակաց և  
էղէալ կիսամահ :

Եւ ձեր թողեալ զոյս անային առջարկութիս , զինի ոչնչի  
ընթանայք , զկաթն ուտելով և զասրն զգէնլով • և զբեկեալն ոչ հա-  
մարիք արժանի բժշկութե , այլ կեղեքէք կրկին ևս կսկծեցուցա-  
նելով : Եւ որոյ օրինակ բարեաց լինիլ պարտ էր , գայթակղութե  
լինելով պատճառ , զանձինս և զընդ ձեռամբ անկեալսն կորուսա-  
նէք • և որ զանձին կորուստ անփոյթ սունիցէ , վասն այլոց զնա՞րդ  
հոգք փրկութեան վարիցէ :

Սի հովիւք և հոգաբարձուք քի հօտին • ոչ լուսայք ՚ի սողո-  
մոնէ զի սահ , \* հորք զօրաւոր դատաստան ընկալցին • այլ լսառ-  
նիճաղանձն ներելի ողորմութե է սահ : Օ ի առաջնորդք և վերա-  
կացուք ոչ միայն զանձանց , այլ և զհնազանդելոցն հատուցեն պա-  
տիժա պատուհասից ըստ սխալանաց : Վա՛ւ • որ մեծն է քան զամ՝  
սխալանս , և առաւել ունիցի զդատապարտութի յերկուց կողմանց :

Օ ի ձեռս վարվալակի դնէք ՚ի վերոյ ազիտաց • և զորոց ոչ  
գիտէք զկեանս վարուց , հախառակ առաքելոց զինելով , և կցորդ  
լինիք մեղաց օտարաց : Թողում ստել զսիմնեանն ախտ ախտանա-  
լոցն • զի թէ տեղեակ գորով վարուց և թէ ոչ , երկորումք տան-  
ջեր • և երկորին կողմամբք դատապարտիք : Խոտեցին ընտրեալքն  
սահ արծաթով , և որք վասն ագահութե կամ փառաց՝ գործ վճա-  
րիցեն • և դատեցին առօղքն և առօղքն :

Թո՛ւ առեր մամոնայ և ձեռնադրեցեր զոր՝ զյուզայեան և ըզ  
սիմնեանն ախտացայք զախտ , ՚ի դատապարտութիւն անձանց , զի  
զպարգեանն այ ընդ վաճառուք փակեալ , զարժանիսն զրկելով ՚ի շնոր-  
հացն , և զոչ արժանիսն պատուելով : Եւ դարձեալ թէ ոչ առեր  
ինչ և զանարժան որ ձեռնադրեցեր , կրկին պատիժք պատուհասի  
եղիցին • զի գոնէ ոչ վասն ագահութե պատրեցար , այլ անմտութե  
շուտափոյթ եղեր , յոչ արժանիսն զշնորհսն տալով :

Ս ու որոյ զգուշացարուք հովիւք • և զգաստացարուք • և լերուք  
զուարթուք ՚ի գործ , պաշտպանելով միշտ անսահեք անարծաթա-  
սէրք : Օ ի ոչ օգնեացեն ինչք ՚ի մեծի ստեղծին սահ իմաստունն •  
այլ միայն արդարակշիւ լինիլ զփրկանս շնորհէ ՚ի մահուն յախտենից :

Օտրթիբ զարթիբ և առաւել ևս զգաստացիբ . զի մի լիցեք ՚ի անէ զսոսկալն բանն զայն եթէ , \* ՆՏաւասիկ ես ՚ի վր ձեր հովուացի . և դատեցոյց զձեզ դատաստանաւ : և թէ \* Փայտ որթուն այլ իմիբ ոչ է պիտանացու . բայց զի ՚ի հուր այրեացի : և թէ \* Նզի յորժամ անհասի , արտաքս ընկեսցի և կոխեսցի յամենեցունց : և թէ \* Ել անօրէնութիւն ՚ի ծերոց , թիւրութի ՚ի քահանայից : և թէ \* Սուղնորդք մեաբանեցին ՚ի չարիս հակառակ տեառն և օժեւոյ նորս . և բարկացի տէր վասն այսորիկ . և կորնչեք յուսոյն յաւիտենից : Օի թէ ՚ի կեանս յայս միայն յայս ումեք լնցի , ողորմելի և անոյս կորնչի որո՞ ստէ սուարեալն . և լսէ ՚ի տեառնէ թէ , \* Ընկալայք զբարիս անցաւոր կենօքս ՚ի կամաց ձերոց լուծմն : Աբ արդարև վայի են արժանի ըստ տեառն բանի :

Լլ լայ է ինձ և եղուկ եմեա . զի անձամբ զանձն դատապարեցի , զայս խրատելով և զիս ոչ ևս : Օյլս ձաղերով ես ՚ի նոյն յաւէտ գտանիմ , զայլոց շիղական տեսի , և զմեծագոյն գերանն իմ ոչ նշմարեցի . զայս դատեցի , և զանձն իմ ոչ երբէք ՚ի բարիս կրթեցի :

Բայց թէպէտ և այս այսպէս և առաւել եղիւ լին եմբ . քան զամ որ , այլ որչափ և է կարողութի , զարծաթ բանին արկանել պարտ է ՚ի տրապիղիան . զի մի իբր զբանքարաթարոյց դատեցիմք . զի ժամանակս մերձեալ է , և սկիզբն լինելոց է դատաստանի ՚ի տանէ տեառն : Յայտ է թէ ՚ի սրբութեանցն սկիզբն լինիցի , այսինքն՝ յառաջնորդաց , ՚ի վերակացուաց , ՚ի գիտնոց և յինաստնոց , ՚ի թագաւորաց , ՚ի դատաւորաց և ՚ի մեծամեծաց բանիւք և գործովք :

Ասան որոյ աղաչեմ զամենեսեան և մոխան պաղատիմ , դարձցուք առ տէր սրտի մաօք , սիրով հեղութի և խոնարհութեան . զի դարձցի առ մեզ տէր գթութի և ողորմութի : Վանխեսցուք առ նա հանապաղ երկարաձիգ աղօթիւք . և աղաչեսցուք միշտ զերեսս նորա ՚ի դէպ ժամանակի : Ասան զի մեծ են մաղթանք հոգևորք առ ան , և կանխութիբ յարաժամ աղօթից . և մեծի շնորհի արժանացուցանեն զմարդ յորժամ ՚ի սք սրտէ լինիցին և խոնարհ ոգւով :

Եւ զի տէրունական է հրաման յարաժամ կանխութեան աղօթից , միշտ և անդադար կարդալ առ նա : Օի թէպէտ և այլոց առաքինութեց ունիմք չափ և սահման , այսինքն արհոյց պնդութեան և ճնշելոյ զմարմնն ըստ կարինս՝ և զողորմութի տառնել ըստ գոյնն և ըստ ժամանակին : Իսկ զպտուղ աղօթից յամ ժամու պահանջիմք յաստուծոյ , և յամ հասակի և ՚ի դիպուածի :

Տղայոց բարեոք սննդակից է աղօթք , և պահպան յեւր և ՚ի մուսու . երիտասարդաց գործակից . ծերոց յոյս հաստատութեան . բաճանայից պսակ պարծանաց . Ժողովրդոց պարիսպ ամրութեան . Օհնուորաց վահան փրկութեան . թագաւորաց ցնծութի . իշխանաց ուղղութի . դատաւորաց զգաստութի : Նգնուորաց մարտակից . կուսանաց կառավարութիւն . սգաւորաց սփոփանք . բերկրելոց հրձուանք . նեղելոց անդորրութիւն . խաղաղացելոց զգուշութիւն : Մրանց գործակից . կանանց անակից . ճանապարհորդաց ուղեկից . նաւորդաց յառաջարկութի . առողջաց խնդութի . հիւանդաց վսիթարութի . մեղուցելոց քաւութի . արդարոց խնդութի . ննջեցելոց թռչակ կենաց և յոյս բարեաց :

Եւ զինչ ևս ներբողեցից զարդիւնաւորութիւն աղօթից . զն հրեշտակաց դասակից առնէ . սրբոց քաղաքակից . սերովբէից կաճառակից : Տաճար դործէ զմարդ նոյ և օթեվանս երրորդութե կազմէ : \* Ուր երկու կամ երեք ժողովին յանուն իմ ասաց տէրն , անդ եմ ես ՚ի մէջ նոցա : Եւ դարձեալ , \* Որ զքանն իմ պահէ , ես և հայր սու նա եկեացուք հանդերձ հոգւովն սրբով . և օթեվանս առ նոցն արասցուք :

Մզէ հարց զարդարն զառաջինս . և աղօթիւք գտանես հաւնոյացեալ նոյ : Եթէ զբէլ տես զառաջին արդարն , աղօթիւք նախ արդարացեալ և ապա զպատարազն ընդունելի մատուցանէր նոյ : Աէթ , ենովս , ենօք , նոյ . աբրահամ , սահակ , յակոբ , մելքիսեդեկ , մովսէս , և ահարօն . ամենեքեան սորա ընդ այլ բարի գործոցն . և աղօթիւքն յաւետ հաճոյ գտան աստուծոյ :

Վաւիթ ոչ միայն ՚ի մեղացն ուրիսոյ աղատէր , այլ և զմարդարեական շնորհն աղօթիւք յինքեան պահէր : \* Վաստակեցոյ ասէ ՚ի հեծութեան ինում , լուացի զամ գիշեր զմահիւն իմ և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի : Վեարոս գուռս առաքելոցն՝ երից ուրացութեանցն դեղ և սպեղանի արարպէս զաղօթան գտանէր : Ելաց ասէ դառնապէս , և այնչափ ասատիկ մինչ զի արիւն ասի կաթեալ ընդ արտասուացն :

Սարսաւորն աղօթիւքն արդարանայր և գեր ՚ի վերոյ գտանէր փարիսեցոյն : Աինն սրունիկ յորովից մեղաց թողութիւն աղօթիւք ընդունէր և կեայր հոգւով . հաւատք քո կեցուցին զքեզ ասաց տէրն՝ ՚ի ձեռն աղօթից : Մաղակն միով բանիւ զմեղանսն յանձն առնէր և ՚ի քրիստոսէ յիշէլ հայցէր , և դարխաթին ժառանգ լինէր : Վաւ յուդաս եղիւլին թէ՛ ձեռն ձմարաիւ յաղթս էր սպաւինեալ , թերևս ոչ էր այնպէս ՚ի կորուստ մասնալ :

Աւարբեալքն աղօթիւք հանգիսացան . մարգարէքն հրաշարիք  
ցուցան . մարտիրոսքն պատկաց արժանացան . հայրապետքն ահարկուք  
ցուցան : Պօղոս և շիղայ զհիմունս բանտին շարժէին աղօթիւք :  
Պետրոս զանօթն կտաւ լի՛ հրաշիւք իջեալ տեսանէր : Աղեա հուր  
յերկնից իջուցանէր . և զմեռեալն յարուցանէր : Աղեսոս հանգոյն  
վարդապետին գործէր , և առաւել ևս գտանէր . զճուրսն երկրովն  
բժշկէր , զիշխանն ասորի մարքէր , զգէտղի գող տանջէր . փայտիւ  
գերկաթ ՚ի ջրոյ վեր ածէր և յօրինակ խաչին ներգործէր . և զգուն-  
դըն ասորուոց կուրուծէ՛ր կապէր հանգոյն բելիարայ և դիւաց նր :

Ստեփաննոս նախասարկաւագ և առաջին վկայ՝ ոչ միայն նշանս  
և արուեստս գործէր աղօթիւք , այլ և զերկինս փեռեկէր . և զօրդի  
ընդ աջմէ հօր տեսանէր . և զոգի իւր յաւէտ ՚ի նոյն յանձնէր :  
Աղօթիւք և յն հանդիսանայր անկարօան աղօթից և ընդուներչն  
մաղթանաց համայնից . զն զմեզ յորդորեցէ ՚ի սէր սրբուծեալ աղ-  
թից անձանձիր կալ միշտ և յարժամս :

Աղօթք՝ պարիսպ ամրութե . սիւն հաստատութե . հիմն հա-  
ւատոյ . խարխիս յուսոյ . սանդուղք առ անձ ելից : Աղօթք՝ պատկ  
պարծանաց . պատճառք փրկութե . առ իժ բարեաց . մարդիչ համբե-  
քութեան . ծանօթութիւն անձպաշտութե . հոգւոյն սրբոյ հրաւի-  
քոյ . և վկայէ կուռնէիոս աղօթիւք զայս գտեալ և պայծառացեալ :  
Աղօթք՝ սանդորամետականաց դիւաց հալածիչ . բեկումն բելիա-  
րայ . կործանիչ բանսարկուին , և անձ արկածից նորա լուծիչ , և ա-  
մօթ կորստեան : Ալ բանդի գիտէ սատանայ եթէ շնորհ տանու  
մարդ յայ ՚ի ժամ աղօթիցն , վն այնորիկ ջանայ ցնորել զմիտս մարդ-  
կան ՚ի ժամ աղօթիցն զն զրկեսցէ ՚ի շնորհացն զոր առնելոց է մարդ  
՚ի մարդուր մտօք աղօթելն :

Ստան որոյ և մէք զայս գիտելով , հանդիսացուք հանապազ  
հոխառակ նմին անզբող կալ յաղօթս : Ալ մարքեսցուք զխրատս  
մէր յամ արկածից շարին ՚ի ժամուն յայնմիկ . և առանց բարկութե  
և երկմտութե միշտ աղօթեսցուք : Ալ մանաւանդ ՚ի վերայ թշնա-  
մետոց աղօթեսցուք սրտի մտօք . զն ընդուներել լիցի և մէրն աղաչանք  
առ անձ : Ալ և ՚ի ժամ աղօթիցն զհուր սիրոյն քի ստացուք տի-  
րադէս յանձինս մեր , կանխելով միշտ առ նա պաղատանօք , թեթև  
համարելով զառօրեայ աշխատութիւնս առ մշտնջենաւոր բար-  
եացն վայելս :

Սարթուսցուք զմիտս մեր ՚ի հաճոյս կամացն այ յամ ժամ . և  
առաքինսսէր վարուք դասախարակեսցուք զանձինս մեր : Սի յա-  
ռօրեայս և եթ նայեսցուք , այլ յաւիտենականին միշտ ցանկաս-

ցուք . և անտի կենացն յուռէտ պողոթբերեացուք : Ս՝ աճառարան է կենցաղս այս . և զոր ինչ վաճառէ որ աստ երկամբք անձին զգործա վաստակոյ , զնոյն գասնէ ՚ի հանդերձեալսն պատրաստական անձին եթէ բարի և եթէ չար : Այկաք յաշխարհ և գնտոնք յաշխարհէս . և գործքն զինի մեր լինին , և ՚ի մոռացոնս աստի կենացս լիցուք . և հոգք հանդերձելոյն միայն նորոգի :

Աբրամնեաց որ ՚ի մարմին , և հէշտացաւ ՚ի վայել մարմնականս . փառաց հէտեցաւ , ընչից և ստացուածոց ծառայեաց . հէղգութիւն և դատարկութիւն զկեանս անցոյց , որովայնիւ շուայաեալ , և մտօք միշտ զըօսեալ : Աննց ամ , սպականացու և յոչինչ դարձաւ . և պատիժք պատուհասին կան և մնան յաւիտեան : Հուր բորբոքեալ , և որդն եռացեալ , և տարտարոս և խաւար յոյժ սարսափելի : Իսկ եթէ որ զրկեաց կամ գողացաւ , խաբեաց կամ յափշտակեաց , բազմապատիկ տոկոսեօք հատուցէ . մինչ զի սպառեալ գործոցն ՚ի հաւատոյն ևս լիբիպեսցի :

Օ ինչ ասեմ զմխացողաց , զնխանձոտաց և զատեցողաց , զգրգռողաց և զլրէժառուսացն . որք անբերելի աղէտից հանդիպին : Օ Խարդ և իւրբարանչիւր գործքն բուսանին ՚ի համաշխարհական յարուժեան եթէ բարի և եթէ չար : Աւ գործուսեայքն ըստ արժանեացն ընկալցին , ոմն պատիժ և ոմն պակ :

Աւ յայնժամ մեծ վիշտ անդ տեսանի և սոսկալի վտանգ դիպեսցի : Օ ի հարբ և որդիք ՚ի միմեանց բաժանին . և հարադատ եղբ բարբ որոշին . և մտերիմք յոյժ հեռասցին , և համասնուողքն ՚ի բաց բեցեսցին : Օ ի ոչ փրկէ եղբայր զեղբայր , և ոչ հայր զորդի իւր զոր ծնաւ . և ոչ կարէ զթալ որ յընտանի անձին իւրոյ . զի անաչառ է դատաւորն և իրաւացի է դատաստանն :

Ինչ ստատկազին ողբ բրեւեսցի , և աղաղակ անբաւ տիրեսցէ . և ողորմագին ձայնք յոյժ լսցին ՚ի դատասպարտեացն անձանց : Օ ի ոմն ՚ի հուր գեհէնին մատնեսցի , ոմն ՚ի տարտարոսն դատասպարտեսցի . այլ ոմն որդանց հրեղինաց կեր լինիցի , մեւսն հրեղէն սրով միշտ տանջեսցի : Աւ ամենեցուն ըստ իւրբարանչիւր չափու հատուցի ըստ արժանոյն . զի ահագին է ատեանն այն . ահէղ և զարհուրելի է հրասպարակն . և անպատկառ քննութիւն իրաւանցն :

Ի թագաւորաց ակն ոչ առնու . ՚ի բահանայից ոչ հարկի . մեծամեծաց պատիւ ոչ դնէ . յաղիս ծերոց ոչ գթայ : Արք ոչ արարին ողորմութիւն , և ոչ գասնեն անդ ողորմութիւն : Արք զարծաթն առաւել սիրեցին քան զքս , և զձիս և զփորիս և զշուռնս ևս զարդարեցին , և զաղքատն անտես արարին , անդ դատեսցին ՚ի քսէ և ՚ի հուր գեհէնին մաշեսցին . բայց միայն արդարքն որսակին յարբայութեն նոյ :

Որոց լինի ամենեցուն մեզ հասանիլ շնորհօքն . բի, որ է օրհնեալ ընդ հօր և հոգւոյն սրբոյ . ոյժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :



Կորգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտեան ժամուն , որ կատարի 'ի դէմս որդւոյն նոյ : Եւ ասի Լցաք առաւօտու , և այլն որ 'ի ցուցակին . և ասպս Երգ երկց մանկանցն :

Մովսէսի . քերթողահօր՝ 'ի յերգս Երկց մանկանցն :

**Ե**րեք մանկունքն օրինակ էին մարդկային բնութեանս , և հնոց հրոյն՝ հանդերձեալ հրոյն : Իսկ զերգս երկց մանկանցն հանապազ յառաւօտուն երգել յեկեղեցւոջ . զի որպէս նորա գերեալք 'ի բաբելոնական բռնաւորէն 'ի հնոցն անկանէին , նոյնպէս և մեք 'ի հնոցի կենցաղոյս գերեալք յաներևոյթ բռնաւորէն , և ըմբռնեալք պէս պէս ախտիւք , և լուցիկք եղեալ յաւիտենական հրոյն , աստանօր գողցես իմն հրեշտակական աղղմամբ 'ի Թառամեցուցանօղ քնոյն զարթուցեալք , աւուր աւուր ընդ առաւօտն զերգըս երկց մանկանցն 'ի բերան առեալ ասեմք : Օրհնեալ էս տէր անձհարցն մերոց . օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան :

Եւ որպէս նորա 'ի փրկութի՛ն անձանց իւրեանց սու իւրեանց փրկիչն մատուցեալ , և որպէս առ երկինս 'ի հնոցէն 'ի վեր գոչէին , յորդորելով զամ արարածս 'ի փառաբանութի՛ն նոյ : Բայտ նմին օրինակի և մեք իբրև անդամք 'ի մարմնոյ նորա և յոսկերաց նր՝ , 'ի վրմեր և 'ի մեզ բերելով զգլուխն , վերագոչեալ ազաղակեմք առ ընդհանուր տեսակս արարածոց թէ , Օրհնեցե՛ք ամ գործք ան զտէր : Իբր զի աղատեալք 'ի մեղացն՝ և ազատութեն մերոյ հաղորդ լեալք ամ բնութի՛ք արարածոց , հարկաւորին ամ իրօք և նորա ընդ մեզ օրհնել և փառաւորել զամ . զայն՝ որ աղատէն զամենեսան :

Իսցց պարտ է նախ ապաշխարութի՛ք 'ի մեղացն արդարանալ , և ասպս հրոման տալ արարածոց դալ 'ի փառաբանութիւնն նոյ :

Վախ սսեւ թէ, Մեղաք՝ անօրինեցաք յանցեաք: Աւ սպա համար-  
 ձակիլ և սսեւ թէ, Օրհնեցէք ամ գործք տեսուն զոէք: Վախկին  
 թէ, \* Ողորմեան ինձ ամ ըստ մեծի ողորմութե քում. ըստ բազում  
 գթութե քում, քաւեան զանօրէնութիս իմ: \* Առաւել լուս զիս  
 յանօրէնութե իմնէ. և ՚ի մեղաց իմոց սուրբ արան զիս: Աւ սպա  
 համարձակիլ և սսեւ, Օրհնեցէք զոէք յերկնից օրհնեցէք զնա ՚ի  
 բարձանց: Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամ  
 զօրութիւնք նորա:

Ստեփաննոսի Սլենեաց եպիսկոպոսի:

Երբ՝ տօնէ եկեղեցի նոց հանապազ զփրկութի նախաստեղ-  
 ծիցն զոր արար որդին միածին: Վախ զարուին ՚ի ձեռն  
 քաղղէացւոցն կործանման և երկոց մանկանցն փառակցութե որդ-  
 ւոցն նոց: Բայց նախ սսելոյ պատճառն զօրհնութի երկոց մանկանցն  
 քան զողորմեացն սաղմոս. զի նախ զարուին յառաջ բերէ զփրկա-  
 նաւորութիւն, վասն զի այր է գլուխ կնոջ. յետոյ և զեղականին  
 զազատութիւն. ոչ ևս անօրէնութեամբ յղանալ և տրտմութեամբ  
 ծնանիլ որդիս յանէծս:

Սասն զի լուծաւ դատապարտուի, սրբուհւոց նծածնին որ-  
 դէծնութիւն. և քանզի բարձաւ ամ պատճառք մահու որ յանիծից  
 մտին, մարմնանալով որդւոցն նոց տեսուն մերոյ յի քի և մահուամբ  
 և յարութե նորին, Բնդ նմին եղաք յարուցեալք ՚ի թաղմանէ մե-  
 ղաց՝ որք ընդ նմն մեռաք մկրտութե. նա և համարձակիմ սսել թէ  
 ընդ աջմէ հօր նստաք պսակեալք: Օայս տօնէ եկեղեցի սուրբ. և  
 յաղագս այսպիսի երախտեաց որ առ մարդն եղև յնոց, անդադար  
 մատուցանէ զյառաջագոյն ասացեալ երգս երկոց մանկանցն և ըզ  
 դաւթեան սաղմոսս:

Բաղնին յաղագս աղամայ որ քրիստոսիւն եղև առ ՚ի բժշ-  
 կութի ազգի մարդկան. իսկ միւս ողորմեայն՝ վասն սրբութեւն և այլի  
 զօրդէգրութի ՚ի մեզ ընդունիլ: Այսու երկու խորհրդածութեք  
 ՚ի քո միացեալ մարդն նոց, անխոնարհելի կեայ ՚ի սրբութե: Աւ նծ-  
 քաւեայն, զխոնարհութե պաղատանսն հանապազօր երբեակ միու-  
 թեանն մատուցանել արժան է ամ քրիստոնէից զինի հարցին ՚ի  
 դէմս աղամայ, և ողորմեայն ՚ի դէմս և այլի:

Եւ ապա Քարող զննի երկց մանկանցն՝ և մաղթանացն :

**Ե**կեալքս ամենեքեան միաբանութիւնս սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցի , աղաչեսցուք զվնածին որդին աստուծոյ զտէրն մեր և զփրկիչն յս քս :

Մեծին Խոսրովու :

**Ս**իմ ոչ զայն իսկ դնէ հիմն զաղաչեսցուքն , այլ զգալն միաբան յեկեղեցին : Թուի ինձ յորդորել այսորեւք զլսօրան , զի առանց վհատելոյ՝ ՚ի խնդրելոյն զտուրան յուսացին : **Օ** ի եթէ երկու որ միաբանք զինչ և խնդրեսցեն յոյ՝ ասցե նոցա . ո՞րչափ բազմաց միաբանութե ունիդիր և տուող հայցուածոցն լինի : Կարծեմ՝ և զմիաբանութիւնս յայս սակս եզ , զի առաւելութի բազմաց միաբանելոյն՝ քան զերկուցն ցուցցէ . իսկ զեկեղեցին յիշելով , զկարեւորութեան պատճառսն ցուցցէ :

**Օ** ի եթէ ՚ի հնումն սողմին ՚ի տաճարին նոյ զեւրաբանչիւրոցն հայցուածսն ընու և առնուլ յուսայր : Եւ դաւիթ ինքն գլխովին ՚ի տաճարին զլսել խնդրուածոցն իւրոց հայցէ . \* Լիւր ասէ տէր ձայնի խնդրուածոց իմոց յաղաչել ինձ առ քեզ , ՚ի համբառնալ ձեռաց իմոց ՚ի տաճար սուրբ քո : Եւ եսայի ասէ , \* Տես ՚ի տաճարէ սրբոց քումնէ և ՚ի փառաց քոց : Եւ այն , զի անդ սեղանն զանասնոցն մատուցանէր պատարագ . ապա ո՞րչափ գերակայ է օգտութի որ ՚ի նորումն՝ ՚ի տան նոյ զաղօթան մատուցանել առաջն նր . յորոյ վերայ արիւն անարատ գաւինն դնի պատարագ :

**Ս** ասն այսորիկ և սուրբ կոչէ . զի սրբոյն նոյ է բնակարան , և հրեշտակաց սրբոց բնակեցող , և արդարոց կատարելոց աեղն իջալանի յերկնուստ յերկիր երթեկեկութե : Բանզի ՚ի սմն ամ ՚ի բաց բարձեալ լինի կրճիմն , և երկիրս ընդունի զերկնայինն , և երկնայինքն միանան ընդ երկրայինքս : Եւ ննջեցեալ սուրբք՝ ընդ հաւատացեալ կենդանիս . զի եթէ հաւատամք եթէ տուն նոյ և բնակարան է եկեղեցի որպէս ինքն ասաց :

**Ե**ւ զինչ է կաթողիկէն . տիեզերական : **Օ** ի ամ եկեղեցիք ուղղափառաց որ ընդ տիեզերս են՝ մի են . մի քս յիմ՝ եկեղեցիս է որ ըստ առաքելոյն հաւատոյ շինի , զոր և առաքելական կոչմբ : **Ո**ր զի թէ և բաժանին՝ ըստ տեղեաց , այլ ոչ եթէ ըստ ժողովոյոց : **Օ** ի ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս երկրի ուր և հասանիցէ ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց՝ իւր եկեղեցի է , և ոչ որոշէ



ղնա, ո՛չ աշխարհն և ո՛չ լեզուոյն օտարութիւն. այլ ընդունի որպէս մայր ՚ի գիրկս սաստիկ սիրով: Եւ այսպէս ամ ուրեք տիեզերական կոչի վասն տիեզերաց հաւատացելոց զգրուես բանալոյ և զգիրիս սիրելոյ: Եւ արդ՝ տես քանիօն զբարեացն ունի լինիլ առիթ:

Երկնայնոցն՝ դարձեալ ստեմ սա է տեղի՝ հանդերձ երկնաւոր թագաւորաւն. ազգակցաց մերոց սրբոց՝ ՚ի սմա ընդ մեզ է խառնուամ. ամ հաւատացելոց որ յամ երկրի՛ սա է մայր: Սեղացն մերոց՝ և մերոց ննջեցելոցն աստուստ է քաւութիւն. նուիրաց և մերոց պատարագաց առաջի նոյ աստ լինի դրութի: ՚ի սմա զորդիանալն նոյ վերստին ծննդեամբն ստանամք. ՚ի սմա կերակրովք զանմահարար և զանապահանարար կերակուրն և որով ընդ քի միանամք:

Սա է սանդուղք յերկրէ յերկինս վերելութե. և զխաչելութիւն քի և զգերեզմանն բաղձամք տեսանել, աստ զփառագն ընումք: Վանզի ուր պատարագի քն, անդ է խաչելութիւն. և ուր մարմինն սուրբ առանց մարդկային նորա ոգւոյն ցուցանի, այն է գերեզման նորին. և ուր մեռելութիւնն մեր կենդանանայ, անդ հաւատամք կենդանութե որդւոյն նոյ: Օ ի թէ և մահու նշանակ է հացն և բաժակն, այլ կենդանի և կենդանարար է. զի ինքն ասաց, \* Ա՛յս է հացն կենդանի որ յերկնից իջեալ է:

Ի այց վայ ինձ վայ աժմու ժամանակիս. որ ըստ մարգարէին կանխասացութե օտարացար ՚ի մօրէս, և յայսչափ պարզեացս զմեզ օտարացուցար: Օ ի թէ և այլ ինչ հունէար յանցումն, այս միայն բաւական էր մեղաւորս տանել զմեզ. քանզի և աստանօր մարգարէս՝ ո՛չ վասն այլ իրիք, այլ վն ՚ի հոգևոր մօրէս օտարանալոյ կոչեաց մեղաւորս: \* Օտար եղեն ասէ մեղաւորք ՚ի մօրէ. խաբեցան յարգանդէ. այսինքն՝ յաւաղանէն: Վանզի վրիպին ՚ի շնորհաց աւաղանին, օտարացեալքն յեկեղեցւոյ. և տանցեալ լինին իբրև ըզխորթան վասն զնովաւ արհամարհանացն:

Եւ զինչ է՝ խօսեցան սուտ. զի ասէն, \* Իբրև սիրելի են յարկք քո տէր զօրութեանց. ցանկայ և փափազէ անձն իմ ՚ի դաւիթս քո: Եւ դարձեալ ասէն, \* Չմին խնդրեցի ՚ի տեառնէ և զոյն աղաչեմ բնակիլ ինձ ՚ի տան ան զամ աւուրս կենաց իմոց: Եւ դարձեալ թէ, \* Ուրախացայ ես ոյք ասէին ցիս ՚ի տուն տեառն երթիցուք մեր: Օ այս և որ սոցին նման ասէն և մեծապէս ասէն. զի ախորժեիլ համարին յառաջիկայս ժողովել զժողովուրդ նոյ, քան բնակիլ ՚ի տուն նորս:

Ս՛հ գործոյն և ողբումն գործելեացն. եկեղեցիք նոյ խրթնացեալ, և ժողովուրդք ՚ի նոցանէ բեցեալք: Ըստ կամաց ուր և ինքեանց լաւ հաշուեսցին, անդ զեկեղեցւոյ փառս տան: Եւ որ և ս

դժնդակն • զի ոչ այլ, այլ մարդոց զնորացն տանին պաշտօն • զի առ աւագս գեղիցն ՚ի պաշտօն ժողովին • ոչ այլ, այլ նոցա պաշտօն տանիլ • որպէս թէ գերագոյն նորա քան զիմ իցեն • զայլ տամբքն զանց արարեալ, զնոցայն նախամեծար առնեն : Արոց ՚ի դէպ էր ասել ըզ տէրունական բանսն, \* Երթայք տնւք զկայսերն կայսեր, և զայն այ :

Թէ որ ինչ աւագացն անկէ պատուոց, զայն տարայք յաւագացն տունս • և դուք զպաշտօնն այլ յաստուծոց պաշտիցէք տան : Սարգարէին հաւանեալ թէ, \* Աստ օրհնեցէք իմ ծառայք տեառն զտէր : Թէպէտ և թագաւոր է, գիշերին երթեալ ՚ի տուն տեառն և այլոց ձայնատու լինել հրամայէ, թէ ծառայ էք տեառն, առ նորն ձեր եկայք և ՚ի տուն տեառն ձերոց • և մի պատճառէք գիշերաւ • այլ \* ՚ի գիշերին համբարձէք զձեռս ձեր ՚ի սրբութի և օրհնեցէք զտէր : Եթէ ծառայ էք տեառն, մի ընդ գիմանայք կոչման տեառն ձերոց • ապա թէ կոչէ և ոչ գայք, չէք նորս ծառայք :

Սարգարէին կոչէ իմ, և դու չանաս • ապա ուրեմն և պաշտօն կոչողին առ ՚ի քէն չէ հաճելի • եթէ \* Ունկնդրութի լաւ է քան զպատարագ : ՚Կ վերայ իմ պատճառացս զոր ասացաք վն քարոզիս բանի, իմանալի է և այս • զի ՚ի բանս հայեցեալ որ ասէս զգալն ՚ի սուրբ եկեղեցի, իմաստուք թէ չէր հնար առաջնորդացն յայլ տեղիս համարձակիլ ՚ի պաշտօնն միաբանութեամբ, բայց միայն ՚ի սուրբ եկեղեցիս :

Ղաչէսցուք զմիածին որդին այլ զտէրն մեր և զփրկիչն յս քս • որ եջ փառօք հօր ՚ի մէջ հնոցին և փրկեաց զերիս մանկունսն ՚ի քաղդէացւոց անտի :

Քանզի չորս ետես նաբուրդոնոսոր, և ասէ, \* Ո՛չ երիս արս արկաք ՚ի հնոցն, և ես չորս տեսնեմ • և տեսիլ չորրորդին նման է որդւոյն այլ : Ղյսուիկ յորդորէ քարոզիս բան թէ՛ նոյն ինքն որդին այլ միածին տէրն մեր որ փրկեաց ՚ի մոլորութի զմեզ, նա էր որ յայնժամ լե ազարիմանս իջեալ եկաց ՚ի հնոցին, և այժմ առ մեղէ :

Օ ի թէ ուր երկուք կամ երեք ժողովեալ յանուն նր, անդ լինի և նա ՚ի մէջ նոցա • ապա որչափ ևս առաւել ուր միաբանութի ժողովուրդքս իցեն ՚ի տունն այլ լինիցի ՚ի սմն : Ղաչէսցուք ասէ զնա այնպէս խոստովանութեամբ և պաղատանօք որն զմանկունքն ՚ի հնոցին • զի որ յայնժամ պահեաց զնոսա ՚ի հրոյն, պահեացէ՛ զմեզ ՚ի մեղաց և ՚ի ցանկութենէ աշխարհիս • վասն որոց և ասէ,

Ուսաւոր և սուրբ պահեացէ զմեա մեր • զի մի երբէք խաբէսցուք մեք ՚ի մեղաց և ՚ի ցանկութի աշխարհիս : Վճեմայն նեռք հրեղէնք ստանայի՛ խաւարեւոցն աղւեն • իսկ լուսաւորեւոցն մաօք :

անդ՛րք են ըստ սաղմոսողին , \*Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի , և ո՛չ ՚ի նեւտէ որ թուչի ՚ի տուէ : Վրանդն թէ արեգակն արդարու թե՛ ծագեալ տիւ առնէ քոյ մտացդ աներկիւղ մնացես յամ՛ նեւտից . դե այն իր ՚ի խաւարի շրջն . յորժամ խաւարաւ դիւին ծածկին , և աւուր հասարակի լոյս զխաւարն զնա կարծեն , զփափկութիւն աշխարհիս , և զցանկութիւն մեղայ :

Վրանք ազագաւ խրատէ խնդրել զլոյսն անային , և զսրբութի՛ և զյատակութիւն մտաց . զն մի իբրև լուսով խաբէսցուք մեղօք և ցանկութե՛ք աշխարհիս : \*Լարեցին ասէ զողեղունս իւրեանց յիրս դառնութեան , ձգել ընդ խաւար յայնոսիկ որ ուղիղ են սրտիւք , յանկարծտիկ ձգեսցեն ՚ի նոսա : Օ՛ր զիրս խաւարի և զդառնութե՛ իբրև զլուսոյ ինչ գան ձգել , և իբրև զքաղցր ինչ արկանել ՚ի սիրոն . այլ ուղիղքն սրտիւք ո՛չ երկիցեն թէ յանկարծ և յանգէաս ձգի . քանզի լոյսն որ յուղիղ սրտին է , չտայ խաբիլ . այլ ծանուցանէ զգառն դառն՝ և զխաւարն խաւար , և անպատիր մնացեալ լինի :

Վրժանի եղիցուք պահել զպատուիրանս նր՛ : Վրս է ճշմարիտ և անխար լոյսն : \*Պատուիրանք տեսուն լոյս են ասէ և լոյս ասն աչաց , առ ՚ի տեսանել զնեսս բանսարկուին և խոյս տալ ՚ի չարէն : Եւ փոխարէն զոր դառնեմք պահելով զպատուիրանն , աստ զանպատիր և զանմոլար կեանս , և անդ զպատկն անանց լուսոյն և անլախճան կենացն . որպէս և յարէ ՚ի նոյն :

Վրնուլ զպատկն լուսոյ և կենաց ՚ի յանձինս մեր զոր խոստացաւ սիրելեաց իւրոց : Վրանն է երանութիւնս այս . աստի լոյս՝ անտի պատկն , և որ մեծն է քան զամ՛՝ սիրելի նոյ լինիլ , որ և ՚ի տանջանս քաղցր է և անզուգտկան փառք սիրիլն ՚ի նմանէ , թող թէ ՚ի լուսոյ և ՚ի կենաց պատկն : Եւ զն մի թերտհաւատ այսուիկ լինիցիս՝ դնէ առաջն զմեծագոյն յոյսն զճշմարտութի՛ նոյ . որոյ՛ ստուծիւն ՚ի խոստումն ո՛չ գոյ զն ստոյգ և ճշմարիտ է . վասն այսորիկ ասէ , Ջր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն անձ : Եւ սպաս յաղթս փակէ զբանն :

3<sup>ր</sup> քն տեր մեր կեցո՛ և ողորմեա՛ : Օ՛նոյն ասեն և ժողովուրդքն՝ կեցո՛ տեր :

## Ապա սսէ գլխաւոր եկեղեցոյն :

**Յ**օղեա՛ս տէր զցօղ ողորմութեան քոյ ՚ի մեղուցեալ անձինս մեր . և շին՛ս զբոց չնոցի յանցանաց մերոց : Վանձի խրատեաց քարոզն աղաչել փրկիլ ՚ի մեղաց և ՚ի ցանկութե՛ աշխարհիս : Բստ այնմ մի անձն և մի սիրտ ժողովողեանս լեալ , միով լեզուաւ իբրև ամենեքումբք ընդ նոյ խօսեցեալ լինին : Չնոց՝ զաշխարհիս ցանկութի՛ն խմացեալ , և բոց՝ զմեղաց շրջակայութի՛ն , մաղթեն որպէս ՚ի չնոցն՝ և մեզ ցօղել զողորմութեանն ցօղ . քանզի սսէին նորաս : Արա՛ս առ մեզ բստ ողորմու՛նէ քում . փրկէս զմեզ վն սքանչելեաց քոց :

Արկու իրօք փրկութի՛ խնդրեն . ողորմութեամբ՝ և վասն նոյ սքանչելացն : Թեպէտ և վասն նոյ ՚ի հուր ընկեցեալ լինէին , ոչ բստ արժանեաց՝ այլ բստ ողորմութե՛ սարկիլ մաղթէին : Աւ զայն ոչ զիւրեանց կամելով կեանս , այլ վասն սքանչելեաց քոց սսէին . այսինքն՝ զն սքանչելքն զոր ցուցեր ՚ի սկզբանէ , և զոր յեգիպտոս և ՚ի կարմիր ծովուն և զոր յերկրին պարգևաց արարեր զօրութիս , այսու փրկութիս այնք ամ հաւատարիմք լինին : Օ ՚ի աչօք զայս տեսեալ իցեն և ականջօք ՚ի դրոց լուեալ իցեն՝ հաւատասցեն :

Աւ ՚ի վերայ այսոցիկ երրորդ ևս յաւելու պատճառ , և փառաւորեսցի սսէ սբ անուն քո յաւիտեան : Օ ՚ի և որ այժմ սսէ և որ զինի գալոց են յաւիտեան , զքո փրկելա զմեզ լուեալ , փառաւոր արասցեն դանուն քո յաւիտեան : Աւ փրկելովն՝ զամ արարածս յօրհնութիւն կոչել և սասցեալ թէ՛ օրհնեցէք և բարձր արարէք զնս . ոչ միայն այժմ , այլ և յաւիտեան :

Աւ յոր սակս : Ջի փրկեաց զմեզ ՚ի չնոցէս և ՚ի միջոյ բորբոքեալ բոցոյս և ՚ի հրոյ : Աւ սասցեալ բանիս գոհութե՛ , ամ պաշտօնէիցն ձայնատու լեալ՝ յօրհնութիւնն յայն զբունն գլխաւորեն : Ջի քաղցր է զն յաւիտեան է ողորմութի՛ նորա : Ո՛չ սսէ զն արժանի էպք մեք , այլ զն քաղցր է և ողորմած յաւիտեան : Աւ եկեղեցի քի՛ զայսպիսի խոնարհութի՛ ուսեսալ՝ վասն ողորմութե՛ խնդրեն շնորհանել զհուր մեղաց ոչ տոչորէ զբնութի՛ մարդկան . յսսելն ,

**Յ**օղեա՛ս տէր զցօղ ողորմութեան քոյ ՚ի մեղուցեալ անձինս մեր . և շին՛ս զբոց չնոցի յանցանաց մերոց . և փրկէս զմեզ յաւիտեանական հրոյն : Ո՛չ միայն սստ սսէ , այլ և ՚ի հանդերձելումն՝ յայնմ ՚ի յաւիտեանական հրոյն փրկէս . այսինքն՝ ՚ի մշանջենաւորեն : Ի՞նչ սստ ՚ի մեղաց բոցոյն սարբիմք , և անդ յանջէջ և յանսպառ հրոյն :

Եւ արա՛ արժանի ընդ երիս սբ մանկունան օրհնել զամենա-  
սուրբ զերրորդութիդ : Օ ի որսն նորա ՚ի հնոցէն ապրեալք՝ օրհ-  
ներգուք քեզ եղեն , նոյնպէս և մէք որ աստ ՚ի մեղացն հրոյ , և սնդ  
՚ի գեհնէն զերծեալ , օրհնութի և գոհութիւն և փառս մատու-  
ցուք . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Իսկ ՚ի կեւրակելն այսպէս աստանօր ասէ :

Որ ամենակարօղ և սուրբ : Հոր և ամենակարօղ է , վն  
զն յաղթեաց մահուամբ մահու . և խորտակեաց զգրունս  
դժոխոց , և եհան զարգելեալսն ՚ի նմանէ : Որսն իջանելովն ՚ի հնոցն՝  
զմանկունան ապրեցոյց . նոյնպէս և ՚ի դժոխս իջանելով՝ զմարդկային  
քնութիս ՚ի մահուանէ ՚ի կեանս վերածեաց . և վասն այսորիկ՝ նմա  
փառք ի խանութիւն և պատիւ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յա-  
ւիտենից , ամէն :

Յովաննու Օձնեցւոց վասն միաշաբաթին :

Իսկ միաշաբաթի աւուր տաւաօտու աղօթքն՝ ոչ ըստ այլոց  
խորհրդեանն կարգեալ են . քանզն զկնի հարցինն՝ մեծա-  
ցուցէ ասնն : Ս ասն զն հարկաւոր համարիմ այնմ որ զյարութիւն  
քն պատմէ , ընդ նմին և զծնունդն յիշել և զգերեզմանն : Օ ի թէ  
չէր ծնեալ , և թաղեալ իսկ ոչ . և եթէ չէր թաղեալ , և յառնել  
իսկ անհնար էր :

Երբ՝ զկոյնս յիշելով , զթաղումն հաստատեաց . և զգերեզմանն  
յիշելով , զյարութիւն հաւատարմացուցանէ . քանզն մինչ չև ևս զա-  
ւետարանն կարդացեալ , դեռ ևս ՚ի թաղման վարկանելով զտէրն՝  
արուարուստ ՚ի ներքս ՚ի գերեզմանն աղաղակէն ողբերգագին ձայնե-  
ւթէ , \* Արբ՝ տէր օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուանդ քոյ :  
\* Զի խոնարհ եղեն մինչև ՚ի հող անձինք մեր . և յերկիր կցե-  
ցան մեջք մէր :

Եւ լսեն պատասխանի աւետեաց ՚ի մարգարէէն եթէ , \* Թաղա-  
ւորեսցէ՛ տէր յաւիտեան անձ քո սիօն յագգէ մինչև յագգ . և թէ ,  
\* Պահէ՛ զձմարտութիւն յաւիտեան . և առնէ իրաւունս զրկելոց :

\* Բանայ զայս կուրաց , և կանգնէ զգլորեալ տէր : Եւ յաւետա-  
տարանին յարուցեալ 'ի մեռելոց՝ կատարէ զխոստմունս աւե-  
տեաց մարգարէին :

Եւ անդէն աւետարանական բանիցն ընդ դեմ՝ բերեն թէ ,  
\* 'ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութի և օրհնեցեք զո՞ր :  
Որ լուաւ աղօթից մերոց , և յարուցեալ 'ի մեռելոց փրկեաց զմեզ ,  
Թագաւորելով համաշխարհական 'ի վերայ ամ տիեզերաց : Իսկ գի-  
շեր՝ ոչ էթէ զգամանակն ասաց , այլ զհրեական զանհաւատութիւն  
նօտակէ ըստ եսայեայ պանծալի մարգարեութեանն էթէ , \* 'ի գիշե-  
րաց կանխէ հոգի իմ՝ առաւօտ առնել առ քեզ աստուած :

Եւ ապա յայլ աւուրց կարգն ելանեն : Եւ յետ Տէր յերկ-  
նիցին՝ Փառք 'ի բարձունս , և զինի՝ Եղիցի ասեն . որ նկարագրէ  
զէտրհորդ իմաստից աշակերաց տեսան : Որ յետ յարութեան  
տեսին յարուցեալ 'ի մեռելոց . և ուրախութեմ հանդիպէին 'ի նա-  
ւարկութեանն իւրեանց 'ի տիբերական ծովուն : Որո՞ւ և գրեալ է  
'ի պատմութեան աւետարանին , և 'ի պրակա առաքելոցն :

Քարոզ՝ զինի Մեծացուցեին , Սուրբ զո՞ծածինն . և աղօթք՝ Ընկալ տէր , Իսկ 'ի  
կիրակեի զինի Մեծացուցեին զայս ասեն :

**Ս** ասն սուրբ տեղոյս շինութե , և բարեկարգութի ուխ-  
տախ զո՞ր աղաչեսցուք : Սուրբ տեղն ասէ եկեղեցւոյն .  
շինութի է յաճախութի ժողովրդոց , և որ 'ի ժողովրդոցն ուղղու-  
թիւնք ըստ խրատու գրոց սրբոց : Օ որ և 'ի պօղոսէ ուսանիմք  
այլ զառաքեալս և զմարգարէս և զաւետարանիչս , զՏօլիւս և զվար-  
դապետս . 'ի հաստատութիւն սրբոց , 'ի գործ պաշտաման , 'ի շինած  
մարմնոց քի : Եւ սուրբս կոչեաց զհաւատացեալն . նոյնպէս և  
մարմնն քի , որ շինի պաշտօնէիւքն նոյ սր խրատեն զնոսա յուղեղ  
վարս : Կարձեալ ասէ , \* Իւրաքանչիւր որ ընկերին հաճոյ լինիցի  
'ի բարին վասն շինութեան : Եւ երբ զընտրութիւնս վասն լեզուօր  
օտարօր խօսելոյ արար , ոչ ինչ օգուտ կոյ ասէ զե եկեղեցին շե-  
նութիւն առնուցու :

Եւ յս յիցի կարեւոր շինութիւն է որ 'ի խրատուց գրոց սրբոց  
լինի եկեղեցւոյն նոյ : Եւ աղօթել է նախ վասն սորա , և ասրս վա-  
յաճախութեան ժողովրդոց : Իսկ ուխտս ասէ՝ որ ըստ քահանայա-  
կանին վիճակեալ են . վասն որոյ կարի առաւել աղօթել է բարի  
կարգօր քաղաքավարելոյ : Որք էթէ 'ի բարեկարգութեանն սխա-

լէսցին, զգոլոր ժողովուրդն կորուսանեն. որոյ ակն որ չար է, անձ  
մարմինն խաւարին է: Ըրդ խրատէ բարոզն՝ վասն եկեղեցւոյ շե-  
նութեան և վասն ժառանգաւորաց եկեղեցւոյ բարեկարգութեան:  
Ըստպէս գլխաւորելով զսա՝ և զտունսն որ զինի՝ թէ զտէր  
աղաչեսցուք:

Ս ասն ժողովուրդականացս որք մասնեն ընդ դրուեսս սորա՝  
զտէր աղաչեսցուք: Օ ի մի որ կորիցէ ՚ի հօտէս, և արտաքս քան  
զփարակսս զայս ելէալ գաղանակուր լինի: Ըստ զն և ուր և երթի-  
ցէ, բարի և քաջ հովնէն քն ակն ՚ի վերայ կալցի. անմնասս պահես-  
ցէ և ստատէն ՚ի փարակսս հաւարեսցէ:

Յոցամ վայրի հարցից զայնոսիկ որ յաւելուած տանցս սունեն. ո՞ր  
էն այն պաշտօնեացքն՝ մն որոց աղօթիցս խնդիրն են: Հրամայ-  
եաց ինդրել զեկեղեցւոյն ՚ի խաղաղութե և ՚ի հաստատութե շե-  
նիլ, և եկեղեցսականացն բարեկրօն լինիլ, և ժողովուրդեանն փրկիլ:  
Ըրդ որ է որ որին է յայցստնէ և պաշտօնեաց կոչի. բայց զն  
զուխտն ոչ է կարացեալ գիտել եթէ ճշք են, և բնաւ զն միտ խի  
բանին չէ եղեալ, համարեցաւ որ զայն յաւելլ ՚ի զրկման զվիճակա-  
ւորսն. և զայն՝ պաշտօնեից անուամբ կարգեսցայ:

Ս ք զն ընդունելով զխնդրուածս սրտից մնաբանեաց: Օ ի  
մնաբանեալ եմք սաէ ՚ի խնդրուածս, աղաչեսցուք սալ զոր խնդրեմքս:  
Պարձեալ սաեմ, պաշտօնեիցն այն զոր նոքայն սաեն, չէն  
մնաբանեալ սրտից հայցուածքն ընդ այլն. զն ուրոյն նոցայն յիշին  
խնդրուածքն: Յոցա է թէ յոյժ տգիտի է յաւելուածն. ՚ի վերայ  
սպա բերէ թէ, գթացի և ողորմեսցի: Տեսանեն զչահ սրտից մն-  
աբանեաց. ՚ի գութ և յողորմութի ածէ սաէ զան ընդունիլ ըզ  
հայցուածսն: Եւ աւարտն և զայս ևս ՚ի գոհութի տեսան այ և  
փրկին մերոյ յի բլ:

Բարոզ՝ զինի իւղաբերից աւետարանին:



ուարձացեալքս ամենեքեան աւետեօք յարութեամբ  
Ս աեսուն մերոյ և փրկչին յիսուսի բրիտանոսի: Յաւե-  
տարանէ անտի զաւետիս յարութեան բրիտանոսի լսելով որ տերն  
է և փրկիչն մեր՝ զուարձացեալք եղոր: Յո՞ր սակս. նոխ՝ զն տէր  
մեր է և փրկիչ որ յարեաւն: Երկրորդ՝ զն այն ծննդեանն սր ՚ի  
յարութեանն մարմնոց մերոց լինելոց է սրտու՞ նաև անդ բանիկ

եղև : Այս աղագաւ ստէ ոչ զուարճանամք միայն , այլ և մեծաւ ուրախութեամբ :

Օ ի եթէ ամուլ արգանդ երկրի որ զսերմանեալ մարմինս մարդկան ընկալու և անձնուներ էր առ ՚ի յարուածեան պտուղ , ծննդական եղև : Այդ զտէրուական մարմինն զանապականն ծնանելով որ անապականութեան մերոյ եղև ծնունդ անդրանիկ . սպա յայտ է թէ ամլոյ արգանդին բանալով չէք արգել ամ մարդկան առ վերստին ծնունդ յարուածեան : Աւ զինչ օրինակ եղև այսմ շնորհի որ յարեաւն ստէ ՚ի մեռելոց :

Խորատկեաց ստէ զգրուան դժոխոց և ելոյժ զբռնութի մահու : Յանցեաւ ազամ և զմահ տիրեցոց իրքեան և որոց յիւրմէն . և բնակեցաւ մահ ՚ի մարդիկ : Աւ որն դրամբք և նրգօք արգել ՚ի կենդանութէ , և բարձեալ էր յոյս մարմնոյ նորոգման՝ և հոգւոյ ՚ի նոսա դարձ : Օ ի թէ եղէն արգաբք և սուրբք , այլ ոչ բնաւին անմեղք . վասն այսորիկ ոչ զեւրեանց և ոչ զայլ մարդկան զօրեցին բառնալ զմահ :

Յաղագս որոյ պէտք եղէն անբիծ արեանն առ ՚ի քաւութիւն աղամոյ և ծննդոց նորա , և մեռանելոյ անարատ մարմնոյն քի որով մեռաւ մահ : Աւ զարդելու մարդկային հոգւոց ՚ի մարմնոց՝ խափանեաց մեռելութիւն քի՝ և ոգւոյ նորա առ ոգիս մարդկան գնացումն : Որ և վերածեաց զնոսա ընդ իւր , և անխափան գործեաց զմեռա անդրէն իւրաբանչիւր ոգւոցն յանցնիւր մարմինս :

Բանզի որն յանցանքն աղամոյ եմոյժ զմահ , այսպէս արգարութիւն քի զկեանս շնորհեաց . որն ստէն առարեալ եթէ , \* Որն միջն յանցանօք յամ մարդիկ դատապարտութիւն , նոյնպէս և միջն արգարութիւն յամ մարդիկ արգարութիւն կենաց : Աւ դարձեալ թէ , \* Որն թագաւորեցին մեղք ՚ի մահու անդ , նոյնպէս և թագաւորեցեն շնորհօք ՚ի կեանս յաւիտենից ՚ի ձեռն տեառն մերոյ յի քի : Աւ զի կեանս յաւիտենականս շնորհեցաւ մեղքի յարութիւն , յայն սակս ստէ քարոզն :

Աւ ետ յոյս հաստատուն վերստին նորոգումն կենդանութի ամ մարդկան : Հաստատուն ստէ , որ է անսուտ . և տէս՝ զի ոչ վասն ստի ինչ իրաց ստէ տուեալ զոյնս , այլ վասն հանդերձելոցն . զի ՚ի նորոգումն յաւիտենից կենացն է տուեալ յոյնս : Աս ստէ յոյս հաստատուն . որպիսի ինչ , վերստին նորոգումն կենդանութի ամ մարդկան : Աւ երստին՝ թէ միւսանգամ իսկ նորոգելն՝ զհնոցեալն՝ և զապականեալ մարմնոց նորանալն անապականութեամբ ցուցանէ : Աւ զի՝ վասն այնպիսի պարգևի դոհանալ խրատեաց :



Ինդրեսցուք ՚ի փրկչէն մերմէ յնէ քնէ որ փրկեաց զմեզ ՚ի մահուանէ : Եւ զինչ է զոր խնդրելն հրամայէ : Օ ի արժանաւոր արացեղ յարուժեանն իւրում կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց :

Տես զօրպիսի պարգև խնդրել վատահացուցանէ . այնպէս զմեր խոնարհ մարմինս փառաւորել , ո՞ր զտէրունական մարմինն : Վանզի ՚ի յոյսս յոյս առաքեալն վատահացոյց ասելով թէ՝ \* Նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ կերպարանակից լինիլ մարմնոյ փառաց իւրոց : Սոյնպէս և պետրոս , \* Հանդերձեալ փառացն որ յայտ նեւոցն է՝ հաղորդս զմեզ սաց : Եւ յովհաննէս ասէ թէ , \* Յորժամ նա յայտնեսցի այսինքն քն , նման նման լինելոց եմք : Ո՛վ մեծի պարգևիս . եթէ որ ունիցի իմացումն , խնայել յինչս կամ յանձն մարթիցի՝ այսպիսի ունելով յոյս : Եւ յարէ ՚ի նոյն աղաչանս :

Վնական տէր անձ մեր կեցո՞ և ողորմեա՞ մեզ : Օ սոյն զայս հայցելով յամենակալ տեառնէն և յամենակարող , զսոյն ապա և միաբան հայցեն՝ զկեցո՞ տերն ասելով :

### Մարտիրոս :

Վնասայցծառ և ճշմարիտ յարուժե՞ք ՚ի նոյ մերոյ : Օ ի ո՞չ էթէ առաքելոցն միայն , այլ և որ այլ ևս ընտրեալք էին յետ յարուժեան տեառն , համայն շնորհօքն որ տուաւ առաքելոցն՝ և նորօք աշխարհի , ամենեցուն պայծառ և ճշմարիտ քի յարուժին երևեցաւ : Յարուժեամն ասէ քի նոյ մերոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

### Քարոզ զինի Ողորմեայնն :

Եւ նախ առաջին զայս կարևոր համարիմ՝ ուսանիլ էթէ զինչ աղագաւ այլ քարոզքն ընդ ժողովողեանն խօսին , իսկ սա ըստ աղօթից կերպի ընդ նոյ խօսս ունի : Եւ ո՞չ սա միայն , այլ և ՚ի պատարագին յետ յիշատակացն քարոզն է , և որ յերեկոյին ժամուն յետ օրհնութե՞ ճրագացն . երեքին սորա ընդ անձ խօսին . զորս այսպէս խմանակի է : Օ ի գոհութիւնք շնորհակալութե՞ նոյ

մատուցանին : Սին՝ վն ՚ի գիշերին խաղաղութիւն մնալ և հասանել յառաւօտին պաշտօն . և միւսն՝ վասն ՚ի տունջեանն և յերեկոյնն փառաբանութիւնն խաղաղութեամբ գալոյ :

Իսկ որ ՚ի պատարագին է՝ զայնմանէ գոհանոյ և շնորհակալի , զի այնպիսի մեղ պարգևեցաւ պատարագ և զենուսն : Սասն այնորիկ բարձր ձայնիւ սարկաւազն ասէ , որն զի ամ ժողովուրդքն հաղորդեսցին գոհաւթեանցն և մաղթանացն : Եւ յլեն յովիւք որ առ ծուլութեան շութեմեալք թողուն զբարոզս զայս , և յարեն յիրեարս զողորմեացն և զտէր յերկնիցն՝ երկուս մեծամեծս առնելով մնասա : Սին՝ զայն , զի զողորմեացն փառս տալով չաւարտեն որն կարգաւորութիւն է . և միւսն՝ զի զփառաարութիւնն որ ՚ի բոլր ժողովուրդեանն առ սուրբ երրորդութիւնն՝ ՚ի բաց հատանեն . որն թէ ամի ՚ի վերայ բերանոյ եղեալ ամ ժողովուրդեանն , զի մի փառաւորեցի սուրբ երրորդութիւնն ՚ի ժողովուրդոցն :

Գարձեալ որ վասն գիշերոյն պահպանութեան է շնորհակալութիւնն փառաարութեամբ , զի զայն մի մատուցեն նոյ : Եւ վասն էր զայս չար գենն խնայաւ : Գիտէ թէ՝ որ վասն անցելոցն խաղաղութեանցն շնորհակալ լինի , և յառաջիկայն պահպանութի գտանէ . վասն այր՝ գիշերոյ պահպանութեան անշնորհակալս ասնէ , զի տունջեանն դիւրամուս առ ՚ի յիւրմէ փորձութիւնքն լինիցին :

Օր չէ՛ ընդ վայր ասացեալն , \* Բերան գոհացող՝ պարտական ունի դիմ : Գաղազս որոյ առաքեալն ասէ , \* Գոհացարուք յամ ժաւ՝ ՚ի վերայ ամենայնի յանուն տեառն մերոյ յի բն :

Եւ մեր զայն ամ խնայեալ , մի պղերգասցուք գոհանալ դիմնէ . այլ յուտել և յրմայել , և ՚ի գործել և ՚ի հանգչել , և ՚ի ննջել և ՚ի յառնել , և ՚ի կատարման տունջեան և ՚ի սպառիլ գիշերոյ , գոհութիւնն մատուցուք : Եւ յարէս վարդապետեալ յառաքելոյ , \* Թէ ուտիցէք , թէ ըմպիցէք , թէ զինչ և գործիցէք , ՚ի փառս նոյ արասջիք : Եւ յսինքն թէ՛ ընդ ամի փառս տաջիք նոյ . զի այսպէս նոյ խնամքն և պահպանութիւնն մեղ շնորհեցի , և ամ պէաս մեր հոգացի : Բանզի և մարդկան այսպիսի սովորութի է , շնորհակալացն յօժարս միտ ասն զպարգևան , և դասդաղկոտ առ նոսա են որք ոչն գոհանան :

Եւս և յաւատարմանն տեսանեմք այսմիկ վիսայութիւնն մեծ : Ինն բորոտ յիսրայելէ և մի այլազգի , զի սրբեցան ՚ի ամնէ՝ ինունքն ոչ դարձան առ տէր փառս տալ նովաւ նոյ . և այլազգին ՚ի ձայն մեծ փառաւոր առնէր դիմ : Սասն որոյ ապերախտիցն մեղադրութիւնն մինչև զայսօր քարոզի յաւատարմանն յեկեղեցի ընդ ամ տիեզերս . և միոյն գովութիւնն յամենեսեան հռչակեալ : Եւ ոչ այսչափ միայն , այլ և ՚ի կեանսն յաւիտենականս ևս զխաղաղութիւնն ստացաւ :

Իսկ նորա զրկեալ յայնոցիկ եղէն . նմա տասց տէրն՝ \* Հաւատք քո կեցուցին զքեզ : Այլ տասց թէ՛ սրբեցին յախտէն . որ հասարակաց նորա և այլոցն էր . այլ եթէ՛ կեցուցին զքեզ : Օքեզն ասե՛լ զառանձինն՝ նմա միայնոյ զպարգևելն յայտնէ որ է յաւիտենից կեանքն . ապա ասէ , \* Ե՛րթ ՚ի խաղաղութիւն : Եւ այս յատուկ ամին . զի էրթ , և ո՛չ էրթայք ասաց :

Տեսե՛ր արդեամբք զոր բանիւքն տասցի , թէ՛ վասն այնր ստանայ խափանէ զգոհանալն , զի մի՛ ոյլ ևս պարգևս առցուք : Տէ՛ս և զայն թէ՛ որո՞ սամարացւոյ բերանն գոհացող , պարտական նմա զած կացոյց կենաց և խաղաղութեան : Այսն որոյ և էս ասացից առ այս զոր սուրբն այն տասց գրիգոր կոչեցեալն անձաբանն , թէ՛ \* Լէ՛ր մի՛ յինուոնցն ապերախտից , այլ տասնէրրորդին նմանեաց և ասա՛ :

**Ե**րկրպագեմք քեզ տէր անձ մեր՝ անցեալքս ընդ երկարութիւն գիշերիս և կանխեալքս ՚ի տեղի խոստովանութե՛ . մատուցանեմք քեզ զառաւօտու աղօթս մեր :

Երբք են վասն որոյ երկրպագել ասէ . զի պահեաց յերկարութեան գիշերին . և զի կանուխ գալ ՚ի սուրբ եկեղեցի արժանացոյց . և զի յառաւօտին պաշտօն ժամանեցոյց : Տեսանէ՛ս դարձեալ յեկեղեցւոջ զքարոզս լեալ , զոր սուրբ տեղի խոստովանութեան կոչէ , այսինքն գոհութեան . բանզի գոհանալ կամելով զտեղին ասէ թէ՛՝ վասն զքէն գոհանալոյ սա շինեալ է :

Յոր ստիս և մտրգարէն ասէ , \* Մտէ՛ք ընդ դրունս սորա խոստովանութեամբ , և օրհնութեամբ ընդ յարկս նորա : Եւ վա՛հնոց տաճարին ասէ , \* Ա՛նդ ելանէին ցեղք ցեղք տեսան վկայութիւնք խորացել՝ խոստովան լինել անուան տեսան : Եւ դարձեալ թէ , \* Երկիր պագից ՚ի տաճար սուրբ քո . և խոստովան եղէց յանուան քո . և գոհութիւն տաց անուան քում՝ վասն ողորմութեան և շնորհատութեան քոյ : Եւ թէ՛ վասն զմեզս խոստովանելոյ յեկեղեցւոջ նոյ և թողութիւն հայցելոյ կոչէ զնա խոստովանութե՛ տեղի՛՝ ո՛չ սխալէ :

**Օ**քեզ տէր օրհնեմք և փառաւորեմք և զքէն տէր գոհանամք ՚ի վերայ այսր ամենայնի : Յորոյ վերայ օրհնեալդ և փառաւորեալդ և գոհանալ . ասէ առաջիկայ բանն :

**Ո**ր արժանի տրարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել և հասանիլ մեզ ՚ի ժամ առաւօտոուս : Այլ եթէ՛ մեք այսպիսի շնորհք տրժանի էաք ասէ . այլ դու արարեր արժանի դթալով : Եպա զլինէ զոր խնդրելն կամի :

**Լ**րժանին արա՛ զմեզ ար երկնային խոստմանց քոց • զոր խոստացար տալ սիրելեաց քոց : Լո՛ր զաստի կենցաղս գիշեր կոչեաց առ արեալն յտեւն , \* Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ : Լ յսինն՝ եկեալ է ՚ի սպառումն աստի կեանք • զոր մարգարէն ասէ , \* Խոնարհ արար յերկրի զկեանս իմ ՚ի խաւարի : Լ ւ զն մերձ է արեգակն արդարու թեան երևիլ , լուսաւորել զարժանաւորս : Լ րդ՝ զոր խնդրէն՝ է այս • որնդ ՚ի գիշերոյն խաւարէ առաւօտիւս լուսաւորեցեր , նոյնպէս յոյս խաւարէս կենաց այնու լուսով լուսաւորեան որ ՚ի յերկինս է : Եւ սան այնորիկ երկնային խոստումն կոչէ , զոր խոստացար տալ սիրելեաց քոց շքմարխոդ աստուած : Խոստացար ասէ և մնսուտ էս յն քն տէր մեր կեցո՛ և ողորմեա՛ :

Եղօթք :

**Ո**ղորմած մարդասէր և քաղցր տէր՝ քաւեան և թող զմեզս մեր : Բստ սաղմոսին զաղօթան առնէ • զն անդ ասէ , ողորմեա՛ ինձ անձ ըստ մեծի ողորմութե՛ քում : Լ ւ աստ սոյնպէս զողորմութիւն և զքաղցրութիւն և զմարդասիրութիւն առաջի արկեալ , այնու զքաւութիւն մեղաց հայցէ : Լ ւ ասպա՛ զն որ առաջիկայ սաղմոսն փառաբանութեան , աղոյշէ արժանապէս զփառաբանութիւն զայն , և զոր այլ ևս մատուցանի առարելայ , և զհանապազորդն ՚ի նոյն յաւելու : Լ րա՛ արժանի ասէ փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ • այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն •

Վասն օրհնութեանն՝ զինի Տէր յերկնիցն :

**Ե**ւ յորժամ խեթ աչօք պշուցեալ նայիցի որ ընդ վճիտ ճառագայթս արեգակնան առ ՚ի զնեւ զհանգամանս և գեղոց վայելութե՛ նորա , առաւել փնասի իսկ , քան թէ օգտեսցի : Լ պա՛ որչափ ևս առաւել՝ յորժամ՝ զիմանալն ակն ոգւոյ որ նսեմացեալ ունիցի , և զանհետազօտելն լոյս արեգակնան արդարութեան իրզախեսցի որոնել , զընդիսի ոչ կրեսցէ փնասս : Լ ւ թէ այլում ումէք այս փնասակար է , ապա յոյժ մանաւանդ իմուան ակարուէ • որ առաւել զառածեալս եմ մեղօք , և ոչ ճանաչելով զչափ անձին՝

կամ ունին դնելով մարդարեւին որ ասէ, \*Մեղաւորին զեւրդ լնցի պատմել բնաւ զմեծութիւն փառացն նոյն :

ԸՍԼ մեղաւորմարդ մտօք և սեւթորմի ոգւով յոյս յանդրդնեցայ, ՚ի վեր քան զկար և զարժան անձին իմոյ համարձակեալ : Սանաւանդ զի և ՚ի կարգ սրբոցն բանից՝ իմոյս հոճեալ բերանոյ բանիցս յեռեալ, որ է յոյժ մանաւանդ լրբութիւն և եղկելն անձին իմոյ դատապարտութիւն : Բայց քանզի գրաւեցեր է զբայր սիրելի թէ ոգորէ ընդ կապով բանի զանձն իմ եղկելի, և անձողպրելի զնս յայսմ արարեր փախստեան յուսոյ : Օհ սաստ սպառնալեաց անհնաղանդութեան՝ ոչ տայ մեզ թոյլ այլ ազգ ինչ խորհիլ, այլ միայն հաւանիլ :

Կա և աերունական բանիցն հրաման ՚ի սոյն յորդորէ, ամենայնի սալ ինդրողաց և մի հեղգանալ : ԸՍԼ և սէր՝ յաղթօղ ամենայնի դատնի և ոչ տայ թոյլ ումէք զեւրեաւ անցանել : Սն որոյ մոռանալոք այժմ զտկարութի անձին . մանաւանդ թէ և վստահանալով յորդրմութիւն նոյն, և օգնականութեամբ աղօթից ձերոց բուռն հարցուք զերէս, յուսով և հաւատով ձեռնամուկ լինիլ ՚ի սոյն : Եւ աղաչեմք առաւել՝ ձեռն կարկառել մեզ առ ՚ի յօգնականութի . զի թերևս արժանի գացուք ատեւութեան բանիս :

### Օրհնութիւն՝ զինի Տեր յերկնցին :

Երնագրուի բանիցս յայտնի ցուցանէ զանուն աղօթիցս . զի օրհնուի ասէ : Եւ օրհնուի՝ ըստ մեծին դիոնէսիոսի՝ յայտնութիւն լսի . որ է պատմաբանել, կամ գովաբանել : Եւ օրհնութի՝ յատուկ նոյ վայելէ . զի նա միայն է օրհնութեան արժանի որ արարիչն է ամենայնի, ըստ առաքելոյ : \*Օրհնեալ է անձ և հայր անձ մերոյ յի քի : Եւ մարգարէն ասէ, \*Օրհնեալ է անձ որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատուրազմ : և թէ՛ \*Օրհնեալ անձն իմ զտէր, և անձ ոսկերբ իմ զանուն սուրբ նր : \*Օրհնեալ և մի՛ մոռանար զամ՝ առ ըստ նորա և թէ՛ \*Օրհնեցից զտէր յամ՝ ժամ, յամ՝ ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ :

Ի սոյն յորդորէ և զամենեսեան ասելով, \*Օրհնեցէք զմր անձ ազնիւք, գովեցէք զնա անձ ժողովուրդք : Եւ ամենայն ասելով, ոչ զոր է թող արտաքոյ բանիս . այլ զամենեսեան հրաւիրեաց յօրհնաբանութի արարչին, զհրեայս և զհեթանոսս, զայլազգիս և զբարբառոսս . նա և զտարբերս անձ զանբանս և զանչունչս ևս :

**Լ** յւ և մանկանցն եկեղեցւոյ առ տն ճնակի տոյ հրաման՝ միշտ պարապիլ յօրհնաբանութիւնն նոյ ասելով , \* Օրհնեցէք մանկուանք զտէր , և օրհնեցէք զանուան տեառն : Թերևս և զյաղթօղան 'ի պատերազմի կոչէ մանկուանս . որք հանդիսացան ընդ դէմ բռնութեան չարին : **Օ** 'ի թէ զմարտիրոսան ասես՝ և թէ զձգնաւորսն , ամենեքեան անուամբն նոյ յաղթեցին չարին խորհրդոց և զօրացան 'ի պատերազմի որով մանկուանք կոչեցան :

**Դ** և մարդկան սովորութի է զմբիշս և զքաջ պատերազմօղոյ մանուկ կոչել . և հոգևոր մանկուանք միշտ օրհնաբանք կոչին նոյ : **Լ** յսպէս և առաջիկայս բան՝ օրհնութե միշտ պատրաստ ցուցանէ զառաքինիսն և զսուրբան : Իսկ որ ասէ թէ՛ զկնի ար յերկնիցին , ցուցանէ թէ և այն օրհնութի է նոյ . ը որում և 'ի բանիցն յայսնի :

**Ի** սկ այս իբր գլուխ և զարդ 'ի վերայ ամենայնին եղաւ և կնիք ճշմարտութեան . զի բազմօրհնեան կոչի , և բարձրագոյն տեսութիւնս յինքեան ամբարեալ ունի . զի հրեշտակական է այս օրհնութիւն , և փրկութեան մարդկան աւետիք . որ եղև 'ի ձեռն միածնի որդւոցն նոյ : Արդ ուսանիմք 'ի սրբում աւետարանին , երևիլ հովուացն լուսատեսիլ հրեշտակին և աւետարանել եթէ \* ծնաւ ձեռայսօր փրկիչ որ է օձեալ տէր 'ի քաղաքի դաւթի : \* Առ որ եղև ասէ յանկարծակի ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց . որք օրհնէին զամբ և ասէին , Փառք 'ի բարձունս նոյ և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն :

**Ա** ն որոյ ամ օրհնութեամբքն որ յառաջ քան զսա զոր օրհնեն մարդիկ ընդ երկրաւորաց , 'ի յերկրի են և 'ի յերկրի օրհնեն : Իսկ այս օրհնութեամբ բարձրանամք յերկրայնոցս յերկինս . և ընդ երկնայնիսն ձայնակցելով օրհնելք զամենասուրբ զերրորդութիւնն : **Ա**ռ աստի ճանաչել պարտ է զմեծութիւն աղօթիցս , և զլի իմաստիւք բարձրագոյն փառաբանութիւնս : **Ա**ռ առաւել խոհեմ մտօք և երկիրալսածութիւն յօրհնելն մերում , ամենևին զմիտս յերկրայնոցս ամբառնալ , և ընդ երգաբանել բանիս՝ 'ի բարձունս բարձրանալ մտօք , և ընդ բարձրագոյն զուարթնոցն օրհնել զամենեցուն ամ :

**Բ**այց են ոմանք որ առ տարատմութեան մտաց՝ շութափեալք իւրաքանչիւրօր սուանձինն 'ի միտս երագեն զօրհնութիւնս զանխաբար . և յոյժ մեղանչեն անմտութեամբք : **Օ** 'ի թէ ինքեանք չիմանան զոր ասենն , նոյ ո՞րպէս ակն ունիցին ունկնդիր լինիլ : **Ա**ռ մանաւանդ զի հրեշտակական ունիմք զայս աւանդութի , միաբանութի և բարձրագոյն եղանակաւ երգել որպէս նորա 'ի ժամունս յայնմիկ :

**Օ** 'ի յօժարական կամօք և ջերմն սիրով լեցի փառաբանութի

մեր, և մի՛ ՚ի հարկէ, և մի՛ երկմտութեամբ և սառնասառոցց սրտիւ •  
այլ սիրայորդոր ջերմութեամբ և միամտութեամբ փառազարդ գե-  
ղապարելով։ **Օ** ի յայտնի լիցի ամենեցուն հաւատս մեր և դաւա-  
նութիւն և խոստովանութի՛ն ՚ի սուրբ երրորդութիւնն։ **Օ** ի որք  
տեսցեն՝ փառս մատուցանիցեն ամենակալին նոյ, ճշմարտապէս զձ-  
՚ի մեզ հաւատալ։

Իսկ զե՛ կարգեալ եղև սա յամենայն աւուր երգել յեկեղեց-  
ւոջ միաբան հաւատացեաց անխափան սովորութեամբ, ունիմբ զայս  
հաստատագոյն յաւանդութենէ սրբոց հարցն։ **Ա**րք երբեմն ՚ի մի  
ժողովեցան հրամանաւ հոգւոյն սրբոց, զօրացեալ ՚ի քակտումն ա-  
ղանդոց անլուեր շարափառութեն, որ զինեցան ստութեամբ հա-  
կառակելով ընդ դէմ ճշմարտութեան։ **Ա**րք երգեցին զփառաբա-  
նութիւնս զայս առ ՚ի հաստատութի՛ հաւատոց զինի եկեղոց • որն  
զհաւատամբն ՚ի ժողովն նիկիտիան ընդ դէմ մեղրութեանն արիտսի։

**Ս** ան որոց ՚ի վերայ հրեշտակական փառաբանոց յաւետ լիցի  
շինուած հաւատոց դաւանութեանս որնոց և եղև իսկ • զոր յաւետ  
ընկալեալ կաթողիկէ և առաքելական եկեղեցի սուրբ՝ երգէ միշտ  
օր ըստ օրէ հաւատով և յուսով իբր զձձատուր պարգև և զանձ  
անկողոպտելի, և իբր զԹագ արքայական և մատանի դրոշմեալ աջովն  
հայրական։

**(** ի սա՛ մեզ կենաց առ իՅ և պատճառ փրկութեան • սա՛ հա-  
ւատոց խոստովանութիւն և ճշմարիտ դաւանութիւն առ սուրբ եր-  
րորդութիւնն։ **Ս**ա՛ դուռն կենաց մտից առ նձ, և ճանապարհ ան-  
սայթաք առաջնորդելով յարքայութիւնն • սա՛ սորսափելի օգային  
այսոցն, և երկիւզ սանդարամետականացն։ **Ս**ա՛ պարծանք յուսոց առ  
նձ, և նշան բրիստոնէութեան • սա՛ ժառանգ անտի կենացն, և թո-  
շակ ելից մերոց յերկինս • սա՛ ցանկալի հրեշտակաց, և բաղձալն վեր-  
նոցն դասուց։ **Ս**ովաւ օրհնեմք զէռանձնեայ նձութին, և սովաւ  
փառաւորեմք զհամագոց ակրութիին հօր և որդւոց և հոգւոցն նոց  
զփառաւորեալն յամենայնի։

Օրհնութիւն՝ զնի Տէր յերկիցին :

**Փ**առք 'ի բարձունս նոյ : Փառաւորելն զնոյն ունի օրհնութեան զոցոց . որոյ ասէ , \* Օրհնեսցուք զտէր զի փառօք է փառաւորեալ : Այցնայէս և բարեբանելն և մեծացուցանելն զմի և զնոյն դիտաւորութի՛ն ունին սորա ամենեքեան առ 'ի պատիւնոյ . որոյ 'ի սաղմնսն ցուցանի . զի ասէ , \* Յեկեզէցիս բարեբանեցէք զած : և թէ՛ \* Տուք փառս նոյ . տուք օրհնութի՛ն տեսուն նոյ մերոյ :

Եւ սրբուհի կոյսն ընդ մեծաձիր շնորհին և անհամեմատ պարգեւացն զոր ընկալաւ , փոխարէն զայս մատուցանէր ստելով , \* Մեծացուցէ անձն իմ զտէր : Այսինքն՝ օրհնեսցէ , գովեսցէ , բարեբանեսցէ , բարեհամբաւեսցէ , բարձրացուցէ . զի զամենեւեան զսոսա և զսոցին նմանս միով բանիւն բովանդակեաց մեծացուցէն ասելով : Այսպէս և աղօթիցս բան 'ի փառաց սկսանի . զի այլ ոչ ինչ ունի մարդկայինս բնութիւն բարձրագոյն պատիւ մատուցանելնոյ , բայց միայն զօրհնութի՛ն և զփառս . վասն որոյ ասէ , փառք 'ի բարձունս ստուծոյ :

Փառացն բան հատուցանել եղև միօր 'ի շատէ . իսկ 'ի բարձունս ասելովն , զմեղ խրատէ տիրապէս զմտա 'ի յերկրայնոցս տիրապէս 'ի բայք բեցել , և 'ի վեր յերկինս տանիլ առ անձ 'ի ժամ աղօթիցս . ուր բարձրեալն է փառօք , անդ բարձրանալ մեզ մտօք 'ի բարձունս . զի մի լնցի մեղ բանիւ և եթ առ բարձրեալն աղօթել , և մտօք զերկրաւորս խորհիլ : Եւ լինիցի մեզ այն թէ , \* Ճողովուրդքս այս շրթամբք պատուէ զիս , և սիրտք իւրեանց օտարացեալ են յինէն . զուր պաշտեն զիս և ոչ ճմարիտ սրախ :

Օհ որոյ անհնար է միով ահամբ զերկիր և միւսով զերկինս նկատել , այսպէս և ոչ երկրաւոր իրով հաշնդական աղօթս մատուցանելնոյ : Օհ սէր աշխարհիս թշնամութիւն է առ անձ բաւաւեւտարանչին յովհաննու : Եւ միով անձամբ՝ նոյ և երկրաւորիս շէ հրնար 'ի միասն պաշտօնատար լինիլ : \* Չի զինչ նմանութիւն է տաճարի նոյ և մեհենեաց . կամ զինչ հաղորդութիւն է քի ընդ բեւիւրայ : Օհ հակառակ միմեանց տան հրաման . ոմն զհոգւոյ կամս ասէ կատարել , և ոմն զմարմնոյ :

Տայստակ խրատէ զմեզ աղօթիցս բան . զի յորժամ ասիցէ որ , փառք 'ի բարձունս նոյ , և յերկինս խոստովանի զած , զմտաւ ածել պարտի թէ՛ երկնայնոյն նոյ մատուցանէ զփառաբանութիւն . որում հրեշտակք ասիւ և դողութի՛ք կան 'ի պաշտօն սպասաւորութեան :



Ալ սերովութիւնքն և քերովութիւնքն թևարկեալ ծածկէն ղերեսս և զոտս իւրեանց, ղեռահիւսեակ սրբասացու թիւնն ՚ի բարձունս երգելով:

Որք ըստ սրբոցն դիոնիսեայ, ղերեսս ծածկելով յայտ առնեն էթէ բարձրագոյնքն յայ խորհուրդք անգիտելիք են մեզ: Ալ զոտան ծածկելով, ծանուցանեն թէ խորագոյնքն յայ խմաստքն նոյնպէս անհետազօտելիք են առ ՚ի մէնջ: Իսկ միջնովքն թուուցեալք, ղսով բուսականին յայտ արարեալ, ընդունելով յինքեանս յամայնոց շնորհարաշխու թեանցն, և գճամեմատ կշիռ պատշաճաւ որ պիտոյցն:

Ալ արդ՝ էթէ նորա որ անմարմինքն և բարձրագոյնքն են՝ յայնպիսի զգուշութեան և զգաստութեան և բազում երկիւղածութիւնս բերեն յինքեանս, և ահիւ և դողութեամբ պաշտեն հանապազ, ՚ի պա մեզ որ անչափ միջոցաւ հեռի էմք ՚ի նոցայն կորուստութիւնքն, որչափ ևս առաւել պարտ է արթուն և զգաստ լինիլ մտօք ՚ի թամ պաշտամանն, և երկիւղիւ և զգուշութիւն կալ յարթօս. ըստ այնմ, \* ճառայեցէք տեառն երկիւղիւ, և ցնծացէք առաջն նորա դողութեամբ յորհնաբանելն:

Ալ յորժամ ասելք, Փառք ՚ի բարձունս յայ, ոչ թէ ըստ միջոցի երկին և երկրի պարտ է զմտաւ ամէլ զանջայտառութիւն բարձրութեան. այլ՝ անչափ հեռաւորութիւն և անհետազօտելի զորքանութիւն: Օ ՚ի բարձրն՝ բացարձակ բառ է. և զչափ իրիք ոչ նշանակէ. և այս է՝ Փառք ՚ի բարձունս յայ:

Ալ բարձրելոյն յայ ասելով, զատոյց ՚ի պիտակ և ՚ի սուսանունս աստուածոցն որք չեն իսկ ամբ, այլ սուս և սնտիք և հակառակքն յայ, և խաբէբայք և պատճառ կորստեան մըրբելոց մարդկան: Այլ և ոմանք ՚ի մարդկանէ կոչին աստուածք. բայց ոչ ճանարութիւնք, այլ՝ առօրեայք և պիտակաբար. որն այն ղե ասէ, \* Ես ասոցի թէ աստուածք իցէք: Ալ մովսէսի ասացաւ, \* Եդից զքեզ աստուած փարաւոնի:

Ո սան որոց ՚ի բարձունս յայ ասելով զփառս, զատոյց յայսմ ամենայնէ. և զարիւրին ամենայնի յայտ արար բանիւս: Որ անձառ իոնարհութիւնքն երկիր յերկր մեղապարտ և մեղապարտից, մանաւանդ և մահապարտ. ըստ այնմ, \* Լսել զհեծութիւն կապելոց զմարգարէիցն որ ՚ի դժոխս. և արձակել զորդիս մահապարտաց ՚ի կապանաց աստանայի և յաննեբելն նորին ասնջանաց:

Ալ դարձեալ Փառք ՚ի բարձունս ասելով, այնպէս կային մտացն տեսութիւնք, ղե տէրն բարձանց ՚ի հայրական ծոցոց իոնարհեցաւ և էջ ՚ի մեր բնութիւնս միանալով: Ուստի և զօրք բարձանց որ գիտակք էին անձառ տնօրէնութե նորա, և նորա իսկ արժանացան փառաբանութիւնք երգել և ասել, Փառք ՚ի բարձունս յայ և յեր-

կիր խաղաղութիւն : Օ՛ր կ'ոչ սեպհական որդիք մտրդկան համար-  
ձակին օրհնել՝ որ չև՛ ևս են հաւատացեալ ճշմարտագիտ և ճանա-  
չեալ զի՞նձ , որ մարմնով երևեցաւ 'ի բեթլէհէմ՝ հրեաստանի իբրև  
զարեգակն արդարութեան որպէս և էն իսկ :

Եւ յերկիր խաղաղութիւն : Խաղաղութիւն ոչ զերկրաւորս  
ասէ և զմարմնոց խաղաղութի՛ր որ առօրեայ է և անցաւոր . այլ զերկ-  
նային խաղաղութի՛ր որ 'ի վէր է քան զի՞մ միտս որ քիւ պարգևե-  
ցաւ մեզ . զոր առաքեալ յայտ առնէ : \* Արար խաղաղութի՛ր արեամբ  
խաչին իւրոց : Օ՛ր թշնամութիւն մեծ էր 'ի մէջ նոց և մարդկան  
պատուիրանազանցութեամբն :

Ս ան որոց փրկիչն մեր քն զմիջնորմն ցանկոյն քակեաց խա-  
չին իւրով սրբով , և զթշնամին մեր եսպան . ըստ այնմ , \* Որ կայր  
մեզ հակառակ՝ եբարձ զայն 'ի միջոց և բեւեռեաց ընդ խաչափայ-  
տին . մերկեաց զեշխանութիս և զպետութիւնս : Եւ դարձեալ թէ՛  
\* Մինչ թշնամիքն էար՝ հաչտեցար ընդ նոց մահուամբ որդւոց նորա :

Եւ յերկիր ասէ խաղաղութի՛ր : Եւ դարձեալ՝ զե վրդովեալ  
էր իմ՝ որ 'ի միտս իւր և զարհուրեալ յերկիւղէ մահու . և սարա-  
կուսեալ ատանէր յիբրեան թէ յետ աստեացս վճարելոց զինչ լե-  
նելոց իցէ : Եւ և բազմաստուածութե մոլորութի՛ն զի՞մ որ 'ի պատե-  
րազմ՝ և 'ի խառովութի՛ր շարժէր . և չարիւ լցեալ ներքուստ և արտա-  
քուստ , ընդ անձին և ընդ ընկերին բազում՝ հակառակուք բերիւր :

Իսկ եկեալ որդին նոց խաղաղեաց զի՞մ վրդովնունս արկածից  
բանասրկուին . զճմարիտն իմ՝ ծանուցեալ հաւատացելոց , և իւրով  
ճշմարիտ մահուամբն թեթևացոց զերկիւղ մահու յաչս մարդկան :  
Խորախոյս տալով ամենեցուն , քաջալերեցարուք ասէ զե ես յաղթեցի  
աշխարհայնոցս , և զեշխան աշխարհիս կոխան ետու սիրելեաց իմոց :  
Եւ զմահ մարդոց հանգիստ ծանոց և բուն անոց և յանմահութի՛ր  
փոխումն և պատիի և պատուոց առ թ : Որով միաբանեալ հաւատա-  
ցեալք որք 'ի հրեց և 'ի հեթանոսաց՝ գոչելով ասեն , \* Ո՛ր է մահ  
յաղթութիւն քո . ո՛ւր է դժոխք խայթոց քո :

Խաչին կործանեցար , քիւ յամօթ եղեր . այսուհետև ո՛ր մեկ-  
նեաց զմեզ 'ի սիրոյն քի . ոչ մահ և ոչ կեանք և ոչ այլ ինչ պատ-  
ձառք որոշողք . զե ծանեար յետ մահու զեանս և զանմահութիւն :  
Եւ այսուհետև խրախոյսեալ ուրախ եմք յուսով հանապաղ . զե թէ  
կեամք և եթէ մեռանիմք սեառն եմք : Ըստ է ,

Յերկիր խաղաղութի՛ր 'ի մարդիկ հաճութի՛ն : Ի նոյն միտս վե-  
րաբերի և այս , զե խաղաղութի՛ր վասն հաճելոց հաստատի և անտի  
գոց յառաջ : Օ՛ր ընդ որս հաճի որ , առ նոյն և խաղաղութիւն

Հաստատե՛, որչա ցուցանէ ազօթիցն բան ասելով, ՚ի մարդիկ հաճու-  
թիւնն : Ար եղև յայ ՚ի վեր քան զարժանն մեր , ըստ տերունական  
հրամանին . \* Հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւնն : Եւ  
դարձեալ թէ , \* Այնչափ սիրեաց անձ զաշխարհ , մինչև զորդին իւր  
միածին ետ ՚ի մահ խաչն վասն կենաց աշխարհի :

Օհ մարդկային բնութիւնն ոչ ինքնաջօժար կամօք չարացա-  
որոյ սատանայ , սլլ դաւածանութիւն և պատրանօք բանասրկուին :  
Այս ան որոյ ողորմութեան արժանի գտաւ յայ իրաւանցն և որ-  
դար դատաւորութեան . որք և յետ մեղանացն՝ զղճումն ապաշխա-  
րութեան գտին , որով հասանիլ կարացին փրկութեան : Եւ այսու-  
տուաւել հնարաւոր երեւցաւ հողանիւթեաց բնութիւնս և իմաստ-  
նագոյն առիւլաւութիւն , բան զանմարմին և զհրանիւթեայ բնութիւն ,  
զի յետ մեղանացն՝ ապաշխարութեամբ հաճոյ գտան այ : Եւ ամե-  
նապես բնութիւնն այ որ յառաջ քան զինիւն դիտէ զամ , հաճե-  
ցաւ այսպիսեացս ասնել զփրկագործութիւն միջնորդութիւն որդւոյ  
իւրոյ . որոյ մահուանէն հաճեցաւ ընդ մարդիկ , կենագործելով ՚ի  
մահուանէ ՚ի կեանս :

՚ի մարդիկ հաճութիւնն : Այս ան զի մղլրեալ և դանդաջեալ  
չըջէին դիւանական խարմամբ ան ազգ մարդկան . զարարիչն թողով ,  
արարածոց մատուցանելին ղերկբարագութիւն , և հրեշտակացն զայն  
տեսանելով , մեծաւ բարկութեամբ խռովեալ կային ընդ նոսա :  
Իսկ ՚ի ծննդեան փրկչին՝ իջեալ զօրոց երկնաւորաց մեծաւ խըն-  
դութեամբ յերկիր խառնեցան ընդ մարդիկ և հաշտեցան ընդ նոսա  
հրամանաւ արքային յի : Եւ երգալիցեալ ասէին , Փառք ՚ի բարձունս  
այ , և յերկիր խաղաղութիւն , ՚ի մարդիկ հաշտութիւնն :

Օհ այլ ոչ հեղուն ծնօգք զանարատ արիւնս տղայոց իւր-  
եանց՝ դիւաց պղծոց ՚ի վերայ երկրի : Ար և ամբաստան լինի մար-  
գարէն , \* Չոհեցին ասէ զուստերս և զդաստերս իւրեանց դիւաց , և  
հեղին զարիւն անբիծ : Փոխան որոյ ՚ի ձեռն միածնին և զայ հաշ-  
տութիւն յաւեա ընկալաք , ըստ առաքելոյ , \* Հաշտեցաք ընդ այ մահ-  
ուամբ որդւոյ նր . և արար խաղաղութիւն յերկինս և յերկրի , զհրեշ-  
տակաց և զմարդկան տու միմեանս ասէ , և զմիջնորմն ցանկոյն քակելով :

Օհ միաբանեալ հրեշտակք և մարդիկ օրհնեն գովէն և փա-  
ռաւորեն զաստուած անլուելի ձայնիւ , որ եկն ՚ի կեցուցանել զմեզ :  
Եւ ոյս մինչև ցոյս վայր հրեշտակական է օրհնաբանութիւն , զօր ՚ի  
ծննդեան փրկչին երգէին : Եւ եղաւ ՚ի սկիզբն ազօթիցս իբր հիմն  
հաստատուն և անապարգև յօրհնութիւն յայս . յորոյ վերայ շինեալ  
եղև շինուած հոգեւոր յոյժ գովելի և պատշաճաւոր :

Օհ նոյն տեր է որ շնորհեալ ազգէ զիւրն յիւրան ըստ պատ-

շածի պիտոյից յիւրարանչիւր ժամանակս իւրով բարերարութեն և առաւել մարդասիրութեն ՚ի փառս և ՚ի գովութիւն անուանն իւրոյ սրբոյ : Եւ որ զինի հետակայ բանս է՝ յառաքելոցն ասի երգեալ :

**(** ) Երջնութիւն թեղ ՚ի բարձունս : Եւ զի երգէն ևս յայտմ վայրի սյսպիսի իմն՝ օրջնութի տեառն ՚ի բարձունս . որ է այլ յարմար և պատշաճագոյն ըստ հրեշտակականի օրջնութեանն . որն թե ուսանիմ ՚ի զուարթնոցն հրեշտակական փառաբանութեամբն , և թէ տուաւ ծննդեամբն թի յերկիր խաղաղութի և ՚ի մարդիկ հաճութի :

Ս ասն որոյ երկնայինն փառք երգէին ՚ի բարձունս այլ : Օ նոյն և մեր ձայնակցելով երկնայնոցն ասեմք , օրջնութի տեառն ՚ի բարձունս : Սրն թէ ասիցէ թէ՛ զինչ այլ ունիցիմք փոխարէն հատուցանել երախտացն այլ , բան թէ զոր ՚ի հրեշտակացն լուսաբ զփառաբանութի , ընդ նոսին և մեր օրջնութի ՚ի բարձունս այլ մատուցանեմք ընդ մեծածիր պարգևացն որ առ մեզ :

Օրջնութի ասէ թեղ ՚ի բարձունս . օրջնեալ էս ար արձ մեր : Սրն մարդարէն ասէ , \* Օրջնեցէք զտէր յերկնից . օրջնեցէք զնա ՚ի բարձանց : Եւ յայէս և բան աղօթիցս զնոյն ցուցանէ թէ՛ օրջնութիւն թեղ երգեմք միշտ ՚ի բարձունս . որ էս յանմարմնոց հրեշտակացն օրջնեալ ՚ի բարձունս . և ՚ի մէնջ մարմնաւորացս նոյնպիսի ձայնակցութեամբ բարեբանեալ տէր աստուած մեր վասն անձաւ բարերարութեանդ :

Օ ի թէ վասն մերոյ փրկութե հրեշտակք ՚ի բարձունս օրջնեն զած հանապազ ըստ որում ենն մարդասէրք և արձաւորք որպէս վկայէ մեծն արձաբան : Եւ և տէրունական հրամանն յայտ առնէ . \* Ուրախութի է ասէ յերկինս առաջի հրեշտակաց այլ ՚ի վերայ միոյ մեղաւորի որ սպաշխարիցէ : Եւ պա սրջապի ևս առաւել մեր ՚ի փրկութեան մերում պարսիմք ուրախութեամբ մեծաւ օրջնեալ զած :

Օ ի արդարևն ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր , և ոչ ըստ տնօրէնութե մերում հատոյց մեզ . այլ ըստ իւրում առատ բարերարութեանն գթացաւ ՚ի մեզ :

Օրջնութիւն թեղ ՚ի բարձունս . օրջնեալ էս տէր արձ մեր : Եւ ի սոյս՝ օրջնեալ եկեալ անուամբ տեառն . որն թէ զոր հրեշտակքն ասացին , \* Ճնաւ ձեզ այսօր փրկիչ : Օ նոյն օրջնեն և խոստովանին եկեալ յանուէն հօր ըստ իւրում տեառն բանի , \* Ես եկի յանուն հօր ինց : Եւ սոպա դարձեալ զճայր օրջնեն . և երկոքեան բարի են . զի ՚ի փառս տեառն կատարին զոր և ասէ որ :

Օրջնեալ էս տէր արձ մեր : Եւ տէր և արձ ասելովն , զտիրական և զարարչական անուէն յայտ արար . զի տէր անուէն արբունա-

կան անուն է որ զտիրելն և զարդարապէս դասելն նշանակէ . ըստ այնմ , \* Տէր թագաւոր մեծ ՚ի վերայ ամ երկրի : և թէ \* Գասէ ար զժողովուրդ իւր : Կակ ան անունն արարչական է , որ զնախանամեւն յայտ առնէ ըստ փիլիսոսփայի . և առ մեզ ստուգաբանի թէ աստ էա՞մ զմեզ :

Օ ի որո՞ք արարչու թէն յոչ էից ՚ի լինելու թի էա՞մ զեղեալքս ամ , նոյնպէս և զ թու թէն միշտ խնամէ . զի սովորու թի է արարչին խնամ տանիլ արարածոյն : Ա ասն որոյ թեպէտ և ամենեցուն է ար և անձ արարչագործու թէն և նախախնամու թէն՝ սակայն սեպհական մեզ տեմք օրհնեալ էս տէր անձ մեր , վասն առաւել սիրելոյն զմեզ : Արո՞ք մարգարէքն՝ ան իսրայէլի կոչէին զամենեցուն անձն վասն խնամոցն որ առ նոսին :

( ) օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ . խոստովանիմք տէր զքեզ . և երկիր պագանեմք քեզ : Գարձեալ կրկնէ զօրհնութեանս բան հանդերձ գովու թէ և խոստովանու թէ : Այլ էր վասն . զի առաջինն իբր բացարձակ ինն էր և աննիշ բառ , օրհնութի քեզ ասելով . և թէ՛ օրհնեալ էս տէր անձ մեր : Արպէս այն զի ասի ՚ի սաղմոսին , \* Գեզ վայելէ օրհնութի անձ ՚ի սիօն : Իբր թէ ասէ , պաշաճ է քեզ ասլ օրհնութիւն , նոյնպէս և այն որ ասաց , օրհնեալ էս տէր անձ մեր : Իբր թէ յամենեցունց օրհնեալ էս յերկինս և յերկրի :

Այս անձ անաւել մտերմու թէ ցոյցք . այլ որո՞ք թէ ասիցե որ առ որ , թէ դու յամենեցունց պատուեալ էս : Այլ թեպէտ սովոր եմք զի այսու միշտ օրհնեմք դեմ՝ ասելով օրհնեալ էս ար անձ . այլ առաւել սիրոյ բացայայտիչ այս է՝ զի ասեմք , օրհնեմք զքեզ . ոյսինքն՝ պատմաբանեմք և առաւել տարածանեմք յամենեսեան զբո բարեբարութիւ . ոչ ծածկեմք զանչտի մարդասիրութիւնդ զոր առ մերս բնութի ցուցեր . այլ միշտ օրհնելով՝ անցուն ծանուցանեմք :

Գովեմք զքեզ : Ըստ այնմ , \* Գովեա՛ երուսաղէմ՝ զտէր : Այսինքն՝ զմեծութիւն փոռացն պատմեա՛ . զսքանչեղիսն յայտնեա՛ : Ա ՚ի նմանիք սպերախտ ծառայից զացօղ երևիլ փառաց տեսուն , այլ բարեմիտ և հաւատարիմ՝ պաշտօնէից , որք մեծագոյն գովու թէ բարձրացուցանեն զպատիւ տեսուն իւրեանց :

Խոստովանիմք տէր զքեզ . և երկիր պագանեմք քեզ : Ի նոյն միտս բերի և այս ըստ մարգարէին . \* խոստովան եղերուք տեսուն զի բաղցր է զի յաւիտեան է ողորմութի նորա : Արպէս թէ ասել զքեզ միայն խոստովանիմք տէր տերտնց և անձ աստուծոց , արարիչ երկնի և երկրի , և նախախնամիչ ամենեցուն , որ կրես զամ բանիւ զօրութի քո արարող . և զանգործս մարդկան տեսանես , և զքեալ

ունիս ՚ի դարձութեան քում զամ՝ մինչև ՚ի դատարի բանս և ՚ի վատ-  
թար խորհուրդս :

**Եւ** կարգեաց ասէ օր , յորում դատէ զգաղտնիս մարդկան և  
հատուցանէ ըստ գործոց : **Ա**սև ևս՝ զի խոստովանութե բան կրօ-  
կին է . մի՛ դաւանութի՛ հաւատոյ զոր նոյ ընծայեմք , զոր և առաջե-  
կայս ցուցանէ բան . և երկրորդ՝ զվեղան զըմամբ ասել և զգոր-  
ծեցեալ յանցանան պատմել առաջի ուրուք : **Ի**սկ երկրպագութի՛ն  
պտուղ է հաւատոյն և յայանութի՛ն խոստովանութեան , սոս է ըստ  
խնամ բանիս խոստովանիլն որ ասէ ,

**Խոստովանիմք** նոր զքեզ . և երկիր պագանեմք քեզ : **Օ** ի նձայ-  
ին բնութի՛ն միայն է երկրպագութեան արժանի , ըստ տէրունական  
հրամանին որ առ բանասրիւուն պատասխանեաց : \* Գրեալ է ասէ՝  
տեառն նոյ քում երկիր պագցես , և զնա միայն պաշտեսցես : **Օ** ի  
արարածական բնութի՛ն ոչ է երկրպագութե արժանի , ոչ հրեշտակի  
և ոչ սրբոյ ուրուք . սոյ միայն նոյ պարտ է մատուցանել երկրպա-  
գութիւն . որ արարիչն է երկին և երկրի , որ անեղանելի բնութի՛ն  
է . և միայն ունի զանանհուութի՛ն բնակեալ ՚ի լոյս անմատոց :

**Օ** ի երկրպագութի է յերկիր ՚ի խոնարհ անկանիլ որ վայելէ  
միայն նոյ , վասն որոյ ասէ , քեզ երկիր պագանեմք : **Ա**րդ թէ ասի-  
ցէ , յերկրպագելս խոստովանութե և օրհնութե՛ յայանի քարոզեմք  
զքո տէրութիւն մեծնեցուն , զամենեսեան առնելով քեզ փառաբա-  
նիչս և երկրպագուս ճշմարտացես :

**Փառաւորեմք** զքեզ : **Բ**ճ անկարօտ է փառաց . զի միշտ լնով  
զիւր պատիւ և զփառք ունի . սոյ զմեքմութի՛ն սիրոյ ՚ի մէնջ պա-  
հանջէ փառաւորելովն . ըստ այնմ , \* Տնւք փառս նոյ . տնւք օրհ-  
նութի՛ն տեառն նոյ մերոյ : և թէ՛ \* **Զ**ինչ խնդրէ ՚ի քէն ակր նձ-  
քո խորայէլ . բայց միայն երկնչիլ ՚ի տեառնէ նոյ քումնէ , և որ ՚ի  
կարդիւն : **Եւ** առաքեալ թէ՛ \* փառաւոր արարէք զամ՝ ՚ի մահկա-  
նացո մարմինս ձեր : **Օ** ի ոչ միայն բանիւ պարտիմք փառաւորել  
զամ՝ , սոյ և գործով և խորհրդով : \* Տեսցեն ասէ տէրն զգործս ձեր  
բարիս՝ և փառաւորեսցեն զնոյր ձեր որ յերկինս է : **Եւ** մարգա-  
րէն ասէ , \* **Ա**ստուած փառաւորեալ է ՚ի խորհուրդս սրբոց իւրոց :

**Եւ** զնմոր յաւիտենիցն նձ ՚ի մահկանացու մարգոց փառաւո-  
րի , յորժամ կամք իւր ՚ի մեզ կատարի . որպէս ուսոց տէրն ազօ-  
թեւէ՝ \* Եղեցին կամք քո ոպ յերկինս և յերկրի : **Եւ** զինչ են կամքն  
նոյ . մեր փրկութի՛ն : \* **Ա**յս են կամք հօր իմոյ զի մի կորցէ որ ասաց  
տէրն : և զի՛ \* **Կ**ատարեցից զկամս այնորիկ , որ առաքեացն զես :  
**Ա**ր էր փրկութիւն ոչխարհի :

Բայս և մարդկան է սովորուծի՝ զի փառաւորել ասի յորժամ  
 ՚ի կատարուան կամաց որ հասցէ, ասէ՝ փառաւորեցայ: Բայսդէս և  
 անձ կամի ՚ի մէջ փառաւորել միշտ բանիւ և դործով ՚ի լուսն կա-  
 մաց իւրոց փրկուծի՞ մերով: Օայս ուսուցանէ ազօթիցս բան որ  
 ասէ, փառաւորեմք զքեզ:

Առն թէ ասիցէ, թէ կամեմք զի դու ար զմեզ փառաւորես,  
 որնք այն զոր և պետրոսն ասէր, \* Մէք թողաք զամ և եկաք զինի  
 քո, արդ զինչ լինիցի մեզ: Արոց զմեծամեծ շնորհս և զյաւիտե-  
 նական կեանս խոստացաւ: և թէ՝ \* Ես որ զինս սիրեն՝ սիրում:  
 Եւ որ զքանս իմ պահիցէ, էս եկից և ընթրեցից սուսմա՝ և  
 նա ընդիս:

Պահանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոց: Գոհուծին  
 զոր մատուցանէ մարդ ան, երկու մեծամեծ բարիս վճարէ: Մի՛ զի  
 զանձ յորդորէ բարեգործել միշտ ևս առաւել գոհուծին. և միւս՝  
 զի զամենեցուն միտս զարթուցանէ բազմանօք ՚ի փափագ. և ՚ի սերն  
 ան, ըստ այնմ, \* Պատմեցից զանուն քո եղբարց իմոց, ՚ի մէջ եկե-  
 ղեցւոյ գոհացայց զքէն: և թէ՝ \* Պատմեցից զտեսանէ ազգի որ  
 գալոց իցէ. պատմեցից զարդարուծի նորա ժողովողէան, որ ծնա-  
 նեւրց իցէ զոր արար ասէր: և թէ՝ \* Գոհացայց զքէն տէր բողոքով  
 սրաիւ իմով, պատմեցից զամ սքանչելիս քո: Եւ այլ սոցնպիսիս:  
 Բայս և զանձ պարտական տանէ գոհուծիւնն և յորդորէ ՚ի պար-  
 գեատուծիւնն:

Բայց գոհուծի տեսուի կրկին է. նախ՝ զի միշտ ՚ի մտի որ ու-  
 նելով զերախտիսն ան, գոհացի զանանէ. ըստ այնմ, \* Եղիցին  
 պատգամքս այսօրիկ ՚ի սրաի քում. և խոհասցես սոքօք ՚ի նատիւ ՚ի  
 տան, ՚ի գնալ ՚ի ճանապարհի, ՚ի ննջել և ՚ի յառնել: Եւ զաւիթ  
 ասէ, \* Յօրէնս տեսուն են կամք տան արգարոց, և յօրէնս նո խոր-  
 հի ՚ի տուէ և ՚ի դիշերի: Արով յաճախէ միշտ ՚ի գոհուծի. և առա-  
 բեալ ասէ, \* Գոհացողք լերուք զան և զհօրէ նովա:

Եւ ապա արտաբերական բանիւ ՚ի շտեմարանէ մտացն արտաքս  
 բերեալ զամբարեալն գանձ որ է տիրապէս գոհուծիւնն, յամենե-  
 ցունց լելիս գոհացի զպարգեացն ան մեծապէս. այս է զոր ասէ,  
 Գոհանամք տէր վասն մեծի փառաց քոց:

Մեծ փառք ոչ է թէ միայն զայն ասէ, զոր միշտ ունի անձ լիով  
 անթերի, այլ և զոր մեծագոյն բարեբարուծին իւրով միշտ նա-  
 խախնամէ զարարածս իւր և փառաւորի յամենեցունց. ըստ այնմ,  
 \* Մեծ է ար և օրհնեալ է յոյժ: և թէ՝ \* Մեծ է ար մեր և մեծ է  
 զօրուծի նորա: և թէ՝ \* Ճաճկեցին զերկինս վայելուծի փառաց

նորա : և թէ \* Համբարձու մեծ վայելչութիւն քո 'ի վերայ քան զերկինս : և \* Վասն այտորիկ խոստովան եղէց քեզ 'ի հեթանոսս , և անուան քում սաղմնս ասացից : Աւ անանխանքն , \* Փրկեա զմեզ վասն սքանչելեաց քոց . և փառաւոր լիցի անուն քո յաւիտեան :

Պահանամք տէր զքէն ասէ վասն մեծի փառաց քոց : Աւ նոյ փառացն մեծութի զոր ասէ , ոչ թէ այնպէս ասէ որոյ մեծ ինչ առ փոքր համեմատելով , իբր մեծագոյն լեառն առ ճնչին հասն մանանխոյ , կամ համատարած ծով առ թոյզն շիթս անձրեի : Այլ զանչափութի և զանհասութի նշանակէ ըստ առաքելոյ , \* Ո՛վ խորք մեծութե և իմաստութեանն նոյ , որոյ զի առանց քննելոյ են դատասանք նորա , և առանց զննելոյ են ճանապարհք նորա :

Օր և եսայի յայնապէս ցուցանէ : \* Ո՛ չափեաց ասէ ամիով իւրով զՊուրս , և զերկինս թզաւ և զերկիր ամենայն քլաւ : Ո՛ կռեաց զէրկինս կռով , և զդաշտս կռորդով : Աւ այն որ պատմի անկասկածելի դատաստանին սաստ . \* Ահաւասիկ տէր ինքնին եկեցէ ասէ , և ո՛վ ժուժկոյեցէ առուր մտի նորա . կամ ո՛վ հանդարտեցէ առուր յայտնութե նորա : Աւ այս նամ զանհամեմատ մեծութի փառացն նոյ յայտ առնէ . ոն և հետակայ բանս ցուցանէ : Մինչև ցոյս վայր առաքելոցն ասի երգս . և աստի սկսանի այս հետակայս բանք :

Տէր թագաւոր սուրբդ երկնային և նամ հայր ամենակող : Տէր ասելոյն՝ զտիրելն ամենայնի յայտ արար . ըստ սարմոխն , \* Տեառն է երկիր լիւ իւրով . աշխարհ և նամ բնակիչք նորա : և \* Տէր տէր մեր զն՝ սքանչելի է անուն քո յամ երկրի : Աւ թագաւորի է պատժելն և պսակելն . ըստ այնմ , \* Տէր մեռուցանէ և տէր կեցուցանէ . իջուցանէ 'ի դժոխս , ի՞ր 'ի գուր գերեզմանին և հանէ :

Այլ և տէր և թագաւոր ասելոյն՝ զյաւիտենական մշտնջենաւորութին յայտ արար , ըստ առաքելոյ . \* Երանելին և միայն հօրն թագաւորն թագաւորաց և տէրն տերանց . որ միայն ունի զանմահութիւն բնակեալ 'ի լոյս անմատոց : Աւ այն զոր ասէ , \* Ե՛ս եմ էս եմ . և մինչև կարի իսկ ծերասջիք՝ էս եմ . և ո՛վ է իբրև զիս . յառաջ կացցէ , ճայն տացէ . պատմեցէ և պատրաստեցէ : Աւ զոր այլ ուր ասէ առաքեալն , \* Թագաւորին յաւիտենից միայնոյ իմաստ նոյն նոյ 'ի ձեռն յի՛ քի՛ որում փառք յաւիտեանս , ամէն :

Սուրբդ երկնային : Մ՞ 'ի վեր է քան զարբութի : այլ ըստ մերում սովորութե ձևացուցանէ զբանս . զի սուրբ է նամ՝ ոչ որոյ մեզ է հասանելն . այլ որոյ ինքեան միայնում է գիտելն : Օ՛հ մեք սուրբ կոչեմք զմարուր հոգի և զառաքինի անձն , այլ և զերկինս նք



ասեմք յորժամ ջինջ լինի յամիոց : Դակ զոսկի մարուք և զարծաթ սուրբ . զպատմունճան պոյծառ , զապակի և զՏայելն ջինջ և յատակ , և զայլ ինչ ՚ի նիւթականաց որ յաղաց մարուք և զերծ իցէ , սովորութի է մարդկան սուրբ կոչել . այլ ոչ են սորա տիրապէս նք , այլ պիտակաբար կոչին :

Իսկ ամ ոչ է այսպիսի նք . այլ զեր ՚ի վերայ քան զայս ամ , անխմանալի և անհասանելի : Աչ որն սերովբէքն սուրբ կոչին կամ քերովբէքն բազմաչեայքն և վեցթեանքն . այլ և ոչ նոցա է հասանելի որբանութիւն սրբութեանն այ , այլ միայն ասիւ և զողութի կան ՚ի պաշտօն իւրեանց , հասնապազ կարօտեալք ընդունելութեան յաւելուածոց շնորհի :

Իայց ինճ թուի՝ նք . ՚ի վերայ այ զպարզ և զյատակ և զանփոփոս բնութիւնն ասէ . ըստ որում և սուրբդ երկնային ասաց : Ի յսինքն թէ՛ որն բարձրութին երկնի երկար միջոցաւ հեռի է յերկրայնոցս և մեծութիւն նորին գերազանց , և ս առաւել անբովանդակելի հեռաւորութեամբ քոյդ սրբութի որիչ և անհաս է ՚ի մէնջ . այս է որպէս կարծեմ սուրբդ երկնային :

Իճ և հայր ամենակալ ասի : Իւ պայպէս սուրբդ երկնային և ամ հայր ամենակալ : Իւ վայելուչ է . զի որիչ է ՚ի ստորայնոցս աստուածոց . և երկնային խոստովանի միայն ամ որն և ասէ : \* Հայր գթութեանց է և ամ ամ մխիթարութեանց՝ ըստ առաքելոց : Օ ՚ի որն արարաբար ստեղծ , նոյնպէս և հայրաբար գթայ ըստ իւրում անբովանդակելի գթութեանցն . և մխիթարէ յիւրաքանչիւր պէտս զամենեսեան ըստ կրկնակի վտանգից : Օ ՚ի թէ մարմնական հարբ գթան յորդիս՝ և ձեռակերտի իւրեանց խնամ տանին . ապա որչափ և ս առաւել որ աղբիւրն է գթութեանց և շտեմարանն ամ մխիթարութեանց աստուածային նախախնամութիւնն :

Իայց գթութեանն տեսակ կրկին է և ոչ մեկին . զի զարարչական խնամն ՚ի վերայ ամենայնի ունի ըստ իւրաքանչիւր պատշաճ պիտոյից : Իսկ զհայրական գութն արկանէ տիրապէս ՚ի վերայ նք և երկիւղածաց իւրոց : \* Որպէս գթայ ասէ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց , այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր : և թէ՛ \* Չկամն երկիւղածաց իւրոց առնէ տէր . աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա : Պահէ տէր զամենեսեան՝ որ սիրեն զնս արախ :

Իճ ասէ և հայր ամենակալ : Ի յսինքն՝ զամ ունօղ զգթութի և զողորմութի , զնախախնամութի և զամ պէտս բարեգործութի : Որն և երեմիաս ասէ , \* Ամենակալ մեծ անունդ տէր . աչք քո բաց են յամ ճանապարհս որդւոց մարդկան , տալ իւրաքանչիւր ըստ ճա-

Նորարկացի իւրեանց : Ալ գարձեալ՝ ամենակալ է զօրութիւնս և այսպէս • զի փակէ զգուլթ նախախնամութեանն յարարածոցս , և ոչ որ է որ բանալ կարիցէ : Ալ գարձեալ՝ իւրով առատ ողորմութեամբն բանայ զգորուս մարդասիրութեանն ՚ի վերայ արարածոց իւրոց , և ոչ որ է որ ընդ դէմ՝ փակել կարիցէ : \* Ասաց և եղէն հրամայեաց և հաստատեցան :

Ալ յորժամ կամի փոփոխել , ունի զամբ . և հրամանի նորա անսայ ամ ինչ : Ամենակալ զօրութիւն է որ հաստատեաց զհաստատութիւնն ՚ի բարձունս • և ձգեաց զվերնայարկն ՚ի վերայ քան զնա : Տարածեաց զօր իբրև զառագաստ , և հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց . և կախեալ ունի զհիւսիսի զոչնչիւ ՚ի փառս անուան իւրց և ՚ի գովութիւն ամենազօր տէրութեան :

Տէր և որդի հօր միածին յս քս : Ասաց յառաջագոյն վասն հօր , տէր թագաւոր • նոյնպէս և աստ դնէ զտիրական անունն ՚ի վերայ որդւոց ասելով , տէր և որդի հօր միածին • այսինքն՝ թէ նոյն տէրութեանն փառակից և պատուակից է : Իսկ որդի հօր ասելով , զբնութեանակցութիւնն ընդ հօր յայտ աւնէ , զի ամ որդի հարազատ՝ զանունութիւն հօրն բերէ յինքեան :

Այլ ՚ի մարմնաւոր հարց և որդւոց միջի բազում իրօք զանազանութիւն գտանի • ասուելովութիւն , կամ պահառութիւն : Իսկ աստ ոչ այնպէս • այլ՝ ամենայնիւ հաւասարակից է որդի հօր , ծոցածին և անժամանակ ծնունդ • տնձառարար ծնեալ ՚ի հօրէ յառաջ քան ըր յաւիտեանս : Ալ յեղանակ ծննդեանն ինքեան և հօր միայն զիտելի , և ոչ ումեք հետագօտելի յեղականացս ըստ տէրութեան հրամանին : \* Ոչ որ գիտէ ասէ զորդի՝ եթէ ոչ հայր • և ոչ զհայր որ գիտէ՝ եթէ ոչ որդի :

Տէր և որդի հօր միածին : Արդի ասէ հօր • զի առինչունակ անուն է • որով զհաւասարութիւն յայտ աւնէ ընդ հօր և զճշմարտութիւն ցուցանէ : Օ ի որդի միշտ որդի է , և ոչ երբեք եղեալ հայր • որոյ հայր միշտ է հայր , և ոչ երբեք որդի լեալ : Օ ի այս մարդկան է սովորութիւն եղականի , որ երբեմն որդի եղեալն , այլ երբեմն հայր լինի :

Իսկ ամայն բնութիւնն ոչ այսպէս • այլ միշտ մի և նոյն է անփոփոխելի • զի ոչ փոխարկեալ լինի հայր յորդի , կամ որդի ՚ի հայր : Ալ թէպէտ մի են բնութիւնս հայր և որդի , սակայն անուամբ որեչ են և զանազան : Օ ի հայր ծնող ասի և ոչ ծնունդ • և որդի ծնունդ ասի և ոչ ծնող • և տիրապէս որդի , զի հայր ոչ եղև երբեք : Արոյ և հայր տիրապէս ասի հայր , զի որդի երբեք ոչ է եղեալ • այլ

միշտ է հայր որպէս որդի միշտ որդի է :

Տէր և որդի հօր միածինն : Ղեն զմիածինն , զի յայտ արանցիկ թէ այլ ծնունդ ոչ գոյ հօր . այլ նոյն և մին միայն ըստ միութեանն հօր և ըստ բնութեանն : Աւ եթէ միածին և ծոցածին , ապա և հօր հաւասար և ոչ իւրիք նուազեալ : Օ ի թեպէտ և պատճառ է հայր որդւոյ անձառ ծննդեամբ , և որդի յառաջ եկեալ ՚ի հօրէ անբննաբար և անթամնակապէս , սակայն ոչ կրսերութի կամ նուազութի երբէք տեսնի յորդի :

Այլ որչափ հայր հայր է , որդի որդի է . զի հայր որդւոյ է հայր , և որդի հօր է որդի : Աւ միածին է , զի երկրորդ ոչ գոյ . ունի անձաբանն սակ , \* Հօր սահման և բան և շարժեցեալ կնիք վասն միածին գորոցն : Աւ այս մինչև ցայս վասն հայրական ծննդեանն փոքր ՚իշատէ ըստ մերում փանաքի տեսութեանն . զի ՚ի սրբոցն յորով և բարձրագոյն բանք գոն ասացեալ վն այսորիկ : Ասկ հետակոյ բանն զկուստիան ծննդեանն յայտ առնէ՝ յն քն ստելոյն :

Աւ յան անուն , յեբբոյականէն ՚ի մերս փրկիչ թարգմանի ըստ հրեշտակին որ առ յովսէփ : \* Մի երկնչիք սակ առնուլ առ քեզ զմերիամ կին քո . զի որ ՚ի նմոյն ծնեալն է՝ ՚ի հոգւոյն սրբոյ է . ծնցի որդի և կոչեացեն զանուն նորա յիսուս . զի նա փրկեացէ ըզ ժողովուրդ իւր ՚ի մեզաց իւրեանց : Օ նոյն և առ հովիւան սակք հրեշտակն , \* ճնաւ ձեզ այսօր սակ փրկիչ որ է օծեալ տէր ՚ի քաղաքի դաւթի : Այսպէս և զարարիտ հայրն յովհաննու , \* Օրհնեալ տէր ան իսրայէլն սակ որ յայց ել մեզ և արար փրկութիւն ժողովուրեան իւրոյ . և յարոյց մեզ եղջիւր փրկութի ՚ի տանէ դաւթի : և թէ՛ \* Տալ մեզ առանց երկիւզի զփրկութի ՚ի ձեռաց թըշ Եսայեաց մերոց :

Աւ քնն անուն օծեալ կոչի , այսինքն՝ անձ և մարդ . զի բանն մարմին եղև ըստ աւետարանչին , և անձութեամբն էօժ զմարմինն : Օ ի քնն ոչ սոսկ մարդկութեան է անուն և ոչ լոկ անձութե . այլ անձ և մարդ ստի . այսինքն՝ յերկուց միացեալ անշփոթաբար և անձառապէս : Այ որպէս ջուր ընդ գինի խառնեալ և շփոթեալ և յերկոցունցն զրկեալ բնութեանց . զի ոչ ջուր է և ոչ գինի ՚ի խառնիլն ՚ի մասին : Այլ անձային բնութիւնն ՚ի միաւորիլն ընդ մարմնոցն , զերկոցունց յատկութիւն անշփոթ պահեաց որպէս հոգի մարդոյ ՚ի մարմնի . թեպէտ և տիրապէս ոչ է ապացոյց : Օ ի բունն այ մարմին լինիլն ՚ի վէր է քան զհասողութի մտոց , քնաղ և զարմանալի խառնումն : Արդէս սակ մեծն գրիգոր անձաբան . \* Այլ նոր խառնմանս . ո՛վ սրանցելի խառնուածոյս : Աւ ՚ի բանէն և ՚ի մարմնոցն՝ է մի քն ճշմարտապէս , որպէս ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոց մի մարդ . որն

առաքեալ սատ, \* Մեզ մի է անձ հայր յորմէ անձ. և մի տէր յս քս որով ամենայն:

Յամօթ լիցին երկաբնակքն. զի առաքեալ որոյ մի անձ զհայր ասաց առանց մարմնոց, նոյնպէս մի անձ յս քս զորդի ասաց մարմնով: Որով յայտ է թէ յետ անձառ միաւորութե մի է և երկու սչասի. զի զոր առաքեալն մի սատ, ո՞նչ է որ յանդգնի յերկուս բաժանել: Եւ տէրն առնիկողինոս ասաց, \* Ո՞չ որ ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոց որ էն յերկինս:

Յայտ է թէ զբանն ասաց որդի մարդոց. զի բանն էջ յերկնից և սչ թէ մարմինն: Եւ հայր վկայէր ՚ի յորդանան և ՚ի թաբօր, դա է որդի իմ սիրելի և սչ թէ որ ՚ի դմն. որ զվրութին ցուցանէ և զերկու ասօզն յանդիմանէ: Օ՞ր յորժամ անձ հայր, եզական անուամբ դա սատ, որ յայտնապէս մից բնութե է յայտնիչ. ո՞նչ է որ յանդգնի երկու սատ:

Եւ գիտնէսիոս սատ, \* Առ բաժանականս մեր ըստ բնութեան մից յառաջ եկեալ: Եւ դարձեալ սատ, \* Մի բնութի և պարզութիւն և թաքնութիւն յս: Եւ ազէքսանդրացին սատ, \* Ջինուորքն զպատմուածանն սչ կարացին պատառել. իսկ հերիտիկոս զորդն ուց պատառել կամելով և բաժանել յերկուս, զայն որ միայն անբաժանելին է: Եւ վկայութի մից բնութեանն քի յորովք էն ՚ի սուրբ գիրս ով կամիցի ուսանիլ. իսկ առայժմ այս բաւական է. զի \* Տնւր սատ իմաստնոյն պատճառս, և իմաստնագոյն լիցի ՚ի բարիս:

Եւ սուրբ որդի: ՚ի կէս օրինակս ՚ի տեղիս յայս փոխանակ որդւոց այսպէս ունելով բանին, և սուրբ հոգի. և ապա դարձեալ յորդի սկսանի, և ՚ի հոգի աւարտէ. զի սկիզբն ՚ի հայր սրար: Բայ զման դիւրահաս լինելոց ընթացից բանիս, զորդի գիցուք ՚ի կարգիս որդեա սկսեալն եղև: Աս երևի և այլ իմն պատճառ. ՚ի բանիս թէ յորդի է և սչ ՚ի հոգի. զի ասաց՝ Տէր թագաւոր զհայր. և Տէր և որդի հօր միածին յս քս զորդի:

Իսկ աստ տէր սչ գոց որով հաստատէր թէ ՚ի վերայ հոգւոց է բանս հաւասար հօր և որդւոց: Իսկ ՚ի կատարածն յայտնապէս սատ, Տէր և հոգիդ սուրբ որ ՚ի փառս անձ ընդ հօր: Բայ թէ փոխանակ տէր ստելոյն զքնն ասիցէ որ բաւական համարեալ, չկայ ինչ մնաս զքր և կամի որ ընտրեսցէ: Օ՞ր և առաքեալն երբեմն սատ, \* Տէր է հոգին: Եւ երբեմն սատ, \* Մի է հոգի սուրբ յորում ամենայն: Բայ աստ զսուրբն եդ ՚ի վերայ հոգւոյն, և անդ զտէրն յառաջն կարգեաց, և այս բաւական է վասն այսորիկ, այլ մեք ՚ի կարգ բաւանիդ ընթացուք:

Տէր անձ գառն այ և որդի հօր : Գառն այ կոչէ զմիածին որդին , ոչ միայն վասն անմեղութեանն զի իբրև զգառն անմեղ ՚ի սպանդ վարեցաւ , այլ և գառն ասելովն՝ զխաչել մեռանին յուշ արար և զժանակութիւն մահն : Օ՛ի թէպէտ իբրև զգառն պրկեցաւ անմեղ մարմնովն ՚ի վերայ խաչին , այլ ՚ի խաչողացն իբրև զմահապարտ գատապարտիւր : Եւ գարձեալ՝ որպէս գառնն ոչ վասն անձին ինչ պատճառի մեռանի , այլ վասն այլոց օգտութիւն : Կոչուպէս և գառն այ ոչ վասն անձին ինչ յանցանաց մեռաւ ՚ի վերայ խաչին , այլ վասն մերոյ փրկութեան :

Եւ որպէս սար գառին զգեստ լինի և ծածկոյթ մերկութեան մարդկան , այսպէս և քն գառն այ՝ եղև մեղ ծածկոյթ և զգեստ շնորհաց : Օ՛ի որք ՚ի քն մկրտեցայք զքն զգեցար և զարդարեցար լուսով : Եւ որպէս մարմին գառինն յորժամ զենանի՝ կերակուր լինի կարօտելոց , այսպէս և անմահ գառն այ զենեալ միանգամ ՚ի վերայ խաչին և հանապազօր ՚ի վերայ սրբոյ սեղանոյն , զմարմնն և զարիւն իւր պարզեցաց մեղ կերակուր և դեղ անմահութիւն : Օ՛ի որք սրբութեամբ ճաշակէն հաւատով սիրով և յուսով , զյաւիտեանական մահն ոչ մեռանին , ըստ իւրում տեառն բանին թէ , \* Որ ուտէ զմարմնն իմ և ըմպէ զարիւն իմ , զմահ մի տեսցէ յաւիտեան :

Տէր անձ գառն այ ասէ և որդի հօր : Որդի հօր ասելովն՝ ըզ համարձակութիւն առ հայր յայտ առնէ : Ունիս ասէ համարձակութիւն իբր որդի առ հայր բարեխօսել վասն մեր զի հաշտեսցի ընդ մեղուցեալքս հեղմամբ սուրբ արեան քոյ , որ առաւել գոչէ առ անձ հայր քան զհաբեւին ըստ բանին պողոսի : Օ՛սոյն և աւետարանիչն յովհաննէս , \* Ունիմք բորեխօս առ անձ զյմ քն զարդարն և զանարատն . և նա է քաւութի մեղաց մերոց , և ոչ էթէ մերոցն միայն այլ և ամ աշխարհի : Օ՛ի արդարև յորժամ տեսցէ հայրն երկնաւոր զմիածին և զսիրելի որդին իւր ՚ի վերայ խաչին վասն մեր , հաշտեսցի սիրապէս ընդ արարածս և կենդանացուցցէ զմեռեալքս մեր զօր վերստին :

Որ առեր զմերս յաշխարհէ . ողորմեցար . բարձեր զմեզս աշխարհի . և արդ ընկալ զաղաչանս մեր : Գարձեալ զմարդեղութենէ և զխաչէն ճառէ . որ առեր զմերս յաշխարհէ , այսինքն զբովանդակ բնութիւն մեր՝ զմարմնն զհոգի և զմիաս : Եւ այս վասն տարողինարի ստացաւ . զի մարդկային հոգի ոչ ասէր քի առեալ , այլ միայն զմարմնն . և ՚ի տեղի հոգեոյ զանձութիւնն ասէր ունէլ : Օ՛ր յամօթ առնէ առարեալ ասելով , \* Մարդն յմ քն : Եւ մարմնն առանց հոգեոյ մարդ ոչ ասի . այլ մարմնն և ոգի միաւորեալ ՚ի միասին՝

ապա է մարդ կատարեալ :

Եւ քմ ճշմարտապէս մարդ կատարեալ էրև՝ զամ զմերս առ-  
նչով . զն թէ ոգի բանականն ոչ ունէր , զհանրդ ասէր ՚ի ձեռս հօր  
աւանդեալ : Եւ ՚ի դժոխս երթալ ո՞րն ախ թի և զնիդս փշքել . զն  
մարմինն ոչ էջ ՚ի դժոխս . և առանց բանական հոգւոյ բանն՝ քմ ոչ  
տախ : Ա կայէ և պետրոս բանական հոգի ունեւ թի . \* Ո՛չ թողաւ  
տախ ոգի նորա ՚ի դժոխս :

Եւ վասն մտացն պօղոս վկայէ . \* Մէք ասէ զմիտս թի ունինք :  
Եւ հարբն սուրբք ևս յայտնադէս հաստատեցին ՚ի հաւատն նիկի-  
ական , ունեւ բանին այսպէս . \* Ճնաւ ասէ կատարեալպէս ՚ի մարիա  
մայ յայ կուսէն հոգւովն սրբով . որով էառ մարմին հոգի և միտք .  
և ամ որ ինչ է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք :

Ա ասն որոյ բան աղօթիցս զամ միով բանիւս բովանդակէ ա-  
ռեւով , Որ առէր զմերս յաշխարհէ . այսինքն ՚ի մարդկային բնու-  
թեանս : Օ ի սովորութի է գրոց և զմարդ աշխարհ և երկիր կոչէլ  
որն զհրեշտակս երկին . զն ադամն երկիր թարգմանի . և իմաստա-  
սէբբն փոքր աշխարհ ասացին զմարդ : Իսկ էկեղեցւոյ վարդապետք  
մեծ աշխարհ ասացին զմարդ վասն բանականութեան և պատկեր  
գօղջ արարչին :

Որ առէր տէ զմերս յաշխարհէ : Ը յսինքն թէ՛ յամ արարա-  
ծոց զմերս միայն ընտրեցեր բնութի , զոր առեալ միացուցեր ընդ  
քում ամուսութեղ : Օ ի աշխարհ կոչն որ յերկնէ և յերկրէ և որ ՚ի  
մէջս են վայելչութիւնք , այսինքն՝ տարերք , օղ , լուսաւորք , աղ-  
բեբք , ծովք , դէտք , բոյսք , տունիք , գազանք , անասունք , սո-  
զունք , թռչունք , և որ այլ ևս . նաև հրեշտակք ՚ի յերկինս : Ի յայսմ  
ամենայնէ ասէ ոչ զօր ընտրեցեր առնուլ քեզ հաղորդակից , այլ  
հաճեցար միայն ՚ի մեզ խոնարհիլ և զմեզ բարձրացուցանել ՚ի մեր  
քան զամ . վասն որոյ փառք քեզ յաղաքս ամենայնի : Ը որարև ոչ  
այսպէս արար ամենայն ազգաց տէր :

Ողորմեցար . բարձեր զմեզս աշխարհի . և արդ ընկալ զաղաչանս  
մեր : Ողորմեցար ասէ . այսինքն՝ ըստ բոյնի մեծութեղ . զն ողորմին  
սեպհական և յատուկ նոյ է , որ բնութի է ողորմած , որոյ անսպառ  
է ողորմութիւն . զն ողորմութի արար զարարածս , և ողորմելով մեջս  
նախախնամէ ըստ իւր ամենառատ բարեբարութեան : Օ ի ամուսեք  
դիրք զամ ողորմած կարդան . որն դաւիթ ասէ , \* Պորմած և ար-  
դար է նոր ամ մեր : և թէ՛ \* Ողորմի և պահէ զաղաչս ՚ի մեզաց նոր :  
և թէ՛ \* Ողորմեա ինձ ամ ըստ մեծի ողորմութե քում և ըստ բա-  
զում գթութե քում : և թէ՛ \* Չողորմութիս քո տէր յաւիտեան  
օգնեցից : և թէ՛ \* Ողորմութի տեսառն լի եղև երկիր : Եւ ոյլ

բարուան . զոր վնպէ վասն ողորմութեանն ստորուծոյ :

Եւսկ որդի նորին սողմին սակ , \* Մտուած հարց և տէր ողորմութե : Եւսկ որդի նորին սողմին սակ , \* Մտուած հարց և տէր ողորմութե : Եւսկ որդի նորին սողմին սակ , \* Մտուած հարց և տէր ողորմութե : Եւսկ որդի նորին սողմին սակ , \* Մտուած հարց և տէր ողորմութե :

Եւսկ խանդաղատեալ արարչական գթութեն և յաղթեալ ՚ի մարդասիրութեանն , Եկն ՚ի խնդիր մեղ մոլորելոցս կամաւ հօր և հաճութե հոգւոյն սրբոյ և փրկեաց զմեզ : Բայտ այնմ , \* Հովնէն քաջ զհետ մտեալ թափեաց ՚ի բերանոց առիւծուն . ունզն մի դրոշմաւոր , զԵւսկին զարաչար տխտացեալն ՚ի թունից կամակոր օձին , և արեացս երկու , զոտսն աղամայ ՚ի ծառն ընթացեալ : Օհ ամենաբաւական ձեռինն միայն էր կարողութի զվերս զայս բեճկէլ . ըսա մարգարէին որ սակը ՚ի դիմաց տեսան , \* Հայեցայ և ոչ որ էր որ օգնէր . զմտաւ ածի և ոչ որ էր որ ՚ի թիկունս հասանէր . փրկեաց զնոսա բարուկ իմ , և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ :

Ողորմեցար սակ և բարձեր զմեզս աշխարհի : Մէտաց առեր , այլ թէ բարձեր . այսինքն թէ՛ վերացուցեր սրբեցեր ընջեցեր մարբեցեր կորուսեր անյայտ արարեր : Օհ ոչ շիփեացս ՚ի նմա տեսակինչ ախտից զի մարբիչ է ամենայնի . և անմեղ մարմնով զամենեցուն մարբեաց զմեզս և ընջեաց զանօրէնութիս : Օհ մեղանչական մեղանչականի օգնական լինիլ ոչ կարէ . այլ անապականն և անմեղն՝ զմեղանչականացս քաւեաց զպարտիս :

Բարձեր սակ զմեզս աշխարհի : Եւսկինքն՝ ոչ միայն զաղամայ կամ որք յետ նորս զգարուցն առաջնոց , այլ զամ հաւատացելոց որք զինի գալոց են մինչ ՚ի կատարած աշխարհի և հաւտտան ՚ի հեղուան արեանն քի որ լուաց զտիեզերս ՚ի մեղաց , և ըստ հաւատոցն գործս բարիս ցուցանեն , ազատեցին ՚ի մեղաց շնորհքն քի : Բայտ իբրեւմ տեսան հրամանին որ առ հրէայսն , \* Եթէ որդին սակ ըզձեզ ազատեցէ , ճամբիս ազատք լինիջլք : Եւսկինքն զյաւիտեանական ազատութի ժառանգեցէր . զի եթէ ոչ էր աշխարհ ապականեալ մեղօք , ոչ լինէր հարկ գաղտեան որդւոյն նոյ : Եւսկ զի արականեաց ամ մարմնասէր մարդ զընթացս ճանտարհի իւրոց մեղօք , վասն այնորիկ հարկ եղև գալտեան բանին նոյ զի բարձցէ զմեզս ամենեցուն . զի ոչ էր հնար այլ ումեք զայս առնել :

Բարձեր ասէ զմեզս աշխարհի . և արդ ընկալ զաղաչանս մեր :  
 Ս ասն այսպիսի ասէ գթութեանց և մարդասիրութեց համարձակութիւն ասեալ աղաչեմք զոգորմած տէրդ զբարձօղզ մեղաց աշխարհի . զի դարձեալ վերաւորեցաք ՚ի չար թշնամւոյն կենաց մերոց և ՚ի դաւաճանողէն զմեզ , տկարացեալ մարմնով ոչ ժուժեալով կալ ընդ դէմ մեքենայից նորին :

Ս ասն որոյ դարձեալ վստահացեալ ՚ի քոյին անբաւ մարդասիրութիւնդ և յանեղբահան գթութիւնդ , աղաչեմք տէր՝ որ բարձեր զմեզս աշխարհի , և արդ ընկալ զաղաչանս մեր : Օ ի որչափ ՚ի մարմնի գորով մեղանչեմք և տկարանամք մեղօք , դարձեալ զղջամք և առաջի . քո անկանխիք խոստովանութիւն և աղաչեմք ոչ ուսար ՚ի սրբոց քոց պատւիրանաց . զոր հրամայեցեր մարդարեւին թէ , \* Ասա դու զմեզս քո զի արդարասցիս : և թէ՛ \* Յորժամ դարձցիս և հեծեծեցես , յայնժամ կեցցես : Ս ասն որոյ աղաչեմք կեցն զմեզ տէր ողորմութեամբ քո :

Եւ արդ՝ ընկալ զաղաչանս մեր : Եւ այժմ ասէ՛ տէր ընկալ զաղաչանս մեր և ըստ հրամանի քում զխոստացեալն կատարեա՛ զոր ուսուցեր մարդարեւին : \* Արդասցես դու առ իս ասէ յաւուր նեղութիւն քո՛ ես փրկեցից զքեզ և դու փառաւոր արասցես զիս : և թէ՛ \* Արդասցէ առ իս և ես լուսցց նմա . և առ նմա եղէց ՚ի նեղութիւն : Բայց զկարդան՝ հաւատով կամի և ոչ երկմտութիւն : \* Սնդրեացէ ասէ առաքեալ հաւատովք և ոչ երկմտեցէ : և տէրն , \* Չամ զոր ինչ աղօթս արարեալ հաւատով խնդրիցէք , եղևցի ձեզ :

Տեսանէ՛ն զի մեծի հաւատոյ պէտք են մեզ յաղօթս և զգուշաւոր խնդրուածոց և միամտութիւն սրտի , զի մի հողմն երկմտութիւն ՚ի ներքս անկեալ , զնաւ հաւատոյն խախտիցէ , և փոխանակ պարգևի գատապարտութիւն կրիցէ երկմտ խնդրողն վասն իւրոյ թերութիւն : Եւ յոր զղեակ հաւատոյն պինդ ունիցին՝ ոչ երբէք սասանին , այլ լսեն ՚ի տեսունէ թէ՛ \* Ըստ հաւատոց քոց եղևցի քեզ :

Օ ի չէ՛ ինչ մեծ կամ փոքր յերկինս կամ յերկրի զոր հաւատով խնդրիցէ որ՝ թէ ոչ առնուցու անդէն վաղվաղակի զպատշաճաւորն : Բայ թէ յամիցէ յառնուլն , մի կասեցի ՚ի յուսոյն , այլ առաւել ժրտացի երկայնամիտ լինելով և զմտաւ ամեղով թէ՛ այնպէս են կամք տեսուն զի յամեղով առցէ :

Եւ արդ՝ ընկալ զաղաչանս մեր : Եւ յլ և զխոնարհութիւն և ուսուցանէ բանիւս աղօթողին և զհեղութիւն բարեմտութիւն հանդերձ : Որոչ թէ ստիցէ , այսօր միայն է զոր եկեալ կամ առաջի քո յաղօթս , և այսօր սկիզբն արարեալ եմ աղօթից : Բ աս մեծին եղևցի



որ ասէր , \* Կենդանի է տէր որոյ կացեալ էմ առաջն այսօր . և սկիզբն արարեալ բարեպաշտիլ առ նա :

**Օ** սոյն և առարեալ յայտնի առնէ ասելով , \* Զ յետոյն մոռացեալ էմ , և յառաջագէտն նկրտիմ . զհետ մոռեալ էմ թէ հասից : **Լ** յսինքն՝ թէ զյառաջագոյն գործեցեալ բարին ոչինչ անձին համարիմ , այլ միայն առաջիկայիս ուշեղեալ ընթանամ թէ կարացից զընթացս իմ բարւոք կատարել :

**Լ** յս է ըստ իմում բանիս որ ասէ : **Լ** արդ ընկալ զաղաչանս մեր : **Լ** արցում ընկալ ասէ զոր այսօր մատուցանեմ պաշտտանս առաջն քո տէրու թեանդ :

**Ս**ուրբդ որ նստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեաց մեզ : **Ս**ուրբ է ամ ամ մեր որ բնակեալն է ՚ի բարձունս ըստ մարդարէին եսայեայ . որոյ ոչ ոք գտանի համեմատ սրբութեանն : \* Զ ՚ի իցէ ՚ի մարդկանէ որ ամենեւին ար իցէ . թէ և միօրեայ իցէ ՚ի վերայ երկրի ըստ յոբայ : **Օ** ի և երկինք չեն սուրբ առաջն նորա ըստ գրեցելումն . այսինքն՝ երկնային հրեշտակք . այլ նա միայն էանց ընդ ամ կիրս մարդկայինս բաց ՚ի մեղաց : **Ա**րդես ասէր առ հրեայսն ինքն տէրն յառուրս մարմնոյ իւրոյ : \* **Ո**՞չ յանդիմանեցէ զես ՚ի ձեռն վասն մեղաց : և թէ \* **Գ** . այ իշխան աշխարհիս այսարիկ և յիս ինչ ոչ գտանէ յիւրոց չարութեանցն :

**Ս**ուրբդ որ նստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեաց մեզ : **Ը** նդ աջմէ հօր ասելովն՝ զորդիական պատիւն յայտ առնէ . զի որդի նստի ընդ աջմէ հօր , և հոգի ընդ աջմէ որդւոյ ՚ի փառս փառաւորեալս որ յառաջ է քան զյաւիտեանս : **Օ** ի նստին զմշտնջենաւորութիւն յայտ առնէ և զտէրութիւն փառացն հայրենի . իսկ ընդ աջմէ հօր ասելն , զյատկութիւն անձանցն ցուցանէ բաժանեալ յանբաժանելի ամուրթին :

**Լ** և զի որդի նստի ընդ աջմէ հօր՝ և առարեալ վկայէ . \* **Ո**ր էն ասէ ՚ի վերայ քան զամ իշխանութիս և զպետութիս . և նստաւ ընդ աջմէ մեծութեանն ՚ի բարձունս : **Օ** սոյն և դաւլթ և ս յայտնագոյն ցուցանէ . \* **Ա** սաց տէր ցտէր իմ նիստ ընդ աջմէ իմմէ , մինչև եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց :

**Ս**ուրբդ որ նստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեաց մեզ : **Օ** ի որոյ մեր միշտ մեղանջական էմք և զզակամք , դու միշտ ողորմած . վասն որոյ զնոյն հայցեմք զոր միշտ սովոր էս առնել :

**Օ** ի դու միայն սուրբ դու միայն . բարձրեալ էս դու միայն , տէրդ մեր յս քն : **Օ** ի դու միայն , այսինքն դու միայն միածին որդի բնութեանակից , աթոռակից , փառակից և պատուակից հօր : **Օ** ի մի է միածին որդին այ հօր , և երկրորդ ոչ գոյ նմա , վասն զի

որպէս մի է ծնօղն, մի է և ծնեալն ՚ի նմանէ բանն:

Օ ի դու միայն սուրբ, դու միայն: Վու միայն ասէ երևեցար մարմնով այլ ՚ի վերայ երկրի և ճշմարտապէս յիմ կրկն ազատ. որով զամենեւեան սրբեցեր քոյին սրբարար անօրէնութիւնք. և կամ միս մեզ ՚ի նոյն մնալ մարդութեան և սրբութիւն: Վարդարեւ միաճենն այլ հօր և միայն սրբարար տէրն՝ նա ինքն է մարդութիւն ամենայնի: Վանդէ՛ \*ճաճանչ է այլ զօրութեանն որո՞ ասէ սողովն. և ծաղումն ճշմարտ փառաց ամենակալին: Աման այնորիկ և ոչ մի ինչ պղծեալ խառնի ՚ի նա. քանզի նշոյլ է մշտնջենաւոր լուսոյն և հայելի անարատ այլ պղեցութեանն և պատկեր առատութիւն նորա. մի է և ամենայնի կարօզ. կայ յինքեան և զիմ՝ նորոգէ:

Վաս աւետարանիչն յովհաննէս զայն վարդապետէ այլով եզանակաւ. \*Մի արամեացի ասէ վն ձեր բարերարն ի՞մ. գթածն, ողորմածն, սուրբն, յատակն, անարատն, անհրկութն, միայնն, մին, անհոխոխն, ստոյգն, աննենգն, անցատումն. որ ՚ի վեր է քան զիմ ասելի և խմանալն անուն՝ ի՞մ յն: Վարդարեւ ոչ զօրէն մարդ իմանալ կամ ասել ինչ վասն այլ. զի ՚ի վեր է քան զիմ խմացումն: Վ.Ս. ըստ կարողութիւն ումեք ճառերն, միայն ի՞մ սիրութեան է բացայայտիչ, և մտերմութեան ցուցակութիւն. զի մի անշնորհակալու սատուամբ երևեսցուք:

Օ ի դու միայն սուրբ դու միայն. բարձրեալ էս դու միայն, տէրդ մեր յն քն: Բարձրեալ էս ասէ դու միայն. այսինքն՝ ոչ եղականայս համեմատն բարձրութիւն քո. այլ միայն էս գերազանցեալ, և ՚ի վեր քան զիմ՝ բարձրացեալ անսահման միջոցաւ, ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ, ՚ի փառս հայրենի մերով բնութիւնս միայն դոս բարձրացեալ տէրդ մեր յն քն: Արո՞ առարեալն ասէ, \*Որ ելն զինչ է, եթէ ոչ զի եջ նախ. ՚ի ստորին կողմն երկրի. որ եջն նոյն է և որ ելն ՚ի վերայ քան զամենայն երկին:

Բարձրեալ էս դու միայն տէրդ մեր յն քն: Աւայտու առաւել ևս յոյս դնէ հաւատացելոյ և վստահութիւն տիրապէս. զի թէ բարձրեալ էս ասէ մերով բնութիւնս ընդ աշխէ հօր, և մեզ խոստացար ընդ քեզ բարձրանալ յարքայութեան քում ասելով, \*Ուր ենն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղկցի: Աւայտու յուսով առաւել ևս վստահացեալ կարդամք զանուկն քո:

Տէրդ մեր ասէ յն քն: Վաս աւարտէ զբանիս դիտաւորութիւն որ առ որդի՝ անօրինակուն անուամբքս, պատմելով զմեծագոյն բարեգործութիւնսն որ առ ազգս մարդկան. զի մի մոռացմամբ ապերախս լիցուք. այլ միշտ յիշելով գոհացուք զնորհացն այլ:

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ւծ ընդ հօր, ասկէն : Պնէ այժմ տիրական անուամբ կնքեալ և զհոգւոյն փառաբանութիւնն , յոյստ առնելով զհաւասարութիւն և զփառակեցութիւնն ընդ հօր : Օյ յառաջագոյն ճառեաց ճշմարտապէս վասն հօր ւծութեանն և որդւոյ անձառ տնօրէնութեանն որչափ հնար էր տկար բնութեան մարդկան յաղադսնյ վերել բանիւք : Իսկ այժմ աւարտումն առնէ բանիս 'ի հոգին սուրբ , տէր զնա ասելով և ւծ խոստովանաբար ճշմարտապէս փառակեց ընդ հօր , որնյ որդին սիրելի այսպէս ունեւ լով բանին :

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ւծ ընդ հօր : Ըստինքն՝ որն տէր թագաւոր հայր և ւծ . տէր և որդի հօր վրածին օժեալն նյ և փրկիչն մարդկան յս քս ակոռակիցն հօր որդի . այսպէս տէր և հոգին սուրբ ւծ 'ի փառս ընդ հօր արարչակից և պատուակից , և ներգործօղ 'ի տնօրէնութեանն որդւոյ :

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ւծ ընդ հօր : Ան որ 'ի փառս նյ հօր ասէն , մի և նոյն է , զի որ 'ի փառս նյ հօր է , ւծ է ճշմարտապէս և հաւասար նյ :

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ւծ ընդ հօր : Ըստ ոչ միայն զհաւասարութի և զպատիւ յոյստ առնէ ընդ հօր և ընդ որդւոյ զհոգւոյն սրբոյ . այլ և զերիբ անձնաւորութի 'ի միում ւծութեան ճշմարտապէս քարոզէ . և զուղիղ հաւաստ և զանբիծ խոստովանութիւն՝ ամենեցուն ծանուցանէ :

Յանթ լեցի սաբէլ և համախոհք իւր . որ ոչ խոստովանին զերիս անձնաւորութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ : Ըմբէսցէ արիտս և նմանիք նորին . որք ոչ խոստովանին զորդի հաւասար փառակից և պատուակից հօր . այլ նուաստ ասելով ոչ զարհուրին : Կարկեսցի բերան նետորի և հետեորոց նորին . որք յետ անձաւ միաւորութեան՝ յերկուս բաժանեն զնորմաւորութի որդւոյն նյ :

Պարանձեսցի և տիքես՝ ապողինար և համախոհք իւր . որք բանական հոգի ոչ առեալ ասէն քի . կամ միաս մարդկայինս , կամ որ առ աջօք ասէն երեւեալ քի : Օ միեսցի մակեդոն և հոգեմարտքն ւծ . որք զտէրութիւն հոգւոյն ուրանան և ոչ գողան : Այն է նյ և եղուկ է 'ի նոսա . զի կորիցեն և ոչ կեցցեն : Ըստնք 'ի բան աղօթիցս դարձցուք . և զտէրութիւն հոգւոյն վերաձայնելով խոստովանեսցուք հաւասար ընդ հօր ասելով :

Տէր և հոգիդ սուրբ որ 'ի փառս ւծ ընդ հօր : Ըստինքն՝ որն հայր ւծ տէր է և ւծ . անեղանելի բնութի . անսկիզբն և անժամանակ , արարիչ և հասարչ բոլորից : Ըստպէս և հոգին նք ընդ հօր այսմ ամենայնի զուղակից և պատուակից փառացն հաղորդ , և

տէրութեան կցորդ և անութիւնն գարով մի : Ալ թէ ընդէն աստ զորդի ոչ յիշէ , այլ միայն զհոգին ընդ հօր ան և ան ՚ի փառս ասէ :

Ճշմարտան ինքեան միայն է գիտելն հոգւոյն սրբոյ . որ քննելն է ամենայնի ըստ առաքելոյ որ ասէ , \* Հոգին զամբնն և ըզխորս ան , և ինքն յուժեքէ ոչ քննի : Օհ ինքն է ամենայնի լցուցիչ և բացայայտիչ . և կամ որոց ինքն յայտնէ զգաղանին՝ և զծածուկս իմաստութիւն իւրով ծանուցանէ սրբոց իւրոց և հոգիքնկալարանց , որպէս ասէ մարգարէն :

Այլ մեզ վերջացելոց ՚ի գործոց բարեաց և վրիպելոց ՚ի հոգւոյն շնորհաց , զհարգ լիցի յայս համարձակիլ և ասել թէ ճշմարտութեամբ ՚ի վերայ հասար բանիս կամ այս է զոր ստուգիւ իմացաք : Օհ զայս և ոչ սրբոցն է համարձակելի ասել , թող թէ մերումն նուաստութեան : Այլ միայն այսչափ թէլաղորութի տացուք փափագողաց բանիս , թէ նախ քան զայս զորդւոց համարտութի ընդ հօր ծանոցց ճշմարտապէս , մի խոստովանելով ՚ի փառս տէրութեան զհայր և զորդի :

Ալ աստ աւելորդ համարեցաւ դարձեալ երկրորդէլ և որոշաբար զորդի ևս ընդ հօր յիշել յայսմ վայրի . այլ միայն ՚ի կամն լողացն ապաստան արար իմանալ , թէ ան որ ինչ հօր է՝ նոյն և որդւոց է ըստ տէրունական հրամանին . և որդւոյն՝ հօր է : Այսպէս և զայս պարտ է իմանալ թէ որ ՚ի փառս ընդ հօր ասաց զհոգին , նոյն և ընդ որդւոց կոչեցի : Ալ զի տէր է հոգին և պարզ և ասու և շնորհաբաշխ . և գիւրջ սուրբք վկայեն , որն և սողմնն յաճախապէս ցուցանէ ասելով այսպէս : \* Ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութի . զի գոյ ՚ի նմա հոգի մտաւոր , սուրբ , միածին , բազմաբաշխ , նուրբ , դիւրաշարժ , պարզ , անարատ . և այլն ևս զոր ասէ ըստ կարգի :

Տէր և հոգիդ սուրբ որ ՚ի փառս ան ընդ հօր : Սուրբ ասելովն՝ զան հոգին յայտ արար . զի հոգի կոչին և հրեշտակք , նա և մեր հոգիս հոգի անուանի . բայց սուրբ ոչ ասին սքբա : Այլ սք հոգի միայն նա ասի որ անութիւն փառակիցն է հօր և արարչակիցն որդւոց . որ տէր հոգին է , որ անեղանելն բնութի ՚ի վեր է քան զամ եղականքս , միայն ընդ հօր և ընդ որդւոց հաւասարեալ :

Ար աղբիւրն է ան բարութեանց , և պարզելին շնորհաց . որ մարգարէս յարդարէ , և առաքեալս ձեռնադրէ , և քահանայս և թագաւորս օժանէ : Ար յորդէգրութի հօրն երկնաւորի զամենեսեան պատրաստէ վերտին ծննդեամբ սուրբ աւաղանին , ինքեամբ և ջրով նորոգեալ : Ար բարեխօսն է ՚ի ճեծութիս անմուռնչս ըստ առաքելոյ վասն հաւատացելոց իւրոց առ հայր :

Որով և յն վկայեալ լինէր ՚ի հօրէ Ճշմարտապէս որդի սերելէ ՚ի Թաբօր և ՚ի յորդանան . և վարիւր յանապատ ՚ի հոգւոյն և յաղթէր փորձողին : Որոյ զօրութիւնն դառնայր ՚ի գալիլէա և զմեծամեծ նշանն և զսքանչելիսն հրաշագործէր , և համբաւն տարածիւր յամենեցունց լսելիս : Եւ ամենեքեան գայիս և լսելին և բժշկեալ լինելին յիւրաքանչիւր ակտից , և փառաւոր առնէին զի՛ն : Օրոյ զհայհոյութիւնն անժողի ասէր տէրն աստ և ՚ի հանդերձեալ աշխարհին , Եւ վճիռ հատանելով ասէր առ հրէայսն , \* Եթէ հոգւովն ո՞յ հանեմ ես զդուս , ուրեմն հասեալ է ՚ի վրձեր արքայութիւնն ո՞յ :

Տէր և հոգիդ սուրբ որ ՚ի փառս անձ ընդ հօր : Եւ և աստ յոմանց հակառակութիւն կրի թէ՛ ընդէ՛ր համառօտ և սուղ է եղեալ զբանս որ յաղագս հոգւոյն . և ո՞չ երկայնագոյն որո՞յ վասն հօր և որդւոյ պերճաբանեաց : Օր ո՞չ է իրաւացի զայս բնեւ , այլ միայն հաւատով ընդունել , զի յերեսին մի է անձութիւն , և երեքին մի՛ յորս անձութիւնն ըստ սրբոյ անբանին գրիգորի :

Օ ՚ի հօր փառաբանութիւն և որդւոյ՝ և հոգւոյն համարեալ է . և հոգւոյն պատիւն՝ որդւոյ և հօր : Եւ զհօրն ո՞յ բարերարութիւն պատմեաց բանիւս , և զորդւոյ զանօրէնութիւնն : Իսկ հոգին զի մարմին ո՞չ զգեցաւ , այլ միայն ներգործեաց ՚ի անօրէնութի՛ն որդւոյն : Ա՛սան որոյ երկայնապատում ո՞չ արար , այլ կարճ և համառօտ բանիւ էանց , բաւական համարելով առ ՚ի հաւատարմութիւն անձ ընդ հօր դաւանեալ զհոգին Ճշմարիտ :

Օ ՚ի Թերևս վասն ձանձրութեան ո՞չ երկայնեաց զբանս , այլ խնայելով յաղթականան կարճեաց . զի հանապազօրեայ է բանք աղօթիցս . և յետ բազում աշխատութեանց օրհնաբանի յառաւօափն ժամունն : Օ ՚ի թէ կամեցեալ էր երկարել զբանս , գոյր տեղի ընդարձակութեան , յիշելով զեջումն հոգւոյն ՚ի յորդանան և ՚ի դասս առաքելոցն ՚ի վերնատունն , և զերևումն ՚ի Թաբօրական լեռինն լուսաւոր ամպով : Կա և զըջին ՚ի վերայ ջուրց և արարչագործել ՚ի սկզբանն . և զիջանէն միշտ ՚ի ջուրս աւազանին , և զնորս և զպարգևս ամենեցուն տիրապէս բաշխել ըստ արժանւոյն : Ի՛սոյց զի ո՞չ արար , վայելուչ է զօր պատշաճ համարեցաւ եղեալ համառօտ և լիսպէս . որպէս ասէ ,

Տէր և հոգիդ սուրբ որ ՚ի փառս անձ ընդ հօր , ամէն : Եւ մէն ասելն ՚ի վերայ եղեալ հաստատութիւն է և կնիք . զի յեբրայականէն ՚ի մերս ամէնն՝ եղիցի Թարգմանի . ասի և՛ է , և սոցոց , և Ճշմարիտ : Կա և համաձայնութիւն է ժողովրդականացն մանկանց եկեղեցւոյ . զի ամէն ասելովն կցորդ լինին ժողովուրդքն բահանայիցն . որպէս առաքեալն յայտ առնէ ասելով վասն այլալեզուացն թէ , \* Զիարդ

ասիցէ զամէնն ՚ի քում զովոլութեանն որ կայցէ ՚ի տեղն աբխաթն .  
յորժամ համաձայնութիւնն ոչ իցէ միով բարբառով և լեզուաւ :

Ս ասն այսորիկ և մերն թարգմանիչք աշխատեցան վն գիւտի  
գրիս մերոյ և աղօթիւք խնդրեցին յայ մինչև առին . զև ժողովուր-  
դըն ՚ի խաւարի մի մնացէ . որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի :  
Եւ այս մինչև ցայս վայր որոյ յառաջն ասացաւ՝ սրբոց սրանց խն  
է աղօթք և դաւանութի ՚ի սուրբ երրորդութիւնն կարձ և համա-  
ռօտ բանիւ , առ ՚ի հաստատութի ուղղափառ դաւանողաց , և զինի  
եկեղոց վստահութի և հաւատարմութի : Ս ասն որոյ և զամէնն ՚ի  
վէրջոց եգեալ կնքէ զբանս . որով աւարտ բանիս յայտ ամենեցուն  
լիցի : Արդէս թէ ասիցէ , փառք հօր և որդւոց և հոգւոյն սրբոց .  
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ աստ հանդիստ պարս է առնուլ , և երկար միջոցաւ դա-  
դարիլ . որոյ ՚ի մէջ գուրդայից սաղմոսոցն յորժամ զօրհնութիւն և  
զփառս մատուցանեն : Օ ի մի որ յանդգնեցի տգիտաբար խիզա-  
խելով . որոյ տեսանեմք յանուսումն և յանուայ մարդիկ , որ զվերջին  
բան աղօթիցս ՚ի հետակոյ բանիցդ սկիզբն խառնեն : Եւ զայն որ  
ոչ է յայմ աղօթից , այլ անճարեաաւ որոշեալ և զատեալ , ՚ի սոյն  
յարեւով շիտթեան զճշմարտութիւն :

Օ ի լաւ է կոյր աչօք , բան թէ կոյր մաօք , զև կոյր մաօք՝  
զմարմիննն ոչ վնասէ . այլ զհոգին ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու  
միշտ ընկղզէ . և ույ թէ ՚ի լոյս իցէ՝ զբօսնուլ յորդորէ , ույ և լսեմք  
այժմ ՚ի տգիտաբարոյ և յանձնահաճ մարդկանէ զև ասեն , Տէր և  
հոգիդ սուրբ որ ՚ի փառս ան որ ընդ հօր և ընդ որդւոց օրհնիս  
այսօր և յամենայն ժամ :

Եւ կամ որ այլ խնստուերն ձեանան , իբր բերելով իմն ասեն ,  
Տէր և հոգիդ սուրբ ՚ի փառս ան ընդ հօր ամէն և յամենայն ժամ :  
Եւ ամենաբեան անաբաժին կեա և հանդիսա զայս առնեն անստու-  
թեամբ . զհետակոյ աղօթիցն սկիզբն , յառաջնոյ օրհնութեանցս  
վերջ և աւարտ դեռն տգիտաբար և ոչ ամնչէն : Եւ որս ասել պարս  
է աւանդ տգիտութեդ , եղրեկ կուրուութեդ , վայ անուսումնութեդ :

Օ ի այնչափ հոգ ոչ առնէք զև ՚ի գիրս նայիք և գոնեայ մարմ-  
նական աչօք զգրեալսն տեսանէք . զև իբր զյովանակ ընդ մարբ կա-  
լով , զճշմարտութիւնն ճանաչեցէք . այլ իբր զաղբ կապկաց զմի  
ինչ ծանուցեալ , սովորաբար զնոյն պատպաճէք : Օ ի բաց յայնմ օրէ  
յորում ՚ի տախտակոմ ընթերցեալ են զգիրս աղօթից կամ սաղմոսաց ,  
բնաւ այլ ոչ է փոյթ լեալ ՚ի գիրս նայելոյ զև զճշմարտութի ուսցին :

Եւ լ թէ ուր ուրէք զբ տեսանեն զև սաղմոսարան կամ աղօ-  
թամատոյց ընթեանուն , զարմանալով ասեն , զոր ՚ի բերան ունիս՝ վն

էր գրովք վարժիս . ընթերցիր զայն զորս ոչ գիտես ՚ի բերան :  
 Այլ ոչ իմանան թէ առաւել այնր է պարտ հոգք վարել, յաճախ  
 ընթեռնուլ և ստուգել զոր ՚ի բերան մատուցանեմք այ երգելով ՚ի  
 տուէ և ՚ի գիշերի առանձին և հասարակ : **Օ**չ զոր ՚ի գիր ընթեռ-  
 նու որ , թերևս զսխալեան՝ կրկնեալ աչօք ստուգեսցէ . իսկ ա-  
 ռանց գրոց ասացեան ընդ տարակուսանօք մնայ սխալանքն , եթէ  
 միշտ առանձինն ՚ի վերայ գրոց ոչ ստուգեսցէ :

**Ո**ր ասն որոյ առանձինն ՚ի գիրսն պարտ է նայիլ և զձյմարիան  
 ստուգել . զի կարօղ լիցի ՚ի ժամ աղօթիցն զուղեղն երգել բերա-  
 նով առանց գրոց : **Ա**յլ զայս վն այնորիկ աստ երկարեցաք զբանս ,  
 զի զբազմաց սխալանս յաղօթիցս բան՝ ծանուցուք . զի մի որ տգի-  
 տաբար զերկոսեան աղօթս առանց միջոցի ՚ի միմեանս յարելով շփո-  
 թեսցէ զձյմարտութիւնն : **Բ**այ որպէս ասացաք ՚ի վերջ առաջնոյ  
 աղօթիցս յորժամ աէր զհոգին սուրբ և ՚ի փառս անձնի հօր դա-  
 ւանէ և զամէնն ասէ՝ միջոց և հանգիստ արարեալ փոքր ինչ լու-  
 թեամբ դադարեսցէ :

**Օ**չ բաժանեսցի առաջին աղօթքս միջոցան , և յամենեցուն  
 յայտ լիցի թէ որ յառաջն իսկ էր ասացեալ օրհնութիւնս՝ աւար-  
 տեցաւ աստ : **Ա**յլ աստ երկրորդում աղօթիցդ որ զինի է՝ սկիզբն  
 արարեալ իբրև նոր իմն երգոյ և նոր սկզբան : **Օ**չ այդ որ զինի  
 է , յետոյ է ասացած յեփեսոսի ժողովոյն՝ իբր վկայութի և ձեռ-  
 նարկ առաջնոյ օրհնութեանցդ որ ՚ի սրբոցն էր : **Ո**րոչ այն որ ՚ի  
 հաւատարմն են յաւելեալ ՚ի վերայ նիկիական ժողովոյն որ ասէ ,  
 իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդի : և զիսկ մեք փա-  
 ռաւորեսցուքն :

**Օ**չ և այն յետոյ է անդ եղած . որոչ աստ ՚ի յայտ օրհնու-  
 թեանս այս երկրորդ բանքս յետոյ աղօթական ձեռով ՚ի վերայ է յօ-  
 դած : **Ա**յլ այս բաւական է որ միտս ունի և կամիցի լսել և հաւա-  
 նիլ կամ ՚ի միտ առնուլ : **Օ**չ յանլուր ականջս ոչ է օգուտ ինչ  
 երկայնաբանել , այլ զուր աշխատանք : **Ի**սկ իմաստնոյն պատճառս  
 սուղ ինչ ասէ տուր , և իմաստնացի առաւել ևս ամենայնիւ :

### Յորդորակ :

**Ա**յլ արդ՝ եկայք այժմ և մեք միաբան հաւատացեալքս ուղ-  
 դափտա դաւանութի ճյմարիտ խոստովանողքս սրբոյ եր-  
 բորդութեանն՝ փառաւորեսցուք զհայր և զորդի և զհոգին սուրբ ,

նչ միայն բանիւք, այլ և գործովք ևս խորհրդովք: Օր իմանալի բնութիւն է անձ, և զգալանիս մարդկան տեսանէ. և ոչ եղեալքն և ոչ գործեցեալքն առ ՚ի մէնջ, բացայայտ են առաջին նորա:

Եւ կարգեաց օր, յորում դատէ զգալանիս մարդկան. և ոչ առնու աշին ամենեցուն աէրն, և ոչ խորշի յուժեքէ. զի անաչառ է դատաւոր, և իրաւացի առնէ զգատատանն: Արդումսցն է խոտացեալ զորորմութի. իսկ անորորմիցն ասնջանք և դատապարտութի որոյ մեծատանն: Եւ զաղքատացեալսն հողուով միխթարէ յարբայութեանն որպէս զազարոս:

Եւ որք ՚ի սուգ սպաշխարութէ ախրիցին, սիովանս խոտացաւ և անվախձան խնդութի: Արք սրբեն զսիրտս յախտից մեղաց, տեսեալ զքն հայրական փառք բերկրեալ ցնծան ՚ի յաւիտենական ուրախութիւնսն: Աչ սիրողաց զեղբարս՝ մարդատաղանութէ սպառնայ պատիժս. իսկ սիրողացն և զպատուիրանն պահողացն՝ զհայրական սէրն խոտանայ և զիւրն երևումն հանդերձ քաղցրագոյն սիրովն որ ոչ սպառի:

Եւ դու ով մարդ, զայս անձ գիտելով պատրաստեա՛ս զքեզ ՚ի պատերազմ ՚ի կենցաղումս. զի ՚ի կեանս յայս՝ ՚ի ջանս մուծաւ մարդ և յաշխատանս: Եւ թէ կամիս ՚ի կեանս յաւիտենից հանգչել, աստ հանգիստ մի խնդրեր, այլ մարտիր զբարեղբ մարտն զի պսակեսցիս: \* Ո՛չ որ պսակի ասէ առաքեալն, և թէ ոչ ըստ օրինին մարտիցէ: և թէ \* Ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս չարագոյն դիւսցն և օղային այսոցն պղծոց:

Ասն որոյ նախ ուղղափառ հաւատով զքեզ զօրացն ով սիրելի որոյ ուսար ՚ի սրբոց հարցն և ՚ի հոգեկիր արանցն: Եւ թէ ՚ի վերայ յառնէ պատերազմ ինչ՝ մի երկիցես. այլ մարտիր հաւատով և յուսով ՚ի վերայ շքմարտութեանն որոյ և հալքն առաջին. զի անընդ քեզ է որոյ և էր ընդ նոսա: \* Եւ թէ արբունական սպառնալեաց պատահիս և թագաւորական սաստից և իշխանական ատենի, մի զարհուրիւր և մի թիւրբեր զճմարտութիւն: Ա՛խ ակն առնուր երեսաց, մի ամաչեր, մի պատկառիր և մի զանգիտեր. այլ համարձակութեամբ ընդ դաւթայ խօսեաց զվկայութիւն շքմարտին նոյ առաջի թագաւորի առանց ամօթոյ:

Ըտեա՛ս զփառս մարդկայինս, զի յնոյ ընկալցիս զչաւիտենական փառացն վայելս: Եւ թէ հալածանաց հանդիպիս յաղագս շքմարտութեան, յօժարութե՞ հալածեցիր ընդ քի՛, զի ընդ նմին հանգիցես: Եւ թէ նախատիցիս կամ յընչեց զբկիցիս, նոյնպէս սիրով յանձն առ-



ցես . զի զանսպառ բարինն ՚ի քսե ընկալցիս : Իսկ եթէ մնա՛հ հասանէ գլխովին վս հաւատոց , մեռիք սիրով քի . զի ընդ նմին յաւիտենական թագաւորեացես : \* Զի ոչ էն արժանի չարչարանք ժամանակիս առ հանդերձեալ փառսն որ յայտնելոց են ՚ի մեզ ասէ առաքեալն : և թէ՛ \* Զոր ակն ոչ էտես և ունկն ոչ լուաւ . և ոչ էլ ՚ի սիրտ մարդկան , պատրաստեաց ամ այնոցիկ , որ սրտիւ սիրեն զնա ՚ի բոլոր սրտէ :

Վերայ ամենայնի և նախ քան զամ մի յանձն ապաստան լինիր . այլ ՚ի տէր պարծեցիր և տերամբ գործեացես զամ և ան շնորհ ունիցիս . զի առանց նոյ եղև և ոչ ինչ և ոչ այլ լիցի : Ս ասն որոյ միշտ զխոնարհութիւն սիրեացես և զհեզութիւն և զողջամտհոլութիւն և զանստացուածութիւն և զկարեկցութիւն և զողորմածութիւն և զուէր և զգուծ առ աղքատս և առ անանկս : Եւ թէ ՚ի հալածանս իցես և ՚ի տանջանս և ՚ի նտհատակութե , զպահս և զարթոթս և զճգնութիւնս մի մոռանար :

Իս և թէ մերձ էս ՚ի մարտիրոսութիւն մեռանիլ , և կամ նշանս և սքանչելիս գործիցես և մեռեալս յարուցանիցես , այսմ ամենայնի առաւել պէտք են հանդերձ խոնարհութեամբ և սիրով վճարել : Օ ի առանց սիրոյ և խոնարհութե ՚ի զուր է ամ բարեգործութիւն զինչ և գործեն ազգք մարդկան : \* Թէ ունիցիմ մարգարէութիւն ասէ առաքեալ և գիտիցեմ զամ գիտութիւն , և նշանս և սքանչելիս գործիցեմ , և զամ ինչս իմ աղքատաց բաշխիցեմ . և այրիցիմ և ս հրով վասն նոյ , և զեղբայրն ոչ սիրիցեմ ըստ պատուիրանին տեսաւն , ոչինչ օգտիմ յայսմ ամենայնէ : Եւ սողմոն ասէ , \* Տէր ամբարտաւանից հակառակ կայ . և խոնարհաց շնորհս պարգևէ : Եւ հայր սորին , \* Պատարագ նոյ ասէ հոգի խոնարհ , զսիրտ սուրբ , և զհոգի խոնարհ ամ ոչ անգունէ : Եւ տէրն մեր հրամայէ . \* Որ խոնարհեցուցանէ զանձն վասն իմ , էս բարձրացուցից զնա փառօք յերկինս և յերկրի : և \* Ես յո՞ք բնակեցայց . եթէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս և ոյք գողանն ՚ի բանից իմոց :

Եւ այլ ինչ բարձրագոյն փառս՝ քան նոյ ընդ ունակ և տաճար հանգստեան լինիլ և տեղի և բնակարան . ո՞ր փառք այսմ համեմատի , կամ ո՞ր մեծութի այսմ հանգունակ լիցի : Օ ի թէ զաւուրս մտթուսաղայի որ լցցէ ՚ի վերայ երկրի , և զամ ՚ի բարութե վայելիցէ , և ՚ի մեծապայծառ ճոխութեան զուարճացի , և գլխովին զթագաւորական ունիցի պատիւ , և ՚ի փառացն նոյ զրկեսցի յետ աստեացս վճարելոյ , ողորմելի է այնպիսին և քան զանբանսն ևս՝ և քան զանշունչս : Օ ի նորա թէ և յարութեան յոյս ոչ ունիցին , և ոչ ասանջանաց երկիւղ . իսկ սա՛ որ զաւուրս ՚ի բարութե վայելեաց , և

ի մարդկանէ փառաւորեցաւ ըստ մարմնական պատուոց . կամ կեղծաւորութիւն ձեռացաւ բարի և իբրև զսուրբ պատուեցաւ , և այն ոչ պողարբերեաց ճշմարտապէս բարի ինչ որ զճաճուկան տեսանէ . արդարև մեծաց սանձանաց ակնկալցի այնպիսին և դատապարտութիւն :

**Եւ մի՛ որ** խաբէացի որո՞յ ասէն ոմանք անմխար , թէ գոյ տեղեր որ միջոց է արքայութիւն և դժոխոցն . որ թէ որ որ յարքայութեանն ոչ է , նա և ոչ ՚ի դժոխսն է , ապա ՚ի միջոցի անդ լիցի : Աշւ սուտ է այս կարծիք , մի՛ որ հաւատասցէ . որո՞յ ընդ մեհն և ընդ կեանք մեջ ոչ գոյ , այսպէս և ընդ դժոխքն և ընդ արքայութիւնն մեջ ոչ կայ : Ար ՚ի ցամաքի հանգիստ ոչ գացէ , ՚ի ծով ընկղմեացի . և որ յարքայութեանն չէ , ՚ի սանձանն է : Յոմար կուսանքն որ արգելան յարքայութեանն , այլ տեղի ոչ գտին կալոյ . այլ լուսն ՚ի տեսանէ թէ Երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենից : Յորոց փրկեսցէ քս անձ զհաւատացեալքս անուանն իւրոյ . և արժանի արասցէ ողորմութեան իւրոյ : Աշւ ինքն եղիցի օրհնեալ ընդ հօր և ընդ հոգւոցն սրբոց . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ այս ՚ի ժողովոյն Եփեսոսի ասացաւ :

**Եւ** յամ ժամ օրհնեմք զքեզ տէր . և գովեմք զանուսն քբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից :

Եթէ որքան մեծ են բանքս ասացեալ , որբ մաօք նայիցին՝ նց է յայտնի . այլ զի աղօթական բանիւ յօգեալ է յօրհնութիւն հարցն առ ՚ի վկայութիւն հաստատութեան : Բայց պարտ է ամենեցուն հոգ յանձին ունել և ուսուցանել զանջրպետութիւն և զորոշումն աղօթիցս , զի մի՛ որ ագիտաբար մի աղօթք կարծիցէ զերկոսինս . որպէս տեսանեմք ՚ի յոլովս որ յասելն զփառաբանական և զբազմօրհնեան աղօթս , զվերջնոյս սկիզբն յառաջնոյն վերջն միաւորեն . և զերկոսին շփոթեն , զի ոչ առաջնոյն վերջն ճանաչի և ոչ վերջնոյս առաջքն : Այլ միաւորելով յիբեարս առանց հանգիստ առնլոյ զանխուլ անցանէն :

Օհ ոմանք ոչ գիտեն բնաւ թէ Երկու են աղօթք և ոչ մի . և յոյլ և յայլ ժամանակս ասացած յայլոց և յայլոց արանց : Աշւ ոմանք ոչ զառաջինն ճանաչեն թէ որոց է , և ոչ զվերջինս թէ այլոց ևս է և ոչ ՚ի նոյն կարգէ : Այսն որոյ աղաչեմ զամենեսեան , զի յաղօթելն միջոց և հանգիստ առնիցէք ՚ի մեջ Երկուց աղօթիցս , որպէս ասացեալ էմք յառաջագոյն զի յայտ լիցի ամենեցուն :

Եւ յամժամ ասէ օրհնեմք զքեզ : Օ մարդարեկն առնու ըզբան որ ասէ , \* Օրհնեցից զտէր յամժամ . յամժամ օրհնութի նրի բերան իմ : Եւ յսինքն՝ ՚ի տուէ և ՚ի գիշերի միշտ գոհացայց զքէն :

Եւ գովելիք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից : Իձէ զինչ է օրհնելն կամ գովելն՝ ասացեալեմք յառաջին աղօթիցն տեսութիւն : Իսկ զյաւիտեանսն՝ մեծին խոսրովու յոյտ արարեալ է երկայնապատում բանիւ : Եւ աստ համառօտիւ զայս ծանուցանեմք թէ՛ յաւիտեան է ներկայս , և յաւիտեանս՝ սկիզբն հանգեք ձեզ յաշխարհին . և յաւիտենից՝ անսպառ և անձերանալի յաւիտեանն :

Եւ ըմանի արա տէր զօրս զայս խաղաղութիւն , և առանց մեղաց պահէս զմեզ . օրհնեալ էս տէր անձ հարցն մերոց . գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս , ամէն :

Եւ արածապատումն մովսէս զտիւ և զգիշեր ՚ի մի համար առնու և օր մի կոչէ . ոպ ասէ , \* Եղև երեկոյ և եղև վաղորդեան օր մի : Եւ զի սովորութի է մարդկան համառօտիւ բաժանել , և որչափ արեգակն ՚ի վերին կիսագունդս կայցէ , օր կոչել զերկոտասան ժամն միայն : Կա և տէրն պնդէր զմիտս աշակերտացն ՚ի հրաժարեցուցանելն զնալ ՚ի հրէաստան . ասէ՝ \* Ոչ երկոտասան ժամ է յաւուր : Եւ յայէս և աղօթիցս բան ասէ ,

Եւ ըմանի արա տէր զօրս զայս խաղաղութիւն , և առանց մեղաց պահէս զմեզ : Օ ի ՚ի տունջեան առաւել սխալն դիւրագայթ բնութիւնս մեր , և անարգել լինի ՚ի մեղանչելն : Ասն որոյ մտղթէ ըզխաղաղութիւն անցուցանելն . զի ՚ի գիշերի է զոր քնով անցուցանելիք և նահանջիմք ՚ի մեղաց : Եւ է զոր նսեմութի խաւարին առագաստէ զբնութիւն մեր և կաշկանդեալ կապէ իբրև շղթայիւք ոմամբք : Օ ի ոչ զօրեն ներգործել զգայարանքն . այլ խափանին վասն լուսոյն պահասութե : Իսկ ՚ի տունջեան զամենեսեան պատրաստ ունին ՚ի գործ . և յորովս մեղանչեն մարդիկ յորժամ զերկիւղն այ պահագան ոչ ունիցին . սակա այտորիկ ասէ ,

Եւ ըմանի արա տէր զօրս զայս խաղաղութիւն , և առանց մեղաց պահէս զմեզ : Եւ և օր կոչի կենցաղայս ընթացք որ արեգակն բերմամբ չափի ըստ հասարակաց մինչ ՚ի կատարած , իսկ առանձին իւրարանչելու ումեք չափ կենաց : Օ ի յառաջ բան զմարմնով երկինքն քի , գիշեր կոչեր կենցաղս , որպէս ցուցանէ էսայի . \* Ի գիշերաց կանխէ հոգի իմ ասէ առաւօտ առնել առ քեզ անձ :

Իսկ յորժամ ծագեաց արեգակն արդարութե քս ՚ի խաւարեալ բնութիւն մեր և լուսով գիտութե էլից զաիեղերս , տիւ կոչել

ցաւ կենցաղս այս ըստ իւրում տեսուն բանի : \* Ինչ պարտ է ասէ գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս մինչդեռ օր կայ : և թէ \* Մինչ յաշխարհ եմ, լոյս եմ աշխարհի : ॥ կայէ և առաքեալ : \* Որ խորհի ասէ՝ զօրն տեսուն խորհի . և որ ոչն խորհի՝ զօրն ան չխորհի ըստ անձնիշխան կամացն :

Եւ յայսմ աւուր կենցաղոյս միշտ որոգայթագիր ունիմք զստանայ, որ հանապազ ջանայ որսալ զմեզ ՚ի կորուստ . որպէս գրէ գլուխ առաքելոցն պետրոս : \* Արթուն կացէք հսկեցէք, զի ոսոխն ձեր ստանայ իբրև զառիւծ գոչէ . շրջի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ : ॥ Ի որոյ խնդրէ ազօթիցս բան՝ խաղաղութիւն և առանց մեղաց անցուցանել խնամոցն ւնյ : ॥ Ը միայն զառաջնիկայ հասեալ օրս յորում եմք, այլ և զիմ ժամանակս պանդխտութե մերոյ ՚ի վերայ երկրի : Եւ ընդ մեծագոյն պահպանութե խնամոցն ւնյ փոխարէնս մատուցանէ զճետակայ բանս գոհութեան :

( ) րհնեալ էս տէր ւժ՝ հարցն մերոց . գովեալ և փառաորեալ է անուն ւր . քո յաւիտեանս, ամէն : Օ Երկոց մանկանցն առնու զօրհնաբանութիւն . որ յիշատակաւ նախնեացն ՚ի գուժ ամէնին զիմ :

( ) րհնեալ էս ասէ ւժ՝ հարցն մերոց : Եւ յիմնն նահապետացն արբահամու իսահակայ և յսկոբայ . որոց հաւատոցն և մեք որդիք և ժառանք կոչիմք : Եւ նոցին միջնորդութիւն աղաչեմք զի թէպէտ և ոչ վասն մեր բարի ինչ գործոց, այլ գոնեայ վասն նոցին ողորմեան մեզ տէր . որոյ անունդ քո սուրբ գովեալ է և փառաւորեալ, ոչ այժմ միայն, այլ և յաւիտեանս ևս :

( ) րհնեալ տէր՝ ուսո՞ ինչ զարդարութիւն քո : Արեցս կրկնէ զբան օրհնութեւ ըստ սրովրէիցն սրբասացութե որ միշտ օրհնաբանեն : Եւ ՚ի դէմն որդւոց ասէ զերիս օրհնեալն, որպէս զերիս սրբասացութիւնսն սրովրէքն . զոր վկայէ յովհաննէս եթէ Եսայի Ետես զփառս որդւոց՝ և խօսեցաւ վասն նր՝ : Եւ և կիւրեղ աղէքսնանդարացի և դաւիթ անյաղթն ՚ի դէմն որդւոց ասացեալ : Եւ յպէս և աստ աղաչէ բանս զորդի՝ լուսաւորել զաչս մտաց՝ կարօղ լինել նայիլ ՚ի լոյս գիտութե օրինացն ւնյ :

Եւ և ՚ի խորհուրդ անօրէնութե քի որ արդարութիւ մեզ էրև, և արդարացոց զբնութիւն ձրի շնորհօք ողորմութեան իւրոյ ՚ի ձեռն խաչին իւրոյ : Եւ ճանաչէ զմեծագոյն Երախտիսն և գոհանայ զառատ ողորմութե նորա . քանզի շնորհօքն քի Եղաք արդարացեալք և ոչ անձին քաջութեամբ . զոր և մարգարէն ասէ, \* Արդարութիւն քո որպէս լերինք տէր ւժ՝ մեր . և իրաւունք քո որոյ խորք բաղունք : Եւ անզին ոչ բռնութիւն, այլ արդարութեամբ յաղթեաց թշնամոցն մերոյ և արդարացոց զմեզ :

Տէր ապոււէն եղեր մեր յաղդէ յաղդ : Մտխամարդարէն մոզսէս կարդաց զանուն տետուն այ մերոյ՝ տէր ապոււէն . և անձայրն դաւեթ առեալ դէնէր յերդս սողմոսին իւրոյ : Խորհրդաբար զայնս պաղատեալ և աստ աղօթիցս բան , ապոււէն կարդաց հաւատացելոց զտէրուծի ամենակալին այ : Օ ի ապոււէն եղև բնուածեանս , և ՚ի խաւարէ անգիտուածէ առաջնորդեաց ՚ի լոյս ճշմարիտ անգիտուածէ . յաղգացն առաջնոց որ ՚ի սկզբանէ՝ մինչև ՚ի վեջնս որ քիւ լուսուորեցաք , ապոււէն եղևալ մարդասիրապէս արարչական խնամօքն տէրն ՚ի վերայ արարածոց իւրոց . և միշտ լինի մինչ ՚ի կատարած :

Ես ասացի՝ տէր ողորմեա ինձ . բժշկեա զանձն իմ ես մեղայ քեզ : Օ սողմոսին առնու զբան . և հայցէ զողորմուածի յողորմած տնէ , և զբժշկուածի ոչ մարմնոյ խնդրելով , այլ զհոգւոյ : Եւ ուսուցանէ ամենեցուն , զանձն օրինակ բարեաց տալով այսպէս աղօթել միշտ :

Յոց մեզ ար զողորմուածիս քո , և զփրկուածիս քո տուր մեզ : Բժտանի արա սսէ մտաց աչօք նայիլ ՚ի սքանչելարար ողորմուածիս քո . որպէս բերահամ խասհակ և յակոր և մարգարէքն և արդարքն ամենայն : Եւ մեծաւ գոհուածի ՚ի քէն միշտ զփրկուածի ընդունել հոգւոյ և մարմնոյ , որպէ սովոր ես պարգեւել որոց խնդրէն ՚ի քէն :

Տէր ողորմուածի քո յաւիտեան , զգործս ձեռաց քոց մի՛ անտես առնէր : Բնապառ է ողորմուածիւն քո սսէ . և ես զի ստեղծուած ձեռաց քոց եմ , արարածս արարչիդ միշտ կարօտ գոլով ողորմուածեան՝ վասն որոյ խնդրեմ , ոչ առնել անտես՝ այլ կեցուցանել միշտ զկարօտեալս :

Տէր իմ զքեզ ապոււէն ինձ արարի . ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես ան իմ : Օ որ յառաջն ասաց և աստ երկրորդէ , յիշատակելով զապոււէն առնելն յօգնականուածի , շարժէ տկարացեալ բնուածիս զամենաղօրն անձ : Օ քեզ սսէ արարի ապոււէն և ոչ զայլ որ . վասն որոյ պարտիս խնամարկել միշտ : Եւ ապոււէն կոչի՝ որ տեղի ապաստանի է սարտուցելոցն և կարօղ է ՚ի թշնամեացն փրկել . վասն որոյ ամենեքեան դիմէն առնա : Եւ յայէս և ես զքեզ միտցն ինձ ապոււէն արարի սսէ . և խնդրեմ զի ուսուցես ինձ զերծանիլ ՚ի հնարից բանսարկուին , և հետեիլ միշտ կամաց տնդ իմոյ և այ : Օ այս և աւետարանիցն յովհաննէս սսէ , \*Ո՞ որ գիտես ան ուրէք զչարախօսին մերոյ զմեքէնայնս , դու ծածկեա զամենեւեան ընդ հովանեալ խնամոց քոց :

Ուստի ինչ ասէ : Միշտ զուսանին խնդրէ : զի տնյազ է բնու-  
թիւն մարդկան ըստ սողոմննի • \* Ո՛չ յագեսցի ասէ ակն տեսանե-  
լով և ո՛չ ունին լսելով : Աւթէ ՚ի զգալիս այսպէս , ո՛րչափ ևս ա-  
ռաւել յիմանալին :

Ի քէն է տէր աղբիւր կենդանութեան և լուսով երեսաց քոց  
տեսանեմք զլոյս : Օայս մարգարէն յառաջագոյն ասաց ՚ի սողոմնի  
անդ հոգւոյն սրբով , և զանճառ ծնունդն որդւոյ ՚ի հայրական ծո-  
ցոյ՝ և զանհաս բղխումն ամենասուրբ հոգւոյն յայտ արար , այսպէս  
ունելով բանին • Ի քէն է տէր աղբիւր կենաց և լուսով երեսաց քոց  
տեսանեմք զլոյս :

Հաւատացեալքս ՚ի քն ընդունիմք զլոյս գիտութեան անային  
շնորհացն , պայծառանամք ՚ի շնորհացն մկրտութե՛ս աւազանին , և  
էրեսք մտացս պայծառանան ՚ի շնորհաց երեսացն նոյ • ըստ որում  
ասէ երեմիաս , \* Հոգի երեսաց մերոց տէր քն : Ատե կենդանական  
զօրութի՛ն հոգւոյն սրբոյ միշտ ներգործէ յարժանաւորս և զանար-  
ժանս շնորհօք լնու :

Օագէտ՝ զողորմութիւն քո որք ճանաչեն զքեզ տէր : Բնդ  
լուսոյ առաւօտունս և զգութ ողորմութե՛ք քո և զլոյս իմանալն մար-  
դասէր կամաց քոց ՚ի հաւատացեալքս ծագէտ , տարածելով յամե-  
նեսեան որք ճանաչեն զքեզ տէր մեր և թագաւոր :

Օագէտ՝ ասէ զողորմութիւնս քո : Այսինքն՝ զորօրինակ ՚ի  
ժամ առաւօտուն նշոյլք ճառագայթից արեգականն ծագէալ ըղ  
նսեմութիւն խաւարին հալածական առնէ • այսպէս ողորմութե՛ք քո  
լոյս ճառագայթեալ ՚ի բնութե՛ք մերում , ՚ի բաց մերժէ զխաւար մե-  
ղաց և զանգիտութե՛ք : Աւ մէք ծանուցեալ զբարի տէրզ մեր և զա-  
րարիչ , գոհասցուք զառատ ողորմութե՛ք բումմէ : Որ էս օրհնեալ  
գովեալ և փառաւորեալ • այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
նից , ամէն :

Զինի ասելոյ զՓառք ՚ի բարձունսն :

Փառք պատիւ և գոհութիւնն ՚ի բարձունսն հօր և որդւոյ և  
հոգւոյն սրբոյ • այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ,  
ամէն :



## Խոսքովու :

**Պ**ատաւորեալ իւր անձառ փառօրն , և պատուեալ ՚ի հրեշտակաց , և գոհացեալ ՚ի մարդկանէ մշտնջէւաւորապէս , վասն որոյ և մէք զնոյն նմա վերառարեմք :

Յովհաննու իմաստասիրի՝ վասն Առաւօտին երդոցն :

**Լ**արկուշաբաթին՝ ըստ առաւօտին պաշտման խորհրդեանն կարգեալ է . յորում ժամու միւսանգամ գալուստ փրկչին պատմի : Ասան այնորիկ յառաւօտին աւուրն աղաղակեն ողբերգական ձայնիւ եթէ , \* Լոյս տուր տէր աչաց իմոց , զի մի երբէք ննջեցից ՚ի մահ ըստ յիմար հինգ կուսանացն : Վի սասացէ թշնամին կենաց թէ յաղթեցի նմա . կամ նեղեցք իմ ցնծասցեն թէ էս սասանեցայց ՚ի հուրն յաւիտենից՝ որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա :

Իսկ Երեքշաբաթին՝ ըստ երրորդ ժամու խորհրդեանն կարգեալ է . յորում ժամու գալուստ հոգւոյն հեղու յառարեալն : Օղոյ զկենարար գալստեանն զփորձ առեալ մանկուք եկեղեցւոյ՝ առաջի անկանելով աղաղակեն եթէ , Իքէն է տէր աղբիւր կենաց . և լուսով երեսաց քո գալստեանդ տեսնեմք զոյս : և թէ՛ ճագեա՛ տէր զողորմութիւնս քո ՚ի պաշտօնեայս և յերկրպագուս ամենասուրբ երրորդութեանդ :

Իսկ Չորեքշաբաթին՝ ըստ վեցերորդ ժամու պաշտամանն խորհրդոյն կարգեալ է . յորում ժամու հիւանդութիւն նախահօրն պատմի : Եւ ՚ի նմին ժամու բժշկութի՛ իրացն չարչարանօք խաչին տեսուն մերոյ յի՛ քի՛ ըստ պիտառութե՛ յովհաննու աւետարանագրի յստեն եթէ՛ \* Էր ժամ վեցերորդ և ուրբաթ զատկին , և հանին զնա ՚ի խաչ : Եւ զյայտիսի զփրկական տնօրէնութեան խորհուրդ ծանուցեալ մանկանց եկեղեցւոյ , աղաղակեն գօհանալով եթէ , Ես աղաչեմ տէր ողորմեա՛ ինձ . և բժշկեա՛ զանձն իմ էս մեղայ քեզ :

Իսկ Հինգշաբաթին՝ ըստ իններորդ ժամու խորհրդեանն կարգեալ է . յորում ժամու ՚ի խաչին աղաղակէր զեղեկն ստելով միաճին որդին այ : Եւ ՚ի նմին ժամու ընդ երեկս աւուրն զլուսաւորան ՚ի խաւարէն փարատէր , ըստ մարգարէական ձայնին նոր առաւօտ ծագելով նստելոցն ՚ի խաւարի և ՚ի սուուերս մահու : Աւստի լու-

սաւորեալ մանկանց եկեղեցւոյ՝ աղաղակէն յառաւօտին յասելն թէ՛  
Էս առ քեզ տէր աղաղակեցի՝ առաւօտու աղօթք իմ ժամանեցեն  
առ քեզ : Եւ որ ՚ի կարգին :

Իսկ Ուրբաթին՝ ըստ տասներորդ ժամու պաշտամանն կար-  
գեալ է . յորում ժամու ՚ի գերեզման իջեալ արարածոց . և իւ-  
րով անապական մահուամբն զանապականութիւն մեզ շնորհելով ,  
ազատեաց ՚ի դժոխաց և ՚ի գերութենէն սատանայի : Ճորմէ փրկեալ  
մանկանց եկեղեցւոյ՝ աղաղակէն գոհանալով յասելն թէ՛ \*Տէր ան-  
փրկութեան իմոյ ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջն քո : և թէ՛  
\*Մտցեն աղօթք իմ առաջն քո ար : Եւ որ ՚ի կարգին յարմարի պա-  
շտանաց բան :

Իսկ Շաբաթին՝ ըստ հանգստեան աղօթից խորհրդոյն կար-  
գեալ է . վասն զի շաբաթն հանգիստ ըստ եբրայեցւոց ձայնին է և  
կատարուամ յաւիտենին : Ճորում և մարտիրոսացն հանդիսից յիշա-  
տակն պատմի . \*Որք զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօք և ցան  
կութեամբ հանդերձ ըստ առաքելոյ : Խաչակից լինելով առաջին  
վկային ՚ի խաչ էլելոյն և զիս ժողովողին . յոր պաւլինեալ մանկանց  
եկեղեցւոյ ՚ի նոցա կարող բարեխօսութիւնն՝ աղաղակէն ողբերգա-  
գին ձայնիւ եթէ՛ Առաքեա՛ տէր զլոյս քո և զձմարութիս քո ,  
զի նորին առաջնորդեցեն ինձ մոլելոյս ՚ի գիտութիւն ճմարտու-  
թեանն . և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո . զանապատա-  
ցեալս ՚ի գերակայ բնակութենէն ՚ի ստորին նուաաստութիւնս :

Եւ աստ ասի Ասացուքն՝ կամ ոչն ըստ պատշաճի աւուր : Խոսքովս վասն Քա-  
րողին՝ նախ քան զՍուրբ աստուածն :

**Փ** առաւորեացուք զամենակալն անձ զՏայր տեառն մեր յի  
քի , գոհանալով զնմանէ որ պահեաց զմեզ խաղաղութի  
նի գիշերիս :

Տէս զի գոհացաւ նախկին , և դարձեալ այլ ևս գոհանալ հրա-  
ման տայ , ուսուցանելով թէ վասն այսորիկ գոյացաք , զի հանապազ  
այ գոհութի մատուցուք . և մի՛ երբէք մոռացին ՚ի մէնջ երախտիք  
նորա : Օտոյն զայս և մարդարէն ասէ , \* Օրհնեա՛ անձն իմ զտէր  
և մի՛ մոռանար զամ՝ առւրս նորա :

Փառաւորեացուք զամենակալն անձ : Ըմենակալ ասի . զի զամ  
արարածս ունի ընդ իշխանութիւն իւրով . և չիք որ որ կարէ ապա-  
տանելիլ ՚ի նմանէ : Թէսպէտ թոյլ էս հրեշտակաց և մարդկան անձ-



նիշխան լինիլ, այլ ոչ թէ յորժամ կամիցի արգելուլ զնոսս ՚ի կամակորու թենէ իւրեանց՝ զօրասցին առնել զոր կամին: Ար և հայր է աեառն մերոյ յի քի՛ . այն որ բնու թԷ որդին էր նոյ, կամեցաւ վն որդրմու թեան որդի լինել մարդոյ . այսուհետև եղբայր է մեր, Աւ որ նոր բնու թեամբ հայրն է, շնորհօք և մեր հայր է:

Աւ արդ՝ ոչ միայն արարչական գթու թեամբն խնամէ զմեզ, այլ և հայրականաւն . վասն այսորիկ ասէ փառաւորեսցուք զնա: Օհ որպէս զևր ծնունդս ընդ հովանեաւ իւր ասրեցոյց զմեզ և խաղաղութԷ պահեաց ՚ի գիշերիս: Աւ ոչ միայն վասն յառաւօտի լոյսս հասանելոյ գոհասցուք, այլ զի յևս մեծագոյն լոյսն զմեզ է հանս:

Ո մահճուանէ ՚ի կեանս . յապականութենէ յանապականութի . յանգիտութենէ ՚ի գիտութիւն շչմարտութեան իւրոյ:

Այս է լոյս շչմարտի՛ . իւր սուրբ գիտութին . յորմէ զրկեալ է զաք անգիտութեան խաւարաւ: Այլ որդրմեալ նոյ հօր, առաքեաց անձ՝ զորդին իւր սիրելի, զի հանցէ զմեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս և ՚ի մահճուանէն յաւիտեանական կեանսն . ցոր և ասէ մարգարէիւն, \* Ետու զքեզ ՚ի լոյս հէ թանոսաց, հանել զկապեալս ՚ի բանտէ և ՚ի տանէ կապանաց որ նստէին ՚ի խաւարի: Աւ ինքն աեւրն վասն իւր ասէ, \* Ես եմ ճանապարհ և շչմարտութի և կեանք: Ղանապարհ, որով ՚ի խաւարէն ՚ի լոյսն եկաք . շչմարտութի, որով յանգիտութի ՚ի գիտութի շչմարտութեան հասաք . կեանք, որով ՚ի մահճուանէ ՚ի կեանս փոխեցաք:

Իսկ յապականութենէ յանապականութի: Վորդու մն զոր աւազանաւն ստացաք . վասն որոյ ասէ պօղոս, թէ \* Ըստ իւրում որդրմութեանն ասրեցոյց զմեզ ՚ի ձեռն աւազանին վերստին ծընդեան, և նորդութե հոգւոյն սրբոյ զոր է հէզ ՚ի մեզ առատապէս:

Օհ արդարացեալք շնորհօք եղիցուք ժառանգորդք յուսով կենացն յաւիտեանից: Օսոյն վերստին ծնունդ յիշէ և պետքոս թէ, \* Տընեալք վերստին ոչ յապականութեան սերմանէն, այլ յանապականացուէն, կենդանի և մշտնջենական բանիւն նոյ: և զի՛ \* Ըմենայն մարմին խոտ է: և զի՛ \* Տնեալն ՚ի մարմնոյ մարմին է, որպէս աեւրն ասաց: Օոր և երկրորդեաց առաքեալ: \* Եւ խոտ ապականացու է:

Վասն այնորիկ ասէ առաքեալ վերստին ծնանիլ . ոչ յապականութեան սերմանէն զոր յազամնոյ ունիմք, որ մեղօքն ապականեալ՝ զանապականութեան սերմն արգէ յազգ ծննդոց իւրոց սերմանեաց . այլ յանապականացուէն: Այս ծննդեան սերմն է կենդանի և մշտնջենական բանիւն նոյ: Աւ ով է բանն կենդանի, քն՝ որ մշտնջենաւոր է, և մշտնջենաւորն անապական է: Արդ՝ ոսկ

յապահանացուէն աղականացու ծնար , այսպէս և յանապականէն ծնանիմք անապական : Տեսէ՞ր որո՞ց հայրն երկնաւոր լոյս և կեանք անապական՝ և շչմարիտ որդւոջն առաջնորդեաց մեզ ՚ի խաւարէ ՚ի լոյս՝ ՚ի մահուանէ ՚ի կեանս՝ յապականութենէ յանապականութի՝ յանդիտութենէ՝ ՚ի գիտութիւն շչմարտութեան իւրոյ :

**Մ**րդ՝ գոհացուք զնմանէ . և փառաւորեսցուք զնա . աղաչեսցուք և խնդրեսցուք , զի գերկարութիւն տունջէանս խաղաղութիւն և մտադիւր զուարթութեամբ արասցէ անցուցանել ՚ի մէնջ :

**Ս**ան երկուց զբանս սասց . զի կարի կարևոր է խնդիրս՝ խաղաղութեամբ , ըստ մտաց դիւրի՝ զուարթութեամբ գերկարութիւն աւուրն անցուցանել : **Ս**ան որոյ ոչ միայն խնդրել ասէ , այլ և արտի մտօք աղաչել յաղագս այսորիկ : **Եւ լինի այս որպէս :**

**Եւ** պարսպեալ պահեսցէ զԺողովուրդս իւր անձային զօրութեամբն որ ՚ի վերայ ամենայնի բարերարութիւն իշխանութի ունի :

**Ս**տուածային ասէ զօրութիւն որ ՚ի վերայ ամենայնի բարերարութեամբ իշխանութի ունի , եթէ պարսպէ զմեզ , խաղաղութիւն յոգիս մեր մտանէ և ան խառովութիւն հալածի ՚ի մտաց մերոց . և դիւրութիւն մտ շնորհի որ զուարթ առնէ ըստ գրեցելումն , եթէ՝ \* Սրտի բերկրեցելոյ երեսք զուարթք : **Մ**րդ եթէ և շատ է երկայնութիւն տունջէան և բազմորոգայթ , համայն զայսպիսի օգնութի խնդրել և գտանել ՚ի տեսունէ՝ խնդամիտ զօրն կատարեսցուք : **Ս**ան որոյ քարոզն թողեալ որ ընդ Ժողովուրդսն՝ զնսօսան յանձնուան սուարտէ :

**Մ**ենակալ տէր անձ մեր կեցն և ողորմեաց մեզ : **Եւ** Ժողովուրդն առ հասարակ ասէն՝ կեցն տէր : **Օ** ի և յամ իսկ բարիս սովորեմք ասել թէ՝ կեցաք բարեաւն զուարճացեալք : **Օ** սոյն զայս . աղաչեմք զի ընկալեալ զբարխան զոր խնդրեցաք՝ կեցցուք :



Մէծին խորովա՝ սակս Աղօթիցն , որ ասի նախ քան զՍուրբ աստուածն :

**Ի**ստ խրատու քարոզին՝ սկիզբն առնէ գոհանալ գերկուց լուսոյ՝ զգգալուցս , և զնմանալոյն : **Օ** գալի է արեգական լոյս որ երևի ամենեցուն հաւասարապէս . իսկ իմնալի լոյս է որ յոգիս մտքրեցելոցն ծագէ և զնմանալիսն լուսաւորէ : **Օ** որ ՚ի լուսնալ աւազանին զաղտ ոգւոցն՝ ՚ի սրբէն զնէրբին մարդն՝ ՚ի

բանալն զաներևոյթ տեսանելանն , ծագեն փառքն նոյ անշեջանելի լուսովն ՚ի սմա , և լուսաւորի անճառ լուսովն : Օրմէ սաէ պօղոս , \* Աստուած որ սասց ՚ի խաւարի լոյս ծագել :

Օհ ՚ի սկզբանն որ մինչ խաւարն էր ՚ի վերայ անդնդոց և սասց անձ եղեցի լոյս , և եղև լոյս , զայն դարձեալ մեզ խաւարելոցս սաէ յիւրմէ լուսոյն արար : Օբանն յառաջ բերէ առաքեալ այսպէս , \* Աստուած որ սասց ՚ի խաւարի լոյս ծագել , որ և ծագեաց ՚ի սիրտս մեր զլուսաւորութիւն փառացն նոյ ՚ի գէմն քի : Այսպիսի ինչ է զոր ստես եթէ , ծագեաց ՚ի սիրտս մեր լոյս , որովք տեսանեմք զփառս նոյ զոր ունի տէրն մեր քն ՚ի վերայ դիմաց իւրոց , քանզի տեսանի սուրբ երրորդութի մարբելոցն մտօք : Արնի և յառաջ կոյս առաքելական բանս ևս յայտնապէս սաէ , \* Այլ մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառս տեսուն իբրև ընդ Հայելի օրինակաւ տեսեալ , ՚ի նոյն պատկեր նորոգմբ փառաց ՚ի փառս որնի ՚ի տեսուն Հոգւոյ :

Բանալի որնի մարդկային Հոգի՝ մարմնոց սչաց զտեսանելն սայ որբան իցէ ՚ի մարմնի , այսպիսի օրինակաւ և անային Հոգին՝ ցորբան յոգիս մեր բնակէ , զաստուծոյսն մեզ երևեցուցանէ : Այս սայ տեսանել մեզ զանձ և զհրէշտակս և զսրբոցն ժողովան , և զայն բարինն զոր խոստացաւ անձ սիրելեաց իւրոց : Իսկ որք վասն մեղաց ամացանան ՚ի սուրբ Հոգւոյն , շնչաւոր մարդք կոչն՝ զմարդկայինս միայն ունելով զհոգի . և զայս որպէս զանասնոյ :

Այսան որոյ շունչ և ոչ հոգի կոչի , վասն զի հաւատարեալ է անասնոց անբանից և նմանեաց նոցին , զմարմնաւորս և եթ խնդրելով , զկերակուրս և զըմպելիս և զխառնութիւնս և որ այլ ևս մարմնաւոր հեշտութիւնք , զբկեալք ՚ի հոգւորացն : \* Քանզի շնչաւոր մարդ՝ ոչ ունի զհոգւոյն նոյ , զի յիմարութիւն է նմա սասց առաքեալ : ՚ի մարեալ սասց և անգէտ հոգւորացն , այլ մեզ սաէ յայտնեաց անձ հոգւովն սրբով :

Օհ որնի հոգի մարդոյ զմարդոյն գիտէ , նոյնպէս և նոյ հոգին զաստուծոյսն գիտէ , և գիտել սայ յորում բնակէ , այնպիսեացն սաէ առաքեալ , \* Այլ մատուցեալ էք ՚ի սին լեառն և ՚ի քաղաք նոյ կենդանոյ յերուսաղէմ յերկինս և ՚ի բերաւոր բանակս հրէշտակաց . և յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս և առ դատաւորն ամենեցուն անձ . և յոգիս արդարոց կատարելոց , և ՚ի նորոց կտակարանաց միջնորդն յս և ՚ի հեղձմն արեան նորա :

Այս անձ մատաւոր տեսանի սրբոցն սրաից , որոց երանի սայ տէրն վասն տեսլանն : Այլ արդարև երանելիք , զի աստէն յարքայութեան էն անդր մատուցեալքն որպէս սասց առաքելական բանս . լոս այսմ և մարգարէն ընդ նոյ խօսեալ սաէր , \* Երանի որոյ օգ-

հոռութիւնն իւր ՚ի քէն է • ելլ եղ ՚ի մտի ՚ի հովտէս արամուծեան :  
Եւ զև յայտնագոյն բանս լեցի՝ հովտ արամուծէ երկիրս է • վասն  
որոյ ասացաւ աղամայ, \* Տրամուծէ կերիցես զհաց քո զամաւուրս  
կենաց քոց :

Արդ՝ երանէ մարգարէն զայնս որք մտացն աստի ելք առնեն  
յերկիրնս • յոր տեղիս զուխտն աղօթից կարգէ : Այսպիսին զօրհ-  
նուծի ստացի, զև օրէնսդիր եղև իւր անձինն և այլոց • զնասցէ  
նա ՚ի զօրուծէ ՚ի զօրուծիւն, յառաքինուծէ յառաքինուծի, որ  
զօրացուցանէ զնա որպէս յաստիճանէ յաստիճան զգնացան փոփոխե-  
լով, մինչև ելցէ ՚ի վերինն սինոն • զորմէ ասաց պօղոս մայր լինիլ մեզ :  
Եւ այպ զինչ • երևեսցի անձ հրեշտակօք իւրովք ՚ի սինոն :

Տեսանէն զհամեմատուծի մարգարէական և առաքելական և  
աւետարական բանիցս : Այսպիսի լոյս է նոցա • որք զաւազանին  
շնորհն մարուր և նորոգս պահէն յինքեանս : Իսկ որ ՚ի Խաղմն մե-  
ղաց զանձինս ընկենուս արտաքսել յայնմ լուսոյ, խաւարաւ ծած-  
կին, և աստէն յարտաքին խաւարին են : Արոց կուրացեալ է առաջ-  
նորդականն, և ՚ի խաւարի շրջին • որպէս ասէ աւետարանիչս յովհան-  
նէս թէ, \* Ի խաւարի է և ընդ խաւար շրջի և ոչ գիտէ յո՞ր թիւս •  
զև խաւարն կուրացոյց զնա : Օտոյն և տէր ինքնին ասէ օրինակաւ  
մարմնոյն : \* Ճրագ մարմնոյ ակն է • յորժամ ակն առատ է, անձ մար-  
մինն լուսաւոր եղիցի • և երբ ակն չար է, անձ մարմինն խաւար եղի-  
ցի : Իսկ եթէ լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար է, խաւարն ո՞րչափ ևս :  
Օ մտացն խաւարմանէ ասէ զայս :

Այլ վայ մեզ • զև այնչափ օտարացար ՚ի լուսոյն որ լուսաւոր-  
եաց զմեզ, մինչ զև և գիտեմք իսկ ոչ՝ եթէ ՚ի լոյս ծնեալ էմք յա-  
ւազանէն • և ոչ զգալ անգամ խաւարիս ունիմք : Այլ որպէս ՚ի ծնէ  
կոյրքն այնմ լուսոյ անտեղեակք են, այսպէս և մեք ճշմարիտ լուսոյն  
անհնուտք • և նստիմք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու • որպէս և որք  
անընդունակքն աւետարանին լուսոյ :

Արդ՝ գէթ աննպաստ երբէք՝ դիմեսցուք առ լոյսն մեր քն և  
աղաչեսցուք զնա • զև բացցէ զաչս սրտից մերոց և լուսաւորեսցէ  
զոգիս մեր • ասացուք, \* Լիս տուր տէր աչաց մերոց զև մի երբէք  
ննջեսցուք ՚ի մահ : Օ ի որք աստէն ոչ լուսաւորին, անդ զղջանալ  
ունին • ասելով զայն որ յառական իբր յերեսաց ամբարշտելոցն գր-  
եալ է թէ, յորժամ զարդարոցն տեսանեն զփառս և անհնարին եր-  
կիւղիւ խուղին և ասեն բանս երկայնս, յորոց և է այս • Մոլորե-  
ցար ՚ի ճշմարտուծեան ճանապարհէն • և լոյսն արդարուծէ ոչ լու-  
սաւորեաց զմեզ, և արեգակն արդարուէ ոչ ծագեաց ՚ի սիրտս մեր :

Այլ մեզ մի լեցի անդ սգալ զտուգանս լուսոյ • այլ լուս

տէրունեան ձայնին որ ասէ , \* Ես լոյս յաշխարհ եկի . և որ դոյզակնի իմ , ՚ի խաւար մի գնացե . այլ ընկալցի զլոյսն կենաց : Օրքարժանացուք և մեք ընդունիլ և լինիլ որդիս լուսոյ և որդիս տունջեան . զի այնպիսեացն երանե մարգարէն ասելով , \* Երանի ժողովդէան որ գիտեն զօրհնութիս ան տէր . ՚ի լոյս երեսոց քոց գնացեն զօրհնանապազ : Այսինքն՝ թէ լուսով երեսոց քոց տեսցեն գնալ ուղիդ . և յանուն քո ցնծասցեն զօրհնանապազ :

Տեսանեն՝ զի արբայութիւն բերկրանք են աստէն . արդարոցն զիմ օր յայ երեսոցն լուսոյն լուսաւորեալք և ՚ի գնացս իւրեանց անմոլարք և անխաբ ՚ի չարէն , բերկրին միշտ անուամբն այ . ընդ այն՝ զի նորա կոչին հանապաղ՝ ուրախալիցք են : Իսկ զինչ լինիցի սվ մարդարե . \* Յարդարութեան քում ասէ բարձր եղեցին : Բարձրանալ ասէ և զստ արդարութեամբ քով . այլ առաւել յարդար դատաստանին քում բարձրանան , յորժամ ըստ արդարութե իրաւանց քոց զվաստակս նոցա բարիս առաջի ամ հրեշտակաց և մարդկան յարգանօր ցուցանես . և անեղծ պսակօք զնոսա պսակես : Ի այց զի զի չափաւորապէս վասն իմանալի լուսոյն տացաւ , սկիզբն արասցուք ՚ի բանս աղօթիցս :

Աղօթք՝ նախքան զՍուրբ աստուածն :

Ղոհնամբ զքէն ան տէր . Տէրմ գթով է գոհութեա նախաշաւիղ . զի զհասարակաց տէրն՝ սեպչական մեր և առաւել մերձաւոր ցուցանէ :

Տէր ան տէր , որ երևելի լուսով քո զուարճացուցեր զիմ արարածս քո : Բանդի ծագումն լուսոյն զուարճացուցանէ զիմ կենդանեաց աղջ : Աւ ոչ այսչափ միայն , այլ և անելականք և սբոյք և տունկք և սերմանք լուսովս այսու զուրեանց պիտանութիւն ցուցանեն և զուարճալի ՚ի տեսողն լինին հանդերձ բերկաւ և ծովուք :

Իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ լուսաւորեցեր մեզ զամենեսեան զհաւատացեալքս ՚ի քեզ : Ի յոս են պատուիրանքն այ և լոյս տան աչաց պատուիրանապահացն , ըստ այնմ զոր ասացն : Բանդի սէրն այ պատուիրանապահութեամբն ձանաչի . և պատուիրանապահն փոխադարձի յայ սիրիլ և զնտ տեսանել . ըստ ասելոյն սեաւն , \* Եթէ դք սիրե զիս , զբանն իմ պահեսցէ : Աւ դարձեալ

թէ՛ \*Որ առնէ զպատուիրանս իմ և պահէ զնոսս , նա է որ սիրէ զիս . և որ սիրեն զիս , սիրեսցի 'ի հօրէ իմմէ :

Տեսէ՛ր զլոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զամմարդ որ գալոց է յաշխարհս , որպէ՛ց ցուցանէ զինքն պատուիրանապահաց իւրոց : Ը՛յլ թէ՛ ասիցէ որ թէ՛ աղօթիցն բանն ոչ վն պատուիրանապահացն է , թէ՛ ասաց թէ՛ լուսաւորեցէր . այլ վն բովանդաւ հաւատացելոց :

Ըստցաք և մէք թէ՛ 'ի հաւատաւն և 'ի մկրտիւն մաքրեալ լուսաւորին ամ հաւատացեալք . ապա յետոյ ոքք աղտեղինն մեզօք , դարձեալ խաւարանան : Մասն որոյ և տէրն ասէ , \*Մինչդեռ ըզլոյսն ունիք՝ գնացէք ընդ լոյսն . զի մի խաւար ձեզ հասցէ : Օ՛ր զպատուիրանապահացն է լուսոյ ոռոգումն աստէն յաղօթիցս լուր . զի յետ գոհանալոյն՝ զեմանալի և զերեւելի լոյս ասէ :

Օրացո՛ զմեզ տէր 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց յամաշունչ գրոց , 'ի առնջենիս յայսմիկ և յամ ժամանակի . որպէ՛ զի լուսաւորեալ մտօք միշտ զհաճոյս քո արասցուք :

Երջոց աւասիկ թէ՛ 'ի պահպանութե պատուիրանաց նոյ լուսաւորին միտքն . վասն որոյ խնդրէ զօրանալ 'ի պատուիրանապահութիւնն և զլոյսն առնուլ : Եւ զի յոյ է զօրանալն՝ լուր մովսէսի որ ասէ , \*Մի ասիցես եթէ զօրութի իմ և ուժգնութիւնն սրտի իմոյ արար ինձ զօրութիւնս զայս մեծ . այլ յիշեսցես զտէր ամ քո . զի նա տոյ քեզ ոյժ՝ առնել զօրութիւն : Եւ յոք ասէ վասն նոյ , \*Նորաս է զօրութի և ուժգնութի . նորաս է հանձար և իմաստութի : Եւ տէր ինքնին՝ \*Առանց իմ ոչինչ կարէք առնել :

Եւ մէք զայս իմացեալ խոնարհ մտօք խնդրեսցուք զօրութիւն 'ի բարձանց : Ուստի և առարեւոցն տուաւ հնչիւն յերկնից եկեալ . յորմէ և զօրութի էր : Եւ զոր ինչ և ուղղիցէմք նոյ շնորհացն համարեսցուք 'ի մեզ . որպէ՛ և առարեալ՝ \*Զվաստակն որ տուաւ եւ բան զզմենեսեան վաստակեաց ասէ՝ ոչ է թէ ես՝ այլ շնորհքն աստուծոյ որ ընդիս :

Օրացո՛ զմեզ տէր 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց : Մասն է՛ր յաւել և զայն թէ՛ յաստուածաշունչ գրոց . զի իմասցուք և զայն թէ՛ հօգի ձեռային կայ 'ի գիրս . բանզի և ոգւոյ յովանգամ գիրք շունչ կոչեն : Ըրդ կենդանի են գիրք պատուիրանացն նոյ հօգուով ձեռայնով որ 'ի նոսս , զոյն և 'ի նախավկայէն ուսմիւր , զի ասէր զմովսիսէ թէ , \*Ընկալեալ զպատգամս կենդանիս տալ մեզ : Օ՛ր թէ՛ չէին կենդանի , մեզ զիարդ զկենդանութիւն տալ զօրէին : Ը՛յլ զի տան կենդանութիւն՝ նախ մովսէս ասէ զօրինացըն . \*Որ արասցէ զայն՝ կեցցէ՛ նովաւ : Ըստ և տէր ասէ , \*Որ ըզ

բանս իմ պահէսցոց, զմահ մի տեսցէ յաւիտեան : Եւ դարձեալ ասէ , \*Որ առաքեացն զիս , նա ետ ինձ պատուէր զինչ ասացից և կամ զինչ խօսեցայց , և գիտեմ զի պատուէրն այն կեանք էն յաւիտենականք : Եւ զի կենդանի և կենդանաբար է՝ անձաշունչ կոչի . և յայն զօրանալ՝ իջ վասն աւուր միայն խնդրէ , այլ ասէ , ՚ի տունջէնիս յայսմիկ և յամ ժամանակի : **Օ**չ յաւուրս յայս և յամ ժամանակս կենաց մերոց պահէսցուք զանձաշունչ գրոց պատուիրանս :

**Ո**րպէս զի լուսաւորեալ մտօք միշտ զհաճոյս քո արասցուք ք Մասնիկ իրերօք օգնեն միմեանց . հանապազօրդիւ ՚ի պահպանութի պատուիրանացն՝ անսխալ զլուսաւորութի մտացն պահէ . և լուսաւորեալ մտօքն միշտ զհաճոյսն նոյ առնել ազդեն մեզ . որով և երկնից ժամանեմք զոր հանդերձեալ բարի կոչեմք : Եւ հանդերձեալ կոչեմք , վասն զի ակնկալութե սպասեմք առնուլ զառաջիկայն՝ հանդերձեալ կոչեմք : Եւ է այսպէս զոր կից աղօթիցն ունի բանս :

**Ե**ւ հանդերձեաց բարեացն արժանաւոր լինուք ընդ ամ նքս քո : Բանիօն ասացից ուրախութիւն լինիլ այսմիկ , որ առաջի նոյ ընդ հրէշտակացն և ընդ արդարոցն բազմութեան յանպատում բարիսն վայելէ և նոցուն հաղորդակցիլ ՚ի գոհութի զբարեաց տուողէն զաստուծոյ . զի այս է զոր ասէ ,

**Ե**ւ ընդ նոսին փառաւորեսցուք զամենասուրբ զերրորդութիւնն . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ յետ ասելոյն զխաղաղութիւնն՝ ասէ :

**Խ**աղաղութի մեր և կեանք որ ՚ի հօրէ առաքեցար միածին որդի նոյ տէրդ մեր և փրկիչդ յս քս :

**Օ**քեղ ասէ մեզ խաղաղութիւն և կեանք ՚ի հօրէ առաքեալ գիտեմք , զոր յերևիւն քո յերկրի ծննդեամբ՝ օրհնաբանէին հրէշտակք ասելով , Փառք ՚ի բարձունս նոյ և յերկրի խաղաղութիւն : Եւ զքէն քո առաքեալ ասէ , \*Նա է խաղաղութիւն մեր որ արար զերկոսեան մի , զհրէշտակս և զմարդիկ , զհրէայս և զճէթանոսս : Եւրդ՝ զի խաղաղութի մեզ առաքեցար և ասացեր , \*Չխաղաղութի զիմ թողում ձեզ . զխաղաղութիւն զիմ տամ ձեզ :

**Տ**ուր մեզ զքո խաղաղութիւն , զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոցն փչմամբ քո ՚ի նոսա զկենդանացուցիչ և զամենազօր հոգիդ քո սուրբ :

**Օ** ի կեանք էս և խաղաղութի՛ն . և ՚ի քո սուրբ առաքելոցն յերեսս փչեալ և ասացեալ տուէ՛ք զհոգին սուրբ , էտուր նոյ՛ն հոգւոյն կենդանարարաւ կենդանութի՛ն անձային , և խաղաղութի՛ն , որով անգորր արարեք սրտից նոցա . զնոյն ասէ և մեզ տուր :

**Ո**րոյ՛ զի և մեք խաղաղացեալ լեցուք յիմ՛ աշխարհական սահեցմանց՝ լեցուք տաճար և բնակութիւն սրբոյ երրորդութեանդ :

**Օ** ի որ ՚ի մեղաց կամ յաշխարհական հոգոց ալեկոծին ոգիքն՝ ոչ կարեն ընդունարան սրբոյ երրորդութեանն լինիլ : **Ս** ասն այնորիկ աղաչեմք տալ զքո խաղաղութի՛ն . որ զիմ՛ մըրիկ մեղացն փարատեացես ՚ի սրտից մերոց , և զալիս աշխարհական զբաղմանց : **Լ** և մեք մարբեալ ՚ի հոգւոյդ սրբոյ՝ լեցուք տաճար և բնակութի՛ն սրբոյ երրորդութեանդ : **Լ** և այսմ մեծի պարգևի արժանի եղեալ ի ջաւանս սրբոյ երրորդութեանդ լինելով՝ զինչ արիաուր հատուսցուք . այլ գոհութիւն և փառաբանութիւն . վասն որոյ և ասէ ,

**Լ** և գոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ . այժմ՛ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Զկնի Սուրբ աստուածին՝ ասի Մաղծանքն և Քարոզն , և ապա Մանկունքն , և զկնի մանկանցն՝ Աղօթս :

**Ս**ուրբ էս տէր անձ մեր հզօր և փառաւորեալ . որ նստիս ՚ի կառս քերովբէականս և լոյս ծագես յարարածս քո :

**Չ**իք ինչ ախորժական նոյ և զուարճալի մեզ՝ քան զընտանութի՛ն ունել առ նա և մեր անձ կոչել : **Վ** անզի որոյ իւր են երկինք և երկիր , հաճեցաւ յիմ՛ ազգաց երկրի առնուլ իւր ժողովուրդ սեպհական զհաւատացեալս ՚ի քս և եղև մեզ անձ , որ ամենեցուն է անձ . որոյ յառաջադոյն ասաց մարգարէիւն , \* Ես եղէց նոցա անձ , և նորա եղիցին իմ՛ ժողովուրդ :

**Մ**ող ասեմք՝ Սուրբ էս տէր անձ մեր , հզօր և փառաւորեալ : **Ի** բնութէ՛ն ունելով զարբուծի՛ն և զփառաւորութի՛ն , և հզօր էս յամենայնի . ՚ի մեծութէ՛ն , ՚ի զօրութէ՛ն , յարարչութէ՛ն , յանմահութէ՛ն , յանապտիկանութէ՛ն , յիմաստութէ՛ն , ՚ի գիտութեանէ . և որ սոցին նման զօրութիւնք :

**Ո**ր նստիս ՚ի կառս քերովբէականս ըստ մարգարէին տեսութեան . այլ անձ անկարօտ է կառաց և անբովանդակելի : **Ե**ւ լոյս



ծագէս յարարածս քո : Արկնաւորացն 'ի քէն ծագէս լոյս և 'ի փառաց քոց . իսկ Էրկրաւորացս՝ լուսաւորօք հրամայես տալ լոյս :

Սուսաւորեան զմեզ տէր 'ի ժամ առաւօտուս : Աջ զլուսոյ զգալոյ , որ տուեալս է ասէ , այլ որ զհոգիսն լուսաւորէ :

Որն զն 'ի ծագել լուսոյ տունջեանս՝ ծագեսցի 'ի մեզ ողորմութիւն գթութեց քոց : Վրո ասէ մարմին և հոգիս մեր՝ ստեղծուած է : Արդ՝ որ մարմնոյ զտունջեանս ծագեսցեր զլոյս , ծագեսցես 'ի մարդասիրութենէդ և 'ի գթութենէդ . քումմէ զանանց լոյս ոգւոցս : Այս է ողորմութիւն և գթութիւն քո , լուսաւորել զմեզ քո երևմամբդ . որն զն դու ինքնին ասացեր զքեզ սիրողին , սիրիլ 'ի հօրէն և 'ի քէն , և քո երևմանդ արժանաւորիլ :

Էռացո 'ի մէնջ տէր զխաբէութիւն սատանայի . և զբռնութիւնորս խորտակեան աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց : Վանդե զԷրկիր և որ ըստ մարմնոյ կեանք՝ իբրև քաղցր բանասրկուն ցուցանէ , և 'ի բաց տանի զմեզ 'ի քո լուսոյդ , զաստի խաւարս իբրև զլուսով փարել պատրէ : Օհ որպէս խաղալօք զմանուկ , այսուիկ զմեզ խաբեալ զղկեսցէ 'ի քո բարեացդ . և իւր խաւարին հաղորդս տրասցէ : Այլ դու զքո գթութիւն և զմարդասիրութիւն զմեօք ծագեալ՝ հալածեան և հէռի արա զնորա խաբսն 'ի մէնջ : Օհ թէ և մեք անարժան եմք , վասն աղօթից արդարոցն , որ կան յԷրկիրի՝ և վասն բարեխօսութեան սրբոցն որք յադամայ , գթասացիս 'ի մեզ :

Արս և զԷրկիրս պողաբեր 'ի սնունդս ծառայից քոց : Վանդե ոն ծառայք 'ի տերանց իւրեանց զպէտս իւրեանց հայցեն , սցսպէս և մեք հայցեմք քո ծառայքս 'ի քէն : Աւ զոր օրինակ նորա հրամայեն շտեմարանապահաց իւրեանց զծառայակցացն իւրեանց տալ զկերակուրս . ըստ նմին նմանութե և դու քո ծառայիս Էրկիրի՝ մեզ սորուն ծառայակցացս հրաման տացես պատրաստել զդարմանոց մերոց պէտս , զն սնուցէ զծառայքս և զփառաբանիչս : Որ աստ և 'ի հանդերձեալսն փառաբանիչ քո եմք և լեցուք : Այս է զոր ասես :

Յորոց հանապաղ գովեալ փառաւորի 'ի բարձունս ամենասուրբ Էրրորդութիւնդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Զկնի ասելոյ Սիրեցի զի լուիցէ , կամ Բանից իմոց , և մաղթանքն՝ Քրիստոս սասուած , ասի Քարողս :

**Ս**ուրբ ճգնաւորքն աղաչեսցուք զտէր . որք զչարսն պարտեցին . նեղութեանցն համբերեցին . լուսեղէն և երկնաւոր պսակացն արժանի եղէն . աղօթիւք նոցա և բարեխօսութիւն մեզ ողորմեսցի . ամենակալ տէր անձ մեր կէցո՛ւ և ողորմեա՛ն :

Սուրբք կոչին որք ըստ հաճոյիցն նոյ քաղաքավարեցան , և կամ վկայական մահուամբ և արեամբ զմահ ընկալան . և ճգնաւորք ասին , զի ընդ դէմ սատանայի պատերազմաւ ճգնեցան , և յաղթեցին համբերելով զանազան վշտաց և նեղութեանց վասն անուանն տառն :

Ղօթիւք նոցա ասէ և բարեխօսութեամբն մեզ ողորմեսցի . ամենակալ տէր անձ մեր կէցո՛ւ և ողորմեա՛ն : **Օ**հ թէպէտ և վասն մերոց գործոց ոչ ունիմք համարձակութիւնչ աղաչել զամենազօր տէրութիւնդ . քո , այլ նոցին աղօթիցն միջնորդութեամբ և բարեխօսելովն կէցո՛ւ զմեզ և ողորմեա՛ մեզ :

#### Աղօթք Մարտիրոսաց :

**Պ**սակիչ սրբոց , որ պսակես զսուրբս քո . և առնես զկամն երկիւղածաց քոց . և հայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո :

Պսակ իմանամք տիրապէս որ եղեալ լինի ՚ի գլուխս թագաւորաց յորժամ օծանեն և տէր ՚ի վերայ երկրի և գաւառի կացուցանեն , որ բարձրագոյն է բան զամպատիւս որ է յաշխարհի : **Օ**հ թագաւոր զնմանութիւն նոց բերէ յինքեան ՚ի վերայ երկրի , իշխանութիւն ունելով կորուսանել և կեցուցանել , զայս ասէ աղօթիցս բան :

Պսակիչ սրբոց որ պսակես զսուրբս քո : **Մ**խինքն թագաւոր առնես զամենեսեան որք հաճոյ եղէն . քեզ , և որք թագաւորեցին ՚ի վերայ ախտից ՚ի կեանս յայտոսիկ . և իշխանաբար սպանին յոգիս իւրեանց զիգական և զճշտասէր բարս և զընդունակս մեզաց . և զարուսկան բարեզարդութիւն քաջապէս ապրեցուցին : **Մ**րդարև զայսպիսիսն ընդ քեզ թագազարդեալ պսակես ՚ի հանդերձեալ և յանվանձան կեանսդ յաւիտենական փառօք :

Մառնես զկամն երկիւղածաց քոց . և հայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո : **Ո**րք երկիւղիւ քեզ ծառայեն և ըզ

զինդրուածսն ըստ հաճոյից քոյ առնեն , դու տէր աղօթից նոցա լսես և վասն նոցին սիրես զարարածս քո և քաղցրութիւնս նսամես :

**Ի**՛նչը մեզ յերկնից ՚ի սրբութիւնք բումմէ , բարեխօսութեամբ սուրբ անձանքն և աղաչանք անձ սրբոց քոց : **Ի**՛նչը մեզ տէր և որդրմէս . ներեալ բաւես և թող զմեզս մեր :

**Օ**՛ր թէպէտ երկրաւոր գոյով մեր և յերկրի աղօթեմք , այլ դու երկնաւոր տէրդ յերկինս կարօզ էս լսել զաղաչանս մեր , և ՚ի բարձանց այտի ՚ի սրբութենէ բումմէ զինդրուածս մեր կատարելէ **Ի**՛չ մանաւանդ յորժամ զանձն պատուական և զմիջնորդն անձ աշխարհի զըբուհի կոյն և զանձ սուրբս քո բարեխօս առ քեզ ունիմք , հաւատամք թէ լսես հայցուածոց նոցա և ներես սխալանաց մերոց և քաւես զյանցանս :

**Ի**՛նչը արժանի անդադար փառաւորել զհայր և զորդի և զնք հոգիդ . այժմ՛ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն : **Ս**՛եծագոյն պատիւ է ծառային , յորժամ բարեփառ տեսուն գովօղ և փառաբանիչ լինիցի . և մանաւանդ թէ և վարձ ևս զայն ինքեան ընդ մեծագոյն աշխատանացն համարի : **Բ**ոցս ո՛րչափ ևս առաւել բարձրագոյն պատիւ որ համարեցի գերազանց քան զանձ փառս , յորժամ ամենեցուն տեսուն և բոլորից արարչին լնցի օրհնաբանիչ : **Ա**՛սն որոյ բան աղօթիցս ինդրէ արժանի լինիլ միշտ ՚ի փառաբանութիւնն ո՛յ պարապիլ . ո՞նչ ասէ , Ենդադար փառաւորել զհայր և զորդի և զնք հոգիդ . այժմ՛ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Ազնիւ Առաքելոց , Մարգարեց , Հայրապետաց :

**Ո**՛ր ընտրեցեր և ընկալար զերանելն վկայսն քո քն անձ մեր , և հաղորդս արարեր զնոսս կամաւոր չարչարանաց քոց :

**Ո**րնո՞ք ասէ առարեալն թէ՛ \* Ընտրեաց զմեզ անձ յառաջ քան զլինիլն աշխարհի , լինիլ մեզ սուրբս և անարատս առաջի նր՛ սիրով :

**Օ**՛ր օրինակ թագաւոր որ գիտելով զծառայից իւրոց զկարգանչիւր զքաղութիւն և զուժոյ կարողութիւն , նա և զպատշաճ պիտոյից գործառնութիւն ըստ ժամանակի և ըստ իրի՛ և առեալ կարգեցեղ զնոսս ըստ արժանեոյն . զոմն ՚ի զինուորութիւն ընտրելով , զմիւսն ՚ի գատաւորութիւն , զայլ ոմն գաւառապետ կարգելով , և զմիւսն գլուխ զօրաց կացուցանելով . զմիւսն ՚ի գունն արքունի կարգեալ , զմիւսն ՚ի

վերայ խաչիցն , և զայլ ոմն մատուռակ և սպասուոր իւրոյ թագաւորութեանն ընտրեալ :

Ըստ իւրում նախատես գիտութեան ընտրեաց զամենեսեան ըստ իւրօքանչիւր պիտոյից յիւրաքանչիւր դարս և ժամանակս ըստ արժանաւորութի : Արն յայտ առնէ երանելին պօղոս ասելով թէ , \* Նա եղ զմանս առաքեալս զմանս մարգարէս , զմանս աւետարանիչս , զմանս հովիւս և վարդապետս առ ՚ի հաստատութիւն սրբոց , ՚ի գործ պաշտաման , ՚ի շինուած մարմնոյն քի : Եւ դարձեալ թէ , \* Չորս եղ ան յեկեղեցւոյն այս է , նախ զառաքեալս , երկրորդ՝ զմարգարէս , երրորդ՝ ըզվարդապետս , ապա զորութիւն , ապա շնորհս բժշկութեան , օգնութիւնս , վարիչս , ազգս լեզուաց , թարգմանութիւնս լեզուաց :

Օ ի այլ պէտք էին նոյեան դարուն , և այլ պէտք և ընտրութիւն արբաճամեան ժամանակին : Եւ և այլ կոչումն էր մեծին մովսէսի , և այլ խորհրդածութիւն մարգարէիցն , այլ ընտրութիւն առաքելոցն , և այլ հրաւիրումն հայրապետացն : Եւլ երանակ էր ընտրութի մարտիրոսացն , և այլ սրբոց կուսանացն և ճգնաւորացն դատուց : Եւ յառաջխնամ գիտութիւնն այ զամենեսեան յառաջագոյն սահմանեալ և կնքեալ պահէր ՚ի գանձի իւրում : Եւ և զմերն լուսաւորիչ ընտրեալ մովսիսաբար և պահեալ պատշաճեցուցանէր իւրում ժամանակին հանդերձ իւրովքն ամենայնիւ առ ընկալեալ ըստ յետին մշակացն հաւասարելով : Այ միայն յօժարական կամօք , այլ և երկովք վաստակոց ՚ի վարձ առաջին ընտրելոցն : Եւ թէ ումեք յանդգնութեամբ բանս ոչ թուեսցի , և որդէգրական սնուամբ և սառաւել գերազանցեալ քան զբազումն : Ըստ է ընտրութիւն ըստ իմում բանիս զոր աղօթիցս բան ցուցանէ :

Ար ընտրեցեր ասէ և ընկալար զերանելի վկայսն քո քն անմեր , և հաղորդս արարեր զնոսս կամաւոր չարչարանաց բոց : Ա կայ անուն հասարակ է . զի առաքեալքն վկայութիւն քարոզելին . մարգարէքն վկայութիւն գուշակելին . և նահատակք և կուսանք և ճգնաւորք իւր վկայ բի ճգնելին հաւատարմով , թէ հատուցանօղ է իւրաքանչիւր գործոց ան : Եւ յորժամ ասէ թէ՛ որ ընտրեցեր զերանելի վկայսն , զամենեսեան ընդ բանիւս փակէ : Ըստարեւ՝ որ չարչարանացն կցորդին աեառն , և փառացն հաղորդ լինելոց են ըստ առաքելոյ : Եւ ըստ տերունական հրամանին՝ որք ըմպեն զբաժան չարչարանաց փրկչին յօժարական սիրով որն որդիքն զբեթեայ , ընդ նմին յարբայութեան պատուեսցին :

**Ը**րդ՝ բարեխօս առ քեզ ունիմք որք աստ և ընդ ամ տիեզերս սուրբք իցեն . զի աղօթիւք սոցա և բարեխօսութիւն խաղաղացուացես զկենցադավարութիւնս մեր , փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամւոյն :

Բարեխօս ասէ ունիմք առ քեզ զոր յամ տեղին և որ առ մեզ սուրբք իցեն . զի միշտ յիշատակ արցն 'ի գութ ամէ զամ 'ի վերայ մեղուցեաց . որպիսիս զի ասէր , \*Վերակացու եղէց քաղաքիդ սյդմիկ վասն իմ և վասն դաւթի ծառայի ինոյ , և պահապան եղէց դոցա յամենայնի : **Օ** այս ցուցանէ աղօթիցս բան թէ՛ յամ տեղին ուր սուրբք իցեն , և մէք զյիշատակս նոցա կատարեմք յուսով և սիրով . դու ար յիշեացես զնոցին չարչարանս և զնեղութիսն զոր վասն քո յանձն առին , և վասն նոցին բարեխօսութեն՝ մեզ ողորմեացին , փրկելով զմեզ յանմարմին դիւաց որ միշտ որսան 'ի կորուստ . և 'ի մարմնակից դաւողաց որ հակառակին ընդ կեանս աշխարհիս :

**Ը**նորհէս մեզ անէր ըստ օրինակի նոցա կեալ . և զվախճանն մեր կնքեա՛ ուղղափառ խոստովանութիւն 'ի յոյս կենացն յախտենից : **Թ**եպէտ զնոցին քաղաքավարութիւնն ս՛չ կարեմք ասէ բերել յանձին , այլ գոն է ըստ նոցին օրինակի շնորհէս սիրել զքեզ , և յուսով և հաստատով ըստ կարի մերում քեզ ծառայել : **Վ**ա և 'ի վախճանին և սարժանի լինիլ ուղիղ խոստովանութիւն՝ զյետին թողակն ըստ պատշաճի ընդուէլ առ հաւատչեայ յախտենական կենացն :

**Օ** ի և մէք արժանի լիցուք մտանել յերկնային խորանան լուսոյ և ժառանգել զպատրաստեալ իսկզբանէ աշխարհի սրբոց քոց զարբայութիւնդ :

**Խ**որան լուսոյ զվերին մայրաքաղաքէն է իմանալ ըստ պօղոսի . զոր և յովհաննէս յիշէ 'ի յայտնութեանն : \*Չորոյ զյօրինուածն ասէ 'ի սուրբ և 'ի սպիտակ սպակեայ . և գրուեք երկոտասանք յերկոտասան մարգարոց : Եւ ճբագ ասէ 'ի նմա զգառնն այլ զանէ մեր յն քն փոխանակ արեգական որոյ գիշեր ս՛չ տիրէ երբէք , այլ միշտ առ լցեալ լինի լուսով ամային ճառագայթիցն : **Վ**յս է զոր ասէ խորան լուսոյ որպէս ինձ թուի :

**Ս**տան որոյ աղաչէ բան աղօթիցս մտանել և ժառանգել լուսպատրաստեալն զայն լուսեղէն յարկ ընդ սրբոցն դասուց : **Օ** ի թէ աստ ըստ կարի մերում հետեւիմք հետոց նոցա , ապա հաւատամք թէ և անդ ընդ նոսին յարբայութեանն առնումք զխոստացեալ բարին , երգակցելով միշտ ընդ նոսին յօրհնաբանութիւն , որպէս հետակոյս ցուցանէ բան :

**Եւ** ընդ նոսին վառաւորել զամենասուրբ զէրրորդութիդ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Իսկ յաւուրս պահոց զինի ասելոյ՝ Խաչ քո եղեցի մեզ ապաւեն , ասի Քարոզս :

**Ը** զայժեպոսէր զամենակալն անձ՝ զի պահպանեացէ զժողովուրդս իւր ընդ հովանեաւ սուրբ և պատուական ամենազօր Խաչի իւրոյ ՚ի խաղաղութիւն :

**Ը** խորժեւի է յաւէտ միշտ՝ ծառայի խօսակից լինիլ տեառն . մանաւանդ յորժամ վասն խնդրուածոց իրիք պաղատիցի և հայցեացէ զօգտակարսն և ակն ունիցի առնուլ ևս զոր խնդրէն , առաւել ևս յօժարական սիրով թախանձիցէ : **Ը** պա յոյժ մանաւանդ առ ամենատէրն և արարիչ զայս պարտիմք առնել , որ ան պարզ և ազ է բաշխիչ և զամենեսեան միշտ խնամէ : **Օ** սոցնս խրատէ և քարոզիս բան , աղայէլ միշտ ջերմեռանդ սիրով զամենակալ մեծանուն տէրն , զի կեցողացէ զանձինս մեր որպէս և յաջորդ բանս ցուցանէ :

**Ը** մենակալ ան անձ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ս : **Օ** ի մեր միշտ կարօտիւ ըզձամք ընդունել ՚ի քէն զողորմութի՛ւ . և դու տէր միշտ և հասնապաղ առաւել սիրով յօժար ես ՚ի տալն . վասն որոյ զնոցն հայցեմք հանապաղ :

#### Աղօթք Պահոց :

**Օ** գնեա՛ մեզ անձ փրկիչ մեր վասն փառաց անուան քոյ : **(Օ** գնութիւն՝ ցաւակցաբար դժոյ է բացայայտիչ և կարեկից լինելոյ . զի զով սիրէ որ՝ նմին և ողորմի և ՚ի նեղութե՛ օգնական լինի : **Ը** դարձեալ զի տկարի և զըկելոյ է պէտք օգնութե՛ յողորմած և ՚ի բարեբար տերանց և յոյժ խնամարկելոյ , յորժամ տեսանէ յանիրուաց զըկեալ և յողթահարեալ : **Օ** այս մեզ ուսուցէ բանս ՚ի սկիզբն աղօթիցս օգնութի՛ խնդրել յնյ յամ իրողութիւն : **Օ** ի որչափ եմք ՚ի մարմնի՛ և ՚ի կեանս յայս տատանիմք , միշտ հակառակամարտ ունիմք զթշնամին կենաց մերոց : **Ը** նա հին ժամանակեաց և խորամանկ և հմուտ պատերազմի է , ամամարմն բնութի՛

և սրբնթաց և թափանցիկ յամբ • վասն որոյ միշտ խորխոսայ ՚ի վերայ մեր, և ջանայ յաւէտ կանեւ զմեզ :

Իսկ մէք տկարք և երեկեանք, ունայն և թափուր ՚ի հանձնորոյ, և ընդ մարմնոյ անկեալ թանձրութեան և կարօտութեան • վասն որոյ ՚ի քո զօրութիւր միշտ ապաւինիմք՝ ո՛վ տէր բարեբար, և զօգնութի խնդրեմք • օգնեա՛ս սսէ, այսինքն՝ ձեռն կարկառեա՛ս և զօրացո՛ս տէր յամենայնի : Ար փրկեցեր զմեզ յամ՝ մեքենայից խարդախողին մերոյ, և եղեր օգնական և զօրավիգ տկարացեալ բնութեանս մերոյ • և այժմ՝ և հանապազ յաւէտ զնոյն մաղթեմք : Ա՛չ վասն մերոյ ինչ արժանաւորութեան, այլ վասն անուան քոյ փառաւորելոյ • որպէս սսէ ՚ի կարգիս :

Տէր փրկեա՛ զմեզ և բաւեա՛ զմեզս մեր վասն անուանդ քոյ սրբոյ • պարսպեալ պահէա՛ զժողովուրդս քո ընդ հովանեաւ ամենազօր խաչի քոյ :

Օ՛ի վասն մեղաց մատնեցար ՚ի ձեռս թշնամւոյն և անկար ՚ի ներութիս և ՚ի վիշտս և ՚ի ցաւալից և ՚ի բազմածուփ կենցաղս յայս : Եւ թէպէտ և միանգամ պոտուտկան խաչիւ քոյ բարձեր զմեզս ամենեցուն, ստկայն մէք օր ըստ օրէ հանապազ մեղանչեմք • և ընդ նոյն ծառայութե՛ք մեղաց միշտ անկանիմք ըստ անձային քո անսուտ հրամանիդ, թէ \* Որ առնէ զմեզս՝ ծառայ է մեղաց : Օ՛ի որով իւրիք յաղթահարեցի մարդ՝ նովին և ծառայէ ըստ առաքելոյ :

Եւ արդ տէր՝ մէք տկարք և դիւրաստղապ բնութիս, ՚ի ծովածուփ կենցաղոյս և ՚ի պատրանաց որսողին միշտ մեղանչեմք և հանապազ մեռանիմք յանցանօք : Ա՛սան որոյ անդադար աղաչեմք զանոխակալ և զմարդասէր տէրութի՛ն ամենաբարի արարչիդ մերոյ, զի որդրմեցիս ըստ մեծի որդրմութե՛ք քում, և բաւեցես զյանցանս մերս :

Օ՛ի թէ արժանի արասցես զմեզ թողութեան մեղաց հասանիլ, հաւատամք թէ և փրկութեան շնորհացն հանդիպիմք : Եւ միշտ ընդ հովանեաւ ամենազօր խաչի քոյ աղաւարիմք հաւատացեալ ժողովուրդս քո, և գինք պատուական արեան քոյ սրբոյ • յամ՝ մնասակար արկածից անկասկած մնալ և միշտ ՚ի խաղաղութեան վայելել ՚ի փառս քո քս՝ անձ մեր :

Փրկեա՛ սսէ յերեւել և յաներևոյթ թշնամւոյն : Օ՛ի կրկին գորով մարդկայինս բնութիւն՝ հոգի իմանալի և մարմին անասնեղէն • վասն որոյ և կրկին ունիմք թշնամիս, իմանալի և զգալի • և յամենեցունց մաղթէ բանս փրկել և ամրացուցանել : Եւ յաւէտ յիրաւի • զի որն լծակցեցաւ մարմին ընդ հոգւոյ յարարէն ՚ի պէտս բարեգործութե՛ք, այսպէս և փրկութե՛ք պէտք է • զի միշտ ընդ

նմա յօրինէ զարժանն : **Օ** ի գործնական տառքինութիւն՝ առանց մարմնոց կցորդութիւնն ոչ մի ձարի . այլ լծակցաւն միշտ կատարին գործիական բարեգորդութիւնք ամ ըստ արարչին սահմաննի : **Ա**րով արժանի լինուի միշտ փառաւորել զամենասուրբ զերրօրդութիւնն , զոր և հետակոյ բանս ցուցանէ :

**Ա**ւտրա՛ սաէ՛ արժանի անդադար փառաւորել զՏայր և զորդի և զԵր հոգիդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն : **Ե**ւ զհաւրդ լինի հնար մարդոց ընդ մարմնոց կարեօք կապեալ անդադար ՚ի փառաբանութիւնն յոյ գտանիլ : **Օ** ի հարկն բունադատէ և կարիքն ստիպէ . երբեմն հանգչիլ , երբեմն զըռցատրել , երբեմն ճաշակել և ննջել , և այլ երբեմն յայլ պէտս զբաղիլ : **Ե**ւ այս ամ և սոյնպիսիք՝ խափանու մն են փառաբանութեցն յոյ . և յականոց կամս լուէլ տան մեզ յարթից և ՚ի կարդալոյ առ ամ . սպա զհաւրդ իմասցուք զբանս որով ճշմարտին գրեալքն ամ : **Ա**ռաբեալ լուծանէ ըզ տարակոյսս սաելով այսպէս , \* Եթէ ուտիցեք՝ էթէ ըմպիցեք՝ էթէ զինչ և առնիցեք , զամ ՚ի փառս յոյ արասջիք և մի ըստ մարմնոց : **Ե**ւ տէրն յայտնապէս հաստատէ զմիտս բանիս իւրով ամային հրամանաւն . \* Տեսցեն սաէ զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՏայր ձեր որ յերկինս է :

**Ա**րդարև տիրական և ամական ճշմարիտ և անսուտ հրամանք , որով յաւէս ճշգրտի բանիս տեսութիւնն . զի գործով փառաւորեն զամ անդադար է : **Օ** ի յորժամ ստանայ որ զտառքինութիւնն , որով հրաշանան մարդիկ ՚ի տես և ՚ի լուր , ամ ուրեք ՚ի բերան առեալ ՚ի գոհն և ՚ի փողոցս , ՚ի սան և յեկեղեցուջ պատմելով միմեանց փառաւորեն զամ՝ սաելով այսպէս , **Օ**րհնեալ է ամ , գոհութիւն և փառք յոյ , որ այնպիսի կարողութիւն և շնորհս պարգևէ սիրելեաց իւրոց :

**Ե**ւ ահա յայտնի եղև ստուգապէս թէ ճշմարիտ է բանս . և է տիրապէս հնար անդադար փառաւորել զամ գործովք տառքինութեան : **Օ** ի գործօնեաց գործոյն թէ ճաշակիցէ՝ թէ զինչ և առնիցէ , սբանչելի վարք նորս ամ ուրեք պատմին , և ամ փառաւորի . ըստ այնմ , \* Աստուած փառաւորեալ է ՚ի խորհուրդս սբբոց իւրոց : **Ե**ւ այս ոչ միայն ՚ի կենդանութիւնն , այլ և յետ մահու լինիցի զի անդադար փառաւորի ամ ՚ի սուրբս իւր : **Օ** ի ո՛ր որ լինիցէ զվարս մեծին յովհաննու , զհանդերձն ՚ի ստեղծ ուղտու՝ և զմարտաւ կերակրին՝ և զբացօթեաց լինիլն , և ո՛չ փառաւորեսցէ զամ : **Կ**ամ ըզ պողոսի զովալուսեակ լինիլն , և ո՛չ սիրասցի և մեծապէս փառաւորեսցէ զաստուած :

**Ա**րանելին անտոն յանապատին երբեմն ճաշակէր , երբեմն նըն-



Չէր . և սքանչելի վարք նորա և մեծամարտութի ընդ դիւստն միշտ յաղէքսանդր և ՚ի հոռոմ հռչակեալ լինէր . և ամենէքեան իբրև զերգ ՚ի բերան անեալ փառաւորեին զի՛նձ ՚իմ ուրեք : Սա և մերն լուսաւորիչ և մեծն և գովելին ՚ի հայրապետս սուրբն գրիգորիոս յես անտանելի չարչարանացն և բնակութեան վերապին , քառասուն ըզպահճքն լուծանելոյ , որո՞ց վիպէ մեծ քարտուղարն ագաթանդեղոս թէ \* Սուրբն գրիգոր յուր ան զանխլացեալ ՚ի լերինս սեպուհոյ յայրն մանեայ բնակէր . և իբր վերապին և համբաւ սքանչելեացն իբրև զձայն ճարտան յերկինս վերանայր և զաստուած փառաւորէր : Ս աղ ուրեմն ննջեցին հարբն սուրբ ճգնաւորքն առաջինք . և հրաշալի գործք նոցա յիշատակին մինչ ՚ի կատարած աշխարհի . և ՚իմ փառաւորի նորօր հանապաղ . և փոխանակ բերանոյ՝ գործք նոցին աղաղակեն անդադար ՚ի փառս աստուծոյ :

Ը յայսիս իմն էին սուրբքն ՚իմ . այսպիսի քաղաքավարութիւն բարւոք և գեղեցիկ ստացան ՚ի կեանս իւրեանց . և այսպիսի անուն բարի թողին յաշխարհի , և օրինակ բարի զննքեանս տալով ամենեցուն , և անդադար փառաւորելոյն նոյ : Օ այսպիսիս էս կոչեմ անդադար փառաբանութիւն . զայսպիսիս գովեմ և պատուեմ և յոյժ սիրեմ . թէպէտ և անձամբ վերջացեալ գտանիմ : Օ որ օրինակ ՚ի ծնէ կոյր՝ թէպէտ զգոյցութեամբքն ոչ վայելէ ՚ի լոյս արեգականն , սակայն ՚ի բնութեան և ՚ի լոյց հաստատեալ գիտէ՝ եթէ գեղեցիկ և վայելուչ և յոյժ պիտանի են ճառագայթք լուսոյ արեգականն : Ը յայսիս իմն և էս բնութեամբ իմանամ և ՚ի գրոց լսեմ և յելից իրացն ճանաչեմ , եթէ չիբ ինչ համեմատ ՚ի կենցաղումս գործոց առաքինութե : Ը ս հաւատամ՝ թէ նշոյլ է սա ճառագայթից իմանալի արեգականն արդարութեան :

Ը յ վայ է ինձ և եղևի եմ էս թէ ուր վտարէ զիս բանս . զի զայս պատմելով , ՚ի մէջ լուսոյ՝ ՚ի խաւարի մնամ : ՚ի մէջ աղբերաց՝ ծարաւի գտանիմ . ՚ի մէջ տկանց պատուականաց և անգին մարգարտաց՝ իբրև յառապարի փշալից և արինըռուշտ շրջիմ : ՚ի մէջ վայելուչ անուշահոտութեանց՝ իբր զխոզ գարշտակք ՚ի տղմի թաւալիմ . ՚ի մէջ օրինաց և պատուիրանաց՝ իբր անկարգ և անհանոն թիւրիմ . նա և բնաւ երբէք յուղիղն զիս ոչ գիտեմ :

Ը յ յայն զի նչ արարից , զի զայս ուսուցանեմ , և զիս ոչ խրատեմ . այլոք քարոզեմ , և էս ոչ առնեմ . զայս զօրթուցանեմ , և էս ՚ի խոր ննջեմ , զայս յորդորեմ , և էս հեղգ մնամ : Ը այց սրբոցն երանի անձանց՝ զի ճոխացան . երանի վարուց՝ զի սլայծառացան . երանի գործոց՝ զի բարձրացան . երանի կենաց՝ զի կենդանացան . երանի յիշատակին՝ զի յիշեցան ՚ի գիրս սուրբս և անջինջ գրեցան ՚ի յի-

չատակարանի առաջին նյ . երանի փառաց՝ զի փառօք իւրեանց անդադար փառաւորեցին զփառաւորեալն աստուած :

Օ ի սուրբքն և ընտրեալքն մինչ յաշխարհի էին և ՚ի մարմնի՝ միշտ փառաւորէին զի՛ծ , յօրէնս տեսան խոկալով ՚ի տուէ և ՚ի գիշերի : Որո՞ւ և ՚ի վարս հարանցն պատմի թէ ոմն ՚ի ճգնաւորացն ՚ի ճաշակէն՝ զմի ձեռն ՚ի վեր ամբառնայր և ՚ի միտս աղօթէր առ ի՛ծ : ՚Կա և յանուրջս տեպեամբք և խորհրդովք ընդ նյ լինէին . զորոց ոչ է դանդաղելի տեւ թէ և ՚ի վայելչականսն ևս ոչ կատէին ՚ի բարւոք խորհրդոց , այլ զմիտս միշտ շարժէին յօգուտսն :

Ի՛ւ և անդադար տեսն փառաւորել զի՛ծ , զմեր հեղգութիւս զարթուցանէ յարիւթի : Օ ի գիտացուք թէ անդադար պարտ է լինիլ փառաբանիչ նյ բանիւ և դործով և խորհրդով ոնք նբքն ի՛ծ : Եւ թէ ոչ իբրև զնոսա , գոնեայ ՚ի ծուլութեան և ՚ի թմրութէ և ՚ի մտաց զբարձմանէ զարթիցուք և արխացուք : Օ ի և նորա մարդիկ էին իբրև զմեզ , և շարչտրելի մարմնով անդադար փառաւորեցին զի՛ծ . զի որ անդադար նախախնամէ զարարածս , անդադար փառաւորութեան է արժանի յարարածոցս :

### Յորդորակ :

Ս անացուք և մեք ՚ի գործս բարիս , և զթմրութի մտաց մերոց զարթուցուք յերկիւղ և ՚ի սէրն նյ : Օ անցեալ ժամանակն բաւական համարեսցուք ունայնութեան կենցաղոյս և խաբեբայ պատրանաց սորա . զի արդարև նանիր և կամ սուտ է կենցաղս այս , և ՚ի զուր ամբօխի ի՛ծ մարդ ՚ի ցնակութի անձին իւրոյ : Օ ի թէ գոյր հնար համեմատել զմեծութիւն կենացն յաւխտեկեց առ սուտ վայել կենացս պսորիկ , բան զանուրջ և զերազ զարթուցելոց ևս վաթարագոյն լինէր : Օ ի որ ետեսն ճմարտապէս՝ ունայնութիւն ունայնութեանց ասաց , և սնտոխք սնտեաց և ոչնչութիւն ոչնչի : Եւ որք խաբեցան՝ զղջացան և ոչ զուարճացան . և պատմեցին տխրութեամբ արտասուօք և հառաչանօք յօգուտ և ՚ի շահ զինի եկելոց զի մի խաբեցին : Որո՞ւ և ինքն սողմոն ՚ի կարգարկեալ բանիւ՝ մանրամասնաբար պատմէ զամենայն :

Օ ի ո՞վ այլ որ իբրև զնա որ վայելեաց և զգործ էառ ամենեցուն . ոչ միայն զգալի կրիւք խնացեալ , այլ և գիտութեամբ և խնամութեամբ տեղեկացեալ : Եւ պատմէ մի ըստ միովէ զոր արար .

զիսաճիցն զանազանութի . զմատուակացն բազմութի . զբուրաստանացն վայելչութի . զկոյսա երամակացն և հօտիցն . զզանազան սպասուածութիս յարկացն . և զոսկւոյն և զարծածոյն՝ որոց ոչ էր համար : Ալ ՚ի վերայ ամենայնի զունայնութի բարոզեաց . և գոչէ յամենեցունց լսելն և իմանալ տայ որոց միտս ունին իմացական , էթէ սնտախէ ամ . և ոչ օգնեսցեն ինչք յաւուր բարկութե արդար դատաւորութեանն նոյ . այլ արդարութի միայն է որ փրկէ յաւիտեանական մահուանէն և յաներեւելի տանջանացն :

Ալ մեր զայս ամ գիտելով էզբարք՝ փութացուք ստանալ զառաքինութի . զի արժանաւոր վարս ըստ նոյ յանձինս մեր ընկալցուք . և համարձակ լինուք ասել ընդ պօղոսի թէ՛ \* Ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն քի . նեղութիւն , թէ անձկութի , թէ հալածանք , թէ սով , թէ սուր , թէ վիշտ , և այլն : Օ ՚ի արեւարե նեղ է դուսնն և անձուկ ձանաղարճն որ տանի ՚ի կեանս յաւիտենից : Ալ մեծագոյն հոգս պարտ է բերել յանձին , զի արժանի լինուք այնմ ուրախութեանց : Օ ՚ի զպատմութի անտի կենացն անձառ ասէ պօղոս . և ոչ պարտ վարկաւ յունկն մարդոյ խօսիլ . և ոչ տեսանելի և ոչ լսելի և ոչ իմանալի ասաց զպատրաստութիւն այնմ բարեացն :

Այս ան որոյ նախ քան զամ՝ սիրեսցուք զամ՝ որ սիրեսցն զմեզ . սիրեսցուք և զեղբարս որ է օրինակ սիրոյն նոյ . զորոնմածութեան զճետ երթիցուք . զօտարսիրութեան և զողբասսիրութեան : Պահօք պնդեսցուք , աղօթիւք ժրասցուք . զսուրբս պատուեսցուք . զվկայս փառաւորեսցուք . զտօնասիրութե միշտ զճետ երթիցուք . զնահատակաց և զճգնաւորաց զվիշտակս յուսով կատարեսցուք : Սի օրախնդիրք լինուք զի մի է ամ . և սէրն և յոյսն է գովելի առ ամ . և առ սուրբս իւր . մի սիրեսցուք զաշխարհ և մի որ ինչ յաշխարհի է : Սի զփոռս . մի զմեծութիւն . մի զարծած , մի զանացուածս և զինչս : Ալ զամ փոխանակեսցուք սիրոյն քի . զի երկնից արբայութեանն արժանի լինուք , փառաւորել զճայր և զբողի և զՏօգին սուրբ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Արեւգալի ժամուն, որ կատարի 'ի դէմս հոգւոյն: Եւ ասի՝ Եղեցի անուն անան օրհնեալ, և այլն որ 'ի ցուցակին: Տեառն Յովհաննու հայոց կաթողիկոսի՝ Եթէ զինչ խորհուրդ ունի Արեւագալին աղօթքն:

**Լ**յս աղօթքը զմիւսանգամ գալուստն քի նշանակէ, և ըզյարութի մարդկան 'ի գերեզմանացն յաւուր միաշաբաթօջ յառաջին ժամուն: **Ս** ասն զի յայնմ ժամու լինելոց է յարութիւն մարդկային բնութեանս. Թէպէտ և գիշերի ասի ըստ տէրունական առակին: **Լ** յա նա է առաւօտ և սկիզբն ծագման արեգականն արդարութեան. և լինելոց է այն յառաջին ժամուն մեծի առուրն: **Ս** ասն զի յայնմ ժամու վարկանիմ ստեղծեալ զմարդն առաջին, յորում ժամուն միւսանգամ կեողանանսն 'ի գերեզմանէն: **Լ** յառ խորհրդով բազումք վարին 'ի ներկայումս, ակն ունելով առարեւական խոսամանցն, և Թէ \* Փող հարկանի և մեռեալքն 'ի քս յարեցեն յառաջագոյն. և մեք նորոգեսցուք այլովքն հանդերձ:

**Բ** աս նմին օրինակի և իմ պահաւորն և հայրապետն սբ գրիգոր ըստ տէրունական առակին, զյարութիւն մեռելոցն՝ բուսոց և անկոց օրինակեր, 'ի գարունն բուսաբեր դալարանալ մարդկան 'ի գերեզմանաց: **Վ** անզի յետ անցանելոյ ձմերայնոյն և լինելոյ գարնայնոյն և հաւուցն լինելոյ մերձ յառաւօտն, ձայնքն զյարութիւն մարդկան նշանակէն: **Ս** ասն այսորիկ սթափեալ 'ի ժամուն յայնմիկ աղօթեն, ակն ունելով վերսասին նորոգման յարութեանն մեռելոց: **Լ** Եւ զուարթաթռիչ լուսով ճեպեալք 'ի հանդիպումն ամպովք երեւեցելոյն և հատուցանողին զիւրաքանչիւր ումեք զարժանն:

**Ս** ասն այնորիկ կարգեցան 'ի ժամուն յայնմիկ աղօթք, իբրև արժանի լինիլ մեծի առաւօտի լուսոյ ծագմանն, և զտէրն փառաց առանց սոճթոյ տեսանել: **Ս** ք յաւիտենին 'ի կատարումն եօթներեկին 'ի նախնի ութերորդ դարուն մաելոյ՝ յամեցելոյ փեսային 'ի վերջնումս գիշերին, 'ի արոհիլ օղեացն և այծեացն, յընարման որումանն և ցորենոյն: **Ս** ք օրն մեծ և երեւելի 'ի մարգարէիցն դաւանեալ, յորում յանդիման լինիլ մեղ կայ առաջի բեմին քի զն ընկալցի իւրաքանչիւրոք իւրով մարմնովն զոր յառաջ գործեացն Եթէ բարի և Եթէ չար: **Յ** որում առուր փայլին արդարքն որպէս զարե-

դաին յարբայութեան երկնից . որոց կայ անձ ՚ի մէջ աստուածացելոց  
 և թագաւորեցելոցն , որոշելով և բաժանելով զարժանաւորութիւն  
 անտի երանութեանցն : Որոց և մէք արժանի լինցուք հասանիլ խոս-  
 տացելոց բարեացն շնորհօք և մարդասիրութեամբ տեսուն մերոյ յի-  
 քի , որում վայելէ փառք ի շնանութի և պատիւ . այժմ և միշտ և  
 յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Մեծին Խոսրովու՝ վասն քարոզին Արևադաւնն :

**Յ**արևելից մինչև ՚ի մուտս արևու ընդ անձ տեղիս քրիստո-  
 նեութեան որք կարդան զանուն տեսուն սրբութիւն , տէր  
 յաղօթից նոցա և ՚ի խնդրուածոց մեզ ողորմեսցի :

**Յ**ուսադրէ զժողովուրդն՝ թէ մի վհատիք աղաչել զանձ . զի  
 թէ և յանձանց չունիք համարձակութի , համայն վասն սրբոցն բա-  
 րեխօսութեան՝ և աղօթից անձ քրիստոնէից որ յարևելից մինչև ՚ի  
 մուտս արևու աղօթս առնեն ՚ի վերայ հաւատացելոց , ողորմի մեզ  
 մարդասէրն անձ : **Վ**անզի ամենեքեան պատուիրան և կարգադրու-  
 թիւն ընկալաք յառաքելոցն և ՚ի սուրբ հարցն՝ վասն անձ եկեղեցեաց  
 որ ընդ անձ տիեզերս վասն բոլոր հաւատացելոց աղօթս առնել . զի  
 միոյ գլխոյ ամենեքին մարմին և անդամք եմք : **Լ**ւ եթէ մէք սրտի  
 մտօք ՚ի վերայ եղբարց մերոց աղաչեսցուք զանձ , յամ եղբարց աղ-  
 թից և մէք ողորմեալ լինուք :

**Ո**ւստիւք զանձ աղաչեսցուք : **Ո** սան զի աղօթիցն օգնականք  
 են ողորմութիւնքն և նուէրքն . որնք և կուռնելիտսին ողորմութիւն  
 և աղօթքն ելին յիշատակաւ առաջի նոց , և զհրէշտակս իջուցին փր-  
 կութիւն աւետարանել նմա : **Օ** սոյն և քարոզն աւետարանէ , զի  
 նուիրօք յեկեղեցիս և ՚ի քահանայս և ողորմելով ՚ի կարօտեալս՝ դի-  
 րահաշա լինի անձ . և առատապարգև յաղօթականն . որնք և սսէ իսկ  
 քարոզին բան :

**Օ** ի նա փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց և ՚ի ցանկութե աշխարհիս .  
 ընկալցի զուխտս և զխնդրուածս սրտից մերոց , և արժանի արասցէ  
 զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց :

**Փ**ոխադարձէ զփրկութի ՚ի մեղաց և ՚ի ցանկութե աշխարհիս ,  
 որք գէհնեին առիթ լինին , և արժանացուցանէ հաստատուն կալ ՚ի  
 հաւատս . և զօրացուցանէ ՚ի պահպանութի պատուիրանաց իւրոց :  
**Վ** . յս է զոր սսէն՝ Արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրա-  
 նաց իւրոց , ամենակալ տէր անձ մեր կեցն և ողորմեա մեզ :

Նորին խորհուրդ՝ վասն աղօթից Արևադաճնէ :

**Յ**արևելից մինչև ՚ի մուտս արևու օրհնեալես տէր : Բնդ  
 ամ տիեզերս յարևելից մինչև ՚ի մուտս արևու ասէ ծա-  
 նուցաւ անուն քո ըստ մարգարէիցն նախադուշակուածեան , և օրհ-  
 նի յամենայն սպգաց . քանզի քարոզեցաւ յամենեւեան աւետարան  
 արքայութեան :

**Ա**ւելիցի անուն քո օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան և  
**Օ**րհնեն ասէ յարևելից մինչև ՚ի մուտս արևու . և եղիցի օրհնեալ  
 ոչ միայն սպժմ , այլ անխափան յայսմ հետէ մինչև յաւիտեան :  
**Մ**ինչ՝ ոչ սահման ինչ դնէ օրհնութեան սուրբ անուանն այ , այլ  
 զանասման և զանհատ յաւիտենին զվշտնջենաւորութի յայս առնէ :  
**Ա**յս զի արժանի է միշտ օրհնութեան՝ ասէ զբարերարութիւնն  
 որ ՚ի նմանէ :

**Ո**ր բարձեր զխուարն կուրութեան և ծագեցեր ՚ի մեզ զայս  
 անգիտութեան ՚ի յիմարեալ սիրտս և ՚ի մահկանացու մարմնս մեր :

**Ա**րարև կուրացեալ էաք անգիտութի խաւարաւն և զրկեալք  
 յածածանօթութի , որորմեալ մեզ այ՝ քարոզութեամբ սուրբ աւե-  
 տարանին՝ փարատեաց զխաւարն մտրորութի . և զյիմարութի ազի-  
 տութեան ՚ի բաց եբարձ անային լուսոյն , որով ծանեաք զմք զեր-  
 բորդութիւնն ան՝ և կեցուցիչ և արարիչ ամենայնի : **Ա**ւ մահկա-  
 նացու մարմինք մեր ընկալան զազաւատաչեայ անմահութեան՝ քի՛  
 անօրէնութեամբն . զի ՚ի մահ նորա մկրտեալք՝ ընդ նմա յարեաք և  
 ընդ նմա կենդանի մնալոց եմք յանանց յաւիտեանս :

**Ա**ւ սպժմ աղաչեմք և խնդրեմք ՚ի բարերարութիւդ քու մե՛ ,  
 արա՛ւ արժանի սրբութեամբ տեսանել զձսուագայթս արեգակնն :

**Բ**նդէր յաւելլու թէ ՚ի բարերարութենէդ քու մե՛ խնդրեմք :  
**Օ**ք բարերարութիւք քո ասէ վրկեցեր ՚ի խաւարէ մտրորութեան և  
 լուսաւորեցեր զոգիս մեր , ծագես նովին բարերարութիւդ զարե-  
 գակն՝ և զմարմնս լուսաւորես . նոյն բարերարութիւք և զմեր զա-  
 նարժանութիս արժանացն ՚ի սրբութեան մնալ և տեսանել զոգակն  
 արեգակն : **Օ**ք թէ զսա սրբութիւք տեսանել լիցի , ոչ զրկիմք ՚ի  
 տեսանելոյ զարդարութի արեգակնդ որ յիմանալին ծագէ և լու-  
 սաւորէ : **Ա**ւ զի որոյ յորով անգամ ասացաք , թէ բազում են փոր-  
 ձութիւք և խռովութիւք որ հասանեն մարդկան ՚ի առէ և ՚ի գիշերի .  
 վասն այնորիկ աղաչէ զմեզ երկայնութիւն առնջէսն անփորձ ան-  
 ցուցանէ՝ սցսպէս ասելով :

Կաղաղութեամբ անցուցանել զերկայնութի տունջեանս , և Հասանիլ ՚ի պաշտօն երեկոյն յերկրպագութի և ՚ի փառաբանութի ամենասուրբ երրորդութեանդ :

Օ ի Հասեալք ասէ յերեկոյն խաղաղութեմ՝ երկիրպագցուք և փառս տացուք սուրբ երրորդութեանդ : Ո՛ւր , ամ ուրէք ուր և երթայցեմք՝ ընդ մեզ լինելով պահապան մեր և աջողիչ գործոց մերոց և լցուցիչ պիտոյից մերոց , Հասուցանես յերեկոյն պաշտօնն : Ըստ ասէ , Որում վայելէ փառք իշխանութի և պատիւ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Առաջի քո տէր և առաջի փառաց քոց և առաջի մեծի տէրութեանդ քոյ խոնարհեցուցանեմք ծառայք և աղախնայք զգլուխս մեր :

Ըսեմք զայս ցած զե զարթուսցուք զմիտս մեր թէ ո՞յր առաջի երկրպագեմք , կամ ո՞ր փառաց և ո՞ր պիտի մեծի տէրութեան խոնարհեցուցանեմք զգլուխս . զի լնցի ահ մեծութեմ նորա յոգիս մեր : Եւ որչափ ՚ի կարի մերումէ՝ նմանեացուք երկնաւորաց բանականացն որ մեծաւ երկիրըս զայ մեծութիւն պաշտեն : Եւ ըստ մարգարէին՝ \* Երկիրըս երկիրպագցուք առաջի ահաւոր և անչափ փառացն աստուծոյ :

Պառ տէր ամ մեր ձգեա՛ զամենապօր աջ քո և օրհնեա՛ զմեզ : Ո՛չ եթէ ձեռն և աջ գոյ այ՛ յայն ստիս զայս ասեմք . և կամ պէտք ինչ են ձգել ՚ի մեզ և այնպէս օրհնել զմեզ . զի այսպիսի անդամք անմարմին բնութեանս չեն պէտք , ո՛չ այ՛ և ո՛չ հրեշտակաց : Եւ զի զածապայելուցն զիւրդ են ձկարեմք իմնալ և կամ ասել , ապա ՚ի մերոյս աստի առնումք օրինակս . որպէս մեք սովոր եմք առնել , զի ձեռն դնեմք և այնպէս օրհնեմք : Եւ յիսպքն այս է , գթալ և խնամարկել և օրհնել . զի զոր ամ օրհնէ , երանելի է յերկինս և յերկրի . ասէ ,

( ) օրհնեա՛ և բաւականս արա՛ զնոսս . զի յամենեցունց յամ՝ ժամ փառաւորեսցի ՚ի ծառայս և յաղախնայս ամենասուրբ անունդ քո :

Ըրդարև ծառայի և աղախնոց մտերմի և տիրասիրի գործայս է , ո՛չ զիւր ինչ խնդրել , այլ զտեսան . որպէս և աստ աղօթիցն բան ասէ՝ ո՛չ յերկնից և ո՛չ յերկրէ խնդրել ինչ , այլ զի փառաւոր լնցի

անուանն նոյ մեօք : Այնպէս սսէ կարօղս արա՛ զմեզ քով օրհնե-  
լովդ , զի այնպիսի ունիցիմք վարս որով սուրբ անուանդ քո փառա-  
ւորեսցի : Աւքեզ զօրհնութի և զփառս տացուք հօր և որդւոյ և  
սուրբ հոգւոյն , այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Ձկնի սսեւոյ զհաղթանքն՝ Աղաչեմք ողորմեաց , սսի Քարօղս :

**Ս**ուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զտէր : Այս քարոզիս  
և աղօթիցս և առաւօտուն՝ մի էն բանք . բայց կրկին  
էդաւ աստ , զի միշտ զսիշատակս սրբոցն և զերախտիան անմուաց ՚ի  
մտի ունիցիմք . և նոցին միջնորդութեամբն զի՛մ աղաչեսցուք , զի  
հաշտեսցի ընդ մեղուցեալքս , և կեցուսցէ զմեզ ողորմութի՛ք իւրով .  
որո՞յ սսէ , Ամենակալ տէր ի՛մ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ :

Աղօթք :

**Ս**ուրբ էս տէր և ՚ի սուրբս հանգուցեալ : Օ մարգարէին  
առնու զբան որ սսէ , \* Սուրբ է տէր ի՛մ մեր որ բնա-  
կեալն է ՚ի բարձունս : Աւ զոր ՚ի դիմաց նոյ բարբառի . \* Եզերուք  
սուրբք սսէ զի էս նբ եմ տէր ի՛մ ձեր : Աւ թէպէտ ոչ է հնար  
մեզ՝ նման լինիլ նմս սրբութեամբ որո՞յ և ոչ այլով իւրիք , այսինքն՝  
անեղ բնութի՛ք կամ անսկզբնութի՛ք կամ անվախձանութի՛ք , սսկայն  
բստ կարի մերում որչափ և գոյ հնար՝ զգուշանալ պարտ է սրբութի՛ք :

Սուրբ էս տէր սսէ : Այսինքն՝ անհաս յամենեցունց անհա-  
մեմատ և անհետաղօտելի և ՚ի մերբան զի՛մ իմացումն և զնմանութի՛ն  
դերազանցեալ սրբութեամբ :

Աւ ՚ի սուրբս հանգուցեալ : Կրկին է միտք հանգւելոյն զոր  
բանս ցուցանէ . զի առաջին հանգիստ կամանցն լուսնն է հաճոյիցն  
նոյ , ուն այն զի սսէ , \* Հանգեաւ ի՛մ յի՛մ դործոց իւրոց զոր արար :  
Այսինքն՝ թէ զի՛մ զոր արար՝ ետես զի բարի էն և կամքն կատար-  
եցաւ ՚ի նոսա : Աւ տէրն ՚ի խաչին սսէր , \* Ամենայն ինչ կատար-  
եալ է : Այսինքն՝ անօրէնութե խորհուրդն ՚ի կամաց իւրոց լուսնն  
և ՚ի մեր փրկութիւնն :

Իսկ երկրորդ հանգիստ այն է՝ զի ՚ի սուրբս և ՚ի բարեգործս



յորս հաճի կամօքն և հանգչի, որն ՚ի տաճարի բնակե ՚ի նոսս շնորհօք . ըստ այնմ, \* Ես յո՞ բնակեցոյց, և թէ ոչ՝ ՚ի հեզս և ՚ի խոնարհս և ոչք դողան ՚ի բանից խնց: և թէ՝ \* Դուք տաճար նոյ կենդանոց էք որն ասաց անձ թէ բնակեցոյց ՚ի նոսս և հանգեցոյց ՚ի նոսս միշտ . և եղէց նոցա անձ, և նոքա ինձ սուրբ ժողովուրդ և հաճոյ և կամարար:

**Լ** և մեր սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ . բարեխօսութիւնք անձանին և աղաչանօք անձ սրբոց քոց, մի մերժէր զմեզ յողորմութենէ բուսմէ, այլ կացն զմեզ առ ոտս սրբոց քոց:

Մարտտ կուսին ասէ բարեխօսութեամբն, և չարչարանօք և հեղմալք արեան սրբոց քոց վկայիցն՝ մի զրկեցուք ՚ի փառաց երեսաց քոց որդրմանձ տէր: **Մ** և առ ոտս սրբոց քոց միշտ դեզերել զմեզ արա՛, և նոցին միջնորդութեամբն խնդրել ՚ի քէն զողորմութիւն որն ՚ի բազմագութ և յոնիշաչար տեսնէ . զոր և ասէ,

**( )** Ի դու ես բազումորում անձ . և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Փոխ և Մաղձանք, և սպա Քարոզս:

**Փ** առաւորեացուք զամենակալն անձ որ ծագեաց զլոյս սուսուտու յարարածս իւր, ծագեացէ և այժմ՝ զառատ որդրմութիւն իւր ՚ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ . ամենակալ տէր անձ մեր կեցն և որդրմեա՛:

Խրատէ զամենեսեան փառաւորել զանձ ՚ի վերայ զգալի լուսոյս ընդունելութեան . որն զի նախընծայ փառաւորութիւնս յորդորեացուք զբարեբար տէրն մեր, զի ընդ առօրեայ և անցաւոր լուսոյս ծագման՝ ծագեացէ և զառատ որդրմութիւնս ՚ի փառաբանիչս անուան իւրոյ սրբոյ և կեցուցէ զմեզ . որն ասէ, **Մ** ամենակալ տէր անձ մեր կեցն և որդրմեա՛:

Աղօթք:

**Օ** առաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս ընկալ ամենակալ ամենամեծդ աստուած . ՚ի քո անապական և յերկնային խորանալ:

Բաւաւոտ ոչ միայն զգալի այլ և իմանալի պարտ է գիտել զղինն ժամուհն, յորում առաւել լի է անձ . ըստ մարդարէին, Բնդ առաւառս լուիցես ձայնի ինում: Այլ բանաւոր պաշտօն ասէ, վասն զի գոյ և անբան պաշտօն . որոյ և է սէրն և ողորմութիւն, հեղու- թիւանն, պահքն, խոնարհութիւն, անոխակալութիւն, ժուժկալութիւն և համբերութիւն ՚ի չարչարանն և ՚ի վնշտան: Նառայելն հիւանդաց, հիւր ընկալելն, ընդ վշտացեալն ակրիւն, և ընդ բերկրեալն ցնծալն: Բայ ան և սոյնպիսիքն անբան պաշտօն կոչին զոր կատարէ մարդ վասն նոյ: Այն որոյ ազօթիցս բան՝ զբանաւորն յաւել ՚ի պաշտօնն որ է երգովք փառաբանութիւն, զոր և ասէ,

Բնկալ ամենակալ ամենամեծդ անձ ՚ի քո անապական և յերկնային խորանագ: Օ վայելչութիւն երկնային խորանի քո անեղծ և անապական ասէ խոստովանիմք, և բարձրագոյն քան զէսս անձ: Այն որոյ ազատէմք ընդունել զպաղատանս զոր մատուցանեմք առաջի մեծազօր տէրութեանդ քոյ, և յառատածիր շնորհաց քոյ հեղուլ յարարածս քո . որպէս և կարդ բանիս ցուցանէ:

Սագեա՛ ՚ի մեզ զինաստութիւն և զարդարութեան զլոյս քո: Օ մտացն լուսաւորիւն կոչէ իմաստութեան լոյս . որով զմեծագոյն երախտիսն նոյ ճանաչել կարեմք, և նովին շնորհիւն զարդարութիւն ըստանալ . որով պայծառանայ իշխանականին առաջնորդութիւն առ ՚ի յընտրութիւն ճշմարտութեանն:

Բայ զմեզ որդիս լուսոյ և որդիս առնջեան: Օ ի որպէս զգրալի լուսոյս ծագումն առողջ զգայարանք յատկապէս ընդունի, այսպէս մտաց մերոց տեսութիւն մեքրեալ յախտից՝ զինմալի լոյս գիտութեանն ճանաչէ . որով ճշմարտապէս որդի լուսոյ կոչեսցի:

Որո՞ զի ՚ի գալ առուրց երկնաշրջութիւն վարեցուք զկեանս մեր, և առանց գայթակղութիւն կատարեցուք: Այլ շտ ասէ ՚ի շրջագոյնութեան արեգականս և յօր ըստ օրէ ծագելն և ՚ի լուսաւորելն զարարածս, արժանի արա զմեզ բեւեռիլ յերկիւղ քո և ՚ի սէր, և զլոյս գիտութե քոյ միշտ առաջն մտաց աչաց ունեւրով, զոր ոչ գիշեր փոխանակէ ըստ իմաստնոյն . որով առանց գայթակղութե քաղարալարիցիմք ՚ի կենցաղումն: Այլ այս լինի քո օգնականութիւն ողորմած անձ մեր, որոնք և հետակայ բանս ցուցանէ:

Օ ի դու ես բազում ողորմ անձ, և բեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, ոյժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Փոխ և Մաղթանք, և սպա Բարոզ:

**Լ** զաչեցուռք զամենակալն անձ զի յաջողեալ ուղղեսցէ ըզ  
ճանապարհս ծառայից իւրոց ՚ի բարի և ՚ի խաղաղութի .  
ամենակալ տէր անձ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ս :

Յաջողել՝ զձեռն տալն և զօգնական լինիլն ասէ . և բարի և  
խաղաղութիւն կոչէ զառանց սայթաքելոյ կատարելն զկրկնակի ըն-  
թացս կենաց մերոց ըստ ներքին և արտաքին մարդոցս . որպէս ասէ  
առաքեալն , \* Որով կեցցուռք ո՛չ միայն սյգժմ , սյլ և ՚ի հանդերձեալ  
կեանսն :

Աղօթք :

**Լ** աջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութե՛ք քն անձ մեր ,  
առաջնորդեա՛ս մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութե՛ք ,  
և խաղաղութեամբ ժամանել ՚ի նաւահանգիստն փրկութեան շնոր-  
հօք ողորմութեան քոյ :

Լ աջնորդ է կենաց , զի յոչ էից ՚ի լինելութի կած . և կեն-  
դանի բանաւոր և մտաւոր ստեղծագործեաց զմեզ : Աւ յորժամ  
մեռաք մեղօք և պատուիրանազանցութե՛ք , դարձեալ վերստին նորո-  
գեաց և կենդանացոյց չարչարանօք խաչին իւրոց և կենդանարար ո՛ր  
արեամբն իւրով . ասելով , \* Որ ուտէ զմարմին իմ՝ և ընկէ զարիւն  
իմ , գնահ մի՛ տեսցէ : և թէ՛ \* Ես եմ՝ ճանապարհ և ճշմարտութի՛ք և  
կեանք : Աւ պարգևիչ է խաղաղութե՛ք զոր խոստացաւ առաքելոցն  
սրբոց ասելով , \* Չխաղաղութի զեմ՝ ամ՝ ձեզ . զխաղաղութի զեմ՝  
թողում ձեզ : Աւ զի ինքն է ճանապարհ և ճշմարտութի՛ք և կեանք ,  
ստուգապէս զնոյն հայցէ և բան տղօթիցս : Լ րդարութե՛ք ընթա-  
նալ ըստ հաճոյիցն նոյ . և խաղաղութե՛ք ՚ի կէտ և յաւարտ ժամանել  
շնորհօք և ողորմութեամբ փրկչին մերոց և նոյ . որպէս ասէ ,

Օ ի դու ես օգնական և փրկիչ մեր . և քեզ վայելէ փառք  
իշխանութի և պատիւ . սյգժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :  
Օ ի զայս միշտ սովորէ բնութիւն փոխարէն մատուցանել նոյ զփառս  
և զպատիւ . զի սյլ մեծագոյն տրիտուր ո՛չ կարէ գտանել զոր սայ  
մարդ նոյ , քան զօրհնութի՛ք և զփառս . ըստ այնմ , \* Տե՛ք փառս նոյ .  
տնք օրհնութի՛ք տեառն նոյ մերոց : Օ ի նա է փառաց և պատուոյ  
արժանի փառաւորեալն յաւիտեան :


**Օ**րհնեալ էս տէր անձ փրկիչ մեր որ յամ Ժամ ընդ մեզ էս  
 և ոչ երբէք թողուս ՚ի ձեռանէ քումնէ զայնոսիկ , որք  
 հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ :

**Օ** ի տէրն հրամայեաց թէ \* Ջամենայն ինչ վասն որոյ հաւա-  
 տով աղօթս արարեալ խնդրիցէք՝ առնուցուք : **Օ** ի հաւատն լծա-  
 կից լինի աղօթիցն և թեարկեալ յերկինս երանէ . և առաջի նոյ  
 մտեալ զխնդրուածսն ճշդիւ պահանջէ իբր ՚ի սրբտականէ յուժեմ-  
 նէ : **Ս** առուցի ասէ բոլորով սրտիւ և հաւատով զաղօթս որպէս  
 հրամայեցեր . տուր զոր խոստացարն , զոր անհնար է թէ ոչ  
 առնուցու :

**Լ** զաչէմք և խնդրեմք ՚ի քէն տէր , ճանապարհորդակից լեր  
 ծառայից քոց քոյն վերահացութեամբդ պահելով ՚ի խողաղութե :  
**Լ** ւ առաջնորդեալ մեզ խաղաղութե և խնդութե հասանիլ յիւրա-  
 քանչիւր ընկուժիս ՚ի քն յն ՚ի տէր մեր : **Ո**րում վայելէ փառք  
 եշխանութի և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

**Բ** ստ հրամանի քում ասէ հաւատով աղաչեմք և խնդրեմք զքոյ  
 վերահացութիդ և զճանապարհորդակից լինիլն , և խաղաղութեամբ  
 զիւրաքանչիւր ճանապարհ կատարել , թէ մարմնաւոր և թէ հոգւոր :

**Դ** քն յն ՚ի տէր մեր ասէ : **Ս** ասն զի ինքն է սկիզբն ամե-  
 նայնի և կատարած . որպէ ասէ ՚ի յայտնութեանն յովհաննէս , \* Ես  
 եմ այբ և էս եմ քէ : **Լ** ւ նմա փառք ընդ հօր և ընդ հոգւոյն սբյ .  
 որ զամ յամենայնի ընու և նախախնամէ ըստ իւրում առատ բա-  
 րերարութեանն :



Յորդորակ

**Օ**րհնեսցուք և մեք հանապազ զամէնօրհնեալ և զբարե-  
 րար տէրն մեր . և գոհասցուք միշտ զառատ ողորմութե  
 նորս : **Խ**նդրեսցուք մտնուանդ զլոյս իմանալի շնորհացն ծագել ՚ի  
 սիրտս մեր , և ճառագայթարձակ փայլմամբ զամ զգայարանս մեր  
 լուսաւորել : **Օ** ի յարեւելից մտաց մերոց մինչև ՚ի մուտս արևու-  
 թանձրագոյն մարմնոյս՝ մի գացի ինչ նսեմացեալ : **Լ** ւ յաւառաջնոր-

դու թէ հոգւոյն սրբոյ ճանապարհորդեսցուք միշտ յերկիր աւետեաց : Այլ ունելով զինի խմորեալ ինչ որ է քացախուտ վարք չարութեան , և ծանրացուցիչ պատարունն վայրաքարչ կենցաղոյս , և ուռուցիկ փքացունն թեթևամտութեան աճեցեալ յամենայն տեսակ չարութեան :

Վ. յԱ մովսիսաբար զոպեալ ունելով 'ի մախաղի մտաց մերոց զոսկերան յովսեփայ , որ է նշխար պատուիրանաց փրկչին մերոյ յի : Եւ մեծաւ հոգաբարձութիւն ընթացուք զառապար կենցաղոյս , զի մի՛ ծարաւով տոչորման մեղացն կիզեսցուք զրկեալք 'ի կենդանի ջրոյ անձային պատուիրանացն , լեզի և դառն ունելով ջուր՝ զչափ ուսումն ստայօղ պատմութեանց , զոր ոչ կարիցէ անձատես միտք ընկել : Ա՛նաւանդ թէ խաւարելոցն մտօք և զրկելոցն 'ի ճմարտութե՛ դառն թուի անձային օրինադրութիւն և անախորժ ճաշակ : Ա՛նչև խաչին շնորհիւ մակարդեալ մարբեսցին ճաշակելիք մտացն յաղտից , և իմասցէ զքաղցրութիւն պատուիրանացն նոյ :

Ս. ասն որոյ կօշիօք առաքինութե և հաւատոյ ամբու թէ զտես մտաց մերոց պնդեսցուք , զի մի՛ 'ի խարամանեաց օձիցն մնասիցիմք \* այլ 'ի բարձրութիւն բեմի ձողակերտ խաչին սեղանոյ միշտ ակնակառոյց եղեալ յառեսցուք : Արով զյն տեսեալ փրկիմք Խրատէս և կենդանանալն զանմահ կենդանութիւնն , և յաղագայսն արժանի լիցուք լսել եթէ՛ \* Եկայք օրհնեալք հօր իմոյ՝ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն :

Որոց լեցի ամենեցուն մեզ հասանիլ շնորհօք և մարդասիրութեամբ տեսուն մերոյ և փրկչին յի քի : Ընդ որում հօր և սուրբ հոգւոյն վայելէ փառք իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :



Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն , որ կատարի 'ի դէմս  
Ինման հոգւոյն սրբոյ , Եւ ասի՝ Օրհնեալ հոգիդ սուրբ ան ճշմարիտ , և այլն որ  
'ի կարգին :

Հոգնանու հայոց կաթողիկոսի և իմաստասիրի՝ վասն երրորդ ժամու աղօթիցն :

**Ի**սկ տունջեանն որոշեալ սահմանք ժամու աղօթիցն , այդ  
ըստ յանցման ժամու նախաձորն հշտասիրութե և մե-  
ղացն . և 'ի նմին ժամու բժշկել զյանցանան չարչարանօք խաչին  
տեառն մերոյ յի . քի : \* Ձի որնց աղամուն ամենեքին մեռան ասէ ,  
նոյնպէս և քիւ ամենեքին կենդանացին իւրաքանչիւրօք յիւրում  
կարգի : Օի յորում ժամու յանցեալ աղամն առաջին՝ և յետ յան-  
ցանացն յամեաց 'ի դարխտին , նոյնչափ և քն էկաց 'ի չարչարանս  
խաչին 'ի բժշկութիւն վերաց նորին :

Իսկ յերրորդ ժամու աւուրն կարգել զժամ աղօթիցն , քանզի  
յերրորդ ժամու ասաց մարիոս 'ի խաչ ելանել միաձնի որդւոյն նոյ .  
որով յոյանիէ թէ՛ , և 'ի նմին ժամու ընդունել էղև եւայի զհրա-  
պուրանս բանսարկուին և ցանկանալ պտղոյն ճաշակմանն : Իսկ յոր-  
ժամ եմմննուէլն մերովս բնութի՞ զձանրութի մեղաց մերոց բառ-  
նայր , երթայր 'ի դիտին՝ զի զանկեպան վերացուսցէ : Ի և եռեալ  
ըրտան և զձեռան յաղագս յանդուզն գնացիցն 'ի ծառն . և զի՛ ըզ-  
ձեռագիր յանցանացն խափանեացէ : Եւ զտարերցն աղականութի  
որ յայնժամ օձալամբ պտղովն դողդեաց՝ խաղաղացուցէ իւրով  
մարդդական չարչարանօքն :

Իսկ յովհաննէս ժամ վեցերորդ ասէ . ոչ զժամ խաչելութեն ,  
այլ զժամ ճաղանացն որ 'ի հրէիցն էղև : Իսկ 'ի խաչն յերրորդ  
ժամուն բարձրացաւ . բազէն տարածեալ զթիւսն ըստ յորայ ան-  
շարժ դիտէր ընդ հարաւ , յափշտակելով զմեզ 'ի մահուանէ 'ի  
կեսնս : Օ որ առաջ տեսեալ մարգարեական ակամբ երանելոյն  
դանիելի , յերրորդ ժամու աւուրն զպատուհան ասանն իւրոյ բա-  
նալով ընդ արևելս ընդ դեմ՝ երուսաղէմի աղօթէր վասն դարձի  
գերութեանն , տեսանելով զմիաձին որդին նոյ բաղկատարած 'ի խա-  
չին , որ յերրորդ ժամու աւուրն ճշմարիտ աւարումն գերելոցն արար :

Եւ ապա յետ այսր յորեւինի՝ տեսանեմք յերրորդ ժամու ըզ շնորհս հոգւոյն սրբոյ հեղեալ յառաքեալն , զհեռացեալն յաղամային բնութենէս յաղագս ոչ ՚ի դէպ ժամու ճաշակմանն : Եւ ասն այսր ամենայնի ասեմք յերրորդ ժամու գլորեալ զմարդն առաջին , յորում ժամու զբժշկութի վերացն և զբարեգործութիւն ընկալաւ : Եւ ապա յիրաւի յայսմ ժամու աղօթից՝ աղաչեմք զիս՝ առաքել զհոգւոյն օգնականութիւնն առաջնորդ լինիլ մեզ յերկիր բարի ուստի զրկեցար մահանօք չարին : Եւ յս է պատճառ երրորդ ժամու աղօթիցն :

Մեծին խորովու՝ վասն Քարոզին :

Սիւստան ամենեքեան գոհացարուք զմարդասիրէն նոյ և ըզ փրկչէն յսէ քսէ , որ ազատեաց զաղգս մարդկան ՚ի դատապարտութենէ անխիճիցն . և եբարձ զմեզս աշխարհի ՚ի ժամուս յայսմիկ խաչիւն իւրով սրբով :

Հրաման տայ միաբանութեամբ գոհանալ զքե՛ս . զի յերրորդ ժամուս ասէ յայսմ՝ ազատութի շնորհեաց ազգի մարդկան ՚ի դատապարտութենէ անխիճիցն : Եւ ասն զի յերրորդ ժամուս ստեղծաւ աղամ որոյ յայտ առնէ նրհանջիդ երէք ժամն յաւելինս յաւելադրեալ : Եւ զի անց զպատուիրանաւն ՚ի պողոյ փայտին ճաշակեալ , անխիճիք մահու դատապարտեցաւ : Եւ այն սակս ըստ ժամու ստեղծման մարդոյն և տէրն մեր ՚ի խաչափայտին բեւեռեալ եբարձ զմեզս և զանէծս ինքն անէծք եղեալ . քանզի յօրինացն անխիճեալ էր ըզ փայտէ կախեալն :

Եւ և զմեզս՝ աղամային մարմնովն ընդ խաչափայտին բեւեռեալ ազատեաց զմեզ փայտիւ , փայտիւ զփայտ սրբեալ , և մարմնով զմարդկան մարմինս յանխիճից և ՚ի կապանաց արձակեալ : Եւ յս է ՚ի նոյն ժամու յորում յաղամ զհոգին սուրբ փչեաց զի եղցի մարդն յոգի կենդանի , հոգւոյն սրբոյ ստեղծագործեալ զմարդկային հոգի , անդանօր զհոգին սուրբ եհեզ յերանելն առաքեալսն զի կենդանացին ըստ նոյ հոգւով , և կենդանացուսցեն վերստին ծննդեամբ զաղգս մարդկան . քանզի և վասն այսր ևս քարոզն խրատէ գոհանալ՝ ասելով :

Եւ շնորհեաց առատապէս զպարգևս ՚ի հոգւոյն սրբոյ երանելի առաքելոցն : Եւ առատապէս ասէ , զի ոչ որոյ ՚ի մարդարեան . այլ առաւելադէս ևս և բնականաբար և առանց մեկնելոյ . ըստ տէրուհեան անսուտ խոստմանն թէ՛ . \* Ընդ ձեզ բնակեացե յաւիտեան :

Ինքնդրեացուք հաւատով, զի զմեզ զամենեւեան արասցէ հաղորդս մեծամեծացն, և անձային բարեացն այնոցիկ:

Որոց մեծամեծաց բարեաց: Որ խաչուն և չարչարանօքն քի շնորհեցաւ մարբուամն ՚ի մեզաց և զերծուամն յանիծից: Եւ զի հոգի սուրբ ընկալցուք ՚ի սմին ժամու ընդ առարեայսն: և զի մի որ գրիեացի յայսմ շնորհաց, վասն այնորիկ ասէ, ևսնդրեացուք հաւատով, այսինքն առանց երկմտութե. զի զամենեւեան զմեզ արասցէ հաղորդս այնպիսի բարեաց:

Բանզի և սյսու իսկ պատճառաւ զայն ժամն աղօթիցն սահման եղեալէ. և չոտց ՚ի միաբանելոցն հայցուածս միայն սպաւիտիլ, այլ և զաղօթս կենդանեաց սրբոց և զբարեխօսութի վախճանելոց սիրողաց նոյ յօգնականութի կարդալ վասն որոյ և ասէ իսկ,

Ղօթիւք և բարեխօսութե ան սրբոց, որք աստ և ընդ անտիեզերս: Որք սու մեզ ասէ և որք յամ երկրի. թէ ՚ի մարմնի և թէ ՚ի բաց դնացեալ ՚ի մարմնոյ: Բսէ ասպա և զոր ինչ օգտիցիմքն. խաչն և հոգւոյն շնորհաց հաղորդեալք:

Որոց զի անարատ վարուք և ճշմարիտ առարինութե կացեալք ըստ կամոց նորա յայսմ աշխարհիս, մասն և վիճակ ժառանգութե ընկալցուք ընդ անտ սուրբս նորա զբնակութի յաւիտենական երկնային խորանացն:

Բստ ասէ ՚ի մեզացն արատոյ զերծանիցին մեր վարք՝ խաչն պարսպելով. և առարինութիւնքն ճշմարտիցին՝ հոգւոյն սրբոյ գիտութիւն և զօրութիւն տալով մասն և վիճակ ժառանգութե ընդ սուրբս ևս ընկալցուք զբնակիլն յերկնից խորանան, որ յաւիտենականքն են. զոր և խոստացեալ իսկ է քսի այնոցիկ, որ սիրենն զնա: Եւ զի անսուտ են խոստմունք նորա, վասն այնորիկ յաւելլու զայն թէ, Չոր խոստացաւ տալ սիրելեաց իւրոց ճշմարտան ան յս քստէր մեր. կեցն և ողորմես:

### Աղօթք:

Որ ՚ի բրովբեական և յանպատում հանգուցեալ էս աթոռ, և այցելու էս միշտ յարարածս քո:

Բնպատում աթոռ անութեան ասէ զբերովբեան. վս զի հուպ են սու անքան զամենայն զօրս երկնայնոցն որոց ասէ մեծն գիտնեսիոս. և անընդմիջաբար առնուն յնոյ զհեղուամն շնորհաց գիտութե



և իմաստից . և ինքեամբք յայլն անցուցանեն : Եւ զի յաւէտ կամաւարք գտանին քան զամենեսեան՝ մեծի տէրութեն տեսան . վասն որոյ և Հանդէսի ՚ի նոսա բանս ցուցանէ առաւել քան յամենեսեան :

Որ ՚ի բրովբէական սակ և յանպատում Հանդուցեալ էս ակոռ : Ոչ էթէ յողաւոր անդամք գոն նոյ , որովք յենուլ կարօտանոյ և Հանդէս յաշխատութեանց . զի անմարմին զնարդ յենու , կամ որպէս կրէ աշխատութի անաշխատ բնութիւն : Եւ միայն մարդկօրէն ձեռ ցուցանէ զբանն , որով Հասու կարացուք լինիլ . և զկամաց լըուսն սակ Հանգիստ որոյ սասցար : Վանզի այս և մարդկան է սովորութիւն , զկատարումն սխորժակացն Հանգիստ կոչել , զոր և բազում անդամ սասցեալ ենք :

Եւ այցելու էս սակ միշտ յարարածս քո : Եւ յսինքն խնամես , և ըստ իւրաքանչիւր պիտոյից դարմանես զամենեսեան զբանաւորս և զանբանս , զկենդանիս և զանկենդանս :

Որ և ՚ի ժամուս յայսմիկ Հեղեր յերանելի առաքեալն զշնորհս Հոգւոյն սրբոյ : Գորմէ վրիպեցաւ բնութիւն պատուիրանազանցութեամբն , վերստին ընկալար սակ տնօրէնութիւն քի նոյ մերոյ առաքապէս զամենասուրբ Հոգւոյն պարգևս և զշնորհս . և հրաւիրեցար յորդէգրութի Հօրն երկնաւորի վերստին ծննդեամբ աւազանին : Որոյ նախ ընդունակ եղէն յետ քի երանելի առաքեալն ՚ի վերնատունն , և նորք յընդհանուր հաւատացեալս ասրածեցաւ մկրտութեամբ սուրբ աւազանին :

Ղու տէր յառաջիկայ ժամես և ևս յաւէտ մինչև ՚ի կենցարոյս աւարտումն տպաւորեալ միացն զմեզ ընդ նամ բարեգործութեան յորդորմունս :

Օ ի յետ ընդունելութե Հոգւոյդ շնորհսցո՛ւ այլ մի լնցի մեզ ըմբռնիլ ՚ի յողոս բանասրկութն և ՚ի ցանկութի պատրանաց կենցարոյս . այլ միշտ յորդորեալ լնցուք յամ բարեգործութիւնս և ՚ի Հանդէս առաքինութեան , որոց փոխարէնս Հայցէ զոր Հեաակայս ցուցանէ բան :

Եւ խոստացելոց բարեացդ հաղորդս լինիլ զմեզ արժանի արտաէր մեր և փրկիչդ յն քն . որ էս օրհնեալ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ որբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Օ ի թէ աստ բարեյորդոր կենօք քաղաքավարիմք ըստ Հոգւոյդ նբ առատաձիր պարգևացն , հաւատամք տիրապէս թէ և յերանաւէտ և յանվախձան կեանսդ ժառանգեմք զխոստացեալ բարխադ , փառաւորէլով զհայր և զորդի և զնք հոգիդ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

## Խաղաղութիւն ամենեցուն :

**Որ** էիր յառաջ քան զյաւիտեանս բանդ անձ . էակից հօր և արարչակից սուրբ հոգւոյն :

**Յառաջ** ասէ քան զյաւիտեանս զբանն հօր զմիածին որդին . ոչ միայն քան զիննիւն աշխարհի և զներկից յաւիտեանս , այլ և քան զանբաւ և զանասման և զանհաս յաւիտեանս որ ինքեան միայն է գիտելի : **Որ** զէութի ընդ հօր միշտ ունի . և արարչակցութիւն հոգւոյն սրբոյ արար զարարածս անձ յոչեկից . և զարդարեալ նորոգեաց և միշտ նախահամբ տիրապէս : **Որ** զնախաստեղծին սրատուիրանազանցութիւն պաղոյն ճաշակմամբ՝ նշանաւ ամենայաղթ խաչի . բոց ՚ի ժամուս յայսմիկ ենթադրեալ ՚ի կենդանութի փոխեցեր . և զանօրէնութիւն մեր ՚ի նման բեւեռեալ , կեանք անսպական և նորոգումն կենաց յուսացելոցս ՚ի բեզ խոստացար :

**Ինդ** փայտին գիտութե զխաչ քո ասէ շնորհեցեր . և ընդ նախաստեղծիցն հեշտալն պաղոյն ճաշակման , որով և դառնութիւն տարածեցաւ ՚ի վերայ մարդկայինս բնութե , բարերար տէրդ մեր փոխանակ ամենեցուն զլեզին դառնութե ՚ի վերայ խաչին ճաշակեալ , զքաղցրութի մեզ շնորհեցեր , կենագործելով ՚ի մեռելութե մեղաց : **Եւ** նորոգութի և անսպական կեանս յետ աստեացս վճարելոյ խոստացար . որք հաւատով և բարի գործովք ՚ի բեզ յուսան և ակն ունին մխիթարութեան ՚ի հանդերձեալ կեանսդ : **Որոց** հայցէ կցորդ իննիւ ՚ի բարխան որպէս և ստէ ,

**Որոց** մասնաւորիւ և զմեզ արժանի արա՛ տէր մեր և փրկիչ յն քն . որ ես օրհնեալ ընդ հօր և սուրբ հոգւոյդ , այժմեւ միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

**Ի** սկզբանն էակից հօր դաւանեաց և արարչակից հոգւոյն . և ՚ի կատարածին ընդ հօր և ընդ հոգւոյն սրբոյ օրհնաբանէ յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Ասի Սաղմոս և Մաղժանք , և զինի Քարոզս :

**Խնդ** բեցուք հաւատով ՚ի անառնէ վասն ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց . որք ընդ ծով և ընդ ցամաք գրնասցեն , որպէս զի առաջնորդեացէ նոցա խաղաղութիւն , և տարեալ

հասուցէ յիւրաքանչիւր տեղիս տէր ամ մեր :

Վմենայն հաւատացելոց հրամայէ աղօթել, որք յիւրաքանչիւր ազգաց ՚ի մի եկին հաւատ և ՚ի գիտութի ճշմարտութե . զի որք ՚ի քն մկրտեցան, միոյ աւազանի ծնունդ և միոյ մօր եկեղեցւոյ որդիք և հօրն երկնաւորի ժառանգք՝ եղբարք կոչին ամենեքեան :

Եւ վասն ամենեցուն հրամայէ բան քարոզիս՝ աղօթս մատուցանել հաւատով և յուսով . և հարս կոչէ՝ ոչ միայն զզգալի հասակաւ ծերացեալն, այլ որք գիտութեամբ և խնաստիւք ուսուցիչք և դաստիարակք եղեն . և ծնան բազում որդիս , ոչ միայն մկրտութի աւազանին, այլ և բանիւ վարդապետութե և խրատով պատուիրանի տեսուն վարժելով և ուսուցանելով : Արոց վասն աղօթել պարտիք սիրուն և յօժարութի , զի ՚ի նոյն զօրացին և յառաջագէմ լիցին :

Օ ի և պօղոս գրէր և պատուիրէր աշակերտելոցն եթէ՝ \* Աղօթս արարէք և վասն իմ . զի և ինձ ասցի բան ՚ի բանալ բերանոյ : \* Ձի պարտին զվմեանց հոգալ անդամքն ըստ նորին դարձեալ բանի : Եւ ոչ միայն այս, այլ և զի ՚ի սոյն կարգեցան դասք քահանայից՝ զի հասարակ ՚ի վր ամ հաւատացելոց աղօթեսցեն : Եւ յուէտ յիբաւի . զի հայր է քահանայն հոգեւոր՝ և մարքօղ կոչի հասարակաբար :

Խնդրեսցուք ասէ վասն ամ ճանապարհորդաց : Ա սն զի ճանապարհ կոչի ոչ միայն որ ըստ մարմնայն են ընթացք, այլ և որ ըստ հոգւոյն բազմադիմի և զանազան ճանապարհիւք ընթանան ՚ի կենցաղումն : Վանզի ճանապարհ կոչի և օրինաւոր ամուսնութիւն, և կուսութի . միաբանութի, և առանձնական կեանք , և օտար ընկալութիւն, և բարւոր վերակացութիք . այսոքիկ ամենեքեան և սոցին նմանքս ճանապարհք ասին : Եւ պէտս ունին ամենեքեան աղօթից օգնականութե , զի խաղաղութի հասցեն ՚ի կէտ կատարման իւրաքանչիւր ընթացից . ասի և ՚ի հակառակէն ճանապարհ որք չարաւ ընթանան : Արն՞ վասն որդւոցն հեղեայ ասէ գիր , \* Երթալով երթացին և չար էր ճանապարհ նոցա :

Եւ թէ որ ծովագնաց ճանապարհորդ զմեղաւորս ասէ որք ՚ի ծով կենցաղոյս թաթաւին ՚ի մեղս, և ցամաքն թաց զարդարս , ոչ ինչ մեղանչէ : Եւ վասն ամենեցուն պարտ է աղօթել և խնդրել հաւատով ՚ի ատենէ . զի մեղաւորք ՚ի զղձումն եկեալ զգաստացին . և արդարք ՚ի նոյն զօրացեալք յառաջագէմ լիցին :

Ա սն զի նա ինքն է առաջնորդ կենաց և յոյս փրկութե , որ յաջողէ ծաւայից իւրոց խաղաղութեամբ հասանիլ ՚ի նաւահանգիսն փրկութեան :

Կենաց առաջնորդ ասի վասն կենարար գոլոյն , և յոյս փրկու-

Թեան՝ վասն յաւիտենից յուսոյն : Օհ ամ բարեաց յորինիչ ան-  
է . և նորա վերահացու-թիւն միշտ նախահնամեալ տնօրինին յուսա-  
ցեալքն ՚ի նա . և ողորմու-թեամբ և շնորհօք նորին ամ որ զընթացս  
առաջարկու-թիւ ըստ բարեւոյ մասին աւարակ , թէ ըստ հոգւոյ և թէ  
ըստ մարմնոյ որ ընթացի ՚ի կենցաղոյս ընթացս . որոց վասն խնդրէ  
ասելով , Վե՛նահալ տէր անձ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ :



Աղօթք :

**Մ** առջնորդեա՛ մեզ տէր անձ մեր , և ուսո՛ մեզ գնալ ՚ի ճա-  
նապարհս քո արդարու-թեամբ : Բարողին համաձայնի և  
աղօթիցս բան . և ըստ հրամաննի նորին խնդրէ զայ՛ առաջնորդու-թիւն  
յամ՝ իրս , և զարդարու-թիւ գնալ ՚ի ճանապարհս նր՛ . և արդարու-թիւ  
կոչի՛ն ո՛չ յաջ խոտորիլ և ո՛չ յահեակ : Օհ թէ փառասիրու-թիւ որ  
զբարիս գործէ կամ առ մարդկան ականէ կեղծաւորու-թեամբ , կամ  
ղօշարաղու-թիւ , ամբարտաւանու-թիւ , կամ հպարտու-թիւ մեծաբանե-  
լով ՚ի վերայ ումէք , չէ՛ այնպիսին արդարու-թեամբ ընթացեալ զճա-  
նապարհս օրինացն տեառն :

Բայց զի՛նչ է որ ասէ թէ՛ զքո ճանապարհս ուսո՛ մեզ գնալ  
արդարու-թիւ : \* Ձի ամ ճանապարհք տեառն ողորմու-թիւ և ճշմար-  
տու-թեամբ էն ասէ դաւիթ : Եւ ո՛ր է որ ՚ի ճանապարհի տն իցէ  
և արդար ոչ լինի . այլ թուի թէ զարարու-թիւն է բանս , զե ար-  
արչագործու-թիւն այ՛ անար յաշխարհս յայս , և յոչ էից ՚ի լինելու-թիւ  
էկար : Եւ ամ ճանապարհք զոր ըստ հոգւոյ և զոր ըստ մարմնոյ  
անձնիշխան կամօք ընթանան մարդիկ , այ՛ էն պարզեք . զոր պարտի  
ամ որ յիւրօքանչիւրան արդարու-թիւ ընթանալ որպէս ասէ :

Ուսո՛ մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարու-թիւ : Որպէս թէ  
ասիցէ , զատիճանս և զվիճակս ճանապարհի քո զոր ՚ի քէն ընկա-  
լար , թէ առաջնորդու-թիւ , թէ վերահացու-թիւ , թէ բարհանայու-թիւ ,  
թէ թաղաւորու-թիւ , թէ զօրավորու-թիւ , թէ դատաւորու-թիւ , թէ  
կուսու-թիւն , թէ ամուսնու-թիւ , թէ զինչ և իցէ , քո խնամելովդ  
առաջնորդեա՛ և ուսո՛ գնալ արդարու-թիւ ըստ քո կամացդ : Վ՛յլ և  
զուղղել հաւատան ասէ ճանապարհ այ՛ , զոր խնդրէ շնորհիւն այ՛ ան-  
սայթար գնալ և արդարապէս միշտ :

Պահեա՛ ՚ի խաղաղու-թիւ զկեանս մեր և զգնացս : Գերեւելի և  
յաներևոյթ թշնամոցն զընթացս կենաց մերոց ասէ ամբացո՛ւ և խա-  
ղաղու-թիւ յաջողեա՛ս , զի անսպթար վարեացու-ք զընթացս կենաց մերոց :

Պի հաճոյս քո ժամանեցի՞ զհոգևոր և զմարմնաւոր ընթացս  
 ծառայից քոց անարատ ճանապարհաւոր յաւիտենական ՚ի կեանսդ :  
 Ընարատ ճանապարհ զքն ասէ ըստ իւրում տեսան բանին . \* Էս էմ  
 ասէ ճանապարհ և ճնարտութիւն և կեանք : Ըս ըստ հաճոյիցն նոյ  
 խնդրէ հասանիլ յաւարտ և ՚ի կէտ հոգևոր և մարմնաւոր ընթա-  
 ցիցն . և սյս լինի շնորհիւ և ողորմութիւն փրկչին մերոյ յի քի .  
 որպէս ասէ :

Ը նորհօք միտճնի քո , տեսան մերոյ և փրկչին յի քի . որ  
 եղև մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութե : Ը աջնորդ կենաց  
 եղև՝ զի զմեռեալքս մեզօք կենդանացոյց , և հրաւիրեաց յերկնից  
 արքայութիւնն ասելով , \* Օ՛ն արիւք գնացուք աստի : Ը յսինքն՝  
 յանկմանէ մեզաց և ՚ի մեռելոտի գործոց յառնել հրամայէ , և կեն-  
 դանական և լուսաշաւիղ վարուք յերկինս վերանալ :

Ը յոյս փրկութե ասէ : Օ՛ի որք ՚ի խաւարի և ՚ի ստուերս  
 մահու ոնյուսութեամբ նստէաք , լոյս ծագեաց ճառագայթաբճակ  
 մարմնոյն . և յոյս և փրկիչ եղև գերելոցս ՚ի բանսարկուէն , ասելով՝  
 \* Քաջալերացարուք զի էս յաղթեցի աշխարհասէր թշնամւոյն :

Ս ասն որոյ ասէ յաւարտ բանիս ,

Ը նդ որում օրհնեալ էս հայր ամենակալ՝ հանդերձ կենդա-  
 նարար և ազատիչ սուրբ հոգւովդ . այժմ և միշտ և յաւիտեանս  
 յաւիտենից , ամէն :

Քարոզ :

Գ ոհարանելով աղաչեսցուք զբարերար հոգին նձ , և խնդ-  
 րեսցուք զողորմութիւն ՚ի նմանէ . զի անցուցէ ՚ի մէջ  
 զցատումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութե՛ն իւրով .  
 ամենակալ տէր նձ մեր :

Օ՛ի զբարերարէն նոյ զհոգւոյն սրբոյ միշտ գոհանալն է վայե-  
 լուչ , որով առատագէս վայելեսցուք ՚ի պարգևան : Ս ասն որոյ և  
 խնդրել հրամայէ զողորմութիւն ՚ի նմանէ . զի նա միշտ զերծուցէ  
 զմեզ ՚ի պատուհասէ սխալանաց մերոց , որ բարերարն է . յորմէ և կե-  
 ցուցանել մաղթէ : Ը մենակալ տէր նձ մեր կեցո՞ և ողորմեա՞ :

**Խաղաղութիւն** քով հոգիդ սուրբ անոր ՚ի վեր է քան զամօրհաս և զխորհուրդս, մխիթարեա՛ն զանձինս ծառայից քոց ընդունելով զաղաչանս մեր :

Որչա՛ առարեալ ասէ, \* Խաղաղութիւն նոյ որ ՚ի վեր է քան զամօրհաս, պահեսցէ զձեզ ամբողջս և անարատս : Օսոյն հայցէ և աղօթիցս բան, զև միշտ ՚ի խաղաղութեն քաղցրութիւն վայելցիլով և մխիթարիցիլով հոգւովն, վասն զև մխիթարիչ է հոգին սուրբ որչա՛ վկայէ : \* Խնկ մխիթարիչ հոգին սուրբ ասէ զոր առարեացէ հայր յանուն իմ, նա ուսուցէ ձեզ զամ : Եւ ասն որոյ ասէ,

Մխիթարեա՛ն զանձինս ծառայից քոց : Եւ յսինքն՝ որք սուգունին ՚ի վերայ մեզաց, թէ անձանց և թէ օտարաց, և տրտմութիւն և հեծութիւն և յոգւոց հանելով միշտ ՚ի վշտի մաշէն զանձինս իւրեանց, որպէս այն զոր եզեկիկէլ պատմէ : \* Եթէ նշան ասէ ՚ի ճակատ արանցդ, որ հեծեն և ՚ի յոգւոց հանեն վերայ անօրէնութեց գործերոց ՚ի դմս : Եւ դաւիթ՝ \* Տրտմութիւն կալալ զին ՚ի մեղաւորաց ասէ : Եւ որարեւ այսպիսիքս նչ մնայն մխիթարին ՚ի շնորհաց սուրբ հոգւոյն, այլ և երանելի ևս լինին ըստ հրամանի փրկչին մերոյ : \* Երանի ասէ սգաւորաց զև նոքա մխիթարեացին : Օսոյսպիսիս մտղթէ աղօթիցս բան մխիթարել և զպաղատանս ընդունել :

Եւ նոյն ՚ի մէնջ զցատումն պատուհասի յանցանաց մերոց, ներեալ քաւեա՛ն և թնղ զմեզս մեր :

Օ ի մեր մեղաք ասէ և դու բարկացար, և պատուհասի արժանի գիտեմք զանձինս, այլ ներեա՛ն տէր, քաւեա՛ն տէր, ջնջեա՛ն զյանցանս մեր քոյով մարդասիրութիւնդ, զև բաց ՚ի քէն զայլ որ նչ գիտեմք մարդասէր տէր ողորմած և քաղցր : Եւ ասն որոյ աղաչեմք՝ ներեա՛ն քաւեա՛ն և թնղ զմեզս մեր, արժանի արա՛ն գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն :

### Յորդորակ աղօթօրհն :

**Ե**ւ մեր մատուցուք յամ ժամ գոհաբանութիւն ամենապարերրորդութեն բոլորով սրբիւ և ուղիղ հաւատով, պատուսցուք զամ սրանչելիս նր, և ուրախութիւն սաղմոսեսցուք առաջի նր :

Ղրաշէսցուք զմորդասէր հոգին այ և խնդրեսցուք զմխիթարուի միշտ  
 ՚ի նմանէ . պաղատեսցուք առ նա յամժամ ասելով , հոգիդ նք այ .  
 հոգի հեզուութե . հոգի որդեգրութե . հոգի իմաստութե և հանձա-  
 րոյ . որ զամ յամենայնի ընուս և նորոգես ըստ հաճոյից կամաց քոց :  
 հոգի խորհրդոյ և զօրութե . որ զազխտութիւնս մեր բարում գի-  
 տութե ընուս , և զսկարութիւս մեր զօրացուցանես : հոգի գիտու-  
 թեան և անձպաշտութե , որ զանձութիւնդ քո միշտ վարդապետես  
 խնդրողաց քոց օրհնել սիրով և պաշտել զտէրութիւդ քո յարածամ  
 աներկբայելի հաւատով . որոց և զանձահոութի շնորհես և զանվախ-  
 ճան խնդութի : հոգի սուրբ՝ բարւոք երկիւղէ . զոր շնորհես սի-  
 րողաց քոց յանձին կրել իբր զթագ արքայական և զկնիք անձային ,  
 ամ բարեաց սէրիլքն և առաջարկութի զնոյն ունելով : հոգի արար-  
 չական , որ միշտ արարչագործես զեղեալքս ամ ըստ կրկնակի ծնըն-  
 դեան յարգանդի մարց , և ՚ի ջուրս հոգևոր սուրբ աւազանին :  
 հոգի անեղ և համաբոյ հօր և որդւոց փառակից և պատուակից ,  
 արարչակից և նորոգող . որ ՚ի սկզբան լինելութեանն ՚ի համաշխար-  
 հական գոյացութեանն ՚ի վերոյ ջուրցն շրջելով արարչագործէիր և  
 կենդանաձնէիր զգոյակքս ամ : Այլ այժմ միշտ նախախնամես և  
 առաւել հրաշազարդեալ յօրէնս , և զհոգանիւթեոյ բնութիւս մեր  
 տաճար անձութեանդ քում յարդարես : Բարեալս ձեռնադրես .  
 աւետարանիչս կազմես . մարդարէս յօրինես . քահանայս և թա-  
 գաւորս օժանես . երգեցողաց բանս շնորհես : Օ ամենեսեան բրի-  
 տանայս քոյին շնորհիւ առնես . ճգնաւորաց և կուսանաց ժոժ-  
 կալութի պարգևես : Ե ան որոյ օրհնեմք զքեզ հոգի նք այ , որ  
 զամ յամենայնի ևս առաւել բարեգործես որոց ոչ գոյ թիւ . մխի-  
 թարեան զանձինս ծառայից քոց անձային շնորհիւ քոյ : Այլ արժա-  
 նաւորեան զնշխարս կենաց մերոց ՚ի հաճոյս քո միշտ կատարել և ոչ  
 երբէք խոտորիլ ՚ի պատուիրանաց քոց . այլ ցնծալ և բերիլիլ ՚ի փառս  
 քո հանապաղ , առել զաշխարհ և որ ինչ յաշխարհիէ , և զկամս աշխար  
 հաբիրին կոխել միշտ՝ և ընդոտնել զամ պատրանս նորս և զդաւա-  
 ճանութիւնս , զնախանձ , զատելութի , զոխակալութի , զհպարտու-  
 թիւ և զամենայն չարիս : Այլ ՚ի ձեռն բարի գործոց և առարկին վարուց  
 փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգիդ . այժմ և միշտ և յա-  
 խտեանս յաւիտենից , ամէն :



Կարգաւորութիւն հասարակաց սղօթից վեցերորդ ժամուն , որ կատարի 'ի դէմն  
հօր նոյ : Եւ ասի , Օրհնեալ հայր սուրբ ան ճշմարիտ , և այլն որ 'ի կարգին :

Տեառն Յովնանու հայոց կաթողիկոսի՝ վասն վեցերորդ ժամու սղօթիցն :

**Ի**սկ վեցերորդ ժամու կարգեալ սղօթքն յայտնի է , զի ա-  
դամն առաջին որ 'ի վայելս դրախտին փափկանայր , 'ի նմին  
ժամու անցանէր ընդ սահման պատուիրանին և ճաշակէր 'ի պտղոյն .  
և 'ի դրախտէն և 'ի պատուիրանէ օրինադրին ունայնանայր 'ի վեցե-  
րորդ ժամուն : Եւ ասն որոյ զեօթանանեկին եօթն ժառանգէր ըզ-  
տրամութի . և ընդ բազում ցաւոց անկանէր տոյժս : Կայր իբրև 'ի  
Չերման հիւանդութե , և քաղէին ոգիք նոյ , լուծեալ յօդք ոտիցն  
և ձեռացն 'ի բարեացն շարժմանէ . կայր լեզուն անշարժ 'ի խոստո-  
վանութիւն սպաշխարութեան :

Եւ զորօրինակ մեռեալ որ անզգայ յամ՝ շարժմանէ , սոյն օրի-  
նակ և մարդն առաջին պարփակեալ 'ի մէջօրէին իբրև 'ի մէջ գիշերի  
կայր 'ի տարակուսի և քաղէին ոգիք նորա : Կանզի 'ի կարճանու-  
թենէն ըմբռնեալ յանօրէնութեան խորխորասն անկանէր . սիրէր  
զմահ քան զյանդիմանութիւն նոյ : Եւ յիշատակ տէրունական պատ-  
ուիրանին և ս առաւել խոցոտէր . և մահուն երկիւղն որ սպառնայր  
թէ մեռանին , և ոչ գիտէր թէ զինչ գործէր : Եւ ասն որոյ փրկու-  
թեան միածինն հօր 'ի վեցերորդ աւուր 'ի վեցերորդ դարուն կայր  
'ի ջանս ցաւոցն , և տրամութքն զտրամութիւն հալածէր . և ցաւովքն  
զցաւն բառնայր : Եւ համախմբելով ընդ փայտին անչնչապէս ,  
զառ 'ի փայտէն բառնայր զպատուհաս մեղացն ադամոյ :

Եւ փոխանակ քաղցր ճաշակման մեղացն , ճաշակեաց զբացախն  
ընդ լեղն խառնեալ՝ 'ի բժշկութի պտղոյն ճաշակման դառնութե :  
Եւ միանգամայն կարեօք և կամօք յանձնառնելիս լուծանէր զպա-  
տիժս պատուհասից նախնի մարդոցն . և անձազան խոնարհութեամբն  
իւրով պայծառութի տունէր արարածոց իւրոց , և զխաւարն առ-  
նելով 'ի միջօրէի որ գրեալն է յաւետարանին թէ , \* 'ի վեցերորդ ժամէ  
անտի խաւար կալուա 'ի վրէ երկրի մինչև ցինն ժամն : Եւ յառ խա-  
ւարաւ յանդիմանէր զկարծեալ ճաճանչ լուսաւորացն որ 'ի պարզա-  
միտ արարածոցն անձք յօրինէին : Եւ զլոյս անձգիտութեն 'ի սիրտս



ամ մարդկան տնկէր ճանաչել զճշմարիտն ւ՛ծ և զողորմածն , որ բժշկեաց զախտս հոգւոց և մարմնոց :

Ս ասն որոյ յերաւի յայսմ ժամու աղօթից՝ պատուիրէ արթուն լինիլ և զգուշանալ ՚ի ճանձրութեանց դիւին միջօրէի . որ դժնդակագոյն է քան զամ դեւս , որ յոլով մեղիութիւն ՚ի վերայ հասանէ և գողանայ զմիտս մեր յիւրն միտելով կամս . և անգիւտ կորստեանն ուղղորս կացուցանէ : Ս ասն այսորիկ կարգեցան վեցերորդ ժամուն աղօթքն՝ իբրև օգնականութի մարդկային բնութեա ընդ դէմ հակառակամարտ զօրութեցն , և յիշատակ տնօրինաբար բժշկութեանն չարչարանօք տեառն մերոյ յի բի : Ըստ է պատճառ վեցերորդ ժամու աղօթիցն :

Խոսքովու՝ սակս Քարոզին :

Երթուն մտօք և անզբօս խորհրդով , ասիւ և դողութեամբ կացուք յաղօթս առաջի տեառն մերոյ և փրկչին յի բի : Օ ինչ է մտացն արթնութիւն և անզբօսութիւն խորհրդոց . չղբաղնուլ ՚ի հոգս և ՚ի ցանկութիւն երկրաւորս , այլ յերկինս ընթանալ և զվերինն խորհիլ զոր ինչն այ և անայնոցն : Օ է որպ որք ննջեն՝ չկարեն լուսոյ տեսողք լինիլ և ոչ այլ իրիք թէ և մերձաւոր իբրն կայցեն : Սոյնպէս և միտք մարմնաւորօք ցնորիւք թմբբեալք՝ ոչ կարեն տեսանել զլոյսն անչիջանելի փառացն այ որ զօգիս լուսաւորէ . և ոչ որ ինչ այնու լուսովի յերկնայնոցն տեսանի մարտրոգեացն . այլ խաւարանայ ոգին և սիրան , և օտարանայ ՚ի կենաց անտի աստուծոյ :

Ըրդ զգուշացուցանէ քարոզն զարթնուլ և զահ և զերկիւղն այ յօգիսն ընդունել և ամենեին զգաստանալ յորժամ աղօթեն : Օ ի թէ հոգեղէն և մահկանացու թագաւորի ասիւ և դողութի կան առաջի ծառայքն , և մանաւանդ եթէ յանցաւորք ևս իցեն . սրբափ ևս առաւել անմահին այ արարչին երկնաւոր զօրացն և ամենեցուն արքայի ասիւ կալ առաջի պարտ իցէ և դողալ առաւելուպէս : Սանաւանդ զե հանապաղ յանցաւոր այ գտանիմք , և այն յայտնի լինի ամենատես աչացն այ . զեմըդ ապա ոչ բաղուամ երկիւղիւ պարտիցիմք կալ առաջի նորս :

Սաւատով խնդրեացուք ՚ի նմանէ զհրեշտակ խաղաղութե պաւհապան անձանց մերոց : Սանապաղ քարոզութիբդ պատուիրեն հաստով խնդրել . քանզի այսպս ուսուցին առաքեալքն և արն ինքին

դիտովին • քանզի պօղոս ասէ , \* Համբառնալ զձեռս ՚ի վեր առանց բարկութե և երկմտութե : Ալ յսկորոս թէ \* Խնդրիցէք հաւատով և մի երկմտիցիք • քանզի որ երկմտան է՝ ասէ վասն նորա , միակն կալցի մտքն այն առնուլ ինչ յոյ : Իսկ տէրն ասէ , \* Չեմ ինչ վասն որոյ աղօթս արարեալ և հաւատացցէք թէ առնուցուք , տացի ձեզ : Ասան որոյ ՚ի գութ ողորմութեանն նոյ վստահացեալ զօգտակարն մեր խնդրեսցուք • և յուսացեալ թէ առնուցումք ՚ի պատշաճ ժամն :

ՅՆրեշտակ խաղաղութեան հրամայէ խնդրել պահապան • և յարէ ՚ի նոյն թէ , Որ եկեալ բանակեսցէ շուրջ զմեօք և աներկիւղ պահեսցէ զմեզ յիմ հրեղէն նեախց սատանայի : Բանակելով ասէ շուրջ զմեօք յոր կողմ և ձգիցէ սատանայ զնեան , նա ոչ թողցէ հասանիլ ՚ի մեզ , այլ տնդէն յինքն դարձուցէ և աներկիւղս արասցէ զմեզ : Հրեղէն կոչեսց զնեան սատանայի • զի իբրև բորբոքէն զմեզ ՚ի ցանկութիս աղգի աղգիս և ՚ի ցանուսն և յոյլ ևս ակաս :

ԲՆԼ զինչ է ասելն թէ որ թուչի ՚ի տուէ , \* Յիրէ որ շրջն ՚ի խաւարի ՚ի գոյթակղութե դիւին ՚ի հասարակ առուրն : Ոչմարտապէս խաւար է որն սասց սուրբն այն և լոյս կեղծաւորի • չար է , և բարի կարծեցուցանէ • դառն է , և քաղցր թուեցուցանէ • զի յորժամ տեղի դասնիցեն ՚ի մեզ նեաք նորա , յոյլ աղգ զխորժակն շրջնն : Բանզի այսպէս և մարմին որ յախտէ ինչ վտանգի , զիսասակարան բաղձայ և ոչ զօգտակարն : Բռնէ զսոյն զայս և ՚ի խողմանէ նեախն սատանայի յոգիսն , թուանիլն զանկարճն և զաւրագն յոյտնէ • և զի՝ աներկեյթաբար հասանի և չերևի թէ տիրէ : Բայց թէ որ զՏոգին ունի լուսաւոր , նա տեսանէ և զգայ զնեսս չարին :

Յորմէ զգուշութե պահելով աղօթիւք և բարեխօսութեամբ , չեմ սրբոյ որք աստ և ընդ չեմ տիեզերս :

Ի հրեշտակէ ասէ զգուշութե պահիլ վասն աղօթից և բարեխօսութեան չեմ սրբոյ • զի թէ և մէք անարժանք եմք հրեշտակացն պահպանութե , սակայն ՚ի սրբոցն աղօթս ապաւինեալ և ՚ի բարեխօսութիս հաւանեցուցանեմք նորօք զչեմ շնորհէլ մեզ ՚ի վերին զօրութեցն պահպանես : Որովք ամրացեալք ՚ի նեախց բանասրկուին , կարացուք կեալ առաքինութե ըստ կամաց նորա յայսմ աշխարհիս • զի խորհուրդքն անմեքձենալի լեալ խաբէութե չարին , կարողանամք յիմ առաքինութիւնս ըստ կամացն նոյ յայսմ աշխարհիս :

Բայա ուրեմն են առաքինութիւք որ չեն ըստ նոյ կամացն , այլ ըստ մարդկան հաճոյից • և կամ ՚ի մտացն հաճութե որովք ամբարտա-

ւանութիւնք յոգիսն զօրանան 'ի չարին ազգմանց : Իսկ յորժամ 'ի նորա խաբէիցն փրծանիմք և առարկնութիս կատարեմք : Ըստ հաճոցիցն նոյ առնեմք , որովք մէք օգտիմք , և զանունն նոյ փառաւոր տունեմք . քանզի և զսոյն խի յաջորդն յայտ առնէ :

Պ Կրկութի անձանց մերոց , 'ի պատիւ և 'ի փառս կենդանացուցիչ անուան նր : \* Յրգար ասէ յորսզոց փրծանի , արգարութիւն փրկէ 'ի մահուանէ : Վեհայնիւ յամ վտանգէ փրկին առաքինացեալքն : \* Փրկէ տէր զանձինս ծառայից իւրոց : Եւ ուր մեղաւորքն հայհոյի անունն նոյ վասն չար գործոց նոցա , նոյնպէս և յառարկեացն գործոց որպէս տէրն ասէ՝ փառաւորի պատմել և պատուի կենդանացուցիչ անունն նոյ , որ կենաց մարմնոյ և կենացն հոգևորաց և կենաց հանդերձելոցն է կենդանացուցիչ :

Յոյս հաղորդութե ընկալցուք 'ի յայտնութե միածնի որդւոցն նոյ , կերպարանակից առնել զմարմին խոնարհութե մերոց ըստ նմանութե մարմնոյ փառաց իւրոց : Ո սան զի զայս խոստացեալ է , մեծ և անձառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց ճշմարտն անձ :

Երբ զառարկնութի գործիցեմք , հաղորդիմք յուսոց հանդերձելոցն . քանզի զանձ անսուտ գիտելով՝ հաւատամք առնուլ զոր խոստացաւ առարկեացն զմեծն զոյն և զանձառելի խոստումն զորոց բաւէ որ ասէլ : Օ ի զթագաւորի ուրուք զփառս անկարանս պատմել լեզու , ազոս զնոյն զեարդ կարացէ պատմել զկերպարանակից լինիլ մարմնոյ փառաց որդւոցն նոյ : Եւ յայսպիսի յոյս խըղացեալ՝ հանապաղ աստէն խի հաղորդիմք անտի խնդութեանցն :

Օ ի թէ որ հաւաստի գիտէր եթէ թագաւորեաց է երբ և իցէ , ոչ ապաքէն և նախ քան զթագաւորելն վստահութե հաղորդէ յուրախութի սպագոյիցն : Եւ թէ երկրաւորքս և ապականացուք որ ընդ մահու են վիճակեալք և ոչ են 'ի ցաւոց և 'ի արտմութեան և 'ի հոգոց ազտաք՝ մեծ խնդութիւն յուսացելովքն գործեն , ապա որքան յոյս հանդերձելոցն որ յերկինս է առանց հոգոց և ցաւոյ և արտմութեանց կերպարանակից փառացն քի լինիլ՝ բերկրէ զհաւատացեալն : \* Կտէ սէրն նոյ ևս խնդամիտ առնէ , ուրախացուցանէ և տեսութի մտացն զմարբեալն . զի ըստ մարմնեն՝ անձառիցն տեսող լինի , այսինքն՝ նոյ և հրեշտակաց և սրբոց և նոցուն փառաց : Եւ այսպիսի առ հաւատչելի թեթեանայ և քաղցրանայ լուծն և բեռն որ վասն քի . ապա յազօթս զբանն փակէ , զի արժանացուցայսպիսի յուսոց հասանիլ . քն յն տէր մեր կեցո՛ և ողորմեա՛ մեզ :

Եւ ժողովուրդն՝ տէր որպմեա :

**Օ**գեցո՛ մեզ տէր անձ մեր զէն արդարութե՛ն , զօրաւոր և յաղթօղ լինիլ ընդ դէմ՝ սատանայական պատերազմաց : Խրատեաց քարոզն աղօթն առնել զի պահպանիցիմք՝ հրեշտակաւ նոյ՛ն ՚ի նեւից սատանայի . և ամրացեալք՝ զօրաւորք յառաքինութիւն լինուք : Ըրդ յառաջ կացեալ քահանայն զնոյն ամրութիւն հայցէ յոյ՛ն . և սա առաւել զի և զինուքն արդարութե՛ն վառել հայցէ ստերոյն թէ՛՝ Չգեցո՛ մեզ տէր անձ մեր զէն արդարութեան :

**Օ**ի որպէս ՚ի մարմնական մարտս մարմնականքն ամրացուցանեն սպառազինութիւնք , սաղաւարտ , զօհճք , և վահանքն , և այլն : Սոյնպէս և ՚ի հոգևորն՝ առաքինութեան վառեն զէնք . որովք և սպառազինել հրամայէ զօրավարն հաւատացելոց՝ պօղոս այսպէս ստերով , \* Չօրացարուք տերամք և կարողութե՛ք զօրութե՛ն նորա . և զգեցարուք զսպառազինութի՛ն նոյ . զի կարօղ լինիջիք կալ ընդ դէմ հնարից սատանայի : Չի ոչ է մեզ մարտ ընդ մարմնաց և ընդ տրեան , այլ ընդ իշխանութի՛ս և ընդ պետութի՛ս և ընդ աշխարհակալս խաւարիս սոսորիկ ընդ այս չարութեան որ ՚ի ներքոյ երկնից : Թուէ սպա մի ըստ միոյն որովք վառին պարտէ : \* Պնդեալ ստէ զմէջս ճշմարտութե՛ք զճշմարտութեան հաւատոյն գօտի անէլ և զգեցեալ զօհճն արդարութեան : և ազուցեալ զոտս պատրաստութե՛ք աւետարանին խաղաղութեան : Ըլ ՚ի վերայ ամենայնի՛ն՝ \* Առէք զվահան հաւատոյ որով կարօղ լինիջիք զանձ նետս մուխս չարին շեջուցանել : Եւ առէք զսաղաւարտն փրկութե՛ն և զտուեր հոգւոյն որ է բաննոյ՛ն : Ըլ ՚ի վերայ բերէ թէ՛՝ \* Չօրաւոր և յաղթօղ լինելով ընդ դէմ՝ սատանայական պատերազմաց :

**Ըլ** զանձ հրեղէն նետս նորա շեջուցանելով անկասկածք լինուք յիրաց ՚ի խաւարային գայթակղուէց դիւին հասարակ աւուրք :

**Օ**րաւոր լինիլ ընդ դէմ՝ բանսարկուին՝ և յաղկիծու նր՛ պատերազմացն՝ զէնք արդարութե՛ն առնեն , որովք և շեջանին անձ հրեղէն նետք սատանայի : Ըլ ՚ի շեջանիլ նոցա՝ ոչ էրբէք կարկած լեցի ումբք յիրաց խաւարային գնացից . զի լուսոյն նոյ պայծառացեալ ոգիքն՝ գիտեն գնալ ընդ արդարութեան շաւիղն և ոչ գայթակղին որոգայթիւք գիւսցն , որք զխաւարեալսն ոգւով և ՚ի հասարակ աւուր գայթակղեցուցանեն : **Օ**ի ոչ ազդէ այս լոյսս առ ՚ի գիտել զնոցա որոգայթսն . բայց արդարոցն լոյս անշեջ է յոգիս նոցա . և ՚ի առէ և ՚ի գիշերի անայթար գնան ՚ի ճանապարհս առաքինութե՛ն . քանզի զայս և յառաջիկայն մտղթէ աղօթիցն բան :

**Օ** ի զգաստացեալք վայելչական տունջենիւս : Ո՞ր է վայելչական տիւ . որ ՚ի քնէ յարդարութե արեգականէն ծագեցաւ մեղւոյս , և զգիշեր մեղացն մերժեաց և տիւ տրար : Պոչէ պօղոս , \* Գիշերն մերժեցաւ և տիւն մերժեցաւ . ՚ի բաց արասցնւք այսուհետև զգործս խաւարին և զգեցցնւք զզէնն լուսոյ . իբրև ՚ի տունջէան զգաստացեալ շրջեսցնւք : **Օ** այս խնդրէ աղօթիցն բան զգաստանալ վայելչական տունջեամբս . քանզի երկրորումբ կազմի աւարինութի , և նոյ տարւոյն և մեր ջանալոյն . վասն այսորիկ զք բարորդն սասց՝ զնոյն յաստուծոյ խնդրէ :

**Լ** աբրինութի կացցուք յայսմ աշխարհիս ՚ի փրկութի անձանց մերոց : **Ե**ւ սուրբ երրորդութիւնդ փառաւորեսցի . զև և վայելէ իսկ քեզ փառաւորութի . վասն որոյ ՚ի նոյն յարէ :

**Ս** րում վայելէ փառք իշխանութի և պատիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

**Ե**րկնաւոր խաղաղութի քո պարսպեալ պահէա՛ զանձինս մեր աէր զօրութեանց : **Ս** ան զև անխռովք են երկնաւորքն , և չեք սնդ մնատ սասանայական վրդովմանց , և ոչ մարդկային խարդախութեանց . այլ ամ ուստեք անխռով խաղաղութիւն , և հոգեւոր մարտիւթիւն : **Օ** նոյն մաղթե լինիլ և յերկրի աղօթիցս բան . զև որպէս յերկինս յամ վրդովմանց պարսպեալ պահեսցուք :

**Օ** ի դու ես ամ խաղաղութե . և բաց ՚ի քէն զայլ որ ոչ գիտեմք . և զանուն քո անուանեմք զօրհանապազ :

**Օ** ի ՚ի քէն է սաէ երկնայնոցն խաղաղութի . և մեր քո՛ եմք որոյն և նորոյն : **Ս** ան այսորիկ սաէ , զայլ որ ոչ գիտեմք . և զանուն քո անուանեմք զօրհանապազ : Հանապաղ սաէ զքեզ կարդումք յօգնութի , և քո ժողովուրդ անուանիմք , և ՚ի քո անուն քրիստոնեսցք կոչիմք :

**Վ** այեաց տէր յերկրպարութիւն մեր ամենեցուն , և շնորհես մեղ սանել զճմարտութիւն արդարութեան արածի . քո յամ ժամ : **Ս** ան զև ոչ ամենեցուն է սանել զճմարտ արդարութին , բայց որոց ամ վարդապետէն : **Օ** ի դահէն և աղօթեն և ողորմին բաղումք , բայց ոչ ըստ նոյ . այլ ըստ իւրեանց մտաց և ըստ մարդկան հաճոցից . վասն այնորիկ սուտ է արդարութին այն և ոչ ճմարտիս : **Յ** աղագս որոյ և սողմուն սաէ , \* ՚ի միտ աւնուլ զարդարութի

Ճշմարիտ : Եւ պօղոս ասէ , \* Որ յայ արդարութի է : Եւրդ երկիր-  
պագանելով խնդրէ զայս և ասէ :

Եւ այեա՛ յերկրպագութիւնս մեր ամենեցուն , և շնորհեա՛ մեզ  
առնել զարդարութի ճշմարտութե առաջի քո յամժամ : Եւ՛ առա-  
ջի լինիլ արդարութեանցն և ոչ՛ ՚ի ցոյցս մարդկան . և մի դադարիլ  
երբէք յայնմ արդարութեանցն , այլ յամժամ յարդարութեան  
վաստակել . զի ծառայքն ՚ի ծառայութի ատեանցն անդուլ խոնջին :  
Եւ եթէ հոգեղէն տերութի միշտ վաստակս պահանջէ յանդիման  
տերանցն , ապա որչափ երկնային և անմահ տրբային պատիւն հարկ  
առնէ առանց լքանելոյ գործել զարդարութե ծառայութի : Արոյ  
մտխարէնն է ոչ յերկրէ միայն որպէս յերկրէքս շնորհէն , այլ ասա  
բազմապատիկ՝ և ՚ի հանդերձեալսն անողապմտաբար : Հանդերձեալ  
ասի որ լինելոցն է չև ևս լեան . զոր և ասէ :

Եւ հանդերձելոց բարեացն արժանի լնողւք ընդ ամսուրբս .  
և ընդ նոսին գոհութե՛ փառաւորեսցուք զՏայր և զորդի և զսուրբ  
հոգին . այժմ՛ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Քարոյ :

Ասան հիւանդաց և ամ՛ վշտացելոց աղաչեսցուք զերկիւն  
մեր քն , զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութե իւրում  
և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծա-  
ռայից իւրոց :

Եւ զօթք սրբոց յոյժ զօրաւոր են յօգնականութիւն . ոչ միայն  
զմարմնոյ բառնալ զցաւս , այլ և զհոգւոյ . որ հաւատով և յուսով  
Նայցեն , ըստ մեծին յակորայ որ ասէ , \* Հիւանդանայցէ որ ՚ի ձէնջ ,  
կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն և արասցեն ՚ի վերայ նորա աղօթս .  
և աղօթքն հաւատով փրկեն զաշխատեալն . և թէ մեզս ինչ իցէ  
գործեալ՝ թողցի նմա : Եւ զի ասէ՝ \* Օճցեն իւղով յանուն տն :  
Եւ յա ՚ի վերայ նորագունիցն ՚ի հաւաստս զի առաւել հաստատեսցին  
՚ի սէրն այ . և զի զգալի մարմին զգալապէս և զնիւթ բժշկութե  
սիրէ ըստ թանձրութեան մարմնոցն :

Եւ առ ՚ի միսս՝ իւղն յօրինակ շնորհաց հոգւոյն արջ տուաւ .  
որ աներեղթաբար զնէրքին մարդն մարբէ , և յայտնապէս արտա-  
քին մարմնոյն առողջութի պարգևէ որք հաւատով յուսան : Եւ այց  
և զայն տեսնել պարտ է , զի և զիւղն աղօթքն զօրաւոր առնէ և

գետ բժշկութե կատարէ, յի սան որոյ թէ երկոքին լինիցին՝ բարի է . և թէ վասն ծուլութե կամ այլ պատճառի իրիք օժուութիւն իւղոյն խամանի, տղութիցն լինիլ պարտ է առանց ան պատճառի . զի կարևոր է և յամ իրս պիտանի, և յամ ժամու խնդրէ պատրաստ լինիլ ըստ տէրուհանկան հրամանին : Օտչն և բարոզիս բան հրամայե աղաչել զփրկիչն մեր քն, ոչ միայն վասն մարմնոց հիւանդութեանց, այլ և վասն հոգւոց ևս որ մեծագոյնն է և կարևորն :

Օ ի ողորմեացի ասէ ըստ մեծի ողորմութեան իւրում և բժշկեացե զսխտս և զհիւանդութիս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց :

Մտարե մեծ է ողորմութիւն նայ և ՚ի վեր քան զամ հասողութիւն և իմացումս մտաց . որ ըստ առատ բարերարութեան իւրոյ միշտ նախախնամէ զեղեալքս նմ, և ըստ կրկնակի պիտոյից մերոց զամենեանն ընդ առատապէս յամ ժամ : Աւ ՚ի ձեռն արժանաւոր զթութից և անբիծ հաւատոց բժշկէ հանապոզ զսխտս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց՝ որպէս շնորհապէս տէր և արարիչ և մարդասէր :

Ա կատարեալ առողջութե հասուցե զամենեանն ՚ի մշտնջենաւոր և յանախ կեանս : Ատարեալ առողջութի զոչն երկուսին ասէ զհոգւոց և զմարմնոց, այլ և զամենեանն մարբիւն յախտից և զանբժշկելիս դարձեալ ՚ի նոյն տեսակս վշտաց . որով արժանի լիցուք յետ աստեացս զմշտնջենաւոր և զանախ կեանսն ժառանգել : Աւ այս լինի տիրապէս շնորհօք և ողորմութե մարդասէր փրկչին մերոյ մէքն, զոր հայրն երկնաւոր առաքեաց մեզ ՚ի փրկութի . զոր և յաջորդ բանս ցուցանէ :

Որ առաքեցաւ ասէ ՚ի հօրէ ՚ի բժշկութիւն ազգի մարդկան միածին որդին նայ տէր մեր և փրկիչ . յն քն կեցն և ողորմես :

Օ ի յայն սակս առաքեցաւ՝ զի կեցուցե զկարօտեալքս առատապարգև ողորմութե իւրով . զոր միշտ հայցեալք կեցուցանել յամենայն ժամ :

### Աշօճք :

Ի արատեցն զցաւս և բժշկես զհիւանդութիս ՚ի թողովուրէնէ բուսմէ նոր նմ մեր . և շնորհէս ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչի բո . որով բարձեր

զտկարուծի ազգի մարդկան և դատապարտեցեր զԹշնամին կենաց և փրկուծեան մերց :

Փարատեցն ասէ զցաւս . սյսինքն՝ անպարհեան և ՚ի բաց մերժեան . որպէս զըջրանչին պետրոսի և զՏարիւրապետին մանկանն , և զհնոջն տեառատեսի , և զբարոտիցն և զայլոցն ամենեցունց . զորս կենդանարար բանիւ թով բժշկեցեր ՚ի ճշմարիտ մարդեղուծի բուսմ : Եւ սցժմ՝ զնոյն հայցեմք բարերար անբ . զի սովոր էս ըստ խրատքանչիւր հաւատոց տալ զառողջուծի . ոչ միայն մարմնոց , այլ և հոգւոց : Յորոց նախ պահանջէիր ՚ի սկզբան զԹէլադրուծի հաւատոց առ ՚ի յընդունեալուծի շնորհաց , և սպա իբր ճշմարտապէս բժիշկ՝ զգորուծի ամենազօր անուծեանդ առ ՚ի բժշկուծիւն ՚ի կիրարկանէիր ասելով . \* Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ և թէ \* Հաւատք քո կեցուցին զքեզ էրթ ՚ի խաղաղուծի : Եւ դարև անծ խաղաղուծի , զի ուր հոգւոց և մարմնոց մեշտ ոչ իցէ անդ է ճշմարիտ խաղաղուծիւն : Օր ուր խաղաղարարն քն բնակէ , անմարիաժք խաղաղուծեց ՚ի բաց մերժին որպէս ՚ի ասանց սիննիցն ձկնորսին և բորոտին : Եւ զնոյն մաղթէ աղօթիցս բան ասելով ,

Շնորհեա՛ ամենեցուն զկատարեալ առողջուծի նշանաւ ամենայաղթ խաչի քո . որով բարձեր զտկարուծիւն ազգի մարդկան և դատապարտեցեր զԹշնամին կենաց և փրկուծեան մերց : Եւ ձեռն պատուական և ամենազօր խաչի քո ասէ , որով զյանցսնս մեր բարձեր և զմեռեալքս մեղօք կենագործեցեր , և փոխանակ մեր՝ զմեր թշնամին և զհակառակորդն կենաց մերոց ՚ի մահ դատապարտեցեր : Եւ սցժմ՝ անբ բարերար զվէրս հոգւոց և մարմնոց մերոց բժշկեան . և շնորհեա՛ կատարեալ և մշանջենաւոր առողջուծեամբ յանախա կեանսդ ժամանէ :

Դու՛ն էս կեանք մեր և փրկուծի բազումորում ան . որ միայն կարող էս թողալ զմեզս և մերժել զախաս և զհիւանդուծիւնս ՚ի մէնջ . որում յայտնի են պետք կարեաց մերոց , պարգևեան զառատ ողորմուծի քո ՚ի վերաց արարածոց քոց ըստ խրատքանչիւր պիտոյից : Բաց ՚ի բէն զայլ որ ոչ գիտեմք ասէ փրկիչ և կեցուցիչ . և կամիւր քո գործ է կատարեալ . որում և յայտնի են պետք կարեաց մերոց . որ ոչ կամիս զմահ մեղաւորին ըստ մարգարէին , այլ զտիրապէս կեան և զճշմարիտ առողջուծիւն : Օր և աղաչեմք պարգևել արարածոց քոց ըստ խրատքանչիւր պիտոյից ըստ հոգւոց և ըստ մարմնոց ՚ի փաստ և ՚ի դովուծի ամենասուրբ էրրորդուծեանդ : Ար և ասէ խակ :



Յորոց հանապօղ փառաւորեալ գովի ՚ի բարձունս ամենա-  
սուրբ երրորդութիւն : Յամենայն արարածոց քոց ասէ յերկնաւո-  
րաց և յերկրաւորացս զորոց զպէսս առատապէս ընուս , բարձրա-  
ցեալ աէրուծիդ քո փառաւորի , այժմ՝ և միշտ և յաւիտեանս յա-  
ւիտենից , ամէն :

Քարոզ :

**Խ**նդրեցուք հաւատով ՚ի տեսունէ վասն բաւուծի մե-  
զաց և թողութի յանցանաց , փրկելով զմեզ ՚ի վշտաց և  
՚ի նեղութեց , իջանելով ՚ի վերայ մեր ողորմութի և գթութի տեսուն  
այ . ամենակալն աէր կեցն և ողորմեա :

**Օ** ի ւժ տուրք բարիք և պարգևք կատարեալք ՚ի վերուստ էն  
իջեալ և միշտ իջանին ՚ի հօրէն լուսոյ , որ աղբիւրն է առատաբուղի  
ւժ բարութեանց : Ար հայրական սիրովն միշտ նախախնամէ զարա-  
բածս իւր և դարմանէ ըստ պատշաճի . որ գթոյ հայրաբար յարա-  
բածս իւր և ոչ տունէ անտես զգործս ձեւաց իւրոց որպէս աէր և  
արարիչ : Այսն որոյ և քարոզիս բան յորդորէ զամենեսան հա-  
ւատով միշտ խնդրել զբաւուծի մեզաց և զթողութի յանցանաց .  
զի առանց հաւատոց ունայն և զուր է աղպանք , և ոչ է հնար առ-  
նուլ զխնդրուածսն : Իսկ որ կատարեալ հաւատով խնդրիցէ , ան-  
հնար է թէ ոչ առնուցու , թէ և բարձրագոյն իցէ խնդիրն :  
**Օ** ի անհնարինքն հնարաւորք լինին սու մեծութի հաւատոյն ըստ  
տէրունական հրամանին , որ կեցուցիչն է ամենեցուն և զորացուցիչ :  
Ամենակալ աէր ւժ մեր կեցն և ողորմեա :

Աղօթք :

**Ս**յր գթութեանց և ւժ ւժ մխիթարութեանց . որ մխի-  
թարես զմեզ յամենայն նեղութիւնս մեր : Հայր ասե-  
լովն՝ մեզ վատահութիւն սոց և յորդորէ որդիաբար և մտերմու-  
թեամբ միշտ աղօթել , և հաւատալ թէ յորժամ Ձերմեռանդ սի-  
բով իբրև որդի սու հայր մնացիմք , և աղբսեմք գողորիկ և խան-  
դակաբանս բանիւք , ճանաբասպէս առնումք զխնդիրն իբր ՚ի գո-

րովագուծ հօրէ . իսկ անձ ասելովն , զարարչական փառացն զձո-  
խուծի յայտ առնէ : Օ ի մի միայն ՚ի հայրական գուծն վստահա-  
ցեալ յանհոգս լինուք , այլ և զտեղուծեն պատիւն գիտելով անհի-  
ւադողուծի միշտ կայցուք առաջի նր : Աւ զն հայր է գթուծեց  
և անձ ան միթարուծեց , գիտէ զամ պէտս մեր յառաջ քան ըզ  
ինդրելն մեր ՚ի նմանէ և պարգևէ միշտ առատապէս : Այլ կամի  
զի մեր միշտ սիրով զնովնմը գայցեմք և սղերսելով ժտիցեմք ՚ի  
նմանէ , ոչ զերկրաւոր և զգիւրանցանելի փառս , այլ զանանցն և  
զվշանջենաւոր :

Սուր և սլծմ ձայնի սղաղատանաց ծառայից քոյ , ընդունե-  
լով զաղաչանս մեր . անցն ՚ի մէնջ զցատուան պատուհասի յանցանաց  
մերոց . փրկեալ յերևելն և յաներևոյթ թշնամւոյն :

Սուր և սլծմ ասէ ձայնի սղաղատանաց ծառայից քոյ , այ-  
սինքն՝ կատարեալ ՚ի բարի զաղաչանս մեր . մի անտես առնէր զոր  
ինդրելն : Աւ անձ զգալն ձայնի զեմլոյ լեռ , որոյ յօդուոր մա-  
տղանք անդամոց ոչ են , նաև միջոցս երկնի և երկրի կարի երկայն  
իմն և հեռագոյն է , և ձայն բարբառոց մերոց ոչ զօրեն յերկինս  
եղանել : Այլ կերպարանք բանիս զոյն յայտ առնէ թէ՛ ընդ զգալի  
ձայնիս և զմտացն յօժարուծի պարտ է կայել , որոյ անձ առաւել  
լեռ և զաղաչանսն կատարէ , ոչ մովսիսի տէր , \* ջն՝ գոչես առիս :  
Ի՞նչպէտ և շնջիւն ձայնի ոչ էր , այլ լուծեամք աղօթէր , Այս  
եղիպի ոչ էին բանք բարբառոց և ոչ արտաբերուծիւն խօսից , այլ  
միայն զգլուխն յերկիր խոնարհեցուցեալ ՚ի վերայ երկուց ծնգացն ,  
զբազմօրեայք ամլուծի երկնի և երկրի ՚ի ծննդականուծի փոխարկէր :  
Այլ մեր զն յայտիսի մնբուր մտոց զբեցաք , հարկիմք զգալն ձայ-  
նիւ աղօթել . թերևս ընդստուսցուք զթմրուծի մտաց մերոց զինի  
ձայնիցն , որով խոնարհեցի անձ յաղաչանս մեր . զոր և աղօթիցս  
բան մաղթէ :


Սնդունել ասէ զաղաչանս , և անցուցանել զցատուան պատու-  
հասի յանցանաց մերոց , և փրկել յերևելն և յաներևոյթ թշնամ-  
ւոյն : Օ ի թէպէտ մեր միշտ մեղանչեմք ասէ ըստ տկար և գթու  
բնուծես մերում և ՚ն պատրանաց բանաբրիւնիս , և զանբարկանալի  
բնուծիւնդ ՚իցատուան շարժեմք ՚ի վերայ մեր : Այլ գու բարբառ  
և որբմանձ անձ մեր՝ ըստ հայրական գթուծեց քոյ լուր ձայնի աղա-  
չանաց մերոց անտես առնելով զսխալանս մեր . և անցն զցատուան  
բարկուծե քո ՚ի մէնջ . և փրկեալ զմեզ ՚ի յայտնի և ՚ի յայնպայ թըշ-  
նամուաց : Օ ի միշտ ՚ի փառաբանուծի բում կայցուք , գոհանալով  
զմե ծանծիր և զնս անտապարգև տեսնեդ . զոր և յոջորդս ցուցանէ :

Արժանաւորեա՛ս անդադար փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ հոգւոյդ սրբոյ , այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Յորդորակ :

Պարթիցո՛ւք և մեք 'ի թմրութի՛ մտաց . և զխմնալի սկն ոգւոց մերոց յառեսցուք առ տէր անձ մեր : Առցո՛ւք օրինակ մեզ անձ բարեաց զուրբս անձ և զառաջին ընտրեալսն , մտնաւանդ աղօթից և մաքրութի մտաց : Աքք հաճոյական խնդրուածովք զերկինս բացին . զԾով բաժանեցին . հաց անձրեւեցին . զչար դէս հալածեցին . զախտս փարատեցին . զմեռեալս յարուցին . և զայս բազումս հրաշագործեցին , որոց ո՛չ գոյ թիւ : Աղաչեսցուք զհայրն երկնաւոր ստեղծ հանապազ , \* Հայր մեղաք յերկինս և առ աշխարհ , և ո՛չ ևս եմք արժանի կոչիլ որդիք , վասն զի մեղօք մերովք բարկացուցաք զքեզ : \* Դարձ առ մեզ անձ փրկիչ մեր և դարձն զսրտմտութիւնս քո 'ի մէնջ :

Այս սրբայէս լիցի : Աթի՛ 'ի չարեաց դադարեսցուք . եթէ զմեղս խոստովանեսցուք . եթէ արտասուօք սնկցուք առաջի նորա . և աղաչեսցուք զերեսս նորա հանապազ հաճոյական աղօթիւք . և խնդրեսցուք միշտ զողորմութի 'ի նմանէ : Թողցուք միմեանց զյանցանս . զի և մեք արժանի լիցուք թողութի 'ի հօրէն գթութեանց և ողորմութեանց . որով և հանդերձելոց բարեացն արժանի լիցուք հասանիլ , փառաւորելով զհայրն երկնաւոր և զորդին միածին և զհոգին ճշմարիտ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :



Վարդապետութիւն հասարակաց աղօթից իններորդ ժամուն, որ կատարի 'ի դէմս որդւոյն նոյ: Եւ ասի՝ Օրհնեալ որդիդ նք ան ճշմարիտ, և այլն որ 'ի կարգին:

Տեառն Հովհաննու հայրց կաթողիկոսի՝ վասն իններորդ ժամու աղօթիցն:

**Ի**սկ յիններորդ ժամուն կարգեալ զաղօթան, այս վասն անդարձ խոստովանութե մեղանացն աղամայ, յորում ժամուն զատուարտեալ ելալ 'ի դարխտէն: Եւ 'ի նմին ժամուն աղաղակելով աւանդեաց զհոգին փրկիչն աշխարհաց, և զաղամ էջան 'ի դժոխոց: Եւ զիններորդ ժամուն զխորհուրդն տեսանեմք բարձրագոյն աւանդութեք քան զայլսն պատուեալ յառաքելական դասուցն. քանզի \* Պետրոս և յովհաննէս ասէ ելանէին 'ի տաճարն յիններորդ ժամուն աղօթիցն. և 'ի նմին ժամուն բժշկէին զկաղն որ նստէր առ դրան տաճարէլոյ որ 'ի քն կարգեալ է. զի ընկալցի ճշմարտութիւն 'ի հնոցն և 'ի ստուերականացն: Ս քահանայութեանցն ասեմ և զպատարագացն զգանաղան կէտանեացն արեանցն հէղմանց, 'ի մասնել ազնուագուռնի յուսոյն որով մերձենամք առ անձ, որով փարատեցաւ խաւարն անգիտութեան 'ի կատարիլ ժամանակիս:

Ար յառաջին միջօրեայն եղև նսեմն նախնի մարդոյն յանցանօք. իսկ երկրորդ աղամն յերկնից գորով՝ բարձր բարբստով 'ի վեր խաչին աւանդեալ զհոգին յինն ժամուն: Եւ ընկեաց զաիեզերս 'ի բանտէ և 'ի տանէ կապանաց զաղգս մտրդկան ոյք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. և 'ի նմին ժամուն զլուսաւորան 'ի խաւարէն փարատէր ըստ մարգարէական ձայնին \* Ընդ երեկս աւուրն լոյս աւնելով աշխարհի: Եւ ինքն էնն անձ մերով բնութեամբս 'ի խաչին աղաղակէր զելեկէին ասելով. այսինքն՝ \* Աստուած ան իմ նայեաց առ իս ընդէն թողեր զիս: և թէ՛ \* Հեռի եղէ 'ի փրկութե իմէ վասն բանից յանցանաց իմոց:

Եւ յ է որ եկն 'ի խնդիր ոչխարին կորուսելոյ 'ի հօտէ իւրմէ, թէ ո՞ր էս աղամ. և լուսա զապիրատ պատասխանին զկինն բերելով պատճառ: Ա սան որոյ բանից արտաքս ընկեցաւ 'ի կենաց տեղոյն ինքնակամ ընտրութե՛ն. ուրանօր լուսան թէ՛ \* Հնդ էր և 'ի հող

դարձցին : Սոյնպէս և 'ի նմին տեղւոյ լուսւ Դ ձեռն աւազակին թէ՛ \* Ընդիս եղիջիւր այսօր 'ի դրաստին : Եւ եղև 'ի նմին ժամուիններորդի արձակումն 'ի մահուանէ 'ի կեանս , և մնւար կենաց ճանապարհին 'ի ծառն կենաց : { Զորում ժամու ընդ երեկս աւուրն արտասք ընկեցաւ 'ի կենաց տեղւոյն , 'ի նմին ժամուան կանգնեցաւ 'ի գլորմանէն : Ստ մարգարեական յառաջագոյն աւետաւոր գուշակութեանցն եթէ՛ \* Յաւուրն յայնմիկ ոչ եղիցի լոյս , ոյլ ցուրտ և պարզ եղիցի օր մի , և օրն այն յայտնի տեսուն ոչ տիւ իցէ և ոչ գիշեր . և ընդ երեկս եղիցի լոյս յիններորդ ժամուան :

Օ որ և յաջորդն յայտ առնէ յասելն եթէ , \* Յաւուր յայնմիկ բղիւեսցէ ջուր կենդանի յերուսաղէմէ՛ 'ի խաչելոյ մարմնոյն արին և ջուր . մին՝ իբրև զմարդոյ , և միւսն՝ առաւել քան զմարդոյ : Կէս նորա 'ի ծոփն որ առաջի , 'ի հին ժողովուրդն որ ահն ունէին միսթարութեն եղէմի օրինադիրք և հայրապետք և մարգարէք . և կէս նորա որ 'ի ծոփն որ յետոյ 'ի նոր ժողովուրդս , որք առարեւական քարոզութիւն ժողովեցան 'ի մեղացն թափառմանէն . և լուսաւորեցան ջրովն կենդանութե բղիւելոյն յերուսաղէմէ խաղացեալ 'ի կեանսն յաւիտենից . և եղեն նոր ժողովուրդք և նոր եկեղեցի :

Ըյսր խորհրդոյ յիշատակք յամ ժամու կատարին . վասն զի սա է փրկութեան մերոյ աւարտումն , և 'ի նմին ժամու կատարեցան ամ գրեալքն յօրէնս և 'ի մարգարէան : Ըյսու խորհրդով հալածեցաւ 'ի մերս տապանէ ագուան մահացան , և ընկալար զսաղարթն ձիթենւոյ աղանաբէր ընդ երեկս աւուրն բանին կենաց : Որով կարացուք յամ ժամ պաղաբէր մտօք կալ առաջի նորա , և հանապաղ յիշէլ զբախտիս մարգասիրութե նորա և զկամուար չարչարանս զոր կատարեաց յայսմ ժամու վասն մերոյ փրկութե : Ըյս է պատճառ իններորդ ժամու աղօթիցն որ կատարին :

Խորովա՛ սակս Քարոզին :

Սուրբ սրտև և հաստատուն հաւատով , տհիւ և դողութե կացցուք յաղօթս առաջի տեսուն մերոյ և փրկչին յի քի : Հանապաղ զայս զգուշացուցանեն քարոզքն . երբեմն ասեն արթուն մտօք և անզբօս խորհրդով կացցուք յաղօթս , երբեմն սուրբ սրտև : Սասն զի սրբութիւն սրտին լեալ՝ բարի է խօսս առնել ընդ աստուծոյ . իսկ սրտին զբաղեալ 'ի ցնորս աշխարհականս՝ ընդունայն կարդացումն բերանոյն լինին : Են և ոյլ անմարբու-

Թիւնք սրտի , նախանձ , ռխակալութիւն , ցանկութիւն ընկեց , ցանկութիւն մարմնոյ . և հարկ է զամ' սրբել 'ի սրտէն' որ աղօթիցէն նոյ , այլ և հաստատուն լինիլ 'ի հաւատոս : Արկորումք այսորիւք պիտոյ է աղօթել ըստ առարեւական բանին ո՞ր ասէ , \* Հաւատալ արժան է այնմ որ մերձեկայն առ անձ . Թէ է' անձ : Այս առաջին հաւատ . երկրորդ թէ' որ խնդրէն զնա' լինի պարգևատու , որ քաջացոյս ստանէ 'ի հայցումսն : Այնպէս վրաստահանալ յառնուլն որպէս որդի 'ի քաղց կամ 'ի ծարաւ կամ 'ի մերկութի , 'ի դոյսուոր հօրէ զայսպիսեացս պէտս պահանջէ . նա' փոքր է օրինակս : Այսց զե որբան է գորովալիւր տուողութի տուողին' աղքատանամբ տալ օրինակ , ապա զոր զօրուորն առ մեզ գիտեմք պայման' յայն հանգչեմք :

Վստի որբան անկար է մարդ քան զամ' , այնքան անկար է մարդկան զթութիւն քան զայն : Առարկ' եթէ քաղցեալն 'ի հօրէն զհացի դատենէն ո՞չ հաւատայ , ո՞չ ապարէն անգթութեան պարսաւանս զնէ հօրն' եթէ պատճառք չկայցեն 'ի մէջ արգելմանն : Այսպէս և մէք զգտակարն մեր հայցելով և ո՞չ յուսալով առնուլ , ուրացօղք նորա ամենախնամ բարեգթութեն լինիմք , վն որոյ ստեպ զայս սկիզբն քարոզելցն տեսմք և խրատեմք հաւատալ զառնուլն :

Իսկ ահիւ և դողութեամբ հրամայեալ կալ յաղօթան , ո՞յ և վայելէ առաջի մեծի և հօրի կալ' ոչընչի և աղկաղկի մեր բնութես : Ս'անաւանդ զի և ամաչեցեալք իսկ 'ի գործոց մերոց եմք . և 'ի յիշատակ դալով մերոց յանցանացն' երկնչել և դողալ և զարհուրիլ պարտիմք յահէ զօրութեանց մեծին նոյ , յիշելով զմեծամեծս նորա և զանչափ շնորհսն : Արդարև մեծամեծք են և ո՞չ չափին բանիւք կամ իմացութիւք շնորհեալքն 'ի ժամուս յայսմիկ , զոր յիշել հրամայէ : Օ համբերութիւն կենսատու խաչին և զհեղումն ազատեցուցիչ արեան նորա , և զոցին նմանս զոր յայսմ ժամու վասն մեր մեղաւորացս կրեաց նա :

Օ 'ի յայսմ ժամու ապստամբութեան մերոյ եղև սկիզբն . և զպտուղ փայտին ճաշակել' նախամեծար քան զամականն համարեցար , մըլար խրատուն խաբեալք : Ս' ասն որոյ մերկացար 'ի փառացն և մահու դատապարտեցար . և զանիծիցն ընկաւեալ կեանս , և ընդ մեղաց թագաւորութեամբ անկեալ եղար , և փոխանակ դրախտին զերկիր ալիսատութեամբ դործել և 'ի սա դառնալ պարտաւորեցար : Թողում' ասել որ յայցանէ տխար զանազանք ազգի մարդկան ըստ հոգւոց և մարմնոց և օտարութե յոյ , և պատուհասք բարձրբնակք :

Առ որք յայցանէ թշնամութիւնք և տխարաց կեանք և մահ գժնդակ . և որ 'ի հանդերձեալն համբարեալ կան անհնարին և անհանդուրժելի և անսպառ տանջանքն : Հորոց յամենեցունց փրկել

զմեզ կամեցեալ փրկիչն ՚ի սոյն յայտմ ժամու յանձն իւր էառ զպատուհասն : Սերկացաւ , զի զմերկութեան յինքն առեալ զանօթ՝ զգեաա լիցի մերկութեա մերում : Աւ խաչեալ ՚ի փայտին՝ զի զյանցանսն որ փայտիւն՝ պատուհասելով փայտիւն լուծցէ . և բւեռեալ ձեռօքն՝ զձեռացն մեղսն հատուացէ , և ձեռն զձեռն ազատեսցէ : Աւ կերակուր լեղւոյն՝ զկերակրոյն սխալանսն սրբեսցէ . և մահ զմահ լուծցէ , և անէծք զանէծս եղծցէ . և աւազակն ՚ի նմին ժամու դրախտին բնակիչ լիցի : Աւ արիւնն անբիծ հեղեալ մաքրումն յանօրէն արեանց աշխարհի պարգևեսցէ . մանաւանդ թէ բնդ սրբոյ հօրն գրիգորի սասցից : \* Շիթք դուզնաբէայ արեանն՝ զաշխարհ վերստին ստեղծանեն , և լինին իբրև խախաց կաթին ամ մարդկան՝ ՚ի միասին զմեզ կապելով և ժողովելով , մանաւանդ թէ ազատելով զմեզ յամ պարտեաց իւրով պատարագաւն : Եւ ՚ի սրբութիւն սրբութեանցն մտանել մեզ արար իւրով կարապետելոյն , և յորդիս ևս նոյ զմեզ կարգեսաց , ջնջելով զբնութե մերոյ զպատամբութե պարտս : Օ սոյս և որ սոցունց նման է՝ յիշել հրամայցէ զմեծամեծս և զանչափ շնորհս , և յարէ ՚ի նոյն :

Աւ մեք զոյս ամ զմտու ածելով՝ սրբեսցուք ՚ի մեղաց զխորհուրդս զբանս և զգործս : Օ ի նոյ զմերն հատուցեալ պարտիս՝ և մեր դարձեալ ՚ի նոյն լինիլ պարտս՝ կարև յանդգնութի է : Այլ զի ոչ միայն գործքն մեր ՚ի մեղաց մարտ լիցին , այլ և խորհուրդք և բանք սրբեալ լիցին : Օ ի թէ ա՛տանոցն արիւնն՝ զպղծեցելովքն սրսկեալ սրբէք ՚ի մարմնոյ սրբութի , ապա քի արեանն յորդիս մեր սրսկեալ զնա՛րդ իշխեսցուք սոյն ոգւոց զպղծութի բեգունել տալ . այլ զինչ , սսէ :

Սատարեսցուք զսրբութի անձանց մերոց ահիւն նոյ : Ատարեալ արասցուք սսէ զոգիս մեր յամ սրբութիս . զի մի ինչ արատ յոգիս լինիցի , այլ յամ բծէ մաքրեալ լիցի : Տատարութե . ՚ի մանաւանդ . յիսակալութե . յապահութե . ՚ի ցանկութե չարաց . յամբարտաւանութե . ՚ի ստութե . ՚ի փռամոնրութե . յապերբախտութե . ՚ի յանդգնութե . և բոլորովին յամ սխալանոց : Աւ զի ամ արդարութե սուաւելեալ լիցուք սիրովն նոյ և սիրով եղբարոյ . և այսոցիկ ամի երկիւղն նոյ է արարող . վասն որոյ և սսէ իսկ ,

Ատարեսցուք զսրբութի անձանց մերոց ահիւն նոյ : Այս թէ կամ իցէ սսել ումեք թէ անզոյշ կացեալ էմ ցանկ , որդ զնա՛րդ կարիցեմ սրբութիւն ստանալ : Աւ այնոցիկ ճանապարհ սրբութե ցուցանէ զստոյգ խոստովանութի . և զպաշխարութի , վասն սրոյ և

տակ իսկ, մի՛ յաղագէսցուք խոստովանիլ նմա զմեզս մեր, և խնդրել զթողութի մեզաց մերոց . զի մի կորիցուք անսպաշխար զյաւիտեանական կորուստն :

Բանասերիուն սովորէ հեղգ առնել և յապաղեցուցանել զխոստովանութի և զապաշխարութի . այլ մի՛ յապաղեսցուք մեք, և առ սահաւ սահաւ յապաղմամբն ՚ի չորեքն գողացեալ լինուք ըստ ասացելու մն . այլ որպէս խրատ սայ իմնաստուենն՝ \* Մի՛ օր ՚ի յօր առնէր դատնալ առ աէր : Բւ երանելին գրիգոր անձաբան ասէ, \* Հէղգ լէր առ ՚ի չարութիւնն սլ մարդ, և արագ առ ՚ի բարեգործութիւն : Օ սոյն զայս քարոզն խրատէ փութալ խոստովանութի յապաշխարութի, զի մի՛ մահն արագեալ անսպաշխար հանցէ յաշխարհէ աստի, և յաւիտենական և կորնչեցիմք կորստեամբ, այսինքն անսպառաւն :

ԲՂ մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է, գործեսցուք զբարիս ՚ի կեանս յոյստիկ : Տէրն ասէ, \* Գայ գիշեր յորժամ ոչ որ կարէ բարիս գործել : Բն յաւիտենական խաւարն մեղաւորացն գիշեր է . յորժամ ոչ որ կարէ բարիս գործել, և ոչ ապաշխարութի քաւութի ստանալ : \* Զի ոչ որ է որ ՚ի մահու յիշէ զբեզ ասէ . կամ ՚ի դժոխս խոստովան առնի առ քեզ : Օ ի անօգուտ է անդ խոստովանութիւն և զըզնումն . և ոչ կաշառաւ կամ բարեխօսիւ փրկութիւն է գտանել ըստ գրեցելումն : \* Եղբայր ոչ փրկէ և ոչ փրկէ մարդ, և ոչ սայ նոյ զփրկանս իւր և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ : ԵՂ վաստակեալ յաւիտեան և կեցցես ՚ի սպառ և ոչ տեսցես զապականութի :

Բւ ո՛ր իցեն յաւիտենական վաստակքն . մի՛թէ երկրիս հարստութիք և համբարքս, քաւ լիցի . այլ առ անձ սէրն և պատուիրանացն պահպանութիք, որոյ փոխարեն կեցցես իսպառ և ոչ տեսցես զապականութիւն : Բպականութի է տանջանքն անհատ . որ անշէջ հրովն սյրեն և անմահ որդամբքն գիշատեն զմեղաւորացն զմարմինս . և անմահ ապականութի ապականեն և ոչ սպառեն : Բսկ որ վաստակին աստ յարդարութի, անհատս և անպատումս ստացին և հանապազօրդս . սյս է իսպառ :

Օրինակ վարուց մերոց ունելով զամ սուրբս և զսիրելիս և զյաղթօղ նահատակս : Օ ի թէ ապրիլ կամի որ, ազգի ազգի օրինակս գտանէ ՚ի սրբոց ըստ իւրաբանչիւր կարգի . աղքատաց և ճոխաց . իշխանաց և ռամկաց . գիտնոց և տգիտաց . արւեստաւորաց և անարուեստից . զօրաւորաց և տկարաց . հիւանդաց և առողջից . տերանց և ծառայից, արանց և կանանց և ամ չափոյ հասակի : ԲՂ մեղաւորաց գտանին յաճախ օրինակք քաւութեան այնց . և մարթիմք ըստ իւրաբանչիւր վարուց ՚ի նոցանէ օրինակս գտանել . որք յաղթօղքն եղեն սատանայի, նահատակեալ ընդ դէմ նորս : Ե՛ յանա-



պատի միայն , այլ և յաշխարհի . ոչ կուսուլթեամբ յատուկ , այլ և ամուսնուլթբ . ոչ ՚ի բեմբականաց և եթ , այլ և ՚ի զինուորականաց : Աբբ ոչ օրինակբ միայն և քաջալերիչք մեր են , այլ և օգնականբ աղօթիւք և բարեխօսուլթեամբ են մեզ :

Օ ի թէպէտ և ինքեանբ զբարիոք պատերազմ պատերազմեցան և զընթացան կատարեցին , սակայն մեզ որ դեռ ևս պատերազմ միմբս իբրև եղբարս հայցեն ձեռնկալուլթի յոյ . և մարտակից լինին ճգնուլթբն իւրեանց : Ա՛նաւանդ թէ մեք զգաստացեալ և զգուշացեալ իցեմք և զնոսա ՚ի թիկունս գալ հայցիցեմք : Արոց անուան մինչև ցայսօր պահուցումն է թշնամեաց . քանզի ահագին վերս ՚ի նոցանէ առեալ են : Արոց մինչև ցայսօր յիշումն դողացուցանէ ըզնոսա , և անզօրս առնէ ՚ի պատերազմ որ ընդ դէմ . քանզի և անձ իսկ նոցա բարեխօսուլթբն զպարեհնեալն ՚ի նոսա զօրեաւոր առնէ առ գիււսն մարտս , և քաջայոյս առ բարեացն հանդէս . վասն որոյ և քարոզն ասէ ,

Արոց աղօթիւք և բարեխօսուլթբն շնորհեցէ մեզ մարդասէրն անձ զճաշոյսն իւր և զօգուտն մեր խորհիլ միշտ և առնելէ Վրանզի որք ըստ մարմնոյ խորհին կամ առնեն , թշնամուլթիւնն այ խորհին և առնեն և յնաս անձանց . իսկ մեք աղօթիւք սրբոցն արժանացուք զՏոգևորան խորհիլ միշտ և առնել որ է հաճոյ այ և օգուտ մեր . մանաւանդ թէ օգուտն մեր է հաճոյ այ : Ար ոչ ասա միայն օգուտ է մեր յաղօթս և քաջանունս առնելով , այլ և անպատու մի սակօք անդ զմեզ պատկեն : Օ ի որոյ ասա քաջ նահատակացն յերկրաւոր թագաւորացս էղծանելին պարզեին պատկին , նոյնպէս առ հանդերձելոցն՝ անեղծ և անթառամ և անպատու մ պատկին պատրաստեալ են ըստ անուտ խոստմանցն այ ճմարտի առ իւր սիրելիսն որք սիրեցինն զնա և սիրեցանն ՚ի նմանէ : Վրանզի զայս յայտ առնէ քարոզն յասելն , Եւ անպատու մ պատկացն հաղորդս գտանիլ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճմարտիան անձ յս . քս . անբ մեր կեցն և ողորմեա :

Նորին խօսուլթ . սակս Աղօթիցն :

Տէր զօրուլթեանց , այսինքն՝ վերին զօրացն . որ կամուոր մահուամբք քով ՚ի ժամուս յոյսմիկ , վասն զն յիններորդ ժամուն աւանդեաց զՏոգին աէրն ՚ի խաչին կամու եղեալ զանձն : Ի իշխանուլթի ունիմ՝ ասէ զնել զանձն իմ , և իշխանուլթիւն ունիմ

առնուլ զնա . և ոչ որ հանէ զնա յինէն . այլ էս զնեմ զնա անձամբ  
 իմով : Որ և յայտնի իսկ եցոյց զկամաւոր մահն , զի յառաջագոյն  
 բազում անգամ կամեցան ունել զնա և ել ՚ի ձեռաց նոցա : Եւ ՚ի  
 գիշերին յորում մատնէր զանձն , կարաւ զայս նոյ առ ՚ի չճանաչել զնա :  
 Եւ իբրև ասաց թէ՛ . էս եմ զոր խնդրէքն , յետս յետս տարեալ  
 զարկոյց զգետնի : Եւ ՚ի ձեռս տալն զինքն՝ ասաց թէ՛ վասն ընդ  
 դպիրս մարգարէիցն , յանձն առի զամբոնումն . վասն որոյ և աշակեր  
 տին սաստեաց որ զուսկն ծառային եհատ , և մատուցեալ բժշկեաց  
 զուսկն : Եւ մինչև համօրէն կատարեաց զգրեալն վասն իւր՝ ոչ  
 եհան զոգին . յաղագս որոյ և ասաց ծարաւի եմ : Եւ զմատուցեալ  
 քացախն հանդերձ լեղւովն՝ արբ և սսէ , արդ ամ ինչ կատարեալ  
 է . և սոցա խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին :

Ոչ առ ստիպաւ ստիպաւ զօրու թիւն լքեալ որոյ ամ մարդիկ , այլ  
 ուժգին ձայն արձակեալ և ասացեալ՝ հայր ՚ի ձեռս քո յանձն առ  
 նեմ զհոգի իմ : Զորմէ հարիւրապետն և որ ընդ նմայ էին՝ զիշխա  
 նութի մեռանիւն տեսեալ , խոստովանեցին ճմարտապէս որդի ոյ  
 լինիլ : Վասնզի և ձայնն այն զերկիր շարժեաց , զվարագոյր տաճա  
 րին եհերձ , զվէմն պատառեաց , զգերեզմանս եբաց , և զբազումս ՚ի  
 ննջեցելոց սրբոց յարոյց . զի ամենեցուն յայտնի լեցի թէ վասն զմեք  
 մահ սպանանելոյ մեռաւ , և յաղագս զմեր պարտականութիւն ազա  
 տելոյ էգ զանձն : Վասնզի և զլուսաւորսն խաւարեցուցանելով՝  
 յայտ արար թէ արարածոցս արարիչ է . և կամաւ և ոչ ակամայ կրէ  
 զոր ինչ կրեացն : Օ ի որ զվէմն հերձեոց , ոչ անկարանայր զխա  
 շահանուան պայթել . և որ ՚ի գերեզմանոցն զմեռեալն վերած  
 եաց , ոչ անկարանայր զբեռնսն թօթափել և իջանել ՚ի խաչէն :  
 Եւ և ոչ սաստիկութիւնն ցաւոց ազդեր մեռուցանել զամենեցուն  
 կենդանատուն . այլ զի ըստ էսայեսայ յառաջաձայնութե՝ \* վիրա  
 ւորեցաւ վասն մեղաց մերոց , և պատժեցաւ վասն մերոց անօրէնու  
 թեան : Ինքն սսէ վէրս և պատիժս յանձն էառ կամաւ և ոչ բըր  
 նազբօսեալ ուրուք :

Ըրդ՝ և մեք ՚ի սոյն ժամու յորում դատապարտութիւն մեր  
 բաղձաւ , և մեղքն լուծան , և անէծքն եղծան , և մահ մեռաւ , և մեք  
 կենդանացար . և դրախտն վերստին բացաւ . և յերկիրնս ևս ճանա  
 պարհ մեղ հորդեցաւ : Վոհացողութի և մաղթանս առ անձ մատու  
 ցանեմք և սսեմք , Տէր զօրութեանց որ կամաւոր մահուամբք քո ՚ի  
 ժամուս յայսմիկ կենդանացուցեր զմեզ ՚ի մեռելութէ մեղաց մերոց :  
 Օ ի զհրեշտակային զօրութեանց տերդ ոչ երբեք զօրեր մեռու  
 ցանել մարդկանս տկարութի . այլ զի յերկուց մահուց կենդանութի  
 մեղ շնորհեացես՝ կամաւորաբար մեռանիլ յանձն սսեր , զի զընու

Թեանս մերոյ զմահս և զվեղացն ըարձցես ՚ի մէնջ, անմեղեղ և անմահ  
հիդ զմերն մեռանելով մահս :

**Լ** Եւ բեւեռեցեր զինիք դատապարտութե մերոյ ՚ի խաչն քոյ :  
**Օ** ի ՚ի մեղանչական մարմնոյս մերոյ առ տէրն մեր մարմին և բեւեռեաց  
ընդ խաչին : **Լ** Եւ քանզի անձական դատաստանաւն , իբրև դա-  
տախնրաւ մարմնս մեր ունէր զդատապարտութիւն խաչին և բեւե-  
ռացն . զադամայինն զոր ունէր տուեալ մարմին՝ ՚ի նա բեւեռեաց ,  
զմերն դատապարտութի ՚ի բաց բարձեալ ՚ի մէնջ : **Վ** րանզի որ սչն  
արար մեղս՝ մարմինն դատապարտեալ ամ մարմնոյ ազատութի շնոր-  
հեսցէ . վասն որոյ և սսէ իսկ աղօթիցս բան :

**Լ** Եւ շնորհեցեր ազատութի ազգի մարդկան ՚ի ծառայութենե-  
ապականութեան յաղատութի փառաց հեղմամբ արեանդ քոյ սրբոյ :

**Օ** ի ՚ի ձեռաց ադամայ եւ ապականութիւն վասն ուտելոյ ՚ի  
փայտէն գիտութեան զպտուղն . և ապականեցան մարդկան ոգիք  
մեղացն ակախք : **Լ** Եւ մարմինք ցաւալից մարմնով վասնգիւրք ՚ի հոգ  
դառնալ և յերկիր ապականիլ վիճակեցան : **Օ** ի և տէրունական  
ձեռացն բեւեռօք հոսեալ արիւնն ջնջեաց զապականութի յոգևոց  
և ՚ի մարմնոց մարդկան , և ազատութի յերկուց ակախց շնորհեաց :  
**Ո** ՛ ձ միայն յայնցանէ ազատեաց , այլ և փառաւոր արար . վասն այնո-  
րիկ ասաց , շնորհելով աղատութիւն փառաց : **Վ** րանզի սսէն առա-  
քեալ , \* Չորս կոչեալ՝ զնոսին և արդարացոյց . և զորս արդարացոյց՝  
զնոսին և փառաւոր արար : **Լ** րդ գոհացեալ զպարգևացն քի որ  
յոյսմ ժամուս՝ աղաչէ այսպիսի բանիւք :

**Բ** նկալ և այժմ և զաղաչանս մեր և յաջողէս մեզ ուղեղ հա-  
ւատով և առաքինասէր վարուք կալ յոյսմ աշխարհի : **Ո** թ զայնչափ  
ասէ սէր առ մարդիկ ցուցեր ՚ի ժամուս ոյս զքեզ մեզ եղեալ  
պարտահատոց , խոնարհեաց ՚ի սոյն ժամուս պարգևատուութեանս  
ընդ ունել զաղաչանս մեր . և աջողէս մեզ հաստատուն կալ յուղեղ  
հաւատս , և սիրել և գործել զառաքինութի : **Օ** ի սիրելն դառա-  
քինութիւն՝ զանձն է սիրել . և որ սիրէ զմեղս՝ ասէ զանձն ըստ  
քրեցելումն , զի մասնէ զինքն մշանջենաւոր անձնացն : **Ի** սկ որ  
զառաքինութի սիրէ՝ սակաւ ինչ աշխատեալ , աստ յուսովն զուար-  
ձանայ , և անդ յաւիտենական բարեաւն հրճուի ընդ սուրբ հրեշ-  
տանին և ընդ այդարան . քանզի և զայս յաջողուս յոյս առնէ :

**Լ** Եւ յաւիտենական ուրախութեանցն արժանի լիցուք ընդ ամ  
սուրբս , և ընդ նոսին փառաւորեսցուք զՏայր և զորդի և զՏողն  
սուրբ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Որ միտք իմանալ կարէ կամ լեզու ասել բաւէ զուրախութիւն զայն . յորժամ սուրբքն փառաւորին անձառ փառօքն . և ինքեանք վասն անձանց և հրէշտակիք վասն նոցա փառս նոյ փրկողին և ստակողին զնոսա միաձայնութիւն վեր առաքէն : յորժամ ամ ընդ նոսա և ինքեանք ընդ ամ և ընդ ինքեանցն բերկրին ՚ի փառս նոյ , յապահանութիւն և յանարգութիւն և ՚ի մահուանէ յանապահանութիւն փոխեալ և ՚ի պատիւս անպատուս և ՚ի կեանս . ուստի մերժեալ են ցաւք և արամութիւնք և հեծութիւնք : Վասնզի ոչ միայն այնց տեսութիւն և իւր ինքեան փառաւորութիւն բերկրէ զուրաքանչիւրն , այլ և ամ սրբոցն փառազարդութիւն , զուրաքանչիւր որ առանձինն ոնց զիւրան բերկրէ : Օ ի որոնց ասաց առաքեալ , փառաւորութիւն միոյ անդամոյն՝ բոլոր անդամոցն բերէ զանդուութիւն :

Կարձեալ և հրէշտակացն փառացն տեսութիւն , նոյնպէս որպէս զանձինս բերէ սրբոցն զբերկրութեան աննախանձ յայն կեանսն , ուր սուրբ երրորդութիւն ամենից ցուցանի թագաւոր և պարգևատու և ուրախացուցիչ : Եւ ամենեքեան ՚ի մի ականէ լուսոյ աղբիւրէն աւլցեալք՝ գոհութիւնս մատուցանեն ամենապարզ և տէրութեանն : Վասնզի զայս փափագութեան ընդ մաղթէ աղօթիցս բան ոչ միայն անդ , այլ մինչդեռ ՚ի մարմնիս եմք փառաբանակից լինիլ սրբոցն . այսպէս ասելով : Ընդ նոսին : Եւ յինքն ընդ սուրբսն՝ փառաւորեսցուք զհոյս և զորդի և զսուրբ հոգին . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Բազումնորմ ամ և հաստիչ խաղաղութեան՝ հաստատեալ զանձինս մեր քով խաղաղութեամբք . որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամ արարածս քո :

Սասն զի ողորմութեամբ կրեաց զոր ինչ կրեաց տէրն մեր . այսինքն զմարմնանախն և զխաչին և զմեռանին : Վասնզի ետես զմեզ ընդ անիծիւք և ընդ մեղօք և ընդ մահուամբ և ապահանութիւն , և ողորմեցաւ և փրկեաց կամուսոր չարչարանօքն և խաչիւ և մահուամբք : Սասն այնորիկ անտի անուանէ բազումնորմ ամ ասելով . և խաղաղութեան կոչէ ՚ի նոյն միտս հաստատիչ : Վասնզի ասէ առաքեալ . Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի : Եւ որ նոյն ողորմութեամբն ասէ և ՚ի մեզ գթացիս :

Որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամ արարածս քո , և ուղեղ հրամանաւոր մատակարարելով : Որոնց զամ արարածս քո ուղեղ հրամանաւոր ՚ի կարգի ունիս և ոչ տաս թոյլ ըստ իւրաքանչիւր սահման

անցանել : Այնպէս և զմեզ քո խաղաղութեամբդ հաստատեան ան-  
խուով մնալ յերևելի և յաներևոյթ փորձութեանց , զև մի առ քեզ  
և մի առ մարդիկ ամբողջիցմք ինչ , և մի այլոց դրժանք՝ զմեզ  
մնասեսցեն :

Այս ան զև այդ իսկ են կամք քո՝ խաղաղական և հոգևոր սիրով  
կալ մեզ յայսմ աշխարհիս : Օ՛հ խաղաղութի՛ ունիցիմք առ մի-  
մեանս և սէր հոգևոր , և զայն խաղաղութի՛ խոստացար տալ առա-  
քելոցն ասելով , \* Չխաղաղութի՛ զեմ թողում ձեզ . զխաղաղութիւն  
զեմ տամ ձեզ : Եւ վասն սիրոյ պատուիրեցեր թէ՛ \* Յայսմ ծանի-  
ցեն ամենեքեան թէ իմ աշակերտք էք՝ թէ զմիմեանս սիրեցէք :  
Ըրդ սուր մեզ զքո զաշակերտութեանդ ծանօթութի՛ զսերն , զև  
առանց քո ոչինչ կարեմք առնել : Այնպէս և զխոստացեալ խաղա-  
ղութիդ ընդ աշակերտաց քոց և մեզ շնորհեան : Օ՛հ խաղաղութե՛  
և սիրով առ միմեանս կացեալք՝ քո գտնտեանդ սպասիցիմք արթ-  
նութեամբ , զոր և յայտ առնէ յասելն :

Եւ սպասել արթուն մտօք յայտնութե՛ մեծիդ նոյ և փրկչիդ  
մերոյ յի՛ քի : Օ՛հ մի՛ աշխարհական հոգևովք թմբբեալք ունի՛ քնով՝  
անփոյթ արասցուք հոգալ վն ահագին աւուրն յորում դու յայտ-  
նիս մեծդ նա՛ և փրկիչ մեր : Ըրդ որպէս պատուիրեցեր մեզ ար-  
թուն կալ և սպասել քում գալտեանդ , և զայն արասցուք , զև ընդ  
պատրաստան ընդ առաջ քեզ էլցուք :

Արում արժանտուրք եղեցուք հանդիպիլ ամպովք ընդ առաջ  
տեառն յօդս : Քանզի՛ ՚ի գալտեանն տեառն հրեշտակքն ժողովէն  
զընտրեալ սուրբսն , և յափշտակէն ամպովքն վերացուցանել յօդս  
ընդ առաջ տեառն : Ըրդ՝ հայցէ աղօթիցս բան՝ զև յընտրելոցն լի-  
ցուք և ամպովք ընդ առաջ տեառն վերասցուք :

Օրուարթերես կացցուք յաջմէ քումնն ընդ նամ սուրբս և սի-  
րելիս անուան քոյ : Օ՛հ ՚ի կացուցանողէն որոշին օղիքն և այծիքն .  
և կան ձախակողմեանքն ամօթով . զև նամ գործք չար զոր գործեալ  
իցեն՝ կերպանան ՚ի նոսա և յանդիմանեն զնոսա առաջի ահե-  
նին քի : Իսկ աշակողմեանքն զուարթերես կան առաջի քի , պար-  
ծեցեալ ՚ի փառսն՝ զոր իւրեանց վաստակօքն ստացեալ իցեն :  
Ըրչէ աղօթիցս բան՝ յայսպիսեաց լինիլ մեզ ՚ի սրբոց և սիրել-  
եաց բրիստոսի :

Եւ անագեսցուք զպատրաստեալ ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց  
քոց զարբայութիւնդ : Այս ան զև ՚ի սկզբանէ աշխարհի արդարոցն  
պատրաստեալ է անպատում բարութիւնքն , զոր յաւիտեանս յաւիտե-

նից վայելեցոցն են ընդ քի՛ն անմահ կենօք • զոր հանապազ աղաչել և  
խնդրել պարտիմք յոյ և այնմ ժառանգութեան բաղձալ միշտ • զի  
հասանել կարասցուք ընդ սրբոցն , և ընդ նոսին գոհանալով փառա-  
ւորեսցուք զՏայր և զորդի և զսուրբ հոգին • այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից , ամէն :

## Քարոզ :

**Մ**ղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր քն՝ որ կամուոր խա-  
չելութեամբ իւրով զարարածս փրկեաց , և հեղմամբ ար-  
եան իւրոյ զթողութիւն շնորհեաց յուսացելոց իւրոց :

**Մ**ղաչեսցուք ասէ • այսինքն՝ սրտի մտօք պաղատեսցուք և ՚ի խո-  
րոց սրտէ զաղօթս առաջի ամենատեառն մատուցուք • առանց որոյ՝  
լէզուի աղաղակ ընդունայն է : **Մ**է զի փրկիչ է մեր յերևելի և յա-  
ներևոյթ թշնամեաց • այլ և կամուոր մահուամբն որ ՚ի վերայ խա-  
չին՝ փրկեաց զտիեզերս ՚ի մեղաց և զյաւիտենից կենդանութի մեզ  
պարգևեաց : **Մ**է սուրբ արեանն հեղմամբ զհաւատով յուսացեալս  
մեծապէս թողութեան արժանի արար , զոր միշտ հոյցել հրամայէ  
ամենեցուն բան քարոզիս : **Մ**է ինքն ՚ի նոյն յարեալ ասէ՝ Ամենա-  
կալ տէր անձ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ :

## Աղօթք :

**Մ**նկեալ առաջի քոյ բարերար և բազումնորդա՛ն անձ , աղաչեմք  
անձ սրտիւք մերովք • որպէս խոստացար ծառայից քոց և  
ուսացեր թէ , \* Չանձ զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ  
՚ի հօրէ՛ , տացի ձեզ :

**Մ**նկանիլ ոչ միայն զմարմնոց խոնարհումն կոչէ զոր երկրամերձ  
դիմօք որ առաջի նոյ անկանի , այլ և զհաւատով ՚ի նա անկանիլն և  
զնա տէր և անձ խոստովանիլն • ըստ դաւթայ՝ \* ՚ի քեզ անկաց ես  
յարգանդէ , յորովայնէ մօր իմոյ դու ես անձ իմ : **Ս** որ թէ ըստ  
մարմնաւոր ճննդեանն և թէ ըստ աւագանիլն շնորհացն առնուցու  
որ՝ ոչ մնասեացէ : **Մ**տե յոր ասէ , \* Իբրև վկայիս կիթեցեր զիս և  
իբրև զդանիւր մաճուցեր յորովայնի մօր իմոյ :

Բնկեալ առաջն քո ասէ : Արն թէ ասիցէ , հանապազ առաջն  
ամենատես աչաց քոց ունիմ զմտաց իմնց զհանդէս , և միշտ առ քեզ  
պաղատիմ որ բարերար և բազումողորմ տէրդ էս , որ բարեգործե-  
ցեր մեզ 'ի սկզբանէ . և միշտ բարեգործէս յամենայնի առատապէս :  
Ար և վասն բազում ողորմութե քո խոստացար շնմարտապէս պար-  
գեւել ծառայից քոց զամ հայցուածս , որք հաւատով յանուն քո  
խնդրեն : Օհ ամ ուրեք հաւատոց պէտք էն . և սերտ և պինդ հա-  
ւատոց , որ հիմն և հաստատութի է ամ բարեպաշտութե : Աւ նաև  
է 'ի ծովու կենցաղոյս , որ ոչ տայ ընկզմիլ յաւելկոծութեց սորին .  
այլ բարեոք նաւել և 'ի նաւահանգիստն ժամանել : Աւ զի ասէ ,  
Յանուն որդւոյ 'ի հօրէ տացի խնդրողաց ամենայն խնդրուածքն :  
Իբր ոչ էթէ որդի անկարանայ պարգևս տալ ումեք . այն որ ասաց  
կուրին , \* Ջրնն կամիս թէ արարից քեզ : Աւ որդւոյ այրւոյն՝  
\* Պատանի դու քեզ ասեմ արի : Աւ աշակերտացն , \* Ջրաղողութի  
զիմ տամ ձեզ : Աւ այլ բազումն այսպիսիս : Այլ այսու զհամա-  
կամութի յայտ առնէ զերից անձնաւորութեանցն : Ասև մեծա-  
ցուցանէ զերխտախ որդւոյ 'ի վերայ բնութեանս . զի 'ի ձեռն որդ-  
ւոյ իջանեն ամենայն պարգևք 'ի հօրէ յարարածս :

Շնորհեաւ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ , և կատարեա 'ի  
բարի զխնդրուածս մեր . զի 'ի քեզ եմք ապաւինեալ . և քո առատ  
ողորմութեամբդ մխիթարեա զմեզ 'ի կեանս յայրոսիկ . և առաջնոր-  
դեալ հասն յանձառ երկնից արքայութիւնդ 'ի փառաբանութիւն :

Շնորհեաւ ասէ , և ոչ թէ ըստ արժանեաց ինչ պարտս հատու-  
ցանել . զի ամայինքն ամ պարգևք էն և տուրք և ընծայք . զոր  
շնորհէ տիրաբար ծառայից իւրոց . զի ըստ գործոց ոչ ունիմք հա-  
մարձակութիւն խնդրել ինչ . այլ միայն 'ի հաւատն ապաւինիմք :  
Այն որոց և զբան հաւատոց միայն բերէ առաջն ասելով , Շնոր-  
հեաւ և այժմ հաւատացելոցս 'ի քեզ : Արն թէ ասիցէ , զոր խոս-  
տացար պարգևել միշտ հաւատով խնդրողաց՝ և այժմ զնոյն հայ-  
ցեմք զի շնորհեացես հաւատացելոցս 'ի քեզ . որք զքեզ շնմարտա-  
պէս որդի խոստովանիմք բնութեանակից հօր :

Այն որոց աղաչեմք զի զամ խնդրուածս մեր 'ի բարի կատարե-  
ացես . այսինքն՝ զի թէ մեք ազիտաբար խնդրեմք զայն ինչ որ  
ոչ է բարի , դու տէր՝ ըստ քում մարդասիրութեանդ 'ի բարի կա-  
տարեա զամենայնս , զի զայլ որ ապաւեն և յայտ օգնականութե ոչ  
ունիմք բաց 'ի բէն տէր : Այն որոց հայցեմք միշտ զի 'ի ձեռն  
առատ պարգևաց քոց մխիթարեացես զմեզ հանապազ յայսմ տրու-  
մակից պանդխտական կեանս : Աւ քոյն առաջնորդութեամբդ ժա-

մանեցուք ՚ի քո անձառելի և երկնային թաղաւորութիւնդ : Օհ արժանի ընցուք և յանվախձան կեանսդ զքեզ միշտ փառաբանել ընդ ամենայն սուրբս քո և ընդ երկնային զուարթունս . զոր և յազորդս յայտ առնէ :

Պ փառաբանութիւն և ՚ի սրտիւ ամենասուրբ երրորդութեանդ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Քարոզ ննջեցելոց :

Ս ասն Հոգւոցն Հանգուցելոց աղաչեսցուք զփրկիչն մեր քն զի զնոսս ընդ արդարսն դասեսցէ , և զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ :

Հրամայեաց քարոզս յառաջագոյն աղօթս առնել վասն կենաց ընթացից մարդկան , և վասն վշտացելոց ՚ի ցաւս և ՚ի հիւանդութիւս . որք գեռևս ՚ի կենցաղումն տատանին . որոց և զքաւութիւն մեղաց խնդրել հրամայեաց , և զիջումն ողորմութե յոյ առատապէս յարարածս : Իսկ այժմ՝ մտղթել հրամայէ վասն Հոգւոցն Հանգուցելոց որք շշմարիտ հաւատով ՚ի քն ննջեցին զի զնոսին դասաւորեսցէ ՚ի լուսեղէն խորանս ընդ սուրբս ւ՛մ . և զմեզ կեցուցէ միշտ ողորմութեամբն իւրով . որոյ ասէ քարոզիս բան ,

Մենակալ տէր ւ՛ժ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ւ : Աեցո՛ ՚ի վտանգէ նեղութեանս , և ողորմեա՛ վշտացելոցս ՚ի չարին հարուածոց , որք հաւատով կարդամք առ քեզ տէր աստուած մեր :

Աղօթք :

Ք ըիստոս որդի նոյ անոխակալ և բարեգութ , գթա՛ ՚ի հոգիս Հանգուցելոց մերոց : Աերեա՛ և այց արա ՚ի փառաւոր միւսանգամ գալտեանդ քո . դասաւորեա՛ սյայժառացեալ ընդ սուրբս քո . զի դու ես տէր և արարիչ ամենեցուն , դասաւոր կենդանեաց և մեռելոց :

Ք ըիստոսդ անուն՝ ոչ սոսկ մարդկութեան է անուն և ոչ լոկ ւ՛ժութեան . այլ օծեալ թարգմանի , այսինքն ւ՛ժ և մարդ . վասն զի ւ՛ժութեամբն էօծ զմարդկութիւն : Մ.ՍԼ և աւետեաց է անուն . իբրու թէ՛ քն յոյս քրիստոնէից . որով յուսով վատահացաւ բնութիւնս կոչել զւ՛ժ հայր . զի ժառանգակից եղաք միածնի որդւոյ



նորա ըստ առաքելոյ • Թէպէտ նա բնութիւն յորդի, իսկ մէք շնորհօք ։  
 Վն որդի այ սակ անոխակալ և բարեգուծ, գթա՛ ՚ի հոգիս հան  
 գուցելոց մերոց, Օ մեծ գթութիւն այ յիշատակէ և զանոխակա-  
 լութիւնն, զոր եցոյց առ ազգս մարդկան մարդասէր տէրն ։

Օ ի Թէպէտ և յանցեալ բնութիւն պատուիրանազանցութիւն  
 ՚ի դրախտին, և մահու գրաւեցաւ ըստ արարչադիր հրամանին, սա-  
 կայն բարերար և քաղցր տէրն ո՛չ արար անտես զստեղծուածս ա-  
 նարատ ձեռաց իւրոց • այլ գթածաբար զմերս զգեցաւ մարմին կա-  
 մաւ հօր և հաճութիւն սուրբ հոգւոյն ։ Սակս որոյ սակ, ո՞ր գթա-  
 ցար ՚ի մեղքք մեռեալքս և կենդործեցեր վերստին, և այժմ տէր  
 բարերար գթացիս և ՚ի հոգիս հանգուցելոցն որք հաւատով յա-  
 նուսն քո ննջեցին • և ողորմեցիս նոցա ըստ մեծի ողորմութե քում,  
 որպէս և հետակայս ցուցանէ բան ։

Վերեա՛ և այց արա ՚ի փառաւոր միւսանգամ գալստեանդ քո ։  
 Փառաւոր սակ զերկորդ գալուստն • զի առաջինն խոնարհութիւն  
 էր և ծառայական կերպիւ • իսկ զմիւսն՝ հայրական փառօք հանդեր  
 ձեալէ գալ իբրև տէր և դատաւոր • վասն որոյ ներուսն խնդրէ  
 յանցանաց, և այցելութիւն ՚ի քն ննջեցելոցն ։ Սակ այց առնել՝ ըզ  
 խնամարկէն սակ և զանուանէ կոչէն • զոր և յաջորդս ցուցանէ ։

Վասաւորեա՛ պայծառացեալ ընդ սուրբս քո ։ Վ յսինքն ընդ-  
 աբրահամեանցն և ընդ պետրոսեանց գլխաւորութեանցն դասակար-  
 գեա՛ պճնադարդեալ պայծառակերպութիւն • Օ որ օրինակ Թագա-  
 ւորք երկրի ըստ արժանեաց բաշխեն զպատիւս • և կարգաւորեն  
 զդասս գլխոցն զհարիւրաւորսն և զհազարաւորսն և զըլլան ամ ։  
 Վ յայտի իմն աղաչէ բանս տակով, գասաւորեա՛ զհոգիս հանգու-  
 ցելոց մերոց ընդ երեսնաւորսն ընդ վաթսնաւորսն և ընդ հարիւրա-  
 ւորսն, շնորհելով յառատ բարեաց բարերար կամացք ։ Սմանց զեր-  
 կուց քաղաքաց ունել զելիսանութիւն, ոմանց զհնգից, և ոմանց զաս-  
 սանց • որպէս բարերար և արարչական կամքդ գատեսցեն • զոր և  
 սակ բանս ։

Օ ի դու ես տէր և արարիչ, դատաւոր կենդանեաց և մեռե-  
 լոց ։ Որո՞ այլ որ ո՛չ գոյ արարիչ բաց ՚ի քէն՝ այսպէս և ո՛չ այլ դա-  
 տաւոր ։ Օ այլ որ ո՛չ գիտեմք, որ կարող է կորուսանել և կեցուցա-  
 նել, և ըստ իւրաքանչիւր գործոց հատուցանել տիրապէս, այլ միայն  
 զմարդասէր տէրդ • որում չկր այլ ինչ փոխարէն հատուցանել, բայց  
 միայն զօրհնութիւն և զփառս ։ Պոր և զաղօթիցս բան աւարտէ  
 սակով ։

Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ • այժմ և միշտ  
 և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

## Յորդորակ :

**Ո**ւռւաւորեացուք և մեր զբարերար տէրն • զանոխակաւն և զտնյիշաչարն • զգլթածն և զմարդասէրն • զերկայնամիտն և զբազումնորմն • զնեբրօն և զքաղցրն : Որ ոչ բա մեղաց մերոց առնէ և ոչ բա անօրէնութեանց հատուցանէ • այլ ներելով միշտ և երկայնամտութիւ կոչէ յապաշխարութի : Այս յանձնէ ևս այց օրինակ ամենեցուն յառաջադէմ լինիլ հանապազ ՚ի գործս բարիս : \* Ուսարնւք յինէն ասելով զե հեղեմ և խոնարհ և անյիշաչար առ ամենեսէան :

Ս ան որոյ աղաչեմ, պատկառեացուք յօրինակէն • ամաչեացուք ՚ի գաղափարէն • զարթիցուք ՚ի թմրութենէ ծանրութեան չարին • սթաիեացուք յարբեցութենէ որ ոչ ՚ի գինւոյ • փախիցուք յօձէն կամակորէ • ատեացուք զչարն • ատեացուք զմեղս • գարշեացուք ՚ի սիրոյ աշխարհիս • փախիցուք ՚ի բելարայ • դիմեացուք առ ան սիրով և յօժարութիւ • փառաւորեացուք զնա ՚ի գործս բարիս • զե \* Չփառաւորիչս իմ ասէ փառաւոր արարից • և որ սիրէն զես՝ սիրեացի ՚ի հօրէ իմմէ : Այս զիւրն ևս խոստանայ զեք և զերեւումն որ ՚ի վերէ քան զարժան և զիար մեր : Յաղագս որոյ ասէ մարգարէն խոտորելոցն յայսպիսի ամէնարժեաց պիտակն սիրոյ և հարելոցն ՚ի սէր աշխարհիս : \* Ո՛րդիք մարդկան մինչև յերբ էք խոստասիրտք • ընդէք սիրէք զնանրութի և խնդրէք զստութիւն :

Ս ան զե ան որ իւրում ուռկանի զօհէ և զիւրն ախա աստուածացուցանէ • ամբօխելով իւրաքանչիւր որ ՚ի կամ մտաց իւրոց : Ոմն զիտուաց փութայ ընդ զփափագ • ոմն զագահութե և զընչասիրութե • ոմն զարբեցութե և զսրտանկութե • ոմն զվաշխոյ և զտոկոսեաց • ոմն զզրկանաց և զկաշառակրծութե • ոմն խաբէ և գողանայ : Այլ ոմն ցանկայ և ոչ հասանէ • այլ ոմն ամբօխ յորժամ ՚ի կամացն վրիպի • միւսն կրճաէ զատամունս և մորեզնի • այլ ոմն հառաչէ և յոգւոց հանէ • հաշի և մաշի և ՚ի նեղութենէն տգունի • և եղունկ զինքն ասէ և վայ անձին կարդայ : Այլ յորժամ զայս ոմնս բարւոյ իմիք դիպեալ տեսանէ • մտայ և ատէ • և ռիւրիմ մտօք միշտ հայի • զանձն միայն համարի զրիեալ ՚ի բարեաց և զամենեսէան ՚ի փառս վայելեալ : Այլ թէ նեղութեան իմիք պատահէ • կարճամտէ տարի և նեղասրտի • և նոյ թողեալ ՚ի ձեռաց զինքն կարդայ :

Այլ վայ է ինձ և եղունկ եմ ես • զե անձամբ զանձին կիրս դրեցի • և անձամբ զանձն իմ դատապարտեցի • և զոր բանիւ զայս

պախարակեցի, գործով զնոյն ես կատարեցի. և այժմ՝ ՚ի գրի արձանացուցանելով ՚ի կորուստ և ՚ի դատապարտութիւն անձին: Այլ ազախեմ զամենեւեան և ժտելով հայցեմ յամենեցունց, դարձցուք առ տէր սրաի մտօք. և խնդրեսցուք զողորմութիւն ՚ի բարերար տեսունէ մերմէ ՚ի դէպ ժամանակի:

Չէ պարտ ումեք յուսահատ լինել վասն բազմութեան մեղաց կամ հեղգանալ յապաշխարութենէ. զի քաղցր և ողորմած է տէր նա՛մ մեր: Ա՛խայն մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է՝ դիմեսցուք առ նա զղմամբ և արտասուօք, խոստովանելով զմեզս և աղաչելով զերեսս նորա հանապազ: Օ՛ի \*Յորժամ հեծեճեսցես՝ յայնժամ կեցեսս ստէ մարգարէն: Այլ առարեալն ստէ, \*Այս է ժամանակ ընդունելի. այս է օր փրկութեան: Ա՛խնչդեռ ժամանակս ՚ի ձեռս է և ՚ի շնորհաց աթոռն է թագաւորն և բաշխէ իւրաբանչիւրոց զպէտա որք խնդրեն հաւատով և յուսով: Օ՛ի յետ աստեացս վճարելոյ՝ միայն դատաստան է և քննութիւն ճշդիւ՝ և հատուցումն գործոց. և որք աստի անզեղջ և անապաշխար գնան առանց խոստովանութե, անզ ո՛չ է թողութիւն թէ և բազում անգամ լան և հառաչեն: Այլ յայտ ՚ի յիմար կուսանացն է և ՚ի մեծատանն կրից. զի խնդրեցին և ո՛չ առին: Ա՛սան որոյ փութասցուք յաջակողմեան դատուն հանդիպիլ, և ընդ նոսին գոհանալով փառաւորել զՏայր և զըրդի և զուրբ հոգին. այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երեկոյն ժամուն, որ կատարի ՚ի դէմն որդւոյն նոյ: Եւ ասի՝ Ես առ նա՛մ կարդացի, և այն որ ՚ի կարգին:

Երանելոյն Խոսրովու՝ վասն երեկոյն ժամուն:

Սախարան զերեկոյնն պաշտամանն զքարոզս և զաղօթս մեկնել՝ կարեւոր համարիմ զոր ասելոցս եմ: Այս յայ կրթեալ և զօրութիւնն որ ՚ի նմանէ և խնաստութեամբն ՚ի գործ կամ ՚ի ճանապարհս կամ ՚ի զըօսանս ինչ զօրն կատարեալ, ՚ի նմանէ կերակրեալ և ՚ի նմանէ արբեալ և նովմբ պահպանեալ, զեանդ է զի առ նորա փառաբանութիւն պղերգանան բազումբ, և ո՛չ գայցեն երկիրպագանել և փոռս տալ բարերարութեանն նոյ: Ա՛ մարդոց սակաւ

ինչ երախտիս գտեալ՝ Եթէ ոչ յորով շնորհակալութիս հատուցանեմք, ամարդի գտանիմք: և զպարգևատուն ցատուցանեմք. և զառաջիկայսն արգելումք զառի նմանէ բարբերարութիս: **Վ**րա անձ ո՞րքան բարկանայցէ ՚ի վերայ այնոցիկ՝ որ ՚ի նորա բարիսն վայելեացեն և անշնորհակալ լինիցին:

**Ս**անաւանդ զի և բազում և զանազան մեղօք զպարգևատուն ցատուցանեմք. և չար ընդ բարւոյ հատուցանեմք. զհարդ ոչ փութայցեմք հաշտեցուցանել զնա նախքան զգիշերին ՚ի վերայ հասանիլն: **Ե**թէ ընդ ընկերին բարկութեան հրաման առար յառաքելոցն չառարեգականն մտանել, քանի՞օն է հաշտ առնել զանձ՝ փութալ նախքան ՚ի բաց գնալ նորա ՚ի լուսոյ: **Լ**ու կամ վասն էր իսկ եղաք բանաւորք և մտաւորք և զարարածս նոյ ծառայեցուցանեմք. մե թէ զի ուտիցեմք և ըմպիցեմք և ցանկութեամբք մարմնոյ վարիցիմք: **Լ**ու վասն այսորիկ զհարդ աւելի պատուիցիմք քան զանասունս. զի այս և նոցա ևս է: **Ս**պարէն զի զանձ ճանաչիցեմք և նմա ծառայիցեմք և նորա փառաբանիչք լինիցիմք, վն այնորիկ անի տիրեմք:

**Ե**րկինք Էրկիր՝ ծով և անձ որ ՚ի նոսա՝ վասն մարդկան եղեն և մարդկան պիտոյցի վասն. և մարդս՝ նոյ վն ամենեցուն պարտական: **Լ**ու չառնէ ինչ փոյթ՝ սակաւ մասն յառուրն ՚ի նորա անցուցանել ծառայութիւն. և զհարդ ակն ունիմք զաստիս վայելել և զանտիան առնուլ: **Մ**եղաւ օրն զբե խաղաղութիւն. կերար. արբեր. վաստակեցեր. ՚ի հանգիստ գիշերոյն մերձեցար: **Վ**րադիկ ամենեքեան ոչ սպարէն ՚ի խնամոց ՚ի գթութեանցն նոյ պարգևեցան քեզ:

**Վ**րդ՝ Էկ ՚ի միտս քո ով մարդ. և առ այն յորմէ զանձ բարիսն քո գտանես՝ Ժամանեա՛ հանապազ. մանաւանդ յիսկզբան առուրն և ՚ի կատարածի գոհացիր զպարգևատուէն: **Ե**թէ յանցեար ինչ՝ նմա խոստովան լէր. առաջի անկիր. աղերսեա՛. հաշտ արա ընդ քեզ. և մի՛ տար գիտել թշնամոցն թէ ՚ի խոռովութե է ընդ քեզ պահապանն քո: **Ս**ի մի յարձակիցի ՚ի վերայ քո համարձակեալ. իբրև թէ թողեալ իցես ՚ի ձեռացն նոյ: **Լ**ու կամ թէ ոչ զբազումս ՚ի քուն կամ յարթուն սպան իսկ. և զքեզ արասցէ նոյնպէս: **Շ**նորհակալ լէր զի պահեցար. և աղաչեա՛ զի յառաջիկայսն պահիցիս:

**Օ** անքուն ակն ՚ի պահպանուել հայցեա՛, և անհոգուք ննջիցես. զամենազօր ամն վերակացու արա, և համարձակ և աներկիւղ իցես ՚ի նստիլ ՚ի տան ՚ի գնալ ՚ի ճանապարհի, ՚ի վաստակ և ՚ի հանգստեան: **Օ** բարձրեալն արա սպաւէն, և ոչ երկիցես յերկիւղէ գիշերի. և ոչ ՚ի նետէ որ թուչի ՚ի տուէ: **Օ** արարչական ամն ՚ի ձեռին օգնական առցես, և զանձ զոր ինչ առնիցես յարդեացի քեզ. և ընդ ամենայնի գոհացիր զնոյ: **Յ**այն սակա և հարբն մեր կարգեցին յա-

աւառասն և յերեկոյս ժողովիլ և Դի միասին միաբան զաղօթս և զգոհ-  
 Տութիս առ անձ մատուցանել, միմեանց օգնական լինել և նպաստա-  
 մատոյց առ անձ : **Օ** ի իրերօք զօրաւորք լինուք և թէ և յանձանց  
 անհամարձակք և տկարք իցեմք :

Երանելոյն Յովհաննու օճնեցւոյ :

**Ի**սկ յերեկոյին միայրուածեան աղօթելն՝ գոհուածի է . վասն  
 զի տիւն կատարելով ժամօքն լցեալ ըստ ժամուց և նաև  
 պաճարիցն հասեալ ՚ի խոնարհ լուսոյն մեծի և աւելի փոյթ ունին ՚ի  
 լուծիւն որովայնին յաղագս պահասուածեան գիշերոյն : **Ո** սան որոյ  
 վաստիան գիշերոյն զմտաւ ամեալ աղօթէ եկեղեցի ըստ մարգարէին  
 ստելով . \* Ես առ անձ կարդացի և լուաւ ինձ : ՚ի մի ժամանակի  
 ստէ կարդացի՝ և յերեսին լուաւ ինձ . յերեկոյս՝ յայսմ՝ աշխարհի ,  
 զի կարճեալ է օրս . ՚ի վաղորդեան՝ ՚ի յարուածեանն . ՚ի հասարակ  
 աւուրս՝ յորժամ դասաստանն դնի անստուեր լուսով երրորդու-  
 թեանն , և սաստկանայ տասն յանցաւորաց : **Օ** որոյ զօրինակն աստ  
 կարգեցին աղօթք ՚ի դէպ ՚ի սկիզբն աւուրն , և ճաշք պատարագին  
 ՚ի հասարակն երթոյ երբ օրինօք լինի . և ՚ի կատարմանն հայցել բա-  
 րիս , և ապա գոհանալ զանցելոյն : **Ի**սկ մերոցս մտաց կերտիւր՝  
 լուծիւնն է իմանալի առաքինութե զոր կատարեմք աղօթիւք ՚ի  
 սկսմանն աւուր , ՚ի մէջօրէի , և ընդ երեկոյս . յերիս հատածս կենաց  
 մերոց ըստ չրջաբերութեան ամանակաց :

**Օ** կնի համառօտ սկսմանս՝ և ութսներորդ հինգերորդ սաղ-  
 մոսն կանոնեալ է խորհրդաբար . խոնարհեցն ան զուսկն քո և լուր :  
**Ո**րայ կնոջն յանցաւորի ծնունդ՝ հիւանդ գոյով բնութիս ՚ի թու-  
 նաւոր օճին խածմանէ , աղօթեալ աղերսեմք զբնութեանս մեր կազ-  
 միչն : Յաւուր նեղութեան կարդացի . և մեծ եղև ողորմութի բո .  
 անօրէնք յարեան ՚ի վերայ իմ դէք . և կեցն զօրդի աղախնոյ քոյ  
 զկայի . և արն առ մեզ նշան բարի զգրոշմն նշանի քոյ . զոր տեսցէ  
 առեւին չար և պատկառեալ ՚ի զօրութեանն անպարտելոյ , զամօթն  
 յաւիտենից զգեցցի . իսկ ես օգնեալ ՚ի քէն տէր մխիթարեցոյց  
 յաւիտեան :

**Ի**սկ ճիթ սաղմոսն ՚ի դէմն նախահօրն աղօթէ . **Ա**յլրեցն զիս  
 տէր . և զբազում վտանգից արարեալ յիշատակ : **Բ** և ճիթ սաղմոսն .  
 Տէր կարդացի առ քեզ , և հայցէ պատարագ երեկոյի զճամբարձումն  
 ձեռացն լինիլ , և խունի ընդուսնելի զաղօթսն : **Ճ** իշէլ զճամբար-

նալ ձեռացն տեառն և ՚ի հօրէ խնդրել զթողութի խաչահանուացն զոր պարտիմք առնել և մեք : ՚Կ ղնել պահապան բերանոյ և դուռն ամուր շրթանց , և ոչ խտորիլ սրտիւ ՚ի բանս չարս :

Եւ ապա ճիւղ սաղմոսն . Չայնիւ խնով ես առ տէր կարգացի . և հէղում առաջն տեառն զազօթս ՚ի նուազիլ հոգւոյն պարգևաց . յերևելի և յաներևոյթ թշնամեաց կեցո՛ . հան ՚ի բանտէ զանձն իմ , զհոգիս ՚ի չարաց , և սպասել արդարոցն հատուցման : Երբիւք սաղմոսիւք հայցէ եկեղեցի յերկց մեռութեանցն զփրկիլն :

Յարգա օրհնութեան ճարագան ,

Օրհնեալ էս տէր բնակեալդ ՚ի բարձունս , և օրհնեալ են փառք մեծութեան քոյ . որ հաստատեցեր զլուսաւորս ՚ի բարձունս , յերկնից լոյս ծագեցեր ընդ ամ՛ տիեզերս :

Ոմանք յովհաննու մկրտչի ստեն ասացեալ զազօթս և յոյժ ստեն . և այլք ոմանք պնդին թէ ոչ է նորա , և ճշմարիտ ստեն , զի ոչ ունի զնմանութի : Եւ թէ յովհաննու մանդակունւոյ է որոյ և այլ ազօթքն և քարոզքն , և թէ այլ ումեք , չէ՛ յայտ : Եւ փոսն այսորիկ չէ՛ պարտ ՚ի տարակոյս անկանիլ . այլ մեք զտեսութի բանիս առաջն արկեալ քննեսցուք :

Օրհնեալ տէր բնակեալդ ՚ի բարձունս : Եւ սուրբ երրորդութիւնն է բանք մաղթանացս և յօրհնութենէ առնէ զսկիզբն . զի օրինակ ՚ի տեսառնէ ունիմք ՚ի վերայ մեծամեծ բարեաց գոհանալ զոյ . որոյ յորժամ ասէր , \*Գոհանամ զքէն հայր : Եւ առաքեալն պատուիրէ , \*Գոհացողք լերուք զոյ և զհօրէ նովաւ : Եւ ինչ ոչ ունի բնութիս արիտուր մատուցանելոյ . այլ միայն զօրհնութիւն և զգոհութի և զփառս . որպէս ասէ ,

Օրհնեալ տէր բնակեալդ ՚ի բարձունս : Օրհնեալն քննեալ եմք յայլում վայրի զի յայտնեալ է . իսկ բնակեալ ՚ի բարձունս ասէ , զի զմեզ ՚ի յերկրայնոցս ՚ի բաց տարեալ առ ամ՛ վերացուսցէ ՚ի ժամ ազօթիցն . որոյ այն զի ասէ , \* Հայր մեր որ յերկինսդ ես : Օի ոչ է թէ միայն յերկինս փակէ զամ՛ , զի յամ՛ տեղիս է տէրութիւն նորա . այլ որոյ ասացաւ , զմեր միտս կտաի ամբառնալ առ ամ՛ սաղթիւքս :

Եւ օրհնեալ են փառք մեծութեան քո : \*Մեծ է տէր մեր և մեծ է զօրութիւն նորա ըստ մարգարէին : Եւ փառք մեծութեան բարերարութիւն է և նախախնամութիւնն , որ ՚ի ձեռն զօրութեան

Իւրոյ ներգործի սքանչելապէս ՚ի տէրու թէնէ իւրմէ առ արարածս  
Իւր . զոր օրհնէ ազօթիցս բան ըստ թելադրութեան մարգարէին  
զոր յառաջագոյն նախաձայնեալ ասէր , \* Օրհնեալ են փառք ան ՚ի  
տեղւոջէ իւրմէ : Աւ այսու՝ հրեշտակահանացն նմանիմք դասուց ,  
որք միշտ յօրհնութիւն հանդիսանան փառացն ան :

Ար արարէր զլուսաւորս ՚ի բարձունս : Օ հրեշտակական դա-  
սակարգութիւն հրանիւթ բնութի արարչագործեալ , և լուսեղէն  
կազմեալ , որք երկրորդ լոյսք յարարչականդ լուսոյ գոյացան , ՚ի պէտս  
խմանալի աշխարհիդ առ կայացեալք :

Յերկնից լոյս ծագեցեր ընդ ամ տիեզերս : Օ Երկց աւուրցն  
սփիւռ և տարած լոյսն ասէ . որ նախ քան զգոյանալ լուսաւորացդ  
տարածեցաւ ՚ի վերայ երկրի ընդ առաւօտս , և ընդ երեկս ՚ի տեղի  
Իւր հաւաքէր ըստ հրամանի արարչին :

Րարբեր զարեգակն լուսատու տունջեան , զլուսին և զաստեղս  
լուսատու գիշերոյ և զլոյս ճրագի : Որպէս արարիչ և մարդասէր՝  
ամենայնի խնամարկեալ . ոչ միայն զտիւն մեծագոյն լուսոյն արեգա-  
կան զարդարեալ առ ՚ի զբօսանս մարդկան և ՚ի պէտս գործոյ , այլ և  
զգիշեր լուսնիւ և աստեղօք պայծառացուցեալ . զի և յայնմ ևս  
վայելեցեն մարդիկ . և ծանկեցեն զարարչն մեծաքանչ զօրութիւնն :  
Աւ զի ՚ի յարկս և ՚ի բնակութիւն լուսինն և աստեղք ոչ բաւակա-  
նապէս ներգործեն լուսոյն իւրեանց որպէս զարեգակն , և զայն ևս  
ոչ սրար անտես մարդասէրն տէր : Այլ և զլոյս ճրագի պարզեւեաց  
՚ի պէտս այնորիկ , որով բազում լինի արդիւնարարութիւն յերկրա-  
սէրսն և ՚ի վաստակաւորսն : Աւ որպէս զգալի լուսով զգայարանս  
զուարճացոյց արարչին անձ , այսպէս և ՚ի ձեռն բանական լուսոյ զե-  
մանալի հոգիս մեր պայծառապէս զարդարեաց ՚ի գովեստ փա-  
ռաց իւրոց :

Ղու էս լոյս գովելի , սուրբ և առաջին լոյս : Օ ի լոյսք ամ  
ասէ ՚ի քէն են էացեալք . և դու միայն էս անեղ և արարչական  
լոյս . որ զամ կառավարէս ըստ պատշաճ պիտոյից : Աւ գովելի ասէ ,  
վասն զի խաւար զնա ոչ փոխանակէ . և ընդ ստուերաւ երբէք ոչ  
անկանի : Իսկ սուրբ ասէն , զի նա միայն է սուրբ և ազատ ՚ի  
սխալանաց , որ ոչ երբէք ընդ կարեօք անկանի , կամ ընդ հնազան-  
դութեամբ նուաճի :

Օ ի թէ հրեշտակականն լոյս որ երկրորդք կոչն յետ առաջին  
լուսոյն՝ ընդ սխալանօք անկան ոմանք ՚ի նոցանէ և ընդ մեղօք գրա-  
ւեցան թէպէտ և դժուարաշարժք էին ՚ի չարիս . և սկզբնահարբ  
եղէն մեղաց , գախիք չարեաց և մեղաւանդիչք՝ որպէս ասաց ոմն ՚ի

սրբոցն : Իսկ մնորդկայինս բնութիւն դիւրամէտ և շուտաստղապ , երազասխալ և հէշտապատիր գորով , միշտ ընդ մեղօք անկանի ըստ զանազան արկածից չարին : Իսկ արարչականն լոյս միայն է սուրբ յամենայնէ և գովելի և առաջին լոյս . որնք ասէ , \* Որ զամ յամի ընու առատապէս . և նախախնամէ որնք և կամի : Եւ առաջին լոյս ասէ , զի սկիզբն և կատարած ամենայնի ամ է , որ ամենեցուն զիսինն տայ և զբարեւոր գորն շնորհէ :

Պէքէն փախչի խաւարն : Օ ի հաստատիչ է լուսոյ և հալածիչ խաւարի որնք զտէր և զբարիչ , որ իշխէ հզօրեղապէս ամենայնի : Օ ի թէ զգալի և եղական լուսոյս այսորիկ շնորհէալ է զօրութի՛ն փախստաին առնել և հալածել զընդդիմակն իւր խաւար . ապա որչափ ևս առաւել ինքն որ անեղ բնութի է արարչական և իմանալի լոյսն՝ սաստկապէս ՚ի բաց հալած է զամ ընդդիմակ զօրութի խաւարի . և լուսով գիտութեան զուարճացուցանէ զամենեսեան :

Եւ զլոյս քո կենդանի տէր ծագեալ ՚ի սիրտս մեր : Օ ի այսու միայն չեմք բաւական առ ՚ի կեալ , եթէ ոչ զխաւար մեղաց և զազիտութեան՝ ողորմութի և գթութի ՚ի մէնջ ՚ի բաց հալածես . այլ զկենդանիդ տէր արդաչեմք զի և զկենդանի և զկենդանարար լոյս քո ծագեսցես ՚ի սիրտս մեր որ է բանական մտտ . զի զգալի սրտն՝ լուսոյ ազդումն ոչ պիտանանայ : Եւ կենդանի լոյս ասէ ՚ի կենդանի տեառնէն ծագեալ . զի ամ տերութի անցանէ և նորայն միայն է յաւիտենական . ըստ այնմ , \* Աստուած կայ և մնայ յաւիտեան :

Եւ ամ լոյս փոփոխի և այլայլումն կրէ և զնմանութի մեռելութեան ընդունի յինքեան . իսկ նորայն լոյս միայն է անշփոթ և անփոփոխելի բնութիւն , կենդանի և կենդանարար . որ ամենեցուն զանմահութիւն պարգևէ : Օ որ և մաղթէ բան աղօթիցս՝ զառհաւատչեայ յաւիտենական կենդանութեանն սատէն ծագել ՚ի սիրտս մեր . և մինչդեռ եմք ՚ի մարմնի՛ լուսաւորել զակն ոգւոց մերոց . որով և զյաւիտենական կենդանութիւն ժառանգեսցուք յերկրին կենդանեաց : Եւ այսմ մեծաձիր և ամենառատ պարգևաց արիտուր և փոխարէն այլ զինչ է հատուցանել ՚ի մէնջ , եթէ ոչ զոր հետակայս ցուցանէ բան յաւարաման աղօթիցս ասելով այսպէս ,

Եւ մեր միտքան սասացուք օրհնեալէ անուն սուրբ փառաց քոց : Եւ քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հօգւոյդ սրբոյ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :



Օրհնութիւն կիրակեմոսի :

**Լ**ոյս զուարթ սուրբ • փառաց անմահի հօր • երկնաւորի սրբ  
կենարարի յիսուս քրիստոս :

Մասն քան զտեսութիւն բանիս պատշաճ վարկանիմ զողբերգական  
բերել յառաջ զբան • և տարտամուտի աղգիս աւաղել, զի յանփոյ-  
թուութենէ և ՚ի բարձի թողի առնելոյ գրեթէ միշտ մնլար և ՚ի խա-  
ւարի ընթանամք որոյ և զառաջիկայս է տեսանել, զի զբան օրհնու-  
թեանց որ ՚ի սրբոցն կարգեալ է յիմ մնւտս կիրակէի երգել ոմանք  
յորժամ տօնախմբեն՝ ձայնիւ երգեն, և առանց ձայնի բնաւ ոչ  
յիշեն և այնքան մոռացօնք տիրեալ են, մինչ զի ամենեւին ոչ գիտեն  
թէ օրհնութիւն է սա յարուժեան երեկոյնի, և յիմ կիրակէի մնւտ  
պարտ է երգել զսա, կամ ձայնիւ կամ թիւ, որոյ զօրհնեալ տէր  
բնակեալն ՚ի լուր աւուրան և թէ որ ուրէք յիշէ հիանան զարմանան  
և ասեն օտարացօցիչս իմն բերես ՚ի լեւիս մեր, և նորաձեւութեան  
իրս համարին, ուր և այն զի կարգեալ է յառաջնոցն, զի յիմ կիրա-  
կէի առաւօտուն հանգստեան աւետարան ընթեռնուն, և բազումք  
՚ի գարնանային ժամանակն յորժամ ՚ի դուրս ելանեն՝ ընթեռնուն  
հանգստեան աւետարան :

Իսկ յետ խաչվերաց տօնին՝ զի այլ ՚ի դուրս ոչ ելանեն, բա-  
զումք անփոյթ առնեն, և ամենեւին այլ ոչ ընթեռնուն յաւուրս  
կիրակեցն առաւօտուն հանգստեան աւետարան • և թէ որ իշխե՛  
հակառակին և ընդ դէմ դառնան, իբր թէ բնաւ չեն տեսալ կամ  
լեալ • և այս ամ ՚ի ծուլութենէ լինի և ՚ի հեղութէ և յանփոյթ  
առնելոյ : Եւ ասն որոյ և մոռացօնք տիրեն • և զայսպիսի անկարգութի  
աղգիս մերում թէ յառաջ բերեմք՝ անզբօս ելանեմք, այլ լուութի  
պատուեսցի առ այժմ, զի զգարչելան քան յայտնել՝ ծածկելն է  
բարւոր :

Յորժամ վիճաբանելով մարտնչին ընդ այլ ազգ քրիստոնէայս,  
զանձինս արդարացօցանեն տգիտաբար՝ իբր թէ միայն հայք են ՚ի  
ճշմարտութեան և որոյ տեսանեմք՝ քան զամենեւեան մերս է ջրեալ  
կարգաւորութիւն • և որ որ այլոց ազգաց իրաւունս տացէ յիրս ինչ  
վասն ճշմարտութեան՝ ծոյգ կարդան, և թերի ՚ի հաւատս, ծանակ  
առնեն, և հալածեն, և ՚ի մահ սպառնան, մինչ՝ գրեթէ մազապուրծ-  
լեցի, այլ մեք առ այժմ դարձցուք ՚ի կարգ բանիս տեսութեան :

Արոյ ինձ թուի՛ այս օրհնութիւն յառաջ է քան զմեւս, զոր  
՚ի լուր աւուրան երգեն, զի մեծն բասիլիոս յիշեալ է ՚ի հոգւոյն  
ձառն, որ ընդ դէմ հոգեմարտիցն ասէ թէ՛ ՚ի վաղուց հետէ ունիմք

և ՚ի հնոց է սասցեալ: **Մ**է և զայս՝ **Թ**է ուժ ուժեք է սասցեալ, ոչ գիտեմք. բայց յամ կիրակեմուտս երգեմք. և զՏոգին՝ հօր և որդւոց հաւասար փառաբանեմք. զայս բարեղ ստէ: **Ե**ւ ոմանք մայր բանիս զաթանագինէս եպիսիրոպոս ստեն զեբասասացին, զև յիւրում ճառին փոքր ինչ նշանակութիւն սայ բանիս շնմարտութեան:

**Ա**յս զուարթ սուրբ. փառաց անմահի հօր, երկնաւորի սրբոց կենարարի յմ քն: **Յ**ոմանց այսպէս է սասցեալ, երկնաւորի սրբոց երանեալ յմ քն: **Օ** մի և զնոյն ունի զօրութի. զև կենարարն ըզ մշտնջենաւոր կենդանութիւն նշանակէ. և երանեալն՝ զամ բարեաց պարաութիւն, որ յատուկ աստուծոց է:

**Ա**յս զուարթ սուրբ. փառաց անմահի հօր, երկնաւորի սրբոց կենարարի յմ քն: **Ս**կիզբն բանիս սա որդի գնէ և լոյս զուարթ կոչէ, որ զանմահութիւն յայտ առնէ և զմշտնջենաւորութիւն և զլարարազուարճ լինին: **Ա** սան զև ճաճանչ է մշտնջենաւոր լուսոյն, և հայելի անարատ ամենակալին նոց հօր, և ճառագայթ փառաց և կերպարան սկզբնատպին, և հօրն երկնաւորի սահման և բան և կնիք: **Ա** սան զև զհայր ոչ գիտեաք, եթէ ոչ որդւոց էր սասցեալ \* **Ե**ս և հայր իմ մի եմք. և որ ետեսն զես՝ ետես զհայր. և հայր յես և ես ՚ի հայր:

**Ե**ւ զոր օրինակ յորժամ զհայրակարմիր նշոյս ճառագայթից արեգակնան տեսանեմք՝ զուարճանամք և ՚ի գիտութի գամք բոլորակութեան նորին. և զուարթագին մեզ թուի ՚ի տեսանելն: **Մ** յսպէս և զհօր գիտութի որդւոցն ընդունիմք, թէպէտ և տկարանայ սպացոյցս առ ՚ի բացայայտել: **Օ** ի եութի որդւոց անձնաւոր է և գոյաւոր, և բովանդակ յինքեան ունի զհօր ազգեցութի. վասն որոց և լոյս կոչէ զորդի, ըստ իւրում տեսուն բանին որ ստէ՝ \* **Ե**ս եմ լոյս աշխարհի: և թէ՝ \* **Ե**ս լոյս աշխարհի եկի: և թէ՝ \* **Գ**նացեք ընդ լոյս մինչդեռ զոյսդ ընդ ձեզ ունիք:

**Ե**ւ զուարթ և սուրբ ստէ: **Ա** սան զև ընդ ամ կիրս մարդկայինս էանց ազատ ՚ի մեղաց, ոնց ասէր համարձակ զոր այլ ոք ոչ կարէ ստել: \* **Ո**՞վ յանդիմանեաց զես վասն մեղաց: և թէ՝ \* **Գ**այ իշխան աշխարհիս այսորիկ և յես ինչ ոչ գտանէ յիւրոցն արկածից: **Ե**ւ զև մեղք են թառամեցուցիչք զուարթութեան, որոնց խորշակ տապոյ՝ բուսոց և անկոց: **Ի**սկ տէրն վասն զև ոչ արար մեղս և ոչ գտաւ նենդութի ՚ի բերան նորա, անթառամելի պահեաց ՚ի մարդեղութի իւրում զզուարթութի իւր: **Օ** այսպիսի զուարթութի ունէր և բնութիս մեր ՚ի դարխտին որքան էր յանմեղութեանն. և ՚ի յանցանելն զպատուիրանաւն՝ կորուսաք զզուարթութիւն: **Ե**ւ հրեշտակք որք կացին մնացին յիւրեանց սահմանի՝ զուարթունք կոչին. իսկ սա:

դայէլ կորոյս զըւարթուն անունն և սատանայ կոչեցաւ, որ է հա-  
կառակ: Օ ի ուր մեղք է, անդ զըւարթութի ոչ է, իսկ ուր ան-  
մեղութիւն է, միշտ զըւարթ կոչի: Եւ այս է ըստ իմում բանիս  
զըւարթն և սուրբն:

Իսկ զե ստէ, փառաց անմահի հօր: Ըրինչունակ անուն է,  
զե հայր ստէն՝ զորդի նշանակէ, և որդի՝ զհայր: Եւ զե փառաց  
և զօրութեան անուն է՝ ըստ այնմ, \* Հայր՝ փառաւորեա՞ զանուն  
քո, որ է զորդի քո: Օ ի փառք հօր կոչի որդի, որպէս և որդւոյ  
հայր: Եւ անմահի հօր ստէ, որ զարարչական և զանեղ բնութիւն  
յայտ աւնէ, զե անմահութի անեղին է տիրայէս: Օ ի հրեշտակք  
թէպէտ և անմահք կոչին, սակայն եղականք են, և վրիպիլ նոցա ՚ի  
շնորհացն նոյ՝ մահ կոչի, որն և սատանայի յետ սխալանացն անուն  
մահ կոչեցաւ. ոնք առաքեալն ստէ, \* Յետին թշնամին խափանի մահ:  
Եւ զոր օրինակ զգալի կենդանիքս թէ զտուրևառութի օգոյս ոչ  
ճաշակեն՝ մեռանին, այսպէս և իմանալիքս եթէ մի ժամ ոչ ընդու-  
նին ՚ի շնորհացն նոյ՝ մահանան:

Եւ մի քր ընդդէմ դիցէ բանիս, եթէ սատանայ մեղաւ և դեռ  
ևս կայ յանմահութե. այլ գիտել պարտ է, թէ ըստ իւրում բնու-  
թեանն մեռեալ է, զե անմարմին է բնութիւն, և անմարմին զմարմնա-  
ւորի մահ ոչ կարէ մեռանիլ: Ը յլ զե ստէ առաքեալ, \* Յանկու-  
թիւն յղացեալ զմեղս ծնանի, և մեղքն կատարեալ զմահ ծնանին:  
Եւ զոր օրինակ՝ առամ յորժամ ճաշակեաց զպտուղն՝ ՚ի մեռելոյ  
համարի էք, թէպէտ ինն հարիւր երեսուն ամ այլ ևս եկաց: Ը յս-  
պէս և սատանայ յորժամ վրիպեցաւ յիւրոցն փառացն, անկաւ ՚ի  
սահմանէ իւրմէ և մահացաւ ըստ իւրում բնութեան: Իսկ տւելն  
նորա և երկարաձգիլն՝ ըստ ներելոյն նոյ է առ ՚ի յօգուտ մեղ. ըստ  
այնմ, \* Եթէ սպանաներ զնոսա, զե մի մտասցին զժողովորդս քո:

Երկնաւորի սրբոյ կենարարի: Օ ի որ զերկինս ձգեաց որն  
խորան և իւր կոչեաց աթոռ՝ երկնաւոր ասի. ոչ որպէս հրեշտակք  
ասին երկնաւորք, այլ որն տէր ամենայնի, ըստ այնմ, \* Սուրբ է նոր  
ամ մեր, որ ՚ի բարձունս բնակեալ է: Արն ստէ, Երկնաւորի սրբոյ  
կենարարի: Ար հայր է փառաց և զանմահութի սեպհական ունի  
յինքեան՝ երկնային և սուրբ է և կենդանարար. ըստ այնմ, \* Սուրբք  
եղերուք զե էս սուրբ էմ տէր ամ ձեր: Եւ որ կենալ է՝ կենաց  
բաշխօղ է: \* Արն հայր ունի կեանս յանձին ստէ, ի յանուութի էտ  
և որդւոյ ունեւ կեանս յանձին: Եւ ՚ի ձեռն նորա ամ հաւատացե-  
լոց, զե որն որ ՚ի մահ մերձեանայ՝ մահու լինի ընդունակ, այսպէս  
և որ ՚ի կենալ հպի՝ կեանս կրէ յինքեան: Իսկ յս քս ստէն, փրո-  
կիլ և օժեալ լսի ըստ եբրայականին:

Այլեւալքս ՚ի մտանել արեգականն՝ տեսար զլոյսդ երեկոյիս :  
 Ս ան զի ՚ի յարութեան երեկոյիս ժողովեալ միաբան առ ՚ի տօնա-  
 խմբէլ զօր փառաւոր և կենսակիր յարութեան քո , տեսար զլոյսդ-  
 իմանալն , յերեկոյիս ժամու ազգումն ընկալեալ ՚ի սքանչելարար  
 շնորհաց քոց : **Լ** յերեկոյացեալ դարուս մարմնատիկ անօրէնու-  
 թեան քո շնորհ ծագեալ ՚ի նսեմացեալ ակն ոգւոց մերոց , ծանեար  
 զլոյսդ իմանալի : **Ո**ր յերեկոյացեալ ժամուս ծագեցաւ մեզ յարու-  
 թեան քո սուրբ ճառագայթ . վասն որոյ զտրիտունն հետակոյ բանս  
 ցուցանէ , որպէս ասէ ,

**Օ**րհնեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին նոյ . և ամենեքեան  
 ստեմք ամէն : **Ք**անզի կամաւ հօր և հաճութե սուրբ հոգւոյն եղև  
 մարմնատիկ անօրէնութի՛ն որդւոյ . վասն որոյ զերիս անձինսն յիշէ և  
 միով տէրութեամբ փառաւորէ ասելով , **Օ**րհնեմք զհայր եբբ ըզ  
 տառաճառ որդւոյ ծննդեամբ : **Ե**ւ զորդի ծնեալ ՚ի հօրէ բնութե-  
 նակից և հօր հաւասար . և զհոգին բղխումն ՚ի հօրէ : **Ս** ան զի  
 յերեսին մի է անութի՛ն և երեքեանն մի՛ յորս անութի՛ն ըստ մե-  
 ծին ստուածաբանի :

**Ե**ւ ամենեքեան ստեմք ամէն : **Թ**ե երկուց և երկց վկայութի  
 հաստատուն է ըստ օրինացն , ապա ո՞րչափ ևս առաւել յորժամ  
 բամեալքս ան ՚ի միասին ամէն ասելով վկայեմք : **Ե**ւ զամէնդ՝ եղիցի  
 ասացին որբ բնեցիկնն , կամ ճշմարիտ , կամ ստոյգ , կամ է :

**Ե**րժանաւորեա՛ս զմեզ յամժամ օրհնել ճայնիւ երգով զա-  
 նուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ : **Ս**ե՛ծ հոգ յանձին  
 պարտ է բերել զի արժանի լինիցիմք անուանն նոյ օրհնաբանիչք  
 գտանիլ : **Օ** ի թէ նախ սրբիլ պարտ է , և ապա ՚ի սուրբս մերձե-  
 նալ . ապա ո՞րչափ ևս առաւել յորժամ առ անձ որ հպի , որ սրբու-  
 թիւն է սրբոց : **Օ** ի թէ այլ ինչ ոչ գոյր փոխարէն հատուցումն ,  
 այն բաւական է զի անուանն նոյ օրհնաբանի գտանիմք : **Ե**ւ փա-  
 ռաց անուն ասէ , զի բնութեան անունն ոչ գիտեմք նոյ . բայց միայն  
 ՚ի միոյն զոր առ մովսէս ասաց , \* Ես եմ անձ որ էն : **Ի**սկ դրական  
 անուանցն ոչ գոյ բաւ . վասն զի կոչի տէր և անձ , արարիչ , թագա-  
 ւոր , լոյս , բարի , գթած , մարդասէր , հօր . և այլս բաղումն , որոց  
 ոչ է թիւ :

**Ե**ւ զի օրհնել ասէ զանուն փառաց ամենասուրբ երրորդու-  
 թեանն : **Օ**րհնելն և գովելն և փառաւորելն , դոհանալն , բարձր  
 առնելն , և շնորհ ունելն , և մեծացուցանելն , և այլ սոյնպիսիքս զմե  
 և զնոյն ունին դիտաւորութիւն , զի փոխարէնք են ՚ի մէջ երախ-

տեացն նոյ : Աւ չիբ այլ ինչ ՚ի մէնջ՝ որ այնքան ուրախ առնէ զի՞նձ , որո՞ օրհնութիւն և գոհնութիւն և փառաբանութիւնն և նմանք սոցին :

Ս՛անաւանդ յորժամ ՚ի նեղութիւնս և ՚ի վիշտս գոհացի որ . կամ յորժամ ՚ի զուր դատապարտի որ . կամ յորժամ փոխանակ բարւոյ չար ընդունի և գոհանայ : Ա՛ յորթիկ առաւել ուրախ առնեն զի՞նձ . քան զայլ ամ բարեգործութիւս . և թէ և աղօթս և սառնիցէ ՚ի վերայ նեղչացն , յայտնապէս նման լինի որդւոյն նոյ : Աւ զի մեծագոյն ընծայ է օրհնութիւն , հանապազ զոյս մատուցանեմք նոյ . որովք համարձակութիւն առնումք ՚ի մեռտս սրբութեանցն և յանդիման լինելոյ երեսացն նոյ : Աւ զերիս անձինսն յիշէ ասելով ,

Ա՛րժանաւորեա՛ յիմժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ : Օ՛ի յիմժամ ունիմք հրամանն ՚ի տեառնէ աղօթել . զի թէ այլոց բարեգործութեանց չափ կայ և սահման , ապա աղօթից ոչ եղաւ սահման , այլ միշտ աղօթել . որո՞չ հնոցն խորայէլի սակր ամ . \* խօսեացիս սորօք ՚ի նստիլ ՚ի տանն ՚ի գնալ ՚ի ճանապարհի ՚ի ննջել և ՚ի յառնել : Աւ ՚ի նորունս տէրն , \* Արթուն կացէք և յիմժամ աղօթս արարէք : Աւ ոչ որ կարէ ընդդիմանալ . զի հրաման է տէրունական՝ թէ ՚ի հինն և թէ ՚ի նորս յիմժամ աղօթել : Աւ որք յարթնութեան միշտ յաղօթս խոկան , ՚ի ննջելն ՚ի նոցն դեգերին . նաև ՚ի ճաշակելն և սաղօթեն :

Որո՞չ գրեալ է թէ՛ ոմն ՚ի հարանցն յորժամ ճաշակէր ՚ի սեղանն ընդ եղբարսն զմարմնաւոր կերակուրն , զմի ձեռն յերկինս ամբ բառնայր և աղօթէր , և ձայնիւ երգով օրհնէր զի՞նձ յաղօթան : Օ՛ որ ոչ է հնար յիմժամ ամ ումեք ձայնիւ աղօթել . այլ ձայնիւ իմն ինձ զհաճոյական աղօթան , որո՞չ մոխիսին որ ոչ բարբառէր . և ամ ասէր , \* Չի՞ գոչես առ իս : Այնպէս և եղիային . որ զգլուխն ՚ի մէջ ծնկացն խոնարհեցուցեալ զերից ամաց պատրումն երկրի զովացուցանէր և բարբառ ոչ լինէր լսելի : Ասև հրեշտակք իմանալի գորով բնութիւն , զգալի ձայնիւ ոչ երբէք հանդիսանան յօրհնութիւնն նոյ . և մեք թէ աստ ՚ի հաճոյան նոյ պարապիմք , յերկրին կենդանեաց նոցին լինիմք ձայնակիցք իմանալի ձայնիւ օրհնել զի՞նձ : Աւ այս վասն յիմժամ օրհնելոյ զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանն : Աւ զի՛ երեքն կատարեալ է , ունելով սկիզբն՝ մէջ՝ և աւարտ . վասն որոյ երեք և մի ասի և երեք : Օ՛ի աւելին ՚ի բազմաստուածութիւնս ցնդի , և պակասն թերի գատնի . իսկ երեքն կատարեալ է որպէս ասացաւ . որ վայելէ ՚ի կատարումն ամենեցուն կատարունութեանն :

Ա՛րժանաւորեա՛ ասէ զմեզ յիմժամ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութե՛ , որ սոյ զկենդանութի՛ն ,

վանն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ : Սիշտ և յարածամ պարտիւնք կանխել առ անձ անձ յօժարութիւն , զի մի ապերախտ գտանիցիմք ունի ճիւղն իսրայել , որոց ասէր անձ մարդարեւն , \* ճանեաւ եզն զտապիչ իւր , և էշ զմուր տեառն իւրոյ , և իսրայել զիս ոչ ծանեաւ : Բայց յայնժամ մտերիմ ծառայք երևեսցուք նոյ , յորժամ միշտ զսիրովն նոյ գայցեմք և առ նա միշտ փափազանօք դիմիցեմք , և առաջն նորա հանապազ անկանիցիմք , և զերեսս նորա միշտ արտասուօք աղաչեսցուք : Յայնժամ անհնար է թէ ոչ առնուցումք ըզխնդրուածս , որ ըստ կամաց նորա լինի . զի քան զանձ հայր զթածէ , և քան զանձ մայր գորովագութ : \* Եւ զկամն երկիւղածաց իւրոց տունէ տէր . աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսս :

Որ տայ ասէ կենդանութիւն : Թեպէտ և անձ գոյիցս կեանս շնորհէ . ոմանց զգոն , և ոմանց զգոն և զբարւոք գոն : Բայց ևս առաւել մարդկայինս աղօթի յետ իմանալեացն դատուց , ըստ կրկնակի բնութեանս մերոյ կրկին շնորհէ և զկենդանութիւն : Վանդի որպէս տայ անասնոց կերակուր և զտուրեառութիւն օդոյ և ձագուց ագուսուց և անձ կենդանեաց : Թեպէտ և ոմանք առանց օդոյս աուրեառութեան կեան ըստ սահմանելոյն նոյ , որն աղօ մեղուացդ , և նմանք նոցին՝ որն ասեն . և զմարմնաւոր պէտս մարդկան որն զայլ կենդանեաց տնօրինէ : Բայց վասն բանականիս ոգւոյ յայտնապէս հրամայէ անձն , \* Ոչ եթէ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ան բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ նոյ : Եւ արդ՝ որն զգալի կերակրովք մարմնոյ տայ կենդանութիւն անձ կենդանին յախտենից , այսպէս և իմանալի հոգւոյս շնորհէ զկենդանութիւն հին և նոր կտակարանօք և անձ պատուիրանօք իւրովք :


Սասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ : Բաշխարհ է որ յերկնէ և յերկրէ և որ ՚ի միջի սոցին կան , որն յառաջնոցն ասացաւ : Եւ վերին աշխարհ կոչի երկինք և երկնից երկինք , ընդ որով և հաստատութիւն , զոր հինգերորդ տարր ասացին արտաբերքն արտաքոյ չորիցս այսոցիկ : Եւ բնակիչք վերին աշխարհին յայտ է զի սնդաղար կան ՚ի փառաբանութիւն , և երբէք հանդիստ ոչ առնուն : Օր օրինակ զգալիքս եթէ դոյզն ինչ ժամ զօդոյս տուրեառութիւն ոչ ճաշակեն՝ մահանան . սոյնպէս և իմանալիքն թէ փոքր ինչ ժամ դաղարին ՚ի փառաբանութենէն , ոչ կարեն կեալ ըստ իւրեանցն սահմանի :

Իսկ երկինքն՝ մեծութիւն իւրով և խորանարդ գմբեթան և բոլորակութեանն մատուցանէ փառս նոյ . և միշտ հիւ գալովն որն ասեն՝ պատմէ զմեծութիւն արարչին : Իսկ արեգակն և լուսին և

աստեղք՝ ՚ի հնազանդիւն հրամանի տրարչին և յանայթար լինիլն ՚ի գնալն և յիջ դադարիլն պայծառ ճառագայթիւք և անարօտ նշու-  
 լիւք լուսոյն՝ փառաւորեն զամօ : Իսկ օդդ՝ լայնատարած և գիւ-  
 րնկալ բնութեամբն և զամենեսեան պարունակելոյն և գիւրափո-  
 փոխ լինելոյն՝ տայ փառս նոյ : Իսկ երկիր՝ հաստատութեամբն և  
 սեղմ և սերտ և խիտ և կուռ լինելոյն և ՚ի վերայ ոչնչի կալոյն և  
 մայր և դայեակ ամենայնի լինելոյն՝ գտանի փառաբանիչ ամենա-  
 սուրբ երրորդութեանն :

Իսկ բոցսք և տունկք՝ ՚ի բուսանիլն և յաճիլն ՚ի գոյնս զանա-  
 դանս ՚ի համն և ՚ի հոտս , և ՚ի նիւթ բժշկութեան լինիլն՝ փառս տան  
 նոյ : Իսկ քարինք և երկաթ՝ ՚ի կարծրութի և յամրութի իւրեանց  
 և ՚ի ծննդականութի հրօտայլութեան , և ոսկի հրատես գունովն , և  
 արծաթ լուսափայլութեամբն , և անագ և կապոր ըստ իւրեանց  
 մեղադուռութիւն՝ գտանի փառաբանիչք նոյ : Իսկ ծով՝ լայնանիստ  
 և մեծատարած բորբոսկութեամբն և պարփակութիւն , և կայան կի-  
 տոց և ընդունակ ուղիցի լինելոյն , և ամ ջուրք գետոց և աղբերաց  
 ՚ի գնացս իւրեանց և ՚ի զովացուցանելն և ՚ի սոուցանելն զամ ինչ ,  
 այլ և անոց որոտմունք՝ անձրեք և փայլատակմունք և նմանք սոցին  
 ամենեքեան ըստ իւրեանցն եղանակի փառաւորեն զամօ : Իսկ կէտք  
 և կայտառք որ ՚ի ջուրս , լողակք և թռչունք որ յօդս , գազանք և  
 անասունք , սողունք և ամ շարժունք , ՚ի շրջիլն իւրեանց և ՚ի կալն ,  
 ըստ ձայնից և ըստ լուութեան ՚ի բնութիւնս իւրեանց փառաւորեն  
 միշտ զաստուած :

Իւր զխնրդ ես տոռապեալս և տկարս զմեծագոյն արարչագոր-  
 ծութիւն հզօրին նոյ թուեցից . վասն որոյ յաղթեցայ և զպարտութի  
 խոստովանիմ . զի անգիտացայ զչափ անձին , և ՚ի վեր քան զարժան և  
 զկար իմ ձեռնամուսն եղէ : Բ. 11 ՚ի վերայ ամենայնի՝ մարդս միայն  
 գտաւ պատկերաւ պատուեալ , բանիւ զարդարեալ , թագաւոր ՚ի  
 վերայ ամենայնի՝ և ընդ թագաւորութե՞ վերնոյն նոյ : Ասան որոյ  
 պարտի ըստ առաւելութեան շնորհացն և առատաձիր պարգևացն  
 բերան լինիլ ամ արարածոցս՝ և ընդ ամ գոյիցս փառս մատուցա-  
 նել մեծագործ արարչին : Արն յաւաջելով մեծն դաւիթ և երեք  
 մանկունքն թելադիր լինին . և ոմն ՚ի սրբոցն սահման սովորակի յան-  
 ձին կարգեալ՝ միշտ երգէր առ ամօ , փառք քեզ ամ յաղագս ամի :  
 Բ. 11 ինքն վասն ամ գոյիցս բարերարելոյ արժանի ես փառաւորելոյ՝  
 փառաւորեալ տէր յաւիտեանս , ամէն :



**Փ**առաւորեացիւք և մէք զի՛մք . մի՛ միայն բանիւ և եթ , այլ և ՚ի խորհուրդս և ՚ի գործս : \* Ձի՛ ի՛մք փառաւորեալէ ստէ մարգարէն ՚ի խորհուրդս սրբոց իւրոց : Աշ ւտէրն հրամայէ , \* Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեացեն զՏայր ձեր որ յերկինս է :

Աշ արդ՝ փառաւորեացի՛ք բերան զի՛մք յերգս օրհնութեան , և ՚ի ձայն սաղմոսաց և ՚ի պատմել զմեծամեծս աստուծոյ :

Փառաւորեացի՛ք և ունին ՚ի լսել պատուիրանացն ՚ից , և ունին գիր լինել խնդրողաց , որք հայցիցեն զպէտս կարօտութեան :

Փառաւորեացի՛ք և ակն , նայելով ՚ի մեծասքանչ զարմանալիս արարչին , և ակնարկելով յաղքատս և ՚ի անանկս :

Փառաւորեացի՛ք և հոտոտելիք յընդունել զհոտ անուշութեան իմանալի և զգալի աստուածային պարգևացն :

Փառաւորեացի՛ք և ձեռն համբառնալով առ ՚ի՛ր սրբութի՛ք իբր զպատարագ երեկոյի , և կարկառելով յորդրմութի՛ն առ աղքատս և անանկս , և ժրանալով յարաժամ ՚ի գործ արդար վաստակոյ . զի բաւական իցէ աւլ ում պիտոյ իցէ :

Փառաւորեացի՛ք և ոտն ընթանալով յաղօթս և ՚ի գործս , ՚ի խոստովանութի՛ն և յապաշխարանս , ՚ի տես հիւանդաց և ՚ի միսիթարութիւն բանտարգելոց , ՚ի բարեխօսութի՛ն զրկելոց և յօգնականութիւն զրուելոց և նեղելոց :

Փառաւորեացի՛ք և սիրան՝ սրբութեան լինելով շտեմարան և տեղի արդար խորհրդոց ՚ի սիրտ սուրբ և յոգի ուղիղ նորոգիլ :

Փառաւորեացի՛ք և որովայն իբր զշէղջ ցորենոց լցեալ ՚իմբարի աբգասիւք , և զարդարեալ պարկեշտութի՛ք և մաքրութեամբ :

Փառաւորեացի՛ք և հոգին բանական և միտքն իմանալի յօրհնս տեառն խորհելով հանապազ , և յաղքատս և ՚ի անանկս և յիմ հաւատուցանել ՚ից զիսուռն պաշտօն և զմտաւոր աղօթս , ողջակէզ բանաւոր և զոհ փրկութեան և պատարագ հաճոցական , միշտ զանձն ընծայել ՚ից ամենայն լըութեամբ :

Սի՛ն թողոցիք մասն ինչ արտաբոյ սրբութեան սեղանոցն , և մի՛ բաժին բեղխարայ . մի՛ գողացի գողն դարանամուտ , և մի՛ ինչ յախշտակեացէ գաղանն պատառօղ : Սի՛ն խաբեացէ խորանանկն , և մի՛ թուհնալժափ լնցի օձն աստագին և վեշտայն կամակոր . մի՛ պատրեացէ



պատրօնն բաղմնց • և մի քարչեսցէ քարչօղն վեհից : Այն մեղևացուցէ միշտ մայրն մեղաց և հայրն չարեաց , գոնէ առօրին չյափշտակել , սյսօր ինձ ստելով և վաղիւ այ , և սյսօրն ոչ էրբէք պակասի :

Այն սրց և մէք զդուշասցուք միշտ յամենայնի • զամ ասցուք այ • զամ ընծայեսցուք հօրն փառաց • զամ մատուցուք արարչին : Այն զէրգաբոյթն միայն , մի զթաղանթն և զճարպ քաղրթին • մի միայն զքահանայական մասն զերին և զակն աջոյ , այլ և զձախն աջ արասցուք բոլորովինք բոլորապատուղ : Օ մեզ ինքեանս մատուցուք բոլորիցն այ , և ամենայնիւ յամենայնի փառաւորեսցուք զփառաւորեալ սուրբ Երրորդութիւնն յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Մեծին Խոսրովու՝ սակա երեկոյեան քարօղն :

Երբ՝ յերեկոյն հասեալք՝ նախ համաձայնեալք բովանդակ ժողովուրդն ՚ի ճրագացն օրհնութի գոհանալով վասն լուսաւորացն , որ ՚ի տունջեան զմեզ լուսաւորեն և ՚ի գիշերի • և վասն լուսոյ ճրագացն , և հայցեն զկենդանի լոյսն այ լուսաւորել զսիրտս • և ՚ի փառս այ ամենագօրին գլխաւորեն : Ապա սարկաւագն վերաձայնէ զերեկոյն գոհութի ըստ նմանութե առաւօտուն և պատարագին գոհութեան և սյսպէս սակ :

Քարոզ երեկոյնն :

Սասեալք ՚ի ժամ երեկոյնիս ամենէքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ տէր անձ մեր :

Քանզի աղաչէր մարգարէն զհամբարձումն ձեռաց լինիլ պատարագ երեկոյնի • և մէք համբառնամք փոխանակ պատարագացն ըզձեռս մեր առանկարօտք անձ , զբովանդակս զմեզ պատրաստելով քեզ պատարագ կենդանի • զոր սրբելով ընկալցին բանաւոր պաշտամամք ՚ի հաճոյս քո , զի ան մեր և ան մեր էս և ան բարեսաց տուօղ :

Եւ փառաւորեմք զքեզ որ շնորհեսցեր մեզ զտիւս խաղաղութի անցուցանել և հասանիլ ՚ի ժամ երեկոյնի : ՚Եւ զամբողջութ կեանս սակ խաղաղութի զօրս շնորհեսցեր և հասուցեր զմեզ յաշխատութի տունջեանս յերեկոյնի պաշտամանն ժամն :

Եւ ժամաւորեա՛ զմեզ սուրբ սրաիւ հրեշտակային երգով փառաւորել զքեզ տէր անձ մեր : Այն զի բաղմնդ իմի են երախտիք

քո, պահպանելով զմեզ, կերակրելով, առաջնորդելով, և յաջողելով մեզ և փրկելով: Իսկ արդ ՚ի սուրբ սրտե արժանացն զՏրեշտակային երգս մատուցանել տէր անձ մեր: Հանապազ զայս աղաչեմք՝ ՚ի դու թածելով զանձ թէ տէր մեր էս և անձ. որ հանապազ զմեզ ՚ի դու թայ յորդորէ, և եցն և ողորմեաց մեզ:

Մարթանք:

Ստեալք ՚ի ժամ երեկոյիս ամենեքեան անդադար փառաւորեմք զՏայր և զորդի և զմք հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն: Բառնորդին բերանովն աւարտեն դարձեալ զգոհութիւն վասն անբարեաց տունջեանն, և վասն միաբան ժողովելոյ առ անձ և պաշտօն նորա:

Յովնանու օձնեցւոյ՝ վասն Մեսեղիքացն:

Եւ ապա ըստ հոցն նուիրելոյ չորք դորակից գինւոյ՝ մեզ պտտիանի վայիցն խոստովանական համարձակութիւն, որք զարիւնս անձանց նուիրեցին: Որոյ հանգէտ՝ մեսեղին կայ առաջի խաչին, և ուղղեալ աղօթք՝ խնկոցն նման, որով զուարձանայ եկեղեցի: Օ ի թէ բանական ան պատարագ ասի ՚ի պողոտէ, ապա ՚ի սաղմոսաց ոմն նաչիհ, ոմն իւղ, ոմն գինի, ոմն խոունկ գեղեցիկ: Որպէս խնկարկու հաշտարարն և սաղմոսն ցուցանէ զհամբարձումն ձեռաց պատարագ. և ժողովեալ զերին միտս քահանայն յինքն՝ միջնորդ այ և մարդկան ՚ի մէջ անցեալ՝ զամենեցուն աղօթս ընծայ մատուցանէ այ:

Խոսրովու՝ սակա քարոզին:

Ղաչեսցուք զամենակալն անձ զՏայր տեառն մերոյ յի բն զթագաւորն խաղաղութեան: Խորատէ զմեզ յիսկզբան քարոզութե զանձ ինչ յայ համարել, զնա անի տէր ճանաչել, զնա խաղաղութեանց թագաւոր և տուօղ իմանալ: Օ ի ինքն իսկ ասաց մարգարէիւն, \* Ես եմ որ առնեմ զխաղաղութիւն և հաստատեմ զգար: Օ ի թէ զայս հաստատեցեմք ՚ի միտս մեր, ոչ բախտից ոչ տարբարց ոչ գիպուածոց և ոչ պատահմանց համարելիմք զբարիան զոր ունիցիմք

ի ձեռս, այլ նախախնամութեն նոյ և ողորմութեն : Այսնպէս և թէ  
 ՚ի կարիս ինչ անկեալ իցեմք և բմբռնիցիմք, և զայն՝ յոյ և կամ ՚ի նր  
 թոյլ ապայն գիտիցեմք, կամ ՚ի խրատ, կամ վասն յարդարութիւն  
 յղովէ : Եւ այսպիսի խորհրդով բարեացն շնորհ ունիցիմք նոյ և  
 ՚ի փորձութիւնս համբերութիւն կրելով, յանձինս ՚ի հաշտութիւն  
 զի՛ծ ածցուք :

Յարագս խաղաղութան ամ աշխարհի և հաստատութե նք  
 կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ : Եւ յնպիսի ջերմն սեր ունե-  
 լով առ ամ մարգիկ, մինչ զի վն ամ աշխարհի խաղաղութե հոգալ  
 և աղաչել զի՛ծ : Եւ աղաչելն՝ քան զխնդրելն առաւել ունի զկա-  
 մացն բաղձանս . որպէս զի սաստիկ ցանկութեամբ պաղատել վասն  
 աշխարհի խաղաղութե, և առաւել հաստատութե նք եկեղեցւոյ :  
 Որպէս զի մի՛ սասանութիւն ինչ յայլազգեաց կամ ՚ի հերձուածոց  
 առցէ, այլ զի խաղաղութե հաստատութի ՚ի հաւաստ և ՚ի բարե-  
 գործութիւն ունիցի բոտ առաքելական քարոզութեց . վասն այնորիկ  
 յաւելլու զառաքելականն : Եւ որպէս վասն աշխարհի խաղաղութե  
 դամենայն յաւելլու, նոյնպէս և վասն եկեղեցւոյ զկաթողիկէն ՚ի վր  
 բերէ, այսինքն՝ տիեզերական . զի վասն ամ տիեզերաց եկեղեցեաց  
 աղաչեսցուք զի՛ծ՝ հաստատուն պահել յառաքելադիր սահմանն :  
 Եւ զի զի՛ծ եկեղեցիս որ բոտ առաքելոցն դաւանութե են՝ մի հա-  
 մարեսցուք, քանզի և ոմանք միայնոյ միանական սուրբ կաթողիկէ  
 առաքելական եկեղեցւոյ ասեն ՚ի քարոզես : Օգր և երանելին եպի-  
 վան յիշէ ՚ի սաղմոսաց մեկնութեանն թէ՛ վասն այնորիկ միայնոյ  
 միանական եկեղեցւոյ ասեմք, զի ամ կաթողիկէ եկեղեցի նոյ ՚ի ծա-  
 ցաց մինչ ՚ի ծագս երկրի մի և միայն սպին :

Ս ի զբաղմնութիւնս խաղաղութե տացէ մեզ տէր ամ մեր :  
 Եւ յսինքն՝ զխաղաղութիւն յարտաքին թշնամեաց, զխաղաղութի ՚ի  
 թագաւորաց և ՚ի զանազան պետաց . ՚ի զօրաց, ՚ի զօրադիւաց, կրկին  
 ՚ի միմեանց և ՚ի մերոյն իսկ խորհրդոց : Արն զի ամ ուրեք խաղա-  
 ղութի մեզ և մերոցն լինիցի, և նորա առ մեզ և մեր առ նոսա խա-  
 ղաղութե լիցուք և աղատեալք յի՛ծ խոռովութե ՚ի խաղաղութեցն  
 նոյ որ կարողն է առ ամ պատերազմունս յաղթութիւն տալ, որք ՚ի  
 մարդկանն կամ ՚ի դիւաց շարժիցին, քանզի այսպէս ասէ, զխաղա-  
 ղութիւն տացէ բաղմնութես մեզ տէր ամ մեր . և զթագաւորս խա-  
 ղաղականս առաքեսցէ առ մեզ վասն մեծի սուրբ փառաց ահաւոր  
 անուանն իւրոյ . զպետս դաւառաց, զգորավարս՝ զգորաբլուխս՝ զժո-  
 ղովուրդս՝ զդրացիս, զմուտ և զերս մեր խաղաղութե պահեսցէ, որ  
 զի՛ծ պատերազմունս թշնամոցն խորտակէ : Արն ասացի՛ զդիւաց և  
 զմարդկան . և յաղաչելն՝ զայս ամ խոնարհութե ուսուցանէ հայցել

նչ 'ի մեր արժանաւորութի՛ յուսալ առնուլ զհայցուածն . այլ նախ՝  
 զի տէր անձ մեր է՝ հարկի ողորմիլ մեզ : Աւ դարձեալ վասն մեծի և  
 անբ փառաց ահաւոր անուանն իւրոյ շնորհեսցէ մեզ զխաղաղութի՛ ,  
 զի փառաւոր լիցի անուանն իւր սուրբ : Ապա զոր 'ի սկզբանն եղ-  
 զամենակալն՝ և 'ի վերջոյս յաւելու , Ամենակալ տէր անձ մեր կեցո՛  
 և ողորմեա՛ մեզ :



### Աղօթք :

**Լ** օւր ձայնից մերոց տէր անձ մեր . ընկալ զաղաչանս մեր ,  
 զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօթից :

Այսպէս համարիմ թէ ըստ սաղմոսին մտաց որ յերեկոյսն՝ ա-  
 սել կարգեցաւ , է սկիզբն աղօթիցս : Օհ անդ ասէ , \* Տէր կար-  
 դացի առ քեզ և լուր ինձ . նայեա՛ 'ի ձայն աղօթից իմոց 'ի կարդալ  
 իմում առ քեզ : և թէ՛ \* Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խուսկ  
 առաջի քո տէր , համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի :  
 Իսկ յաղօթս ասէ ,

**Լ** օւր ձայնից մերոց տէր անձ մեր . ընկալ զաղաչանս մեր ,  
 զհամբարձումն ձեռաց մերոց և զբանս աղօթից , սրբելով զերեկոյին  
 պատարագս մեր 'ի հոտ անուշից 'ի հաճոյս քեզ պատրաստել :

Արդ յայսմ վայրի զսաղմոսիս ունի զիմաստ բանքս , 'ի գեղեցիկս  
 ասացեալ երանելոցն յովհաննու ոսկեբերանի թէ՛ \* Չայն և կար-  
 դացումն է՛ ջերմագուլթ սրտի առ անձ պաղատումն , բուրվառ հոգևոր  
 առնել զբերանն , և անբ ունել յամ աղտոյ : Արա՛ հրով բորբոքել  
 զսիրտն 'ի սէրն անձ հոգևոյն , և զաղօթսն զխուսկն անոյշ՝ դնել 'ի  
 վերայ զի բուրեսցէ առաջի անձ : Աւ զի թէ սրբեալ իցէ ձեռն յա-  
 գահութի՛ 'ի զբկանաց 'ի կոփելոյ զանաւագան և յայլ մեղաց ըսպա-  
 սաւորութի՛ , համբարձումն այնպիսւոյ ձեռինն պատարագ ան լինի :  
 Ապա թէ պղծեալ մեղօք իցեն , փոխանակ ոսոխի ձգին յերկինս՝  
 բարկութիւն անդուստ իջուցանել : Այսն այնորիկ նախ զանիրա-  
 ւութիւնն 'ի ձեռաց թօթափել արժան է , և ապա լուանալ զաղտե-  
 ղութի՛ նորին ողորմութի՛ . և այնպէս առ անձ ամբառնալ և խնդրել  
 'ի նմանէ լսել ձայնի աղօթիցն , և ընդունել զաղաչանս զհամբար-  
 ձումն ձեռաց և զբանս աղօթից , և սրբել զպատարագ երեկոյին . որ  
 սրբի հոգևոյն սրբով . որա՛ ասաց պօղոս , \* Ձի եղիցի պատարագն  
 հեթանոսաց ընդունելի , սրբեալ հոգևոյն սրբով : Այսպէս լինի

պատարագն հաճոյ նոյ և նք և ընդունելի . ապա աղաչէ յետ զպատարագն անուշահոտ պատրաստելոյ՝ այսպիսի ինչ փոխադարձելի մեզ :

**Յ**աւելի ՚ի մեզ տէր ամենակալ զհաւատ՝ զյոյս՝ զսէր և զնամ գործս առաքինութե : Հաւատս խնդրեցին յաւելուլ առաքեալքն . և մեք ՚ի նոցանէ խրատեալք զսոյն աղաչեմք : **Յ**ուսով լի՛ ասաց առաքեալ լինիլ հռովմայեցւոցն . յորմէ նամ խնդութի և խաղաղութի լինի ՚ի հոգւոյն սրբոյ : **Ա**սանորոյ մեծաւ պաղատանօք խնդրեսցուք զայնքան բարեաց զհամբարձումն ձեռաց պարգևիչն . իսկ սէր ընդ նոյ և ընդ մարդկան՝ միաւորէ , և քի աշակերտութե տայ ծանօթս . զոր և մեծ առաւելութե հաստատել ՚ի մեզ մաղթեմք :

**Ե**ւ զնամ գործս առաքինութե : **Մ**ենայն գործք առաքինութե ՚ի հաւատոց և ՚ի յուսոյ և ՚ի սիրոյ բղխեն . զի թէ զհաւատս և զյոյս և զսէր արժանացուք ստանալ , դիւրաւ զնամ առաքինութիս ուղղեցեմք և կամարարք նոյ լինիցիմք , զոր և ասէ իսկ ,

**Ա**րպէս զի ըստ կամաց քոց բարեսիրաց միշտ կրօնաւորեալք բարեպաշտութե : **Բ**ո կամքդ ասէ զբարին սիրէ . արդ զի տէր մեր և նմ ես՝ հարկաւ ծառայիցս և արարելոցս ՚ի քէն՝ ըստ կամաց քոց լինիլ պիտոյ է : **Ե**ւ յոյս թէ և մեք յօժարիմք , առանց քո ոչ ինչ կարեմք առնել . վասն այնորիկ պաղատիմք որն զի հաւատով և յուսով և սիրով լցեալք ըստ բարեսէր կամաց կրօնաւորեսցուք բարեպաշտութե : **Կ**րօնք՝ վարուցն և կարգացն կոչէ . բարեպաշտութե զվարս աշխարհիս ուղել պարտ է . պաշտելն և տպասաւորելն՝ ծառայելն է . բարի ծառայութիւն՝ ըստ կամաց զտէրն պաշտելն է : **Ի**սկ որ ոչ է ըստ նն կամաց , չէ բարեպաշտ . այլ դառնացուցիչ : **Մ**րդ հայցելով ըստ կամաց երկնաւոր տեառնն բարեպաշտել՝ յետ համարձակութիւն ելանէ : **Ե**ւ որ է այն . ծառայք ասէ կամարարք տերանց՝ վստահութի ունին զցայգ և զցերեկ խնդրել ՚ի տերանցն զիւրեանց պէտս և զայլոց : **Մ**րդ՝ եթէ լիցի մեզ կամարարս , և բարեպաշտս լինի քեզ :

**Ի**տուէ և ՚ի գիշերի արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութե և վասն հոգևորական կենացն աղաչել զքեզ տէր : **Մ**յսպիսի եղիցուք էղբարք , որն զի համարձակապէս զտիւ և զգիշեր առաջի նոյ կացցուք . և փրկութիւն անձանց մերոց և ընկերացն խնդրեսցուք . զի միմեամբք , զերերացն յայտ առնէ :

**Ի**սկ վասն հոգևոր կենացն աղաչելն զինչ է . եթէ ոչ \* **Զ**ի մի ըստ մարմնոյ կայցեմք և մեռանիցիմք որն ասէ առաքեալն : **Մ**յլ զի

հոգւով զգործս մարմնոյ սպանցուք և կեցցուք զե որդիք նոյ լինուք ։  
\* Զի որ հոգւովն նոյ վարին՝ նորա են որդիք նոյ ։ Այնպիսիքն իբրև  
ի հօրէ վատահուր զևրեանցն և զայլոցն խնդրեն և առնուն զպէտս ։

Այլ գտանել ՚ի բէն շնորհս և ողորմութի ։ Օ ի թեպէտ բիւ-  
րապատիկ հաճոյանամք , սակայն տուրք նոյ շնորհք և ողորմութիւն  
են , սյսինքն՝ ճրի և ողորմելով ։

Այլ գոհութեամբ փառաւորեցուք զՏայր և զորդի և զհոգին  
սուրբ . այժմ՝ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

Հանապազ զամենայնոյն յարէ գոհանալովն , ուսուցանելով  
թէ ըստ ամի գոհացողք պարտիմք լինիլ նոյ . թէ ՚ի բարօրութե՝ և  
թէ յոչ ակորժեղի կեանս իցեմք ։ Այլ հայցեմք ոչ միայն յայս կեանս  
լինիլ փառաբանիչս նոյ , այլ և ՚ի հանդերձեալն . քանզի զայս նշա-  
նակէ ասելն ՚ի փառս տալն . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
նից , ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Քեզ երկիրպագանելով տէր անձ մեր ։ Ո՞վ բերկրական ճայ-  
նիս որք միտս ունին . քանի՞ հեշտալի է զամենեցունց անձ մեզ ըն-  
տանէբար կոչէլ սրտի մտօք , նմա երկիրպագանել , մնաց տեսութե՞  
առաջն նորա կալ ասելով ,

Քեզ երկիրպագանելով տէր անձ մեր , գոհանամք զբէն  
յաղագս խաղաղութե՞ անցուցանել ՚ի մէնջ զերկարութիւն առն-  
ջեանս շնորհելոյ ։

Արգարև մեծ գոհութի երկրպագութե՞ պարտիմք մատուցա-  
նել նոյ խաղաղութե՞ յերեկոյն հասեալք . քանզի անթիւ ՚ի բազ-  
մութենէ են խոռովութիք վտանգիչք մարդկան , որք ըստ հոգւոյ և  
մարմնոյ պատահին ։ Այլ թշնամին կենաց մերոց ամենայնիւ ընդ  
ամենեւեան մարտնչի , գործակիցս իւր ՚ի մարդկանէ առնելով ։  
Ի աղում անգամ և զանդամս մարմնոց մերոց ընդ դէմ վառէ մեզ ՚ի  
հոգւոյ և ՚ի մարմնոյ պէտս վտանգելով . յաճախապէս և խորհրդովք  
մերովք մարտնչի և կռուի ընդ մեզ ։

Արդ մինչ նոյ պահպանելովն և օգնելովն յերեկոյն հասանիմք  
խաղաղութե՞ ընդ առուն երկարութի անցեալք , սերտ սիրով շնոր-  
հակալուք մերում տեսուն լիցուք , որ պահէն և փրկէն և զօրացու-  
ցանէն և յաշողէն ՚ի գործս բարիս և ընու զպէտս մեր , և ՚ի նաւա-  
հանգիստ գիշերոյն հասուցանէ խաղաղութեամբ ։ Այս իբրև վասն

անցելոցն գոհանամք արժանապէս , վասն առաջնկայիցն խնդրել  
վստահանամք . վասն այնորիկ և յարէ 'ի գոհութի :

**Տ**ուր մեզ տէր աղաչեմք զբեզ՝ զերեկս և զառաջնկայ գիշերս  
առանց մեղաց և առանց գայթակորութե անցուցանել :

**Մ**րդարև յոյժ աղաչելի է զերժանիլ 'ի խաբից սատանայի և 'ի  
գայթակորութեց նր յերեկոյի և 'ի գիշերային ժամն : **Վ**ս որոյ և  
նչ լոկ ասէ թէ տուր մեզ տէր , այլ յաւելու թէ՛ աղաչեմք զբեզ ,  
և ապա աղաչէ հաստատուն կալ 'ի սերն նյ և 'ի պատուիրանապա-  
հուութան՝ այսպէս ասելով :

**Հ**աստատուն կալ և մնալ 'ի սէր և 'ի պատուիրանապահութե  
քում : **Ս**րբա իրերօք կազմին . բանզի էրբեմն ասէ տէրն , \* Եթէ  
սիրէք զնս՝ զպատուիրանս իմ պահէտըն : և թէ՛ \* Պահիցէք զպատու-  
ուիրանս իմ , կացընք 'ի սէր իմ : **Օ** ի սերն քի ժրացուցանէ և յոր-  
դորէ 'ի պատուիրանապահութիւն . և պատուիրանացն քի պահպա-  
նութի սիրոյ նր հաստատութի առնէ . ըստ ասացելոյն թէ՛ \* Հաս-  
տատուն կացէք 'ի սէր իմ : **Ե**ւ 'ի նոյն յարէ \* Թէ պահիցէք զպատու-  
ուիրանս իմ , կացընք 'ի սէր իմ : **Հ**այս միտս աղօթիցս բան մաղթէ :  
Հաստատուն կալ և մնալ 'ի սէր և 'ի պատուիրանապահութեան քոյ :  
**Ո**չ մի ժամ կամ օր կամ տարի , այլ հանապազ :

**Խ**նդրելով զխաղաղութի ամ աշխարհի , եկեղեցւոյ քում հաս-  
տատութիւն , և անձանց մերոց փրկութիւն :

**Մ**րդարև՝ որ հաստատեալ է 'ի սերն քի և պահէ զպատուիրանս  
նորա , նա հանապազ հոգայ վասն աշխարհի խաղաղութե և սուրբ  
եկեղեցւոյ հաստատութե , և վասն անձին և ընկերին փրկութե .  
և զնոյն հանապազ խնդրէ 'ի քսէ : **Վ**ասն զի որ սիրէ զամ՝ նման  
նսին սիրէ զամ՝ մարդոյ զկեան :

**Օ** ի ընդունելով 'ի քէն զհայցուածս մեր , զմեժ վայելչական  
փառաբանութի միշտ 'ի բարձունս առաքեացուք ամենատուրբ էր-  
րորդութեդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

**Չ**իք 'ի մեզ կար ըստ արժանեաց փոխադարձել ըստ նյ բար-  
եացն անկարօտին . բայց միայն զի գոհացուք և փառս ապցուք նմս  
և այնու մէք փառաւոր լիցուք : **Ո**չ էթէ նմս ինչ յաւելումն ա-  
բացուք , որ փառաւորեալն է յամենայնի . զի գրեալ է , \* Զփառա-  
ւորիս իմ փառաւորեցից : **Ի**սկ զինչ է վայելչականն , վս զի վայելէ  
նյ յամի գոհութե և փառաբանութե բան , որ արժանի է փառա-  
բանութեան , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Յովհաննու օգնեցւոյ՝ վասն երեքսրբեանս երզնի :

Օ՛հետ որոյ և խորհրդարար կարգեալ է՝ երկոց սրբասացու-  
թեանցն երգ . և ըստ տեսեան մարդարեիսն և մեկնութի  
աւետարանչին : Օ՛հ զփառս խաչին ետես ետայի և խօսեցաւ վասն  
նորա . զնոյն և հայրականն յայտնեաց բարբառ . \* Փառաւոր արա-  
բի . և զարձեալ փառաւոր արարից : Եւ ինքն յաղագս իւր վկայե-  
յասեին , \* Եւ յամ փառաւորեցաւ որդի մարդոց : Եւ ան որոց ոչ վայ-  
րապար մեք ՚ի կիր առնումք զխաչեցարն ՚ի գլուխ սրբասացութեցն :  
Եւ քանզև սուրբ է որդի և հօր և անմահ . և կամօքն հօր և հա-  
ճութիւն հօգւոյն եկն նա ՚ի չարչարանս խաչին . և նովաւ իսկ ծա-  
նեաք զհայր և զհօգին : Եւ մի պախարակեացեն այլապէս խորհե-  
ցողքն զերկոց սրբասացութեանս երգ . որք և ամօթ և ս վարկանին  
զփրկութեանն մերոյ անօթ :

Եւ մեզ յայլ ինչ մի լեցի պարծիլ ըստ առաքելոյ , բայց  
միայն ՚ի խաչն տեսան մերոյ յն քի : Եւ մեզ առկայասցի այս , զի և  
ոչ ժամ իսկ է . այլ այսքան , զի ծանիցուք զսա հրեղէն պարխպ  
եկեղեցւոց : Եւ շուրջ արկեալ է ՚ի գլխաւորական աղօթիս առաւօ-  
տի , և խորհրդական ժամունս երբորդի . և երեկոյի , և երկոց անգամ  
յաւուրն զնոյն եռակի կրկնելով : Եւ զի զխաչին երախախքն ծան-  
եաք , ընդ նմին և զմայն լուսոյ յիշատակեմք և աղերսեմք ՚ի բարե-  
խօսութի առայն որ հաճեցաւն բնակիլ յորովայնի նորա և խաչին  
սրբով փրկել զմեզ : Եւ այսպէս փոխանակ օրինաւոր գաւառնցն ա-  
ռաւօանոց և երեկոյնոց մատուցելոց , յեկեղեցւոց աստի մատուցանի  
խոստովանութի՝ սրբոց անուան նորա ՚ի պողոյ շրթանց , և յանբիծ-  
վարուց ուղղութիւն :

Եւ ասի մաղթանք՝ Փրկել զմեզ , և քարոզ՝ Վասն լսելի լինելոյ , և ասլա՝ փոխս :

ամբարձի դաչս իմ ՚ի լերինս . և այլն : Օ՛հ պահպանիցիմք  
տերունական աջովն նոյ . ուստի և ակն ունիմք զօգնութի  
ընդունել յարարօղէն երկնի և երկրի : Եւ զի յարևու փորձու-  
թեանցն մի խորշակահար լինիցիմք , այլ պահելով զմեզ ՚ի մեղանաց  
ապրիցիմք և յամ որոգայթից հօգւոով և մարմնով : Տէր պահեցե-  
զմուտ քո ծննդեամբ յաշխարհ , և զէլ քո մահուամբ՝ յայսմ հետե-  
մինչև յաւիտեանս , յաստեացս մինչև ՚ի հանդերձեալ յաւիտեանն :



## Աղօթք՝ զինի Համբարձուցն :

այր գթած՝ արարիչ և բարեխնամող իմ արարածոց :  
 Հայր սսեղով՝ զվերստին ծնունդն յաւազանէն առաջն  
 արկանելով՝ ՚ի գութ գիծ խոնարհէցուցանել կամի . վասն այնորիկ և  
 զգթածն յաւել և զխնամողն : Օ ի հայր և գթած և խնամողն՝ ոչ  
 անտես առնէ զորս յորդէգործի ընկալաւ . մանաւանդ զին ոչ հայր  
 միայն է , այլ և արարիչ . և վասն զին իմ աշխարհի զողորմութի կամի  
 հայցել , վասն այնորիկ յարէ զայն թէ՛ արարիչ իմ արարածոց :

Ի նկալ զպաղատանս ծառայից քոց : Եւ հայրական և արար-  
 չական գթոյդ թէ և մեղուցեալ իցեմք , ընկալ զպաղատանս մեր . զին  
 և ծառայք քո եմք , և հայր զքեզ կոչեմք :

Ողորմեա ՚ի վերայ իմ աշխարհի . հիւանդաց՝ վշտացելոց՝ ճա-  
 նապարհորդելոց՝ նաւորդաց՝ խոտովանողաց՝ սպաշխարողաց , և  
 հոգւոցն հանգուցելոց :

Սասն զին կամի իմ զամենեցունց փրկութի , և սիրէ զին մեր  
 խնամ ածիցեմք և զիրերաց զօգուտն հայցիցեմք , վասն այնորիկ մաղ-  
 թեմք իմ աշխարհի զողորմութի և կարգ ըստ կարգէ ամենեցուն զոր  
 թուեցարն : Եւ տես , ոչ միայն զողորմելան յաւելումք , այլ յաւել-  
 ւումք զինչ պէտք են հասարակաց մեզ՝ գու ինքնին գիտես առաւել  
 քան զոր խնդրեմք և իմանամք : Եւր վասն զին առատ են պարգևօք  
 բարեբարութե՛ և զպէտա մեր գիտես , ողորմիլ հայցեմք և գթալ  
 հայրաբար , և յսմի քեզ փառս վերսուարեմք , քանզն յարէ ՚ի նոյն ,

Եւ քեզ հօր արարչի և որդւոյդ միածնի հանդերձ կենդանա-  
 րար և ազատիչ սուրբ հոգւովդ վայելեն փառք իշխանութի և պա-  
 տիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

## Յովհաննու օձնեցուց :

Եւ սպա սաղմուսօղբն հասարակ մաղթեն՝ ընդ հովանեա-  
 բարձրելոյն լինել , և յերկինս հանգստեանն արժանաւո-  
 րել , և աստէն յորսողին փրկիլ որոգայթից զինու ճշմարիտ պահպա-  
 նութեն : Եւ զին թաքնաբար ընդ խաւար շրջն որոգայթադիրն ,  
 զօրացն սսեմք զընթացս սրտից մերոց՝ զգլխաւորական չարութիւն

չարասիրին : Ս ան որոյ և յայսմ գիշերի առ քեզ համբառնամք զմտաւորական աչս իբր ծառայ առ տէր , զի ՚ի ծփական տառապանաց զերծուացես զմեզ . և ընդունիցես զոգիս մեր անխարդախ կանխել առ քեզ ՚ի մէջ գիշերոյ և յառաւօտի , և զկամաւորն մատուցանել քեզ պատարագ բանաւոր : Եւ բարոզն միաբան խնդրել զայստսիկ յորդորէ :

Իսկ քահանայն միջնորդէ աղօթիւք առ կենացն անմահից յոյսն յն քն , կատարել ՚ի բարի զաղօթան՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ անձանին և հաճոյական վկայիցն : Եւ ժողովուրդն զքահանայն տէր անուանելով աղայէ յիշել յաղօթան զպաշտօնեայս ըստ հոգւոյ և մարմնապէս , և զծնօղսն , և զայն ևս մի ըստ մտջէ : Իսկ նա համառօտելով ասէ ,

Յիշեալ զամ հաւատացեալս և փրկեալ յերաբանչիւր վտանգից և ՚ի փորձութեց , զի յամցունց արժանապէս փառաւորն ամեապուրբ Էրրորդութիդ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Քարոզ ապաշխարողաց խոստովութեան

Եկեալքս ՚ի խոստովանութի ապաշխարութե հաւատով զոյս միածնի որդւոյն այ գիցիւք ՚ի սիրտս մեր : Տեճանէն , զի չասաց լոկ զապաշխարութին . այլ նախ զխոստովանութի և ապա զապաշխարութի . զի առանց խոստովանութե չէք հնար քաւութիւն գտանել : Ս ան այսորիկ պարտ է վութալ ՚ի խոստովանութիւն քահանային խոստովանիլ միանգամ , և այլ հանապաղ , և այնպէս պողատել հաւատով և յուսով : Թէպէտ և բիւր չարեօք յառաջինսն վերաւորեալ իցեմք , հաւատասցուք ՚ի մարդասիրութենէն քի քաւութիւն և թողութիւն գտանել . զի զայս հրամայէ քարոզն :

Հաւատով զոյս միածնի որդւոյն այ գիցիւք ՚ի սիրտս մեր , խնդրելով ՚ի նմանէ զքաւութի և զթողութի յանցանաց մերոց : Եւ ՚ի հաստատել զոյսն՝ զբարերարութե քի զգործս և զբանս որպէս զառհաւատչեայ առաջի դնէ :

Ս ան զի նա ինքն է նախախնամօղն աստուած յաւիտենական որ եկն կամաւ հօր փրկել զարարածս . և ասաց զինքն լինիլ քաւիչ մեղաւորաց՝ յոյս ապաշխարողաց , շնորհելով հանգիստ աշխատելոց , ընդունելով զծանրաբեռինս և զտարժանեալս մեղօք

յապրոջխարու-թիւն քաւու-թեան: Վախախնամօղն այն է, որ յաւաջինսն լինի առ հոգ ուրուք, քանզի և արուեստ իսկ աստուծոյ բարերարու-թեանն այս է՝ նախահոգակ լինիլ առ իւր արարածս: Վրանզի յաւնէն զմարդն՝ նախ զերկինս և զերկիր այլովքն արար, և ապա զմարդն գոյացոյց, և յառաջ զդալարի, և ապա զանասունսն:

Եւ ցարդ ևս՝ իսկ նախքան զելանել մարդկան յարգանդէն՝ և կամ անասնոցն ծննդոց, ինու զստինսն կաթամբ առ նոցա պէտս և սնունդս: Եւ զստինս կանանց և զօրէ նոցա երբ ժամանակ լինի ծննդականու-թե՛ն՝ նախկարգէ: Իսկ զհոգւոյն նախախնամու-թի՛ն՝ նախ արարածովքս եցոյց զի ծանիցի արարելն սորօք, յետ այսր սրբաբովք իւրովք առարկելովք և մարգարէիւք, և իւրով իսկ մարմնանալովն: Եւ այսր առաջնորդովք և գրովք սրբովք աղգի աղգի ուղղութիւն ցուցեալ ինքեամբ և ընտրելովք իւրովք, և մեղաւորացն և օրինակ ցուցեալ ՚ի հնումն և ՚ի նորումս, այլ և մարգարէիւքն կոչեալ զամ մեղաւորս յապաշխարու-թի՛ն՝ և ՚ի քաւու-թի՛ն յուսադրել: Եւ զիւր գալուսան՝ մեղաւորաց վասն ստէ, և երթողաց առ ինքն՝ յաշխատու-թեան մեղաց և ՚ի բեռանց, նոցա հանգիստ խոստանայ, այս է զոր ասէն,

Նորհելով հանգիստ աշխատելոց: Իսկ՝ ընդունելն զծանրաբեռնեալս և զտարժանեալս յապաշխարու-թի՛ն քաւու-թե՛ն այս է, որ ոչ բանիւք միայն, այլ և արդեամբ եցոյց զընդունելու-թի՛ն մեղաւորաց: Արդ զմարտաւորն առաքեալ և աւետարանիչ արար, և միւս մարտաւորին՝ տամբն փրկու-թի՛ն էտ: Օ պրոնիկն մերձիլ յամենասուրբ ոտս իւր արժանացոյց, և ՚ի պատրօղ աչացն արտասուացն լուանիլ, և վատթարեալ գլխոյն հերօքն մաքրիլ: Արց ոչ միայն մեղացն թողու-թի՛ն էտ, այլ և աշխարհաքարոզ զնորա ուղղու-թի՛նս աւետարանաւն արար, և զաւաղակն յառաջ եմոյժ քան զամենեսեսն ՚ի դրախտն: Օ պետրոս ոչ միայն յուրացու-թե՛ն գլորմանէն կանգնեաց, այլ և գլուխ առաքելոցն և հիմն եկեղեցոյ և փափօղ արբայու-թե՛ն լինիլ տարաստեաց: Օ սոսա և զայլս բազումս տարժանեալս ՚ի մեղս՝ այսինքն զաշխատեալս ՚ի չարեաց ծանր բեռինսն յայս, ՚ի սոյնպիսի բարեաց հանգիստ շնորհեաց քաւու-թե՛ն:

Երբ եկայք ամբեան խոնարհեալ անձամբ՝ բեկեալ սրտիւք՝ անկցուք և լացցուք առաջն տեառն սրտընն մերոյ: Եւ յս է գեղամ վերաց չարեաց՝ խոնարհամիտ և բեկեալ սիրտ, զոր ոչ արհամարհէ ամ, այլ և պատարագ հաճոյական է նոյ խոնարհն: Սոյն է որ զհայիւն ՚ի մեղաւորն նոյ առնէ, որպէս ասաց ինքնին մարգարէիւն՝

\* Յո՞հանգետաց . եթէ ոչ՝ ՚ի հէզս և ՚ի խոնարհս և որք դողան ՚ի բա-  
նից խնց : Յայնպիսին ոչ հայի և եթ , այլ և հուպ կայ ՚ի նսաս այլ  
և կեցուցանէ : \* Մէրձէ ասէ տէր առ այնտիկ որ մտչեալ էն սրբ-  
տիւք , և զխոնարհս հոգւով՝ կեցուցանէ : Ալ թէ յանձն բեկեալ  
մերձէ անձ՝ որ այնպիսի խոնարհի մտօք և բեկի սրտիւ , նա յար-  
տասուաց ոչ էրբէք դադարէ . այլ ՚ի սուգ է հանապաղ , առաջի ան-  
կանի արարչին նոյ . յորմէ և մտիթարի և երանելի լինի : Բայց ոչ  
վայրասպար յաւել մարգարէն զասելն , \* Անկցուք և լացուք առաջի  
տեառն արարչին մերոյ : Յորմէ քարոզս զբանս էառ . այլ զի ՚ի միա  
առցուք թէ ո՛ւմ մեղաք , արարչին , որ արարն զմեզ ՚ի բարի . վասն  
իւր նմանօղ լինելոյ , վասն հաճոյ իւր լինելոյ , վասն ծառայելոյ ըստ  
կամաց հաստչին , և վասն այսց անի եղեալ ՚ի նմանէ : Փոխանակ այ-  
սոցիկ դառնացուցիչք լեալ , յիրաւի լալ և ողբալ պարտմք առաջի  
նորա , զոր թէ արասցուք , գթայ վասն արարչական սիրոյն , ներէ և  
ոչ խնդրէ վրէժ . քանզի և քարոզն ՚ի սոյն յօգէ զայս :

( ) Ի անցուցէ ՚ի մէնջ զցատու մն պատուհասի յանցանաց մե-  
րոց : Մէք յիշելովն զարարչին երախտիս և զմեր ապերախտութիւն ,  
՚ի լայն այսու գամք էթէ իցեմք երկիւղածք ՚ի տեառնէ : Ալ արա-  
րիչն ՚ի գթոյն չկարէ զլացեալսս պատժել , այլ և մտիթարալեցս ևս  
առնէ . ապա յաղթս զբանն փակէ :

Մեռակալ տէր անձ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ մեզ :

### Աղօթք խոսրովու :

Ստուած բարձրեալ գովեալ և փառաւորեալ , Իսկզբան  
աղօթիցս յուշ առնեմք անձանց զայ մեծութիւնն և զմեր  
յանդգնութիւն , և դարձեալ զայ ներողութիւն առ մեզ . զի անձ է ,  
և զի բարձրեալ է ՚ի վերայ երկնի և երկրի , և զի գովեալ է ՚ի բնու-  
թենէ և ՚ի գործոց և յերախտեաց իւրոց , և փառաւորեալ է յամե-  
նեցունց : Ալ մեր արհամարհեալ զնա և զպատուիրանս նորա , և նա  
երկայնամտէ և ներէ , և անսոյ ապաշխարութեան . և ՚ի դառնալն ,  
գիրկս տարածանէ և ընդունի խնդութեամբ . վասն որոյ և ասէ ,

Որ երկայնամտող էս քաղցրութեք քով : Այս սակս ներո-  
ղութեանդ մինչդեռ ՚ի մեղս իցեմք : Բազմազեղ և բազմաշնորհ էս  
առ ամենեկեան որ կարդանս առ քեզ , խնդրեն զբաւուրթի և զլծո-

դուժինն մեղաց : Ըյս առ դարձեալսն յապաշխարուծի . որն կանխաւ խօսեցաւ ՚ի ձեռն մարգարէին , \* Դարձարուք առիս և ես դարձայց առ ձեզ . զի ոչ կամիմ զմահ մեղաւորին , որն զդառնալն նորա ՚ի չար ճանապարհէն և զկեան : Օայս եղեկիէլ մարգարէ ոն յերեսաց նոյ ասէ յապաշխարուծին յորդորելով զմեղացեալսն : Եւ ահէն դարձեալ իսկ ասացեր բերանովդ . բով սրբով եթէ \* Ոչ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս յապաշխարուծի : Օայս ասաց տէրն յորժամ բամբասեցաւ ՚ի փարիսեցւոցն թէ ուտէ և ըմպէ ընդ մեղաւորս և ընդ մարաւորս : Վանզի վասն բժշկելոյ զնոսս . յանձին կալաւ ընդ անիրաւան զանիրաւաբար ժողովեալսն ուտել : Ըրդ մեք զայսպիսի մարդասիրուծի յիշելով ասեմք թէ՛ որ մարգարէինն խոստացար դառնալ առ դարձեալսն առ քեզ , և քոյ ամենասուրբ բերանովդ ասացեր յապաշխարուծի ընդուսնել զմեղաւորսն :

Ըրդ որդրմեաց նձ ՚ի վերայ ապաշխարողացս . ընկալ զսոցս զաղօթս զինդրուածս զպաղատանս զխոստովանուծիս : Թէ և արժանի գործս չունիցին , զի որդրմեձ ես՝ որդրմեձ և ընկալ զարաչանս զաղօթս և զխոստովանուծիս : Ըրդ թէ աղբրել ինչ , ինդրուածք է կարևոր պիտոյիցն յայանուծի . պաղատանք է՝ մինն վասն պատուհասի սպառնալեաց երկիւղալից պաղատանս մատուցանել և տազնապաւ ստիպել առ ներումն :

Գ թուծիք բով թնդ սոցս զմեղս և զյանցանս և զպարտիս : Դարձեալ ՚ի գթուծին ապաւինի գթալ և թողուլ զմեղսն : Սէղք և յանցանք և անօրէնուծիք , ամենքեան անօրէնուծիք և պարտիք են : Բայց թէ զանազանէ որ զմեղսն , ասաց և զյանցանս՝ զպատուիրանաւն նոյ զյանցանէն . իսկ զպարտիսն՝ զոր պարտիմք , տանջանաց է՝ եթէ ոչ ապաշխարիցեմք :

Սարդասիրուծիք քո բժշկեձ զվէրս զհարուածս զբեկումն որ եղև ՚ի թշնամւոցն և ՚ի մոլար խաբէութենէ նորա : Տես՝ և աստ ՚ի մարդասիրուծին յուսայ բժիշկ վերացն լինի . զանազանէ զանուանսն և աստ , զի ոմն սաստիկ վիրաւորեալ է և ոմն նուազ հարուածեալ է և ոմն խորտակումն ընկալեալ : Եւ պատճառ ամենեցուն՝ նենգուծին սատանայի է , որ խաբէ և մուրբեցուցանէ զոչ զգուշացօղսն :

Որն զի սքա առողջացեալք միւսանգամ հոգւով և մարմնով մոցեն յեկեղեցի քո սուրբ : Սաղատանս մատուցանէ քահանայն զի զմձ հիւանդուծիս բժշկեսցէ և ՚ի սուրբ առողջուծիս հասուցէ : Օի միւսանգամ յեկեղեցի մտանել արժանասցին և ժողովրդեանն

այ փառաբանակից լինել . քանզի ամենեքեան որք 'ի քն մկրտեցան ,  
 քի անդամք և մարմնիք եղեն : Իսկ մեղուցեալքն՝ ըստ աստուցեացն  
 պողոսի ոչ կարեն անդամք քի լինիլ . \* Չի որ մերձենայ 'ի պոռնիկն՝  
 նորա մարմնն է : Եւ ինքն իսկ տերն ասէ , \* Ի բաց կացէք յինէն  
 ամենեքեան , յոք գործէիք զանօրէնութի : Ասան այնորիկ և յեկե-  
 ղէցւոյ արտաքսեն զանօրինեայն . զի եկեղեցին այ տուն է , և 'ի նմա  
 որն յառազաստի միանան ընդ քի ոգիքն . և յանցաւորքն յերեսաց  
 նորա ընկեցեալք են : Այնչև սոցոք խոստովանութի և սպաշխա-  
 րութեամբ վերստին առողջանայցեն սրբեալ 'ի մեղաց՝ արտասուացն  
 աւազանաւ . որով մարթասցեն դարձեալ յեկեղեցի հոգւոյն հարս-  
 նարանն մտանել և 'ի ժողովուրդն այ խառնիլ , և ընդ հրեշտակս և  
 ընդ սուրբս այ՝ մատուցանել գոհութի այ : Բանզի յեկեղեցիս այ  
 միաբանութի լինի հրեշտակաց և սրբոցն ոգւոց : Եւ որ՝ արտաքսել  
 խոնարհ հոգւով և բեկեալ սրտիւ սուգ առցեն և ողբասցեն յայն-  
 պիսի վրիպանս . զի հասցեն 'ի գթութեցն այ քառութե . և առող-  
 ջասցին և 'ի սուրբսն խառնեսցին , և 'ի ժողովուրդսն միասցին . որն  
 ասէն թէ՝

Եւ ընդ ժողովուրդեան քում հանցեն զօրհնութի և զփառս հօր  
 և որդւոյ և հոգւոցո սրբոց . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտե-  
 նից , ամէն :

Սակս կիրակիէ արձակման աղօթից :

Եւ ազաւոր խաղաղուէ՝ օգնական և փրկիչ անձանց մերոց քն  
 անձ մեր , պարսպեալ պահէա՛ զհաւատացեալ ժողովուրդս  
 քն ընդ հովանեաւ պատուական և սբ խաչն քոյ 'ի խաղաղութի :  
 \* Օ մարգարէին առեալ զբան . զոր կանխագուշակ տեսութի  
 պատմաբանեալ ասէր 'ի դէմն քրիստոսի , \* Ես կացի թագաւոր  
 'ի նմանէ 'ի վերայ սիօնի լերին սրբոյ նորա : Եւ դարձեալ ասէ ,  
 \* Թագաւորեաց անձ 'ի վերայ հեթանոսաց : և թէ՝ \* Ասեմ զգործս  
 իմ թագաւորի : Եւ այլ ուր յայտնապէս ասէ , \* Տը թագաւորեաց՝  
 վայելչութի զգեցաւ խաչինն : Օ ի թէպէտ և անձութի էր թագա-  
 ւոր յառաջ քան զյաւիտեանս 'ի վերայ ամենայնի , այլ զմարմնով  
 թագաւորելն ասէ . և զի արար խաղաղութի արեամբ խաչին իւրոյ ,  
 վասն որոյ և թագաւոր խաղաղութեան կոչէ :

( ) օգնական և փրկիչ անձանց մերոց քն անձ մեր : ( ) օգնական  
 եղև բնութեանս որ ակարացեալ էր 'ի մեղաց , և փրկեաց 'ի ծառայ-

ութեանէ սատանայի • ըստ առարկելոյ • \* Ա՛յ սպականացու արծաթե-  
ղինօք և ոսկեղինօք փրկեցայք • այլ պատուական արեամբն քի՛ն  
Ս՛ան որոյ տիրապէս ցուցաւ մեզ տէր և թագաւոր և օգնական  
քս՛ անձ մեր • քս՛ ըստ մարմնական տնօրէնութեան • որով փրկեցայք •  
և անձ՛ ըստ արարչական տէրութեանն :

Պարսպեալ պահէա՛ զլուսացեալ ժողովուրդս քո ընդ հովանե-  
եաւ պատուական և սբ խաչն քոյ ՚ի խաղաղութի՛ն : Ս՛եճ է խնամք  
բարեբարին նոյ առ արարածս • բայց ևս առաւել առ հաւատացեալ  
ժողովուրդս և առ երկիւղածս իւր ցուցանէ զխնամական զթուօթիս  
իւր • ըստ այնմ՛ • \* Բանակք հրեշտակաց տեսուն շուրջէ զերկիւղա-  
ծովք իւրովք և պահէ զնոսա : և թէ՛ \* Չկամս երկիւղածաց իւրոց  
առնէն տէր : Եւ զարծեալ թէ՛ \* Եղիցի ձեռն քո ՚ի վերայ առն •  
անձ քո ՚ի վերայ որդւոյ մարդոյ : Ը՛յս է զոր բան աղօթիցս խնդրէ  
պարխսպ և պահպանութիւն :

Իսկ զի տեսէ • ընդ հովանեաւ պատուական և սուրբ խաչն քոյ :  
Խաչդ անուռն յառաջ մինչչե՛ եր քս՛ ՚ի նմա բեւեռեալ՛ նախատանաց  
էր անուռն և չարագործաց պատժարան : Ս՛ան որոյ և անօրէն հրե-  
այքն այլ ազգ մահուամբ ո՛չ կամեցան զտէրն սպանանել • բայց միայն  
խաչիւ • զի յամենեցունց մահապարտ և չարագործ կարծիցի որպէս  
դաւաղահին • վասն որոյ և ընդ նոսա խաչեցին : Իսկ տէրն որն՞ մար-  
մին զգէնլով զմեղանչական մարմինս սրբեաց և մաքրեաց • այսպէս ՚ի  
խաչին բեւեռելով՛ պատուական և սուրբ արար զխաչն • և ետ պա-  
րխսպ ամրութեան և զէն անվթար հաւատացելոց իւրոց :

Եւ զորօրինակ որք ընդ հովանեաւ ծառոց կամ այլ իմիք տա-  
ղաւարին • անմնաս մնան ՚ի տապոյ արեգականն : Բ՛ստ այսմ՛ օրինակի  
որք ընդ հովանեաւ պատուական և սուրբ խաչին պահպանին • ամրա-  
ցեալ և խաղաղացեալ մնան յամ՛ մեքենայից սատանայի • իբր զքաղաք  
ամուր Եօթնեկի պարսպօք զօրացեալ • զոր և միշտ ՚ի մեզ լինիլ մար-  
թեացուք : Ս՛ան զի միշտ դարանամուռ լինի չարն • և ջանայ որսալ  
՚ի կորուստ զորդիս մարդկան • ո՛չ միայն զՏօգիս վերաւորելով • այլ և  
զմարմինս չարաչար վտանգօք ընու : Օ՛րմանս՛ ՚ի զանազան մեղս  
գթեցուցանէ • և յոմանց վերայ զտունս փրուցանէ • զայլ ոմանս՛ դա-  
հավէժ կամ բարկեղզ գետակուր և ծովանցն առնէ • զկէսս՛ դազա-  
նեկուր և աւազակախողիող առնէ • կիրոց՛ զիւրովին ապ Երթալ և  
անձնամասն լինիլ • զորոց ընդ մարմնոցն և զՏօգիսն կորուսանէ և  
բաժին խաւարին առնէ : Ք՛ոյղից մտէլ և զորս կախարդանօք դիւ-  
թութեամբ և դեղատուութի՛ն և այլ զանազան չարեօք սովօր է կո-  
րուսանել զձօնիցան և զձօնեալան :

Եւ արդ՛ յայսմ՛ ամենայնէ այնորիկ զերծանին • որք միշտ ընդ

հովանեաւ պատուական և սուրբ խաչին պահպանին • և զօրութիւն շորին՝ յերևելի և յաներևոյթ թշնամեաց ճողոպրին • Որն և մեծին հոստանդիանոսի երևէր նշան խաչին և յաղթութիւն շնորհէր • և ամենեցուն նոյնպէս լինի • Սասն որոյ և արժանի լինին աստ և ՚ի հանդերձեալ երկրին հաստացեալք անդադար փառաւորել զսուրբ զերրորդութիւնն • այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից • ամէն •

Յորդորակ :

**Ե**ւ արդ՝ զայս ամ գիտելով սիրելիք բազում փոյթ յանձին կալցուք ընդ հովանեաւ կենսատու խաչին պահպանել յերևելի և յաներևոյթ թշնամեացն • զի արժանի լինուք արժանապէս փառաւորել զարժանին ամ փառաց և պատուոց զհայրն ամենակալ և զորդին միածին և զհոգին ճշմարիտ • Եւ այս որն լինի •

Յորժամ արժանի լինիք ամ արթնութիւն պահել զպահպանութիւն ոգւոց մերոց , և զպատմունքսնն որ յաւազանէն՝ ոչ աղտեղացուցանել • Յորժամ զգուշացուք դորձոց բարեաց և առաքինասէր վարուց • և տքնութիւն և աղօթիւք արժանի լինուք բերել յանձին զնմանութիւն անանբնոցն դասուց • Յորժամ միմեանց հնազանդեացուք , զմիմեանս լու համարել քան զանձինս • և աղօթից ստեպ կացուք • և ՚ի պէտս սրբոց հաղորդեացուք • և օտարսիրութիւն զհետ երթիցուք • զաղքատս կերակրելով , զմերկս զգեցուցանելով , ՚ի տես հիւանդին ոչ դանդաղելով , որբոց և այրեաց ունկնդիր լինելով , նեղելոց զրկելոց և կարօտելոց օգնականութիւն և կարեկցութիւն սունելով և զպէտս ընելով , և զպաղատանս վտանգելոց անտես ոչ սուներով , յընտանեաց զուակի զակն ոչ դարձուցանելով , ոչ հատուցանել չար փոխանակ չարի , կամ բանբասանս ընդ բանբասանաց , ոչ տալ թոյլ մտանել արեգակն ՚ի վերայ բարկութեան , այլ թէ հնար իցէ ընդ ամ ումէք զխաղաղութիւն ունել , և զանձն օրինակ տալ գործոց բարեաց և անարատ վարուց առ ամենայն որ :

Եւ ընդ լացօրս և խնդալ ընդ խնդացօրս • և գթալ առ ամենեսեան , և սէր սուրբ ունել ընդ ամ որ , և սերտիւ սիրել և գթալ ՚ի վերայ վտանգելոց , և զմիմեանց բեռն բառնալ • Որ բանիւք և եթ սիրելով , այլ արդեամբք և գործովք կարեկից լինելով առ ամենեսեան , և բախտելով զկարեոր պէտս գթով և սիրով :

Որպիսի որ արբահամն էր աղքատասէրն՝ օտարասէրն , որ ուխտ դնէր անձինն առանց հիւրի ոչ ճաշակել • Որ ընդ օտարացն



և զամբ ընդունէր • որ զսէրն նոյ առ սիրելիսն նոյ ցուցանէր • մանաւանդ թէ առ նմանն և փոխանորդան : \* Որովհետեւ արարիք ասէ միում 'ի փորրկանցս՝ ինձ արարիք :

Որպիսի որ յորն էր , որ զինչսն ոչ անձին և եթ ունէր , այլ հասարակաց : Որ ոչք էր կուրաց , և ոտք կաղաց , հանդերձ մերկոց , և կերակուր կարօտելոց • որ յարկ էր հանգստեան աշխատելոց , և յանձանձիչ վշտացելոց : Որ ողորմութեան աղբիւրն էր և համբերութեան ապացոյցն • որ զինչսն յորժամ ունէր՝ ոչ իւր ունէր , այլ իւր զտէրունի բարւոր մատակարարէր : Եւ յորժամ յընկեցն վերպէր , իբրև զբեռն ծանր 'ի բաց եղեալ համարէր • որ ընդ ընչկցն և զանձն ևս տայր սիրոյն նոյ փոխարէն • և համբերութեամբ տանէր եօթնամեայ վշտացն և նեղութեցն : Եւ զի ոչինչ պատուական նոյ սիրոյն փոխանակեաց , ոչ զինչս , ոչ զորդիս , նաև ոչ զանձն ևս : Ս ասն որոյ վերստին այսրէն կրկին ընդունէր զամբ • և 'ի հանդերձեալն զյաւիտենական կեանս ժառանգէր :

Որպիսի որ մովսէսն էր հէզն և հանդարան յամենայնի • որ և յնոյ բերանոյն վկայէր \* Ճառայն իմ մովսէս հէզ է քան զամբ : Ի նդ որում և բերան 'ի բերան խօսէր ամբ • որ և յայսինի ցուցանէր զհէզութի ստելով , \* Տէր՝ եթէ թողուս զյանցանս ժողովորեանս , թող , ապա թէ ոչ , և զիս ջնջեա՛ 'ի դպրութե՛ քումնէ յոր գրեցեր : Որ և վասն անձին արհամարհանաց ոչ ցամայոյր , այլ խոնարհութե՛ տանէր • իսկ վասն փառացն նոյ՝ բազում բարկութե՛ վրէժխնդիր լինէր : Ս րինչ զի զտախտական որ յնոյ՝ խորտակէր , և զյանցաւորսն սատակէր • զբարւոր նախանձն նոյ՝ նախանձէր , և արարչին հաճոյ գտանէր , և աւնոյր վերստին զօրէնսն • զհիւանդացեալ ժողովուրդն կազուրեցողացանէր , և յերկիր աւետեաց առաջնորդէր յօրինակ փրկչին մերոյ բրիստոսի :

Որպիսի որ դաւիթն էր թագաւորն և մարգարէն և ամահայրն կոչեցեալ • որ համարձակութե՛ սսէր ցած , \* Յիշեա՛ տէր զդաւիթ և զամբ հէզութի նորա : Ոչ զմի կամ զերկու կամ զիւս աւելի , այլ զամբ • զի ոչ ստէր որ ասէրն , \* Կորուսանէ՛ տէր զամենեւեան որ խօսին սուտ : Եւ յայտ յերացն սաւուղի է և յաբխողովմայ և 'ի նախանայ յորժամ յանդիմանէրն : Օ ի ոչ ընդդէմ դաւնայր իբր զթագաւոր և հակառակէր ստելով՝ \* Ո՞վ դու և ուստի՞ յորոց արժանաւորաց , և կամ թէ քեզ զի՞ փոյթ է : Ոնոյ սովորութի է մարդկան ասել 'ի ժամոռ յանդիմանութեան , որ անմտաբար վարին յայնպիսի իրս :

Բ.ՏԼ զինչ, զանձն օրինակ բարեաց տայր ամ՝ զղջացելոց ։ յոգ-  
 ւոց հանելով և տակելի մեղոյ տեառն ։ որով թողութիւն գտանէր ։  
 զի սաէր մարգարէն ։ \* Եւ տէր անցոյց զբէ զմեղս բո ։ Բայց ոչ  
 յոնհոգս լինէր վասն այսորիկ ։ այլ հանապաղ արտում գնայր և  
 արտասուօք զանկողինան թանայր ։ ՚ի մէջ գիշերի խոստովան լինէր  
 իրաւանցն նոյ ։ Ո ստատիկեր ՚ի հեծութեանն ։ և ՚ի մահիւն հանգս-  
 տեանն լայր գառնապէս ։ Օ միտիր փոխանակ հացի ճաշակէր ։ և  
 զամբէլին արտասուօք խառնէր ։ և անփիթար միշտ լինէր ։ մինչև յի-  
 շումն նոյ ուրախ վնա առնէր ։ Թէ որ ստեղծն ։ նոյն և զթացի հայ-  
 րաբալ ։ Արոյ ՚ի գառնագոյն մշտամբերու թեկն նեխելն վերըն և  
 փտելն յինքեան ։ և ոգին նորոգէր ՚ի ցաւոց մարմնոյն և լոյս մտացն  
 վերստին արժարծէր ։ և շնորհք մարգարէութեանն ՚ի նմն մնայր ։ և  
 օրինակ բարի ամ՝ զղջացելոց լինէր որոյ սասցաւ ։ զի ամ՝ հաշակէր ։  
 և ընդ աստեացս և հանդերձելոցն լինէր ժառանգաւոր ։

Որպիսի որ և պողոսն էր ։ անթմն ընտրութէ ։ տեսողն դրախ-  
 տին փափկութե ։ փողն տարսօնացի ։ քարուն հեթանոսաց ։ Ար ընդ  
 ամենայնի ամ՝ լինէր ։ որ սաէր յայտնապէս ։ \* Ա՞հ Եւանդանայ և ես  
 ոչ հիւանդանամ ։ ո՞ գայթակղին և ես ոչ տապանամ ։ Արոյ զայրու-  
 նայր հոգին յորժամ յանասուածութե զբք տեսանէր ։ և ՚ի զանա-  
 զան հնարս մտանէր զփրկութի մարդկան շահէլ ։ Եւ սկսեալ յե-  
 րուսաղէմէ մինչև ՚ի լեւրիկէ լի առնէր զաւետարանն ։ աշխատասէր  
 ոտիւքն անձանձիր միշտ ընթանալով ։ Ար և գորովագութ սիրով  
 գողայր միշտ ՚ի վր աշակերտելոցն ։ և ՚ի ձեռն գրոյ զյողոողեալան  
 վերստին միշտ հաստատէր և կաղվէր ժողովուրդ սեպհական նոյ ։  
 նախանձաւոր գործոց բարութեան ։ Եւ զայլապէս աւետարանօրն  
 արտաբոյ իւրոց քարոզելոցն՝ նշովից մասնէր ։ Թէ և երկնային որ լե-  
 նէր հրեշտակ ։ Ար և բրձիւք և սնդրէր նոյով լինել ՚ի բնէ վասն  
 մարմնաւոր ազգականացն ։ Թէ հնար լինէր փրկութեան հասանիլ ։  
 Բ.ՏԻ՝ զոր երկնի և երկրի և աստեացս և հանդերձելոցն և Թէ այլ  
 արարածք լինէր՝ անհնար էր մեկնել ՚ի սիրոյն բի ։

Յաղագս որոյ ՚ի հրեից հնդիցս քառասուն՝ միով պակաս գա-  
 նէր ։ երկոց ձողկելով և միանգամ քարկոծ լինելով ։ և զտիւ և  
 զգիշեր մի՝ յանդուռա ծովու տառապէր ։ Ար զբրիստոսիան վասն  
 բի սիրէր և վասն նոցին չարչարիւր ։ և զպակասութի չարչարանացն  
 բի ՚ի մարմնի իւրում միշտ ընոյր ։ Արոյ աշխարհ ՚ի խաչ բեւալն էր  
 և ինքն աշխարհի և բիւ միշտ խօսէր և զհոգին սուրբ ՚ի խաչ բեւալն էր  
 յինքեան սաէր ։ և զամենեսեան կտակէր զի հանգոյն ինքեան ժուժ-  
 կալեցին ։ և կուսանայ զհաճոյից տեառն միշտ հոգաւ սաէր ։ որ

կապիւր վասն քի յերուսաղէմ, և ՚ի մեծագահն հոօմ արձակիւր .  
 և հրէիցն ահագին տագնապ արկանէր, և ինդուօթի մեծ հաւատա-  
 ցելոց ընձեւէր: Աս և զյորդիս ևս անդ շահէր, և յառագասան  
 վերին հրաւիրէր, յառագաստ նը փեսային և ՚ի հարսնարանն ան-  
 մահ բանին: Նդ որս և զինքն անդ կապողին ընդ մարմնոց ընծայէր .  
 որ յառաջ բան զլինիլ աշխարհի ընտրեալ զինքն ասէր: Աւ յաւեո  
 ևս արձակողին ըստ նախահօրն պարտեաց, և զարձեալ բարձրագոյն  
 կապողին անապական մարմնով յաներեկի աւուրն:

Արդիսի որ էր և գլուխ առաքելոցն պետրոս . փակողն երկնից  
 արքայութեանն: Ար ոչ ՚ի մարդկանէ կամ ՚ի հրեշտակաց առնոց ըզ  
 տեղեկութի որդւոյ, այլ ՚ի հօրէն լուսոյ, և յիրաւի երանութեան  
 արժանացաւ ՚ի քնէ: Այն որ կարերն ասել համարձակ, \* Մէր  
 թողար դժմ և եկար զինի քո: Աւ փոխարէն զդատողականն աթոռ  
 ընդունէր . որ և վէմ անուանեցաւ ՚ի տեառնէ և հիմն եկեղեցւոյ  
 եղաւ . և ջերմեռանդն փափագմամբ խանդակաթ էր ՚ի նէրն քի, և  
 միշտ փափագէր երևմանն նոյ, որ զսխմանն սատակէր վասն նախան-  
 ձու տեառն իւրոյ, և ՚ի հոօմ խաչիւր գլխիվայր, և զքնթացս յեր-  
 կինս ուղղէր ասելով, \* Մի թէ զոր սիրեաց անձն իմ տեսիք: Աւ  
 ճշմարտագէտ ՚ի սէր գառինն վառէր, և փութանակի առ նա հասա-  
 նէր, զանսարա բարիսն ժառանգելով և զկեանս անվախճանս ընդ  
 տեառն իւրոյ:

Սոցին նմանեցո՞ւր և մէք . սոցին հաղորդեցո՞ւր վարուց . զի  
 և պակասն արժանացո՞ւր . զի թէ ոչ աշխատի մշակն . ոչ հնձէ ըզ  
 պտուղն ՚ի դէպ ժամանակի: Այս է ժամանակ գործոց և աշխա-  
 տութեան . այս է ժամանակ սերմանելոյ: Սերմանեցո՞ւր զբարիս  
 մինչդէռ ժամանակ ՚ի ձեռս է . զի հնձիցեմք յաղագայսն զկեանս  
 յաւիտենից:

Պետրոս խաչիւր վասն քի . և դու փոքր ինչ յանձն առ ըզ  
 նեղութիւն մարմնոց և զարհամարհանս վասն սիրոյն տեառն:

Պօղոս ճնշէր զմարմինն և շարշարէր . դու գոնեայ չափաւ որ  
 մի աղօթեա:

Ղաւթի լուանայր զանկողինն արտասուօք և մխիթ ճաշակէր .  
 դու ստիպուք բաւականացիր, և թաց զաչս քո արտասուօք և  
 հեծեծեա:

Սովետս ՚ի վերայ թշնամեացն աղօթէր և թողութի ինդրէր .  
 դու գոնեայ մի ումէր չարի չար հատուցանէր, կամ փոխարէն  
 բանբասէր:

Յոր հասարակորդ տունէր զաղքատն ստացուածոցն , և նեղութեանցն և վշտացն ուրախութիւն տանէր . դու գոնեայ սակաւինչ կարկառեա կարօտելոցն , և ՚ի վիշտս մի տրանջար :

Երբհամ ընդ հաւատոցն և գործքն ունէր բարի՝ զօտարասիրութիւն և զհիւրընկալութիւն , և հող և մոխիր զինքն կոչէր . դու և զէկեալ հիւրան մի դարձուցանէր , և մեծամտութիւն մի ամբարտաւանէր . այլ ընդ խոնարհս զեջանիջիր :

Եթէ զայս տունիցես և զսոցին նմանս , ճշմարտապէս ծառայոց գտանիցիս և ՚ի բարւոյ մասին լինիցիս . և ընդ սրբոցն դասուց զանսպառ բարինս և զանվախճան կեանս ժառանգիցես :

Արոց լիցի ամենեցուն մեզ հասանել , շնորհօք և մարդասիրութեամբ տեսուն մերոյ և փրկչին յի . քի : Բնդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէ փառք ի շխանութիւն և պատիւ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս . յաւիտենից , ամէն :

Արդաւորութիւն հասարակաց աղօթից խաղաղականի ժաման , որ կատարի ՚ի գեան հոգւոյն ոյ . Եւ ասի՝ Օրհնեցից զտէր յամ ժամ , և այն որ ՚ի կարգին :

Յաղագս խաղաղականին աղօթիցն :

Եւսկ հանգստեան ժամու աղօթքն վասն զի կարգեալ է առ ՚ի զմեզ զգաստացուցանել , և պարտիմք ուշիմ մտօք առ ՚ի խորս նայիլ . զի կարօղ լինիցիմք օգտել առ ՚ի գրելոցն յիշատակէ :

Աւարդ՝ հանգստեան կոչի աղօթք , և խաղաղական ասի , վասն զի օրինակ է ի ջանելոցն ՚ի գուբ գերեզմանին : Աւ որպէս ՚ի մահիճ ի ջանելով հանգչիմք յաշխատութեց և խաղաղանամք ՚ի խորհրդոց , զմանտութի բերեմք զմահուն հանգստեան և զխաղաղանալն ՚ի զբաղմանց կենցաղոյս : Ասան որոյ և յորժամ ՚ի մահիճն ննջիցեմք , պարտիմք զմտաւ ամեւ ասելով , ո՞ գիտէ թէ օրինակս ՚ի ճշմարտութիւն փոխեցի . և այլ ոչ յառնեմ յանկողնոյս , այլ փոխիցիմ ՚ի ննջմանէս ՚ի ննջումն մահու : Այնպէս և ՚ի յառնելն յիշել զմահն ասելով՝ ո՞ գիտէ թէ յերեկոյն հասանեմք թէ ոչ :

Բայց և զայսմանէ ոչ է պարտ զանց առնել, զի եկեղեցիք հայաստաննայց բազում ինչ թիւրեալ են ՚ի սահմանէն, և սպառեալ ՚ի կարգաց, զի զարեազալին աղօթման ՚ի յառաւօտին յարեն և միայար տողեն միջոց ոչ առնելով, և շատք ևս այն են՝ որ ՚ի գիշերոյն սաղմոսն յարեն: Գառաջ քան զօրհնութիւնն և զթագաւորքն՝ ստեն, Եղեցի անունն ան օրհնեալ, և յարեւելից, և զառաւօտու զաղօթս: Եւ սպրս սկսանին զօրհնութիւն և զթագաւորքն և զհարցն, և յոյժանմատբար է այս և անկարգ:

Իսկ զխաղաղականին աղօթքն՝ յերեկոյնն ժամն յարեն, կամ յառաջ ստեն քան զերեկոյնն ժամն զինի սաղմոսին ասելով՝ ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջն քոյ: և թէ՛ Շնորհեա՛ն անխուով զգիշերս: և թէ՛ ՚իսաղաղացն զմիտս ՚ի գիշերիս: և թէ՛ Պահեա՛ն յերկիւղական գիշերիս: և թէ՛ Փարատեա՛ն զխաւարային խորհուրդս: Եւ սպրս ասեն, Ես առ ան՝ կարդացի և լուա ինձ յերեկոյս: Ար յոյժ ծաղու է արժանի:

ԻՍԼ այս ան՝ ՚ի տարտամութէ լինի և յանփոյթ առնելոյ, ՚ի հողւոց և ՚ի զբաղմանց կենցաղոյս, և ՚ի միշտ զերկրաւորս խորհելոյ քահանայից, և աշխարհական վարուք վարելոյ: Օ՛հ շատք ևս այն են, որք ոչ գիտեն թէ յետ խաղաղականին աղօթից՝ այլ չէ՛ արժան ընդ ումէր խօսել: ԻՍԼ ահիւ և թողութիւն պարտ է ննջել, և յանկողնին հանդես առնել մտացն թէ ՚ի մանկութիւն մինչև ՚ի նոյն ժամն ինչ մեղք է գործեալ, կամ յանցեալ աւուրն ինչ է սխալեալ բանիւ կամ գործով և կամ խորհրդով, և զզջալ յանկողնին: ԻՍԼ մեք յառաջիկայս գարձցուք բան զոր հանդերձեալ էմք տեսանել էթէ տէր ուղղեսցէ ՚ի շահ և յօգուտ ըողաց, և ոչ թէ՛ ՚ի պարծանս անձին, կամ յարժանաւորութիւն ինչ սպաստան լինելով:

Եւ արդ՝ կարգեալ է ՚ի սկիզբն խաղաղականիս աղօթից բան ըստ պատշաճի որ ասէ,

Տէր անձ փրկութեան իմոյ ՚ի տուէ կարգացի և գիշերի առաջն քոյ: ՚ի սկիզբն բանիս խոստովանի զնշխանական աշխուժին անց, զի տէր է փրկութեան և անձ ոլորմութեան, որ միշտ խնամե՛ զարարածս իւր, և ունինդիր լինի պաշտամանոց որք կարգան առ նա ՚ի տուէ և ՚ի գիշերի, որոց ասէ, ՚ի տուէ կարգացի և գիշերի առաջն քոյ: ՚ի տունջեան ասէ կարդացի վասն քաւութեան մեղաց իմոց, և սոյժմ ՚ի մուտ գիշերոյս զնոյն պաղատիմ: Եւ թէ՛ որ արև զբարեգործութեան ժամանակիս ասէ, և գիշեր յորժամ ՚ի մեղս ինչ շարտիցի՛ն՝ ոչ մեղանչէ: Օ՛հ թէ՛ որ յորժամ առողջ եցէ հողւով վատահոթութիւ կարդաց, սպրս և ՚ի մեղանչելն չէ՛ պարտ յուսահատիլ և կատիլ յաղօթից, ոյլ միշտ պաղատիլ առ տէր զի թողութեան

Հասցէ : թիւիպէտ և մեղաւորին ասէ ամ՝ \* Ընդէջը բնաւ պատմեա  
ղորդարու թիւ իմ : Այլ այս վասն զարհուրեցուցանելոյ է և յարգաշ-  
խարու թիւ կոչելոյ : Այլ զի բերան է քահանայն ժողովողեանն՝ ընդ-  
ամենեցուն աղօթէ և վասն ամենեցուն պաղատի . և ասէ ,

Այոցէն աղօթք իմ առաջն քո տէր . խոնարհեցի ունին քո  
ի խնդրուածս իմ : Արն առ կուռնէլիոս ասացաւ թէ՝ \* Աղօթք քո  
և ողորմութիւնք ելին յիշատակաւ առաջն այլ : Այլ մարգարէն ասէ ,  
\* Զհեծութիւ կապելոց լուաւ տէր : և թէ՝ \* Ի նեղութիւ կարգացի  
առ տէր և լուաւ ինձ և եհան զիս յանդորր : Օ այս հայցէ բան  
աղօթիցս . և ընդ փառաբանութեանն և զօրհնութիւն մատուցանէ  
սուրբ երրորդութեանն :

Այլ ապա սկսանին սարմոս չորք ըստ քառանիւթեայ բնութեւ .  
իսկ ոմանք հինգ սարմոս ասեն ըստ հինգ զգայութեանցս մարրու-  
թեան , և ըստ նախարուութեան գիշերային սարմոսացն : Այլ է առա-  
ջն որ ասի այս , Ի կարգալ իմում լուաւ ինձ ամ՝ յայսմ կենաղոյս ,  
ըստ արդարութեան , զի սասանայի չեմ ինչ մեղուցեալ : Այլ թէ՝  
Մատուցէք պատարագ արդարութե զբանականն պաշտօն : Տէր մի  
սրամտութեամբ քով յանդիմաներ զիս վասն մեղաց իմոց : և Մինչև  
յեբբէ տէր մոռանաս ի կենցաղս յայս , որ է ժամանակ ապաշխարու-  
թեան : Այլ այլ մոռացօնք ոչ է . այլ վասն անտես առնելոյն ասէ :  
Մինչև ցեբբէ բարձրանայ թշնամին ի վերայ իմ : Օ ի յորժամ դու  
վրէժ խնդիր ոչ լինիս չարին , նա մեծաբանէ ի վերայ իմ : Այլ որոյ  
Դատ արա ինձ ամ՝ փրկելով յազգէ որ ոչ է սուրբ ի բանս իւր :  
Այլ զսուրբս ասա՝ իրաւ պարտ է իմանալ : Առաքեալ տէր զոչս քո՝  
որով զերծայց ի արտմութեանց և խոստովանեցայց զբեղ փրկիչ :  
Աստուած յօգնել ինձ նայեաց , զի առտնց քո չեմ բաւական յար-  
թել չարին . իսկ թէ դու օգնեսցես՝ թշնամին ամուսնէ . և որք զբեղ  
խնդրեն՝ ցնծացեն , զանուն քո մեծացուցանելով ի փրկէլն քո :  
Իսկ էն ոմանք որ ասա՝ և տուր զորութիւ ասեն , և պատշաճաւոր է :  
Օ ի խաչին յիշատակ յաճախ աստ լինի . և պարտ է ասել զի երախ-  
տիք նշանին յայտնին և ամ՝ փառաւորի փառաւորեալն յաւիտեան :

Յաղագս երդոյն , զոր զնի սաղմասացդ եղանակին :

**Շ**նորհեա՛ մեզ տէր 'ի գիշերն զէրկնային զխաղաղութիւնս  
քո . և պահեա՛ զմեզ 'ի պատրանաց թշնամւոյն ամենա-  
յաղթ զօրութեամբ սուրբ խաչն քոյ :

**Օ**ր խոստացաւ առաքելոցն , \* Ջխաղաղութի՛ զեմ՝ տամ ձեզ :  
Եւ խաղաղութիւնն նոյ 'ի վեր է քան զամ՝ զինաս և զեմնացումն . զոր  
ինդրէ բան աղօթիցս տալ մեզ՝ ոչ եբբ զփոխարէն կամ զվարձ , այլ  
եբբ զձրի պարգևք շնորհել : Եւ 'ի գիշերն ասէ . զն 'ի գիշերն  
առաւել փնասէ զմեզ չարն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ՝ քան 'ի  
առնջեան : Բայտ որում և ատեն յայտ առնէր ասելով առ հրէոյցն ,  
\* Սյա է ձեր ժամ և իշխանութի՛ խաւարի : Բայլ և գիշեր՝ զկեն-  
ցադս կոչէ . յորում առաւել զօրանայ չարն առ 'ի մարտնչիլ , օժտն-  
գակ ունելով զմարմնոցս մերոյ տկարութի՛ և զվայրաբարչ բնութի՛ :  
Սան որոյ բազում արթնութեան պէտք են մեզ , բազում արթու-  
թեան և աղօթից . զն խաղաղութի՛ն նոյ պահպանեալ լինուք 'ի պատ-  
րանաց թշնամւոյն , զզօրութիւն սրբոյ խաչն ունելով զօրավիզն  
և ամբութիւն :

**Տ**եր անձ փրկութեան իմոյ 'ի տուէ կարգացի և գիշերն առա-  
ջն քոյ : Մացեն աղօթք իմ առաջն քո տէր , խոնարհեացի ունին  
քո 'ի խնդրուածս իմ :

**Օ**ր վերստացն սկիզբն եղ բանիս , զնոյն և աստ երկրորդէ .  
զառաջինն՝ եբբ և զնախազրութի՛ն և զհիմն շինուածոցս , իսկ զերկ-  
րորդս՝ եբբ և զհաստատութի՛ն և զենթակոյ գործոցս :

**Լ**իկեսցէ առ մեզ տէր պահպան 'ի բէն և պահեսցէ զմեզ  
յամ՝ ժամ : Բայքեա՛ առ մեզ տէր զզօրութի՛ սրբոյ խաչն որ պա-  
հեսցէ զմեզ յամենայն ժամ :

**Օ**ր օրինակ կնիք թագաւորական՝ զգուշութի՛ն և ամբութի՛ն է  
ընչից և երկիւղ գորոց և աւազակաց , պահելով յամ՝ դաւաղաց :  
Բայպէս և նշան երկնուոր թագաւորին՝ դողումն և երկիւղ է սան-  
դարամետականոց , և զէն անբութի՛ն միշտ ընդ գէմ՝ դիւան զնիւն ,  
աներկիւղ պահելով զհաւատացեալս յամ՝ վտանգից հոգւոյ և մարմ-  
նոյ : Արպէս և կայ 'ի վարս սրբոց հարցն եթէ , հրէոյ ոմն՝ միայն  
ագանէր ըստ դիպումածոյ շանապարհի յանմարդաբնակ տեղիս . և  
զարհուրեալ երկնչէր 'ի խաւարաշրջող դիւանոցն : Եւ զմտաւ ամեալ  
եթէ քրիստոնէայքն կնրէն զեմքեանս խաչին և պահպանեալ լի-

նին , և տեսունագրեալ զինքն խաչուն՝ ննջէր : Աւանձա՛ զարհուրեցուցիչ զեքն անդր հասեալ լինէին արհաւիրս սունելով , և հուող եկեալ զնշան խաչին տեսանէին և ճիշ բարձեալ սաէին , եկայք ՚ի զարմացուցնս . անօթ ունայն՝ կնքեալ մտտանեալ . զի հրեայն ոչ ունէր զվիրտութի սուրբ ասաղանին , և անդէն չիբ լինէին զեքն : Ասկ հրեայն տեսեալ զգորութի սրբոյ խաչին սիրանայր . և յարուցեալ յառաւօտուն ընթացեալ պատմէր եղիսկոտոսի քաղաքին և մկրտիւր :

Ասկ ՚ի մարմնական թշնամեաց զի փրկէ նշանն աւրուանական՝ յայտ ՚ի մեծէն կոստանդիանոսէ է և յայլոց բազմաց . որք զօրացան նովաւ և յաղթեցին . և երևելի և հզօր եղէն ՚ի վերայ թշնամեաց : Ասան որոյ զայս գիտելով՝ յիմ՝ ժամու և յիմ՝ իրս խաչուն տմբացուցուք զանձինս , ՚ի նստիլ ՚ի տան և ՚ի գնալ ՚ի ճանապարհի , ՚ի ննջել և ՚ի յառնել , ՚ի բանս և ՚ի գործս , ՚ի կերակուրս և յընկելս , և յիմ՝ շարժմունսս . զի միշտ պահպանեալ լեցուք փրկական սուրբ խաչուն :

Վրժանաւորեա՛ ար զերեկս զայս խաղաղութեամբ , և առանց փորձութեան անցն զմեօք . արժանի արս տէր զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով :

Օհ հոսանուտ ունիմք բնութի և փորձիչն միշտ դարմանմուտ լինի առ ՚ի գայթակեցուցանել զմեզ ՚ի զանազան փորձութիւնս և ՚ի մեղս . բան այնմ , \* Ռոսին ձէր ստտանայ իբրև դառիւժ գոչէ . և խնդրէ թէ զո՞ կլանիցէ : Աւ մեք թէ միշտ պաղատիմք առ տէր խնդրելով զօգնականութի , փրկիմք ՚ի մեքէնայից նորս և ՚ի խաղաղութեան վայելելիք :

Սնդ մեղ տէր անձ , գիտացէք հեթանոսք և պարտեցարուք . զի անձ ընդ մեզ է : Աւ լուարուք զայս ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի . զի անձ ընդ մեզ է :

Հեթանոսն ազգ կոչի եթէ դիւսց և եթէ մարդկան : Աւ յորժամ զանձ ընդ մեզ ունիցիմք հաւատովք և բարեգործութեք , անձ հակառակորդ թշնամիքն ՚ի պարտութի մասնին . և ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս երկրի լսելի լինին սրանչէլք բարեբարբն այ : Աւ ծանիցեն ճանրատպէս թէ՛ \* Մերձ է ար առ այնտիկ որ մաշեալ են սրտիւք . և զմտնարհս հոգւով՝ կեցուցանէ : և թէ՛ \* Չկամն երկիւղածաց իւրոց ասնէ տէր . ալօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսս :

Աւ հզօրացեալքդ պարտեցարուք . զի անձ ընդ մեզ է : Աւ զի թէպէս և դարձեալ զօրանայք , դարձեալ ՚ի պարտութի մասնեսս :



Ղեք • զի անձ ընդ մեզ է : Այլ զխորհուրդն զոր խորհրդիք՝ խափանէ  
 անձ • զի անձ ընդ մեզ է : Այլ զբանն զոր խօսիք , մի մնացէ առ ձեզ •  
 զի աստուած ընդ մեզ է :

Ազգամոգիծիք և զանազանք են խորհուրդք մարդկան առ ՚ի նենդեւ ,  
 և ևս առաւել զիւսաց • որոյ ստէ մեծն ևագրիոս եթէ՝ \*Գլեք  
 միմեանց հակառակ են , և ՚ի մարդկան կորուստ միաբանին : Եթէ՝  
 \*Գլեն պոռնկութիւն հակառակ է զիւրին հպարտութեան • զի զոր սա  
 շինէ , նա բակէ զհպարտութիւնն յընկենդուն ՚ի պոռնկութիւն :

Այլ արդ՝ եթէ դեք և եթէ մարդիկ անյարգաբար միշտ խոկան  
 ՚ի նենդեւ որք յայնոսիկ են պարագայէ : Այլ թէպէտ բազում անգամ  
 յողթահարին , ոչ երբէք դադարին ՚ի խորհրդից զգար • այլ  
 դարձեալ հնարս իմանան թերեւս կարացեն դամագիւտ լինիլ , որոյ  
 և ՚ի սեռնայ կղզւոյն է յայտ , մն որոյ և զերգս ասի երգել ՚ի յայտնի  
 դաւաճանի թշնամեացն : Այլ զոր օրինակ մեծ և կարծրագոյն  
 վէճ՝ յէզր ծովու հաստատուն իցէ , և բազմագիծիք ալեաց յարուց-  
 մունք ոչ կարիցեն սանանել զնա • այլ հաստատուն կայ և մնայ յան-  
 շարժութեան : Այսպէս որք հաւատով յան իցեն խարսխեալք , և  
 զշինուած առարինութեանն ՚ի վերայ հաստատուն միմին հաւատոյ  
 իցէ արկեալ , թէ և անձ յողորմունք չարաց ՚ի մարդկանէ և ՚ի  
 զիւրաց մարտաիցեն , պարտաւորեալ դոցին : Այսպէս զգուշանալ  
 պարտ է ՚ի հաճոյսն նոյ որով փրկութիւն դասին • իսկ եթէ և երբեմն  
 սրգարք մատնին ՚ի վիշտս և ՚ի նեղութիւն , և այն ևս ՚ի թոյլ առոյ և  
 ՚ի խնամոցն նոյ է վասն բազում իրաց :

Այլ զի թէ փոքր ինչ կատեալ լինին արդարք յառարինութիւն  
 և կամ մեծամեծալ ՚ի գործս բարիս , և թոյլ առոյ անձ գալ փորձու-  
 թեանց ՚ի վերայ այնպիսեացն զի զգաստացին : Այլ է՝ զի մատնէ  
 անձ երբեմն զարս արդարս ՚ի փորձութիւն վասն առաւել սիրոյ և  
 մտերմութեան • զի երևելի լինին յերկրի՝ և յերկինս պայծառաս-  
 ցին • որոյ արբահամ , յոր , և դաւիթ , և այլք բազումք ՚ի սրբոցն :

Քանզի յերկրիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք և ոչ խոռովեցուք •  
 զի անձ ընդ մեզ է : Այլ զտէք անձ մեր փառաւոր արասցուք և նա  
 եղեցի մեզ յերկրիւղ • զի անձ ընդ մեզ է : Այլ յուսացեալ եղեցուք  
 մեք ՚ի նա՝ և նա եղեցի մեզ ՚ի սրբութիւն • զի անձ ընդ մեզ է :  
 Այլ յուսացեալ եղեցուք մեք ՚ի նա՝ և նա եղեցի մեզ ՚ի փրկութիւն •  
 զի աստուած ընդ մեզ է :

Այլ յուսայ ՚ի տէք ստէ մարգարէն՝ իբրև զլեառն սիօն ոչ սա-  
 սանեսցի • զի լերինք շուրջ են զնովու հրեշտակաց բազմութիւնք և  
 տէրն հրեշտակաց : Այլ ոչ թողու զգաւաղան մեղաւորաց ՚ի վիճակս

արդարոց : վասն որոց աներկիւղ միշտ լինին ՚ի յարեաձեցից թշնամեաց  
 և անխառով խաղաղութիւն վայելեն ՚ի սէրն իւր : Եւ առարեալն ասէ :  
 \* Յոյս որ տեսանի՝ ճէ՛ յոյս : այլ որ առ յապաց ակն ունէրի է , և ՚ի  
 դէպ ժամանակի հանգերձեալէ կատարուան առնուլ : Օ ի թէ ոչ  
 յուսայ որ վարձուց հատուցուան ընդ ունել ՚ի կատարածի , առա-  
 ջարկութեան բարեաց վայթ ոչ կարէ առնել :

Օ ի թէ ոչ յուսայր արէլ , հաճոցական պատարագ զինրդ  
 մտտուցանէր իւր , և ետովս յուսով կոչէր զանողնն իւր յօգնականութի :  
 Եւ յայէս և նոց զամս հինգ հարիւր կուսութիւն այսու յուսով ան-  
 ցուցանէր . վասն որոց հաճոց գոթու իւր և երկրորդ աշխարհի սկիզբն  
 եղև : Կոչնդէս և աբրահամ ՚ի յոյսս յոյս զորդին իւր պատարա-  
 գէր : Կոչնդէս և հոյր աղագաց բաղմաց կոչելու , և երկրմամբ իւր զօրհնութիւն  
 ժողովուրդի : Սովորէ և յոր հոյր համբերութեան գտանէր , օրի-  
 նակ բաղմաց լինելով . և յոյ վիսայեր յայտնի լինիլ ամենեցուն :  
 Եւ յուս յուսով և մոխէս զտէր ապաւենն կարգայր . և սովորէ օրի-  
 նադրէր ժողովրդեանն խորայելի . նաև դաւիթ հալածական լինէր  
 ՚ի յոյսս յոյս . և մորգարէքն ամենայն յազգատահմէ իւրեանց նեն-  
 գեալք լինէին :

Եւ զինչ է ինձ երկայնել զբանս . առարեալքն սովորէ քարո-  
 ղէին ընդ տիեզերս ամ , ստեփաննոս քարկոծիւր , և վիսայն ամ նա-  
 հատակէին ՚ի յոյսս յոյս : Եւ զոր օրինակ հուր՝ զպաղ ՚ի բաց մարբէ  
 յոսկուց և սրբէ զնա , այսպէս և յոյսն որ առ ամ և համբերութիւն  
 ՚ի վիշտս՝ զոգիս մարդկան մարբէ և սրբէ և փրկութե արժանացու-  
 ջանէ , սիրելի և մտերիմ ծառայ իւր գործելով : Կաև յոյսն անսահ-  
 ման և բացարձակ իմն է և ընդ իւր երկարաձգի . զի որբան է ամ , է  
 և յուսալ ՚ի նա : Եւ որպէս զամ ինչ զոր տեսանէ որ զչափ և զձե  
 առնու և ՚ի միտս իւր կշռէ զորքանութիւնն , իսկ զորս ոչ տեսանէ՝  
 անպարոհնակելի մնայ և յանբաւս աձէ :

Եւ յայտնի իմն և զոյսն է տեսանել : զի որբան մտօք ոչ պու-  
 րունակի , յիւս բարձրադոյն աձէ և օր ըստ օրէ պայծառանայ : Եւ  
 յոյս երբէք զկայ ոչ առնու կամ մտօք միակի , ոչ սոս և ոչ ՚ի հան-  
 դերձեալ աշխարհին : Եւ յորբան է ամ որից ասացաւ , է և յու-  
 սով բարեաց ակն ունել ընդ ունել յատուածոց և սոս և յանվախձան  
 կեանսն , հրեշտակաց և մարդկան և ամ բանական բնութեանս :

Օ ի միշտ սրբէ և պայծառացուցանէ և ամարեալս գործէ , յա-  
 ուաջողէմս առնելով միշտ ՚ի ստան :

Եւ ասչաւասիկ ես և մանկուհի իմ զոր ես ինձ ամ . զի ամ  
 ընդ մեղ է : Օ որ օրինակ մարմնաւոր ծնունդքն մանկուհի կոչին

Ծնողաց, և պարծինն նորօր ՚ի մէջ մարդկան . և ամ ուրեք յիշեն և խրատանան և ՚ի բազմաց երանին : Օ ի ՚ի հինն յօրհնութ մասին եդ ամ զորդէ ծնութիւնն . և բարգաւաճեալ կոչեաց պատուարս երևեցուցանելով : Ըստ և որք հոգևոր ծննդեամբն են պրանչացեալ, հրաշալի երևին ՚ի մէջ մարդկան և գովելի առաջնայ . և համարձակութբ ասեն՝ Ահա ապիկ ես և մանկուկ իմ զոր ետ ինձ ամ : Արդես առարեալ պարծանս իւր կոչէր զժողովուրդսն : \* Չի ամ սուրբ բարիք և պարգևք կատարեալք յայ շնորհին մարդկան ըստ առարելոյ : \* Եթէ չարչարիցի որ ՚ի ձէնջ ասէ վասն քի՛ այն շնորհք յատուծոյ է :

Եւ որք բանիւ վարդապետութե աշխատին՝ ծնողք կոչին ըստ պողոսի : \* ՚ի քն յն ասէ աւետարանաւն ես ծնայ զձեզ : Ըստ և ծնող ևս ունիմք ՚ի մեզ ինքեանս զմիտս մեր . և մանկուկս զոր ՚ի ձեռն զգայութեանցս յղացեալ ծնանիմք ծնունդ . և եթէ բարի և եթէ չար : Եւ ոչ չար ծնունդքն նախատինք են մարդկան և ամօթ, այսպէս և բարի ծնունդքն պարծանք են սա ամ և առ մարդիկ : Եւ այս շնորհ միայն մարդկան տուալ յայ, աճեցուցանել զբանբար պատուիրանին և զպարգևս շնորհին . զի հրեշտակք զայս ոչ ունին : Ըրգարև ոչ այսպէս արար ամ ազգաց տեր . և զգործս զայս ոչ շնորհեաց նոցա : Ասան որոյ զինչ սացուք տրիտուր տեսան . այլ գոհութբ զանուն նորին օրհնեսցուք հանապազ : Օ ի ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց . այլ ըստ բարձրութեան երկնից զօրացոյց զղորմութիւն իւր յերկրաճս իւր :

Եւ ժողովուրդ որ նստեր ՚ի խաւարի՛ էտես զլոյս մեծ . զի ամ ընդ մեզ է : Եւ որ բնակեալդ էք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու՛ լոյս ծագեսցէ առ ձեզ . զի ամ ընդ մեզ է :

Այժ լոյսն քն որ սաց էս եմ լոյս աշխարհի, ճշմարտապէս ծագեցաւ հեթանոսաց ժողովրդեանն որ նստէին ՚ի խաւարի կռապաշտութեան և ՚ի ստուեր անհաւատութեան, միշտ դեգերեալ և տատանեալ յանձինս, ոչ ակն ունելով երբէք ծագման լուսոյն : Եւ զոր օրինակ՝ որ ընդ ծառով կամ ընդ քարիւ նստիցի՛ ՚ի ստուերի է միշտ և ոչ ծագէ ՚ի նա լոյս արեգականն՝ որքան ՚ի ստուերն իցէ, իսկ յորժամ ՚ի բաց յաննէ և տրտաքս դիմէ առ լոյսն, տեսանէ ճշմարտապէս զլոյս ծագութի լուսոյն : Այնպէս որքան ընդ մահու ստուերաւ նսեմացեալ նստէին մարդիկ՝ ՚ի խաւարի անամուութեան էին, և ընդ մահու գրաւեալ իշխանութեամբ և չարին վիճակեալ ըստ այնմ, \* Մահ հովուեսցէ զնս : Ըստինքն՝ ՚ի չարոջար ծառայութիւն

և վիշտս : Իսկ յորժամ այց արար մեզ արեգակն արդարութեան 'ի բարձանց և լուսաւորեաց զլուսար ոգւոց մերոց . և հրամայեաց դիմել յօժար կամօք 'ի լոյսն անձային . ըստ իւրում տեսան բանի՝ \* Գնացէք ընդ լոյս՝ մինչդեռ զլոյսդ ընդ ձեզ ունիք . զի մի խաւար ձեզ հասցէ : ՚Յայնժամ կատարեցաւ բան հոգեբարոյն . \* Տէր հովուեացէ զիս և ինձ ինչ ոչ պահասցցէ : 'ի վայրի դաւարով անդ բնակեցոյց և առ ջուրս հանգստեան սնոյց զիս : Ասան զի ճմարտապէս բնակիչքս 'ի խաւարի և ստուերին մահու՝ տեսաք զլոյսն մեծ գիտութեան եկեալ հասեալ :

Եւ քանզի մանուկ ծնաւ և որդի տուաւ մեզ . զի անձ ընդ մեզ է : Եւ որց իշխանութի իւր 'ի վերայ ուսոց իւրոց . զի անձ ընդ մեզ է : Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ . զի անձ ընդ մեզ է : Եւ պանչելն խորհրդական . զի անձ ընդ մեզ է : Եւ անձ հօր իշխան . զի անձ ընդ մեզ է : Եւ իշխան խաղաղութեան հայր հանդերձելոյ յաւիտեանին . զի անձ ընդ մեզ է :

Եւ քանզի մանուկ ծնաւ ասէ և որդի տուաւ : Ընտելութեանս վտանգելոյ 'ի նախահօրն յանցանոց՝ մանուկ ծնաւ մեզ մարմնացեալ բանն անձ որդի տուաւ խոպանացելոյս 'ի բարեծնութէ : Եւ զոր օրինակ ծերացելոյ հօր՝ մանուկն ցուպ է և հաստատութի . սոյնպէս և հնացելոյ բնութեանս 'ի մեղս՝ նորոգումն և հաստատութի և մխիթարութիւն տուաւ բնութեանակից և աթոռակից հօր որդին . յոր օրհնեցան անձ ազգ երկրի , և եկեղեցի 'ի բարմորդութիւն աձեաց . ըստ այնմ , \* Բազում եղեն որդիք սկնդկիդ առաւելքան զարամբւոյն : Օր և մարգարէն հիացմամբ ասէ , \* Ո՛րտաւ , ո՛րտես , եթէ երկնեաց երկիր և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն , զասն զի երկնեաց սիօն և ծնաւ զմանկունս իւր :

Եւ որց իշխանութի իւր ասէ 'ի վերայ ուսոց իւրոց : Իշխանութիւն զխաչն է իմանալ . ըստ այնմ , \* Չե էր հօգի , քանզի յս չե էր փառաւորեալ : Եւ զի փառք և իշխանութի զխաչն կոչէ որպէս սասցաւ . զի փառքն այն է՝ որով թշնամին պարտի . և անքն 'ի խաչին պարտեաց զսատանոյ : Եւ յաղօթելն յորժամ ասէր տէրն , \* Հայր փառաւորեալ զորդի քո : Եւ հայրական բարբառն վիպէր , և \* Փառաւոր արարի և դարձեալ փառաւոր արարից : Օ՛ր զոր օրինակ իշխանութիւն իշխանին փառք կոչի իւր և պատիւ , այսպէս և աշխարհակն էառ զիշխանութի 'ի վերայ երկրի ըստ մարմնոց . ըստ մարգարէին , \* Տէր թաղաւորեաց վայելչութի զգեցաւ : Եւ ըստ իւրում տեսան բանին , \* Տուաւ ինձ անձ իշխանութի յերկինս և յերկրի : Օ՛ր անձութեամբն յառաջքան զյաւիտեանս էր իշխան 'ի վր անի . իսկ մարմնով յեա խաչին 'ի վերայ հաւատացելոց էառ զիշխանութի :

**Լ** որ կոչի անուն նորա մեծի խորհրդոց հրեշտակ և սրան-  
 չելի խորհրդակից : Հրեշտակն սպասաւորի անուն է . և զի սպասա-  
 ւոր եղև տէրն մեծի խորհրդոց անօրէնութեանն . վասն որոյ հրեշ-  
 տակ կոչեցաւ մեծի խորհրդոց . ըստ առարկելոյ , \* Որ մտադիւրն ծա-  
 ուայեաց բազմաց , և թէ՛ \* խորհուրդս այս մեծ է , բայց էս ասեմ  
 ՚ի քս և յեկեղեցի : Իսկ զի ասէ , սրանչելի խորհրդակից . զի կամաւ-  
 հօր և հաճութիւն հոգւոյն սրբոյ եղև մտքմտաւորութիւն որդւոյն :  
**Լ** խորհուրդ գալտեան բանին այ՛ սրանչելեօք ծանուցաւ սրբոց  
 մտքարեկին . որոյ ասէր մովսէս , \* Մարգարէ յարուսցէ ձեզ տէր  
 անձն ձեր յերարց ձերոց : **Լ** գաւթիթ , \* Սքանչացաւ գիտութիւն քս  
 յիս : **Լ** ամբախում , \* Տէր զլուր քո լուայ և երկեայ . տէր նայե-  
 ցայ ՚ի գործս քո և զարմացայ : **Լ** ինքն տէրն առ հայր խորհրդա-  
 բար տէր , \* Հայր՝ կամիմ զի որոյ դու յիս և էս ՚ի քեզ , զի և սորա  
 ՚ի մեզ իցեն . զի եղիցուք կատարեալք ՚ի մի : Որ է արդարև սրանչելի  
 խորհրդակցութիւն :

**Լ** անձ հօր իշխան . և իշխան խաղաղութեան հայր հանդեր-  
 ձելոյ յաւիտենին : **Օ** ի իշխանութիւնն այ՛ ոչ է իբր զմտքմտաւոր  
 թագաւորաց , որ երբեմն զօրանան և այլ երբեմն տկարանան . այլ  
 իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենից , և տէրութիւն նորա յազգէ  
 յազգ . զի տէր հօր է զօրութիւն , և տէր կարող ՚ի պատերազմի :  
**Լ** այն զի ասէ ,

Իշխան խաղաղութե և հայր հանդերձելոյ յաւիտենին : \* Չի  
 արար խաղաղութիւն ասէ առարեալն արեամբ խոչին իւրոյ որ ինչ  
 յերկինս և որ ինչ յերկրի : և թէ՛ \* Մինչ թշնամիքն էաք՝ հաշտե-  
 ցաք ընդ այ՛ մահուամբ որդւոյ նորա : **Լ** ինքն տէրն , \* Չխաղա-  
 զութիւն զիմ թողում ձեզ : **Օ** ի քաղցր է խաղաղութեանն իբր և  
 տխրութիւն , և այ՛ համարատակի . զի ինքն անձ է խաղաղութիւնն :

**Լ** հայր ասէ հանդերձելոյ յաւիտենին : **Օ** ի արարչութիւնն ուր  
 զամ արար յոչ էից , յայսպէս և հանդերձեալ յաւիտեանն նմա է  
 որարած : **Լ** արարչութիւն հայր կոչի իբր զմտօղ եղելոցս և յա-  
 ուաջ բերող , յորոց փառաւորի միշտ :

**Լ** զինի այտրիկ զհամբառնալ ձեռացն ասէ սրբութեամբ ,  
 և զխոստովանիլ խորհրդոց բանից և գործոց առ յառաջատեան և  
 ծածկագէտն , և յողորմութիւնն այ՛ միշտ յուսալ և ինդրել ՚ի նմանէ  
 յիշման արժանի առնել , յորժամ վարձս բարեաց պարգևեացէ ար-  
 ժանաւորացն : **Օ** ի և մեզ լիցի ողորմութիւն դատնել ՚ի նմանէ և ՚ի  
 մի բերան փառաւորել զհայր և զորդի և զմք հոգին ընդ վերնոցն  
 դասուց . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

**Յ**անկասցուք և մէք ողորմութիւնց և խնդրեսցուք ՚ի նմանէ զայցեղութիւն ՚ի դէպ ժամանակի . զի մի Տարնարանին արտաքոյ գացուք որոյ յինար կուսանքն . որք եղևելի գասն քան զամենեան : **Օ** ի կուսութիւն ճնշեցին զմարմինս . և նեղութիւն և վշտօք զհեանս անցուցին . և ժուժկալութեամբ պատերազմեցան . և վասն որոյ Տանդիսանային՝ վրիպեալ գասն . և լուսն ՚ի թագաւորէն էթէ ոչ գիտեմ զձեզ . և ողորմելի կենօք զամօթի Տարկանէին :

**Ե**ւ արդ՝ տէր մարդասէր և քաղցր ընդէր ոչ գիտես զմեզ . վասն քո կուսութիւն նահատակեցար . վասն քո աղօթիւք և ճգնութեամբ տարար . ընդէր ոչ գիտես զմեզ : **Վ**էն ստեմ ձեզ ասէ՝ էթէ ոչ գիտեմ զձեզ . ոչ զի ոչ պահեցիր կամ ոչ ժուժկալեցիր և ճգնեցայք ՚ի գործ մշակութեան ձերոյ . զի զոր արարիր գիտեմ սառգիւ և վկայեմ ճշմարտացէս : **Վ**ար ընդէր ոչ գիտես զմեզ սվար բարբար : **Օ** ի կարօտելոյն ոչ կարկառեցիր ձեռն յողորմութիւն . զի զմերկն ոչ զգեցուցիր . զի զորքն և զայրին անտես արարիր . զի վտանգելոյն ոչ ողորմեցայք . զի զՏիւանդս և զբանտարգէլս ոչ տեսիր . զի զօտարս ոչ ժողովեցիր . զի զվշտագնեալն ոչ մխիթարեցիր . զի զկեղեքեան և զբրդգեանն ոչ յանձանձեցիր . վասն որոյ ասեմ էթէ ոչ գիտեմ զձեզ :

**Մ**աղ թշուառութեանն . աւաղ եղևութեանն . աւաղ ողորմելի կենացն : **Օ** պատերազմ պատերազմեցան . զնահատակութիւն նահատակեցան . զճգնութիւն կրեցին . և ՚ի Տանդիսարէն ոչ պահեցան : **Ո**րոյ ՚ի դէպ էր ասել . սվ տէր բարբար և քաղցր և ողորմած . ՚ի զուրկասակեցար . ՚ի զուր սատար զկուսութիւն և զջան ամ արութեան և ժուժկալութեան՝ որովհետե զարդ էար լեւոց :

**Օ** արհուրեսցուք արտեմ . զարհուրեսցուք և աւաւել ևս դողացուք . և մի մուսացուք զսոսկալի կիրս զայրախի . մի ապաստան լեցուք միայն ՚ի պահս և յաղթս . ՚ի կուսութիւն և ՚ի ճգնութիւնս : **Վ**ՍԼ թէ կամիմք ողորմութիւն գասնել յայ՝ պատարար և մէք զողորմութիւն յամ ժամբ : **Ե**ւ զի ողորմութիւն ՚ի սիրոյ գայ յառաջ . և սերած է ճշմարտացէս . և որ արտաքոյ է պղտնութեան՝ օտար է ՚ի սիրոյ . և որ ՚ի սիրոյ օտար գտանի . յայտ է թէ հեռի առնէ զանձն յայ . ապա յիրաւի ոչ գտանէ այնպիսին ողորմութիւն յայ : **Ե**ւ ակէս թէ յոր մի հ կորստեան ընկենու զմեզ անգթութիւն և անկարեկ-

ցուծիւնն • զի զինչ այլ մեծադոյն կորուսա կայցէ քան զօտարանալն յնց և ՚ի սիրոյ նորին :

Իւր զայս գիտելով էզբարբ՝ ստացուաք զողորմութի սուստայէս յամժամ • զի ՚ի դէպ ժամանակի գացուք և մէք զողորմութիւն յողորմածէն նց : \* Չափ բարւոք սսէ թաթալուն զեղուն շարժուն տացին ՚ի գոգս ձեր • և որով չափով չափէք չափեսցի ձեզ : Իսկ ողորմութիւնն ոչ միայն ՚ի գոյից է առնել և ՚ի ստացուածոց • այլ և բանիւ վարդապետութեան խրատական հանձարով : Օր որչափ մեծ է ոգի քան զմարմին • մեծ է և ողորմելն ոգւոյ քան զմարմնոյ :

Իւր զինչ և շնորհէ՛ ի՞ծ մարդոյ • զայն պահանջէ ՚ի նմանէ ՚ի գործէ : Եւ ասն որոյ թէ ըստ հոգւոյ և թէ ըստ մարմնոյ յարժամ ստացուք զողորմութի յօժար կամօք և զուարթառատ սրտիւ • զի և խոստացելոց բարեացն արժանի լինուք շնորհօք : և մարդասիրութի՛ տեառն մերոյ և փրկիչն յի՛ քի : Ինդ որում հօր միանգամայն և հոգւոյն սրբոյ վայելէն փառք իշխանութի և պատիւ • այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից • ամէն :

Երանելոյն խոսրալու՝ սակս Բարզին :

**Ս**խարանութի՛ ամենեքեան գոհացարուք զտեառնէ որ իւրով ողորմութի՛ն առաջնորդեաց մեզ ՚ի գործս տունջեան : Հանապազ ՚ի քարոզութեան զմիաբանութիւն խնդրէ • զի այնպէս առաւել լինի գոհութի և խնդիրքն յնց :

Գոհացարուք զտեառնէ որ իւրով ողորմութի՛ն առաջնորդեաց մեզ ՚ի գործս տունջեան : Բանզի ՚ի նմանէ է իմ գործոց մերոց յաջողուածք և իմ պիտոյից մերոց լըումն : Օր թէ և մեղաւորք իցեմք • ողորմութի՛ն զամ պէտս մեր պարգևէ : Չապէ արեգակն չարաց և բարեաց • և տեղայ արդարոց և մեղաւորաց : Իանայ զձեռն և կերակրէ զամենեքեան քաղցր կամօք իւրովք • այլ և պահպանէ զամենեքեան • ոչ զմարդիկ միայն • այլ և զանասունս :

Բրդ՝ հրամայէ գոհանալ վասն տունջեան գործոյն և պիտոյիցն և առողջութեանցն • ապա և զայն թէ • Շնորհեաց գալ ՚ի հանգիստ գիշերս :

Վարաց սսէ զամենեքեան ՚ի գիշերս խաղաղութի՛ն ՚ի հանգիստ ժամանակս : Բրդաբի մեծ է ողորմութի՛ն նց առ արարածս իւր • բայց առաւել մեծ պարգևք են գիշերոյն հանգիստք • յորում իմ

աշխատեալք և ծփեալք դործովք և հոգւովք , և որք հարկին ՚ի բռնաւորաց յազգի աղգի տաժանմուհս և վտանգեալք բազմադէմ վշտօք , դաշարին յիւրաբանչիւր արկածից • և գիշերայն փոքր մի յիւրաբանչիւր կրից և աշխատութից թեթևացեալ լինին : Վտանդն որն կործեմ , լնալուսին հաւասար բոլոր գիշերացդ վտան այնորիկ ոչ կարգեաց ան , զի մի սովորիցիմք կամայ և ակամայ խոնջիլ յիսա տունջեան գործոցն • այլ յար փոփոխանմբ՝ ՚ի հանգստեանն միութարութէ անդրիկ մնացուք : Այլ թէ կարի հարկս հանդիպիցի ՚ի գործս կամ ՚ի ճանապարհ , զայն լուցումք լուսով աւուրս ինչ • և զհանապազորդեան հանգիստ գիշերոյն մի մոռացուք : Այս բոլ հանգստեանն պէտս պահպանութե՝ աղաչել հրամայե . վս այնորիկ

**Ա**յլ մեր աղաչեսցուք զբարեգութն անձանց մերոց • և նա իւրով ողորմութեան պահեսցէ զմեզ անխառն ՚ի տուէ և ՚ի գիշերի :

**Տ**եաննն , գարձեալ ողորմութե՛ լսել վատահացուցանէ զաղաչանն • վասն որոց և սսէ , Աղաչեսցուք զբարեգութն անձ , և նա իւրով ողորմութեանքն պահէ անխառն զտու և զգիշեր : Անխառնն՝ անփորձ է :

**Ա**յլ աւաջնորդեալ հատուցէ զմեզ յաւիտենական ուրախութիւնն , զոր խոստացաւ տալ սիրելեաց իւրոց ճշմարիտն անձ :

**Ո՛չ** միայն ՚ի խաղաղութեան կալ աղաչէ զբարեգութ և զողորմանձ աէրն , այլ և աւաջնորդել յարդարութի և հատուցանել յաւիտենական ուրախութիւնն : Հաւիտենական սսի անսպառն • զոր անմահութե՛ վայելին սուրբքն յանվախճան կեաննն , ըստ անսուտ խոստման ճշմարտին նոյ • ապա սսէ , Յն քն ան մեր կեցո՛ և ողորմեա՛ :

Նորին վասն Աղօթիցն :

**Տ**էր բարերար որ մեծաւ գթութեամբք բով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութե՛ աշխատելոցն : Բարերար սսելով զբարիսն որ ՚ի նմանէ ՚ի հոգի և մարմին շնորհեցաւ , յիշելով գոհութիւն մատուցանեմք :

**Մ**եծաւ գթութե՛ք բով պատրաստեցեր սսէ զյաւիտենական հանգիստն առաքինեացն : Առթիւք քո մեծ և անչափ՝ ստիպեաց պատրաստել զայն զանչափ զանճառ և զանվախճան հանգիստն • զի սակաւ ժամանակս աշխատեալ յաւիտենական ընդ քեզ հանգիցեն : Այլ ոչ



միայն առաքինեացն պատրաստեցեր զայն, այլ և զմեղաւորս կոչեցեր  
 սպաշխարութիւն: Վրանդն ասացեր՝ \*Եկայք առիս յամ աշխատեալք  
 և բեռնաւորք, և ես հանդուցից զձեզ: Այս է զոր սղօթիցս  
 բան ասէ,

Կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռինս և զտար-  
 Ժանեալս մեղօք, հանգիստ նոցա խոստանալով: Վրաղցր է արդարեւ  
 ձայնն այն որ զմեղաւորս յապաշխարութիւն կոչէ. որ ոչ միայն աղա-  
 ասէ ՚ի տանջանաց, այլ և արբայութեան հանգստեանն արժանացու-  
 ցանէ ընդ սուրբս իւր: Օ մեղացն ծանրութիւն բեռն ՚ի բաց բառ-  
 նաց ՚ի նոցանէ, և յանպատում կեանան առաջնորդէ յանմահ և յա-  
 նանց հանգիստն:

Շնորհեալ և մեղ ատէր անխռով հանգստեամբ զգիշերս ան-  
 ցուցանել: Վրաչեմբ զն զհանգիստ քնոց զոր եա մեղ շնորհեցէ  
 անխռով զն ոչ դեք և ոչ ՚ի գաղանաց և ՚ի սողնոց կամ յայլ անաս-  
 նոց կամ ՚ի մարդկանէ ինասել կորացեն. և ոչ զարհուրանք երա-  
 ղոց տագնապեցուցանեն. այլ խաղաղական հանգստեամբ զտկարու-  
 թիւնս մեր զօրացուցանել: Առ սպա յետ այր վասն միւսոց հան-  
 գստեանն զբանն յաւաջ ամէ:

Այլ ՚ի ծանրութիւն մեղաց զաշխատեալքս յապահովացն ողոր-  
 մութեամբ քով: Արդ մարդասիրութիւն զմարմնաւոր աշխատութիւն  
 նորոգես հանգստեամբ գիշերոյն, այսպէս և զհոգիս մեր զաշխա-  
 տեալս ՚ի մեղաց յապահովացն. այսինքն է դադարեցն յալէկոծութիւն  
 մեղաց: Այլ ըստ արժանի մերոց սպաշխարութեան, և կամ ՚ի բարին  
 յառաջանալոց, այլ ողորմութեամբ քով զն և քո ողորմութիւնդ  
 իսկ է պատճառ ՚ի մեղաւորս խնայելոց և յապաշխարութիւն կոչելոց:  
 Արով և զմեղ յապահովս արասցես յամ մարմնաւոր ցանկութեց,  
 որ զինտուրին ընդ դեմ ոգւոց: Այլ ՚ի պարկեշտ և ՚ի խաղաղարար  
 և յարդարակորով կեանս փոխեսցես: Վրա և վասն երբորդ բուն և  
 անսպառ և ուրախտից հանգստեանն պազատի:

Արժանաւորս արա՛ զմեղ մշտնջենաւոր հանգստեանն ընդ յամ  
 սուրբս քո: Վրանդն զսուրբս քո որք աստէն ընդ նեղութիւնս և  
 ընդ աշխատութիւն անցին վասն սիրոց քո, առ քեզ ժողովեալ հան-  
 գուցանես յայն երկայն ամին անչափութեան:

Արում հանգստեան և զմեղ արժանաւորեսցես, և ընդ նոսին  
 արժանացուցես քեզ փառս և գոհութիւն մատուցանել: Վրանդն  
 յայն սակս յարէ ՚ի նոյն,

Եւ ընդ նոսին փառաւորել զՏայր և զորդի և զսուրբ հոգիդ . սյժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Պարզեատու բարեաց և ողբիւր խաղաղութե տեր անձ մեր : Տեսանէն , համակ զբարութեանցն այ նոխ գոհանալով խրատեն զմեզ սուրբքն , և ապա խնդրել զոր ինչ խնդրեն կամիմք : Օ ի այս գործ շնորհակալու ծառայիցն է՝ հանապաղ գոհանալ ըզ պարզեատուէն : Տառաջնումն դրուագին այսպէս դնէ զսկիզբն . Տէր բարերար՝ որ մեծաւ գթութեք քո պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն , և որ զինի : Իսկ յերկրորդումն , Պարզեատու բարեաց և ողբիւր խաղաղութեան անձ մեր : Վրեթէ ըզ յակոբայ առաքելց զբանսն երկրորդէ՝ որ ասէ , \* Ամենայն տուբբ բարիք և անպարգևք կատարեալք ՚ի վերուստէն իջեալ առ ՚ի հօրէն լուսոյ : Օ սոյն և սուրբ լուսաւորիչն մեր ասէ , վասն այ թէ՝ Ազբիւր է անձ բարեաց . և ՚ի նմանէն բաշխին պարգևք յարարածս : Արդ՝ գոհացեալ զպարզեողէն զբարիս և զխաղաղութի բոխողէն աղբիւրաբար , մաղթէ զխաղաղութե բարին որ լուսագոյն է քան զանձ պարզեա . առանց որոյ և ոչ այլ բարիքն հաստատին :

Յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացն զմիտս և զխորհուրդս մեր ՚ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի :

Ի ազում պատերազմունք են սատանայի և գիւաց ընդ միտս և ընդ խորհուրդս մարդկան զանազան կարծիքք : Ի որ խաբէն զչարն բարի ցուցանելով . և է որ անհնար զառարկուութիս դնէ և բողջբացուցանէ զմեզն : Ի որ յամօթոյ կամ յերկիւզէ կամ յաշատանաց՝ ՚ի մեզս զառածեն , է որ ՚ի ձեռն մարդկան չար գրգռեն ՚ի չարիծ : Ի զի և բռնութեք մարդկան պատերազմի ՚ի դարձուցանել զմիտս ՚ի չարիս : Ի զի և զարհուրանս և երկեղուկս արկանէ ՚ի քուն կամ յարթուն առաջս երևմամբ , կամ յոգիսն՝ կերպարանէ արհաւրաց տեսիլս և երևմանս . կամ ՚ի քուն երկեցուցանէ ազգի ազգի գիւծօք և իրօք , և ՚ի մեզս ևս խոնարհեցուցանէ . և երազս բաղումն և պատիրս խաբս բաղմնպատիրս ցուցանէ : Օ սոյս և որ սոցին նման խռովութիս ՚ի վերայ մարդկան բերէ : Այն է զոր ասէ , Յամ սատանայական խռովութեանց խաղաղացն զմիտս և զխորհուրդս մեր ՚ի գիշերիս յայսմիկ և յամ ժամանակի : Ապա յարէ ՚ի նոյն .

Որո՞ զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս : Արբ ՚ի սատանայական հաղբից փրկեսցես զմեզ , կարացուք զարժանն գնալ

քով առաջնորդութիւն : Յանցաւոր կենցաղոյս ասէ , զի 'ի միտ առ-  
ցուք և գիտասցուք և ջանասցուք անցաւորաւս զանանց բարութիւնս  
շահէլ . բանդն և ասէ խիզ զինի այսորիկ ,

**Եւ** ամանեացուք յաւիտենական երկնից արքայութեան քո՛ զոր  
պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց : Քանի՞օն է երա-  
նութիւն , յաւիտեանս և յերկինս ընդ նոց և ընդ սուրբս նորա ուրա-  
խանալ . ապա ասէ ,

**Եւ** ընդ նոսին միառաւորեացուք զհայր և զորդի և զսուրբ հո-  
գիւր . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Եւ ապա ասի Սաղմոս :

**Տ**էր լոյս իմ և կեանք իմ , ես յուճմէ՞ երկեայց : Արչափ խմա-  
նալն ակն մտացս անային լուսովն պայծառանայ ասէ , և  
կենդանարար զօրութիւն հզօրին նոց ընդ իս իցէ , որ է ինձ երկիր-ը 'ի  
մերձենալ չարաց 'ի դիւսաց խաւարային զի լոյս իմ տեր է : Ա՛յ ի իրս  
միայն խնդրեմ զի 'ի տան տեառն բնակեցայց զիմ առուրս իմ , աստ  
յեկեղէցի՛ և 'ի հանդերձեալն 'ի վերինն սիօն : Ա՛յ տեսող եղէց  
վայելչութեան տան տեառն և հրամանատու տաճարի նորա . և այժմ  
զսոյն աղաչեմ զին լուսիցես ճայնի իմնւմ , և որ զարձուացես զերեսս  
քո յինէն . այլ օգնութիւն քով միշտ պահպանեացես զիս : Արույ հա-  
ւատամ թէ արժանի եղէց տեսանել զբարութիւն տեառն 'ի կենդանե-  
ացն երկիր . վասն որոյ յամենայնի միշտ համբերեմ քաջալերելով  
զին ինքն :

Քարոզ :

**Եւ** զաչեսցուք զամենապատիւն անձ , զի առարեացէ զհրեշտակ խա-  
ղաղութեան որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիր-զական գի-  
չերիս 'ի դիւական խառովութիւն ամբողջ պահելով զհոգի և զմարմին  
մեր մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց . ամենակալ տեր  
անձ մեր կեցո՛ւ և ողորմեա՛ մեզ :

Ղաչեսցուք ասէ , այսինքն՝ 'ի սրտէ պաղատեսցուք . զի այլ  
է խնդրելն և այլ է աղերսիւ ժտելն և թախանձելն : Եւ ամենակալ

տակ տատուած, զի որ ամենայնի տէրն է՝ և իւրաքանչիւր կարեաց լցուցիչ է :

Օ՛հ առարեացէ զհրեշտակ խողաղուծէ որ եկեալ պահեացէ զմեզ յերկիրաշխան գիշերիս ՚ի դիւական խռովութէ : Ա՛յսն զի գեւք ՚ի գիշերի առաւել խիզախեն . զի խաւարասէրք են և դարսնամուտք , որով պատերազմին միշտ ընդ մարդիկ : Ա՛նաւանդ յորս գամագիւտ լինին զթոյնս դառնութեան իւրեանց սերմանել խորհրդով բանիւ և գործով : Այս այս ամ ՚ի գիշերի առաւել յաճախին . և բազում խռովութեամբ և ամբոխմամբ զմիտս մարդկան ընուն : Օ՛ղմանս ՚ի քուն զարհուրեցուցանելով, և զոմանս յարթնութեան արհաւիրս առնելով և երկեղուկս . իսկ զոմանս ՚ի ցնորս վայրապարս յածուցանեն :

Ա՛յսն որոյ և զխաղաղարար հրեշտակն պահապան խնդրէ , զի յոյսով ամենայնէ անհոգ լեցուք . ո՞նչ սրբոցն ոգիք որ զբացեալ են անձայնն շնորհիւն , առ ոչ ինչ գրեն զնոցա մեքենայսն : Արպէս և գրեալ է ՚ի վարս հաբանցն թէ , ոմն ՚ի սրբոցն զգիշեր որո՞նք տիւ ունէր յրնթեանու և ՚ի գործել, զի ընդ մտացն լուսաւորութեան՝ և զգալն աչաց լոյս ունէր ՚ի գիշերի որո՞նք ՚ի առնջէան : Ա՛մն ասէր առդէն չար՝ յորժամ մարտ եղեալ կուուէր , էթէ խուցս այս դարբնոց է , մի՛ տատ և մի աւնուս ՚ի կոփելն . և մանաւանդ զի տէր իմ՝ օգնական է , որ հաւատամ զի յաղթեցից քում չարահարութեանդ :

Ի՛մբողջ ասէ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն ժամանակի ամաց մերոց : Օ՛հ ընդ սխառտ մարմնով կապեալ եմք . վասն որոյ և ընդ ոգւոյն և զմարմնոց խնդրէ զամբողջ պահելն . զի մի՛ յաւաղակաց կամ ՚ի գազանաց փնասիցիմք , որք առաւել ՚ի գիշերի յածին փնասել ումեք : Այս մինչդեռ ՚ի քուն որ լեցի , յարկք ՚ի վերայ փուզանին ՚ի շարժմանէ երկրի կամ ՚ի մեքենայից դիւաց : Այս զի թուլացեալ լինին նիւթք շինուածոցն և խարխալեալ կազմաճք շարադրութեանն յերկարաձգութէ ամացն , և ոչ զօրեն ՚ի վեր ունէր զճանրութիւն յարկացն . այլ խոնարհեալ իջանին և բազմաց մահ գործեն : Իսկ այս ամենայնի և որ սոցին նման իցեն , հուրնկեցութի կամ այլ ինչ դաւից , մարդասէր արն երկիւղածաց իւրոց և հաւատով խնդրողաց՝ յառաջագոյն աղօթման ինչ առնէ , երկիւղեղարհուրեցուցանելով կամ նշանաց աղօթման ինչ առնելով , կամ ՚ի տեսիլս երազոց զգուշացուցանէ զի պատրաստացին . թէպէտ և սա- կաւուց այս լեցի :

Ի՛մենակալ տէր անձ մեր կեցո՞ւ և ողորմեա՞ մեզ : Արո՞նք զակիղճն արար բանիս ամենակալ ասելով , այսպէս և զվախճանս ՚ի նոյն

աւարտէ : Յորմէ և զկեցուցանելն խնդրէ և զողորմելն . և զամենեւեան ՚ի նոյն յորդորէ ասելով՝ տէր ողորմեա՛ . զն հայր է քարոզողն ժողովրդեանն :

Ազօթք :

Նորհատու բարեաց՝ առատ անմահ տէր , փարտութեա՛յ յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս . ՚ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ . և շնորհեա՛ հաւատով ապաւինիլ յամենասուրբ երրորդութիւնդ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Օ անազնիք են շնորհք բարեաց հեղեալ յարարէն նոյ յարարածս իւր : Ալ ևս առաւել մարդկայինս բնութիւն ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ , և այն առատադէս ևս և լիապատար ըստ մեծածնութեան արարչին : Ալ զն անմահ է բաշխողն շնորհաց , անմահ է և շնորհն իւր յարարածս իւր :

Իսոյց դու տես ինձ և զոր մարդեղութիւնքն քի և քարոզութիւնք առաքելացն ևս առաւել յաւելաւ առ հաւատացեալ քրիստոնէայսս . որո՞ք և անաբան աւետարանիչն ասէ յովհաննէս , \* Տեսէ՛ք էղբարք՝ որպիսի՞ շնորհս ՚ի ձեռն իմ ետ ձեզ անձ , որպիսի՞ ձիւրս , որպիսի՞ պարզ ևս , և որ ՚ի կարգին : Ալ բազումք ևս այն են , որ այժմ՝ սչ երևին զգալի աչացս այսոցիկ . այլ ՚ի դէպ ժամանակի ծանուցեալ լինին իմանալի հարսնարանին : Ալ թէ կամիս նկատել ինչ փոքր ՚ի շատէ զառաւելութիւն շնորհին , նայեաց ՚ի բարբարոսսն և յանբրիստոսսն , և տես թէ յորպիսի՞ շնորհաց գիտութեանէ են զրկեալ . և ծանիցես զընտրացս առաւելութիւն , և գոհացիս զտուողէն : Իսոյց սչ է պարտ միայն ՚ի շնորհսն ապաստան լինիլ . զն զհեղգացեալսն և զքանքարաթարոյցսն դատապարտեաց տէրն , իսկ անեցուցանողացն վարձս բարիս հասոյց :

Փարտութեա՛ տես յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս , ՚ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ : Ըղջամղջին ասէ և խաւարային , վասն զն խաւարն յայտնի ցուցանէ թէ ձախակողման է պտուղ , բայց քաղցրութեամբն մեղիէ և պատրէ : Իսկ աղջամղջին՝ մասն ինչ լուսոյ ունելով ընդ խաւարի , որով զպարզամիտսն դիւրաւ գիշացէ : Իսկ որք զտէրն զորովիզն ունիցին յայսպիսեացս դիւրաւ գեթմանին և շնորհի տեսան արժանանան , որդէս և հետակայ բանս ցուցանէ :

Հնորհեան հաւատով ապաւինել յամենատուրբ երրորդու-  
թիւնդ . այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն : Ասան զի  
աւանց հաւատոց ամինչ անվաւեր և ո՞նց աւազաշէն տունն է , և ո՞չ  
աւնու հաստատութի՛ն . զի հաւասն հիմն է ամբարեգործութեան :  
Վաւ ահերն հրամայէ թէ՛ \* Չամինչ որ հաւատով խնդրէք՝ աւ-  
նուցուք : Աւ զամ ստելոն՝ եցոյց թէ՛ ուր բոլոր հաւատ իցէ ,  
ոչ ինչ լինիցի անհնարին թէ և ՚ի կարի մեծագունիցն իցէ : Ասան  
որոյ ստէ , շնորհեան հաւատով ապաւինել յամենատուրբ երրորդու-  
թիւնդ՝ ո՞չ միայն այժմ՝ և միշտ որ է ստաի կենաց ընթացս . թէպէտ  
և սատ գոն յաւիտեանք , այլ և յանձերանալին յաւիտեանս յա-  
ւիտենին :

### Յորդորակ :

Եւ մէք կալցուք պնդագոյնս յանձինս մէք զհաստատութի՛ն  
հաւատոյն , յորդորել հանապազօր ՚ի գործս բարիս , ՚ի  
վերայ հաստատուն վիմի հիմունս արկանելով , և զշինուածս աւաքի-  
նութեան գեղեցկայարմար յորինելով : Ա՛յ ՚ի միայն ՚ի հաւատ ապաս-  
տան լիցուք . զի մի՛ հրեականին նմանեցուք ժողովոյ որ առկինս ,  
\* Տաճար տեառն՝ տաճար տեառն : Այսինքն թէ՛՝ որչափ տաճարս  
այս շէն է ՚ի միջի մերում , մէք հաճոյ եմք նոյ և ո՞չ երբէք սասանե-  
ցուք . այլ միշտ զուարճացեալք լիցուք : Թէպէտ և գործս ո՞չ ու-  
նէին , զայս այսպէս կարծէին և յանձն ապաստան եղեալ յորանային :  
Արոց սահր երեմիաս , \* Տաճար տեառն է , բայց զայս գիտասուցեք , զի  
երուսաղէմ կաթսոյ է ո՞նչ սահք . և դուք միս որ եիկիք ՚ի սմս վասն  
չարաց գործոց ձերոց : Արնչ և եղևն իսկ . զի եկն բաբելացին այր-  
եաց զերուսաղէմ և զտաճարն , և զընակիչս ՚ի նմս ստանկեաց . և բզ  
մնացեայն գերի վարեալ եմոյժ՝ ՚ի բաբելոն : Վաւ մկրտիչն յովհան-  
նէս սաստէր նոցա ստելով , \* Մի՛ համարիք ստել յանձինս թէ ու-  
նիկք հայր զաբրահամ . ստեմ ձեզ՝ թէ կարօղ է ամբարանցս  
յայցցանէ յարուցանել որդիս աբրահամու : Անչ և եղևն իսկ . զի յա-  
րոյց զբարացեալ հեթանոսս վերստին ծննդեամբ աւազանին . ո՞չ միայն  
որդիս հաւատոցն աբրահամու , այլ և յորդեգրութի՛ն հօրն երկնա-  
ւորի և յեղբայրակցուի քի : \* Չի որբ ՚ի քս մկրտեցաք՝ զքս զգեցաք :  
Ասան որոյ սուաւել զգուշանալ պարտէ , զի մի՛ վրիպե-  
ցուք ՚ի շնորհացս զոր ընկալաք : \* Չի ո՞չ եթէ դու զարմատն ՚ի

վեր ունին ասէ առարեալն , այլ արմատն դքեղ . զի դու ՚ի բուն  
ոսան պատուաստեցար : Եւ զի նա վասն չարութեան անկաւ ,  
բարեւոր է . և դու վասն բարւոյ պատուաստեցար : Զգոյ՛ լեր դու  
ցէ և դու անկանիցիս . զի որ ՚ի բուն ոսան ոչ խնայեաց , և ՚ի բեղ  
ոչ խնայեցէ . եթէ մեղիցես և ոչ զղջսցիս և ապշաւեսցես :

Եւ զայս գիտելով սիրելիք՝ սրբեսցուք զանձինս մեր ՚ի մեղաց .  
կատարեսցուք զսրբութի անձանց մերոց աջիւն նոյ : Սի՛ յապաղես-  
ցուք խոստովան լինիլ նմա զմեզս մեր արտասուօք և ապաշխարութի :  
Սի՛ երեկ ճգնեալ և այսօր հեղգացեալ , կամ այսօր ջրմնոր և վա-  
ղեան գինւմնոր : Սի՛ սնագամ սղացեալ վասն մեղաց , և դարձեալ  
խրախացեալ անհոգութեամբ . զի ոչ եթէ երկորումբր ասիւք կա-  
ղայցէ որ և ոչ յայտ լնցի : Սակ ոչ միով ակամբ յերկինս և միով  
յերկիր հայիլ ումբր հնարաւոր է , և ոչ երկնաւոր և երկրաւոր  
սիրով հաճոցանալ աստուծոյ :

Օ՛ ի որ երբեմն շինէ և երբեմն քակէ , ոչ կարէ յաւարտ հա-  
սանիլ : Եւ զի սեր աշխարհիս թշնամութի է առ ան ուր յայտ առ-  
նէ անձարան աւետարանիչն յովհաննէս : Մաս է քաղցնուլն , և աստ  
է ծարաւին . զի յետ աստեացս վճարելոյ՝ դուռն ապաշխարութե  
այլ ոչ գոյ : \* Ահաւասիկ ժամանակ ընդունելն ասէ առարեալն , ահա  
օր փրկութեան . մի՛ և մի՛ իւրի տոյցէք պատճառս զի մի արատեցիկ  
պաշտօնն : Օ՛ ի հեղօութի և ծուլութիւն յորժամ տեղի գասնէ՝  
՚ի փորքէն ՚ի մեծն ելանէ չարն , որո՞յ և եղև կորուսան խորցելն :

Սասն որոյ առաւել զդու շանալ պարտ է , զի մի՛ զբկիցիմք ՚ի  
սատանայէ : Օ՛ ի դրունք են զգայութիւնքս ՚ի քաղաքի բնութես  
մերում . այսինքն է տեսանելիք , լսելիք , հոտոտելիք , ճաշակելիք , շօ-  
շափելիք : Եւ այսօրիւք ամենեքումբք կռուի ընդ մեզ սատանայ . և  
ջանայ ՚ի ներքս վաղել ընդ դրունսս ընդ այսօսիկ զի ըմբռնեցէ  
զամբութի քաղաքիս մերոյ . և ՚ի ներքուստ ՚ի դուրս դիւրաւ մար-  
անցիցի և յաղթիցէ մեզ :

Եւ մեր զայս գիտելով՝ պարտիմք արթուն լինիլ միշտ և պատ-  
րաստ և կազմ . զի մի՛ յանպատրաստից ըմբռնիցիմք : Օ՛ ի որբան հսկէ  
տանուտերն , գողք ոչ կարեն ական հատանել և գողանալ . այլ խոյս  
տուեալ փախիցեն : Պրեալ է ՚ի վարս հարանց եթէ՝ ճգնաւոր մի  
զերկրոտասան ամ ՚ի պատուիրանս և յորէնս տեսուն միշտ խոկայր և  
խորհէր : Եւ զերկրոտասան ամնն զայնոսիկ դևն ՚ի դրանն կալով՝ ոչ  
կարէր ՚ի ներքս մտանել : Եւ յորժամ դարարեաց և թուլացաւ ճրգ-  
նաւորն ՚ի բարի խորհրդոցն , տեղի եգիտ դևն և վաղեաց ՚ի ներքս  
և ըմբռնեալ զմիտս ճգնաւորին ցնորեցուցանէր :

Ս անս որոյ բազում հոգիք յանձին բերել պարտ է և բազում փոյթս ստանալ ՚ի ջանս առարկնութեան, զի ՚ի բազում մեքենայից չարին զերծեալ գտանիցիմք. զի ոսոխն մեր ստամանայ գոչէ ըստ առարկելոյն պետրոսի և խնդրէ թէ զո՞ կլանիցէ. զի անյագ է ՚ի չարիս նենդաւորն, և երբէք հերիք ոչ սակէ: Ալ թէ ՚ի գրտխտէն խաբելոնն սաս զմեզ ընկէց յերկիր անխճից և ընդ ծառայութի՞ն գրաւեաց, սպս սասի յորժամ խաբիցէ՝ ո՞ւր կամիցի ընկենուլ. էթէ ոչ՝ յանդունդա դժոխաց:

Ալ արդ՝ զմտաւ ամցուք թէ վասն է՞ր եկար յաշխարհս յայս. զի ոչ զորէն անանոց կայտալիցիմք ՚ի վերայ երկրի զպրտ և զորովոյն ընրվ: Օ որ և առարեան նախատէ սակում \* Կերակուր պորտայ և սորտ կերակրոյ. և Խճ զսա և զնա խափանեացէ: Չի մարմին ցանկայ հանապաղ հակառակ հոգւոյ: Ալ մեզ պարտ է զգուշանալ և գործել հակառակ մարմնոյ. որով կարասցուք միշտ յալթօղ գտանիլ ՚ի պատերազմի:

Ալ արդ՝ զի պատկեր ստեղծար նոյ. ըստ այնմ, \* Արար Խճ զմարդն ՚ի պատկեր իւր: Պարտիմք զնմանութի սկզբնատպին ՚ի մեզ ինքեանս բերել: Ալ որո՞վ կարիցեմք բերել արարածքս զարարչին նմանութի, հորանիւթ բնութիւն գոյով և ընդ մարմնոյ կարեօք անկեալ և զգայարանօք կապեալ ունի շղթայիւր ոմամք: Իսկ նոյ ձեռք և ոտք և կամ բնաւ զգայարանս ինչ իմանալ կամ կարծել անմտութիւն մեծ է: Օ ի թէպէտ և լսեմք այսպիսի ՚ի գրոց, ըստ մերում ակարութեանս ձևացուցանեն զբանն զոր մեք սովոր եմք սակ. զի ընտելականաւն կարիցեմք իմանալ: Իրոն այն զի սակեմք, խոնարհէցն տէր զունկն քո և լուր, բաց զաչս քո և տես: Չարթիր ընդէ՞ր ննջես, արի՞ և մի մերժեք զմեզ: Ա՛ռ զդէն և զասպար քո և արի յօգնել ինձ: Ալ Խճ այսմ ամենայնի ոչ պիտոյանայ. զի կամքն գործ է կատարեալ \* Ասաց և եղէն, հրամայեաց և հաստատեցան ունի սակ մարգարէն: Այս յայտ է թէ իմանալեաւն և ներքին մարդոնն եմք պատկեր նոյ. որով յայտ է թէ գոյ հնար նմանել նոյ ըստ կարողութեան մարդկան, անոխակալութեն՝ սիրոնն՝ և ողորմածութեն՝ և կարեկցութեամբն:

Ալ զօթեաց տէրն ՚ի վերայ խաչահանուացն սակում, \* Հայր Թճ զոցս՝ թէ զղջացին և դարձցին, զի ոչ գիտեն զինչ գործեն: Ալ դու թէ ոչ այնպէս որդիաբար առ հայր, այլ ծառայաբար առ տէր. որպէս սուրբն սակփաննոս առ տէր սակում, \* Մի համարիր սոցա՛ զայս մեզր: Ալ որոն նա շահեցաւ զնոթն ընտրութե և այլ



բազումս, այնպէս և դու շահեցիր զյորովս և պայծառացիր հոգ-  
 ւով: Ըրժանացոյց տէրն զմտանիչն սեղանոյն և զոտան լուանալոյ և  
 համբուրի ևս բազում ջանիւ և յօժարութեամբ. զի կամէր շահիլ  
 զփրկութի նորս մինչև ՚ի վերջն կատարածն, և նա ոչ կամեցաւ.  
 այլ ապականեալ կորեալ, ոչ վայելելով ՚ի փրկութի փրկագործողն:  
 Ընձինն մեզս դիցէ և ոչ այնմ որ կամեցան կեցուցանել, և ինքն ոչ  
 յօժարեաց:

Եր և դու անխակալ առ թշնամիս քո. թէ բաղցեալ է՝  
 հաց տո՛ւր նմա. և եթէ ծարաւի է՝ ջուր մատո՛. թէ մերկ է՝ զգե-  
 ցո՛. և թէ յարկի է կարօ՛մ և զայն պատրաստեա՛ և երանելն լինիցիր:  
 Եւ մի որ ազիտաբար ընդ դէմ՝ բերցէ բանիս ասելով թէ՛. քն յետ  
 մահո՛ւ արքայութեն ընդէ՛ր ոչ արժանացոյց զյուզա և զխաչաճա-  
 նուան: Մի որ յանդգնեցի և մի որ անմասցի զայսպիսիս խօսելով  
 ազիտաբար. այլ ուսցի և տեղեկացի, որով կարացէ հասու լինիլ  
 և ՚ի վերայ կալ զօրութեան բանին:

Ըրդար է դատաւոր, և անիրաւ ոչ առնէ դատաստան. զի  
 խնամարկէն ՚ի թշնամիսն՝ յայսմ կենցաղումն է, և զայն ոչ արար  
 պակաս տէրն: Իսկ որք անդեղջ աստի գնան անդ, այլ բարեաց ակն  
 ունել ոչ է, այլ պատիժ պատուհասի ըստ տէրու՛նական հրամանին:  
 \* Եղաւ որքն ասէ երթիցէն ՚ի տանջանս յախտենից, և արդարքն ՚ի  
 կեանս յախտենից, և թէ՛ \* Ոմանց յարութիւն կենաց և ոմանց յա-  
 րութի դատաստանաց: Եւ դու յորժամ լիցես յիմացին գրոց թէ՛  
 \* Բարի արարէք ատելեաց ձերոց և աղօթս ՚ի վերայ նեղաց: \* Նայսմ  
 կենցաղումն իմն թէ բեզ պատուիրէ առնել, և ոչ թէ ՚ի հանդեր-  
 ձելումն. զի անտի կենացն դու ոչ ես տէր, այլ արարիչն ամենայնի  
 որ ակնկալութիւն է ամենեցուն և յոյս հանդերձելոյ աշխարհին:

Եւ մեծն յովհան ոսկի կոչեցեալն բերան՝ իբր բարկանալով  
 իմն աստէ այնոցիկ և վրէժխնդիր լինի այնպիսեացն՝ որք խօսիցին  
 այնպիսի հայհոյութի վասն նոյ. և ասէ այսպէս, \* Իբր քարիւ ասէ  
 հարկանեմ զբերան քո բանիւ անայնի գրոց վարդապետուէ: Օ ի  
 յաստի կեանս միայն հրամայեաց զբարի առնելն թշնամեաց. զոր  
 և ինքն աստ միշտ և հանապազ արար, յանձնէ օրինակ տալով ամե-  
 նեցուն ամ բարեաց: Եւ դու այժմ թող զհարիւր դահեկանի  
 չափ պարտս ծառայակցին քում, զի և դու գտցես անդ ՚ի տեսանէ  
 բիւր տաղանդացն թողութի. մտնաւանդ թէ ևս առտուել բազմա-  
 պակաց: Օ ի այնչափ ոչ կարէ մարդ մեղանչել մարդոյ՝ որպէս  
 մարդ նոյ միշտ մեղանչէ. և դու թէ թողցես աստ զակաւան, գտցես  
 և դու անդ բազմին թողութիւն:

Ս անն որոյ և տէրն յաղօթան զայս հրամայէ ասել միշտ և հա-  
նապազ, \* Զայր մեր որ յերկինս . Թող մեզ զպարտս մեր, որպէս և մեր  
Թողումք մերոց պարտապանաց : Եւ սուտ են ողբ շրջեն զբանն և  
ասեն, Թող մեզ զպարտս մեր և արժանի արա Թողումք մերոց պար-  
տապանաց : Օ հ տէրն զբարին միշտ մեզ օրինադրէ . զի որչափ և  
ասէ որ Թէ արժանի արա Թողումք որ պարտին մեզ, բնաւ ՚ի զղջումն  
նչ եկեսցէ և նչ հոգ արտացէ Թողումք : Իսկ յորժամ ասէ՝ Թող մեզ  
որպէս և մեր Թողումք, յայնժամ զարհուրի և գողայ և Թողումք զպարտս  
ընկերին : զի անն յայս միտս և զեղանակ բանիս այսպէս եզ առաջն :  
Օ բեզ քնքնդ ասէ արարի դատաւոր կամաց քոց . զի Թէ Թող-  
ցես, և յինէն գացես Թողումքի . և Թէ նչ Թողցես, նչ և յինէն  
տին ունիցիս : Իսկ անձին քում ողորմեսց . զի որով չափես չա-  
փով չափեսցի բեզ :

Ս կատեա՛ ճշգիւ զգերանաձև մեղսդ ՚ի քում տկանդ . և մի  
խողցեսցես խնդրել զշեւղ յսկան եղբօր քում : Կազմու թի մարմ-  
նոյս մերոյ նչ է իբրև զայլ կենդանեացդ՝ որ զգլուխն ՚ի խոնարհ  
ուսնելով միշտ ընդ երկիր պնուն, զայն միայն շահ օգտի համարելով  
զառօրեայ դատել կերակուրն : Իսկ մարդոցս կազմու թի կանգուն  
գլով ՚ի վեր միշտ զհայրին գուշակէ առ անձ . ըստ առաքելոյ՝ \* Չվե-  
րինն խնդրեցէք հանապազ ուր քնն նստի ընդ աջմէ հօր . զվերինն  
խորհեցարուք . զի յորժամ քն յայանեսցի կեանքն ձեր, յայնժամ և  
դուք ընդ նմա յայանեսցիք փառօր : Եւ յայտի յոյս խոստացեալ  
ուսնիմք և այսպիսի մեծագոյն պատիւ կայ մեզ առաջն . և մեր իբր  
զողայս անխնայս ՚ի ստուերականս խաղալ յօժարիմք :

Ս միայն բաւական զատելու թի ՚ի բաց բառնալ, այլ և սէրն  
՚ի տեղւոջն անկել . \* Չի ան սէր է . և որ կայ ՚ի սէր նորա՝ յան-  
բնակէ և ան ՚ի նմա . ոպ ասացն : Եւ Թէ՝ \* Յայսմ ծանիցեն ասաց  
տէրն Թէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս : Եւ լրումն  
օրինաց սէրն ասացաւ :

Եւ դարձեալ նչ է միայն բաւական զհայարտու թի և զամբար-  
տաւանու թի ՚ի բաց ընկենու և զնորաձև ամբարհաւանու թի, այլ  
և զխոնարհու թի ստանալ և զհեզու թիւն և զղամ ոգի լինիլն : \* Չի  
որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի ըստ տերունական հրա-  
մանին : և Թէ՝ \* Ուսարուք յինէն զի հեղեմ՝ և խոնարհ սրտիւ :  
Եւ մարդարեիւն դարձեալ, \* Ես յո՞ բնակեցայց՝ եթէ ոչ ՚ի հեղս և  
և խոնարհս և ողբ դողան ՚ի բանից խնոց : Եւ դաւիթ անասայրն  
Թագաւորն և մարգարէն իբր խրախոյս իմն տալով ասէ, \* Չսիրա՛ սք  
և զհոգի խոնարհ՝ ան նչ արհամարհ :

Ի դարձեալ չէ՛ և չէ՛ միայն բաւական զոչտուութի և զզատումն ՚ի բայ ընկենուլ, այլ և զողորմածութի և զձեռնարձակութի առատապէս ստանալ յամժամ, և առաւել ևս յաւուրս պահոց: Օ ի մի լուիցէ ՚ի տեառնէ թէ, \* Չայդպիսի պահս ոչ ընարեցի ինձ ՚ի հաճոյս: Այլ լոյճ զինձիռն անիրաւութե. քակեա՛ զխարդախութիւն. և զմեւրհակ չարին անիրաւութե յօժարութե հերձեա՛. զի մի ունայն լինիցի բողբէն քո յորժամ ես ոչ լիցեմ: \* Չողորմութիւն կամիմ ասէ անձ և ոչ զզոհ, և թէ՛ \* Երանի ողորմածաց՝ զի նորա ողորմութի գտցեն յայ ՚ի դէպ ժամանակի:

Եւ մարգարէն քաջալէրս տայ ասելով, \* Չմեղս քո ողորմութե բաւեացես, և զանօրէնութիւս քո արովք տնանկաց, և թէ՛ \* Բարձր ՚ի գլուխ պարծի ողորմութի առ դատաստանաւ, և թէ՛ \* Չտուրս զուարթառատս սիրէ անձ: Ս ՚ի ճշգիւ և մի արտնջելով և խոժոռ դիմօք, զի մի անհաճոյ լիցի բարին. այլ յօժարութե և առտուութե և պայծառ դիմօք և զուարթ երեսօք. զի այնպէս ընկալցի զփոխարէնն: \* Չափ բարւոք ասէ տէրն թաթաղուն զեղուն շարժուն տալին ՚ի գոգս ձեր: և թէ՛ \* Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ:

Ս մն յառաջին անձասէր և բարեսէր թագաւորացն՝ գրեալ է թէ յորժամ ողորմութի առնէք՝ ասէք, այսօր թագաւորեցաք յորժամ ողորմութի արարաք: Եւ գիրք սուրբք զողորմածն անձ ասեն անպատկառ անձ համարձակութե ըստ կրկնակի բայցի և բառից: \* Կաւ մարդկան սովորութի է՝ յորժամ ողորմութի առցէ որ յումեքէ, և հարցանեն թէ ո՞ր էա, ասէ համարձակութե թէ անձ էա:

Ողորմութի դուստր է թագաւորի, և ունի համարձակութի առ հայր իւր. և համարձակութե մեծանէ զտացօղն իւր առ թագաւորն:

Պահքն՝ ՚ի ճանապարհ հանէ զմարդ արքայութեն. և աղօթքն՝ մինչ ՚ի գուռն տանի. իսկ ողորմութիւնն՝ ՚ի ներքս մեծանէ յառաջատն առ թագաւորն երկնաւոր ըստ իւրում տեառն բանին թէ՛ \* Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի: և թէ՛ \* Եկայք օրհնեալք ձօր իմոյ. ժառանգեցէք ձեզ պատրաստեալ զարքայութին: Չ ի քաղցեոյ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի և արբուցիք ինձ. մերկ էի և զգեցուցիք, հիւանդ էի և ՚ի բանտի՛ և եկիք առ իս. և թէ՛ որովհետև արարիք միում ՚ի փոքրկանցս յայսցանէ յեղաւրցս՝ ինձ արարիք:

Չէ՛ և չէ՛ միայն բաւական զմեղս մարբել խոտովանութե, այլ և ապաշխարութե և գործովք բարեօք ընուլ զտեղին: Օ ի մի՛ դարձեալ անօթ լիցի չարին ըստ տէրունական հրամանին թէ՛՝ այսն պիղծ որ վասն մեղաց թոյլ ապրո՞նն նոյ մտեալ է ՚ի մարդ, յորժամ:

ողորմութիւն նորին ելեալ ՚ի մարդոց և հանգիստ ոչ գտեալ յանջոգին տեղին յարդարոցն ոգիս , դառնայ և գամնէ զառաջին տեղին դատարկ ՚ի բարի գործոց . յայնժամ երթեալ գումարէ ընդ ինքեան չարագոյնս քան զինքն դեռ , ոչ միայն եօթն , այլ և հազարս և բիւրս : **Օ** ի անուն եօթանդ՝ միայն բազմաւորութիւն է անուն , և տէրն առաւիակ խօսի : **Ա**րդ այն որ ՚ի յայտնութեն ասէր առ մեծն յովհաննէս աւետարանիչ և անձաբան , թէ առ հրէշտակս եօթն եկեղեցեացն ասա՛ զայս և զայս ինչ : **Ա**ւայն ոչ թէ նոցին միայն էր պատուէր , այլ նորօր ընդ անձաբաց եկեղեցիս խօսի . այսպէս և ՚ի վերայ չարագոյն այսոցն է իմանալ :

**Ա**յց մի որ ազիտաբար կարծիցէ թէ տէրն այսահարացն միայն ասէ զայս , այլ և անձաւորաց , զի մեղաւորն որչափ ՚ի մեղս է , բնակարան է սատանայի . և չար գործովք իւրովք կերակրէ զնա և հանգուցանէ : **Ի**սկ եթէ յողորմութենէն նոց զղջացեալ չարժի ՚ի խոտովանութիւն և յապաշխարութիւն . և փոքր ինչ յառաջեալ ՚ի բարիս , դարձեալ ծուլացի և սիրէ զհեղձութիւն և զամայրութիւն , և զըկի յայնմանէ որ բարի գործովքն կերակրէր զանձ , և բնակարան լինէր շնորհաց հոգւոյն սրբոց : **Ա**ւ տեսալ թշնամւոյն զչ յօժարութիւն նորա ՚ի բարիս , և զխորժակօք դիմէն ՚ի չարիս , գողովէ զբազմութիւն չարագոյն այսոցն և մտեալ բնակէ իբր ՚ի յարդարեալ տաճարի անհոգութիւն , արկանելով զնա ՚ի վիճս կորստեան . այսինքն՝ ՚ի զանազան տեսակս մեղաց , բնականս և անբնականս :

**Ա**ւ զինի այնորիկ ընկենու զնա ՚ի թերահաւատութիւն և յանգամութիւն և յուրացութիւն . և ապա յուսահատ տունէ զնա յողորմութենէն նոց ասելով թէ՛ այլ ոչ գոց քեզ թողութիւն , և ոչ ևս կարես հասանիլ փրկութեան , վասն որոյ պինտ կաց ՚ի նոյն անառակութեդ : **Ա**ւ զանձ անողորմ ցուցանէ նմա , և զապաշխարութիւն գժուարին , զժամանակն երկար , և զինքն անարժան ողորմութեանն նոց : **Ա**ւ այնչափ տագնապէ զնա և ՚ի նեղարտութիւն արկանէ , մինչ զի ՚ի խեղճմտաբերիցէ և զանձին ևս առնէ : **Ա**ւ անձ եղև մարդոցն այնորիկ յեանին չար քան զառաջինն՝ ըստ տէրունական բանին :

**Ա**ւ ոչ այց չար թշնամին եղկելոյն այնորիկ բնաւ ամեւ զմտաւ զհրամանս տէրունական եթէ՛ \* Գարձարուք առիս , և ես գարձայց առ ձեզ : և թէ՛ \* Յորժամ հեծեծեսցես , յայնժամ կեցցես : և թէ՛ \* Եկայք առիս անձ աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից ըզ ձեզ : և թէ՛ \* Ո՛չ էկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս յապաշխարութիւն : **Օ** ի առաջին ճանապարհ առ անձ՝ ոչ մեղանչէն է . իսկ երկրորդ՝ յետ մեղանացն զըջալ և ապաշխարել և ոչ յուսահատութիւն :

կորնչել, զի ոչ կամի տէր զմահ մեղաւորին, այլ զդաւանալն 'ի չար ճանապարհէն և զկեանքն:

Եւ արդ՝ ասէ Եսայի, \* Ո՞րպատմեսցէ ձեզ զտեղւոյն յաւիտենից եթէ հուր գանձեալ կայ և տանջանք պատրաստեալ ոչ զըջացելոցն 'ի մեղս: Եւ զի ամենայն հրով փորձելոց է՝ դաւիթ վկայէ. \* Աստուած մեր ասէ ասէ, \* Որ շինէ 'ի վերայ հիման հաւատոյն փայտ խոտ եղբգն: Եւ յսինքն մեղս բնականս կամ անբնականս, յորժամ ամ ինչ 'ի հուր անցանէ, որոյ գործն այրի՝ առժի և գործօղ մեղացն 'ի հուր և ոչ մեռանի, այլ կայ անմահ 'ի տանջանս յաւիտենից:

Իսկ որ շինէ 'ի վերայ հիման հաւատոյն ոսկի արծաթ ահանս պատուական՝ որ է բարի գործ և հաճոյական առաքինութիւնք, որ ոչ էն կեղծաւորութիւն կամ մարդահաճութիւն և փառասիրութիւն: Օ՞ր այնպիսիքն ոչ եթէ միայն 'ի պսակացն զրկին որ վասն նոյն ոչ առնեն զառաքինութիւն, այլ և տանջին ևս: Իսկ ճշմարտասիրացն և ըստ նոյն հաճոյիցն ճգնողացն, յորժամ գործն 'ի հուր արկանի՝ ոչ այրի, այլ ևս առաւել պայծառանայ ուր ոսկի արծաթ և լուսատու բարիք. և գործօղն կայ և մնայ մշանջեանաւոր 'ի կեանսն յաւիտենից ընդ հրեշտակս դասակցեալ 'ի փառաբանութիւնն նոյն:

Եւ մեր զայս ամ գիտելով՝ միշտ զերկրաւ գամբ և ընդ երկիր պշնումք և զերկրաւորս յաւետ խորհիմք, զարդարելով զձիս և զձորիս, և զևս վատթարագոյնս զգաղանաբարոյ շունս: Թողնց ասել զժարկաց և զապարանից և զբարձրագունից տանց, զոսկիաղօծ ձեզ ռանց և զժարձապակեալ յօրինւածոց, և զիճէիւք և զգանազան պատկերովք լցելովք: Որոց ոգիքն ուրիացեալք և բարձրագոյնի պատիւք վասնդեալք. և նա զըրմն տանցն պայծառացուցանէ և զինքն մոռացեալ է կղկլին:

Պարեալ է թէ յարաքնոցն՝ իմաստասէր ոմն տուն շինեաց. և գեղադործ ոմն ասաց ցնա, ծեփեա զտուն քո զի եկեալ գեղեցկացուցից զնա զանազան նկարուք պատկերաց և յանդուածոց յօրինուածովք: Եւ ասէ իմաստասէրն, եկ յառաջ նկարեա և ապա 'ի վր ծեփեցից. զի զգարչելսն ծածկելն է բարւոք քան թէ յայտնելն:


Եւ մեծն յովհան գրեալ է բերանն ոսկի, թէ զոմն իմաստասէր 'ի հացիւրոյթ կոչեցին. և նա իբրև Էմուս 'ի տուն և բազմեցաւ, նայեցեալ 'ի վեր և 'ի վայր և 'ի ճորեսին կողմունս տանն՝ ետես զանազան գունովք զարդարեալ. և ազգի ազգի երանգովք պայծառացուցեալ. և լցեալ զբերանն խխով՝ եթուք յերեսս տանուտեառն:

Եւ իբրև հարցեալ եղև թէ ընդէ՞ր արարելը զայդ, պատասխանեալ  
 ստէ, և զի՞նչ փնաս արարի, զոր դուք պատուեալ էիք և էս պատ-  
 ուեցի. և զոր դուք ոչ էիք պատուեալ և ոչ էս պատուեցի: Հայե-  
 ցայ յամ՝ տունս և տեսի զարդարեալ ամենեքումք, և ոչ կարացի  
 թքանել զի պատուած էր, և զերեսս տանուաւետուն միայն տեսի ան-  
 պատիւ, զի ոչ էր զարդարեալ առարինութի՞ զնեքին մարդն՝ և  
 անդ թքի:

Եւ թէ այսորիկ արտաքինն որ զճշմարիտ անձանութի  
 ոչ գիտէին՝ այսպիսի իմն նախանձ ունէին բարեաց գործոց և ա-  
 ռարինասէր վարուց, սպա որչափ ևս առաւել մեզ պարտէ բա-  
 զում զգուշութի և փոյթ ունել յառարինութիւնս. որք մեծագոյն  
 շնորհի արժանացար զալտեամբն քի և պատուական խաչին փրկա-  
 գործութիւն: Եւ մէք մինչ ՚ի խորին ճերութի տղայաբարուք շա-  
 տաշտար և բազմախոյ գտանիմք, զանցաւորօքս բուռն հարել և զոչ  
 մնացականսն ճոխացուցեալ: Եւ զքն ՚ի դրունս տեսեալ բող-գղեալ  
 և երէթուեալ, անտես առնեմք ոչ գթալով և ոչ ողորմելով և զպէտան  
 լնլով: Եւ երանի թէ այս միայն, այլ և նախատեմք ևս և բանբա-  
 սեմք ռահայ անուն կարգալով ՚ի վերայ, և տրամութի և ամթալի  
 դիմօք դարձուցանեմք՝ և որ գեհեան զմեզ ոչ այրեացէ, կամ որ  
 տանջանք մեզ բաւական լինիցի:

Վրդարև բարձաւ ՚ի մէնջ դպիր իմաստուն և հանձարեղ խոր-  
 հրգական. ամենեքեան խոտորեցար ՚ի միասին և անպիտանացար:  
 Եղև հովիւն իբրև զհօտն, և առաջնորդն իբրև զառաջնորդեալքն.  
 Իւրորանչիւր որ զիւր արտն պաշտէ և իւրում ուսականին զոհէ:  
 Վաճանայն և կրօնաւորք, վանականք և աշխարհականք, վարդապետք  
 և վերականգուք, ամենեքեան միտպէս սիրեցար զաշխարհ և որ ինչ  
 յաշխարհի է: Վնեքեան միապէս սիրեցար զարիս ըստ իւրաքանչ-  
 իւր չարու. ամենեքեան միապէս զարտուղի գնացար ՚ի ճանապարհէ  
 բարի գործոց՝ յոյժ և յահեակ խոտորելով:

Ս ան որչ զգուշացեալ՝ բուռն հարցուք զառարինութեանց  
 գոնէ անագան իմն, և գործեսցուք զբարիս. զի և երկինց արքայու-  
 թեանն արժանի լիցուք փառաւորելով զհայր և զորդի և զքի հո-  
 գին. այժմ՝ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:



Երես	Տող	Սկսւ	Ուղեղ
14	• • 7	• • ուղևորդք	ուղևորք
21	• • 5	• • (պակաս)	որպէս
36	• • 35	• • զպարգևս	զպարգևիս
68	• • 13	• • մշակքդ	մշակքդ
72	• • 15	• • շեղական	շեղական
92	• • 30	• • զամենեցունցն	զամենեցունցն
139	• • 22	• • ընդուել	ընդունել
165	• • 19	• • յօրէնս	յօրինես
189	• • 08	• • հաստատուի	հաստատուի
218	• • 15	• • յօգէ	յօգէ
224	• • 10	• • նեխէին	նեխէին
224	• • 11	• • փտէին	փտէին

